

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՐԲԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՊԱՆԴԼԱՎԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒԲԵՆ Ս. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

**ՊԱՀԼԱՎԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Մենագրություն Չրադաշտի կրոնի և միջին
սյարսկական գրականության վերաբերյալ*

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018**

ՀՏԴ 93/94:2-1
ԳՄԴ 63.3+86.2
Ն 702

*Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Խմբագիր՝ Արայոմ Տոնոյան

Նիկողոսյան Ռուբեն Ս.

Ն 702 Պահլավական ուսումնասիրություններ: Մենագրություն
Զրադաշտի կրոնի և միջին պարսկական գրականության վե-
րաբերյալ/Նիկողոսյան Ռ. Ս.: -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 324
էջ:

Սույն գրքի նպատակն է ընթերցողին ծանոթացնել դարերով հայերի հարևան
հանդիսացող Իրանի մինչխլամական կրոնին՝ գրադաշտականությամբ: Շեշտը
դրվում է դասական գրադաշտականության և դրա գրականության վրա, որոնք իրենց
այսօրյա տեսքը ձեռք են բերել մ. թ. Թ դարում:

Աշխատությունը բաղկացած է երեք մասից, որոնցից առաջինի մեջ ներածու-
թյան տեսքով խոսվում է գրադաշտական կրոնի և պահլավական գրականության մա-
սին: Երկրորդում ներկայացված են հատվածներ դասական գրադաշտական կրոնա-
կան գրականությունից աշխարհի արարչության, Զրադաշտի կյանքի, աշխարհի
ավարտի և այլնի մասին: Երրորդ հատվածում տրված են պահլավական գրականու-
թյան երեք հայտնի նմուշներ՝ բնագրից ամբողջական թարգմանությամբ և ծանոթա-
գրություններով հանդերձ:

Գիրքը նախատեսված է կրոնագիտությամբ, պատմությամբ, իրանագիտու-
թյամբ, հայագիտությամբ և հումանիտար այլ ոլորտներով հետաքրքրվող անձանց,
ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 93/94:2-1
ԳՄԴ 63.3+86.2

ISBN 978-5-8084-2338-1

© ԵՊՀ հրատ., 2018

© Նիկողոսյան Ռ., 2018

Բովանդակություն

Երկու խոսք.....	V
Խմբագրի կողմից	VI
Հեղինակի կողմից	X
Նախաբան	XII
1. Ներածություն.....	1
1.1. Ներածություն գրադաշտական կրոնի.....	3
1.2. Ներածություն պահլավական գրականության	60
1.3. Ջրադաշտականության ուսումնասիրությունը Եվրոպայում	100
2. Ջրադաշտական կրոնական ավանդություններ	117
2.1. Աշխարհի արարումը	120
2.2. Մարդկության ծագումը և նրա պատմությունը մինչև Ջրադաշտի գալուստը	133
2.3. Ջրադաշտի կյանքը	138
2.4. Հանգուցյալների ճակատագիրը.....	158
2.5. Մարդկության պատմությունը Ջրադաշտից հետո	162
2.6. Այս աշխարհի ավարտը և Ահրիմանի պարտությունը	169
3. Պահլավական գրականության նմուշներ	193
3.1. Արտաշիր Փափագանի գործերի գիրքը.....	195
3.2. Չարերի հիշատակարանը	237
3.3. Վահման յասնի մեկնությունը.....	259
Ամբողջական մատենացանկ	298

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ընթերցողի դատին ներկայացված գիրքը, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի շրջանակներում կատարվող միջին իրանական լեզուների և գրադաշտական կրոնի ուսումնասիրությունների ոլորտում մենագրության տեսքով, երախտիքն է «պահլավականքի»՝ ըստ էության, դասական ավանդույթների հիման վրա ստեղծված յուրօրինակ մի շտեմարան, որ գալիս է շարունակելու հայոց մեջ հարևան Իրանի մինչիսլամական լեզուների և կրոնի վերաբերյալ պատկերացումներն ամբողջացնելու գործը:

Հեղինակը, գիտական ժառանգորդը լինելով ԵՊՀ իրանագիտության ամբիոնում մասնակի ընդհատումներով, սակայն, որպես կանոն, տևականության անընդհատ շղթայով ընթացած դասական իրանագիտական դպրոցի ավանդույթների, կարողացել է հենց այդ դպրոցին հարիր ակադեմիականությամբ և դասականությամբ մեկտեղել և ամփոփել ոլորտի ձեռքբերումները՝ միևնույն ժամանակ հանդես գալով բոլորովին նոր և արդիական մոտեցումներով ու մտքերով:

Կասկած չկա, որ մենագրությունը կարժանանա ոչ միայն իրանագետ-մասնագետների, այլ նաև Իրանի և նույնիսկ հայագիտության բազմաթիվ խնդիրներով հետաքրքրվող հետազոտողի ուշադրությանը՝ դառնալով ուշագրավ մի ձեռնարկ՝ շատ խնդիրների վերաբերյալ պատասխաններ գտնելու առումով:

Վարդան Ոսկանյան
բ. գ. ք., դոցենտ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Իրանագիտական ուսումնասիրությունների և առհասարակ իրանագիտության զարգացման ոլորտում ինչպես ներկայումս, այնպես էլ անցյալում մեծ է եղել հայ իրանագետների ներդրումը: Պատմության խորքերից բխող հայ-իրանական քաղաքակրթական, լեզվական և մշակութային ընդհանրությունները, որոնց ուսումնասիրությունը կարևոր էր ոչ միայն հայ ժողովրդի վաղնշագույն հարևանի՝ Իրանի, այլ նաև սեփական պատմությունն ու անցյալը ճանաչելու համար, թերևս, եղել են հայ ժողովրդի՝ Իրանի հանդեպ ունեցած առանձնակի հետաքրքրության հիմնական պատճառներից մեկը:

Միջին իրանական լեզվադարաշրջանին պատկանող գրական հուշարձանների ուսումնասիրության, թարգմանության և հրատարակման գործում ևս իրենց մասնակցությունն են ունեցել նաև հայագի իրանագետները: Բավական է այստեղ հիշել թեկուզ միայն Կառլ Ֆրիդրիխ Անդրեաս Բագրատունուն (1846-1930), ով 1903 թ.-ից ստանձնելով Գյոթինգենի համալսարանի Արևմտյան Ասիայի լեզուների ուսումնասիրության ամբիոնի ղեկավարումը, ձեռնամուխ եղավ պրուսական թագավորական հնագիտական առաջին գիտարշավի՝ Թուրֆանից հայտնաբերած և Բեռլին տեղափոխած (մասամբ լուսանկարներով) մանիքեական տեքստերի ուսումնասիրությանը, դրանց վերծանմանը և իրանագիտության պատմության մեջ առաջին անգամ միջին արևմտաիրանական լեզվական նյութի բարբառային բաժանմանը:

Ուշագրավ է սակայն այն, որ 20-րդ դարի ամբողջ ընթացքում եղել են սակավ հայ իրանագետներ, որոնց ուշադրության կենտրոնում միջին իրանական լեզուների՝ հատկապես միջին պարսկերենի և պարթևերենի ուսումնասիրության, հայերենի՝ դրանց հետ ունեցած շփումները քննելու հետ զուգահեռ եղել են նաև նաև միջին պարսկերենով ավանդված տեքստերի հայերեն թարգմանելն ու հրատարակելը:

Միջին պարսկերենով ավանդված գրավոր հուշարձաններն ուսումնասիրած և հայերեն թարգմանած իրանական բանասիրու-

թյան եզակի հայ երախտավորներն են եղել Հարություն Թիրյաքյանը և Ռուբեն Աբրահամյանը: Հնդկաստանի գրադաշտականներ Դասթուր Խոդայար Շահրիյարի և Դասթուր Փելշուբանի աշխատասիրությամբ լույս տեսած միջին պարսկերեն բնագրերի հիման վրա Հարություն Թիրյաքյանի (1845-1919) գրչով միջին պարսկերենից հայերեն են թարգմանվել և հրատարակվել հիմնականում աշխարհիկ բովանդակություն ունեցող 6 հուշարձաններ, որոնք են «Արտաշիր Բաբական, Կարնամակը» (Փարիզ, 1906), «Անդարձ-ի Ատուրպատ-ի Մարասպանդը» (Նյու Յորք, 1909), «Գանձ Շայեկանը», «Փարոխ Պերոզը», «Խոսրով Կուստանը» և «Մատիկան Ճատրակին»: Վերջին 4-ը տպագրվել են Թիրյաքյանի մահից հետո՝ Վիեննայում 1957 թ.-ին, մեկ ընդհանուր ժողովածուի տեսքով՝ «Չորս պահլավիկ բնագիրներ» վերնագրով:

1934 թ.-ին Թեհրանի համալսարանի հիմնադրման հենց առաջին օրվանից այնտեղ բացված պահլավագիտության ամբիոնի ղեկավարումը ստանձնել և մինչև իր՝ Հայաստան վերադառնալը՝ 1946 թ.-ը, այդ պաշտոնում է աշխատել հայ անվանի իրանագետ Ռուբեն Աբրահամյանը (1881-1951), ում ձեռք է գրվել «Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն» բառարանը, բայց լույս տեսել միայն նրա մահից հետո՝ 1965 թ.-ին, Երևանում իր աշակերտներից Գեորգի Նալբանդյանի ջանքերով և խմբագրությամբ: Բացի միջին պարսկերենի բառապաշարը ներառող այդ արժեքավոր բառարանի հեղինակումից՝ Ռուբեն Աբրահամյանը միջին պարսկերենից հայերեն է թարգմանել չափազանց արժեքավոր երկու հուշարձան՝ «Յուշտի Ֆրիանը» և գրադաշտականների վախճանաբանական պատկերացումներն ամփոփող «Արտավիրապ նամակը», որոնք երկուսն էլ մեկ ժողովածուի տեսքով դարձյալ հետմահու լույս են ընծայվել նրա աշակերտի՝ Գեորգի Նալբանդյանի ջանքերով և խմբագրությամբ 1958 թ.-ին Երևանում:

Թիրյաքյանի և Աբրահամյանի՝ միջին պարսկերեն գրավոր հուշարձանների հայերեն թարգմանելու երախտավոր գործի շարունակությունն է Ռուբեն Նիկողոսյանի այս աշխատանքը:

Ռ. Նիկողոսյանի «Պահլավական ուսումնասիրություններ»-ում

հայերեն թարգմանությամբ ընթերցողին են ներկայացվում բնագրի լեզվից կատարված երեք միջին պարսկական հուշարձանների ամբողջական թարգմանություններ և ևս երկու հուշարձանների հատվածական թարգմանություններ: Դրանցից բոլորը, բացառությամբ մեկի, առաջին անգամ են թարգմանվում հայերեն:

Աշխատանքում ներկայացված է «Արտաշիր Փափագանի գործերի գրքի» (*Kārnamag ī Ardaxšēr ī Pābagān*) բնագրի լեզվից հայերեն կատարված թարգմանությունը՝ կից ներկայացված ծանոթագրություններով և որոշ նոր՝ հեղինակային մեկնաբանություններով: Միջին պարսկերեն այս աշխարհիկ ստեղծագործության՝ Էդալջի Քերասասպչի Անտիայի հրատարակած քննական բնագրի (Բոմբեյ, 1900) հիման վրա, Թիրյաքյանի թարգմանությունից 111 տարի անց լույս տեսնող հայերեն նոր թարգմանությունը առանձնանում է նրանով, որ հեղինակը, տիրապետելով բնագրի լեզվին և ծանոթ լինելով այդ ընթացքում հուշարձանի լեզվական քննությանը նվիրված և հրապարակում հայտնված բազմաթիվ, այդ թվում և՛ արևմտյան հետազոտությունների, ստեղծագործության տարբեր հատվածների համար ներկայացրել է նոր և տարբերվող թարգմանություններ, զուգահեռ սովել տեքստի տարբեր հատվածները մեկնաբանող, նախկին թարգմանիչների առաջարկած հաճախ իրարամերժ թարգմանությունները ներկայացնող և դրանք գնահատող ծանոթագրություններ:

Ռ. Նիկողոսյանը 1913 թ.-ին Ջամասպ-Ասանայի կողմից Բոմբեյում հրատարակված բնագրային տեքստի հիման վրա հայերեն է թարգմանել «Չարերի հիշատակարան» (*Ayādgār ī Zarērān*) միջին պարսկական հուշարձանը, ինչպես և «Վահման յասնի մեկնությունը» (*Zand ī Wahman Yasn*)՝ օգտագործելով Մ. Թ. Ռաշեդ-Մոհասսելի կազմած ու 2006 թ.-ին հրապարակած քննական բնագիրը և Կ. Չերետիի գրքում հրատարակված տեքստի չորս ձեռագիր օրինակները:

Չրադաշտի կյանքի ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն և սկզբնաղբյուրային արժեք ունի միջին պարսկերենով ավանդված «Չադասպարամի հատընտիրներ» (*Wizīdagihā ī Zādsparam*) ստեղծագործությունը, որի՝ աշխարհի արարչությանը և Չրադաշտի կյանքին վերաբերող բաժինները ևս Ռ. Նիկողոսյանի

կողմից բնագրային լեզվից կատարված թարգմանությամբ ներկայացվում են հայ ընթերցողին:

Վերջապես, այս գրքում առաջին անգամ Ռ. Նիկողոսյանի թարգմանությամբ հրատարակվում են գրադաշտական կրոնի ուսումնասիրության համար բացառիկ աղբյուր հանդիսացող և իր բարդ լեզվով հայտնի «Բունդահիշն» (Bundahišn) գրքից առանձին հատվածներ:

Միջին պարսկական գրականության թվարկված նմուշների հայերեն թարգմանելու և իրանական ու հայ բանասիրությամբ զբաղվող մասնագետներին ներկայացնելու նպատակը, թերևս, եղել է հեղինակի՝ Ջրադաշտի կյանքը և գրադաշտական կրոնի էությունը ըստ միջին պարսկական սկզբնաղբյուրների ներկայացնելու ցանկությունը: Նշված թեմայի ուսումնասիրության ընթացքում հեղինակի՝ բնագրից կատարած հայերեն թարգմանություններն իրենց լեզվով գրեթե նույնական են բնագրերի տեքստերի հետ՝ հագեցած մասնագիտական բովանդակ ծանոթագրություններով, և դրանց ներառումն ու հրատարակումն այս գրքում մեծ ձեռքբերում է և՛ հայ իրանագիտության, և՛ հայ թարգմանական գրականության ոլորտներում:

Պետք է փաստել, որ հայ իրանագիտության գրեթե երկդարյա պատմության ընթացքում Ռուբեն Նիկողոսյանը Հարություն Թիրյաքյանից և Ռուբեն Աբրահամյանից հետո երրորդ հեղինակն է, որ կարողացել է հենց բնագրերի լեզվից հայերեն թարգմանել և հրատարակության ներկայացնել միջին պարսկերեն գրավոր հուշարձաններ, ընդ որում՝ միայն այս գրքում՝ երեքն ամբողջական և երկուսը՝ հատվածական:

Վստահաբար, Ռ. Նիկողոսյանն այս գրքում ներկայացված իր թարգմանություններով նոր թափ է հաղորդում միջին իրանական լեզվադարաշրջանին պատկանող հուշարձանների՝ հայերեն թարգմանելու, ուսումնասիրելու և հայ ընթերցողին ներկայացնելու գործընթացին, ինչպես նաև նոր էջ է բացում իրանագիտության ԵՊՀ դպրոցի պատմության մեջ:

Արարյում Տոնոյան

բ. գ. բ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս գիրքն իր մեջ է ամփոփում վերջին մի քանի տարիների ընթացքում պահլավական (միջին պարսկական) բանասիրության ոլորտում կատարած իմ աշխատանքի և ուսումնասիրությունների արդյունքը, որ, ըստ իս, ընթերցողին կարող է օգտակար լինել Իրանի կրոնական և գրական պատմության ուսումնասիրության գործում, ինչն էլ իր հերթին կարող է բարենպաստ անդրադառնալ նաև հայագիտության ուսումնասիրության վրա: Իգուր չէ, որ պահլավագիտությունը դեռ ԺԹ դարից այդքան ուշադրության է արժանացել մի շարք հայագիտական հայագետների և իրանագետների կողմից, ինչպիսիք էին Ղ. Ալիշանը, Հր. Աճառյանը, Հ. Թիրյաքյանը, Ռ. Աբրահամյանը և այլոք:

Այս իրապես համեստ աշխատանքը փորձ է իմ կողմից մի փոքր ներդրում ունենալու հայկական իրանագիտության առաջընթացի մեջ, որ, հուսով եմ, ոչ հեռավոր ապագայում կգարդարվի ավելի ճարտար ու հմուտ գործերով՝ ավելի բանիմաց մասնագետների կողմից:

Այս աշխատությունը նյութական աշխարհի չէր գա առանց մի քանի անձանց քանկարժեք աջակցության, ինչի համար կցանկանայի ամենից առաջ շնորհակալություն հայտնել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Վարդան Ոսկանյանին, ով աշխատանքի սկզբից իսկ վճռական պատրաստակամություն հայտնեց ամեն կերպ օժանդակելու այս գործում՝ այսպիսով դնելով աշխատանքի հիմնաքարը, և ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս, բ. գ. թ. Արտյոմ Տոնոյանին, ով ստանձնեց սույն աշխատանքի խմբագրի պաշտոնը, և առանց ում խմբագրության այս աշխատանքը թերություններով ու պակասություններով լի կմնար:

Կցանկանայի շնորհակալություն հայտնել նաև ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս Հակոբ Ավչյանին՝ աշխատանքը ընթերցելու և անհրաժեշտ դիտողություններ անելու համար, ինչպես և ամբիոնի ողջ դասախոսական

կազմին ու աշխատակիցներին՝ մշտապես հետաքրքրություն ցուցաբերելու և օգտակար խորհուրդներ տալու համար:

Չեմ կարող շնորհակալություն չհայտնել նաև սիրելի ընտանիքիս, բարեկամներիս և ընկերներիս՝ ոչ միայն աշխատանքի նկատմամբ ցուցաբերած կենդանի հետաքրքրության ու դիտողությունների, այլև մշտական աջակցության և ոգեշնչման համար:

Հուսով եմ, որ այս փոքր ու սեղմ աշխատությունը անտարբեր չի թողնի հայ ընթերցողին, և աշխատանքի նպատակը իրականացած կհամարեմ, եթե ընթերցողը, գիրքը կարդալով, իր ժամանակը կորսված չի համարի:

Կարծում եմ՝ ավելորդ է ընդգծել, որ գրքում գտնված ցանկացած պակասության և թերության պատասխանատուն միմիայն գրքի հեղինակն է: Հուսով եմ, որ ընթերցողները այդպիսի պակասությունների հայտնաբերման կամ դիտողությունների դեպքում չեն հապաղի հեղինակին դրանց մասին տեղյակ պահել:

ՆԱԽԱԲԱՆ

Մոտ 1500 տարի առաջ երկու բանակ իրար դեմ կանգնեցին Արաքսի վտակներից մեկի ափերին: Երկուսն էլ պատրաստ էին պատերազմելու իրար դեմ, և երկուսն էլ պատճառ ունեին դրա համար: Դրանցից մեկի մարտիկները առաջնորդվում էին իրենց ազգի, հավատի ու ինքնուրույնության պահպանության գաղափարով և այնքան էին հաստատուն այդ համոզմունքի մեջ, որ այդտեղ էին հասել առանց պետական օրենքի հարկադրանքի, նույնիսկ հակառակ պետության օրենքին: Մյուս կողմը, որ կազմակերպված մի ռազմական միավոր էր՝ զրահակիր ու վարժված զինվորներով, փորձառու հրամանատարներով, արքայական հրովարտակը իր ձեռքում ունենալով, նույնպես իր պատճառն ուներ այդտեղ գտնվելու համար. այն նոր կրոն էր բերում իր հետ:

Սովորաբար ամեն երևույթ ունի իր սկզբնապատճառը, և այդպես է նաև մարդկային հասարակության մեջ: Բանակները շարժվում են, արքաները՝ գահընկեց արվում կամ կախաղան բարձրացվում, մարդիկ ենթարկվում են կամ չեն ենթարկվում իրենց իշխանավորներին, կամ շատ մեծ ցանկություն ունեն չենթարկվելու, բայց չնայած դրան՝ խոնարհ կերպով ենթարկվում են... Միշտ ու ամեն ինչի համար պատճառներ գոյություն ունեն: Եվ այդ պատճառների ու դրանց հետևանքների ուսումնասիրությանն է նվիրված պատմագիտությունը: Այդ գիտությունն է, որ պատկերացում է տալիս մարդուն իր անցյալի մասին, որպեսզի վերջինս հասկանա իր ներկան ու այդով հանդերձ՝ նաև ապագան: Այնպես, ինչպես շատերը հետաքրքրվում են իրենց մանկութամբ, ծնողների անցյալով կամ նախնիներով՝ դրանով փորձելով ավելի լավ հասկանալ իրենք իրենց:

Ուսումնասիրելով Ավարայրի ճակատամարտը և նման այլ պատմական դեպքեր ու երևույթներ՝ ամբողջական պատկերացում կազմելու համար մենք կարիք ունենք ուսումնասիրելու նյութը բոլոր կողմերից: Այդպես է իրերի դրությունը նաև ողջ հայոց պատմության դեպքում: Ցանկացած երկրի պատմությունը ուսումնասիրողի գիտե-

լիքը միշտ էլ դատապարտված է պակասավոր մնալու, եթե նա բաց թողնի հարևան ազգերի, ժողովուրդների ու պետությունների պատմությունը, նաև երբ ուշադրություն չդարձնի անգամ հեռավոր ազգերի պատմությանը: Այդ պատմությունները մի ընդհանուր գործվածքի կտորներ են, որոնք, միայն որպես ամբողջություն դիտարկվելով, կարող են իմաստ պարունակել:

Այսպես՝ եթե հայոց պատմությամբ հետաքրքրվողին չհետաքրքրի ասենք, օրինակ, սելջուկների, մոնղոլների կամ հռոմեացիների պատմությունը, թեկուզ միայն շատ նեղ շրջանակում, ապա նա չի կարող լիարժեք պատկերացում ունենալ հայկական պատմության՝ համապատասխան ժողովուրդների հետ շփումների ժամանակաշրջաններից: Այս ամենը կհանգեցնի միայն նրան, որ մարդը, զարմանքից ու դժբախտության զգացումից զատ, ոչինչ չի քաղի և եթե հանկարծ իրար հակասող երկու աղբյուրի հանդիպի, իր ուսումնասիրությունը մի կողմ կթողնի՝ պատմությունը համարելով ժամանակի անիմաստ վատնում:

Պատմություն ասելով, սակայն, պետք չէ հասկանալ քաղաքական պատմությունը միայն: Դրանով պետք է հասկանալ կյանքը, այն կյանքը, որ նախկինում է գոյություն ունեցել, իր բոլոր կողմերով: Այսինքն՝ նույնն է թե՛ պատմությունը ոչ միայն Հուլիոս Կեսարի և իր բրիտանական արշավանքի ժամանակագրությունն է, այլև այն, թե ովքե՞ր էին արշավողները, ի՞նչ կրոն էին դավանում, ի՞նչ մշակույթ ունեին, ո՞ւմ դեմ էին արշավում, ի՞նչն էր այդ արշավանքի պատճառը և այդպես շարունակ: Այդ հարցերին պատասխանելով է, որ մենք կհասկանանք մերօրյա կեսարներին և, ինչու ոչ, ինքներս մեզ:

Այս հարցերն իրականում այստեղ քննարկելու համար ամենից հարմար վայրը չէ, հատկապես, որ գրվում է պատմագիտության և պատմության փիլիսոփայության մեջ միայն մակերեսային գիտելիքներ ունեցող մեկի կողմից, սակայն անհրաժեշտ գտա այս ամենը վեր բերել՝ միայն պատճառաբանելու համար այն, ինչ այստեղ ներկայացնելու եմ:

Այսպես, ըստ Եղիշեի, Ղազար Փարպեցու և այլոց պատմությունների, Սասանյան Իրանը բերել էր իր զորքերը և շարել նրանց Ավարայրի դաշտում, քանզի ցանկանում էր Հայաստանում տարածել «կրակապաշտությունը» կամ, ինչպես իրենք էին իրենց կրոնը կոչում, «դեմ ի մագդեգը»: Սակայն ի՞նչ կրոն էր դա, և ի՞նչ էին ուզում ասել Սասանյան արքաները այդ քայլով:

Այս աշխատության սահմաններում ես փորձելու եմ նյութեր ներկայացնել այդ կրոնի մասին, որոնք հետաքրքրվողին կօգնեն որոշ չափով հասկանալ այդ կրոնի էությունը և, միգուցե, անգամ գտնել այդ հարցերի պատասխանները:

* * *

Իրանական ժողովուրդները¹ դարեր շարունակ հանդիսացել են հայ ժողովրդի հարավային (երբեմն նաև հյուսիսային, եթե հիշենք ալաններին) հարևանները: Այս ժողովուրդները, որոնք հնում տարածված են եղել Չագրոսի լեռներից մինչև Հինդոս գետի արևմտյան ափերն ընկած լայնարձակ տարածության մեջ, Միջին Ասիայում, Հարավային Ռուսաստանում (Սև ծովի հյուսիսային ափերից մինչ այսօրվա դազախական տափաստանները), ինչպես նաև Տակլա-Մական անապատի եզրերին սփռված փոքրիկ օազիսային քաղաքներում և դրանց շրջակա տարածքներում, մի ժամանակ ունեցել են ոչ միայն ընդհանուր լեզու, այլև ընդհանուր առասպելներ, սովորույթներ, աշխարհայացք և մտավոր ինքնարտահայտման այլ ձևեր: Անշուշտ սխալ կլինի մարդկային այդ հսկայական հանրությունը պատկերացնել որպես մի ամբողջություն՝ միանման իր բոլոր կողմերով, սակայն եթե հաշվի առնենք նրանց լեզվի և պատկերացումների՝ մեկ ընդհանուր աղբյուրից ծագած լինելու փաստը, պետք է խոստովանենք, որ նրանք միմյանց հետ ունեցել են մեծ նմանություններ:

¹ *Իրանական ժողովուրդներ* անունով մենք հասկանում ենք *հնդեվրոպական* լեզվաընտանիքից ծագած մի քանի ճյուղերից մեկի՝ *հնդիրանական* լեզվաճյուղի *իրանական* ենթաճյուղից ծագած, միմյանց ազգակից լեզուներով խոսող բազմաթիվ ժողովուրդները:

Կարելի է հանգիստ ու առանց երկմտանքի նշել, որ այս ժողովուրդները հազարամյակներ շարունակ ուղղակի և անմիջական հարաբերություններ են ունեցել Հայկական լեռնաշխարհում բնակվող ժողովրդի հետ: Սկյութները, մարերը, պարսիկները, պարթևները և այլ փոքր ու մեծ իրանական ժողովուրդները եղել են մեր հարևանները: Եվ այդ հարևանությունները անհետ չեն կորել, այլ միշտ փոխադարձաբար հետք են թողել հարաբերվող կողմերի վրա: Այսպես է եղել ինչպես լեզվի, այնպես էլ հավատալիքային բնագավառներում: Սասանյան շրջանում և դրանից առաջ էլ հայերը հաճախ են ստիպված եղել առնչություններ ունենալու պետության պաշտոնական կրոնի՝ զրադաշտականության հետ:

Ահա այս իրողություններն են, որ մեծ խթան են հանդիսացել և հանդիսանում նրա համար, որ հայագիտական շրջանակները ուշադրություն դարձնեն իրանական լեզուների, առասպելների ու կրոնների ուսումնասիրության վրա:

Սակայն սխալ կլինի կարծել, թե միայն հայագիտության նկատմամբ հետաքրքրությունն է, որ կարող է այս թեմայի ուսումնասիրության պատճառ դառնալ: Ընդհանրապես տարրական հետաքրքրությունը մարդկային մտքի և դրա զարգացման պատմության նկատմամբ կարող է բավարարել, որ մարդիկ ուսումնասիրեն իրանական լեզուներով խոսող ազգերի կրոնները, առասպելները, ինչպես ուսումնասիրում են, օրինակ, հունական դիցաբանությունը, հնդկական էպոսները կամ չինական փիլիսոփայությունը: Ճակատագրի բերումով այս իրանական ազգերն են, որ դարերով իշխել են մարդկության քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկի՝ Միջագետքի վրա, որտեղով նաև անցել են հետագայում «Մետաքսի ճանապարհ» անունով հայտնի դարձած՝ դեպի Արևմուտք կամ դեպի Արևելք տանող ուղիները: Իշխանությունն այս հողերի վրա նման է եղել մի «քամու», որ տարածել է իրանական հավատալիքային պատկերացումները աշխարհի բազմաթիվ ազգերի վրա: Այդ հավատալիքային պատկերացումների հողից ծնունդ առած *զրադաշտական կրոնն* իր ազդեցությունն է թողել «*Հին կրակարան*»-ի և «*Նոր կրակարան*»-ի,

հունական փիլիսոփայության, գնոստիկ կրոնափիլիսոփայական ուղղությունների, տարբեր հին և միջնադարյան աղանդների և *խլիստիկ* վրա: Ջրադաշտականությունն է հանդիսացել այն հիմքը, որի վրա Մանին (216-277 թթ.) հիմնել է իր ուսմունքը՝ մանիքեականությունը (Գ դար), ում աշակերտները հետագայում իրենց ունկնդիրներն ունեցան ինչպես Հռոմեական կայսրության արևմտյան ծայրագավառներում, այնպես էլ Չինական կայսրության արևելյան նահանգներում: Ջրադաշտականության հիմնադրի անունը (Ջրադաշտ, Ջորոաստր կամ Ջարաթուշթրա) խորհրդավոր ոգեշնչանք է եղել բազում հույն իմաստունների համար և լարել նրանց երևակայությունն այնպես, որ ԺԸ դարում եվրոպացի փիլիսոփաները, նրա մասին հունական մատյաններից տեղեկանալով, երազում էին գրադաշտականության հետևորդների վերջին մնացորդներից ձեռք բերել այն իմաստությունները, որի մասին այդքան մեծ հարգանքով խոսում էին հույները: Ջրադաշտականության ուղղակի ազդեցությունը, ինչքան էլ որ տարօրինակ թվա, զգացվում է նաև մեր օրերում: Դրա օրինակը կարող են լինել թեկուզ հենց այսօրվա քրդական ազգայնական շարժման ներկայացուցիչները, ովքեր իրենց ազգայնական երազանքները փաթաթում են Ջրադաշտի պատմունքներով՝ դրանց առավել հնություն հաղորդելու համար:

Եվ դեռ շատ երկար կարելի է շարունակել թվարկումն այն ձեռքբերումների, որ իր մեջ պարունակում է իրանական հավատալիքների և դրանց մարմնացում ու համակարգում հանդիսացող գրադաշտականության ուսումնասիրությունը: Ջրադաշտականությունն է, որ իր պատմական զարգացման ընթացքում իր մեջ է ամփոփել իրանական առասպելաբանության, սովորույթների և աշխարհընկալման տարրերը և այդպիսով դարձել այդ հավատալիքային համակարգի հիմնական ներկայացուցիչը: Եվ բացի դրանից՝ կարելի է նաև հավելել, որ գրադաշտականությունը, լինելով հնդեվրոպական մայր ժողովրդի հավատալիքային ուղղակի ժառանգը, կարող է նյութեր մատակարարել նաև այլ հնդեվրոպախոս ժողովուրդների առասպելներն ու սովորույթները ուսումնասիրելու և բացատրելու համար:

Ամփոփելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ մարդկության վրա ամենից մեծ ազդեցություն թողած մի քանի կրոնների թվին պատկանող գրադաշտականությունը, որ իր պատմական դերով ու նշանակությամբ հավասար է կանգնած քրիստոնեության, իսլամի, բուդդայականության, հնդկական և այլ կրոնների կողքին, ուսումնասիրության համար բավական կարևոր առարկա է, որ իր ջանասեր ուսումնասիրողին լայն հնարավորություններ կարող է տալ մարդկային մտքի պատմությունը հասկանալու համար: Այս ամենը եզրավակելով՝ կարող ենք անցնել գրադաշտականության նկարագրությանը:

1. ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

1.1. Ներածությունը գրադաշտական կրոնի

Ընդհանուր ակնարկ: Չրադաշտը: Չրադաշտի ժամանակը: Չրադաշտի հայրենիքը: Հնդեվրոպական նահակրոնը: Ինչպես խոսեց Չրադաշտը: Ինչպես սպրեց Չրադաշտը: Ավետարան: Չրադ-ությունը պարմության մեջ:

Կրոնների բաժանման ու դասակարգման տարբեր եղանակներ են առաջարկվել դրանց գիտական ուսումնասիրության վերջին 150-200 տարիների ընթացքում, և այդ եղանակներից բոլորն էլ ինչ-որ չափով ունեն իրենց հիմնավորումը: Ընդհանուր առմամբ այստեղ հարմար կլինի ընդունել կրոնների դասակարգման «անհատական-ազգային» սկզբունքը: Այս դասակարգման համաձայն՝ կրոնները կարող են լինել՝ ա. «ազգային» կամ «էթնիկական», որոնք առաջացած են ոչ թե ինչ-որ անհատի ուսմունքի շուրջ, այլ որպես հիմք ունեն մարդկային համայնքի, հասարակության հավատալիքային համակարգը, և բ. «անհատական», որոնք ձևավորված են սովորաբար մեկ անհատի քարոզած գաղափարախոսության շուրջ: Իհարկե՛, այս բաժանումը չի բացառում այն (կարելի է ասել) անխուսափելի հանգամանքը, որ անհատական կրոնները սովորաբար իրենց հիմքում ունենում են ազգային հավատքը: Այսպիսով՝ եթե հնդկական կրոնը (hinduism) հիմնված չէ ինչ-որ անհատի փիլիսոփայական հայացքների վրա (և այդպիսով դասվում է ազգային կրոնների ցուցակում), ապա բուդդայականությունը, հիմնված լինելով Բուդդիայի ուսմունքի վրա, որպես հիմք ունեն հենց նույն հնդկական կրոնը:

Այս պարզ դասակարգմամբ առաջնորդվելով էլ մենք մեր հայացքի տակ ենք առնում գրադաշտականությունը, որ հազարամյակներ շարունակ եղել է իրանական ժողովուրդների մեջ ամենից գերիշխող կրոնը: Բնականաբար, այն պատկանում է անհատական կրոն-

ների ցանկին, քանզի, ինչպես արդեն պարզ դարձավ, ունի իր հիմնադիրը, ով Ջրադաշտն է: Այստեղ կարևոր չէ, թե արդյո՞ք այդ մարդու անունը Ջրադաշտ է եղել, թե ոչ, կարևոր է մեկ բան՝ այն, որ նման մարդ գոյություն է ունեցել, և կարելի է ասել, որ հիմնավորված չեն այն սակավաթիվ ուսումնասիրողների կասկածները, ովքեր ենթադրելու են ենթադրում են, որ Ջրադաշտի գոյությունը չունի պատմական հիմք, կամ թե նա եղել է առասպելական մի աստվածություն²: Մեզ համար հատկապես կարևոր է այն փաստը, որ առնվազն զրադաշտականները Ջրադաշտին համարել և համարում են մի անհերքելի պատմական անձնավորություն: Դժվար է այժմ բազմաթիվ ու ծավալուն փաստարկներ այս գրքում ներկայացնելը, որոնք երկար ու վերլուծական շարադրանքով կապացուցեին Ջրադաշտի գոյությունը, սակայն, ինչպես առաձն է ասում, «ծուխն առանց կրակի չի լինում»³: Այսինքն՝ ցանկացած կրոն, որի հետևորդները համարում են, որ այն հիմնվել է մեկ մարդու կողմից (անկախ նրանից՝ երկնային միջամտությունից եղել է, թե ոչ), պետք է այդպես էլ առաջացած լինի, քանի որ կրոնները գոյություն ունեն ավանդության շնորհիվ, որը թույլ չէր տա նման նորանուծությունը կրոնի հարցում: Հաշվի առնելով այն պատմական բոլոր աննշան, բայց կարևոր մանրամասնությունները, որոնք պարուրում են Ջրադաշտի անձնավորությունը և նրա բարեկամներին բոլոր զրադաշտական աղբյուրներում, դժվար կլինի նրան

² Այս տեսակետների մասին համառոտ կերպով տե՛ս Skjærvø P. O., *Introduction to Zoroastrianism*, pp. 52-54, ինչպես նաև նույն հեղինակի “Zarathustra: First Poet-Sacrificer,” in *Paitimāna. Essays in Iranian, Indian, and Indo-European Studies in Honor of Hams-Peter Schmidt*, vols. I-II in one, ed. S. Adhami, Costa Mesa: Mazda, 2003, pp. 157-94:

³ Այս առիթով կարելի է մեջբերել զրադաշտականության ժամանակակից ուսումնասիրողներից մեկի՝ Ալբերտ Դե Յոնգի կարծիքը. «Zarathustra’s existence cannot be proved and cannot be disproved. It is, moreover, for the greater part of our discipline, irrelevant. Zarathustra exists within the Zoroastrian tradition, which claims to have grown out of his teaching and which has faithfully preserved some of his words, the Gāthās. There is no other option but to view Zarathustra from within the tradition, because only the tradition has preserved his memory and his texts» (Alb. De Jong, *Traditions of the Magi*, Brill, 1997, p. 58):

համարել ինչ-որ երկնային աստվածություն, որին մարդիկ իջեցրել են երկիր ու մարդկային կերպարանք տվել: Կրոնների հիմնադիրների հարցում մնան տեսակետ ունենալը պարզապես հիմնավորված չէ⁴:

Անհատական կրոնները քննարկելիս միշտ անհրաժեշտ պայման է նաև անդրադարձը այն կրոններին, որոնցից դրանք ծագել են: Այստեղ այդպիսի հիմք է հնդիրանական «նախակրոնը», որի մասին իրականում մենք շատ բան չգիտենք, և այն էլ, ինչ-որ գիտենք, մեզ է հասել դրա «դուստր» կրոնների՝ գրադաշտականության և հնդկական կրոնի միջնորդությամբ, այսինքն՝ ոչ ուղիղ ճանապարհով: Այս հավատալիքային համակարգի մասին խոսք կգնա ներքևում, իսկ առայժմ բավական կլինի նշել, որ հնդիրանական «նախակրոնը» ինքնին ծագել է հնդեվրոպական հավատքից և ամենայն հավանականությամբ եղել է *Միջին Ասիայի հարավային կամ հարավ-արևելյան* տարածքներում 4-5 հազար տարի առաջ բնակվող ժողովրդի կրոնը, այն ժողովրդի, որից հետագայում առաջացան հնդկական և իրանական ժողովուրդները:

Ջրադաշտը: Ոչ ոք չգիտի, թե ով է եղել գրադաշտական կրոնի հիմնադիրը, և երբ է նա ապրել: Ճիշտ կլինի ասել, որ ոչ ոք հաստատ չգիտի: Եթե նրա մասին սկսեինք պատմել, հարմար կլիներ սկսել այսպես. «Կար, չկար, մի մարդ կար, որ ապրում էր ինչ-որ մի երկրում...»:

Իսկապես, եթե փորձենք ի մի բերել Ջրադաշտի ժամանակաշրջանի, ապրելու վայրի, կյանքի և այլ մանրամասնությունների վե-

⁴ Համեմատության համար կարող ենք բերել ձեռագիր գրքերի օրինակը: Օրինակ՝ «Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացույ» կոչվող մատյանի հայերեն ուշ միջնադարյան խմբագրությունը բավական տարբեր է իր վաղ միջնադարյան բուն քարգմանությունից, որ կատարվել է հինգերորդ դարում: Այս քարգմանությունը իր հերթին կատարվել է հույն բնագրից, որ վերագրվում էր Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքին մասնակցած Կալիսթենես պատմագրին: Չնայած մենք գիտենք, որ իրականում Կալիսթենեսը չէ վեպի հեղինակը, այնուամենայնիվ ոչ ոք դեռ առաջ չի քաշել այն տեսությունը, որ գիրքը հեղինակ չունի և ինքնիրեն է գրվել:

րաբերյալ առկա տեղեկությունները, կոժվարանանք որևէ վերջնական և հստակ եզրակացության հանգել:

Եվ դա դժվար չէ հասկանալ: Նման կիսաառասպելական ժամանակներում, որոնց մասին ասում են «անհիշելի ժամանակներ», երբ չկար գիր կամ մնայուն հիշատակ թողնելու միջոցների մերօրյա բազմազանությունը, դժվար էր հստակ տեղեկություններ սերունդներին փոխանցելը: Դա անելու միակ միջոցը բանավոր փոխանցման ուղին էր, որ չափազանց անվստահելի էր և ամենևին ոչ ճշգրիտ: Այդ միջոցների անճշգրտության և դրանից օգտվող մարդկային երևակայության շնորհիվ են ձևավորվել բոլոր առասպելները, որոնց ամենատարօրինակ բովանդակությունները թույլ են տալիս մեզ պատկերացում կազմել դրանց փոխանցման ուղիների մասին: Մայրը հոր պատմությունը պատմում էր որդուն, ով արդեն սոսկ լսելու ընթացքում հասցնում էր բավական աղավաղել այն, իսկ երբ որդին էր պատմում այն իր որդուն կամ թոռանը, պատմությունը դառնում էր անճանաչելի: Այդպիսով, երբ տատը տանը՝ կրակի շուրջը հավաքված թռռներին գրույցներ էր պատմում հին ժամանակներից, այդ պատմություններում արևը դառնում էր Արև, լուսինը՝ Լուսին, և երկինքներում հանկարծակիորեն ծնվում էին քառաձի կառքեր վարող, բոց մորուս ու հրե աչկունք ունեցող աստվածներ, որոնք հուր ու կայծակ էին թափում երկրի վրա, սպանում էին վիշապներին, անձրև բերում պապական զաշտերին և վերջում, երկիր իջնելով, դառնում քաջ հերոսներ, փրկում քաղաքներ ու գեղեցկուհիներ և խորենացիներին պատմություն գրելու առատ նյութ մատակարարում: Իհարկե, եթե գիտության տեսանկյունից նայենք, մի քիչ դժվար կլինի այսպիսի պարզ բացատրություններով բավարարվելը, սակայն վերջիվերջո ամեն առասպել ու հեքիաթ հանգում է իրականության և մարդու երևակայության խառնուրդին:

Երբեմն, սակայն, որպես հատուկեմտ բացառություն, կատարյալ հակառակ երևույթն էլ էր հանդիպում բանավոր փոխանցման այս գործընթացում, և որքան էլ որ մեզ համար դա զարմանալի կա-

րող է թվալ, այդ բացառությունները հաճախ ավելի ճշգրիտ կերպով էին նյութը պահպանում, քան ձեռագիր գրքերը: Խոսքը անգիր արվող կրոնական (հիմնականում) կամ աշխարհիկ (հազվադեպ) չափածո ստեղծագործությունների մասին է:

Այսպես՝ այսօր մենք այդ կերպով պահպանված ենք գտնում հնդկական ավանդական կրոնի սրբազան կարևորագույն գրքերը՝ վեդաները, որոնք չորսն են, և որոնք դարեր շարունակ պահպանվել են բանավոր ուղիով՝ ամենայն մանրամասնությամբ և հնչյունային ճշգրտությամբ: Դրանցից ամենահինն ու կարևորը՝ «Ռեգ/Ռիգ-վեդա»-ն (սանս.՝ *ṛgveda*, լճ՝ «երգ» և *veda*՝ «գիտություն»), ամբողջությամբ կազմվել և իր վերջնական տեսքն է ստացել այսօրվանից շուրջ 3500 տարի առաջ և բանավոր փոխանցման շնորհիվ մեզ է հասել գրեթե առանց փոփոխության՝ պահպանելով իր հին լեզուն՝ վեդայական սանսկրիտը⁵: Այդ հարցում պետք է երախտապարտ լինել հնդկական բրահմաններին, ովքեր, այդ անգիր «գրքերը» մտքում պահպանելով և սովորեցնելով իրենց աշակերտներին, հաջողացրել են դրանք փոխանցել հետագա սերունդներին՝ մինչև այսօր:

Այլ նմանատիպ դեպքեր հանդիպում են մաս ուրիշ ժողովուրդների մոտ, որոնցից են, օրինակ, հին հունարենով մեզ հասած Հոմերոսին վերագրվող «Իլիական» ու «Ոդիսական» քաջապատումները, գրադաշտականության հին սրբազան լեզվով փոխանցված «Ավեստա»-ն և այլ քիչ թե շատ հին չափածո ստեղծագործությունները:

Հատկապես մեծ կենսունակությամբ էին օժտված կրոնական բնույթի երկերը, որոնց պահպանմանը միշտ ավելի մեծ ուշադրու-

⁵ Սանսկրիտ անվանումը ծագում է հին հնդկերեն *samskṛta* բառից, որ այդ լեզվով հենց մշանակում է «համահավաք, կատարելագործված» (բառացի թարգմանությամբ՝ «համակերտ») և երկու հազարամյակ առաջ դեռևս օգտագործվել է բնութագրելու համար հին դասական գրավոր հնդկերենը, ի հակադրություն պրակրիտի՝ խոսակցական լեզվի (որը լեզվի զարգացման ավելի ուշ շրջան էր ներկայացնում), ինչով այն կարելի է համեմատել հայերենի գրաբարի հետ: Թեև այս լեզուն («դասական» կոչվող սանսկրիտը) ինքնին բավական հին էր, այնուամենայնիվ վեդաների լեզուն («վեդայական» սանսկրիտը) իր հնությամբ գերազանցում էր այն և հասնում մինչև մ. թ. ա. երրորդ և երկրորդ հազարամյակների սահմանաբաժան:

թյուն էր դարձվում, քանի որ, ըստ հավատալիքային պատկերացումների, այդ երկերը և, մասնավորապես, աստվածներին ուղղված ձոներն ապահովում էին աստվածների բարեհաճությունը մարդկանց նկատմամբ: Իսկ դրանց լեզուն, որ օժտված էր կախարդական զորությամբ, ըստ ամենայնի պետք է արտասանվեր ամենայն ճշգրտությամբ: Ահա դա է պատճառը, որ հազարամյակների խորքից մեզ են հասել «Ավեստա»-ն և «Ռիգ-վեդա»-ն՝ կրոնական և լեզվական այդ երկու կարևորագույն կոթողները, ընդ որում կարևոր է նաև նշել, որ երկուսն էլ հիմնականում աստվածների մեծարմանն ուղղված ձոներգեր են, որոնք կատարվում էին գոհաբերությունների ժամանակ, մինչդեռ ոչ մի արժանահավատ տեղեկություն դրանց ստեղծողների վերաբերյալ չի պահպանվել:

Ջրադաշտի կյանքը: Ջրադաշտի կյանքի մասին տեղեկություններ պահպանվել են ամենատարբեր գրականություններում ու գրքերում: Սակայն ամենից կարևոր տեղեկությունները նրա մասին մենք քաղում ենք «Ավեստա»-ից՝ գրադաշտականների սուրբ գրքից, և հատկապես «Ավեստա»-ի «գաթաներ» (< ավեստ. gāthā- «[կրոնական բովանդակություն ունեցող] երգ») կոչվող հատվածից, որոնք վերագրվում են անձամբ Ջրադաշտին, և պահլավական՝ միջին պարսկական գրականությունից, որ, կարելի է ասել, ավեստայական գրականության ժառանգորդն է:

Չնայած «Ավեստա»-ում Ջրադաշտի անձին հատկացված չափազանց մեծ կարևորությանը՝ այնտեղ մենք շատ քիչ տեղեկություն կարող ենք գտնել նրա մասին: Առավել ամբողջական ու ծավալուն տեղեկությունները մեզ տալիս են պահլավական գրադաշտական երկերը⁶, որոնք գրված են միջին պարսկերենով, այսինքն՝ այն լեզվով, որ խոսվում էր Մասանյան իրանական կայսրության (մ. թ. Գ-Է դա-

⁶ Այս երկերի հիմնական բովանդակությունը հավանաբար կազմված է եղել սասանյան (Գ-Է դդ.) կամ ավելի վաղ ժամանակաշրջանում, քեև մեզ հասած բուն պահլավական գրքերը գրվել են ավելի ուշ շրջանում:

րեր) մեջ: Ընդհանուր առմամբ, եթե կարելի է նման կրոնական տեղեկությունների մասին խոսելիս օգտագործել «արժանահավատ» բառը, ապա սրանք ամենից արժանահավատ տեղեկություններն են նրա մասին, քանի որ այդ պահլավական գրքերի հեղինակները ամենից մոտն էին կանգնած ավետալական կորսված բնագրերին, ինչպես և իրենք էին հանդիսանում դարերից եկող բանավոր ավանդությունների կրողները:

Պահլավական աղբյուրների համաձայն⁷ Ջրադաշտը ծնվել է Ատրպատականի Մողան գավառի Ռադ գյուղում՝ հասարակ մի մարդու՝ Փորուշասայի և նրա կնոջ՝ Դուդդովի ընտանիքում: Նա իր մանկությունն անց է կացրել ընդունված վատ կարգերի դեմ պայքարելով և երեսուն տարեկանում հանդիպում է ունեցել գլխավոր ու մեծագործ աստծո՝ Օհրմագրի հետ, ով նրան սովորեցրել է Դենը, այսինքն՝ Հավատքը: Դրանից միայն 12 տարի հետո է նա հաջողացրել կրոնափոխ անել առասպելական Քայյան հարստության արքա Վիշտասային, որից հետո էլ, ըստ ավանդության, Ջրադաշտի կրոնը դարձել է ողջ Իրանի կրոնը: Ջրադաշտը սպանվել է 77 տարեկան հասակում թշնամիների կողմից⁸:

Այս ողջ պատմությունը, որ բնագրերից թարգմանությամբ ներկայացված է այս գրքում, բավական հետաքրքիր է այն առումով, որ հաճախ պարունակում է բավական իրատեսական գծեր, որոնք չեն կարող զուտ առասպելական լինել: Այդպիսին է առաջին հերթին նրա ծագումը սովորական ծնողներից, ովքեր առանձնապես ոչ մի երկնային կամ թագավորական իշխանություն չունեն: Իհարկե, ըստ ավանդության, նրա «Փառքը» երկնքից իջել է երկիր և մոր ծննդյան ժամանակ բնակվել վերջինիս մարմնում (ինչը բավական նման է Մարիամի և Սուրբ Հոգու պատմությանը), սակայն սա մի հետագա հավելում է, որ կատարվել է ժամանակի ընթացքում և դժվար թե կապ

⁷ Ջրադաշտի կենսագրությունները պահպանվել են հատկապես Wizdagtāh ī Zādspram և Dēnkard պահլավական աշխատություններում:

⁸ Կարծում են՝ կարիք չկա նշելու, որ այս տեղեկությունները չի կարելի ընդունել առանց քննական մոտեցման:

ունենա իրականության հետ: Մեկ այլ գիծ է նաև նրա մյուս եղբայրների գոյության փաստի հիշատակումը, ինչպես նաև հրաշքների քանակի համեմատական քչությունը նրա կենսագրության մեջ: Հավանաբար նույն կարգին են պատկանում նաև նրա մի քանի մանր բարեգործությունները, որոնք, հնարավոր է, հիշատակված են եղել վաղ ավեստայական գրականության մեջ, և որոնք հավանաբար ի մի են բերվել պահլավ հեղինակների կողմից:

Մնացած դեպքերում, հատկապես կրոնի համար կարևոր իրադարձությունների ժամանակ, Ջրադաշտի կյանքը հաճախ մեծ նմանություններ է ունի բազմաթիվ այլ նշանավոր անձանց կենսագրությունների հետ, այսինքն՝ լիքն է առասպելներով կամ հրաշքներով: Առաջին հերթին դա նրա ծննդյան և կյանքի սկզբնական շրջանի պատմությունն է: Այստեղ, բացի ծննդյանն ուղեկցող աստվածային առանձնահատուկ նշաններից, որոնք միշտ անբաժան են եղել նշանավոր մարդկանց կենսագրություններից, աչքի է ընկնում հատկապես նման առասպելներին հատուկ «հալածողների, թշնամիների» գաղափարը: Եթե այստեղ նրա հետագա փառքը կանխելու համար Ջրադաշտին վնասել են ցանկանում ահրիմանական դևերը և ապա Քարաբ հինգ եղբայրները, ապա նույն գիծը կարելի է տեսնել նաև բազմաթիվ այլ ազգերի առասպելաբանությունների և անգամ պատմության մեջ: Ահա այդպիսի պատմություններից միայն մի քանիսը.

- *Մովսես և Փարավոն:* Այս պատմությունը, որ ներկայացված է «Հին կտակարան»-ի «Ելից» գրքում, պատմում է Եգիպտոսի փարավոնի՝ հրեաների արու զավակներին սպանելու հրամանի մասին, որից խուսափելու համար նորածին Մովսեսին, զամբյուղի մեջ դրված, դնում են գետը: Այստեղ հավանաբար պատմությունը մի քիչ ձևափոխվել է, և Մովսեսի հետագա մեծությունից եկող վտանգը փոխարինվել է հրեա ժողովրդի բազմանալուց ու հզորանալուց եկող վտանգով:

- *Կյուրոս և Աժդահակ*⁹: Աժդահակը, որ Մարաստանի արքան է, երագում տեսնելով թռռան մեծությունը, հրամայում է իր ծառա Հարպագոսին տանել և սպանել նորածնին, ինչը տեղի չի ունենում, և Կյուրոսը հետագայում գահընկեց է անում Աժդահակին:
- *Էպիոնի որդի Կյուպսելու*¹⁰: Կորնթոսի հունական քաղաքի ավագանին, իմանալով, որ Էպիոնի որդին բռնակալ է դառնալու, նրան սպանելու համար մի քանի մարդ է ուղարկում, սակայն վերջիններիս խղճահարության պատճառով երեխան չի սպանվում և իրականացնում է մարգարեությունը:
- *Արքա Էդիպոս*: Հայրը, իմանալով, որ զավակն իր մահվան պատճառն է լինելու, նրան սպանել է հանձնարարում իր հովվին, ով կրկին չի սպանում երեխային և պատճառ դառնում ողբերգական մի պատմության, որ հիմք է դարձել Սոփոկլեսի «Էդիպոս արքա» ողբերգության:
- *Հերովդես և Հիսուս*: Այս հայտնի պատմության մեջ ևս հանդիպում է նույն գիծը, երբ արքան, տեղեկանալով մեծ ապագա ունեցող նորածնի մասին, փորձում է սպանել նրան, սակայն ապարդյուն:

Եվ վերջապես կան բազմաթիվ այլ նմանատիպ առասպելներ՝ Քրոնոսը և Չևսը, Հռոմուլոսն ու Հեննոսը, Սամը և նրա որդի Չալը (Ռուստամի հայրը), և այդպես շարունակ:

Բացի դրանից՝ այլ կարևոր առասպել է հանդիսանում, արդեն հիմնականում կրոնական տեսանկյունից, նրա տանջանքները և հալածանքները Վիշտասպին հանդիպելուց հետո՝ մինչև վերջինիս՝ գրադաշտական հավատքն ընդունելը, որ տեղի է ունենում հրաշքի

⁹ Հերովդոտոս, գիրք Ա, մասեր 108-130:

¹⁰ Հերովդոտոս, գ. Ե, մ. 92:

միջոցով միայն: Դրան շատ նման է Գրիգոր Լուսավորչի մասին պատմվող առասպելը¹¹:

Կրկին անդրադառնալով Ջրադաշտի իրական կյանքին՝ հարկ կա նշելու, որ նրա կյանքի երկու ամենակարևոր տեղեկությունները մեզ դեռ անհայտ են մնում: Դրանք են նրա ապրելու ժամանակաշրջանը և վայրը:

Ջրադաշտի ժամանակը: Պահլավական աղբյուրները, որքան էլ անսպասելի լինի, բավական հստակ թվական են նշում նրա կյանքի համար: Համաձայն «Բունդահիշն»-ում ներկայացված հաշվարկների՝ Վիշտասպը ընդունել է Ջրադաշտի կրոնը Ալեքսանդրի իշխանությունից ուղիղ 258 տարի առաջ¹²: Որոշ աղբյուրներ Ջրադաշտի համար տալիս են 300 տարի¹³, ինչն իրականում, սակայն, ոչ թե թվականի կտրացում է, այլ Ջրադաշտի ծննդյան ժամանակը (հիշենք, որ Վիշտասպը Հավատքն ընդունել էր Ջրադաշտի 42-րդ տարում՝ 42+258):

Սակայն որտեղի՞ց է գալիս այս ուղիղ թվականը: Իհարկե 258 տարին, որպես հստակ թվական, շատերին կարող է ճշգրտության ապացույց թվալ և համոզմունքի բերել (ինչպես և եղել է իրականում), թե դա է հարցի պատասխանը: Բայց ավելի մեծ հավանականություն կա, որ այն կարող է սխալ կամ կեղծ հաշվարկի արդյունք լինել: Եթե հիշենք, նույն ձևով «ճշգրտորեն» 17-18-րդ դարերում որոշների կողմից հաշվարկվել էր աշխարհի արարման ճշգրիտ ժամանակը, և նույ-

¹¹ Համաձայն այս առասպելի՝ Գրիգոր Լուսավորիչը 13 տարով բանտարկության է ենթարկվում Տրդատ Արշակունու կողմից: Տրդատը դիվահար է լինում: Խոսքովիդովստը՝ Տրդատի քույրը, երագի միջոցով իմանալով, որ Տրդատը կբուժվի միայն Լուսավորչի ձեռքերով, նրան ազատում է: Վերջինս էլ աղոթքներով բուժում է ինչպես արքային, այնպես էլ մնացած դիվահար մարդկանց: Տրդատը գոջում է արած չարագործությունների համար և ընդունում քրիստոնեական հավատքը (*Ազարսևնգեղայ պատմությունիս հայոց* (Տվղիս, 1909), գլուխ ԺԱ, մաս 112, գլուխ Ի, մասեր 212, 214, 219-221):

¹² Bundahišn (Pākhzād, 2004), գլ. ԼԶ:

¹³ Օրինակ՝ տե՛ս Արտա վիրապ նամակ (թարգմ. և ծանոթ.՝ պրոֆ. Ռ. Թ. Աբրահամյան, Եր., 1958), էջ 41:

նիսկ որոշվել էր շաբաթվա այն օրը, երբ Աստված արարել էր աշխարհը¹⁴:

Այստեղ էլ պետք չէ հույս ունենալ, որ ոմն իրանցի պատմագիր, նստած իր դիվանատանը, սպասում էր Ալեքսանդրի գալուն և տարեցտարի, ամբողջությամբ գիտակցելով պատմական դեպքերն իրենց ողջ կարևորությամբ, գրառում էր նրա իշխանության և դրան հաջորդող իրադարձությունների թվականները, այնպես, ինչպես արդեն հասցրել էին գրանցել Ջրադաշտի կյանքի տարիները: Երկար ժամանակ կպահանջվի այստեղ պահլավական թվագրման անճշգրտության մասին խոսող փաստարկների ամբողջությունը ներկայացնելու համար, սակայն կփորձեն մեկ-երկու կետով միայն բացատրել խնդրի էությունը:

Նախևառաջ, պահլավական այս տարեհաշվարկը (որ ներկայացված է պահլավական «Բունդահիշն» գրքում) նվիրված չէ միայն Ջրադաշտին և կազմում է մասը ընդհանուր համաշխարհային ժամանակագրության (գրադաշտական տեսանկյունից), որտեղ «ճշգրիտ» հաշվարկով ներկայացված են նաև առասպելական, այսինքն՝ գոյություն չունեցած աստված-արքաների¹⁵ կառավարման թվականները: Եթե նույնիսկ դա մի կողմ թողնենք՝ համարելով առնվազն նոր ժամանակների ժամանակագրությունը ճշգրիտ, ապա այստեղ է, որ գալիս է հիմնական խոչընդոտը: Պատմական անհերքելի ճշմարտություն է, որ պարթևական Արշակունիների հարստության իշխանությունը տևել է մ. թ. ա. Գ դարի կեսերից (ողջ Իրանի վրա այդ իշխանությունը հաստատվել է մեկ դար անց) մինչև մ. թ. 224 թ.: Այս թվականին (կամ մոտ ժամանակ) Սասանյան արքայատոհմի հիմնադիր Արտաշիր Փափագանը սպանեց վերջին Արշակունի ար-

¹⁴ Հովտեմբերի 23-ին, ինչպես բերում է այս հաշվարկը ընդունող Մ. Չամչյանը (*Հայոց Պատմ.*, հ. Ա, էջ 52):

¹⁵ Այսինքն՝ այն արքաների, որոնք թեև պարսկական աշխարհընկալմամբ և ավանդական պատմագրության մեջ իրական մարդիկ են համարվել, սակայն իրականում եղել են վաղ կրոնի մոռացված «աստվածները», եթե նրանց կարելի է այդպես կոչել: Այսպես են հատկապես Ջամը և Ֆրեդրոնը, որոնք ունեն հստակ հնդիրանական կամ նույնիսկ հնդեվրոպական ծագում:

քային՝ Արտավան Ե-ին, ինչով և ավարտին հասցրեց Արշակունիների իշխանությունը Իրանում: Սակայն մեր պահլավական աղբյուրները, որոնք այդքան մեծ ճշգրտությամբ տալիս են Ջրադաշտի և այլ նախապատմական արքաների տարիների հաշվարկը, Արշակունիներին հատկացնում են ընդամենը 200 (և մի քանի)¹⁶ տարի՝ այդպիսով վերջիններիս պատմությունից հանելով առնվազն 150-200 տարի:

Այսպիսով՝ ստացվում է, որ Ալեքսանդրի և Արտաշտի միջև ընկած ժամանակը կազմում է մոտ 220 տարի՝ իսկական 547-ի փոխարեն: Երկար այս մասին չգրելու համար կարելի է ասել միայն, որ մենք այստեղ հավանաբար գործ ունենք ինչ-որ մութ, ներգրադաշտական ու ներքաղաքական նկրտումներով պայմանավորված տարեհաշվարկների հետ, որոնց միջոցով հավանաբար ծրագրված է եղել Սասանյանների իշխանության գալուստը բերել ու տեղադրել Ջրադաշտի ծննդից մոտ 500 տարի հետո, քանի որ իրապես ըստ պահլավական ժամանակագրության հաշվարկների՝ Ջրադաշտի ծննդյան և Արտաշտի իշխանության գալու միջև ընկած ժամանակը ստացվում է 482 (և մի քանի տարի) տարի: Ինչպես նաև պետք է նշել, որ հունական աղբյուրները նույնպես այստեղ որոշակի դեր են խաղացել, ինչպես երևում է Ալեքսանդրի իշխանության տարիների ճիշտ հաշվարկից (14 տարի): Վերջին աղբյուրից է հավանաբար, որ իրանական գիտունները տեղեկացել են Դարեհ Ա-ի հոր անվանը՝ Վիշտասպին, և ըստ երևույթին նույնացնելով նրան Ջրադաշտի բարեկամ Վիշտասպի հետ (ինչպես շատերն են արել նրանցից հետո)՝ եզրակացրել են նրանց նույնությունը:

Չնայած այս թվականի նման անհաստատությանը՝ այն (թեթևակի փոփոխություններով) ընդունվել է ոչ միայն անցյալում՝ արաբագիր պատմագիրների կողմից, այլև լայն տարածում է գտել նաև մեր օրերում: Այն իրենց աշխատություններում ընդունել են Է. Ուես-

¹⁶ «Բունդահիշն»-ում գրված է (36.9). «Արշակունիները, որ առաքինի իշխանությամբ են հայտնի, [իշխեցին] երկուհարյուր և մի քանի տարի» (իհարկե արժե նկատել նաև, որ նույն գլխի հնդկական «Բունդահիշն»-ի տարբերակում Արշակունիների իշխանության տարեթիվը տրված է 284 տարի, թեև սրա պատճառը ինձ անհայտ է):

թը¹⁷, Ա. Վ. Ուիլլիամս-Ջեքսոնը¹⁸, ինչպես նաև նոր իրանագետներից Վ. Բ. Հեննինգը¹⁹, Ի. Գերշևիչը²⁰ և այլոք: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ այս թվականի հետ կապված վստահություն չի կարելի ունենալ Ջրադաշտի ապրած ժամանակաշրջանը որոշելու ժամանակ:

Իրանագետների կարծիքները Ջրադաշտի կյանքի ժամանակաշրջանի վերաբերյալ ընդհանրապես կարելի է բաժանել երկու խմբի՝ ուշ թվագրման կողմնակիցների և վաղ թվագրման կողմնակիցների²¹: Ուշ շրջանի թվագրությունը, ինչպես ներկայացվեց վերևում, Ջրադաշտի կյանքի տարիները որոշելու համար հիմք է ընդունում ավանդական տեսակետը և Ջրադաշտի կյանքի տարիները տեղադրում մ. թ. ա. է դարի երկրորդ և Չ դարի առաջին կեսերին:

Վաղ թվագրման կողմնակիցները նույնպես քիչ չեն ուսումնասիրողների թվում: Վերջիններս հիմնականում Ջրադաշտի կյանքի տարիները գետնորում են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի մեջ ինչ-որ մի ժամանակ՝ առավելապես այդ հազարամյակի երկրորդ կեսերին: Այս կողմի համար կարևոր ու լուրջ փաստարկ է հիմնականում «Ավեստա»-ի լեզվի հնությունը և նմանությունը հին հնդկական «Ռիգ-վեդա»-ի լեզվին, որը, ըստ ընդունված հաշվարկների, պետք է խոսված լինի մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսերին²²: Հայտնի արևելագետ Հաուզը իր 1862 թ. հրատարակած մի աշխատության մեջ, լայն համեմատություններ ու կապեր գտնելով Վեդաների ու «Ավեստա»-ի միջև և անգամ նրանց հակառակությունները համարելով կրոնական պառակտության նշան, գրում է. «Ոչ մի պայմաններում մենք չենք կարող նրան (Ջրադաշտին – Ռ. Ն.) վերագրել ավելի ուշ թվական,

¹⁷ Ով այդ հաշվարկներով առանձին ժամանակագրություն է կազմել, տե՛ս West E., *Pahlavi texts*, in *Sacred Books of the East*, vol. 47, pp. xxvii-xxxii:

¹⁸ Williams-Jackson A. W., *Zoroaster, the prophet of Ancient Iran*, p. 174.

¹⁹ Henning W. B., *Zoroaster: Politician or Witch Doctor?*, pp. 35-43.

²⁰ Gershevitch, I., “Approaches to Zoroaster’s Gathas”, *Iran*, vol. 33 (1995), pp. 2-4, 6-15.

²¹ Stausberg M., նույն տեղում:

²² Jones, Constance A., Ryan, James D., *Encyclopaedia of Hinduism*, p. 369; Whitney W. D., *Oriental and Linguistic studies* (New York, 1873), pp. 21-22.

քան Ք. ա. 1000 թ.-ը...»²³: Վաղ թվագրման կողմնակից է Հ. Լոմմելը, ով ավանդական ժամանակագրության մասին գրում է. «Այս ժամանակագրական ավանդությունն ամբողջությամբ արհեստական է, և այն ոչ թե առասպելական, այլ քացառասպես աստվածաբանական ենթադրություն (Spekulation) պետք է համարել»²⁴: Այս համառոտ կերպով ներկայացնելով մի քանի փաստարկներ Ջրադաշտի վաղ թվագրման օգտին²⁵, վերջնականորեն հանգում է այն եզրակացության, որ Ջրադաշտի ապրած ժամանակաշրջանը չի կարող ավելի ուշ լինել, քան «Ահուրամագիին»²⁶ հիշատակող Սարգոնի 714 թ.-ի արձանագրությունը²⁷:

Նոր ժամանակների ամենանշանավոր ուսումնասիրողներից կարելի է նշել Մերի Բոյսին, ով պաշտպան է կանգնում վաղ թվագրման տեսությանը և, հիմնվելով գլխավորապես «Ավեստա»-ն ստեղծող ժողովրդի հասարակական պարզ կառուցվածքի և զարգացման ցածր աստիճանի վրա գտնվելու, ինչպես նաև «Ավեստա»-ի ու «Ռեզ-վեդա»-ի (որ իր իսկ նշումով պետք է կազմված լինի մ. թ. ա. շուրջ 1700 թ.) լեզուների նմանության վրա, եզրակացնում է, որ Ջրադաշտը պետք է ապրած լինի մ. թ. ա. 1400-1000 թթ.-ի միջև ընկած ժամանակահատվածում²⁸:

²³ Haug M., *Essays on the sacred language, writings, and religion of the Parsees* (1st ed., 1862), pp. 253-55.

²⁴ Lommel, H., *Die Religion Zarathustras. nach dem Awesta dargestellt*, 1930, s. 4.

²⁵ Դրանք են հիմնականում՝ Սարգոն արքայի 714/13թ. արձանագրություններից մեկում, ինչպես ինքն է նշում «անուղակիորեն» Ահուրամագիա աստծո անվան հիշատակումը, ինչպես հին, այնպես էլ նոր «Ավեստա»-ի մեջ պատկերված հասարակության պարզ կառուցվածքը, որն անձանոթ է պարսկական կամ մարական թագավորությունների, հին հույն հեղինակների կողմից Ջրադաշտին առասպելական հնություն վերագրելը (Պլատոնից 6000 կամ Տրոյական պատերազմից 5000 տարի առաջ, տե՛ս Diogenes Laertius, *Lives of Eminent Philosophers*, London, 1959, vol. i, p. 5) և այլն:

²⁶ Ջրադաշտական (միգուցե նաև ընդհանուր իրանական) գլխավոր աստծո անվանումը:

²⁷ Lommel H., նշվ. աշխ., էջ 6: Թե որ արձանագրության մասին է խոսքը, դժվար է իմանալ:

²⁸ Boyce, M., *A History of Zoroastrianism*, vol. i, pp. 190-91.

Ընդհանուր առմամբ, ի մի բերելով այս տեսակետները, կարելի է ստել, որ Ջրադաշտի ժամանակաշրջանը ճշգրտորեն պարզելը անհնար գործ է, քանի որ անհրաժեշտ փաստերը դրա համար բացակայում են: Դա կարելի է անել ոչ այլ կերպ, քան մոտավորապես: Հենց դա են սովորաբար նշում երկրորդ տեսակետի կողմնակիցները²⁹: Ըստ ամենայնի, գերադասելի է առավելություն տալ Ջրադաշտի վաղ թվագրման տարբերակին, քանի որ մինչ այսօր հավաքված փաստերը առավելապես խոսում են այս տեսակետի օգտին, այն դեպքում, երբ ավանդական «Ալեքսանդրից 300 տարի առաջ» տեսակետը գուրկ է կողմնակի, ոչ պահլավական ապացույցներից:

Ջրադաշտի հայրենիքը: Ինչ վերաբերում է Ջրադաշտի ծննդյան և ապրելու վայրերին, ապա այս հարցում նույնպես ամենևին ներդաշնակություն չի տիրում առաջ քաշված կարծիքների միջև: Ավանդական տեսակետի համաձայն, ինչպես նշվեց վերևում, նա ծնվել է Ատրպատականում և այնտեղ էլ ապրել: Սկզբնական որոշ ուսումնասիրողներ ևս ընդունել են այս տեսակետը և նրան համարել ընդհանրապես Մարաստանի բնակիչ³⁰: Այս տեսակետին ուժ է տվել, թերևս, նաև այն հանգամանքը, որ հույն և արաբագիր պատմագիրներից ոմանք իրենց գրքերում անձնական կապեր են ենթադրել Ջրադաշտի և որոշ մերձավորարևելյան կամ հունական պատմական կերպարների միջև³¹, թեև առանց իրական հիմքի:

²⁹ Boyce, նույն տեղում; Bartholomae, *Altiranisches Wörterbuch*, s. 1675 (“...so sehe ich doch anderseits jeden Versuch, die Zeit seines Auftretens genauer zu bestimmen, für aussichtslos an“):

³⁰ Օրինակ՝ տե՛ս A. V. Williams Jackson, *Zoroaster the prophet of Ancient Iran*, pp. 16-7, և մինչև անգամ Herzfeld, E., *Zoroaster and his world*, vol. i, pp. 48-66, որտեղ հեղինակը փորձում է ապացուցել, որ Ջրադաշտի տոհմը (Մալիտաման) ծագում էր Մարաստանից, և Ջրադաշտն ինքը մար էր (p. 56 “Zoroaster was a Mede...“):

³¹ Tha’alibi, ss. 167-68, Ջրադաշտին համարում է Երեմիա մարգարեի աշակերտը: Հույն հեղինակներից ոմանք նրա անունը կապում են Պյութագորասի (այս մասին տե՛ս Kingsley, P., “The Greek origin of the sixth-century dating of Zoroaster”, *Bulletin of the School of Oriental and African Studies*, Volume 53, Issue 02, June 1990, pp. 245 - 265),

Այնուամենայնիվ ներկայումս ուսումնասիրողների մեծամասնությունը, լինելով հիմնականում տարակարծիք ճշգրիտ տեղադրության հարցում, միավորված է մեկ կետի շուրջ. որտեղ էլ որ Ջրադաշտը ապրած լինի, այդ տարածքը պետք է տեղադրել Միջին Ասիայի սահմաններում՝ Կասպից ծովի հյուսիսային ավերից սկսած մինչև Սիսրան³² և Հինդուքուշի լեռներն ընկած ընդարձակ այդ աշխարհամասի մեջ: Այս տեսակետի օգտին, ըստ որի՝ Ջրադաշտի հայրենիքը պետք է տեղադրել այդտեղ և ոչ Իրանի արևմուտքում, ուսումնասիրողների կարծիքով, խոսում է այն վիաստը, որ Ավեստայի լեզուն, որով խոսել է Ջրադաշտը, պատկանում է արևելյան իրանական լեզուներին³³: Այս ենթադրությունն իր հերթին առաջ է քաշում այն համոզմունքը, որ Ջրադաշտը պետք է ապրած լինի Միջին Ասիայում, որտեղ էլ պատմական ժամանակներում (մինչև մ. թ. առաջին հազարամյակի առաջին կեսը) գլխավորապես խոսվել են արևելաիրանական լեզուները:

Իրականում բավական դժվար է միմիայն բարբառի վրա հիմնվելը մնան հարցերում, քանի որ բարբառները ունեն իրենց կրող ժողովրդի հետ տեղաշարժվելու հատկություն: Ինչպես նկատում է գերմանացի լեզվաբան Շմիտտը, հաստատ է միայն այն, որ ավեստերենը չի եղել Փարսի (որտեղից մենք ունենք «Ավեստա»-ի լեզվից հստակորեն տարբերվող լեզվով խոսող Աքեմենյանների հին պարսկերենը) բարբառը, իսկ մնացած տեղերի վերաբերյալ ոչ մի հստակ

ոմանք՝ Շամիրան քագուհու և Նինոսի (տե՛ս Williams Jackson, A. V., *Zoroaster...*, pp. 154-7) կենսագրությունների հետ:

³² Թեև սովորաբար Սիսրանը չի ընդգրկվում Միջին Ասիայի սահմաններում, սակայն այստեղ Միջին Ասիա հասկացության մեջ ներառել են նաև Սիսրանը:

³³ Իրանական լեզվաճյուղը բաժանվում է երկու ենթաճյուղերի՝ արևելյան և արևմտյան: Այս երկուսը լեզվական ընդարձակ խմբավորումներ են, որոնք ներառում են մեզ հայտնի տասնյակ հին ու նոր լեզուներ: Արևմտյան իրանական բարբառներից են պարսկերենը, քրդերենը, զազայերենը, գիլաքին կլն, արևելյանին են պատկանում հին լեզուներից՝ սողերենը, խորեզմերենը, բակտրերենը, նորերից՝ փուշթուներենը (Աֆղանստան), յաղնոբին, պամիրյան լեզուները կլն: Այս երկուսի մեջ գոյություն ունեն և՛ հնչյունական, և՛ քերականական զգալի տարբերություններ:

քան չի կարելի ասել³⁴: Բայց սա ամենևին չի հակասում Ջրադաշտի հայրենիքի՝ Միջին Ասիայում լինելու մեծ հավանականությանը: Եվ դա առաջին հերթին այն պատճառով, որ Ավեստայի գրքերից մեկի՝ «Վիդևդատ»-ի (որ ավելի ուշ շրջանում է կազմվել քան Ջրադաշտի ապրած ժամանակը) առաջին գլխի մեջ հանդիպող երկրների ցուցակում գրեթե բոլորը տեղորոշվում են Միջին Ասիայում: Բացառություն է կազմում միայն մեկը՝ «Ռ-ադա»-ն, որ ուշ ժամանակների Ռ-այ քաղաքն է՝ գտնված այսօրվա Թեհրանի մերձակա տարածքներում³⁵: Վերջինս այդ ցուցակում թվարկված երկրներից ամենից արևմտյանն է, մնացած բոլորը գտնվում են Միջին Ասիայում կամ հարևան տարածքներում: Դրանից բացի՝ պետք է նաև հաշվի առնել այն, որ իրանական ցեղերը մինչև մ. թ. ա. 10-9-րդ դարերը իրենց բնակության տարածքը դեռ հասցրած չեն եղել (կամ նոր էին հասցնում) մինչև Չագրոսի լեռնաշղթա, այսինքն՝ արևմտյան Իրան, որտեղ առաջին անգամ իրանական ցեղերի (Պարսուա երկրի ցեղեր և մարեր) հիշատակումները ասորեստանյան աղբյուրները տալիս են Սալմանասար Գ արքայի (մ. թ. ա. 859-824 թթ.) քսանչորսերորդ տարում³⁶: Այնպես որ՝ Ջրադաշտի վաղ թվագրման ընդունման դեպքում ինքնըստինքյան բացառվում է արևմտյան Իրանում նրա հայրենիքի տեղադրումը:


³⁴ Schmitt R., *Die iranischen Sprachen in Geschichte und Gegenwart*. s. 25: Այս միաքննավելի վաղ ակնարկել է նաև Սիմս-Ուիլյամսը՝ Sims-Williams, N., , "Eastern Iranian languages", in *Encyclopaedia Iranica* 7 (1996), pp. 649-652.), ավելի ուշ նաև՝ Korn A., "Balochi and the Concept of North-West Iranian", in *The Baloch and Their Neighbours: Ethnic and Linguistic Contact in Balochistan in Historical and Modern Times* (ed. by A. Korn & K. Cahani). Wiesbaden, 2003, pp. 49-60:

³⁵ Թեև կարծիք կա, որ այս Ռ-ադան գտնվել է այժմյան Տաջիկստանի հարավում, տե՛ս Fr. Grenet, "Zarathustra's Time and Homeland: Geographical Perspectives"; in *The Wiley Blackwell Companion to Zoroastrianism*, pp. 21-31: Ռ-ադայի ավանդական տեղադրումը մերժող կարծիքներից տե՛ս՝ Gershevitch I., "Zoroasters own contribution", *JNES*, 1964, v. 23 (1), pp. 36-7.

³⁶ Luckenbill D. D., *Ancient records of Assyria and Babylonia*, vol. i, p. 206 ("I received the gifts of the 27 kings of the land of Parsua. From Parsua I departed"); Frye R., *The history of ancient Iran*, pp. 67-68.

Միջին Ասիայի ներսում Ջրադաշտի հայրենիքը լինելու հավակնությունն ունեն Բակտրիան, Խորեզմը, Սիրդարյա գետից հյուսիս ընկած տափաստանները, Արիանան (Հերաթի շրջակայքը), Խորասանը, Սիսքանը (հնում՝ Դրանգիանա) և այլն: Ավելորդ կլինի նշելը, որ ոչ մի տեսակետ ապացուցված չէ անհերքելի ապացույցներով: Ջրադաշտի հայրենիքի վեճը ավարտված չէ, և վերոնշյալ երկրամասերից յուրաքանչյուրը կարող է հավակնել առաջնության, թեև ոչ մեկին չի կարելի վստահորեն շնորհել այն:

Այսպիսով՝ վստահելի փաստեր կամ տեսակետներ՝ կապված այն խնդրի հետ, թե որտե՞ղ կամ ե՞րբ է ապրել Ջրադաշտը, գոյություն չունեն: Ամեն ինչ կարելի է ասել միայն մոտավոր կերպով, ինչն այնուամենայնիվ արդեն որոշակի հիմքեր ստեղծում է Ջրադաշտին ըմբռնելու համար: Խնդիրն այստեղ այն չէ, որպեսզի բացահայտվի այն ամենը, ինչ *եղել է իրականում*: Խնդիրն այն է, որպեսզի բացահայտվի այն ամենը, ինչ *հնարավոր է բացահայտել*: Դրա համար էլ կարևոր է ծանոթանալ սկզբնաղբյուրներին, որոնց ներկայացման փորձը մասամբ արված է այս գրքում: Իսկ այժմ հարկ կա դիտարկելու այն կրոնը, որը քարոզում էր Ջրադաշտը:



Արեւմտեան կայսրության բարեկարգ (վերցված Smith, G. H., *Atlas of the Historical Geography of the Holy Land*, London, 1915)

Հնդիրանական նախակրոնը: Հազարավոր տարիներ առաջ Եվրասիա մայրցամաքի ընդարձակ տարածության մաս կազմող երկրամասերից մեկում բնակվում էին մի շարք իրար ազգակից ցեղեր, որոնք խոսում էին մեկ լեզվով, ավելի ճիշտ՝ մեկ լեզվի՝ իրարից շատ քիչ տարբերվող բարբառներով, ունեին նույն հավատալիքները, պաշտում էին նույն աստվածներին և ապրում էին իրենց սովորական կյանքով: Սակայն եկան ժամանակներ, երբ այդ ցեղերը, որոնք արդեն մեծացել, բազմացել ու միգրացե հզորացել էին, սկսեցին աստիճանաբար լքել իրենց հայրենիքը և հայացքները դեպի հեռավոր հորիզոնները հառած՝ տարածվեցին աշխարհով մեկ: Այդ տարածումը հազարամյակներ տևեց և այն հետևանքներն ունեցավ, որ այդ ցեղերի ժառանգներն իրենց բնակության սահմանները տարածեցին Իռլանդիա կղզուց սկսած մինչև Հնդկաստան ու Տիբեթ ընկած տարածքների վրա և ապա, առավել ընդլայնվելով, տարածվեցին նաև Ամերիկայում, Ավստրալիայում և Աֆրիկայում: Նրանց լեզուն ժամանակի հետ փոփոխվեց, և այդ լեզվի բարբառները աստիճանաբար այնպիսի անճանաչելի կերպարանք ձեռք բերեցին, որ դրանցով խոսողներն այլևս չէին կարող միմյանց հասկանալ: Ահա այսպես էր, որ սկզբնական մեկ լեզվով խոսող ժողովրդից առաջ եկան բազմալեզու այն ազգությունները, որոնք այսօր ողորում են աշխարհը: Նրանց լեզվական ժառանգներն են հույները, անգլիացիները, պարսիկները, հնդիկները, հայերը, Աֆրիկայի ֆրանսախոս ու անգլախոս սևամորթները, քրդերը, ռուսները և բազմաթիվ այլ ազգեր, որոնց լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին:

Այն ցեղից, որից այդ բոլոր ազգերը առաջ են եկել, մեզ ո՛չ լեզուն է հասել, ո՛չ անվանումը և ո՛չ էլ կրոնը: Սակայն եվրոպացի գիտնականները ԺԸ-ԺԹ դդ. սահմանագծին, նկատելով մի շարք լեզուների՝ միմյանց հետ ունեցած տարօրինակ նմանությունները³⁷, կարողա-

³⁷ Ահա ինչ է սակ հայտնի արևելագետ Ու. Ջոնսը, ով առաջիններից էր, որ նկատեց այդ նմանությունները. «Սամակրիտ լեզուն, ինչ ծագում էլ որ այն ունենա, ունի հրաշալի կառուցվածք. ավելի կատարյալ, քան հունարենը, ավելի ճոխ, քան լատիներենը և ավելի հրաշալիորեն նրբաճաշակ, քան երկուսը, այն միաժամանակ այնքան մեծ

ցան հասկանալ, որ դրանք պետք է ծագած լինեն մեկ ընդհանուր արմատից, և այդպիսով բացահայտեցին վերը նշված մի քանի նախնական ցեղերի գոյությունը, և քանի որ նրանց հայտնի չէր վերջիններիս իսկական անվանումը, նրանց կոչեցին «հնդեվրոպացիներ» (*Indoeuropäer*) կամ «հինդոգերմանացիներ» (*Indogermanen*)³⁸: Վերջիններիս լեզուն (նախալեզու, protolanguage, Ursprache, праэзых) էր, որ մայր էր համարվում մի շարք՝ արդեն «հնդեվրոպական» կոչվող լեզուների, որոնց թվում էին հունարենը, լատիներենը, գերմաներենը, սանսկրիտը, պարսկերենը, ավեստերենը (այդ ժամանակվա գիտնականներին հայտնի որպես «զենդերեն»՝ *Zendsprache*), հայերենը և բազմաթիվ այլ լեզուներ, որոնք բառապաշարի ու քերականության առումով սերտորեն կապված էին միմյանց, և այդ նմանությունները ոչ մի կերպ չէին կարող բացատրվել լեզվական փոխառությունների տեսության միջոցով: Այս ազգակից լեզուների ուսումնասիրության միջոցով էր, որ գիտնականները փորձեցին վերականգնել հնդեվրոպական նախալեզուն, և այս հիմքի վրա էլ ձևավորվեց «համեմատական լեզվաբանություն» կոչվող գիտությունը:

Այս լեզուների մեջ սակայն առանձին ուշադրություն էին գրավում երկու հին լեզուներ, որոնք պահպանվել էին Ասիայի հարավում և կրում էին «սանսկրիտ» ու «ավեստերեն»³⁹ անվանումները: Մրանք մեծ նմանություն ունեին իրար հետ, առավել մոտ էին իրար, քան, ասենք, հունարենին կամ լատիներենին: Այսպիսով՝ առաջ եկավ այն համոզմունքը, որ հնդեվրոպական մայր լեզվից բաժանվելուց հետո

նմանություն ունի նրանց հետ և՛ բայարմատների, և՛ քերականության տարրերի մեջ, որ դժվար թե դա հնարավոր լիներ վերագրել պատահականությանը: Հիրավի այնքան մեծ նմանություն, որ ոչ մի բանասեր չի կարող այն ուսումնասիրել առանց հանգելու այն համոզման, որ դրանք ծագել են մեկ ընդհանուր աղբյուրից, որը, հավանաբար, այլևս գոյություն չունի» (W. Jones, *The works of Sir William Jones* (in six volumes), vol. I, London, 1799, p. 26):

³⁸ Վերջին անվանումը հիմնված է այն իրողության վրա, որ Եվրոպայի ամենից արևմտյան կողմ՝ Իսլանդիայի բնակչության լեզուն գերմանական լեզվաճյուղին է պատկանում:

³⁹ Իրականում այս երկրորդ լեզվի անունը հայտնի չէ: Այն «ավեստերեն» է կոչվում, քանի որ «Ավեստա»-ն գրված է այդ լեզվով:

այս լեզուները առանձին չեն եղել, կազմել են մեկ լեզու և առանձնացել են համեմատաբար ավելի ուշ (ենթադրաբար մ. թ. ա. Բ հազարամյակի սկզբում⁴⁰): Քանի որ դրանցից յուրաքանչյուրը մոտ էր կանգնած համապատասխանաբար հնդկական և իրանական լեզուների ակունքին, այդ լեզուների միասնության ժամանակաշրջանը կոչվեց «հնդիրանական» ժամանակաշրջան, երբ ապրում էր մեկ «հնդիրանական» ժողովուրդ, որը խոսում էր «հնդիրաներեն»-ով և պաշտում էր «հնդիրանական» աստվածներին: Ինչպես այս հնդիրանական ժողովրդի լեզվից հետագայում առաջ եկան հնդկական («հնդարիական»⁴¹) ու իրանական առանձին լեզվաճյուղերը, այնպես էլ նրանց հավատալիքներից առաջ եկան հնդկական կրոնը (hinduism) և գրադաշտականությունը:

Այս ժողովուրդը, որ ինքն իրեն «արիացի»⁴² էր կոչում, որևէ գրավոր կամ այլ տիպի ուղիղ հիշատակ չի թողել իր ետևից, և, ինչպես հնդեվրոպացիների դեպքում, հնդիրանցիների դեպքում ևս ուսումնասիրողները ստիպված են վերականգնել ամեն ինչ նրանց ժառանգների, այսինքն՝ իրանական և հնդկական ժողովուրդների միջոցով:

Սակայն այստեղ մի խնդիր կար: Եթե լեզվական օրենքները թույլ են տալիս վերջիններիս լեզուն հնարավոր ճշգրտությամբ ու հաստատությամբ վերականգնել, ապա մույնը չի կարելի ասել առասպելաբանության ու կրոնի մասին, որոնք չեն ենթարկվում հստակ օրենքների: Այսպես՝ եթե ի մի բերենք հնդիրանցիների կրոնի հիմնական բնորոշիչ գծերը, կստանանք հետևյալ պատկերը. նրանք

⁴⁰ Schmitt R., “Aryans”, *Encyclopedia Iranica*

(<http://www.iranicaonline.org/articles/aryans>).

⁴¹ Հնդարիական լեզուներից են սանսկրիտը՝ վեդայական և դասական, պալին, այժմյան բենգալերենը, հնդկերենը, ուրդուն (որ հնդկերենի քերականության ու պարսկերենի բառապաշարի վրա է ձևավորված) և այլն:

⁴² Եվ վեդաներում, և՛ ավեստայական տեքստերում հեղինակներն իրենք իրենց կոչում են համապատասխանաբար՝ *airya-*, *arya-*: Հնդեվրոպական ուսումնասիրությունների սկզբնական շրջանում ուսումնասիրողները ենթադրում էին, որ այսպես են հնդեվրոպացիները կոչել իրենց, և այդ պատճառով էլ հնդեվրոպացիներին կոչում էին «արիացի»: Հետագայում սակայն այս անվանումը տրվեց մասնավորապես պատմական «հնդիրանական» ցեղերին:

պաշտուն (գոհաբերում) էին բազմաթիվ աստվածների, որոնք հանդես էին գալիս որպես բնության երևույթների մարմնացումներ⁴³: Այս աստվածները ըստ ամենայնի չունեին ինչ-որ հստակ դասակարգում ու անվանումներ, ինչի պատճառով երբեմն նրանց անունները փոփոխվում էին (համաձայն նրանց տրվող նոր մեծարական ածականների): Նրանք ունեին իրենց գլխավոր աստվածը, որը երկնքի մարմնացումը ներկայացնող աստվածությունն էր: Վերջինիս մասին մենք պատկերացում կարող ենք կազմել՝ քննելով «Ավեստա»-ի *Սիուրա Մազդա* և «Ռեզ-վեդա»-ի *Վարունա* աստվածների կերպարները:

Առաջինը իմաստության մարմնացում է (*ahura.mazdā*՝ «իմաստուն տեր»), ով հակադրվում է չարիքին ու ստին և արարում է միայն բարին: Նա է հաստատել արեգակը, լուսինը, աստղերը և ստեղծել երկիրը՝ իր ողջ բնակչությանը: Առաջին հայացքից միգուցե թվում է, թե նա վերացական աստվածություն է, սակայն անգամ «Ավեստա»-ում՝ գաթաների մեջ, ասվում է, որ երկինքը նա որպես իր զգեստն է հագնում:

Եթե հայացքը դարձնենք հնդկական կողմին, այստեղ իր հերթին Վարունան⁴⁴ մեծ նմանություններ է ցույց տալիս իրանական գլխավոր աստծո հետ: Վերջինս ինչպես իր անվամբ, որ ամենայն հավա-

⁴³ Թեև Մ. Բոյսը պաշտպանում է այն տեսակետը, որ հնդիրանական աստվածները իրականում վերացական գաղափարների (օր.՝ արդարություն, քաջություն ևն) մարմնացումներն էին (*History of Zoroastrianism*, vol. i, pp. 23-24), սակայն բոլոր առկա փաստերը մեզ ստիպում են ընդունել նախնական տեսակետը, համաձայն որի՝ այս աստվածները որպես հիմք ունեն բնության երևույթները: Դա ակնհայտորեն երևում է ոչ միայն «Ռեզ-վեդա»-ի հարյուրավոր հիմներում, այլև ավելի վերացական կրոն համարվող գրադաշտականության մեջ, որտեղ Սիուրա Մազդան հագնում է երկինքը՝ որպես իր զգեստը (Յասնա 30:5): Դա ցույց է տալիս նրա ազգակցությունը հուն. Ջևսի, վեդ. Վարունայի և հռոմ. Յուպիտերի հետ, որոնք բոլորն էլ երկինքը մարմնավորող աստվածություններ էին (սրա մասին տես Darmesteter J., “The Supreme God in the Indo-European mythology”, *Contemporary Review*, London, October, 1879, 274-289): Նույն կերպով բնության հետ են կապված գրադաշտական ավելի փոքր աստվածությունները (յազատները) և:

⁴⁴ Սանս.՝ varuṇah: Ամբողջական նկարագրությունը տես MacDonell A., *Vedic mythology*, pp. 22-29:

նականությամբ նշանակում է «պատող, ծածկող, պաշտպանող»⁴⁵, այնպես էլ իր նկարագրական հատկանիշներով նույնանում է երկնքի հետ: Սակայն նրա կերպարը ավելի մեծ նշանակություն ունի, քան սոսկ երկինքը ներկայացնելը: Նա, չնայած «Ռըգ-վեդա»-ում իրեն նվիրված ձոների փոքրաքանակությամբ և հետագայում հնդկական պանթեոնում մոռացության մատնվելուն, վաղ ժամանակներում ունեցել է բավական առանձնահատուկ ու կարևոր դեր: Ի տարբերություն Ինդրայի, Մարութների, Ագնիի կամ այլ վեդայական աստվածությունների՝ Վարունան ունի աչքի ընկնող բարոյական հստակ դերակատարություն: Նա է աշխարհում գոյություն ունեցող կարգի և օրենքի (ṛta) հաստատիչը: Նա է պաշտպանում արդարներից ու պատժում օրինախախտներին: Նա է, որ պայքարում է ստի դեմ և պաշտպանում ճշմարտություն ասողներին: Միաժամանակ նա բարեգութ է և ներում է մահկանացուների փոքր զանցանքները, որոնք նրանք կատարում են ամեն օր: Նա է, որ վանում է մահը և երկարացնում կյանքը: Նա է, որ իմաստուն է, ավելի ճիշտ՝ ամենագետ (Ṛgveda, I - 25: 7-12, 20)⁴⁶: Այս հատկանիշները նրան Ահուրա Մազդայի հետ նույն հարթակի վրա են կանգնեցնում: Նրա նյութական (երկնքի հետ կապված) և բարոյական հատկանիշները հեշտ է բացատրելը, քանի որ ինչպես երկինքն է իր մեջ ընդգրկում ու ներառում ամեն ինչ, և հսկում բոլորին, այնպես էլ նա է, որ կառավարում է արևի ու լուսնի շարժումը, եղանակները ու մնացած ամեն ինչ, հսկում է մարդկանց և այդպիսով հատուցում մարդկանց՝ ըստ իրենց արարքների:

Այս երկու աստվածները, այսպիսով, հնդիրանական գլխավոր աստծո արտացոլումներն են հնդկական և իրանական առանձին կրոնական համակարգերի մեջ:

⁴⁵ Բառի արմատն է √vr- : Թեև կան նաև այլ ստուգաբանություններ, սակայն այս մեկը առավել ընդունվածն է բոլորի միջից (ստուգաբ.-ը տե՛ս M. Mayrhofer, *Kurzgefasstes etymologisches Wörterbuch des Altindischen*, bd. iii, s. 151-3):

⁴⁶ Գրքում «Ռըգ-վեդա»-ին հղումներ կատարելիս օգտվել են Ռալֆ Գրիֆֆիթի թարգմանությունից (*The Hymns of Rig Veda*, Kotagiri, 1896):

Այսպիսով՝ հնդիրանական աշխարհայացքի մեջ կարևոր դեր էր հատկացված գլխավոր աստծուն, որը իր բնական հատկանիշներից բացի, ուներ կարևոր բարոյական հենք: Ըստ երևույթին հենց դա էր, որ վճռորոշ դեր խաղաց զրադաշտականության կայացման գործում:

Այժմ դիտարկենք, թե ինչպես ընթացան կրոնական զարգացումներն այն բանից հետո, երբ մեկ հնդիրանական ժողովուրդը բաժանվեց երկու (կամ ավելի) մասերի:

Եթե նայենք այս ազգերի աշխարհագրությանը, ապա կտեսնենք, որ այն դեպքում, երբ իրանական ցեղերի նախնիները շատ հեռու չգնացին իրենց բնակության սահմաններից և փաստացիորեն դեռ բավական ժամանակ մնացին այնտեղ, որտեղ գտնվում էին, այսինքն՝ Միջին Ասիայում ինչ-որ մի տեղ, ապա հնդկական ցեղերի նախնիներին վիճակվեց այլ ճակատագիր: Նրանք սկսեցին շարժվել հարավ-արևելյան ուղղությամբ՝ աստիճանաբար (ոչ միանգամից) իրենց համար տարածքներ ազատելով: Հնդկական թերակղզու գրավումը արագ չէր կարող ընթանալ, քանի որ այն ոչ միայն ուներ բավական ընդարձակ տարածք (ի հեճուկս արիացիների փոքրաքանակության), այլև բնակեցված էր մեծաքանակ օտար ցեղերով, որոնց մի մասը ավելի զարգացած քաղաքակրթություն ուներ, քան եկվորները:

Այսպիսով՝ նորեկ արիացիների համար պետք է սկսվեր մի ծանր ժամանակաշրջան, որը լի էր լինելու դաժան ու արյունալի մարտերով, երբ ամենից շատ նրանք զգալու էին պատերազմական և ռազմասեր աստվածների օգնությունը: Պետք չէ մոռանալ, որ «Ռեզ-վե-դա»-ն ձոների (կրոնական երգերի, հիմների) հավաքածու էր, որի միջոցով հավատացյալները երկնային բնակիչներին էին ներկայացնում իրենց խնդիրները և ընծաներ հայցում նրանցից (որոշակի վարձատրության դիմաց, անշուշտ): Նման համառ պայքարի մեջ գտնվող ռազմիկները, այսպիսով, ավելի ու ավելի հաճախ էին իրենց խնդրանքներն ուղղում այն աստծուն, ով առավել հավանական էր, որ իրենց կօգներ ճակատամարտում: Եվ այդ աստվածը երկնքի բա-

րեգուք ու արդար աստվածը չէր, որ պահպանում էր աշխարհում տիրող օրենքը: Այն Ինդրան էր՝ ամպրոպի ու կայծակի մարմնացումը, որ իրենց առասպելներում ահեղ կերպով սպանում էր երկնային չար վիշապին և բաց թողնում անձրևաբեր երկնային կովերին: Այս աստվածն էր, որ իրենց ուժ ու հաղթություն պետք է տար և փրկեր թշնամուց:

Հետևաբար ավելի ու ավելի էին շատանում նրան նվիրված ձոները, մինչդեռ Վարունային ու որոշ այլ աստվածներին նվիրվածները մոռացության էին մատնվում: Հենց այդպիսի մի ժամանակ էր, որ այդ հիմները երգող քրմերը զգացին աստիճանաբար տեղի ունեցող փոփոխությունը և դրա առաջն առնելու համար «քարացրեցին» այդ ձոներն այն վիճակում, որում գտան դրանց և փորձեցին ի մի բերել: Այդպես առաջ եկավ մինչև մեր օրերը անփոփոխ կերպով հասած «Ռեզ-վեդա»-ն, որին այլևս նոր հիմներ չավելացվեցին: Հետագայում սակայն, երբ արդեն կանգ էր առել մեծ հնդկական «արշավանքը», և երկրում արդեն ուրիշ խնդիրներ գոյություն ունեին, անցավ նաև Ինդրայի ժամանակը, և նա նույնպես մոռացության մատնվեց:

Ինչևէ, ետ դառնանք մեր խնդրին: Այսպիսով՝ երբ հնդկական եղբայրները մեծ պատմաաշխարհագրական և մշակութային փոփոխությունների միջով էին անցնում, իրանցիները փաստացիորեն մնացել էին ընդհանուր առմամբ նույն վայրում, նույն պայմանների մեջ: Ի՞նչ էր դա նշանակում: Միայն այն, որ իրանցիները շարունակում էին գնալ իրենց նախնիների բնական ճանապարհով, և նրանց մոտ դեռ շարունակում էին արդի մնալ երկնքի իմաստուն աստծո արդարությունն ու իմաստությունը: Ահա այսպես էր, որ աստիճանաբար առաջ եկավ երկնքում նստող *իմաստուն* Տիրոջ գաղափարը, որ կոչվեց «Ահուրա Մադդա» և ոգեշնչեց Չրադաշտին ստեղծելու իր կրոնը: Բայց մինչ դրան անցնելը անդրադառնանք ևս մեկ խնդրի, որը ևս բավական կարևոր նշանակություն ունեցավ այս հարցում:

Հնդկական կրոնը և «Ավեստա»-ն ուսումնասիրողների ուշադրությունը շարունակ գրավել է այն հանգամանքը, որ հնդկական պանթեոնում հանդիպող «դեվա» (deva, իգ.՝ devī) անվանումը, որով հնդիկները կոչում էին իրենց աստվածներին, «Ավեստա»-ում և ընդհանրապես գրադաշտականության մեջ այն (չար) ոգիների անվանումն էր, որոնք հարել էին Չար ոգուն՝ Ահրիմանին (Յասնա 30:6)⁴⁷: Ինչպե՞ս էր հնարավոր նման կտրուկ փոփոխությունը, նման հանկարծակի անցումը:

Ոմանք, ինչպես Մ. Հաուգը, այս հարցի պատասխանը փորձեցին գտնել ինչ-որ կրոնական հակամարտության մեջ, ավելի ճիշտ՝ կրոնական պառակտության մեջ, որ տեղի էր ունեցել մի կողմից Ջրադաշտի ու իրանցիների, մյուս կողմից՝ բրահմանների ու հնդիկների միջև⁴⁸: Սակայն իրականում համացանցից կամ առնվազն տպագրությունից զուրկ այդ հեռավոր ժամանակներում, երբ տեղաշարժը անծանոթ ու վայրի երկրների միջով գրեթե անհնար էր, և երբ կրոնական պառակտումներով զբաղվելուց բացի՝ կային ավելի կարևոր գործեր (ինչպես, օրինակ, թշնամի ոչ-արիացի կամ, ինչու՞ ոչ, երբեմն նաև արիացի ցեղերին պարտության մատնելն ու նրանց ճամբարները թալանելը), դժվար է պատկերացնել նման դավանաբանական թեժ բանավեճերի ծավալումը: Հնդիկներն ու իրանցիները Ջրադաշտի ժամանակ (երբ էլ դա եղած լինի) արդեն գտնվում էին ապահով աշխարհագրական ու մշակութային հեռավորության վրա⁴⁹ նման վտանգներին չենթարկվելու համար: Խնդիրը իրականում ուներ ավելի ներքին բնույթ, որ ծավալվում էր իրանական ցեղերի ներսում:

⁴⁷ Հայկական ժողովրդական հեքիաթներում և զվարճապատումներում հանդիպող «դև»-ը, որ հիմնականում՝ բացասական դերակատարում ունի, գալիս է իրանական աղբյուրներից և փոխառություն է: Սրա հետ ազգակից է հայերեն «տիս»՝ «օր, ցերեկ» բառը:

⁴⁸ Haug, M., *Essays...*, 1878, pp. 267-293.

⁴⁹ Ինչի մասին միանշանակ վկայում է «Հին Ավեստա»-ի և վեդաների լեզուների տարբերությունը:

Այստեղ, ըստ ամենայնի, աստիճանաբար զարգացող երկնքի արդար ու իմաստուն աստծո գաղափարն արդեն այնքան էր զարգացել, որ «հակասության» մեջ էր մտել մյուս անմահների հետ: Արդար ու իմաստուն Աստծո գաղափարը, որ արդեն գերազանցապես բարոյական կերպարանք էր ստացել և հավակնում էր ամենագործության, չէր կարող հանդուրժել բնության հետ կապված այլ անկախ ու ռազմասեր փոքր աստվածությունների գոյությունը, որոնց պաշտոնյաները՝ երկրի վրա բնակվող քրմերը, շարունակում էին զանազան ծիսակատարություններով ու զոհաբերություններով երկրպագել նրանց: Դրա հետևանքով «դասվա, դե» բառը, որով ի սկզբանե նկատի էին առնվում սովորական աստվածությունները, աստիճանաբար սկսեց բացասական երանգ ստանալ: Աստվածների մեկ այլ կարգ ևս գոյություն ուներ, որոնք էին «ասուրա/ահուրա»-ները⁵⁰, և որոնց թվին էր պատկանում նաև Երկնքի աստվածը: Վերջիններս պահպանեցին իրենց դրական նշանակությունն իրանցիների մոտ, թեև ավելի ուշ ժամանակներում հնդկական կրոնում նրանց տրվեց բացասական նշանակություն:

Ահա այսպիսի կրոնական բարդ զարգացումների ժամանակաշրջանում էր, որ եկավ Չրադաշտը և քարոզեց իր ուսմունքը:

Ինչպես խոսեց Չրադաշտը: Չրադաշտականությունը իր կրոնական փիլիսոփայության և գաղափարախոսության տեսանկյունից մենք պետք է բաժանենք երկու առանձին հասկացությունների միջև: Դրանցից մեկը կարելի է կոչել *Չրադաշտի կրոն* և մյուսը՝ *զրադաշտական կրոն*: Այդպես է վարվում իրանագետ Մեհրդադ Բահարը⁵¹:

⁵⁰ Այդ աստվածները «ասուրա» են կոչվում վեդաներում և «ահուրա»՝ «Ավեստա»-ում, ինչի միակ ապացույցը վերջինում Ահուրամազդայի անունն է:

⁵¹ Bahār, M., *Jostāri dar farhang-e Irān*, s. 25: Մոտավորապես նույն կերպ է վարվում Ի. Գերշևիչը իր “Zoroaster’s own contribution” (JNES, 23, no. 1 (Jan., 1964), pp. 12, 32), հոդվածում, որտեղ նա զրադաշտականությունը երեք շրջանի կամ խմբի է բաժանում. գաթաների կրոնը կոչվում է «Zarathuštrianism», «Նոր Ավեստա»-ի կրոնը՝ «Zarathušttricism», իսկ սասանյան զրադաշտականության համար վերապահված է «Zoroastrianism» անվանումը:

Իրականում սա առանձին նոր մոտեցում ու վերաբերմունք չէ կրոնների պատմության ուսումնասիրման մեջ, քանի որ ցանկացած կրոն, որ քարոզվում է ինչ-որ մի մարգարեի կողմից, իր հետագա պատմության ընթացքում անխուսափելիորեն ենթարկվում է մեծ փոփոխությունների և երբեմն հակասության մեջ մտնում իր իսկ հիմնադրի քարոզած ուսմունքի հետ: Այսպես է քրիստոնեության, բուդդայականության, իսլամի և այլ մեծ ու փոքր կրոնադավանաբանական հոսանքների դեպքում:

Բացառություն չէ նաև գրադաշտականությունը: Այստեղ մենք ունենք մի կողմից բուն գաթայական 17 հիմները (որոնք կազմում են այժմյան «Ավեստա»-ի մի փոքր մասը միայն), որոնք վերագրվում են Ջրադաշտին, և մյուս կողմից՝ ողջ մնացած գրադաշտական գրականությունը՝ սկսած «Ավեստա»-ի ավելի «երիտասարդ» հատվածներից մինչև միջին և նոր պարսկական գրադաշտական գրականության հուշարձաններում ներկայացված կրոնը⁵²: Իհարկե պետք չէ հասկանալ, որ երկրորդ հասկացության տակ ներառված կրոնը բացարձակապես միասեռ է, քանի որ դա ամենևին այդպես չէ: Կրոնները հաճախ նույն ժամանակ ապրող անձանց ընկալումներում նույնը չեն լինում, ուր մնաց թե հարյուրավոր տարիներով ու կլիմաներով իրարից բաժանված մարդկանց մոտ լինեն: Այս բաժանման նպատակը ավելի շուտ սկզբնաղբյուրի և դրանից առաջացած տարբեր հոսանքների առանձնացումն է:

Այսպիսով՝ «Ավեստա»-ի այս վաղ շերտի (գաթաների) քննությանը դառնալով՝ պետք է նշենք, որ այս շերտը «Ավեստա»-ի մնացած հատվածներից առաջին հերթին առանձնանում է իր լեզվի հնությանը⁵³: Սակայն լեզվի հնությունը չէր կարող միայն առանձին

⁵² Ինչու ոչ, նաև մերօրյա գրադաշտականությունը, որ քրիստոնեության և իսլամի ազդեցության հետևանքով վերածվել է բացառապես միաստվածական կրոնի՝ «չարի» էությունը բացատրելով այնպես, ինչպես դա անում են քրիստոնյա կամ մահմեդական աստվածաբանները:

⁵³ Իհարկե պետք է նշել, որ բացի հնությունից՝ այս լեզուները (հին ու նոր կամ գաթայական ու սովորական ավեստերեն) ունեն նաև բարբառային տարբերություններ,

պատճառ դառնալ, որպեսզի դրանով կազմված ստեղծագործությունը վերագրվեր Ջրադաշտին: Դրա մեջ ավելի առաջնային դեր է կատարում այդ հիմնների բովանդակությունը: Դրանցում արտահայտված գաղափարներն ու ընդհանրապես ոճը, եթե լսենք այս կրոնն ուսումնասիրողների մեծամասնությանը⁵⁴, ունեն առավել անհատական, անգամ անձնական բնույթ, որ տվյալ դեպքում ամենայն հավանականությամբ կարող էին պատկանել հատկապես Ջրադաշտին: Այստեղ Ջրադաշտը հանդես է գալիս որպես իրական մարդ, պատմական կերպար, ոչ թե որպես կիսաառասպելական մի արարած, ինչպես նա ներկայացվում է «Նոր Ավեստա»-ում:

Չնայած դրան, եթե որպես Ջրադաշտի հիմնական ուսմունք ընդունենք այստեղ ներկայացված բովանդակությունը, կստանանք ոչ այդքան օտար (մնացած «Ավեստա»-ից տարբերվող) պատկեր, ինչպես սովորաբար ենթադրվում է: Հիմնական գաղափարախոսությունը մնում է նույնը, ինչը հետագա դարերում շարունակ քարոզվել է նրա հետևորդների կողմից, թեև ծիսակարգում ու որոշ պաշտամունքային կետերում շատ բան կարող է փոխված լինել: Այս գաղափարային հիմքը կարելի է շարադրել հետևյալ կերպ (Յասնա 30: 3-11)⁵⁵.

Աշխարհում գոյություն ունեն երկու իրար հավասար ուժեր, որոնք են քարի ու չար ոգիները: Նրանցից առաջինը՝ քարի ոգին, որ Ահուրա Մազդան կամ «Իմաստուն տերն» է, կյանքի և ընդհանրապես աշխարհում եղող ամեն քարիքի սրեղծողը և ճշմարտության

ինչը որոշ հեղինակների դրդել է ենթադրելու, որ դրանք կարող էին լինել միևնույն ժամանակ գոյություն ունեցած երկու առանձին քարքառներ (այս մասին ավելի մանրամասն տես Hintze A., “Zarathushtra’s time and Homeland: Linguistic perspectives“, in *The Willey-Blackwell Companion to Zoroastrianism*, pp. 34-36):

⁵⁴ Այս մասին առաջին անգամ կարծիք է հայտնել M. Haug-ը, ով դրանք համարում է Ջրադաշտի և նրա անմիջական աշակերտների ստեղծագործությունները՝ *Essays... (1862)*, pp. 115, 138-9: Նման կարծիք ունեն՝ Bartholomae Ch., *Zarathushtra’s Leben und Lehre*, s. 6; Mills L. H., *The Zend-Avesta*, SBE, pp. xxv-xxvii; Otakar K., “Avesta“, in Ripka J., *History of Iranian literature*, pp. 7-8 և այլոք:

⁵⁵ Հիմնվել են Հումբախի թարգմանության վրա՝ Humbach H., *Zarathushtra and his antagonists*, pp. 80-3:

հովանավորն է⁵⁶: Չար ոգին իր հերթին արեղծել է մահը և այն ամենը, ինչ սուր է և կեղծիք, ու վնասում է մարդկությանը: Նրան են աջակցում դատավաները, ովքեր **ընդդեմ** են նրա սխալ ուղին և այդպիսով աշխատում են թուլացնել մարդկանց: Վերջիններս նույնպես ունեն կողմերից մեկին հարելու հնարավորություն, և նրանք, ովքեր խելոք են, հարում են Բարուն, նրանք, ովքեր հիմար՝ Չարին ու կեղծիքին: Բարիները վերջում արժանանում են լավ պարգևի, իսկ չարերը, ընդհակառակը, պարտվում են:

Ընդհանուր առմամբ հետագա դարերում քարոզված գրադաշտական կրոնը տարբերվում է գաթաներում ներկայացվածից ոչ այնքան նրանով, որ որոշ բաներ պակասեցրել է այնտեղից, այլ նրանով, որ ավելացրել է որոշ բաներ, որոնք չեն հանդիպում վերջինիս մեջ: Իհարկե դժվար է այս հարցում վերջնական խոսք ասել, քանի որ «Ավեստա»-ի մեծ մասը մեզ չի հասել, իսկ այն, ինչ հասել է, հաճախ հասել է հատվածաբար միայն: Այսպիսով՝ հին ավեստերենով կազմված հատվածները կարող էին ավելի ընդարձակ ծավալ զբաղեցնել, քան այսօր են զբաղեցնում: Դրանից բացի՝ շատ թեմաներ կարող էին չմտնել Զրադաշտի մտորումների ու երգերի սահմանների մեջ, քանի որ արդեն առկա էին հին հավատքում և պարզապես ընդունված էին որպես պարզ ճշմարտություն:

Այնուամենայնիվ, հիմնական տարբերություններից մեկը, որ անշուշտ հետագա դարերի զարգացման արդյունք է ու մասամբ հավանաբար նաև կրկնում է մինչգրադաշտյան հավատքին, է՛ր բարդ ու երկար ծիսական համակարգը, որը, բացի խրթին մաքրագործման ծիսակատարություններից, ներառում էր նաև կենդանիների զոհաբերությունը և «հառմա»⁵⁷ սրբազան բույսից ստացվող հեղուկի օգտա-

⁵⁶ Մի կողմ թողնենք վիճահարույց այն հարցը, թե արդյո՞ք Աևուրա Մագդան և բարի ոգին (սպրնտա մախնյուն՝ սուրբ ոգին) միևնույն «անձն» են, թե՞ առանձին հոգևոր միավորներ:

⁵⁷ Հառման կրոնական նշանակություն ունեցող բույս էր հին հնդիրանական ցեղերի մոտ, որով հատուկ արբեցնող ըմպելիք էին պատրաստում կրոնական արարողությունների համար: Գոյություն ունեւ նաև նույնանուն յազատը (Skjærsvø, Intr. to

գործումը (հատկապես հեղումներ կատարելու համար), որ անշուշտ գրադաշտականություն է թափանցել հին կրոնից:

Սակայն դրանից բացի՝ ուսումնասիրողների ուշադրությանն է արժանացել նաև ավելի կարևոր ու զգալի տարբերություն, որն արդեն վերաբերում է բուն կրոնի փիլիսոփայությանը:

Ինչպես գիտենք, հնդիրանական շրջանում պաշտվում էին բազմաթիվ աստվածներ, ովքեր կապված էին բնության տարբեր երևույթների հետ: Այսպես՝ «Ավեստա»-ի այն հատվածներում, որոնք վերագրվում են Ջրադաշտին, նրանցից գրեթե ոչ մեկի անունը չի հիշատակվում: Այս կետն է, որ շարժել է ուսումնասիրողների հետաքրքրությունը, և որը նրանցից որոշներին⁵⁸ տեղիք է տվել եզրակացնելու, թե Ջրադաշտը մերժել է բոլոր հին աստվածներին և տեղ տվել միայն ու միայն Ահուրա Մազդային⁵⁹ այսպիսով ստեղծելով միաստվածական մի կրոն: Այսպես՝ հետագայում է միայն, որ հին աստվածները աստիճանաբար հետ են վերադարձել երկինք և կրկին գրավել իրենց դիրքերը:

Ընդ որում՝ նմանատիպ լավ ու բնորոշ օրինակ մենք ունենք հենց քրիստոնեության մեջ, որտեղ (հատկապես որոշ կաթոլիկ հասարակություններում) հին հեթանոսական աստվածները, արդեն վերափոխված որպես սրբեր, հետ են «վերադարձել» և կրկին ամուր տեղ գրադեցրել ժողովրդական հավատալիքներում:

Այստեղ հարց է ծագում՝ արդյո՞ք իրապես նույն գործընթացը եղել է և գրադաշտականության դեպքում: Պատասխանը միանշա-

Zor., pp. 23-4; G. L. Windfuhr, "Haoma/Soma, the Plant", in *Papers in honour of Professor Mary Boyce, 2 vols, Acta Iranica 24-5*, Leiden, 1985, pp. 699-726): Ավ. բառը՝ haoma-, ծագում է հին իր. *hauma- ձևից, որն էլ իր հերթին առաջացել է √hav- («ծծել, ճզմել» իմաստով) արմատից (Hassandoust M., *Etym. dict.*, pp. 2921-2):

⁵⁸ Haug, M., *Essays on the sacred language, writings, and religion of the Parsis* (1878), pp. 301-3; Kapadia, Sh. A., *The teachings of Zoroaster, and the philosophy of the Parsi religion*, p. 18.

⁵⁹ Տե՛ս, օրինակ, Gershevitch, I., "Zoroaster's own contribution", *Journal of Near Eastern Studies* 23, no. 1 (Jan., 1964), pp. 12. "In the Gathas Zoroaster reveals himself as a monotheist in that he worships one god only, Ahura Mazda":

նակ չէ, բայց կարելի է ենթադրել, որ այս պնդումը ունի ճշմարտության իր բաժինը: Դրա պատճառն այն է, որ Ջրադաշտը չէր կարող իր հավատքի մեջ տեղ տալ այլ աստվածներին և ոչ մի անգամ չհիշատակել նրանց անունը: Միաժամանակ նրա կողմից այս աստվածների անունների չհիշատակումը կարող էր ունենալ հետևյալ պատճառները:

Այսպես, ենթադրաբար, Ջրադաշտը կարող էր պայքարել որոշ աստվածությունների դեմ, ասենք այնպիսիների, ինչպիսին էր Ինդրան՝ վեդաների ռազմաշունչ աստվածը: Սակայն կային նաև այնպիսիք, որ դժվար թե կարողանային արժանանալ խաղաղասեր Ջրադաշտի բացասական վերաբերմունքին, ինչպես, ասենք, Միթրան էր՝ լույսի ու արեգակի աստվածությունը: Նմաններին նա միգուցե առանձնապես չէր ցանկանում անդրադառնալ որևէ կերպ կամ, ինչն ավելի հավանական է, միավորում էր նրանց ամեն ինչ ընդգրկող երկնքի Աստծո էություն հետ:

Այստեղ է, որ մենք հանդիպում ենք վեց այլ երկնային էակների, ովքեր առանձնանում են զրադաշտականության մեջ: Դրանք են ամահրասպանդ/ամըշա-սպընտաները՝ «անմահ սրբերը», ովքեր ունեին վերացական անուններ, ինչպես «բարի միտք», «սրբազան առաքինություն» կամ «անմահություն», և որոնց կարելի է համարել նաև Ահուրա Մազդայի բնութագրական հատկանիշները և ոչ առանձին երկնային էակներ: Նրանք հանդիպում են «Ավեստա»-ի ամենավաղ աստվածներում և հիմնականում զրկված են անհատականությունից: Հավանական է, թեև ոչ հաստատ, որ սրանք էին այն հին «բարի» (ըստ Ջրադաշտի և իր հետևորդների) աստվածները (օրինակ՝ Միթրան և Անահիտան), որոնք հետագայում ջրի երես են դուրս գալիս «Նոր Ավեստա»-ում: Այսինքն՝ իրականությունն ըստ ամենայնի այն էր, որ Ջրադաշտը իր կրոնական պատկերացումներում նոր, ավելի վերացական ու բարոյական կերպարանք էր տվել այս հին աստվածներին և նոր անունների տակ միավորել Ահուրա Մազդայի հետ: Այս ճանապարհով գնալով՝ նա ստիպված չէր եղել իր

հետևորդների նվիրական հավատալիքների հետ հակասության մեջ մտնելու և այդպիսով ոչ էլ սովորեցրել էր իր հետևորդներին մերժել նման աստվածներին: Այս ուղով կարող էին միայն հին աստվածները ետ ստանալ իրենց հին դիրքերը:

Գալով չարի ու բարու հակասությանը՝ պետք է նշել, որ ընդհանրապես ուսումնասիրողները գրադաշտականությունը համարում են երկարմատյան՝ դուալիստական կրոն: Դրա էությունն այն է, որ գրադաշտականները ընդունում են երկու իրար հավասար՝ չար ու բարի ուժերի գոյությունը՝ ի տարբերություն, օրինակ, քրիստոնեության կամ իսլամի, որտեղ Աստված մեկն է, և չկա ոչ մի այլ ուժ, որ նրա հետ կարողանա մրցել: Եթե նայենք այլ հնդեվրոպական կրոններին, նման դուալիզմ մենք չենք կարողանա գտնել: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ վերջիններին անձանոթ էր չարի գաղափարը՝ ի հակադրություն բարու: Ընդհանրապես դժվար թե գտնվի որևէ ժողովուրդ, որ իր առասպելներում կամ հավատալիքներում բացարձակապես մերժի չար ուժերի գոյությունը: Այդ չար ուժերին կարող են վերագրվել տարբեր գործառույթներ՝ սկսած երաշտից, վերջացրած նորածինների գողությանը: Նույն չարքերը կան նաև իրանցիներին ազգակից հնդիկների մոտ:

Այսպիսով՝ Ջրադաշտը առաջինը չէր, որ նկատել էր չարի ու բարու հակասությունը: Սակայն շատ հավանական է թվում, որ նրան է պատկանում չարին նման առանձնահատուկ ու կարևոր դերի հատկացման գաղափարը: Ոչ մի այլ հնդեվրոպական կրոնում չարին այդքան ուժ չի վերագրվում, որքան գրադաշտականության մեջ: Այստեղ նա (չար ոգին) անգամ ի վիճակի է կենդանի արարածներ ստեղծել՝ ինչպես, օրինակ, օձեր, կարիճներ, գորտեր և նման այլ գեռուններ ու գիշատիչ կենդանիներ: Եվ ընդհանրապես, նման գաղափարը բավական լավ է հարմարվում արդար ու բարի աստծո գոյության հետ, և միայն տրամաբանական է թվում, որ աշխարհի այս անհամար չարիքները չէին կարող ստեղծված լինել *բարի* աստծո կողմից: Ինչպես գրում է Հեննինգը. «Ցանկացած հայտարարություն, ըստ որի՝

աշխարհը ստեղծվել է մեկ՝ բարի և բարին ցանկացող աստծո կողմից, պետք է առաջ բերի հետևյալ հարցը, թե ինչո՞ւ այդ դեպքում աշխարհը, վերջին հաշվով, այսքան հեռու է լավը լինելուց: Ջրադաշտի այն պատասխանը, որ աշխարհը ստեղծվել է բարի ոգու և չար ոգու կողմից, որ ունի հավասար ուժ և դուրս է եկել ավերելու բարի արարչությունը, կատարյալ պատասխան է»⁶⁰:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ գլխավորապես հենց այս կետն է, որ կազմում է Ջրադաշտի ուսմունքի առանցքային գաղափարը: Սա նշանակում է, որ ճշմարտության մեծ հավակնություն կարող է ունենալ հետևյալ տեսակետը, ըստ որի՝ Ջրադաշտի կատարած հիմնական փոփոխությունը, ինչի հիման վրա նա դրեց իր հավատքը, հետևյալն էր. (ա.) *նա ամրագրեց բնական ճանապարհով տեղի ունեցող երկնքի ասարծո գերիշխանությունը*, (բ.) *աշխարհում գոյություն ունեցող չարիքը մարմնավորեց Չար ոգու կերպարի մեջ և ամբողջությամբ հակադրեց բարի ասարծո կերպարին*: Միաժամանակ նա միավորեց երկնային այլ բարի ուժերին Երկնքի Աստծո շուրջ և կարծես միավորեց նրանց էությունը վերջինիս հետ՝ *առանց վերջիններիս գոյությունը բացասելու*: Այս ամենից դուրս, մնացած փոփոխությունները առավելապես երկրորդական բնույթի էին:

Ինչպես սպրեց Ջրադաշտը: Հետաքրքիր է, որ միջին պարսկական աղբյուրները այդքան հիշողություններ են կարողացել պահպանել Ջրադաշտի մասին: Այս առումով հատկապես ուշագրավ է այն փաստը, որ չնայած նրա կենսագրության մեջ հանդիպում են հրաշքներն ու գերբնական իրադարձությունները, այնուամենայնիվ գերակշռում են իրատեսականն ու պատմականը: Թե ինչքանով են այս իրատեսականն ու պատմականը համապատասխանում բուն իրականությանը, մենք չենք կարող ասել: Սակայն մեծ հավանականությամբ այն պարունակում է ճշմարտության իր մեծ բաժինը: Իհարկե, ժամանակի ընթացքում զրադաշտականների նոր սերունդները միշտ

⁶⁰ Henning W. B., *Zoroaster*, p. 46.

վորձել են «ճշգրտումներ» կատարել աշխարհագրության և ժամանակի հարցում, մեկ տեղադրել են Ջրադաշտին Ատրպատականում, մեկ՝ Բակտրիայում (պրսկ.՝ Բալխ), սակայն այս ամենը պետք չէ մեզ շեղի առանցքային հարցից ու ընդհանուր անվստահություն առաջացնի աղբյուրների նկատմամբ: Ընդ որում՝ նրա կենսագրության շատ մասեր կարելի է համեմատել արդեն պատմական ժամանակներում ապրած ու մեզ ավելի լավ ծանոթ կրոնական գործիչների կյանքի հետ ու տեսնել, որ հաճախ կան հատակ գուգահեռներ դրանց միջև: Այսպես՝ մենք տեսնում ենք, որ Ջրադաշտը իր վաղ հասակից դեռևս շարունակ ինչ-որ հակառակության մեջ է եղել իր ծննդավայրի կրոնավորների հետ, այնպես, որ հետագայում ստիպված է եղել թողնել հայրենիքը և իր ուսմունքը քարոզել օտարներին: Արդյո՞ք նմանատիպ երևույթի չենք հանդիպում, երբ կարդում ենք քրիստոնեության հիմնադրի, Մուհամմեդի կամ քեկուզ Մանիի կենսագրություններն ու նրանց կրոնների պատմությունները: Ջրադաշտը իր վերջնական ընդունելությունը գտնում է ինչ-որ ուրիշ ցեղի առաջնորդի մոտ. ինչո՞վ դա նման չէ, ասենք, Մեդինայում Մուհամմեդի ընդունելությանը:

Ջրադաշտի անունը ավեստերենում հնչում է որպես *Zarathustra*: Դրա ստուգաբանությունը, շատ այլ հարցերի նման, նույնպես հարցականի առջև է դրել շատ ուսումնասիրողների՝ սկսած հունական դասական հեղինակներից: Այժմ հիմնական կարծիքները միավորվում են այն բանում, որ անվան երկրորդ մասը (-*ustra*) թարգմանաբար նշանակում է «ուղտ»: Առաջին մասը վիճելի է և չունի միանշանակ թարգմանություն: Ոմանք անունը թարգմանում են որպես «ծեր ուղտեր ունեցող», ոմանք՝ «ուղտեր քշող (այսինքն՝ պահող)» և այլն⁶¹: Հավանական է, որ նա ոչ-կրոնավոր ծնողների զավակ է եղել, ինչպես նշվում է ավանդության մեջ, որ աշակերտել է հոգևորականներին՝ զոհաբերություններ մատուցելու արվեստը սովորելու համար: Ըստ

⁶¹ Schmitt R., "Zoroaster, I. The name", *Encyclopaedia Iranica* (<http://www.iranicaonline.org/articles/zoroaster-i-the-name>).

ամենայնի դեռ պատանեկության տարիներին որոշակի հակասություններ է ունեցել իր ուսուցիչների հետ, ինչը հետագայում ձևավորել է իր կրոնական հայացքները:

Երիտասարդ տարիքում լքելով իր հայրենի երկիրը կամ, ավելի շուտ, ցեղը՝ նա երկար տարիներ թափառել է տարբեր վայրերում, մինչև վերջնական ընդունելություն է գտել Վիշտասպի մոտ, ով ինչ-որ մեկ այլ ցեղի առաջնորդն էր: Այստեղ է, որ նա հիմնավորվել է և տարածել իր ուսմունքը: Նրա հետագա կյանքը հիմնականում անցել է խաղաղ ու հանգիստ, և նա շրջապատված է եղել հարգանքով ու պատվով: Ինչքանով է ճիշտ արդյոք, որ նրա կյանքը ավարտվել է 77 տարեկան հասակում, դժվար է ասել, սակայն այն, որ ավարտվել է ինչ-որ մի մարդասպանի ձեռքով և առանց որևէ հրաշքի, մոտ է թվում ճշմարտությանը: Ջրադաշտի կենսագրությունը, ըստ միջին պարսկական սկզբնաղբյուրների, ներկայացված է այս գրքում:

Ավեստա: «Ավեստա»-ն գրադաշտական հավատքի սուրբ գիրքն է⁶²: Չնայած որ այստեղ այն գիրք է կոչվում, իրականում, սակայն, այն տեքստով, որ մեզ է հասել, «Ավեստա»-ն իրենից ներկայացնում է տարբեր կրոնական տեքստերի մի ժողովածու, որ գրադաշտական հոգևորականներն օգտագործում են ծիսական արարողությունների

⁶² «Ավեստա» բառի ծագումը անորոշ է: Բուն «Ավեստա»-ում այն չի հանդիպում, այլ հանդիպում է պահլավական և ավելի ուշ շրջանի աշխատությունների մեջ: Միջ. պարսկ. այն լինում է *abestāg*: Ստուգաբանության համար առաջարկվել է մի քանի տարբերակ: Օրինակ՝ Կ. Գելդները, մեջբերելով Կ. Ֆ. Անդրեասի կարծիքը, բառը ծագած է համարում *upastā-* արմատից, որ, ըստ նրանց, նշանակում է «հիմք, հիմնային տեքստ» (Geldner K., “Avesta”, in *Avesta, Pahlavi, and Ancient Persian studies in honor of late Shams ul-Ulama Peshotanji Bahramji Sanjana, M. A., PhD, Strassburg, Leipzig. 1904*), չնայած Բարթոլոմեն իր բառարանում այս բառը (*upastā-*) թարգմանում է որպես «օգնություն, աջակցություն» (Barth, *Alt. Wört.*, s. 396): Այլ ստուգաբանություն տալիս է հենց Բարթոլոմեն՝ բառը ավեստերենում չավանդված *upa-stāvaka-* («գովաբանություն») արտահայտությունից ծագած համարելով (*Die Gatha's des Avesta. Zarathushtra's Verspredigten*, Strassburg, 1905, s. 106, հղումը՝ վերցված J. Kellens, “Avesta, i, Survey of the history and the contents of the book”, *Enc. Ir.*, <http://www.iranicaonline.org/articles/avesta-holy-book>):

ժամանակ: Այդ պատճառով այն լիովին տարբերվում է «Հին կտակարան»-ից, «Ղուրան»-ից և կանոնավոր կերպով կազմված այլ կրոնական գրքերից: Այն չի պարունակում աշխարհի արարման ողջ պատմությունն ու մարգարեների կյանքը և լինելով չափածո՝ ինչ-որ տեղ ավելի շուտ մտնում է Ռեզ- և մյուս վեդաներին (Մամա-վեդա, Յաջուր-վեդա և Աթարվա-վեդա):

«Ավեստա»-ն նախկինում ավելի մեծ ծավալ է ունեցել, քան այսօր: Նրա բովանդակությունը ներկայացված է պահլավական Դենքարդ աշխատության (Թ դար) ութերորդ և իններորդ գրքերում⁶³: Համաձայն «Դենքարդ»-ում տրված նկարագրության՝ ասասնյան ժամանակներում «Ավեստա»-ն բաղկացած է եղել 21 առանձին գրքերից, որոնք կոչվել են «նասք»: Այս նասքերից յուրաքանչյուրն ունեցել է իր անվանումը: «Դենքարդ»-ում պահպանված «Ավեստա»-ի նասքերի նկարագրությունը ցույց է տալիս, որ դրանց բովանդակությունը բավական բազմազան է եղել և պարունակել է նկարագրություններ ինչպես աշխարհի արարչության, Ջրադաշտի կյանքի, բժշկության, աշխարհագրության, սերնդաբանության ու պատմության վերաբերյալ, այնպես էլ ընդգրկել է կրոնական մեկնություններ ու օրենքներ, ձոներ աստվածներին և այլն: Ջրադաշտական ավանդության համաձայն՝ այս քսանմեկ նասքերից միայն մեկն է, որ մեզ է հասել ամբողջությամբ: Դա է «Վիդեվդատ»-ը⁶⁴ (աղավաղված՝ նաև «Վենդիդադ», ծագում է vi.daevo.dāta- արտահայտությունից՝ «օրենք ընդդեմ դևերի» իմաստով)՝ 19-րդ նասքը, որը, եթե հաշվի չառնենք առաջին երեք գլուխները, պարունակում է տարբեր կրոնական ծիսակատարությունների ու պատիժների նկարագրություններ: Մերօրյա Ավեստան կազմող հատվածները մնացորդներ են տարբեր նասքերից: Ընդհանուր առմամբ, մինչև մեզ հասած «Ավեստա»-ն բաղկացած է հետևյալ մասերից.

⁶³ Նկարագրությունը տե՛ս Haug, M., Essays, 1878, pp. 126-134:

⁶⁴ Աղավաղված՝ նաև Վենդիդադ: Ծագում է vi.daevo.dāta- արտահայտությունից՝ «օրենք ընդդեմ դևերի» իմաստով:

ա. *Յասնա*: 72 մասերից (ավեստ.՝ «հաիտի», պահլ.՝ «հա») բաղկացած ժողովածու, որի բովանդակությունը հիմնականում ծիսական է՝ կապված գոհաբերությունների ու հեղումների արարողությունների հետ: Այսինքն՝ գրադաշտական քրմերը Յասնայի բովանդակությունը երգում էին/են գոհաբերությունների ու հեղումների ժամանակ⁶⁵: Այս 72 հատվածներից 17-ը կազմում են *գաթաները*⁶⁶, որոնք գրված են ավելի հին բարբառով, քան մնացած ավեստայական տեքստերը և ենթադրաբար պարունակում են Ջրադաշտի կամ նրա անմիջական ժամանակակիցների խոսքերը:

բ. *Յաշթ*: Ջրադաշտական տարբեր յագատների՝ աստվածներին նվիրված գովաբանական ու գոհաբերական ձոներ են: Այժմ դրանք թվով քսանչորսն են, թեև վերջին չորսը հատվածաբար են պահպանվել կամ անորոշ հարաբերություն ունեն մնացած մասերի հետ: Այստեղ հարուստ առասպելաբանական նյութ կա, որ հաճախ նմանություններ ունի միջին ու նոր պարսկական («Շահնամե») աղբյուրներում պահպանված ավանդագրությունների հետ:

գ. *Վիդեվդասր*: Ինչպես վերևում նշվեց, ծիսական արարողությունների ու պատիժների երկարաշունչ ու կրկնություններով հարուստ նկարագրություն է, թեև առաջին երեք գլուխները հետաքրքիր ու կարևոր աշխարհագրական ու առասպելական տեղեկություններ են պարունակում: Բաղկացած է 22 գլուխներից՝ ֆրագարդներից:

դ. *Վիսպարադ*: Թեև առանձին գիրք է համարվում, սակայն իր բովանդակությամբ շատ չի առանձնանում Յասնայից և արարողակարգում օգտագործվում է Յասնայի ընդլայնված արարողության ժամանակ: Ձեռագրերում այն ձուլված է Յասնային, և դրա բաժինները մեջընդմեջ դասավորված են Յասնայի տարբեր գլուխների կողքը:

⁶⁵ Այդ արարողություններն ընդհանուր անունով կոչվում են «յասնա», որ նշանակում է «աստվածային պաշտամունք» իր բոլոր արտահայտություններով» («Gottesverehrung in weitestem Sinn; ‘Verehrung, Anbetung, Huldigung, Preis, Gebet; Opfer; Feier; Gottesdienst’, Barth., Alt. Wört., s. 1270):

⁶⁶ Յասնայի մեջ դրանք են 28-34, 43-51, 53, 54-րդ հատվածները («հա»):

ե. *Փոքր Ավետարան*: Կրոնական տարբեր փոքր արարողությունների ժամանակ կատարվող, ինչպես նաև առօրյա *աղոթքների ժողովածու*, որն ամենօրյա գործնական լայն կիրառություն ունի: Նրա մասերն են կազմում.

ա. Նիայիշներ՝ հինգ կարևոր յազատներին՝ Արևին, Սիհրին, Լուսնին, Ջրերին և Կրակին նվիրված ոչ լայնածավալ աղոթքներ են,

բ. Գահեր՝ օրվա հինգ ժամերի (մասեր կամ պահեր) պահապան ոգիներին նվիրված աղոթքներ,

գ. Սիրոզաներ՝ աղոթքներ, որոնք նվիրված են ամսվա երեսուն օրերից ամեն մեկի հովանավոր յազատին,

դ. Աֆրինգան՝ տարբեր կրոնական առիթներով արտասանվող օրհնանքներ և այլ փոքր աղոթքային բաժիններ, որոնք դասակարգված են ըստ արարողակարգի:

Դրանցից բացի՝ կան մի քանի այլ փոքր հատվածներ, ինչպես *Նիրանգեսթանը* և այլն:

Այս բաժանումից բացի, որ Ավետայի տեքստի ավանդական բաժանումն է, լեզվաբանական տեսանկյունից ելնելով՝ «Ավետա»-ի տեքստը բաժանվում է երկու մասի՝ Հին և Նոր (կամ, ինչպես ասում են, «հին» և «երիտասարդ») «Ավետա»-ների: Սրանցից հինը ծավալով շատ ավելի փոքր է և բաղկացած է Յասնայի գաթայական հատվածից (որ բաղկացած է հինգ գաթաներից (=17 հաիտի)) և մեկ այլ առանձին փոքր հատվածից, որ կոչվում է «Յասնա Հապտահաիտի»: «Նոր Ավետա»-ն կազմում է մնացածը: Հիմնականում կարծվում է, որ Հին ու Նոր «Ավետա»-ների կազմվելու ժամանակների միջև ընկած է մի քանի հարյուրամյակ:

Ջրադաշտականությունը պարմության մեջ: Ջրադաշտական կրոնի պատմությունն ուսումնասիրության համար կարելի է բաժանել երկու շրջանի՝ մինչասանյանական և սասանյանական: Այս բաժանումը պետք է կատարել՝ ելնելով այն բանից, որ Սասանյան արքայատոհմի (224-652 թթ.) հիմնադրումից հետո զրադաշտականությունը

հաստատվել է որպես պաշտոնական կրոն, և այս ժամանակվանից սկսած՝ նրա պատմությունը մեզ ավելի լավ է հայտնի, քան այն, ինչ եղել է դրանից առաջ:

Իրանական ցեղերի առաջին գրավոր հիշատակությունները հանդիպում են ասորեստանյան արքաների արձանագրություններում, որոնք թվագրվում են մ. թ. ա. իններորդ դարով: Սակայն այս ցեղերի քաղաքական պատմությունը նոր փուլ է թևակոխում մ. թ. ա. Ը-է դարերից սկսած, երբ պետք է հիմնադրված լինի Մարաստանի թագավորությունը: Այս թագավորության մասին առաջնային աղբյուր է Հերոդոտոսի «Պատմությունը», որում ներկայացված արքայացանկի համաձայն՝ Մարական թագավորությունը հիմնել է ոմն Դեյոկես՝ մ. թ. ա. 700 թ. շրջանում⁶⁷:

Իրականում, սակայն, կարելի է ասել, որ մենք գրեթե ոչինչ չգիտենք այս ազգի, պետության ու այդ պետության ներքին կառուցվածքի մասին: Մարական թագավորության մասին մեզ միայն կտրտված ու կողմնակի տեղեկություններ են հասել, որոնցից մենք չենք կարող պատկերացում կազմել նաև այդ պետության կրոնական քաղաքականության վերաբերյալ: Հետաքրքիր է միայն, որ մարական (մեդական) ցեղերի թվարկման ժամանակ Հերոդոտոսը հիշում է «մոզեր» անունը, որով հետագայում ինչպես հույների, այնպես էլ պարսիկների մոտ կոչվում էին գրադաշտական քրմական դասի ներկայացուցիչները:

Հաջորդ իրանական թագավորությունը, որ առավել լավ էր ծանոթ հույներին, Կյուրոսի ու Դարեհի արքայատոհմն էր՝ Աքեմենյանը, որ հաջորդեց Մարականին: Նրա հիմնադիր Կյուրոսը (եթե ընդունենք ավանդական տեսակետը, ըստ որի՝ Կյուրոսը Աքեմենյանների

⁶⁷ Մարական արքայատոհմը, ըստ Հերոդոտոսի արքայացանկի, ունեցել է չորս արքա՝ Դեյոկեսը (53 տարի), Փրատրտեսը (22), Կյուաքսարեսը (40) և Աստյուագեսը (35): Եթե նրանց ընդհանուր տարիները միավորենք, կստանանք 150 տարի, որը հանելով Մարական թագավորության կործանման թվականից (550 թ.) կստանանք վերը նշված թվականը (Հերոդոտոս, գիրք Ա, 102, 103, 107, 130): Թե որքանով է այն համապատասխանում իրականությանը, դժվար է ասել:

տոհմի անդամ էր և ազգական Դարեհի⁶⁸) ռազմական գործողությունների արդյունքում մ. թ. ա. 550 թ. տապալեց Մարական թագավորությունը ու հաստատեց իր և ցեղի իշխանությունը:

Աքեմենյանների պետությունը, որի սահմանները վերջինիս գոյության հիմնական ժամանակահատվածում ձգվում էին Եգիպտոսից (հ. պ.՝ *mudrāya*) ու Կասպադովկիայից (հ. պ.՝ *katpatuka*) մինչև Բակտրիա (հ. պ.՝ *bāxtriš*) ու Գանդահար (հ. պ.՝ *gandāra*), գոյություն է ունեցել մ. թ. ա. 550 թ. մինչև մ. թ. ա. 330/329 թ., երբ այն կործանվեց Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի հետևանքով: Այս պետության կրոնական ուղղվածության մասին թեև մենք քիչ թե շատ նշանակալի հետքեր ու փաստարկներ ունենք մեր ձեռքի տակ, սակայն ուղղակի փաստերի բացակայության պատճառով կրկին կանգնած ենք մասնակի անորոշության մեջ:

Երբ փորձում ենք ձեռքի տակ առկա աղբյուրներից այս մասին դրական կամ բացասական փաստարկներ հավաքել, բախվում ենք մի տարօրինակ հանգամանքի: Առկա հիմնական աղբյուրներն անուղղակի կերպով հաստատում են այն տեսակետը, որ Աքեմենյանները եղել են գրադաշտական կրոնի հետևորդներ, սակայն ոչ մի ուղղակի փաստ չկա ո՛չ բուն արձանագրություններում⁶⁹, և ո՛չ էլ մեզ հասած հունական պատմագիրների աշխատություններում, որ ուղիղ կերպով կհաստատի այս ենթադրությունը կամ էլ կպարզի, թե ինչպիսին է եղել նրանց գրադաշտականությունը:

⁶⁸ Հակառակ տեսակետի մասին տե՛ս Frye, R. N., “Cyrus was no Achaemenid”, in Carlo Cereti et al (eds.), *Religious themes and texts in pre-islamic Iran and Central Asia*, Beiträge zur Iranistik xxiv, Wiesbaden, 2003:

⁶⁹ Աքեմենյանների արձանագրություններում Ջրադաշտի անվան բացակայությունը պայմանավորված է ոչ թե Աքեմենյանների կրոնական պատկանելությամբ, այլ այն հանգամանքով, որ այդ արձանագրությունները պարզապես քաղաքական ու պատմական էին իրենց բովանդակությամբ և կապ չունեին կրոնի հետ:

ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.
ՏՆՄՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ. ԵՊԻՍՏՈՍՆԱԿԱՆ.

ՏՆՄՆ

Չեռագիր էջ «Փոքր Ավետարան»-ից (1856 թ., գրված Բեհրուզ իրն Իսրայելու-
րի կողմից և հրատարակված Քարայուն Մագապիտուրի կողմից 2007 թ.)

Այսպիսով՝ արժե նախևառաջ նշել, որ Աքեմենյաններն իրենց արձանագրություններում հաճախ են հիշատակում գրադաշտական գլխավոր աստծուն՝ Ահուրա Մազդային: Ուշագրավ է հատկապես այն, որ այս անունը արձանագրություններում հանդիպում է միաձուլված կերպով, այսինքն՝ որպես a.aramazda⁷⁰, ինչը խոսում է նրա մասին, որ այն վաղուց է օգտագործողներին հայտնի եղել:

Այս գալիս է այն հանգամանքը, որ Հերոդոտոսը պարսկական բարբերը նկարագրելու ժամանակ (Գիրք Ա, 131-140) տալիս է մի շարք տեղեկություններ, որոնք համապատասխանում են (կամ առնվազն չեն հակասում) գրադաշտականությանը: Այդ սովորությունների մեջ կարևոր է մոզերի թաղման սովորությունների նկարագրությունը, համաձայն որի՝ նրանք իրենց դիակները թողնում էին շների ու թռչունների հողտամանը: Ինչպես գիտենք, մույն սովորությունը ունեին գրադաշտականները, որ պահպանել են ընդհուպ մինչև մեր օրերը⁷¹:

Ավելի հետաքրքիր է մեկ այլ սովորություն, որ բացարձակ նմանություն է ցույց տալիս գրադաշտականության մեջ ընդունված կարգին և անգամ գաղափարախոսությանը, որի էությունը վնասակար (առնվազն կրոնական տեսանկյունից) կենդանիներին ոչնչացնելու և դա կրոնական պարտականություն համարելու մեջ է: Այսպես՝ Հերոդոտոսը մոզերի՝ կրոնական պաշտոնյաների մասին գրում է. «...և մեծ ծառայություն են համարում այն, որ սպանում են մրջյուններ, օձեր և այլ սողուններ ու թռչուններ» (Ա, 140)⁷²: Ըստ այս սովորությունի, որը մեզ լավ ծանոթ է պահլավական աղբյուրներից (դրա մասին նշում կա նաև հայկական ոսկեդարյան աղբյուրներում), գրադաշտականը

⁷⁰ Մանսկրիտը, ավեստերենը, ինչպես և հին պարսկերենը պատկանում են թեքական լեզուների շարքին, և դրանց բառերը ունեն քերականական խոնարհումներ: Այսպիսով՝ Ահուրա Մազդան, որ ավեստերենում մեկ բառ չէ, այլ երկու, կարիք ունի, որ երկու մասերն էլ առանձին խոնարվեն: Այսպես՝ տր. եզ. կլինի՝ ahurəm.mazdām, մինչդեռ ավեստեյան արձանագրություններում այն հղովվում է որպես մեկ ամբողջական բառ:

⁷¹ Այս սովորությունը պահպանվել է միայն Հնդկաստանի գրադաշտական համայնքներում, իսկ Իրանում՝ ոչ:

⁷² Կրկյաշարյան Ս., Հերոդոտոս, Երևան, 1986:

պետք է պայքարի Ահրիմանի՝ Չար ոգու արարչության դեմ և վերացնի նրա արարածներին՝ հանձինս վնասակար գեռունների: Ընդ որում՝ մրջյունները և գորտերը թեև, ինչպես հայտնի է, ոչ մի մեծ ու զգալի վնաս չեն հասցնում մարդկանց, նույնպես թվարկվում են այդ վնասատուների մեջ, ինչը և խոսում է այն մասին, որ Հերոդոտոսից մեջբերված այդ հատվածում խոսքը ոչ թե գյուղատնտեսական մաքրումների, այլ կրոնական սովորության մասին է:

Գարեհ Ա արքան (մ. թ. ա. 522-484 թթ.), որ իր հետևից թողել է Բեհիսթունի լայնածավալ արձանագրությունը⁷³, որտեղ նկարագրում է իր հաղթանակները թշնամիների ու ապստամբների նկատմամբ, իր կրոնական գաղափարախոսության մեջ բավական նմանություններ ունի զրադաշտականության հետ: Այսպես՝ նրա գլխավոր աստվածը, ով իրեն գահին է նստեցրել, Ահուրամազդան է, ում նա հակադրում է Ստին, որ այս դեպքում հանդես է գալիս թշնամիների տեսքով: Բացի Ահուրամազդայից՝ կան նաև ուրիշ, ավելի փոքր նշանակության աստվածներ, որոնց գոյությունը նա ընդունում է, սակայն արժանի չի համարում նշել նրանցից որևէ մեկի անունը (DB, 4.61-63): Նրա որդին՝ Քսերքսեսը (մ. թ. ա. 484-464 թթ.), նույն արքան, որ խոշոր արշավանք կազմակերպեց Հունաստանի դեմ ու պարտություն կրեց (480-479 թթ.), նույն վերաբերմունքն է ցույց տալիս Ահուրամազդային՝ նրան համարելով աշխարհի արարիչը, ինչպես և հիշատակում է այլ աստվածներին (XEa, §1.A-G): Շատ կարևոր է նրա արձանագրություններից այն մեկը, որ հայտնի է որպես «հակադևական» (XPh): Այստեղ նա ցույց է տալիս իր թշնամությունը դաիվաներին (դևերին) պաշտողների նկատմամբ. «Եվ այս երկրներում կային այնպիսիներեք, որտեղ նախկինում պաշտվում էին դաիվաները: Ապա ես, Աուրա-

⁷³ Այս եռալեզու մեծաբանդակ արձանագրությունը, որ գրվել է իրանական Քերմանշահ քաղաքից երեսուն կմ հեռավորության վրա գտնվող Բիսթուն կոչվող լեռան ժայռային լանջերից մեկին, հին աշխարհի կարևորագույն արձանագրություններից մեկն է, որ, ինչպես նշվեց, գրվել է արեմենյան Գարեհ Ա-ի կողմից՝ ի նշանավորում վերջինիս քաղաքական և ռազմական հաղթանակների: Արձանագրության երեք լեզուներն են հին պարսկերենը, ավեստերենը և էլամերենը:

մագրայի կամքով քանդեցի դաիվաների այդ վայրերը և հրամայեցի. «Դանվաները չպետք է պաշտվեն»» (XPh, §5. A-F)⁷⁴, ինչպես նաև խոսք է բացում հանդերձյալ կյանքում «երջանիկ» լինելու մասին. «Այն մարդը, ով այն օրենքին կհետևի, որ Աուրամագրան է հաստատել, ճիշտ ժամանակին ու ճիշտ ծեսերով, նա իր կյանքում երջանիկ կդառնա և մահվանից հետո էլ երջանիկ կլինի» (XPh, §6. I-N): Տվյալ դեպքում իրապես բավական մեծ նմանություն կա գրադաշտական կրոնի հետ:

Որպեսզի այս թվարկումը շատ չերկարի, երկու խոսքով էլ անդրադառնանք հույն այլ հեղինակներին: Այսպես՝ մինչև մեր օրերը հասած աշխատություններ ունեցող հույն հեղինակների մեջ նրանք, ովքեր անդրադարձել են Ջրադաշտին և նրա կրոնին, ապրել են Աքեմենյանների արքայատոհմի կործանումից մի քանի դար հետո: Առաջին հերթին դրանք են Ստրաբոնը, Պլուտարքոսը և Դիոդեցես Լաերտիոսը, որոնց գրքերում տրված համառոտ տեղեկությունները մեծ մասամբ համապատասխանում են գրադաշտականության մեր պատկերացումներին և հիշատակում են նաև Ջրադաշտի անունը: Սակայն պետք է ասել, որ նրանց մեջբերած ավելի հին հեղինակների աշխատությունները թվագրվում են առնվազն Աքեմենյան արքայատոհմի վերջին շրջանով (Արիստոտելի «Փիլիսոփայության մասին» կորած աշխատությունը, Թեոպոմպոսը, Հերմիպպոսը), այնպես որ գրադաշտականությունն արդեն այդ ժամանակ պետք է որ ամուր արմատներ գցած լիներ իրանական հողերում:

Ամփոփելով վերոբերյալ տեղեկությունը՝ պետք է եզրակացնենք, որ ինչքան էլ անորոշություններ դեռ առկա լինեն այս հարցում, անկախ նրանից, թե Աքեմենյան արքաները անձամբ եղել են գրադաշտական, թե ինչպիսին է եղել գրադաշտականությունը Աքեմենյան Իրանում և կամ ինչպես է տարածվել այդ ընդարձակ երկրամասում,

⁷⁴ Օգտվել են Շմիտտի կատարած թարգմանությունից, որ ներկայացված է Schmitt R., *Die Altpersischen Inschriften der Achaimeniden* (Wiesbaden, 2009) աշխատության մեջ:

մեկ բան կարելի է պնդել վստահաբար, և դա այն է, որ գրադաշտական կրոնը Իրանում իր տարածումը գտել է հենց այս ժամանակ և ոչ ուշ:

Աքեմենյաններին անմիջապես հաջորդում է Ալեքսանդրի ու հելլենիստականության երկար ժամանակաշրջանը, որը տևում է մ. թ. ա. 300-ից մինչև մ. թ. 200-ական թվականները՝ ներառելով նաև Արշակունիների գահակալության շրջանը⁷⁵: Այս երկար դարաշրջանը աչքի է ընկնում նրանով, որ այդ ժամանակներից շատ բան մեզ անհայտ է մնում: Իհարկե, հնէաբանները բավական նյութեր ունեն իրենց աչքի առջև, որոնք պահպանվել են այս ժամանակներից, սակայն հիրավի սյուներն ու մետաղադրամները այդքան էլ շատ բան չեն կարող մեզ պատմել դրանց օգտագործող մարդկանց մասին:

Դա հատկապես ճիշտ է գրադաշտականության դեպքում: Իրականում այն սակավ փաստերը, որ մենք ունենք այս ժամանակաշրջանից, ցույց են տալիս, որ իրանական և անգամ ոչ-իրանական տարածքներում գրադաշտականությունը պահպանում էր իր գոյությունը և շարունակում որոշակի ազդեցություն թողնել մարդկանց կյանքի վրա: Փաստացիորեն մենք (գրադաշտականության վերաբերյալ) միայն մեկ եզրակացության կարող ենք հասնել փաստերի նման սակավությունից, և դա այն է, որ Արշակունիները այդքան էլ ջերմեռանդ գրադաշտականներ չեն եղել իրականում:

Այնուամենայնիվ, հետաքրքիր մեկ փաստ՝ կապված Արշակունիների ու գրադաշտականության նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի հետ, հասել է մեզ և այն էլ միջին պարսկական գրականության միջոցով: Այս տեղեկությունը, որ պահպանվել է «Դենքարդ» գրքում⁷⁶, խոսում է Արշակունի թագավորներից մեկի մասին՝ Վաղարշ

⁷⁵ Այն թեև սկսվում է մ. թ. ա. 250 թվականից և տևում մինչև մ. թ. 224 թվականը, սակայն ողջ Իրանի վրա իշխանության նրանք հասել են միայն մ. թ. ա. Բ դարի կեսերին:

⁷⁶ Dēnkard (Madan), vol. 1, p. 412.

անունով (włhš)⁷⁷, ով հրամայել է իր ենթակայության տակ գտնվող-ներին հնարավորին բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի պահպանվեն «Ավեստա»-ն ու «Ջանդ»-ը («Ավեստա»-ի մեկնաբանությունները): Այս տեղեկության գոյության փաստի մեջ ուշագրավ է այն հանգամանքը, որ Սասանյանները, որոնք թշնամի էին Արշակունիներին, հակված չէին նրանց մասին լավ առասպելներ տարածելու, այնպես որ այս տեղեկությունը «Դենքարդ»-ի ու այլ պահլավական գրքերի հեղինակներին պետք է հասած լինի կամ անմիջապես պարթևական աղբյուրներից, կամ այնպիսի աղբյուրներից, որոնք օգտվել են պարթևական աղբյուրներից, և այդպիսով ճշմարտություն իր մեջ պարունակի: Ինքն իրենով այն ցույց է տալիս, որ Արշակունի արքաներից առնվազն ոմանք հետաքրքրություն են ցուցաբերել Իրանի արդեն ավանդական դարձած կրոնի նկատմամբ:

Հաջորդ արքայատոհմը, որ թերևս ամենից կարևոր դերակատարությունն է կատարել գրադաշտականության համար, եղել է Սասանյան արքայատոհմը (մ. թ. 224-652 թթ.): Վերջինիս հիմնադիրն է Արտաշիր Ա Սասանյանը (Փափագան), ով 224 թ.-ին տապալել է Արշակունյաց վերջին արքա Արտաբան Ե-ին ու իր իշխանության տակ միավորելով ողջ երկիրը՝ սկսել է հովանավորել գրադաշտական կրոնն ու դրա հոգևորականությանը:

Այդպիսով՝ գրադաշտականությունը մինչև 652 թ. տեղի ունեցած Սասանյան պետության կործանումն ամուր դիրքեր է գրավել Իրանում և կարողացել է զարգանալ ու որոշակի կրոնական գրականություն ստեղծել, որի մնացորդներն այսօր մենք տեսնում ենք պահլավական գրականության մեզ հասած նմուշների մեջ: Սակայն այս ամենով հանդերձ՝ գրադաշտականությունն ամենևին էլ միասեռ բնույթ չի ունեցել այս ընթացքում: Պետության աջակցության բացակայության պայմաններում՝ Մելիկյան և Արշակունյաց ժամանակներ-

⁷⁷ Վաղարշ անունով մի քանի Արշակունի արքա գիտենք, որոնցից ամենահայտնին հայ Արշակունիների հարստության հիմնադիր Տրդատի ավագ եղբայրն էր՝ Վաղարշ Ա-ն (մ. թ. 50-76/79): Հավանական է, որ պահլավական տեքստում հենց վերջինս էլ նկատի է առնվում:

րում, երբ գոյություն չունեն որևէ միասնական հոգևորական համակարգ, բնական էր, որ գրադաշտականության մեջ առաջ գալիս բազմաթիվ կրոնական հոսանքներ և նույնիսկ աղանդներ, որոնք ժամանակի ընթացքում, պակասելու փոխարեն, ավելի ու ավելի են շատացել: Այս հանգամանքն էր թերևս, որ միասնական կրոնական համակարգ մշակելու գործում բավական դժվարություններ դրեց Սասանյան առաջին արքաների առջև: Դրությունը բավական անորոշ էր: Ըստ ամենայնի, դա էր նաև պատճառը, որ երբ Արտաշիրի որդին՝ Շապուհ Ա-ն, հետաքրքրություն էր ցուցաբերում մանիքեականության⁷⁸ նկատմամբ, նա իրականում այդքան էլ չէր մեղանշում գրադաշտական կրոնի դեմ, քանի որ, ըստ իս՝ նա այդ ուսմունքը դիտարկում էր ոչ թե որպես առանձին կրոն, այլ որպես գրադաշտականության մեկ այլ տեսակ կամ ուսմունք: Նույնն էր թերևս նաև Մագդակի ուսմունքի⁷⁹ (Ե-Ձ դարեր) դեպքում, քանի որ նրա ուսմունքը ևս համարվում էր մեկ այլ դավանաբանական հոսանք:

Եթե քննենք մինչև Խոսրով Ա-ն (531-570 թթ.) քարոզված գրադաշտական պաշտոնական գաղափարախոսությունը, որ ընդունում էին Սասանյան արքաները, կտեսնենք, որ դա էլ չէր համապատաս-

⁷⁸ Մանիքեականությունը մ. թ. Գ դարում Միջագետքում առաջացած կրոն էր, որի հիմնադիր Մանին (216-277 թթ.) քարոզում էր խավարի ու լույսի հավերժական պայքարի մասին, որ ընդհանուր առմամբ շատ նմանություններ ուներ Ջրադաշտի կրոնի հետ, և հիմնական տարբերությունն այն էր, որ չարի սկզբունքի արարչություն էր համարվում նյութական աշխարհը: Նրա կրոնի այլ դրույթները մեծ նմանություն ունեն այդ ժամանակ մեծ տարածում գտած փիլիսոփայական (գնոստիկ) կրոնների, ինչպես նաև բուդդայականության ու տեղական կրոնների հետ:

⁷⁹ Մագդակը ապրում էր Քավաղ Ա արքայի իշխանության տարիներին (488-530 թթ.) ու քարոզում էր հավասարություն բոլոր մարդկանց միջև: Ըստ այդմ՝ նրա պահանջն էր, որպեսզի հարուստների ունեցվածքը բռնագրավվի ու բաժանվի աղքատների միջև: Քավաղի մոտ նա կարողացավ վստահության արժանանալ և իշխանությունն իր ձեռքերում պահել որոշ ժամանակով, ինչը պետության մեջ հուզումներ առաջ բերեց և հանգեցրեց Քավաղի ժամանակավոր գահընկեցությանը: Ըստ ամենայնի, նրա վերստին իշխանության գալուց հետ էլ Մագդակն ու իր հետևորդները կարողացան պահպանել իրենց գոյությունը, մինչև գահ բարձացավ Քավաղի որդի Խոսրով Ա-ն, ով սկսեց սպանել այս ուսմունքի հետևորդներին:

խանում այսպես կոչված «ուղղափառ գրադաշտականության»⁸⁰ բուրդը դրույթներին:

Այն դավանանքը, որ ընդունում էին Սասանյան արքաները հավանաբար մինչև Խոսրով Ա-ն, մեզ հայտնի է «գրվանականություն» անունով: Այս դավանաբանական ուղղությունը աչքի էր ընկնում նրանով, որ դրա հետևորդները Օիրմագրին ու Աիրիմանին համարում էին գույգ եղբայրներ՝ ծնված մեկ հորից, որ կոչվում էր «Ջրվան» և մարմնավորում էր ժամանակի գաղափարը, թեև արդարության համար արժե նշել, որ այլ հարցերում ունեցած խոշոր տարբերությունների մասին վկայող բազմաթիվ տվյալներ չունենք⁸¹: Այս ուղղությունը հայ գրականության մեջ հայտնի է Ե դարի հեղինակ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատության պարսկական կրոնին կամ «քէշ»-ին նվիրված հատվածից, որտեղ նա ներկայացնում է աշխարհի ծագման առասպելը գրվանական տեսանկյունից և մանրակրկտորեն փորձում այն «եղծել»:

Չնայած մնան մեծ նշանակությանը՝ միջին պարսկական գրականության մեջ այս դավանաբանական հոսանքի մասին գրեթե ոչ մի հիշատակություն չի պահպանվել: Ամենաշատը կարող են հանդիպել դրանից մնացած հետքերը, որոնք ինչ-որ ձևով ցույց են տալիս Ջրվանի կարևորությունը: Մ. Բոյսը, ով զբաղվել է այս հարցի ուսումնասիրությամբ, կարծիք է հայտնում, որ այս աղանդի ծագումը կարող է հանգել միջագետքյան կրոնական ազդեցությանը, որի տակ

⁸⁰ Ուղղափառ գրադաշտականություն ասելով այստեղ հասկանում ենք այն ուսմունքը, որ մեզ է հասել հետասասանյանական կրոնական գրականության և գրադաշտական կենդանի համայնքների միջոցով, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է Հին ու Նոր «Ավեստա»-ներում ներկայացված կրոնին:

⁸¹ De Jong, A., *Traditions of the Magi*, pp. 67-8, որտեղ հեղինակը նաև բերում է Շ. Շաքեյի կարծիքը այն մասին, որ «գրվանականություն» կոչվող առանձին աղանդ կամ կրոնական համակարգ գոյություն չի ունեցել, և այն իրականում եղել է գրադաշտական աշխարհարարման մի քանի առասպելներից մեկը (Shaked S., "The Myth of Zurvan. Cosmogony and Eschatology", in I. Gruenwald, S. Shaked & G. G. Stroumsa (eds.), *Messiah and Christos. Studies in the Jewish origins of Christianity (FS D. Flusser; TSAJ 32)*, Tübingen, 1992, pp. 219-240):

գրադաշտականությունը ենթադրաբար հայտնվել է Միջագետքի և հարակից տարածքների իրանական նվաճման պատճառով⁸²:

Պահլավական գրականության մեջ նաև հանդիպում են Սասանյան արքայատոհմի իշխանության վաղ շրջանում ապրած կրոնական բարենորոգիչների մասին հիշատակությունները (Թասասար, Ադուրբադ Մահրասպանդան), որտեղ մասնավորապես խոսվում է նրանց կողմից կատարված կրոնական «մաքրման» աշխատանքների⁸³ և դավանաբանական վեճերի մասին:

Սասանյանական գրադաշտականությունը սակայն մինչև վերջ չմնաց այս անորոշ դրության մեջ: Ըստ ամենայնի, Խոսրով Առաջինն էր, որ կարողացավ իր կատարած քաղաքական և տնտեսական բարեփոխումների հետ միասին կարգավորել նաև կրոնական-դավանաբանական հարցերը և գրադաշտականությունը բերել այն վիճակին, որում մենք այն գտնում ենք հետագայում գրված գրականության մեջ: Դրա մասին են ակնարկում պահլավական գրականության մեջ մեզ մեզ հասած մի քանի հատվածներ⁸⁴:

630-ական թվականներից Իրան սկսեցին թափանցել նվաճող արաբական ցեղերը, որոնք իրենց հետ նոր կրոն էին բերում ու պատրաստվում իրենց անջնջելի հետքը թողնել Իրանի պատմության վրա՝ վերացնելով գրադաշտական կրոնը իրանցիների միջից: Կրոնական և տնտեսական պայմանները, որ նրանք ստեղծեցին, թեև ոչ անմիջապես, բայց դարերի ընթացքում աստիճանաբար մեջտեղից դուրս մղեցին գրադաշտական կրոնը, որից մնացին սակավաթիվ հետևորդներ միայն:

Այս հետևորդների մի մասը մնաց Իրանում, որտեղ շարունակեց ապրել Յազդի ու Քերմանի կիսաանապատային շրջաններում: Մյուս մասն էլ գերադասեց երկրից հեռանալը և ծովային ճանապարհով

⁸² Boyce M., *History of Zoroastrianism*, vol. ii, p. 232; Այս հարցը նաև մանրամասն քննված է R. Ch. Zaehner-ի կողմից, ում *Zurvan, a Zoroastrian dilemma* (1955) աշխատությունը ամբողջությամբ նվիրված է այս հարցին:

⁸³ Dēnkard (Madan), p. 412.

⁸⁴ Dēnkard, p. 413; Zand ī Wahman yasn: II, 1-4.

ուղևորվեց Հնդկաստան, որտեղ բնակվեց վերջինիս արևմտյան ափին՝ այսօրվա Գուջարաթի նահանգի տարածքում⁸⁵:

Ինչպես բոլոր ոչ-մահմեդական ազգերը և կրոնական խմբերը, այնպես էլ գրադաշտականները բավական ծանր ժամանակներ են ապրել իրենց մահմեդական տիրակալների իշխանության տարիներին, երբ նրանք պարբերաբար ենթարկվում էին տարատեսակ կրոնական ու տնտեսական բռնաճնշումների: Այս դժվար ժամանակներում էր, որ նրանց կրոնական ու աշխարհիկ գրականության մեծ մասը կորստյան մատնվեց, և միայն մի փոքր հատվածը, որ բախտ ուներ ավելի կիրառական լինելու (կրոնական առումով), կարողացավ մի կերպ անցնել ծանր ժամանակների միջով ու հասնել մինչև մեր օրերը:


Չրադաշտական այս երկու համայնքներին տարբեր ու հակասական ճակատագրեր էին վիճակված: Մոնղոլական շրջանից հետո Իրանում մնացած համայնքը, համեմատաբար ավելի բարեկեցիկ (այսինքն՝ ոչ ծայրահեղ աղքատ) վիճակում գտնվելով, կարողացել էր քիչ թե շատ ավելի լավ պահպանել իր կրոնական գիտելիքները, քան Հնդկաստան գնացածները: Վերջիններիս մոտ այդ պակասի գիտակցությունն այնքան խորացավ, որ նրանք ԺԵ-ԺԹ դարերում ստիպված եղան իրենց իրանցի եղբայրներից վերստին սովորել իրենց հավատքի հիմունքներն ու բարեկարգել այն:

Սակայն շուտով դրությունը փոխվեց: Սեֆյանների արքայատոհմի կործանմամբ Իրանը հայտնվեց կատարյալ ճգնաժամի մեջ, ինչն այնպես ազդեց տեղի գրադաշտական համայնքի վրա, որ այն ոչ միայն հայտնվեց բավական թշվառ իրավիճակում⁸⁶, այլև զրկվեց իր՝ Հնդկաստանի գրադաշտականների նկատմամբ ունեցած կրոնա-

⁸⁵ Այս գաղթը հավանաբար տեղի է ունեցել Ը դարում, թեև հավանական է, որ հետագայում ևս գաղթականության նոր ալիքներ եկած լինեն:

⁸⁶ Իրանում բնակվող գրադաշտականներին այսպիսի ծանր վիճակում է գտել դանիացի արևելագետ Վեստերգորը իր 1843 թ. կատարած ճամփորդության ժամանակ, որի մասին տե՛ս “Extract from a Letter Addressed by Professor Westergaard to the Rev. Dr. Wilson, in the Year 1843, Relative to the Gabrs in Persia”, *Journal of Royal Asiatic Society*, vol. 8, 1846, pp. 349-354, որտեղ նա գրում է. «Նրանք ավելի ցածր են կանգնած, քան, ես չեի ասի փարսիները, այլ հնդիկների միջից ամենից ցածրերը: Իրենց կրոնի մասին նրանք ոչինչ չգիտեն...»:

կան գերազանցությունից ևս: Սրան հակառակ՝ Հնդկաստանում բնակվող զրադաշտականները (ովքեր կոչվում են «փարսի») ժամանակի ընթացքում կարողացան ոչ միայն բարեկարգել իրենց նյութական դրությունը, այլև օգտվելով բրիտանական իշխանությունների ընձեռած հնարավորություններից՝ կարողացան նյութական մեծ գերազանցության հասնել:



Չրադաշտական հոգևորականները արարողության ժամանակ (Darmesteter, J., Le Zend-Avesta, t. 1, Paris, 1892, p. LXII)



*Ջրադաշտակահանների գործող փամարը Յազդուն
(նկարը՝ հեղինակի կողմից)*

Այս բարեկեցիկ դրությունը նպաստավոր եղավ, որ նրանց հոգևորականներից շատերն իրենց գիտելիքները տեղափոխեն ակադեմիական ոլորտ և առաջ բերեն մի շարք նշանավոր իրանագետների: Փարսիների մասին արևելագետ Ուիլիամ Դ. Ուիթնին գրում է. «Նրանք Հնդկաստանի «հայերն» են, ասիական բնակչության ամենից ձեռնարկող ու բարգավաճող հատվածը, ովքեր, հատկապես այն ժամանակվանից, երբ անգլիական գերիշխանությունը ազատություն ու ապահովություն բերեց խաղաղ արհեստներով զբաղվելու համար, այնպես են ծաղկում ապրել, որ այժմ դարձել են հարուստ ու ազդեցիկ մի համայնք»⁸⁷:

Այժմ արդեն այս համայնքի ներկայացուցիչներն էին, որ հովանավորում էին աղքատության ու թշվառության մեջ հայտնված իրենց իրանցի եղբայրներին⁸⁸: Մինչդեռ Իրանի գրադաշտական բնակչու-

⁸⁷ W. D. Whitney, *Oriental and linguistic studies*, vol. i, pp. 152-153.

⁸⁸ Այդ հովանավորչությունը հատկապես սկսեց զգալի դառնալ ԺԹ դարի կեսերից սկսած, երբ փարսի համայնքի ազդեցիկ ներկայացուցիչները, օգտվելով բրիտանական ազդեցությունից, կարողացան դիմումներ ներկայացնել պարսից արքունիք՝

թյունը հասել էր ծայրահեղ թշվառ վիճակի, ինչն անընդհատ պակասեցնում էր նրանց թիվը: Հատկապես ծանր էր կրոնափոխության խնդիրը, քանի որ, ըստ իսլամական օրենքի, իսլամն ընդունած անձը ստանում էր ընտանիքի ողջ ժառանգությունը: Ջրադաշտականները պարտադրված էին կրելու հատուկ զգեստներ՝ իսլամ բնակչությունից տարբերվելու համար, նրանց հիմնականում արգելված էր երիվարներ հեծնելը կն⁸⁹: Հաճախ զրադաշտականները զոհ էին դառնում նաև ամբոխի անկարգություններին և բարբարոսություններին, ինչի հետաքրքիր և վառ գեղարվեստական նկարագրություններից մեկը ներկայացված է հայ գրող Վրթ. Փափազյանի «Ագերֆեզա» վեպում⁹⁰:

Քսաներորդ դարը զգալի փոփոխություններ մտցրեց զրադաշտականների կյանքում: Սահմանադրական հեղափոխությունից (1906) և հատկապես Փահլավի արքայատոհմի իշխանության գալուց հետո (1925-1979 թթ.), երբ իրանական պետությունը, աշխարհականացմանը զուգընթաց, սկսեց նաև ավելի ազգայնակենտրոն քաղաքականություն վարել ու ընդլայնել կրոնական ազատությունները, զրադաշտականները, ովքեր պարսից հին կրոնի հետևորդներն էին, իրենց կողմում գտան պետության առնվազն բարոյական աջակցությունը և զարգացման ու առաջընթացի հնարավորություն ձեռք բերեցին⁹¹: 1979 թ. իսլամական հեղափոխությունը թեև որոշակի հետընթաց բերեց զրադաշտականների և մնացած կրոնական փոքրամասնությունների՝ քրիստոնյաների (հայեր ու ասորիներ) և հրեաների

պարսից զրադաշտականների դրությունը թեթևացնելու համար: Այդ օգնության մի վկայություն է Յազդ քաղաքի երկու դախմաներից (զերեզմաններից) նորը, որ կառուցվել է հայտնի փարսի գործիչ Մանեքջի Լիմջի Հաթարիայի կողմից և այժմ էլ գոյություն ունի:

⁸⁹ Stausberg, M., ‘Zoroastrians in Modern Iran’, in *The Wiley Blackwell companion to Zoroastrianism*, pp. 173-4.

⁹⁰ Փափազյան Վրթ., *Երկերի ժողովածու*, Գ հատոր, Երևան, 1959:

⁹¹ Stausberg, M., “Zoroastrians in modern Iran”, in *The Wiley Blackwell Companion to Zoroastrianism*, pp. 179-182.

ազատությունների հարցում, սակայն այնուամենայնիվ դրությունը շարունակում է բարվոք վիճակում մնալ:

Իրանի ներկայիս կրոնական փոքրամասնությունների համար ավելի զգալի խնդիրների պատճառ են դարձել տնտեսական սառը հարաբերությունները, որ գոյություն ունեն համաշխարհային հասարակության և Իրանի միջև, ինչը պատճառ է դառնում տնտեսական ոչ բարվոք վիճակի՝ նպաստելով արտագաղթին և համայնքների քայքայմանը: Քանակային առումով այսօր Իրանի Իսլամական Հանրապետությունում բնակվում է շուրջ 20 000 գրադաշտական⁹²:

Համաշխարհային ընդհանուր փոփոխությունները շարունակում են ազդել նաև մնացած գրադաշտական համայնքների վրա: Փոքրաքանակությունը միայն ավելի է նպաստում, որ նրանց թիվը առավել նվազի: Այսպես՝ Հնդկաստանի փարսիների համայնքի թիվը, նվազելով 1941 թ. վիճակագրության ժամանակ գրանցված 114 հազարից, 2011 թ. տվյալներով հասել է 57 264-ի⁹³:



Ջրադաշտականների հին գերեզմանարուներ՝ դախման Յազդ քաղաքի մերձակայքում (նկարը՝ հեղինակի կողմից)

⁹² Stausberg, M., և. ս., էջ 187:

⁹³ Karkari, B., *Why is India's wealthy Parsi community vanishing?*, 09/01/2016, <http://www.bbc.com/news/world-asia-india-35219331>.



Դահանայի ներսում: Դիակները դրվում էին այսպեղ, իսկ կենտրոնում գորնվող փոսի մեջ էին հավաքում մահացածների ոսկորները (նկարը՝ հեղինակի կողմից)

Խնդիր է առաջացել նրանց գոյությունը պահպանելու, ինչին փորձում են նպաստել տարբեր բարեգործական և կառավարական ծրագրերը, սակայն մեծ դժվարությամբ ու փոքր արդյունքներով⁹⁴: Դժվարությունները հատկապես առաջ են գալիս օտար կրոնների ու ազգությունների ներկայացուցիչների հետ ամուսնությունների դեպքում, ինչը նույնպես նպաստում է ձուլմանը:

Բացի ավանդական իրանական և հնդկական համայնքներից՝ ժամանակի ընթացքում (սկսած ԺԸ-ԺԹ դարերից) առաջ են եկել մի շարք այլ՝ նոր գաղթավայրեր, որոնցից ամենակարևորները գտնվում են ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Մեծ Բրիտանիայում⁹⁵:

⁹⁴ Dore, B., *Glimmer of hope for India's vanishing Parsis*, 21/07/2017, <http://www.bbc.com/news/world-asia-india-40628310>.

⁹⁵ Նախկինում այս ցուցակը ավելի մեծ է եղել՝ Չինաստան, Ճապոնիա, Արլ. Աֆրիկա, Եմեն (Ադեն) ևլն:

1.2. Ներածություն պահլավական գրականության

Ընդհանուր ակնարկ: Միջին պարսկերենով պահպանված գրակ.-ը: Գիրք: Պահլավական կրոնական գրակ.-ը: Աշխարհիկ գրակ.-ը: Փազանդ գրակ.-ը:

Պահլավական գրականություն ասելով պետք է հասկանալ միջին պարսկերեն լեզվով և պահլավական այբուբենով գրված գրականությունը, որի հիմքերը ձևավորվել են Սասանյան Իրանում (224-652 թթ.): Այս սահմանումը ավելի պարզ դարձնելու համար պետք է որոշ անդրադարձ կատարենք պարսից լեզվի պատմությանը:

Պարսկերենը, որ այսօր Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական լեզուն է, ունի հարուստ գրական պատմություն, և այդ պատմությունը բաժանվում է երեք շրջանների միջև: Դրանցից ամենահին շրջանի լեզուն բնականաբար կոչվում է «հին պարսկերեն»: Այս լեզվով, որ բավական մեծ քերականական տարբերություններ ունի այսօրվա պարսկերենի հետ, խոսել են Աքեմենյան արքայատոհմի ժամանակ (մ. թ. ա. 550-330 թթ.)⁹⁶: Այն մեզ է հասել պարսից արքաների՝ Դարեհի, Քսերքսեսի և այլոց թողած սեպագիր արձանագրությունների միջոցով, որոնք մեզ հանդիպում են պատմական Մարաստանում (այժմ ԻԻՀ հս.-արևմտյան մասը), Միջագետքում (Իրաք), Փարսում (ԻԻՀ Ֆարս նահանգը), ինչպես նաև Եգիպտոսում ու Հայաստանում (Քսերքսեսի Վանում թողած արձանագրությունը)⁹⁷: Այս լեզվի գրառման համար օգտագործվում էր մի քանի տասնյակ սեպագիր գրանիշներից ստեղծված գրություն, որ ուներ հիմնա-

⁹⁶ Ինչպես նաև դրանից առաջ ընկած ժամանակներում:

⁹⁷ Վերջերս հին պարսկերենով գրված մի փոքր արձանագրություն հայտնաբերվեց նաև Դրիմի թերակղզում, թեև ամենայն հավանականությամբ այն գրված է եղել փոքրասիական Միլեթ քաղաքում («В Фанагории найдена стела с надписью от имени персидского царя Дария», 04/08/2016, https://www.gazeta.ru/science/news/2016/08/04/n_8958113.shtml):

կանում հնչյունա-վանկային կառուցվածք⁹⁸, և որը մի քանի գաղափարագիր էր օգտագործում միայն: Այս արձանագրությունները մեծ մասամբ պարունակում են նյութեր արքաների պատերազմական հաղթանակների, մշակութային ձեռնարկումների, շինությունների կառուցման և պաշտոնական հայտարարությունների վերաբերյալ:

Քերականական առումով հին պարսկերենը պատկանում էր թեքական լեզուների շարքին և ուներ երեք սեռ, երեք թիվ, հոլովումների ու խոնարհումների հարուստ համակարգ, ինչպես սանսկրիտը և ավեստերենը: Սակայն ուշ շրջանի Աքեմենյան արձանագրություններում տեղ-տեղ երևացող քերականական սխալներից արդեն երևում է, որ լեզուն սկսում է մտնել փոփոխության նոր շրջան⁹⁹, որը մ. թ. ա. Գ-Ա դարերում հանգեցնում է միջին պարսկերենի վերջնական կայացմանը:

Միջին պարսկերենը (կամ պահլավերենը)¹⁰⁰ հին պարսկերենին հաջորդող լեզվական շրջանն է, թեև վերջինիս հետ մեծ տարբերություններ է ցույց տալիս: Այս լեզուն, որի առաջին ծավալում տեքստերը մենք գտնում ենք Աքեմենյանների տերության կործանումից կես հազարամյակ հետո, հանձինս Սասանյան արձանագրությունների, արդեն չունի այն բարդ քերականական կառուցվածքը, ինչ իր նախորդն ուներ: Այն գրկված է բառերի սեռերի տարբերություններից, չունի գոյականների հոլովումների հարուստ համակարգը և դրանց փոխարեն քերականական կառույցները ստեղծում է հիմնականում

⁹⁸ Սկզբունքը նման է սանսկրիտը գրելու համար օգտագործվող դեվանագարի այբուբենի կանոնին, որտեղ ամեն բաղաձայն, առանձին դրված, իր հետ ենթադրում է a (ը) ձայնավորը իր կողքին: Այստեղ, սակայն, բաղաձայնին մեկ այլ ձայնավոր (i, u) հաջորդելիս առանձին նշաններ են օգտագործվում: Երեք առանձին ձայնավորների համար կան ինքնուրույն նշաններ: Ընդհանուր նշանների քանակը հասնում է շուրջ չորս տասնյակի (տե՛ս Skjaervo P. O., *Introduction to Old Persian*, 2002, pp. 14-15 (2005, 2nd ed.):

⁹⁹ Schmitt, R., *Die iranischen Sprachen*, s. 34.

¹⁰⁰ Միջին պարսկերեն ասելով՝ հասկանում ենք ընդհանրապես միջին պարսկերեն լեզուն և դրանով գրված բոլոր տեսակի գրականությունները, իսկ պահլավերենով հասկանում ենք միայն գրադաշտական գրքերի միջին պարսկերենը:

առանձին մասնիկների միջոցով (az, abāg, bē, andar, ī ևլն)¹⁰¹: Այս առումով այն շատ ավելի մասն է նոր, քան հին պարսկերենին:

Միջին պարսկերենը, ըստ ամենայնի, եղել է Սասանյան արքայատոհմի խոսակցական լեզուն ու այդով հանդերձ՝ նաև պետության պաշտոնական լեզուն: Այս լեզվով էին խոսում Շապուհը, Հազկերտը և Պերոզը: Այս լեզվով էր զարգանում իրանցիների, հատկապես պետության արևմտյան կեսում ապրող իրանցիների մեծ մասի գրականությունը:

Խոսելով գրականության մասին, թեև դրան դեռ ավելի մանրամասն կանոնադաշտներ չենք տեսնում, կարելի է նշել, որ այսօր մեզ են հասել միայն չնչին մնացորդներն այն ամենի, ինչ-որ ժամանակին ստեղծված է եղել Սասանյան պետության մեջ: Մեզ հասած նյութը մեծ մասամբ կրոնական բնույթ ունի, և միայն մի քանի փոքրածավալ ստեղծագործություններ են, որ չունեն բացառապես կրոնական ուղղվածություն: Դա պետք է բացատրվի ոչ թե այն հանգամանքով, որ այս ժամանակվա մտավորականությունը զբաղեցնում էր իր միտքը միայն դավանաբանական քննարկումներով, այլ այն պատճառով նաև, որ հետագայում, երբ Սասանյան կայսրությունը անկում էր ապրել և արդեն գոյություն չունեի, գրականության միակ պահպանմանը հոգևորականներն էին, որոնց էլ բնականաբար հետաքրքրում էին միայն կրոնական բնույթի գրքերը, և ովքեր արտագրում ու պատճենում էին միայն դրանք: Անգամ կրոնական գրականության մեծ մասը կորստյան է մատնվել այս ընթացքում, ինչ խոսք աշխարհիկ գրականության մասին:

Նոր պարսկերենը (որ կոչվում է նաև dar՝ «պալատական»), որով գրված առաջին ստեղծագործություններից մեկն էր Ֆիրդուսու «Շահնամե»-ն, առաջ եկավ արաբական նվաճումներից և Իրանում իսլամի տարածումից հետո (մոտավորապես Թ-Ժ դարերում) ընկած ժամանակաշրջանում: Սկզբնական շրջանում այս նոր լեզվի տարբերությունը միջին պարսկերենից այն էր (եթե լեզվական թեթև փոփո-

¹⁰¹ Ինչպես, օրինակ, անգլերենը:

խությունները մի կողմ դնենք), որ գրության համար օգտագործվում էր արաբական այբուբենը: Քերականական տարբերությունները շատ չնչին էին վաղ նոր պարսկերենի (դասական պարսկերեն) և ուշ միջին պարսկերենի միջև. հիմնական տարբերությունը վերաբերում էր հնչյունաբանական կառուցվածքին և բառապաշարին մեջ (արաբական փոխառություններ) կատարված որոշակի փոփոխություններին: Չնայած դրան՝ քերականության առումով «Շահնամն»-ի լեզուն բավական հաճախ է նույնանում միջին պարսկերենի հետ:

Նոր պարսկերենը շարունակվում է խոսվել առ այսօր¹⁰², թեև ժամանակի ընթացքում բավական փոփոխություններ են կատարվել նրանում: Այժմ Իրանի պարսկերենը (ֆարսի) բաժանվում է գրական ու խոսակցական լեզուների, որոնցից առաջինը ավելի նման է դասականին, քան խոսակցականը, որ ներկայացնում է լեզվի զարգացման ամենանոր աստիճանը:

Միջին պարսկերենով պահպանված գրականությունը: Միջին պարսկերենով առկա գրականությունը, հիմնվելով կրոնական գործոնի վրա, հիմնականում կարելի է բաժանել երեք խմբի: Դրանք են գրադաշտականը, մանիքեականը և քրիստոնեականը:

Կրոնական գործոնը որպես բաժանման հիմք ընդունելը, ըստ իս, ամենահարմար տարբերակն է առկա գրավոր ժառանգությունը տարբերակելու և դասակարգելու համար: Դրա հիմնական պատճառն այն է, որ միջին պարսկերենի օգտագործման և դրանով գրականություն ստեղծելու ժամանակաշրջանում կրոնը ոչ միայն անձնական հավատալիքների արտահայտման ինչ-որ մի ձև էր, այլև բավական կարևոր դեր էր խաղում ամօրյա կյանքում, մշակույթի և գիտության բնագավառներում: Այնպես որ՝ որևէ կրոնին պատկանելը բնորոշում էր մարդու մշակութային բնութագիրը ևս: Սրանից ելնելով,

¹⁰² Այժմ այն ԻԻՀ պաշտոնական լեզուն է: Դասական նոր պարսկերենի սերունդներն են նաև Տաջիկստանի պաշտոնական լեզուն՝ տաջիկերենը, և Աֆղանստանի պաշտոնական լեզուներից դարին, որոնք միմյանցից թեթև կերպով են տարբերվում միայն:

օրինակ, մենք միջին պարսկերենի «գրադաշտական» խմբի մեջ տեղադրում ենք ոչ միայն զուտ կրոնական, այլև աշխարհիկ աշխատությունները, որոնցից են, օրինակ, Սասանյան արքայատոմի հիմնադիր Արտաշիր Ա-ի մասին պատմող «Արտաշիր Փափագանի գործերի գիրքը» կամ հին իրանական էպոսից մի դրվագ ներկայացնող «Ջարերի հիշատակարանը»:

Այս երեք խմբերի մեջ ամենից առատ նյութը պահպանվել է հենց «գրադաշտական» խմբում: Սակայն մինչև դրա քննարկմանն անցնելը, որը և կազմում է այս ներածության հիմնական նպատակը, համառոտ կերպով անդրադառնանք մնացած երկու խմբերին ու պատկերացում կազմենք դրանց մասին:

Մանիքեական միջին պարսկական գրականությունը մ. թ. Գ դարում Միջագետքում առաջացած նոր կրոնի՝ մանիքեականության հետևորդների ստեղծած գրականությունն է՝ գրված միջին պարսկերենով¹⁰³, որն եղել է (միջինասիական) մանիքեական համայնքների կրոնական կարևոր լեզուներից մեկը:

Այս խմբին պատկանող գրականությունը բացառապես կրոնական բովանդակություն ունի: Նրանց մեջ գտնվող ամենահայտնի ստեղծագործությունը, որ մեզ է հասել, «Շաբուհրագան» կոչվող գիրքն է, որի հեղինակն է համարվում այդ կրոնի հիմնադիր Մանին: Գրքի անունը կապված է Շապուհ Ա-ի անվան հետ, ում նվիրված է եղել գիրքը: Սրանից բացի՝ մանիքեական միջին պարսկերենով մեզ են հասել տարբեր տեսակի դավանաբանական աշխատություններ, ձոներ ու կրոնական երգեր: Միջին պարսկերենով, ինչպես նաև այլ միջին իրանական լեզուներով գրված այս նյութերը հայտնաբերվել են 1902 թվականից սկսած Չինաստանի այժմյան Մինցյան նահանգում գտնվող Թուրֆանյան օազիսում կատարված հետազոտություն-

¹⁰³ Պետք է նշել, որ ընդհանրապես մանիքեական գրականությունը ավելի լայն հասկացություն է. այն գրելու համար օգտագործվել են, միջին պարսկերենից բացի, նաև այլ լեզուներ, ինչպես ասորերենը, պարթևերենը, սողերենը, չինարենը, ույղուրերենը, հունարենը ևն:

ների ընթացքում¹⁰⁴, որտեղ դրանք, իրենց տերերի կողմից լքված մնալով, չէին ոչնչացել բնական նպաստավոր պայմաններում գտնվելու շնորհիվ միայն: Այս տեքստերից ամենից ուշ ստեղծվածները թվագրվում են 825 կամ 832 թվականներով¹⁰⁵ և հետագայում դադարում են ստեղծվել ամենայն հավանականությամբ այդ ժամանակներում տեղի ունեցող մանիքեական համայնքների քայքայման ու անկման պատճառով:

Քրիստոնեական միջին պարսկական գրականություն: Ի տարբերություն մյուս երկու խմբերի՝ քրիստոնեական գրականությունից գրեթե ոչինչ չի պահպանվել: Այն, որ նման գրականություն գոյություն է ունեցել, կասկածելու որևէ առիթ չունենք, քանի որ քրիստոնեական համայնքները (խոսքը հատկապես նեստորական հոսքի հետևորդների մասին է) Սասանյան Իրանում հետևորդների բավական լայն շրջանակ ունեին և հաճախ էլ բավական ժրաջան գործունեություն էին ծավալում հենց իրանցիների մեջ: Այս ամենի մասին հայտնի էր բավական վաղուց¹⁰⁶, սակայն գրական ապացույցներ ի

¹⁰⁴ Թուրֆանյան արշավախմբերի, դրանք ձեռնարկողների և հայտնաբերված նյութերի մասին ամփոփ կերպով տե՛ս W. Sundermann, “Turfan expeditions”, *Encyclopaedia Iranica*, 2004, <http://www.iranicaonline.org/articles/turfan-expeditions-2>:

¹⁰⁵ Mary Boyce, “The Manichaean Literature in Middle Iranian”, in *Handbuch der Orientalistik I.vi*, 2.1, 1968, pp. 32-66 (p. 73).

¹⁰⁶ Այս ամենի մասին բավական մեծածավալ վկայություններ ունեն հատկապես ատորական աղբյուրները, որոնց մասին տե՛ս Sachau, E., *Zur Ausbreitung des Christentums in Asien*, ss. 9-13: 410 թ. կայացած Սելևկիայի (Միջագետք, Տիգրոնի մերձակայք) եկեղեցական ժողովում ընդունված բաժանման համաձայն՝ Սասանյան կայսրության մեջ գտնվող քրիստոնեական համայնքը բաժանվում էր վեց մետրոպոլիտոսությունների միջև, որոնք էին՝ ա. Բեթ Արմայե (կամ Բաբելոնիա, կենտրոնը՝ Սելևկիա), բ. Բեթ Հուգայե (Խոտաստան, կենտրոնը՝ Բեթ Լափաթ), գ. Բեթ Արբայե (Վեռին Միջագետք, կենտրոնը՝ Մծբին), դ. Մայշան (Մեսենե, կենտրոնը՝ Փերատ-Մայշան (Բասրա)), ե. Հեղայյաթ (Ադիաբենե, կենտրոնը՝ Արբեյա), զ. Բեթ Գարմայ (Գարամեա, կենտրոնը՝ Քարխա դե-Բեթ Սելոխ (Քիլդոս)), տե՛ս Sachau, էջ 14: Իհարկե քրիստոնեական համայնքները չէին սահմանափակվում այս մետրոպոլիտոսություններով: Դրանց սահմանը հենց նույն ժողովի ժամանակ հասնում էր մինչև Մարվ՝ իր մեջ ընդգրկելով գրեթե ամբողջ Սասանյան տերությունը: Հետագայում սահմաններն ավելի ընդլայնվեցին, տե՛ս նույնը, էջեր 17-18:

հայտ եկան միայն վերոհիշյալ թուրքաճանյան ձեռագրերի հայտնագործումից հետո¹⁰⁷: Այս ձեռագրերի ժողովածուի հետ գտնվեց մի քանի թերթից բաղկացած մի ձեռագիր, որը, ինչպես պարզվեց, գրված էր պահլավական այբուբենի մի յուրօրինակ տեսակով և պարունակում էր սաղմոսների ասորական տարբերակի միջին պարսկերեն թարգմանության մի քանի պատառիկ: Այս թարգմանությունը Մասանյան պետության մեջ ապրած բազմաթիվ քրիստոնյաների գործունեությունից մնացած միակ գրական վկայությունն է և հայտնի է «պահլավերեն սաղմոս» անունով:

Չրադաշտական միջին պարսկերեն գրականություն: Այս գրականությունն ունի իրեն հատուկ անունը և սովորաբար կոչվում է «պահլավական»: Բառը իրականում ծագում է այս լեզվի հետ առանձնապես ոչ մի ուղղակի կապ չունեցող «պարթև»¹⁰⁸ բառից, որը, սակայն, ավելի ուշ՝ իսլամական շրջանում, շարունակաբար օգտագործվելով «հին, պատմական» իմաստով, սկսել է կապվել (ասոցացվել) մինչևիսլամական մշակույթի ու լեզվի հետ և դարձել գրադաշտական գրականության անվանումը: Այս գրականության լեզուն հաճախ նաև կոչվում է «պահլավերեն»¹⁰⁹, որը գրելու համար օգտագործվող այբուբենն ունի 14 տառ:

Դեռ Աքեմենյան հարստության ժամանակ, երբ արքունիքում կան պաշտոնական շրջանակներում նամակ կամ փաստաթուղթ գրելու անհրաժեշտություն էր լինում, դպիրներն ու գրագիրները այդ ամենը գրում էին ոչ թե հին պարսկերենով, որ արքայական արձա-

¹⁰⁷ Չհաշված Հնդկաստանում հայտնաբերված միջին պարսկերենով գրված քրիստոնեական արձանագրությունները, որոնց թվագրումը այդքան էլ հստակ չէ, թեև հավանաբար ստեղծվել են Ա հազարամյակի երկրորդ կեսի մեջտեղում:

¹⁰⁸ Պարթևները առանձին ցեղ էին, որոնց բարբառը տարբեր էր միջին պարսկերենից: Այս ցեղն էր, որ, հանձին Արշակունիների, ավելի քան չորս հարյուր տարի իշխեց Իրանում:

¹⁰⁹ Լեզվի բուն խոսողներն իրենց, ինչպես և իրենց լեզուն կոչում էին *pārsīg*, որ պահպանվել է հայերենում:

նագրությունների լեզուն էր, այլ մեկ ուրիշ լեզվով՝ արամեերենով¹¹⁰: Այս լեզուն պատկանում էր սեմական լեզվաընտանիքին և ցեղակից էր եբրայերենին, արաբերենին, ասորեստաներենին: Նրանով խոսող ցեղերը վաղ ժամանակներում Միջագետք էին գաղթել Արաբական թերակղզուց և Միջագետքի ու Պաղեստինի միջև ընկած տարածքներում կազմել էին մի շարք պետություններ: Նրանց գիրը ծագում էր փյունիկյան այբուբենից և ուներ 22 տառ, ինչի շնորհիվ այն ավելի հեշտ էր սովորելն ու օգտագործելը ամենօրյա կյանքում, քան ասորեստանյան ու բաբելոնյան բարդ սեպագրական համակարգերը: Հետագայում, հանգամանքների բերումով, այն Մերձավոր Արևելքում դարձավ միջնորդ կամ միջազգային լեզու, և Աքեմենյան հարստության արքաները, մ. թ. ա. Ջ դարի կեսերին հայտնվելով պարսկերեն չհասկացող լայնածավալ երկրների իշխանության գլխին, նույնպես ստիպված եղան այն դարձնել իրենց պաշտոնական գրագրության լեզուն: Այս կերպ արամեերենին գիտակ դպիրը կատարում էր և՛ պաշտոնական դարի, և՛ պաշտոնական թարգմանչի դերը՝ իրար կապելով հսկայական կայսրության տարալեզու ժողովուրդներին:

Սակայն ժամանակի ընթացքում արամեերենի բնիկ լեզվակիրների փոխարեն այս պաշտոնները սկսեցին զբաղեցնել իրանցիները, ովքեր հաճախ իրենց չիմացած արամեերեն բառերի փոխարեն կիրառում էին իրանական բառերն ու քերականական արտահայտությունները: Ժամանակի ընթացքում այս արամեերենը այնպիսի ձևափոխության ենթարկվեց, որ փաստացիորեն դադարեց արամեերեն լինելուց¹¹¹:

Սասանյան շրջանում, երբ արքաները սկսեցին կրկին արձանագրություններ թողնել ժայռերի վրա, այդ արձանագրություններում

¹¹⁰ Schmitt, R., *Die Iranischen Sprachen...*, s. 31: Բհարկե կային նաև այլ լեզուներ, ինչպես էլամերենը, որ, օրինակ, օգտագործվել է Պերսեպոլսում տնտեսական գրառումների համար, կամ բաբելոնեերենը, եգիպտերենը, հունարենը ևլն, բայց ամենից տարածվածը այնուամենայնիվ արամեերենն էր:

¹¹¹ Boyce M., “Parthian writings and literature”, in E. Yarshater (ed.), *Cambridge history of Iran*, vol. 3.2, pp. 1151-65.

մեզ հանդիպող լեզուն արդեն ոչ թե արամեերենն է, այլ միջին պարսկերենը՝ քողարկված արամեերենի շերտի տակ: Սա մի հետաքրքիր երևույթ է, որ հազվադեպ է հանդիպում գրային պատմության մեջ: Այստեղ գրելու համար օգտագործվում էր արամեական այբուբենի հիմքի վրա ձևավորված 19 գրանոց մի այբուբեն, որ հայտնի է «արձանագրությունների պահլավական այբուբեն» անունով: Բառերի մեծ մասը իրենց տեսքով նման են սեմական բառերին, սակայն հաճախ հանդիպում են նաև միջին պարսկերեն բառեր: Քերականական կառուցվածքն ու շարահյուսությունը միջին պարսկերեն են:

ԺԸ դարի վերջում, երբ եվրոպացի արևելագետները սկսեցին ուսումնասիրել Մասանյան արձանագրությունները, դրանց լեզվի էությունը հասկանալու հարցում կանգնեցին մեծ դժվարության առջև: Տեսքով ու բառերով այդ լեզուն նման էր արամեերենին, սակայն քերականությամբ և բառերի զգալի ծավալով իրանական էր: Նրանցից շատերը ենթադրեցին, թե դա արամեական բառապաշարի մեծաքանակ փոխառության արդյունք էր, կամ էլ թե արձանագրությունների լեզուն իրանական-սեմական մի խառը լեզու էր: Սակայն նոր պարսկերենը, որ միջին պարսկերենի ժառանգն էր, ամբողջովին գուրկ էր այդ բառերից, ինչը ցույց էր տալիս, որ որևէ փոխառության մասին խոսք չի կարող գնալ: Միաժամանակ ուշագրավ էր այն, որ ժամանակակից զրադաշտական հոգևորականները, կարդալով այդ արամեական բառերով լեցուն տեքստերը, արամեական բառերը տեսնելիս արտասանում էին դրանց պարսկերեն համարժեքները:

Փաստորեն ստացվում էր, որ լեզուն, գրվելով արամեական բառերով, կարդացվում էր պարսկերեն, այսինքն՝ արամեական բառերը կատարում էին գաղափարագրի դեր և որևէ նշանակություն չունեին լեզվի մեջ. նրանց դերակատարումը սահմանափակվում էր միայն գրի շրջանակում¹¹²:

¹¹² Արևելագետ Մարտին Հաուգը թերևս ամենից մոտն էր կանգնած այս հարցի լուծմանը՝ գրելով. «Հիմնականում սեմական բառապաշար և իրանական կառուցվածք ունեցող այս տարօրինակ խառը գրության բացատրությունն այն է, որ այն երբեք չի եղել որևէ ազգի խոսակցական լեզուն: Իրանցիները իրենց գիրը պետք է ժառանգած լինեին մի սեմական ժողովրդից, և թեպետ նրանք ծանոթ էին տառերի առանձին

Այսպես, օրինակ, երբ կարիք կար գրելու «հաց», գրվում էր ոչ թե բուն պարսկերեն բառը՝ *nān*, այլ արամեերենը՝ *LHMA*¹¹³, որ սակայն ընթերցողի կողմից կարդացվում էր *nān*¹¹⁴: Այսպիսի արամեական բառերը, որոնց թիվը հասնում էր հարյուրների, օգտագործվում էին ոչ միայն սովորական գոյականների, այլև հատկապես բայերի ու քերականական մասնիկների համար: Գրքերում գրված պահլավերենում արամեական բայերին ավելացվում էին նաև պարսկական դիմային վերջավորությունները:

Ահա այսպիսի դժվարընթեռնելի և դժվարըմբռնելի (գրքերում օգտագործվող պահլավական այբուբենի տառերի թիվը նվազեց մինչև 14-ի, ինչի պատճառով մեկ տառը կարող էր արտահայտել 4-5 և ավելի հնչյուններ) գրային համակարգ էր օգտագործվում միջին պարսկերենը գրելու համար¹¹⁵: Այժմ անդրադառնանք այդ լեզվով գրված գրավոր նյութին:

Թեև անձն- և ամսանուններ պարունակող արամեատառ կամ հունատառ կարճ գրությունները (դրամների և կնիքների վրա պահպանված անձնանուններ, պաշտոնական կոչումներ կլն) կարող են թվագրվել մ. թ. ա. Գ-Ա դարերով, միջին պարսկերենով գրված առաջին ծավալուն տեքստերը Սասանյան արքաների կամ պաշտոնյա-

հնչյուններին, նրանք գերադասում էին սեմական բառերը պահպանել ամբողջական, որպեսզի նույն գաղափարը ներկայացնեին իրենց իրանական լեզվում, և այսպես պահպանված ամեն սեմական բառ սուկ գաղափարագրի դեր էր կատարում և կարդացվում էր իրանական բառով, առանց ուշադրություն դարձվելու դրա բաղկացուցիչ տառերի հնչյուններին», Haug M., *Essays on the sacred language, writings and the religion of the Parsees*, 2nd ed., 1878, pp. 82-83: Այսպիսի կարծիքի է հանգում նաև փարսի պահլավագետ Փ. Դ. Բ. Սանջանան՝ P. D. B. Sunjana, *The Dinkard*, vol. i, 1878, pp. iv-v:

¹¹³ Տառադարձության ժամանակ արամեական բառերը գրվում են մեծատառով:

¹¹⁴ Այս օրինակը հանդիպում է դեռևս արաբալեզու գիտնական Իբն ան-Նադիմի «Ալ-Ֆիհրիսթ» գրքում, ով մեջ է բերում հայտնի Իբն ալ-Մուղաֆֆալի գրածը (տե՛ս Ibn al-Nadim, *Al-fihrist*, ss. 24-5):

¹¹⁵ “It is one of the most inadequate scripts ever existing...” (Shapira D., *Studies in Zoroastrian Exegesis: Zand*, Jerusalem, 1998, p. ii).

ների թողած արձանագրություններն են¹¹⁶, որոնք պատմում են վերջիններիս հաղթանակների կամ շինարարությունների մասին: Դրանք ամենից շատ հանդիպում են Ֆարս նահանգի տարածքում և հաճախ ուղեկցվում են արքայական ժայռաքանդակներով: Մրանց լեզուն պարզ է, թեև արձանագրությունների ձևը կամ վնասվածության աստիճանը կարող է դժվարեցնել դրանց ընթերցումը: Ի տարբերություն գրքային պահլավերեն այբուբենի (14 տառ), որ օգտագործված է զրադաշտական ձեռագրերում, սրանց գրության համար օգտագործված այբուբենը, ինչպես նշվեց, ունի 19 տառ, և դրա շնորհիվ արձանագրությունների պահլավերենի ընթերցումն ավելի հեշտ է:

Ամենից հայտնի ու խոշոր արձանագրությունները պատկանում են Սասանյան առաջին արքաներին՝ Արտաշիր Ա, Շապուհ Ա, Նարսեհ կլն: Հատկապես նշանավոր է Նաղշ-է Ռուսթան հնավայրում (Քաաբա-է Չարդոշ խորանարդածև շինության վրա) հանդիպող Շապուհ Ա-ի (մ. թ. 240-270 թթ.) թողած արձանագրությունը (SKZ), որ պատմում է նրա վարած պատերազմների մասին և նկարագրում է հռոմեական Վալերիանոս կայսեր (253-260 թթ.) նկատմամբ տարած հաղթանակը: Մեկ այլ նշանավոր արձանագրություն է Քարդիր մոզպեսի թողած արձանագրությունը, որտեղ նա նկարագրում է իր կրոնական բարենորոգումներն ու կառուցումները: Հայտնի է նաև Նարսեհ արքայի՝ Փայրուլի կոշվող վայրում (Չագրոսյան լեռներ, հյուսիսային Իրաք) թողած արձանագրությունը¹¹⁷, որտեղ նա նկարագրում է իր վերադարձը Հայաստանից դեպի մայրաքաղաք Տիզբոն, հաղթանակը հակառակորդների նկատմամբ ու գահ բարձրանալը:

¹¹⁶ Այս արձանագրություններն առաջին անգամ վերծանվել են ֆրանսիացի արևելագետ Ա. Ի. Սիլվեստր դե Սասիի (Antione Isaac Silvestre de Sasy) կողմից 1793 թ.: Այս հարցում նրան մեծ ծառայություն են մատուցել Անկետիլ Դյուպերրոնի հրատարակած պահլավական բառացանկերը (Darmesteter, J., *The Zend Avesta*, vol. i, p. xix):

¹¹⁷ Растрогыева, В. С., *Среднеперсидский язык*, 1966, стр. 8-9; Skjærø, P. O., “Herzfeld and the Paikuli Inscription”, *Enc. Iranica*, 2003: Կարևոր է նաև՝ M. Sprengling, *Third century Iran* (Chicago, 1953):

Սասանյան արձանագրություններից բացի՝ միջին պարսկերենով կատարված մեծաքանակ գրություններ հանդիպում են մետաղադրամների, կնիքների և տարատեսակ ամանեղենի վրա:

Գիրք: Ջրադաշտական խմբին պատկանող գրություններն ըստ գրության տեսակի կարելի է բաժանել երկու խմբի՝ *արշանագրային* և *գրքային*: Ինչպես խոսվեց, արձանագրություններում հանդիպող այբուբենը ավելի պարզ տեսք ուներ և այդպիսով ավելի շատ տառեր: Ձեռագրերում, սակայն, այդ այբուբենի տառերը արագագրության պատճառով աստիճանաբար ձևավոխության ենթարկվեցին, որոշ տառեր սկսեցին նմանվել իրար և արդյունքում տառերի թիվը նվազեց՝ հասնելով 14-ի: Ահա դրանք (գրքային պահլ. այբուբեն)

𐭠	a, ā, h, x	𐭡	m
𐭡	b	𐭢, 𐭣	s
𐭣	g, d, y, e, ē, i, ī	𐭤	p, f, b
𐭤	w, n, r, u, ū, o, ō	𐭥	c, j, z
𐭥	z	𐭦	š
𐭦	k, g	𐭧	t
𐭧, 𐭨	l, r		

Այս ցուցակին կարելի է ավելացնել նաև մի քանի անկարևոր նշաններ ևս, ինչպես **𐭩**, **𐭪**, որոնք երբեմն նշվում են այբուբենի կազմում, թեև առանձին ոչ մի կարևոր դեր չեն կատարում բառակազմության գործում:

Սակայն ձեռագիր պահլավերենի ընթերցանությունը դժվարացնում է ոչ միայն տառերի այսպիսի սակավությունը, այլև այն, որ այդ տառերը գրվելիս կցվում են իրար ու կազմում նոր միացություններ՝ երբեմն նույնիսկ այդպիսով նմանվելով մյուս տառերին: Այսպես, օրինակ, **𐭥**-ն, միանալով **𐭦**-ին, ստանում է այս տեսքը՝ **𐭥𐭦**, որ նույն կերպով կարելի է կարդալ և՛ šc, և՛ šp՝ չհաշված ամեն տառի առանձին տարրնթերցումները: Խնդիրը հաճախ անլուծելի է դառնում: Այսպես՝

𐬀 և 𐬁 տառերի միացությունը լինում է 𐬀, որ կարող է կարդացվել տասանյակ ձևերով՝ an, ān, aw, āw, hu, hō, ar, han, haw, xu, xaw, xan կլն: Ահա մի քանի օրինակ.

𐬀	𐬁	𐬀𐬁	𐬀𐬀	𐬀𐬁
𐬀𐬀	𐬀	𐬀𐬀	𐬀𐬀	𐬀𐬀
𐬀	𐬀	𐬀	𐬀	𐬀𐬀

Դրանից բացի՝ պահլավերենում առկա են հարյուրավոր արամեագրություններ (այլ անունը՝ հուզվարեշ), որոնք, ինչպես ասվեց, արամեերեն գրվող, բայց պարսկերեն կարդացվող բառերն են: Պատկերացնելու համար, թե ինչ են սրանք իրենցից ներկայացնում, կարելի է բերել անգլերենի օրինակը: Անգլերենում մենք երբեմն հանդիպում ենք այնպիսի գրությունների, որոնք մի ձևով գրված են, սակայն լրիվ ուրիշ ձևով են կարդացվում: Այսպես՝ լատինական ծագում ունեցող viz. և i. e. հապավումները, որոնք, չնայած այսպիսի գրությանը, կարդացվում են namely, that is: Նույնն է պահլավերենում, սակայն այստեղ այդպիսին է ամեն երկրորդ բառը:

Այս լեզվով գրության ամենավաղ ձեռագրային նմուշը «պահլավական սաղմունս» է, որ պետք է թվագրվի Ե-Է դարերով, ինչպես և Եգիպտոսում գտնված մի քանի թերթեր, որոնք հավանաբար պատկանում են Ը դարին: Դրանք առևտրական գործարքների հետ կապված փաստաթղթեր են և այբուբենով բավական նման են պահլավական գրքային այբուբենին¹¹⁸:

Դառնալով բուն պահլավական գրականությանը, որով մենք հասկանում ենք ձեռագրերում պահպանված գրադաշտական երկերը, պետք է նշենք, որ թեև դրանց ձեռագրերից ամենահները պատկանում են ԺԴ դարին, սակայն իրենց բովանդակության հնությանը նրանց կազմման ժամանակը հասնում է երբեմն մինչև սասանյան ժամանակաշրջան:

¹¹⁸ West, E. W., “Pahlavi literature”, in *Grundriss der Iranischen Philologie*, s. 79.

Գրեց 1910 թ. 12 ամի 25 օրը 1911 թ. 1 ամի 25 օրը
 1912 թ. 1 ամի 25 օրը 1913 թ. 1 ամի 25 օրը
 1914 թ. 1 ամի 25 օրը 1915 թ. 1 ամի 25 օրը
 1916 թ. 1 ամի 25 օրը 1917 թ. 1 ամի 25 օրը
 1918 թ. 1 ամի 25 օրը 1919 թ. 1 ամի 25 օրը
 1920 թ. 1 ամի 25 օրը 1921 թ. 1 ամի 25 օրը
 1922 թ. 1 ամի 25 օրը 1923 թ. 1 ամի 25 օրը
 1924 թ. 1 ամի 25 օրը 1925 թ. 1 ամի 25 օրը
 1926 թ. 1 ամի 25 օրը 1927 թ. 1 ամի 25 օրը
 1928 թ. 1 ամի 25 օրը 1929 թ. 1 ամի 25 օրը
 1930 թ. 1 ամի 25 օրը 1931 թ. 1 ամի 25 օրը
 1932 թ. 1 ամի 25 օրը 1933 թ. 1 ամի 25 օրը
 1934 թ. 1 ամի 25 օրը 1935 թ. 1 ամի 25 օրը
 1936 թ. 1 ամի 25 օրը 1937 թ. 1 ամի 25 օրը
 1938 թ. 1 ամի 25 օրը 1939 թ. 1 ամի 25 օրը
 1940 թ. 1 ամի 25 օրը 1941 թ. 1 ամի 25 օրը
 1942 թ. 1 ամի 25 օրը 1943 թ. 1 ամի 25 օրը
 1944 թ. 1 ամի 25 օրը 1945 թ. 1 ամի 25 օրը
 1946 թ. 1 ամի 25 օրը 1947 թ. 1 ամի 25 օրը
 1948 թ. 1 ամի 25 օրը 1949 թ. 1 ամի 25 օրը
 1950 թ. 1 ամի 25 օրը 1951 թ. 1 ամի 25 օրը
 1952 թ. 1 ամի 25 օրը 1953 թ. 1 ամի 25 օրը
 1954 թ. 1 ամի 25 օրը 1955 թ. 1 ամի 25 օրը
 1956 թ. 1 ամի 25 օրը 1957 թ. 1 ամի 25 օրը
 1958 թ. 1 ամի 25 օրը 1959 թ. 1 ամի 25 օրը
 1960 թ. 1 ամի 25 օրը 1961 թ. 1 ամի 25 օրը
 1962 թ. 1 ամի 25 օրը 1963 թ. 1 ամի 25 օրը
 1964 թ. 1 ամի 25 օրը 1965 թ. 1 ամի 25 օրը
 1966 թ. 1 ամի 25 օրը 1967 թ. 1 ամի 25 օրը
 1968 թ. 1 ամի 25 օրը 1969 թ. 1 ամի 25 օրը
 1970 թ. 1 ամի 25 օրը 1971 թ. 1 ամի 25 օրը
 1972 թ. 1 ամի 25 օրը 1973 թ. 1 ամի 25 օրը
 1974 թ. 1 ամի 25 օրը 1975 թ. 1 ամի 25 օրը
 1976 թ. 1 ամի 25 օրը 1977 թ. 1 ամի 25 օրը
 1978 թ. 1 ամի 25 օրը 1979 թ. 1 ամի 25 օրը
 1980 թ. 1 ամի 25 օրը 1981 թ. 1 ամի 25 օրը
 1982 թ. 1 ամի 25 օրը 1983 թ. 1 ամի 25 օրը
 1984 թ. 1 ամի 25 օրը 1985 թ. 1 ամի 25 օրը
 1986 թ. 1 ամի 25 օրը 1987 թ. 1 ամի 25 օրը
 1988 թ. 1 ամի 25 օրը 1989 թ. 1 ամի 25 օրը
 1990 թ. 1 ամի 25 օրը 1991 թ. 1 ամի 25 օրը
 1992 թ. 1 ամի 25 օրը 1993 թ. 1 ամի 25 օրը
 1994 թ. 1 ամի 25 օրը 1995 թ. 1 ամի 25 օրը
 1996 թ. 1 ամի 25 օրը 1997 թ. 1 ամի 25 օրը
 1998 թ. 1 ամի 25 օրը 1999 թ. 1 ամի 25 օրը
 2000 թ. 1 ամի 25 օրը 2001 թ. 1 ամի 25 օրը
 2002 թ. 1 ամի 25 օրը 2003 թ. 1 ամի 25 օրը
 2004 թ. 1 ամի 25 օրը 2005 թ. 1 ամի 25 օրը
 2006 թ. 1 ամի 25 օրը 2007 թ. 1 ամի 25 օրը
 2008 թ. 1 ամի 25 օրը 2009 թ. 1 ամի 25 օրը
 2010 թ. 1 ամի 25 օրը 2011 թ. 1 ամի 25 օրը
 2012 թ. 1 ամի 25 օրը 2013 թ. 1 ամի 25 օրը
 2014 թ. 1 ամի 25 օրը 2015 թ. 1 ամի 25 օրը
 2016 թ. 1 ամի 25 օրը 2017 թ. 1 ամի 25 օրը
 2018 թ. 1 ամի 25 օրը 2019 թ. 1 ամի 25 օրը
 2020 թ. 1 ամի 25 օրը 2021 թ. 1 ամի 25 օրը
 2022 թ. 1 ամի 25 օրը 2023 թ. 1 ամի 25 օրը
 2024 թ. 1 ամի 25 օրը 2025 թ. 1 ամի 25 օրը

Էջ պահլավական «Բունդահիշն»-ից (վերցված TD₂ չեռագրից
 (Ժ2 դարի վերջ-ԺԷ դարի սկիզբ), հրատարակված Բ. Թ. Անկլիսարիայի
 կողմից 1908 թ.)

Եթե այս գրականությունն ըստ բովանդակության բաժանենք աշխարհիկի ու կրոնականի, երկերի բացարձակ մեծամասնությունը կմտնի երկրորդ խմբի մեջ: Պահլավական կրոնական գրականությունը իր հիմնական բնույթով մեզ է ներկայանում որպես «Ավեստա»-ի մեկնություն, որի թարգմանությունները նույնպես առկա են այս լեզվով: Եթե հիմնվենք պահլավագետ Է. Ուեսթի բերած հաշվարկների վրա¹¹⁹, կտեսնենք, որ պահլավական կրոնական գրականության մեջ պարունակվող բառերի ընդհանուր քանակը կազմում է 446.000 (չհաշված «Ավեստա»-ի պահլավերենի թարգմանության՝ զանդի բառերի քանակը), մինչդեռ աշխարհիկ գրականության նմուշները պարունակում են ընդամենը 41.000 բառ, այսինքն՝ տաս անգամ ավելի քիչ, քան կրոնականի մեջ: Կրոնը միշտ կարևոր դերակատարում է ունեցել հին ազգերի ու ժողովուրդների կյանքում, հատկապես այն պատճառով, որ «կրոն» ասելով պետք է հասկանալ ոչ միայն հավատալիքային պատկերացումները, այլև այն բոլոր ուղիները, որով կրոնը ազդում էր մարդկանց առօրյա կյանքի վրա:

Հենց այդ պատճառով էլ կրոնական գրականության պահպանությանը միշտ ավելի ուշադրություն է դարձվել, քան աշխարհիկ գրականությանը: Այսպիսով՝ ինքնին հասկանալի է, որ արաբական կամ մոնղոլական լծի տակ ապրող հասարակ գրադաշտականը ավելի հակված էր պահպանելու իր աղոթքներն ու կրոնական օրենքները, քան ասենք արքաների ու փահլանների զվարճալի արկածների մասին պատմող զանազան ժամանցային գրքերը: Հատկապես կարևոր է նշել, որ ծանր ժամանակներում հասարակության գրագետ հատվածը հոգևորականությունն էր, որին բնականաբար հետաքրքրում էր իր մասնագիտական գրականությունը և այդ գրականության մեջ էլ հատկապես այն հատվածը, որն առավել կիրառական բնույթ ուներ (արարողություններն ու դրանց ժամանակ կարդացվող գրքերը): Այս պատճառով է, որ աշխարհիկ ու փիլիսոփայական բնույթի երկերը

¹¹⁹ Նույնը, էջ 90, 116, որ սակայն որոշակի չափով հնացած է:

աստիճանաբար մոռացության էին մատնվում և չարտագրվելու պատճառով հնանում ու անընթեռնելի դառնալով՝ ոչնչանում:

Այսպիսով՝ եթե անցնենք կրոնական ու աշխարհիկ գրականությունների քննությանը, իր ծավալի ու կարևորության առումով պետք է առաջինը սկսենք կրոնականից:

Պահլավական կրոնական գրականություն: Պահլավերենով գրված կրոնական գրականությունը իր հերթին պետք է բաժանել երկու խմբի՝ թարգմանական և մեկնաբանական գրականությունների: Նախևառաջ պետք է ևս մեկ անգամ շեշտել, որ պահլավական կրոնական գրականությունն իր համար որպես առանցք ունի «Ավեստա»-ն՝ գրադաշտական սուրբ գրությունը, և ամեն ինչ, որ առկա է այս գրականության մեջ, ուղղված է այս գրքի լուսաբանմանն ու բացատրությանը:

Ավեստան, կազմված լինելով հին իրանական մի բարբառով, որ պահպանվել էր միայն բանավոր ճանապարհով (անգիր անելու միջոցով), ժամանակի ընթացքում անհասկանալի էր դարձել գրադաշտականների մեծամասնության և անգամ քրմերի համար, ովքեր թեև կարող էին այն անգիր ասել, սակայն հաճախ չէին հասկանում որևէ տող այն ամենից, ինչ որ արտասանում էին: Այս ամենը վտանգավոր հետևանքներ կարող էր ունենալ գրադաշտականության համար, ինչի պատճառով մ. թ. առաջին հազարամյակի առաջին կեսին՝ հավանաբար Սասանյան արքայատոհմի իշխանության տարիներին՝ Դ կամ Զ դարերում, պետությունն ու վերջինիս կողմից լայն հովանավորություն վայելող հոգևորականությունը ձեռնարկեցին լայնածավալ միջոցառումներ, որի արդյունքում պետք է գրավոր տեսք ստանալին ավեստայական բանավոր տեքստերը և այնուհետև ենթարկվեին թարգմանության¹²⁰: Այս ձեռնարկման արդյունքում առաջ եկած կրո-

¹²⁰ J. Kellens, “Avesta i. Survey of the history and contents of the book,” *Encyclopaedia Iranica*, III/1, pp. 35-44: Ուսումնասիրողների բացարձակ մեծամասնությունը միաձայն է այն հարցում, որ «Ավեստա»-ի այսօրվա մեր ունեցած տարբերակն իր հնչյու-

նական գրականությունը հետագայում հայտնի դարձավ որպես «Ավեստա» և «Չանդ», որոնց ներքո հասկացվում էին համապատասխանաբար սուրբ տեքստերը և դրանց թարգմանությունները՝ ուղեկցված մեկնիչների հավելված մեկնություններով: Այդ նյութի վրա է ամբողջությամբ կանգնած մեզ հասած պահլավական կրոնական գրականությունը:

Ինչ վերաբերում է պահլավական թարգմանական գրականությանը, ապա այն պարունակում է մինչ մեր օրերը հասած ավեստայական գրականության թարգմանությունը, որն իհարկե ունի նաև հավելյալ մեկնություններ, որոնք պահլավական թարգմանությունների ոճով ընդգրկված են բուն տեքստի մեջ: Այս թարգմանությունները սակայն միշտ չէ, որ ճիշտ են, և հաճախ ցույց են տալիս թարգմանիչների գիտելիքների որոշակի բացթողումները, հատկապես հին ավեստերենի դեպքում: Այս խմբին պատկանող գրականության ծավալը կազմում է մոտավորապես 160.000 պահլավերեն բառ¹²¹:

Մեկնաբանական գրականությունը բավական կարևոր դեր ունի գրադաշտական կրոնը հասկանալու գործում: Դրա շնորհիվ է, որ մենք այսօր պատկերացում ենք կազմում գրադաշտական աշխարհայացքի, կրոնական սովորույթների և պատմության մասին: Վերջինիս բնագավառի մեջ մտնում են աշխարհի առաջացումը, ավարտը,

նական բարդ այբուբենով գրառվել է սասանյան ժամանակաշրջանում՝ հավանաբար Շապուհ Բ-ի գահակալության օրոք (մ. թ. 309-379 թթ.): Կարծիք կա նաև, որ «Ավեստա»-ի գրառման փորձերը կատարվել են ավելի վաղ շրջանում՝ Արշակունիների ժամանակ, թեև, ինչպես իրավացիորեն փաստում է Կ. Հոֆմանը, անգամ դրա իրականություն լինելու դեպքում, այդ տարբերակը չէր կարող ազդեցություն թողնել «Ավեստա»-ի մեր տարբերակի վրա (խնդրի մասին տես՝ K. Hoffmann, *Der Sasanidische Archetypus*, Wiesbaden, 1989, ss. 34-7):

¹²¹ Վստահաբար կարելի է ասել, որ սասանյանների ժամանակ կատարվել են նաև բազմաթիվ աշխարհիկ թարգմանություններ տարբեր լեզուներից, թեև դրանք չեն պահպանվել: Դրանցից թերևս ամենահայտնին սանսկրիտով գրված «Պանճատանտրա»-ն է (pañcatantra՝ «Հնգամատյան»), որ տարբեր առակների ժողովածու է և հետագա նոր պարսկական գրականության մեջ հայտնի է դարձել «Քալիլա և Դիննա» անունով (նյութի մասին ավելի մանրամասն տես՝ Riedel D., “Kalila wa Demna i, Redactions and circulation”, *Encycopaedia Iranica*, Vol. XV, Fasc. 4, pp. 386-395):

բարի ու չար ոգիների էությունը, բարի ու չար արարքները, կրոնական ճիշտ վարվելակերպը, իմաստուն մարդկանց խրատները, կրոնի հետ կապված պատմական իրադարձությունները և այլնը նկարագրող տեքստեր, որոնց մի մասն ունի գուտ նկարագրական բնույթ, մի մասը կազմված է հարցերի ու պատասխանների ոճով, մի մասն էլ բարոյախրատական տեսակի է: Այս տեքստերը բավական մեծ կարևորություն ունեն հատկապես այն պատճառով, որ միջնորդաբար մեզ են հասցնում «Ավետա»-ում պարունակված այն տեղեկությունները, որոնց բնագրերը չեն պահպանվել մինչև մեր օրերը: Դրանք նաև պարունակում են սասանյանների ժամանակաշրջանին վերաբերող արժեքավոր աշխարհագրական, քաղաքական ու գրական տեղեկություններ, քանի որ, ինչպես արդեն ասվեց, կրոնն ու կրոնական գրականությունն անմիջականորեն կապված էին մարդկանց առօրյա կյանքի հետ և հաճախ գիտությունն ու կրոնը չէին տարբերվում իրարից:

Ամենից ծավալուն կրոնական աշխատությունը, որ հասել է մինչև մեր օրերը, «*Դենքարդ*»-ն է, («*Գործք հավատոյ*»), որ բաղկացած է 9 գրքերից, թեև առաջին երկուսը չեն պահպանվել մինչև այսօր: Այս գրքերից յուրաքանչյուրը ներկայացնում է առանձին մի նյութ և առանձնապես բովանդակային ոչ մի շարունակական կապ չունի մնացածի հետ՝ բացառությամբ այն բանի, որ բոլորը կապված են գրադաշտական կրոնի հետ: Չեռագիր փոխանցման արդյունքում ժամանակի ընթացքում այս երկի լեզուն բավական սխալներ է իր մեջ ընդունել, ինչով բավական դժվարացել է դրա ընթերցանությունը: Չնայած այս հանգամանքին՝ այնուամենայնիվ այն գոյություն ունեցող գրադաշտական կարևորագույն գրքերից մեկն է: Ծավալով այն ընդհանուր առմամբ ընդգրկում է շուրջ 169.000 բառ:

«Դենքարդ»-ի առաջին երկու գրքերի բովանդակությունը հայտնի չէ: *Գ գիրքը* ունի խառը բովանդակություն: Սկզբնական մասը բաղկացած է կրոնին վերաբերող հարցերից ու պատասխաններից: Մնացած մասը բազմազան բնույթի բացատրություններ են, ինչպես,

օրինակ, հինգ չարագույն կրքերի նկարագրությունը, որ կարող են տիրանալ մարդկանց, գեղեցկության ու տգեղության պատճառները, բացատրություններ այն մասին, թե ի՞նչ են անեծքն ու օրհնանքը, աղանդավորությունն ու նախնիների կրոնը, կառավարիչների չորս տեսակները և այլն: *Դ գիրքը* պարունակում է յոթ ամաիրասպանդների՝ գերագույն բարի էակների (որոնցից առաջինն էր Ահուրա Մազդան) նկարագրությունը, ինչպես նաև ներկայացնում է տարբեր կրոնական գրքերի համառոտ բովանդակությունը, որտեղ խոսք է գնում աստղագիտության, աշխարհակառուցվածքի, փիլիսոփայության և այլնի մասին: *Ե գրքի* բովանդակությունը հիմնականում կազմում է Ջրադաշտի կյանքի համառոտ նկարագրությունը, կրոնի հետևորդներին սպասվող հետագա փորձությունները, կրոնի պատմությունը և այլն: *Զ գիրքը* տարբեր իմաստունների ու գիտուն մարդկանց (հատկապես նախնիների) վերագրվող խրատական արտահայտությունների մի ծավալուն ժողովածու է: *Է գիրքը* պատմում է այն հրաշքների մասին, որ կապված են զրադաշտական կրոնի հետ, և հիմնականում կենտրոնանում է Ջրադաշտի՝ կրոնի հիմնադրի կենսագրության վրա: *Ը գիրքը* «Ավեստա»-ն կազմող 21 գրքերի՝ նասքերի բովանդակության նկարագրությունն է: *Թ գիրքը* կենտրոնանում է «Ավեստա»-ի 3 գաթայական համարվող առանձին նասքերի բովանդակության նկարագրության վրա:

Գրքի կազմության ժամանակն է համարվում Թ դարը¹²², երբ, չնայած ոչ այդքան նպաստավոր պայմաններին, պահլավական գրականությունը կարողանում է զգալի ձեռքբերումներ գրանցել կրոնական գրականության բնագավառում: Թեև նյութի զգալի մասը ըստ ամենայնի քաղված է ավելի վաղ՝ սասանյան ժամանակներում կազմված գրականությունից, դրա՝ Թ դարում կազմումը և խմբագրությունը վերագրվում է երկու անհատների՝ Ադուրֆարնբազ Ֆարրոխ-

¹²² M. Boyce, "Middle Persian Literature", in *Handbuch der Orientalistik I.vi, 2.1*, 1968, pp. 32-66 (p. 44).

գաղանին և Ադուրբադ Էմեդանին, որոնք երկուսն էլ տարբեր ժամանակներում եղել են Փարս շրջանի հոգևոր առաջնորդները¹²³:

Հնդկաստանի գրադաշտականների՝ փարսիների մոտ պահպանված տեղեկությունների համաձայն՝ գիրքը Իրանից Հնդկաստան է բերվել ԺԸ դարի երկրորդ կեսին և ամբողջական է եղել, սակայն ընկնելով որոշ անփույթ մարդկանց մոտ՝ անհետ կորսվել են դրա առաջին երկու գրքերը:

«Դենքարդ»-ի թարգմանության և հրատարակության բազմաթիվ փորձեր են կատարվել ԺԹ դարի երկրորդ կեսից սկսած, արդյունքում սակայն մեծ մասամբ մասնակիորեն են կարողացել հրատարակել կամ թարգմանել տեքստը: Պահլավական բնագրի ամբողջական հրատարակությունը պատկանում է Դ. Մ. Մադանին, ով գիրքը հրատարակել է 1911 թ.՝ այն ամփոփելով երկու ծավալում հատորների մեջ¹²⁴: Ամբողջական միայն մեկ թարգմանություն է հաջողությամբ ավարտին հասցվել, որի տպագրությունը, սակայն, ընդհանուր առմամբ տևել է 54 տարի, և այն բաղկացած է 19 հատորից: Ամեն հատոր ներառում է գրքի պահլավերեն բնագիրը, գուջարաթի և անգլերեն թարգմանությունները: Աշխատանքը իրականացվել է հայր Փեշոբան ու որդի Դարաբ Սանջանաների կողմից և տևել է 1874 թ. առաջին հրատարակությունից մինչև 1928 թ. վերջին՝ ժբ հատորի հրատարակությունը (Բոմբեյ): Հետագայում ևս կատարվել են բազմաթիվ թարգմանություններ, սակայն սրանք հիմնականում կենտրոնանում են «Դենքարդ»-ի առանձին գրքերի կամ հատվածների վրա, ինչպես Ժան դե Մենասի (Գ գիրք, ֆրանս.), Ա. Թաֆֆազոլիի և Ժ. Ամուզգարի (Ե գիրք, ֆրանս. և պարսկ.), Մ. Թ. Ռաշեդ-Մոհասսելի (Է գիրք, պարսկերեն) թարգմանությունները:

Չրադաշտական կրոնի ուսումնասիրության համար անփոխարինելի աղբյուր է «*Բունդահիշն*»-ը, որը իր տեսակով եզակի երկ է: Պահլավերեն bundahišn բառը կարելի է թարգմանել որպես «աշխար-

¹²³ St' u Boyce, նույն տեղում:

¹²⁴ Dh. M. Madan, *The Complete Text of the Pahlavi Dinkard*, vol. I & II, Bombay, 1911.

հարարչություն», որը գրքի միակ անվանումը չէ սակայն: Գրքի առաջին տողի առաջին բառով առաջնորդվելով՝ անցյալում այն երբեմն նաև կոչել են Zand-ägāhīh, որ նշանակում է «զանդագիտություն» կամ ավելի մասնակիորեն ««Ավեստա»-ի մեկնությունների գիտություն», բայց այժմ գերադասվում է գրքի ավանդաբար ընդունված անունը, որը նաև համապատասխանում է գրքի բովանդակությանը:

Այս գրքում ընդհանուր առմամբ փորձ է կատարվում համառոտ ու կազմակերպված շարադրել զրադաշտական կրոնի պաշտոնական տեսակետը աշխարհի առաջացման, դրա կազմության, պատմության և ավարտի վերաբերյալ: Այստեղ սկզբնական գլուխներում նկարագրվում է, թե ինչպես են առաջին անգամ հանդիպել չարի ու բարու մարմնացումներ հանդիսացող Արիմանն ու Օիրմագրը, ինչպես է սկսվել նրանց պայքարը, և ինչպես է դրա արդյունքում առաջ եկել այս նյութական աշխարհը: Այնուհետև գրքի հեղինակը (կամ հեղինակները) անցնում է աշխարհի մասին իր ունեցած ամենաբազմազան տեղեկությունները ներկայացնելու գործին: Այստեղի գլուխներն ունեն գլխավորապես աշխարհագրական, բժշկական, կենդանաբանական, կենսաբանական, աստղագիտական և այլ ուղղվածություններ: Ահա մի քանի օրինակ դրանց վերնագրերից՝ «Երկրների մասին», «Լեռների մասին», «Հինգ տեսակի կենդանիների մասին», «Տղամարդկանց մասին», «Կանանց մասին», «Բույսերի մասին», «Քամու, ամպերի և անձրևի մասին» կն: Գիրքն ավարտվում է դժոխքի ու դրախտի, Իրանի վրա եկած դժբախտությունների և վերջին դատաստանի մասին պատմող գլուխներով: Այս գլուխները, որոնք, բացի վերոնշյալից, անդրադառնում են բազմաթիվ այլ թեմաների ևս, իրենց քանակով հասնում են շուրջ երեք տասնյակի: Ըստ բաժանումների՝ այս գլուխների ճշգրիտ քանակը կարող է տարբերվել տարբեր հրատարակողների մոտ: Այսպես՝ Ֆ. Փաբզաղի հրատարակած ամենանոր քննական տառադարձված բնագիրը (2005 թ.) պարունակում է 36 գլուխ:

Սակայն «Բունդահիշն» գրքի տեքստը մեզ է հասել երկու իրարից բավական տարբեր խմբագրություններով՝ տարբերակներով: Դրանցից մեկը կոչվում է «իրանական», մյուսը՝ «հնդկական» «Բունդահիշն»: Առաջինը, որ պահպանվել է Իրանի գրադաշտական համայնքում և միայն ԺԹ դարի երկրորդ կեսին է հասել Հնդկաստան (որտեղ էր հիմնականում կենտրոնացած գրադաշտական մտավորականությունը), ավելի ընդարձակ է և ըստ այդմ էլ՝ ավելի կարևոր: Այժմ գիտական հրատարակություններն ու թարգմանությունները գլխավորապես հիմնվում են այս տարբերակի վրա: Ի տարբերություն դրա՝ «հնդկական» «Բունդահիշն»-ը, որ գտնվել է Հնդկաստանի փարսիների մոտ, ավելի համառոտ է և թեև որոշ առումներով օգտակար կարող է լինել (օրինակ՝ տարընթերցումների ժամանակ), այնուամենայնիվ ավելի փոքր դեր է խաղում, քան իրանական տարբերակը: Կարևոր է նշել, որ «հնդկական» տարբերակը «իրանականի» համառոտագրությունը չէ, այլ մի ավելի հին տարբերակի, որ կանգնած է երկու խմբագրությունների հիմքում: Այս հանգամանքի մեջ է «հնդկական» «Բունդահիշն»-ի հիմնական արժեքը: Դրա շնորհիվ գրքի որոշ հատվածներում հնարավոր է ճշգրտումներ ու լրացումներ կատարել:

Բունդահիշնի «գիտական» գլուխների բովանդակությունն ըստ ամենայնի արտացոլում է գիտության այն մակարդակը, որ գոյություն ուներ Իրանում Սասանյանների ժամանակ: Այնուամենայնիվ չի զգացվում ժամանակակից (հատկապես հունահռոմեական) գիտության մվաճումների ազդեցությունը, հատկապես աշխարհագրության ոլորտում, և դրա հիմնական պատճառը, ըստ ամենայնի, ավանդական պատկերացումների խոչընդոտող դերն էր: Եթե ընդհանուր հայացք ձգենք և հաշվի առնենք տեսակետների երբեմն հանդիպող տրամաբանական հակասությունները, կտեսնենք, որ Սասանյանների ժամանակ կրոնական շրջանակներում բավական լայնածավալ քննարկումներ պետք է գնացած լինեն գիտական հարցերի շուրջ, քանի որ ավանդական կրոնական հնացած տեսակետները

բախվել էին արդի իրականության հետ և հակասության մեջ մտել: Ջրադաշտական հոգևորականները հիմնականում փորձում էին այս հակասությունները հարթել՝ հին անունները նոր վայրերի վրա դնելով, բայց արդյունքը միշտ չէր հաջողվում, և թյուրիմացություններն անպակաս էին մնում:

«Բունդահիշն»-ի կազմության ճշգրիտ ժամանակն անհայտ է: Թեև գրքում հիշատակվում են արաբական նվաճումները և հավանաբար դրանից մի քանի դար հետո կատարվող որոշ պատմական իրադարձություններ ևս, դրանք չեն կարող մեզ օգնել գրքի կազմության ժամանակը որոշելու գործում: Գիրքը կարող էր կազմված լինել սասանյան ժամանակաշրջանում և հետագայում լրացված լիներ այլոց կողմից: Նույն հավանականությամբ այն կարող էր կազմված լինել Ը-Թ դարերում: Երբ էլ լինի գրքի կազմության ժամանակը, պետք է նշել սակայն, որ գրքի ԼԳ գլխում հիշատակվող թուրքերի հարձակումը ցույց է տալիս, որ գրքի վերջնական խմբագրության ժամանակը պետք է ոչ վաղ, քան ԺԱ-ԺԲ դարերը եղած լինի:

Նման պայմաններում նույնպես դժվար է հեղինակի ինքնության որոշումը: Գրքի հատվածներից մեկում (գիրք ԼԵ^{III}, մաս 8) գրքի հեղինակը (կամ խմբագիրներից մեկը) տալիս է իր անունը՝ Ֆարրոբայ Գադագիհ, սակայն անունից բացի՝ շատ բան նրանից մեզ հայտնի չէ: Նույն հատվածում հիշատակվում է Ջադասպրամ Գուշն-ջամը (կամ Ջուվան-ջամը), ով ապրել է Թ դարում: Արդյոք ինչքանով է այս տեղեկությունը որոշիչ «Բունդահիշն»-ի կազմության ժամանակի որոշման համար, դժվար է ասել: Իրականում պահլավական այս աշխատությունները հիմնականում գուրկ են անհատականությունից և բովանդակում են այնպիսի տեղեկություններ, որոնք քաղված են ավելի վաղ ժամանակներում գրված գրքերից կամ բուն «Ավեստա»-ից:

«Բունդահիշն»-ի առաջին թարգմանության փորձը պատկանում է «Ավեստա»-ի առաջին եվրոպացի ուսումնասիրող Ա. Անկետիլ Դյու-Պերրոնին, ով իր եռահատոր աշխատության մեջ (Le Zend-

Avesta, 1771) գետեղել է դրա թարգմանությունը: ԺԹ դարի ընթացքում՝ հասկապես երկրորդ կեսին, «Բունդահիշն»-ը, որպես կարևոր աղբյուր զրադաշտականության ուսումնասիրության համար, շարունակ գտնվել է եվրոպացի ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: «Բունդահիշն»-ի տեքստի հրատարակությունը ձեռնարկել են՝ N. L. Westergaard (Bundehesh, 1851), F. Justi (Der Bundehesh, Leipzig, 1868), E. T. D. Anklesaria (Bombay, 1908) և դասօրուր K. M. Jamasp Asa, պրոֆ. Y. Mahyar Navvabi, դոկ. M. Tavousi (որպես TD2 ձեռագրի մաս, Shiraz, 1978): Ամենամոր ու կատարյալ քննական հրատարակությունը, որ հիմնված է «Բունդահիշն»-ի առկա վեց ձեռագրերի վրա, հրատարակվել է Ֆ. Փաքզադի կողմից Թեհրանում (Bundahišn, Band I, 2005): Թարգմանություններ կատարվել են ինչպես մասնակիորեն, այնպես էլ ամբողջական: Ամբողջական է, թեև հիմնված հնդկական տարբերակի վրա, է. Վ. Ուեսթի անգլերեն թարգմանությունը, որ ընդգրկված է Sacred Books of the East 50 հատորանոց շարքի Ե հատորում (1880): Նոր և ավելի ճշգրիտ թարգմանություն է Ս. Բահարի պարսկերեն թարգմանությունը (1991 թ./1369 թ.):

Իր կարևորությամբ նշանավոր է մաս Wizīdagihā ī Zādšparam կոչվող գիրքը, որի վերնագիրը թարգմանաբար նշանակում է «*Չադսպարամի հայրընդհրներ*»: Նրա հեղինակը Չադսպարամ Գուշնջամ (կամ Ջուվանջամ) կոչվող հոգևորականն է, ով ապրել է Թ դարում¹²⁵: Այս գրքի 35 գլուխներն ունեն ոչ միասեռ բովանդակություն, և այդ տեսանկյունից դրանք կարելի է բաժանել չորս մասերի: Առաջին մասը ընդգրկում է 1-3 գլուխները, որտեղ համառոտ ու համակարգված ձևով ներկայացվում է աշխարհի արարումը: Թեև այստեղ շարադրանքը ավելի պարզ է, և նյութերի դասավորությունը՝ ավելի կոկիկ, քան «Բունդահիշն»-ում, սակայն երկուսը մույն աղբյուրները պետք է ունեցած լինեն, քանի որ հաճախ պարունակում են մույն արտահայտություններն ու նախադասությունները: Այդ ընդհանուր աղբյուրը

¹²⁵ Ph. Gignoux, “Zādšparam”, *Encyclopaedia Iranica*, 2005.

ենթադրաբար պետք է «Ավեստա»-ի «Դամդադ» («Արարչություն») նասքը եղած լինի, որտեղ խոսվել է աշխարհի արարչության մասին¹²⁶: Չորրորդ գլուխը միջանկյալ է և պատմում է մագդայական՝ գրադաշտական կրոնի առաջացման և Իրանի ու Թուրանի միջև պատերազմների վերսկսման պատմությունը: Երկրորդ մասն ընդգրկում է 5-26 գլուխները, որտեղ պատմվում է Զրադաշտի կյանքի մասին՝ մինչև Վիշտասպ արքայի կողմից գրադաշտականության ընդունումը: Երրորդ մասն ընդգրկում է 27-33 գլուխները, որոնք կրոնի և գիտության հետ կապված տարբեր թեմաներ են ներկայացնում: Այդ գլուխների մեջ կարևոր են 29-30-ը, որոնք պատմում են մարդու մարմնի կառուցվածքի և մարդկային հոգու տեսակների մասին: 33-րդ գլուխը կարծես պետք է ավարտեր գիրքը, քանի որ վերջաբան ունի, սակայն ըստ ամենայնի հետազայում գրքին են ավելացվել նույն Զադսպարամի հեղինակած ևս երկու գլուխ՝ 34 և 35-րդը, որոնք պատմում են աշխարհի ավարտի ու բարու հաղթանակի մասին: Այս վերջին երկու գլուխներն էլ կազմում են չորրորդ մասը: Ընդհանուր առմամբ գիրքը, այնքանով, ինչքանով դա վերաբերում է վերոնշյալ թեմաներին, բավական օգտակար աղբյուր է գրադաշտականությունն ուսումնասիրելու համար:

Գրքի թարգմանությունների մեծ մասը մասնակի թարգմանություններ են եղել: Ամբողջական հրատարակություն է (որ ընդգրկում է և՛ թարգմանությունը, և՛ քննական բնագիրը) Ph. Gignoux և A. Tafazzoli պատրաստած 1993 թ. հրատարակությունը (*Anthologie de Zādspram, Paris*)՝ ֆրանսերեն թարգմանությամբ, իսկ պարսկերեն ամբողջական թարգմանության և քննական բնագրի հրատարակությունը պատրաստել է Մ. Թ. Ռաշեդ-Մոհասսեյը (Թեհրան, 2011, երրորդ հրատարակություն¹²⁷):

¹²⁶ Pakzad F., *Bundahišn*, Einleitung, ss. iii-iv.

¹²⁷ Առաջին հրատարակությունը կատարվել է 1988 թ., սակայն ընդգրկել է միայն պարսկերեն թարգմանությունը: Երրորդ հրատարակության մեջ ավելացված են ինչպես պահլավերեն բնագիրը, այնպես էլ դրա տառադարձությունն ու բառարանը:

Չրադաշտական հոգևորականությունը, սակայն, իր հոգևոր «հոտը» հնազանդ ու բարեպաշտ պահելու համար չի սահմանափակվել միայն աստվածաբանական երկերով, որոնց բուն սպառողն էլ սովորաբար հենց նույն հոգևորականությունն էր, այլ փորձել է նաև ավելի ազդու միջոցներ ստեղծել:

Նման մի փորձ և այն էլ բավական հաջող մի փորձ է «*Արդա Վիրազ նամակը*»: Սա ուշ շրջանի մի պահլավական գիրք է, որ կազմվել է հավանաբար Թ-ից մինչև ԺԳ դարերն ընկած ժամանակահատվածում¹²⁸: Գիրքը պատմում է ոմն առաքինի Արդա Վիրազի մասին, ով թմրեցնող բույսի՝ մանգի միջոցով կարողանում է յոթնօրյա ճամփորդություն կատարել դեպի հանդերձյալ աշխարհ և տեսնել դրախտը (wahišt, garōdmān), քավարանը (hamēstagān) և դժոխքը (dušox)¹²⁹: Հատկապես երկար է վերջինիս նկարագրությունը, որտեղ ամենայն մանրամասնությամբ նկարագրվում են մեղավոր հոգիների տառապանքները և տանջանքները: Թվարկվում են այն մեղքերը, որոնք գործել են հանցավորները և ըստ որոնց՝ կրում են իրենց պատիժը:

Ահա երկու կարճ հատված այդ գրքից (գրուխ ԼԳ). «Եվ ես մի մարդու հոգի տեսա, որի լեզուն որդն էր շարունակ ուտում: Եվ ես հարցրեցի, թե՛ «այս մարմինը ի՞նչ մեղք է գործել»: Ասում են Սրոշ Առաքինին և Ադուր (Կրակ) յազատը, թե սա այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա շատ սուտ ու կեղծիք խոսեց: Եվ արարածնե-

¹²⁸ Աբրահամյան Ռ., *Արդա Վիրազ նամակ*, էջ 35:

¹²⁹ Բավական հետաքրքիր է, որ գրադաշտականության մեջ այս «սյուժե»-ի առկայությունը նկատվել է դեռևս Գ դարի հայտնի հույն հեղինակ (կատակերգու) Լուկիանոսի կողմից իր «Մենիպոս» վերնագրված ստեղծագործության տողերում. «...Եվ այսպես մի անգամ, երբ պառկած մտածում էի այս խնդիրների մասին, որոշեցի Բարեդոն ողևորվել և դիմել մոգերից՝ Չրադաշտի աշակերաններից և ժառանգներից մեկին, քանզի լսել էի, որ որոշ հմայություններով ու արարողություններով նրանք կարող են բացել Հադեսի դարպասները, ապահովաբար այնտեղ տանել նրան, ում որ կցանկանան՝ վերջում կրկին հետ քերելով նրան» (կրկնաբարգմանություն անգլերենից. Lucian, with an English translation by A. M. Harmon (The Loeb classical library, vol. 162), vol. iv, 1961 (1st ed. 1925), p. 83):

րին մեծ վնաս ու փորձանք հասավ նրանից»¹³⁰: Մեկ այլ հատված (գլուխ ԽԸ). «Եվ մի մարդու հոգի տեսա, որին շան կերպարանք առած դևերը պատառուտում են: Այն մարդը հասց է տալիս շներին, բայց [նրանք] չեն ուտում և [փոխարենը] այդ մարդու կտրծքը, ոտքերը, որովայնը և ազդրերն են ուտում: Եվ ես հարցրեցի, թե այս մարմինն ի՞նչ մեղք է գործել, որ հոգին այսպիսի ծանր պատիժ է կրում: Ասում են Սրոշ Առաքինին և Ադուր յագատը, թե սա այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա հովիվների ու տանտերերի շներին կեր չտվեց կամ հարվածեց ու սպանեց»:

Չնայած իր անհրապույր բովանդակությանը, որքան էլ որ անսպասելի լինի, այս գիրքը ամենամեծ տպավորությունն է թողել հասարակ ժողովրդի վրա, որին ըստ ամենայնի ցնցել և սարսափ են ներշնչել տանջանքների հաճախ բավական դաժան նկարագրությունները: Գիրքը բավական վաղ ժամանակում է ենթարկվել նոր պարսկերեն թարգմանությունների, ինչպես նաև եվրոպական լեզվով թարգմանված առաջին պահլավական երկերից է¹³¹: Նրա բովանդակությունը այնքան էր հարազատ դարձել ուշ շրջանի գրադաշտական ընթերցող կամ ընթերցվածին ունկնդրող հասարակությանը, որ հայտնվել էին ձեռագրի նկարագարող տարբերակները՝ գրվածը ավելի պատկերավոր դարձնելու համար: Նշվում է, որ գիրքը հիմնականում ուժեղ տպավորություն էր գործում մեծահասակ կանանց վրա, ովքեր, այսպես ասած, ահ ու սարսափով էին կարդում գիրքը և երբեմն «ողբում» էին ընթերցածի ազդեցության տակ¹³²:

¹³⁰ Բնագիրը տե՛ս Haug, M., West E. W., *The Book of Arda-viraf*, Bombay-London, 1872 (վերատպված՝ Ph. Gignoux, *Le Livre d'Ardā Vīrāz*, traduction en persan par Jaleh Amouzegar, Téhéran, 1382):

¹³¹ Այդ թարգմանությունը կատարել է J. A. Pope-ը նոր պարսկերեն թարգմանությունից (*The Ardaī Viraf Nameh or the Revelations of Ardaī Viraf*, London, 1816), սակայն այն բավական թերի է և ոչ լուրջ՝ հաշվի առնելով դրա երկրորդական թարգմանություն լինելը:

¹³² Haug M., *The book of Arda Viraf*, p. lv; Boyce M., *A Persian Stronghold of Zoroastrianism*, p. 21.

Գիրքը, իր բովանդակության առումով, սովորաբար համեմատվում է Դանթե Ալիգիերիի «Աստվածային կատակերգության» հետ, թեև բոլոր ուսումնասիրողները գիտակցում են, որ երկու գրքերը ոչ մի ուղղակի կապ իրար հետ չեն կարող ունեցած լինել¹³³: Այն հայերեն թարգմանված պահլավական սակավ երկերի թվին է պատկանում, և այդ թարգմանությունը, «Յուշտի Ֆրիան» կոչվող մեկ այլ պահլավական երկի թարգմանության հետ, կատարվել է նշանավոր հայ պահլավագետ Ռուբեն Աբրահամյանի կողմից (Երևան, 1958)¹³⁴:

Պահլավական այլ նշանավոր կրոնական բովանդակության երկեր են «Mēnōg/y ī Xrad»-ը («Իմաստության ոգին»), որ հարց ու պատասխան է մի ուսումնասեր գրադաշտականի և Իմաստության Ոգու միջև, «Šāyest nē šāyest»-ը («Թույլատրելի և անթույլատրելի»), «Škand gumanīg wizīr»-ը («Կասկածներ ցրող վճիռ»), «Dādestān ī dēnīg»-ը («Կրոնական դատաստանագիրք») և այլն, որոնք ընդհանուր առմամբ ուղղված են գրադաշտական կրոնի դավանաբանական տարբեր խնդիրների ու պատվիրանների լուսաբանմանը:

Այսպիսի կրոնական գրականությունից բացի՝ գոյություն ունեին նաև այլ կրոնական երկերի տեսակներ: Դրանց որոշ մասը անդրադարձ էր կատարում ոչ միայն կրոնական պատվիրաններին, այլև ապագային, որ սպասվում էր գրադաշտականներին և ընդհանրապես աշխարհին: Այս տեսակի գրականությունը կարելի է կոչել «մարգարեական գրականություն»: Վերջինս բավական տարածված

¹³³ Նման բովանդակությունը իրականում այդքան էլ բացառիկ չէ: Այսպիսի առասպելներ ու բովանդակություններ հաճախ են հանդիպում նաև այլ մշակույթներում: Օրինակ՝ հունական առասպելները ողողված են նման պատմություններով՝ չհաշված հետագա գրողների գրական մշակումները, որոնցից է, օրինակ, վերոհիշյալ Լուկիանոսը, ով հաճախ է օգտվել այս «սյուժե»-ից կատակերգական նպատակներով, իհարկե: Այլ նմուշներ կան, օրինակ, չինական և հնդկական գրականությունների մեջ:

¹³⁴ Վերջերս (2017թ.) Ռահամ Աշա պահլավագետի կողմից հրատարակվեց նորահայտ մի ձեռագրում պահպանված մի պահլավական երկ «Վիրագական» անունով, որ բովանդակությամբ նման մի պատմություն է, նույն հերոսով: Թվում է, սակայն, որ սա մեզ հայտնի «Արդա Վիրագ»-ի վերաշարադրանքը չէ և առանձին մի տարբերակ է:

Ժանր է եղել Մերձավոր Արևելքում և հունա-հռոմեական աշխարհում: Դրա նմուշներից մենք ունենք երբայական («Հին Կտակարան»-ի մարգարեությունները), բաբելոնյան, հունական և այլ գրականությունների մեջ: Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ զրադաշտականությունը իր կրոնական որոշ առանձնահատկությունների շնորհիվ կարող է հավակնություն ունենալ այս ժանրի ստեղծողը լինելու: Եվ դա հատկապես այն պատճառով, որ զրադաշտականության բուն գաղափարախոսության մեջ է «փրկչի» («Ավեստա»-ում՝ *saošyant-*, պահլավերենում՝ *sōšyans/sōšāns*) գաղափարը, ով գալու է աշխարհի վերջում, ինչով ավետելու է բարու հաղթանակը չարի նկատմամբ և մահացածներին հարություն է տալու: Այսպիսի տեսլականը պետք է բնականաբար առաջ բերեր մարգարեությունների շարքեր, որոնք կպատմեին հավատացյալներին, թե ինչպե՞ս և ե՞րբ է տեղի ունենալու նրա գալուստը, ինչպես դա հաճախ է տեղի ունեցել քրիստոնեական գրականության մեջ:

Այս ժանրի ամենից բնութագրական նմուշն է *Zand ī Wahman yasn* կամ «*Վահման յասնի մեկնություն*» կոչվող պահլավերեն աշխատությունը: Այն ներկայացնում է Ջրադաշտի և Օհրմագրի միջև կայացած զրույցը, որտեղ Օհրմագրը տեղեկացնում է Ջրադաշտին այն բոլոր իրադարձությունների մասին, որ տեղի են ունենալու իրենից հետո: Բուն գիրքը պարունակում է ինը գլուխ: Դրանցից առաջին երկուսը այդքան էլ կապված չեն մնացածի հետ և հավանաբար ներկայացնում են գրքի նախնական խմբագրությունից պահպանված հատվածներ, որոնք պատահմամբ տեղ են գտել գրքի մեջ¹³⁵:

Երկխոսության ժամանակ Օհրմագրը Ջրադաշտին է պատմում այն նշանավոր արքաների թագավորությունների մասին, որ կգան Ջրադաշտից հետո: Այնուհետև նկարագրվում է դժբախտության ժա-

¹³⁵ Առաջին գլխում Օհրմագրը Ջրադաշտի հագարամյակը բաժանում է չորս ժամանակաշրջանի միջև, մինչդեռ երրորդ գլխում, որ կարելի է գրքի իսկական սկիզբը համարել, նա Ջր.-ի հագարամյակը բաժանում է յոթ շրջանի: Երկրորդ գլուխն ընդհանրապես կտրված է թեմայից և կարճ անդրադարձ է Խոսրով Ա-ի և Մազդակի պատմությանը:

մանակաշրջանը, երբ թշնամին տիրանալու է Իրանին, և գրադաշտականները մատնվելու են թշվառությունների: Նկարագրված են արաբների, թուրքերի, հռոմեացիների և այլոց ասպատակությունները: Այնուհետև պատմականից անցում է կատարվում երևակայական իրադարձություններին, երբ աստիճանաբար գալիս են փրկիչներ Ուշեդարն ու Ուշեդարմահը և աշխարհում փոփոխություններ են բերում: Ապա՝ աշխարհի ավարտի հատվածում, նկարագրվում են չարագործ Աժդահակի փախուստը կապանքներից և աշխարհի ավերումը նրա կողմից՝ մինչև սպանվելը: Դրանից հետո է, որ Օիրմագը կարողանում է հաղթել չար ուժերին, նրանց դուրս վռնդել իր աշխարհից և Սոշյանսի՝ վերջին փրկչի օգնությամբ բարեկարգել աշխարհը: Գրքի վերջին և բավական լավ հրատարակությունները կատարվել են Կ. Չերետիի¹³⁶ (անգլերեն) և Մ. Թ. Ռաշեդ-Մոհասսելի¹³⁷ (պարսկերեն) կողմից:

Նույնատիպ մի գիրք է նաև «*Ջամասպի գիրք*» կամ Jāmasp-nāmag (նաև՝ Ayādgār ī Jāmāspīg) կոչվող պահլավական մատյանը: Այստեղ ներկայացված է Ջրադաշտի երկու ժամանակակիցների և բարեկամների՝ Ջամասպ իմաստունի և Վիշտասպ արքայի հարց ու պատասխանը՝ աշխարհի տարբեր երևույթների հետ կապված, սակայն գիրքը հիմնականում կենտրոնանում է ապագայում սպասվելիք իրադարձությունների վրա: Այս նույն թեմային նվիրված առանձին գլուխներ կան նաև այլ պահլավական երկերում (ինչպես «Բունդահիշն»-ի ԼԳ և ԼԴ գլուխները):

Մեկ այլ պահլավական գրական երկի տեսակ է «*անդարգ*»-ը, որի սկզբնական իմաստն էր «կտակ», թեև հետագայում այս նեղ իմաստն ընդլայնվեց, և «անդարգ» ասելով՝ սկսվեց հասկացվել խրատական գրականությունը¹³⁸: Այս ժանրի երկերը հիմնականում փոք-

¹³⁶ C. G. Cereti, *The Zand ī Wahman yasn, A Zoroastrian Apocalypse*, Roma, 1995.

¹³⁷ M. T. Rāshed Mohassel, *Zand-e Bahman Yasn*, Tehran, 1385 (1st ed. 1370).

¹³⁸ J. de Menasce, “Zoroastrian Pahlavi writings”, in *Cambr. hist. of Iran*, vol. 3(2), p. 1180.

րածավալ են և բաղկացած են խրատական ու բարոյախոսական կարճ խրատներից, որ ենթադրաբար տրվել են որևէ նշանավոր անձի կողմից: Անդարզների վերնագրերը հենց ցույց են տալիս, թե ով պետք է եղած լինի այդ մարդը: Այսպես, օրինակ՝ Andarz ī Adurbad ī Mahraspandan¹³⁹ («Արուրբադ Մահրասպանի խրատը»), Andarz ī Wuzurgmihir («Վուզուրգմիիրի խրատը»), Andarz ī Pōryōtkēšān («Մաքուր հավատքի ուսուցիչների խրատը») և այլն: «Անդարզ» բառը որպես փոխառություն պահպանվել է հայերենում՝ «անդարձ» հին ձևով, որ նշանակում է «կտակ, կտակագիր»¹⁴⁰:

Աշխարհիկ գրականություն: Թեև կրոնական գրականությունից պահպանվել են համեմատաբար ավելի մեծ թվով մատյաններ, նույնը չի կարելի ասել աշխարհիկ գրականության մասին, որի ծավալը անհամեմատելիորեն ավելի փոքր է: Չնայած աշխարհիկ կոչվելուն՝ այս գրականությունն ամենևին էլ զրկված չէ գրադաշտական կրոնին հատուկ տարրերից, ինչի պատճառով էլ այն նույնպես պետք է համարել գրադաշտական գրականության մի մաս:

Աշխարհիկ պահլավական երկերը չունեն բովանդակային միանմանություն և մեծամասամբ փոքրածավալ երկեր են՝ երբեմն մի քանի էջից բաղկացած: Այս երկերի բովանդակությունը հիմնականում վերաբերում է պատմությանը, աշխարհագրությանը, օրենքներին, ինչպես նաև այլ աշխարհիկ առանձին թեմաների: Իհարկե, բովանդակային նման բազմազանությունը չի նշանակում երկերի առատություն, քանի որ այս բովանդակային ուղղությունների մեծ մասը ներկայացված է մեկ կամ երկու նմուշներով:

Այսպես՝ ամենահայտնի աշխարհիկ երկու ստեղծագործությունները վերաբերում են Իրանի առասպելական կամ կիսաառասպելական պատմությանը: Դրանցից մեկը՝ Kārnamag ī Ardaxšēr ī

¹³⁹ Դրա հայերեն թարգմանությունը կատարվել է Հ. Թիրյաքյանի կողմից (Նյու Յորք, 1909):

¹⁴⁰ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, 131-2:

Pābagān-ը, որ թարգմանաբար նշանակում է «Արտաշիր Փափագանի գործերի գիրքը», պատմում է Սասանյան արքայատոհմի հիմնադիր Արտաշիր Ա-ի գահ բարձրանալու պատմությունը: Հակառակ այն հանգամանքին, որ գրքում ներկայացված իրադարձությունները ծավալվում են պատմականորեն շոշափելի ժամանակներում, գիրքը չի պատկանում պատմագրության ժանրին: Այն իր կառուցվածքով և լեզվով ավելի շատ նմանվում է հեքիաթի, որտեղ սակայն հորինված երկրների ու անձանց փոխարեն ներկայացված են բավական իրական տեղանուններ և պատմական անձինք:

Համառոտ կերպով անդրադառնանք բովանդակությանը: Փափագը, որ իշխանն է Փարսի շրջանի, մի օր երագում տեսնում է իր հովիվներից մեկին՝ Սասանին: Երագահանները ցույց են տալիս նրան, որ վերջինս կամ նրա սերնդից մեկը պետք է արքա դառնա: Սասանի հետ խոսակցության ժամանակ Փափագն իմանում է, որ Սասանն Ալեքսանդր Մակեդոնացու կողմից սպանված Դարեհի ժառանգն է, և որոշում է իր դստերը նրան կնության տալ: Ծնվում է Արտաշիրը, ում Փափագն իր ժառանգն է դարձնում: Փափագի թագավորը՝ Արշակունյաց արքա Արտավանը (Ե), լսում է Արտաշիրի տաղանդի մասին, կանչում իր արքունիք, սակայն որսի ժամանակ տեղի ունեցած մի միջադեպի պատճառով նրան պատժում է՝ հրամայելով նրան աշխատել ձիերի ախոռներում: Որոշ ժամանակ անց Արտաշիրը, մի հարձից իմանալով իրեն նախասահմանված փառքի մասին, փախչում է Արտավանի մոտից և սկսում վերջինից դժգոհ ուժերը հավաքել իր շուրջ: Պայքար է սկսվում Արտավանի և Արտաշիրի միջև, որից հաղթող է դուրս գալիս վերջինը և ամուսնանում Արտավանի դստեր հետ: Ապա նա սկսում է պատերազմ մղել այլ իշխանների հետ, որոնց նույնպես հաղթում է ու իրեն ենթարկում: Ներկայացված են նաև նրա որդի Շապուհի և թռան՝ Ռոմիգոյի համառոտ պատմությունները, որից հետո գիրքն ավարտվում է:

Գրքի բովանդակության մեջ կան բազմաթիվ առասպելական տարրեր: Լեզուն բավական պարզ է և ոչ նման կրոնական ստեղծա-

գործությունների համեմատաբար բարդ լեզվին: Գրության ժամանակը, ի տարբերություն այլ պահլավական երկերի, կարելի է հստակեցնել որոշակի վստահությամբ: Ինչպես դա նկատել է գրքի առաջին եվրոպացի թարգմանիչ Թ. Նյոլդեկեն¹⁴¹, գրքում հիշատակվում է թյուրքերի խաղանը, ով չէր կարող հիշատակվել Ջ դարի կեսերից շուտ, քանի որ թյուրքական խաղանությունը գոյություն ստացավ վեցերորդ դարի առաջին կեսին և կարողացավ Մասանյան կայսրության սահմաններին մոտենալ միայն նույն դարի կեսերին: Նույն կերպով քիչ հավանական է, որ երկը գրված լիներ արաբական նվաճումներից հետո, և այդտեղ չլիներ որևէ ակնարկ այդ իրադարձության մասին: Ընդհանուր առմամբ գրքի գրման ամենահավանական ժամանակն ընկած է Ջ դարի երկրորդ և Է դարի առաջին կեսում: Իհարկե գրքի գրման ժամանակը չի խոչընդոտում մեզ պատմությանը ավելի վաղ ծագում վերագրել: Այստեղ բավական մեծ ծառայություն են մատուցում օտար աղբյուրները, ինչպես Ագաթանգեղոսի¹⁴², Ագաթիասի (գիրք Բ, 27)¹⁴³ և Խորենացու (գիրք Բ, գլուխ Հ) պատմությունները: Վերջիններիս կողմից ներկայացված պատմություններն իրենց առասպելական ու հեքիաթային տարրերով մեծամասամբ նմանվում են այստեղի պատմությանը և ցույց տալիս, որ նման կիսաառասպելական երանգ ունեցող պատմությունը ձևավորվել էր արդեն Ե դարում:

Շատ կարևոր է այն փաստի ընկալումը, որ գիրքը իրական և ժամանակակից պատմագրության արդյունք չէ: Այստեղ ներկայացված պատմության արմատները պետք է ավելի շուտ փնտրել ժողովրդական աղբյուրներում: Հետաքրքիր հանգամանք է այն, որ հետագա

¹⁴¹ Nöldeke, Th., *Geschichte des Artachšān i Pāpakān*, s. 23.

¹⁴² Հայկական տարբերակում Արտաշիրի մասին պատմող հատվածը բացակայում է, սակայն պահպանվել է հունական թարգմանության մեջ, որի հայերեն թարգմանությունը տե՛ս Ալկինեան Ն., *Մարինագրական հեքիազորություններ*, հատոր Ե, էջեր 60-63:

¹⁴³ Агафий Миренийский, О царствовании Юстиниана, изд. АН СССР, Москва-Ленинград, 1953.

արաբագիր պատմագիրները (օրինակ՝ Թաբարին), օգտվելով պաշտոնական սասանյան աղբյուրներից, ներկայացնում են ավելի արժանահավատ պատմություն, որտեղ չեն հանդիպում կախարդական որդեր, երագահաններ ու դյուքիչ հարճեր, ինչպես այստեղ:

Բուն գրքի ծագումը հարցականների տակ է: Ոչ մի անհատի անուն կապված չէ դրա հեղինակության հետ: Սակայն գրքի սկզբում պետք է ուշադրություն դարձնել առաջին տողին, որ կարևոր տեղեկություն է հաղորդում: Այն սկսվում է այսպես. «Արտաշիր Փափագանի գործերի գրքում այսպես է գրված, որ...»¹⁴⁴: Սա ցույց է տալիս, որ մեր ունեցած գիրքը բնօրինակը չէ, և «Արտաշիր Փափագանի գործերի գիրք» է կոչվում միայն այլ վերնագիր չունենալու համար: Բուն գիրքը, որից ըստ ամենայնի ծագում է այս համառոտագրությունը, ունեցել է ավելի ընդարձակ ծավալ և ավելի մանրամասնորեն է անդրադարձել իրադարձություններին: Մեր ունեցած գիրքը, մինչդեռ, լի է ընդհատումներով և անավարտ պատմություններով: Այսպես՝ մենք չենք իմանում, թե ինչ եղավ Արտաշիրի ու հարճի սիրավեպը, ինչ ճակատագիր ունեցան Փափագը և շատ այլ կերպարներ, ինչպես նաև շատ դեպքեր կարճված են, և շատ քիչ անդրադարձ է կատարված Արտաշիրի արշավանքներին: Մի տեղ մենք ունենք նոր արշավանքի սկզբի մասին հայտարարություն (Քերմանում, ոմն Բարգանի դեմ), որի մասին սակայն որևէ բան ասված չէ՝ կիսատ է թողնված:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, երևում է, որ մենք գործ ունենք մի ավելի ընդարձակ երկի համառոտ փոխադրության կամ համառոտագրության հետ, որի, ինչպես և բնագրի կազմվելու ժամանակը դժվար է ճշգրիտ կերպով որոշել: Ավելի հավանական է, որ մեր ունեցած համառոտագրությունը բնագրից ոչ շատ ուշ է կատարվել՝ սասանյան ժամանակաշրջանի ավարտին՝ ըստ ամենայնի աշակերտների համար ուսուցողական մի համառոտ ձեռնարկ ունենալու նպատակով: Այս գրքի գրման վայրը մեծ հավանականությամբ եղել է

¹⁴⁴ Մովորաբար պահլավական երկերը սկսվում են այսպես. «Սա է այն գիրքը, որ ... է կոչվում», «Այս գիրքը ... են կոչում» կլն:

հենց Ֆարսը, քանի որ շատ հաճախ ենք հանդիպում Ֆարսի տեղանունների մանրամասն թվարկման, ինչպես նաև պատմությունը հիմնականում կենտրոնանում է Ֆարսում, թեև Արտաշիրի արշավանքներն ավելի հեռուներն էլ են հասել:

Գիրքը ԺԹ դարի վերջին ու Ի դարի սկզբին ենթարկվել է մի շարք հրատարակությունների ու թարգմանությունների, որոնցից նշանավոր են Th. Nöldeke-ի կատարած գերմաներեն թարգմանությունը (1879)¹⁴⁵, Darab D. P. Sanjana-ի կատարած անգլերեն և գուջարաթի թարգմանությունները՝ բնագրերով հանդերձ (1896)¹⁴⁶, Kaikobād D. A. Noshervān-ի կատարած գուջարաթի թարգմանությունը՝ բնագրով հանդերձ (1896)¹⁴⁷, Յարութին Թիրեաքեանի Փարիզում հրատարակած (1906) հայերեն թարգմանությունը¹⁴⁸, ինչպես և Բ. Ֆարրահվաշիի կատարած պարսկերեն թարգմանությունը (Թեհրան, 1354/1976): Նոր ամբողջական թարգմանություններ կատարվել են Օ. Չունակովայի (Օ. Чунакова) կողմից՝ ռուսերենով (1987)¹⁴⁹ և Ֆրանց Գրենեի (Frantz Grenet) կողմից՝ ֆրանսերենով (2003)¹⁵⁰:

Մյուս գիրքը, որ անդրադառնում է Իրանի պատմությանը, «*Չարերի հիշարակարանն*» է կամ Ayādgār ī Zarērān-ը: Այս կարճ գրքույկը պատմում է գրադաշտական կրոնի համար կարևոր իրադարձությունների մասին, որ տեղի են ունեցել Վիշտասպ արքայի գահակալության ժամանակ: Բովանդակությունը մոտավորապես հետևյալն է:

Մագդայական կրոնը ընդունելուց հետո Վիշտասպի մոտ են գալիս հարևան խյոնների թագավորության արքայի՝ Արջասպի պատվի-

¹⁴⁵ Nöldeke, Th., *Geschichte des Artachšār ī Pāpakān*, aus dem Pehlewi übersetzt, mit Erläuterungen und einer Einleitung versehen, Göttingen, 1879.

¹⁴⁶ Sanjana, D. D. P., *The Kārnamē ī Artakshshār ī Pāpakān*, Bombay, 1896.

¹⁴⁷ Noshervān. K. A. D., *Kārnamak-ī Artakshshār-ī Pāpakān, The Memoirs of King Ardashir*, Bombay, 1896.

¹⁴⁸ Թիրեաքեան Յ., Արտաշիր Բարական Կարնամակը, Փարիզ, 1906:

¹⁴⁹ Чунакова, О., *Книга деяний Ардашира сына Папака*, Москва, 1987.

¹⁵⁰ Grenet, Fr., *La Geste d'Ardashir fils de Pâbag*, éditions "A Die", 2003.

րակները, որոնց բերած նամակում Արջասպը առաջարկում է Վիշտասային հրաժարվել նոր ընդունված կրոնից՝ սպառնալով, որ հակառակ դեպքում պատերազմի կգա նրանց դեմ: Վիշտասայը տատանվում է, սակայն նրա եղբայրը՝ Ջարերը, կտրուկ մերժում է առաջարկը և ճակատամարտի հրավիրում հակառակորդին: Չորքերը հանդիպում են իրար արձակ դաշտում և սկսում պատերազմել: Արդյունքում շատ քաջեր են մարտիրոսվում, որոնց թվում և՛ Ջարերը: Նրա որդին՝ Բասթվարը, որ տարիքով դեռ փոքր էր, իմանալով այս մասին, ինքն է ելնում պատերազմի և առնում հոր վրեժը: Ճակատամարտն ավարտվում է Վիշտասայի և իր գործի հաղթանակով, իսկ Արջասպը անպատվությամբ ետ է ուղարկվում:

Այս պատմությունը նույնպես պահպանվել է այլ աղբյուրներում: Իր կարևորությամբ դրանց մեջ աչքի է ընկնում «Շահնամե»-ում պահպանված տարբերակը, որը համարվում է Դաղիղի բանաստեղծի հեղինակածը: Համեմատությունն այս երկու աղբյուրների միջև ցույց է տալիս, որ երկուսն էլ ծագում են նույն կամ մնան գրավոր ընդհանուր աղբյուրից: Շատ արտահայտություններ, տեսարաններ և մանրամասնություններ կրկնվում են և՛ պահլավական, և՛ շահնամեական տարբերակներում:

Երկու պատմությունները սակայն, նմանություններով հանդերձ, ունեն նաև որոշ կարևոր տարբերություններ, որոնցից ամենակարևորն է հատկապես Ջարերին սպանող Վիդրաֆշի սպանության հեղինակի հարցը: Այսպես՝ եթե պահլավական տարբերակում Վիդրաֆշին սպանում է Բասթվարը, ապա Դաղիղի մոտ նրան սպանողը Էսֆանդիարն է (պահլ.՝ Սպանդդար): Տրամաբանությունը հուշում է, որ սկզբնական պատմության մեջ Բասթվարը պետք է եղած լինի սպանողը՝ որպես հոր վրեժն առնող կերպար: Մինչդեռ «Շահնամե»-ում ներկայացված մյուս տարբերակում հանդիպող փոփոխությունը հավանաբար կատարվել է Էսֆանդիարին մեծարելու համար, քանի որ բուն «Շահնամե»-ում վերջինիս ավելի կարևոր դեր է հատկացվում, քան անհայտ Բասթվարին: Մեկ այլ տարբերակ էլ է պահպան-

վել այս պատմության վերաբերյալ, այս անգամ արաբագիր Թաալի-բի (ثعالی) պատմագրի գրքում: Այս պատմությունը շատ ավելի նման է «Ջարեբի հիշատակարան»-ին և շատ տեղերում դրանք գրեթե կրկնում են իրար: Իհարկե, այստեղ նույնպես կան ոչ մեծ տարբերություններ, սակայն երկուսը հատկապես իրար նման են այն բանում, որ Բասթվարին են վերագրում Վիդրաֆշի սպանությունը:

Ինչ վերաբերում է պահլավական տարբերակի առաջացմանը, կարելի է ենթադրել, որ սա նույնպես մի ավելի ընդարձակ պատմության համառոտությունն է: Երկի լեզուն հարուստ է կրկնություններով և արդյունքում այնպիսի տպավորություն է ստեղծում, որ ավելի ծավալուն բնագիրը ներկայացված է եղել չափածո կերպով¹⁵¹: Տեքստի մեջ իրենց հերթին երբեմն հանդիպում են պարթևերեն բառեր և հատվածներ, որոնք ցույց են տալիս, որ բնագիրը հիմնված է եղել պարթևերեն տարբերակի վրա և թարգմանություն է այդ լեզվից¹⁵²:

Այս երկի առաջին թարգմանությունը կատարվել է Վիլիելմ Գայգերի կողմից 1890 թ. գերմաներենով¹⁵³: Պարսկերեն թարգմանված է Մահյար Նավվարբիի (1384/2006)¹⁵⁴, Ժալե Ամուլեզարի (Թեհրան, 1392/2014)¹⁵⁵ և այլոց կողմից:

¹⁵¹ Այս հանգամանքով առաջնորդվելով՝ Է. Բենվեդենիստը փորձել է վերականգնել տեքստի բուն չափածո տարբերակը, ինչը սակայն այդքան էլ համոզիչ չէ: Խնդիրը հավանաբար այն է, որ մեր ունեցած տեքստը փոխադրություն է չափածո տարբերակից և ոչ թե բուն չափածո տարբերակը: Բենվեդենիստի հողվածը տե՛ս E. Benveniste, “Le Mémorial de Zarēr, poème pehlevi mazdéen”, *Journal Asiatique*, t. CCXX, Avril-Juin 1932, pp. 245-93:

¹⁵² Tavastia, J., *Die Mittelpersische Sprache und Literatur der Zarathustrier* (1956), s. 136-7: Պարթևերեն բառերի ու քերականության համար տե՛ս Մաք-Քենգրիի հողվածը՝ MacKenzie, “Review” (of D. Monchi-Zadeh’s *Die Geschichte Zarērs*, Uppsala, 1981), *ILJ* 27, 1984, pp. 155-163:

¹⁵³ Geiger, W., “Das Yātkār-i Zarēr und sein Verhältnis zum Šāh-name”, *Sb Bayerischen Akademie der Wissenschaften, philol.-philol.-hist. Kl.*, 1890, pp. 43-84: Հետագայում գերմաներեն է թարգմանվել նաև D. Monchi-Zadeh-ի կողմից *Die Geschichte Zarērs*, Uppsala, 1981: Իտալերեն է թարգմանվել A. Pagliaro-ի կողմից՝ *Il testo Pahlavico Ayātkār-i-Zarāran*, Roma, 1925:

¹⁵⁴ Navvābi, M., *Yādegār-e Zarirān*, matn-e Pahlavi, bā tarjome-ye fārsi va āvānevisi-ye lātin, Tehrān, 1374 (2nd ed. 1387).

¹⁵⁵ Amuzegār Zh., *Yādegār-e Zarirān*, 1392.

Փոքրածավալ, բայց բավական հետաքրքիր երկ է Draxt ī Asūrīg-ը («Ասորական ծառը»), որ կազմված է բանավեճային ոճով և ներկայացնում է ասորական ծառի, այսինքն՝ արմավենու և այծի բանավեճն այն մասին, թե որ մեկն է իրենցից ավելի կարևոր ու օգտակար: Երկու կողմերն իրենց խոսքերում նշում են այն օգտակար հատկությունները, որ ունեն, և վերջում հաղթում է այծը, որ, ըստ ամենայնի, ավելի հարազատ կերպար էր հեղինակներին¹⁵⁶:

Երկը հետաքրքիր է նրանով, որ դրա մեջ ոչ միայն առկա են պարթևական լեզվի մնացորդներ, որոնք ցույց են տալիս դրա պարթևական արմատները, այլև որ այն իրենից ներկայացնում է միջին պարսկերենից մինչև մեր ժամանակները հասած միակ չափածո ստեղծագործությունը: Բուն ձեռագրերից դա չի երևում, սակայն իրանագետներ է. Բենվենիստն ու Վ. Բ. Հեննինգը, քննության առնելով այն, կարողացել են ցույց տալ երկի տաղաչափական որոշակի օրինաչափությունները¹⁵⁷: Հանելուկ է մնում սակայն այն, թե ստեղծագործությունը կազմողներն ի՞նչ տաղաչափական սկզբունքներով են առաջնորդվել: Գրքի բավական լավ հրատարակություններից է Մ. Նավվաբիի պարսկերեն թարգմանությունը՝ քննական բնագրով և ծանոթագրություններով հանդերձ¹⁵⁸:

Աշխարհագրական բնույթի աշխատություններից է «*Էրանշահրի քաղաքները*» կամ Šahrestānīhā ī Ērānšahr փոքրիկ աշխատությունը, որը, ինչպես երևում է վերնագրից, պատմում է Իրանի քաղաքների մասին: Կազմությունն այնպիսին է, որ նախ տրվում են քաղաքի անվանումը և տեղադրությունը, ապա համառոտ կերպով ներկայացվում են կառուցողի անունը (որ սովորաբար Իրանի առասպելական պատմության կերպարներից մեկն է) և մեկ-երկու կարճ տեղեկություն: Այս կերպով ներկայացված են Սամարղանդը, Բախը, Մարվը,

¹⁵⁶ Ըստ ամենայնի, այս ստեղծագործության հեղինակներն իրենք զբաղվում էին անասնապահությամբ:

¹⁵⁷ E. Benveniste, նշվ. աշխ., W. B. Henning, “A Pahlavi Poem”, *BSOAS*, 1950, pp. 641-648:

¹⁵⁸ Navvābi M., *Draxt-i Asūrīg*, առաջին հրատարակությունը՝ 1363 (1985):

Թուսը, Տիգրոնը, Բաբելոնը, Մծբինը, Ուռհան, Վանը, Բաղդադը ևլն: Երևում է, որ քաղաքները ներկայացվում են Էրանշահրի կազմում՝ ելնելով հին քաղաքական պատկերացումներից: Կառուցողների անունները հիմնականում որոշվում են ըստ պատմական կերպարների անունների մանուքյան: Գրքում հիշատակվող արաբական անունները ցույց են տալիս, որ այն գրվել է Արաբական խալիֆայության ժամանակ, երբ Բաղդադը կառուցված էր: Ալեքսանդրի անվան աղավաղված տարբերակը՝ s(w)kndr, նույնպես ցույց է տալիս արաբական ազդեցությունը: Ըստ ամենայնի, գիրքը կազմվել է Թ դարում:

Սասանյանական շրջանի իրավական դրության ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունի մասնակիորեն պահպանված «Հագար դաբասարանների մատրյանը» կամ Mādayān ī hazār dādestān: Այստեղ պարունակվում են հասարակության ներքին հարաբերությունները կարգավորելու համար գրված օրենքներ: Գիրքն, այսպիսով, ավելի քաղաքացիական, քան քրեական օրենսգրքի բնույթ ունի¹⁵⁹: Սասանյան վերնախավի աշխարհիկ կյանքի և ճաշակների ուսումնասիրության համար հետաքրքրական է «Խոսրով Քավադանն ու պարսանին» (Husrav ī Kawādān ud rēdag-ēw) աշխատությունը¹⁶⁰, որտեղ ներկայացվում է Խոսրով Ա արքայի և մի գիտակ պատանու հարցազրույցը: Պատանին, պատասխանելով արքայի հարցերին, պատմում է լավագույն ուտեստերենի, գոհարեղենի, կանանց և այլնի մասին: Կարճ մի աշխատանք է «Նամակագրության ձևը» (Ēvēnag ī nāmag-nibešišnīh), որտեղ ներկայացվում են «արքաներին և աղքատ մարդկանց» ուղղվող մամակների գրման պատշաճ ձևերն ու արտահայտությունները:

Այս աշխարհիկ տեքստերից շատերի բնագրերը կարելի է գտնել դասքուր J. M. Jamasp-Asana-ի խմբագրած Corpus of Pahlavi Texts ժողովածուի մեջ (Բոմբեյ, 1913):

¹⁵⁹ Թարգմանված և քննական բնագրով հրատարակված՝ Периханян, А. Г., *Сасанидский судебник*, Изд. АН АССР, Ереван, 1973:

¹⁶⁰ Unvala, J. M., *Der Pahlavertext "Der König Husrav und sein Knabe"*, Wien, 1917.

Փազանդ գրականություն : Մինչև այս ներածությունն ավարտելը հարկավոր է երկու խոսք ասել պահլավական գրականության մեկ այլ ճյուղավորման մասին ևս:

Ինչպես երևաց վերևում ներկայացված տեղեկություններից, պահլավերենն ուներ բավական բարդ ու խճճված գրային համակարգ, որ դժվարացնում կամ հաճախ անհնար էր դարձնում գրքերի ընթերցանությունը: Դրան հակառակ՝ «Ավեստա»-ի գիրը, որ ներմուծվել էր հավանաբար ուշ սասանյանական շրջանում, բավական հարմար ու պարզ գիր էր, որ արտահայտում էր լեզվի հնչյունական ողջ համակարգը. ոչ միայն բոլոր բաղաձայներն, այլև բոլոր ձայնավորները ևս: Ուշ շրջանում, երբ հոգևորականները զգացին պահլավերենի առաջացրած դժվարությունները, փորձեր կատարվեցին հեշտացնելու ու հարթելու այդ դժվարությունները «Ավեստա»-ի գրի միջոցով: Այսպիսով՝ որոշվեց պահլավերեն գրքերը տառադարձել ավեստայական այբուբենով, ինչի շնորհիվ գրքերը ձեռք բերեցին իրանական տեսք և ազատվեցին հուզվարեշից (արամեական գաղափարագիր-բառերից): Այս կերպ գրված գրքերը կոչվեցին «փազանդ»: Նոր գիրը սկսեց կիրառվել կրոնական գրքերի տառադարձման համար, ինչի շնորհիվ առաջ եկան «Բունդահիշն»-ի, «Չանդ»-ի «Վահման յասն»-ի, «Մենոյ»-ի խրադի և այլ գրքերի փազանդ տարբերակները: Իհարկե, փազանդ գիրը կատարյալ չէր, քանի որ նորամուծությամբ ոգևորված գրադաշտական գրագիրներն այս անգամ տառերի առատությունից «չկողմնորոշվելով» (51 գրանիշ), խառը կերպով էին օգտագործում դրանք, ինչի պատճառով փազանդի ընթերցանությունը ևս, լեզվի արտասանությունը որոշելու համար, ներկայացնում է իր առանձին դժվարությունները:

Փազանդ տեքստերի մի կարևոր ժողովածու հրատարակված է Էրվադ Է. Բ. Անտիայի կողմից Բոմբեյում (Pāzend texts, 1909):

1.3. Զրադաշտականության ուսումնասիրությունը Եվրոպայում

*Առաջին ուսումնասիրողները: Անկերի-
Դյուպերրոն: Հերաքրքրությունը Եվրոպա-
յում և քննադատությունը: Հերագա ուսում-
նասիրությունները:*

Առաջին ուսումնասիրողները: Զրադաշտի և նրա կրոնի մասին հին հունական ու հելլենիստական աշխարհում շատերն էին տեղյակ: Հունալեզու բազմաթիվ գրողներ անդրադարձել են Զրադաշտի կերպարին ու կրոնին և երբեմն ճշգրիտ, երբեմն առասպելական ու ոչ ստույգ տեղեկություններ հաղորդել նրա ու նրա հետևորդների մասին: Նրանց հայտնի էր, որ Զրադաշտն ապրել է շատ հին ժամանակներում և քարոզել է երկու հակադիր ոգիների մասին պատմող մի կրոն, որ տարածված էր իրանցիների մոտ¹⁶¹: Զրադաշտի և նրա կրոնի մասին տեղեկություններ հաղորդող այս շրջանի հեղինակներ են Հերոդոտոսը, Ստրաբոնը, Պլուտարքոսը, Դիոգենես Լաերտիոսը, ինչպես նաև վերջիններիս մոտ հիշատակվող այլ հեղինակներ՝ Արիստոտելը, Հերմիպատը, Քսանթոս Լյուդիացին և այլոք:

Դասական հեղինակների մոտ հանդիպող այս տեղեկություններն Արևմտյան Եվրոպայի կրթօջախներում բնակվող ուսյալ հասարակության համար միակ աղբյուրներն էին զրադաշտականների հավատքը ուսումնասիրելու համար: Զրադաշտի կրոնի մասին պատմող այդ հատվածների լատինալեզու մի ժողովածու հրատարակվեց Փարիզում 1590 թ. ուն Բառնաբե Բրիսսոնի (Barnabé Brisson) կողմից, որ կոչվում էր *De regio Persarum principatu libri tres*:

¹⁶¹ Այսպես, օրինակ, Պլուտարքոսը իր «Բախ և Օսիրիս» աշխատության մեջ (պարբ. 46 և 47) հիշատակում է Զրադաշտին և տալիս նրա ու «մոզերի» (ինչպես կոչվում էին Զրադաշտի հետևորդները) կրոնի հիմնական նկարագրությունը, որը, չնայած մի շարք անճշտություններին, հիմնականում ստույգ է: Նույն կերպ Զրադաշտի ու մոզերի հավատքի համառոտ նկարագրությունն է տալիս Դիոգենես Լաերտիոսը (*Lives of eminent philosophers, with an English translation by R. D. Hicks, vol. I, Book I: 2, 6-9*):

Այնուամենայնիվ արևմուտքում կրթված մարդիկ և նույնիսկ համալսարանականները շատ քիչ ժամանակակից տեղեկություններ ունեին գրադաշտականության վերաբերյալ: Սակայն Եվրոպան ԺԳ-ԺԴ դարերից սկսած թևակոխում էր նոր դարաշրջան, որ լի էր նոր հայտնագործություններով ու գիտական ձեռքբերումներով: Այդ ձեռքբերումները չորջանցեցին մաս հումանիտար՝ մարդագիտական գիտությունների ոլորտը:

Այդ դարերում էր, որ առևտուրը եվրոպական և ասիական տեղությունների միջև սկսել էր աշխուժանալ, և դա նպաստում էր առևտրականների ու ճանապարհորդների հաճախակի անցողարձին երկու աշխարհամասերում: Այս ճանապարհորդները (որոնցից թերևս ամենահայտնին է վենետիկցի Մարկո Պոլոն), անցնելով հեռավոր երկրներով, երբեմն նկարագրում էին իրենց տեսած դիտարժան և ուշագրավ երևույթները և այդպիսով ներկայացնում իրենց տեսած նոր երևույթները լայն հասարակությանը:

Նույն կերպ մաս եվրոպացի ճանապարհորդները սկսեցին ուշադրությունն դարձնել պահպանված գրադաշտականների համայնքների վրա և նրանց գոյության լուրը հասցրեցին Եվրոպա: Այս հարցում առաջիններից էին կաթոլիկ երկու հոգևորականներ՝ Յորդանուս Կատալանին (1322) և Օդորիկ Պորդենոնցին (1325), ովքեր առաջինն են հիշատակում ժամանակակից գրադաշտականների մասին¹⁶²: Հետագայում՝ հատկապես ԺԷ դարից սկսած, գրադաշտականներին հիշատակող կամ նկարագրող ճանապարհորդների թիվը կտրուկ աճում է: Նման նկարագրություններ են մեզ տալիս շատերի թվում մաս իտալացի հայտնի ճանապարհորդ Պիետրո դելլա Վալլեն, պորտուգալացի Պեդրո Տեյշեյրան¹⁶³ և ֆրանսիացի առևտրա-

¹⁶² Hinnels, J, *The Parsis*, p. 159.

¹⁶³ Տեյշեյրան թողել է մի քանի գրքեր, որոնց մեջ շարադրում է իր ընդարձակ ճանապարհորդությունների ուղին, ինչպես և իր ստացած գիտելիքներն ամենատարբեր ոլորտում: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է նրա «Պարսից արքաները» գիրքը, որտեղ նա, ամեն ինչից բացի, խոսում է գրադաշտականների՝ «Յագդի գաբռերի»

կան Ժան-Բատիստ Տավերնիեն (երեքն էլ՝ ԺԷ դար): Սրանցից վերջինն, իր *Les six voyages de Jean-Baptiste Tavernier* վերնագրված գրքում (1675) հատկապես մանրամասն է անդրադառնում «գաբռե-րին», ինչպես Պարսկաստանում կոչում էին գրադաշտականներին: Նրա նկարագրությունների մեջ թեև կան կրոնի հետ կապված մի շարք սխալներ, որոնք, ըստ ամենայնի, առաջ են եկել իր աղբյուրների ապատեղեկատվությունից կամ հեղինակի թյուրըմբռնումից, բայց շատ տեղերում էլ այն բավական ուղիղ տեղեկություններ է տալիս Պարսկաստանի գրադաշտականների, նրանց սովորույթների և գրադաշտական կրոնի մասին¹⁶⁴:

1700 թ. Օքսֆորդի հին համալսարանում հրատարակվում է Թոմաս Հայդ (Thomas Hyde) գիտնականի նշանավոր գիրքը, որով Եվրոպան ստանում է գրադաշտականության ուսումնասիրությանն ուղղված իր առաջին լուրջ աշխատությունը¹⁶⁵: Հեղինակը, արդեն ոչ միայն ծանոթ լինելով դասական, այլև արաբալեզու և պարսկալեզու աղբյուրներին, տալիս է մինչ այդ եղած աշխատությունների համեմատությամբ բավական ճշգրիտ նկարագրություն, այնքանով, որքանով որ նրան թույլ էին տալիս իր ձեռքի տակ եղած աղբյուրները (որոնք մեծ մասամբ երկրորդական էին): Նրա գրքից երևում է, որ նա տեղյակ է եղել «Ջենդավեստա»-ից, պահլավական գրքերից և փագենդից: Գիրքն ընդարձակ ուսումնասիրություն է, որ այդ ժամանակվա համար աննախադեպ լուրջ գործ էր՝ չնայած իր անխուսափելի թերություններին ու անխուսափելի սխալներին:

Չնայած դրան՝ Եվրոպային դեռ անձանոթ էին շարունակում մնալ բուն գրադաշտական գրքերը՝ գրված ավեստերենով և պահլա-

մասին: Տե՛ս *The travels of Pedro Teixeira*, translated and annotated by W. F. Sinclair, London, 1902, pp. 196-7:

¹⁶⁴ Անգլերեն թարգմանությունը՝ *The six voyages of John-Baptista Tavernier, a Noble Man of France now living, through Turkey into Persia and East-Indies, finished in the year of 1670, Giving an Account of the State of those Countries*, London, 1678, pp. 163-168 (գրքում գրադաշտականներին նվիրված հատվածին հաջորդում է Պարսկաստանի հայերի նկարագրությանը նվիրված ընդարձակ հատվածը):

¹⁶⁵ Hyde, Th., *Historia religionis veterum Persarum, eorumque Magorum*, Oxford, 1700:

վերենով: Շատերը փորձում էին գրադաշտականներից ձեռագրեր ձեռք բերել կամ տեղեկություններ ստանալ նրանցից իրենց կրոնի մասին: Սակայն ինչպես նշում է անձամբ նման փորձառություն ունեցած Տավերնիեն՝ «Աշխարհում չկան իրենց կրոնի առեղծվածները բացահայտելու առումով ավելի բժախսողի մարդիկ, քան գավրերը»¹⁶⁶: Այդ փորձերից շատերը դատապարտվեցին անհաջողության, և իրադրությունը այդպես մնաց շատ տասնամյակներ:

Անկետիլ-Դյուպերրոն: 1750-ական թվականներին Փարիզի Արևելյան լեզվաց վարժարանում ուսանում էր մի երիտասարդ, որ միաժամանակ նաև աշխատում էր Արքայական գրադարանում (Bibliothèque du Roi, այժմ՝ Ազգային գրադարան՝ Bibliothèque Nationale): Նա գիտեր արաբերեն, երբայերեն և ընդհանրապես հետաքրքրություն էր ցուցաբերում Արևելքի նկատմամբ, ինչպես Փարիզի և ընդհանրապես արևմտաեվրոպական կրթված աշխարհի շատ այլ ժամանակակից ներկայացուցիչներ: Նրան էլ էին հետաքրքրում Ջրադաշտի կրոնի գաղտնիքները, որոնց նկատմամբ հետաքրքրությունը Եվրոպայում հատկապես աճել էր «լուսավորության դարաշրջանում»:

Այս կերպ էր, որ Աբրահամ Հ. Անկետիլ-Դյուպերրոնը (A. H. Anquetil-Duperron) մի օր գրադարանում տեսավ Օքսֆորդից այդտեղ բերված Ավեստայի մի քանի էջ, որ գրավեցին նրա ուշադրությունը: Ամեն ինչ հանգեց նրան, որ 1754 թվականի նոյեմբերի 7-ին նա լքեց իր հարազատ քաղաքը և արևելք մեկնող ֆրանսիական Արևելահնդկական ընկերության նավով մեկնեց Հնդկաստան՝ բացահայտելու Ջրադաշտի ուսմունքի գաղտնիքները:

Ժամանելով Հնդկաստան և անցնելով բազմաթիվ վտանգների ու արկածների միջով՝ նա կարողացավ մի կերպ հասնել թերակղզու արևմտյան ափում գտնվող Սուրաթ քաղաքը, որտեղ այդ ժամանակ բնակվում էր փարսիների ամենախոշոր համայնքը: Բնակություն

¹⁶⁶ Tavernier, p. 163.

հաստատելով այստեղ՝ նա թեպետ մեծ դժվարությամբ, բայց հաջողեցրեց գտնել մի քանի դասթուրների, ովքեր որոշակի վարձատրության դիմաց հանձն առան նրան ուսուցանել իրենց հին լեզուները՝ ավեստերենն ու պահլավերենը: Այդպես մի քանի տարի Հնդկաստանում անցկացնելով Անկետիլ-Դյուպերրոնը կարողացավ բավական (առնվազն իր կարծիքով) գիտելիքներ ու իրեն հետաքրքրող ձեռագրեր կուտակել: 1761 թվականին նա անգլիական նավով վերադարձավ Եվրոպա, որտեղ մի որոշ ժամանակ մնաց Անգլիայում և ապա միայն ետ դարձավ Փարիզ: Այստեղ նա շուրջ տաս տարի ծախսեց նաև գրքերի թարգմանության վրա և 1771-ին վերջապես լույս ընծայեց իր եռահատոր գիրքը, որ ամբողջապես կոչվում է «Zend-Avesta, ouvrage de Zoroastre, contenant les idées théologiques, physiques & morales de ce législateur, les cérémonies du culte religieux qu'il a établi, & plusieurs traits importants relatifs à l'ancienne histoire des Parses», որ թարգմանվում է այսպես՝ «Ջենդ-Ավեստա, աշխատություն Ջրադաշտի, որ պարունակում է այս օրենսդրի աստվածաբանական, մարմնական և բարոյական գաղափարները, նրա հիմնադրած կրոնի ծիսական արարողությունները և մի քանի կարևոր կետեր՝ կապված պարսից հին պատմության հետ»: Դյուպերրոնի այս գիրքը պարունակում էր թարգմանություններ «Ավեստա»-ից, պահլավական գրքերից («Բունդահիշն»), նկարագրություններ զրադաշտականների արարողակարգի վերաբերյալ, նրա ճանապարհորդության նկարագրությունը և շատ այլ օգտակար նյութեր:

Այժմ, գիտելիքների մեր այժմյան մակարդակի վրա գտնվելով, կարելի է նշել, ինչպես արել են շատերը, որ Դյուպերրոնի՝ «Ավեստա»-ից (և անշուշտ նաև պահլավերենից) կատարած թարգմանությունները պարունակում էին բազմաթիվ սխալներ, հատկապես քերականության սխալ ընկալման պատճառով, ինչը շատ անճշտություն ու թյուրիմացություններ էր մտցնում տեքստի մեջ: Նշվում է, որ նա բացարձակապես անտեղյակ է ավեստերենի քերականական

կառուցվածքից¹⁶⁷: Շատ պատմական տեղեկություններ, որ նա հաղորդում է, բնականաբար նույնպես անստույգ են ու սխալ: Այնուամենայնիվ, չնայած այս զգալի թերություններին, գիրքը ոչ միայն պարունակում էր բազմաթիվ ստույգ տեղեկություններ «Ավեստա»-ի և պահլավական գրականության բովանդակության ու կառուցվածքի, գրադաշտականների սովորույթների ու պատմության մասին, այլև իր տեսակով մեծ նորություն էր և առաջինն էր, որ Եվրոպային ի ցույց դրեց բուն գրադաշտական աղբյուրները:

Հետաքրքրությունը Եվրոպայում և քննադատությունը: Անկետիլ-Դյուպերրոնի գիրքն արևմտաեվրոպական գիտական շրջանակներում իրարանցում առաջացրեց: Առաջ եկան երկու հակադիր բանակներ, որոնցից մեկը պաշտպանում էր Դյուպերրոնի հայտնագործությունը և նրա իսկականությունը, իսկ մյուսն այն համարում էր եթե ոչ թարգմանչի, ապա գրադաշտական հոգևորականների կողմից հորինված կեղծ գիրք, որ ոչ մի կապ չունի Ջրադաշտի և գրադաշտականության հետ: Հետաքրքիր էր, որ այս կարծիքները բաժանված էին նաև աշխարհագրորեն. Դյուպերրոնի հայրենիքում գիրքը հիմնականում ընդունվեց և վստահելի համարվեց, Անգլիայում այն շատերի կողմից մերժվեց և համարվեց կեղծարարություն, իսկ Գերմանիայում երկու կարծիքներն էլ հանդես եկան, թեև վերջիվերջո գերակշռեց Դյուպերրոնի պաշտպանների տեսակետը¹⁶⁸:

Անգլիայում այս գրքի ամենից հայտնի ընդդիմախոսներից էին հայտնի արևելագետ Ուիլյամ Ջոնսը և Ջոն Ռիչարդսոնը, որոնցից

¹⁶⁷ Bleek A. H., *Avesta: The religious books of the Parsees*, from Professor Spiegel's German translation, Introduction, p. xv; դրան էին ավելանում նաև Դյուպերրոնի և նրա ուսուցիչների միջև եղած լեզվական խոչընդոտները, ինչպես նշում է ներածության մեջ (մ. ա.) թարգմանիչը:

¹⁶⁸ Անգլիայում Դյուպերրոնի ընդդիմախոսներից էին՝ W. Jones, J. Richardson, J. Chardin, Գերմանիայում՝ Ch. Meiners: Գերմանացի պաշտպաններից էին՝ J. F. Kleuker, O. G. Tychsen: Այս ամենի մասին ավելի մանրամասն կերպով կարելի է կարդալ Գարմստետերի բավական հետաքրքիր ներածության մեջ հետևյալ գրքում՝ Darmsteter J., *The Zend Avesta*, SBE, vol. IV, pp. xv-xxii:

առաջինը ֆրանսերեն մի պամֆլետ գրեց՝ ծաղրի ենթարկելով Անկետիլ-Դյուպերրոնի աշխատանքը և համարելով, որ Զրադաշտի նման խելոք մարդը չէր կարող նման անհեթեթություններ գրել¹⁶⁹: Ջ. Ռիչարդսոնն իր 1777 թ. հրատարակված մի աշխատության մեջ նույնպես փորձ կատարեց այդպիսի խորհմաստ փաստարկներով դիմակագրելու Դյուպերրոնին: Նրա բերած փաստարկները բաղկացած էին հետևյալ կետերից¹⁷⁰.

ա. Ձեռներեն (ավետներեն) և պահլավերեն լեզուները պարունակում են մի շարք արաբերեն բառեր, որոնք չէին կարող ավելի շուտ Պարսկաստան մուտք գործել, քան մ. թ. յոթերորդ դարը:

բ. Հնչյունաբանական տարբերությունն Ավեստայի լեզվի և պարսկերենի միջև բավական խորն է ազգակից լեզուների համար: Օրինակ՝ անգլերեն *th* կամ արաբերեն *ث* (ուշ հունարեն *θ*) հնչյունի առկայությունը զենդերենում, երբ պարսկերենն այն չունի և արտասանում է «ս»:

գ. Ձեռներենի և ժամանակակից պարսկերենի միջև գոյություն ունի խորը տարբերություն, որ, ըստ նրա, անհնար էր անտեսել. «Ո՛չ պետության պարտադրանքը, ո՛չ գիտունների ջանքերը կարող են այնքան փոփոխել լեզուն, որպեսզի վերացնեն ամեն տեսակի նմանություններ կա ժամանակի լեզվի և անգամ ամենախիճ ժամանակներում խոսված դրա նախնու միջև»¹⁷¹:

դ. Վերջին փաստարկը նրա կողմից «բուն գրքի բովանդակության հիմարությունն» էր¹⁷², որ «սազական» չէր Զրադաշտի նման իմաստունին:

¹⁶⁹ Նույն տեղում, ք. xv-xvi, ահա թե ինչ է գրում Դարմաստետերն այս պամֆլետի և յուր հեղինակի մասին. "In fact, the only thing in which Jones succeeded was to prove in a decisive manner that the ancient Persians were not equal to the *lumières* of the eighteenth century, and that the authors of the Avesta had not read the *Encyclopédie*":

¹⁷⁰ Richardson, J., *A dissertation on the languages, literature and manners of Eastern nations*, pp. 11-15.

¹⁷¹ Նույնը, էջ 12-13:

¹⁷² "The last reason I shall offer, on this ground, is the uncommon stupidity of the work itself", նույնը, էջ 14:

Այս փաստարկները ոչ մի արժեք չունեն, քանի որ առաջինը հիմնված է սխալ փաստի վրա (ավեստերենում չկան արաբերեն բառեր, իսկ պահլավերենում հանդիպող սեմական բառերը արամեերենից են, որ ամենևին էլ արաբերեն չէ), երկրորդն ու երրորդը հիմնվում են պատմահամեմատական լեզվաբանության անգիտության վրա (ինչը ներելի է, եթե հաշվի առնենք, որ այն դեռ հայտնագործված չէր), իսկ չորրորդը ճաշակի հարց է:

Գերմանիայում գործը բացասական գնահատականի արժանացավ ոմանց կողմից, սակայն ավելի աշխույժ էին գրքի իսկականությունը պաշտպանողները: Դրանցից մեկն էր Ռիգայի համալսարանի պրոֆեսոր Յոհան Ֆ. Կլոյկերը (Johann Friedrich Kleuker), ով 1776 թ. գերմաներենով վերաթարգմանեց Անկետիլ-Դյուպերրոնի «Ջենդ-Ավեստա»-ի թարգմանությունը և հրատարակեց:

Ճշմարտությունն այն էր սակայն, որ այսպիսի թեժ վեճ վարողներից ոչ ոք իր տեղից վեր չկացավ և չմեկնեց Հնդկաստան՝ ճշմարտությունը ստուգելու: Նրանք, որ ընդունում էին, ընդունում էին առանց քննադատության, իսկ նրանք, որ մերժում էին, մերժում էին առանց վերլուծելու և երբեմն մաս առանց ընթերցելու: Սակայն ճշմարտությունը կանգնած էր դրանց մեջտեղում, քանի որ ինչքան էլ Դյուպերրոնի աշխատանքն ազնիվ լիներ, այն դեռ շատ սխալներ ու մեծ թերություններ էր պարունակում: Դժբախտաբար մի քանի տասնամյակ անցավ, մինչև գիտնականները կրկին անդրադարձան «Ավեստա»-ին և փորձեցին ստուգել Անկետիլ-Դյուպերրոնի հայթայթած տեղեկությունները:

Հեղրագա ուսումնասիրողները: Սառույցը սկսեց շարժվել ԺԹ դարի առաջին քառորդին, երբ դանիացի մի գիտնական՝ Ռասմուս (Էմմանուիլ) Ռասկ անունով, հրատարակեց մի փոքրածավալ աշխատություն, որտեղ փորձեց գիտականորեն պաշտպանել գենդերենի իսկությունը: Ռասկը, այս աշխատության մեջ¹⁷³ ամփոփելով իր՝

¹⁷³ Այն գրված էր դաներենով և գերմաներեն թարգմանված Heinrich von der Hagen-ի կողմից՝ *Über das Alter und die Echtheit der Zend-Sprache und des Zend-Avesta* (Berlin,

Հնդկաստանում կատարած ուսումնասիրությունների արդյունքները, ցույց տվեց, որ զենդերենը ոչ միայն իսկական պատմական լեզու է եղել, որով իրապես խոսել են հնում, այլև սպացուցեց, որ այն չի ծագում սանսկրիտից և դրա մի բարբառը չէ, ինչպես կարծում էր ուսումնասիրողների մի մասը¹⁷⁴:

«Ավեստա»-ի ուսումնասիրության գործում կտրուկ փոփոխություններ առաջ բերող մարդը, սակայն, եղավ Դյուպերրոնի հայրենակից Էժեն Բյուրնուֆը (Eugène Burnouf), ով փոփոխություններ մտցրեց հենց հետազոտություն մեթոդաբանության մեջ: Դեռևս լինելով քսանչորսամյա հետազոտող, ով Հնդկաստանում տարված էր հնդկական լեզուների տարածման հարավային սահմանը որոշելով, նա որոշեց ընդլայնել իր հետազոտությունների շրջանակը և անցավ հնդկական և իրանական լեզուների միջև եղած կապերի հետազոտմանը: Այսպիսով՝ նա սկսեց իրանական լեզուների, մասնավորապես դրանց մեջ եղած ամենահին լեզվի՝ ավեստերենի ուսումնասիրությունը: Օգտագործելով այդ ժամանակներում գերմանացի գիտնական Ֆ. Բոպպի հիմնադրած լեզուների համեմատության կամ ավելի ճիշտ՝ համեմատական լեզվաբանության հանճարեղ մեթոդները՝ Բյուրնուֆը, ավելի առաջ անցնելով Ռասկից, կարողացավ օգտագործել ավեստերենի և սանսկրիտի ցեղակցությունը հոգուտ ավեստերենի՝ վերջինիս քերականական և բառապաշարային մութ անկյունները լուսավորելու համար: Նրա աշխատությունները հետագա ուսումնասիրողների համար ծառայեցին որպես փարոս և ցույց տվե-

1826), որի բովանդակությունը հիմնական նույնությամբ ներկայացված է Բոմբեյի Արքայական ասիական հասարակության առջև 1832 թ. ընթերցված զեկույցում՝ “Remarks on the Zend Language, and the Zendavesta: In a Letter from the Late Professor Emanuel Rask, F.M.R.A.S., &c. &c., to the Honourable Mountstuart Elphinstone, M.R.A.S., Then President of the Literary Society at Bombay”, *Transactions of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland*, Vol. 3, No. 3(1834), pp. 524-540:

¹⁷⁴ Նրանք, ովքեր այդպես էին կարծում, հիմնվում էին սանսկրիտի ու զենդերենի (այսինքն՝ ավեստերենի) նմանությունների վրա: Ինչպես պարզվեց հետագայում, ավեստերենն ու սանսկրիտը միմյանցից չեն ծագում, այլ բույր լեզուներ են՝ ծագած մեկ ընդհանուր հնդիրանական նախնուց:

ցին, թե ինչպես պետք է կատարվի «Ավեստա»-ի ուսումնասիրությունը¹⁷⁵: Շատերն էին հետազայում, որ մեծ գովասանքով էին խոսում այս վաղաժամ մահացած գիտնականի մասին¹⁷⁶:

Է. Բյուրնուֆից հետո այլ նշանավոր դեմքեր առաջ եկան, ինչպիսիք էին դանիացի Վեստերգաարդը, գերմանացիներ Ֆր. Վինդիշմանը, Մարտին Հաուզն ու Ֆրիդրիխ Շպիգելը: Հատկապես հայտնի դարձան վերջին երկուսը, ովքեր երիտասարդ տարիքից սկսեցին ուսումնասիրել ինչպես «Ավեստա»-ն, այնպես էլ պահլավական գրականությունը և մեծ ներդրում ունեցան դրանց ուսումնասիրության հարցում: Շպիգելը հետազայում թարգմանեց «Ավեստա»-ն¹⁷⁷, իսկ Հաուզը, բացի մեծ հետազոտական աշխատանք կատարելուց և թարգմանություններ անելուց, կարողացավ մի շարք հայտնագործություններ և ճշգրտումներ անել, որոնք հետազայում ընդունվեցին գրադաշտականությունն ու «Ավեստա»-ն ուսումնասիրող բազմաթիվ գիտնականների կողմից: Դրանցից ամենակարևորն էին Յասնայի գաթայական հատվածի առանձնացումը և դա որպես Ջրադաշտի կամ նրա մերձավոր ժամանակակիցների ստեղծագործություն դիտարկելը¹⁷⁸:

Այդ ժամանակ էր, որ «Ավեստա»-ն ուսումնասիրողների մեջ առաջացավ մի հակասություն, որ երկու ճամբարի բաժանեց ուսումնասիրողներին: Դրանցից մեկն «Ավեստա»-ի բովանդակության լու-

¹⁷⁵ Նա հրատարակեց Ավեստայի մի քանի հատվածների քննական թարգմանությունը, որոնք էին *Vendidad Sade, l'un des livres de Zoroastre* (1829-1843) և *Commentaire sur le Yaçna, l'un des livres liturgiques des Parses* (1833-1835):

¹⁷⁶ Այդ թվում ԺԺ դարի հայտնի արևելագետներ Ջ. Դարմստետերը և Ֆր. Մաքս Մյուլլերը, որոնցից վերջինն իր ինքնակենսագրության մեջ մեծ երախտագիտությամբ ու խորին հարգանքով է խոսում իր դասախոսի մասին:

¹⁷⁷ Spiegel Fr., *Avesta, die heiligen Schriften der Parsen*: I Band (*Vendidad*), Leipzig, 1852; II Band (*Vispered und Yaçna*), Wien, 1858; III Band (*Khorda-Avesta*), Leipzig, 1863.

¹⁷⁸ Թեև երկու առանձին լեզվական շերտերի (հին և նոր) գոյությունը Ավեստայի մեջ նկատվել էր արդեն Շպիգելի կողմից (*Avesta*, I bd, s. 13: "...der Dialect, in welchem der zweite Theil des Yaçna geschrieben ist, der älteste sein muss, da er in den anderen Theilen des Avesta bereits vorausgesetzt wird."), բայց դրանք հստակորեն առանձնացվել և վերագրվել են Ջրադաշտին Հաուզի կողմից:

սաքանման համար որպես աղբյուր էր ընդունում փարսի հոգևորականների պահպանած ավանդական մեկնաբանությունները, այսինքն՝ պահավերենով (միջին պարսկերենով) պահպանված քարգմանություններն ու մեկնությունները, իսկ մյուսը փորձում էր խնդիրները լուծել հնդկական սուրբ գրքերի՝ Վեդաների հետ համեմատության միջոցով¹⁷⁹: Դրանք կարելի է կոչել *ավանդական* և *համեմատական* դպրոցներ¹⁸⁰, որոնց առաջնորդներն էին համապատասխանաբար Ֆր. Շպիգելը և Մ. Հաուզը:

Խնդիրը փաստացիորեն այն էր, որ գրադաշտական ուշ շրջանի մեկնությունները, թեև շատ օգտակար տեղեկություններ էին պարունակում «Ավեստա»-ի ուսումնասիրության համար, բայց տրամաբանորեն նաև մեծապես ազդված էին ուշ ժամանակներում ապրած մեկնիչների սեփական գաղափարներից ու պատկերացումներից: Այն երկար ժամանակը, որ ընկած էր «Ավեստա»-ի հեղինակների ու պահլավ մեկնիչների միջև, չէր կարող առանց ազդեցության մնալ: Մյուս կողմից, թեև Վեդաները ժամանակային առումով ավելի մոտ էին կանգած «Ավեստա»-ի հեղինակներին, սակայն մեկ այլ կրոնական ավանդություն էին ներկայացնում: Երկու դպրոցներն էլ ունեին իրենց թերությունները և առավելությունները, ինչն անհրաժեշտ էր դարձնում նրանց միասնական օգտագործումը: Չնայած այն բանին, որ սա է, ըստ ամենայնի, ամենից տրամաբանական և առողջ մտեցումն այս հարցին, այնուամենայնիվ խնդիրն այսօր իսկ շարունակում է արդի մնալ¹⁸¹ և «Ավեստա»-ի մեկնության ու քարգմանության հարցում դեռ շատ մութ կետեր կան:

¹⁷⁹ Վերջիններս այսպես էին վարվում, քանի որ սանսկրիտով գրված Վեդաներն իրենց լեզվական մտածողությամբ ու առասպելաբանությամբ զգալիորեն նման էին «Ավեստա»-ի հեղինակներին՝ իրենց ընդհանուր ծագման շնորհիվ: Այս կերպ նրանք դնում էին համեմատական առասպելաբանության ու լեզվաբանության հիմնասյուները:

¹⁸⁰ Դրանց նկարագրությունը տես Darmesteter J., *The Zend Avesta*, SBE, vol. IV, pp. xxv-xxix:

¹⁸¹ Այս խնդիրը նաև արժարժված է Ալբերտ դե Յոնգի *Traditions of the Magi* (Brill, 1997, pp. 58-60) աշխատության մեջ:

Չրադաշտականության ուսումնասիրությունների համար մեծ նվաճում էր Կառլ Գելլդների հրատարակած «Ավեստա»-ի եռահատոր քննական բնագիրը, որ լույս տեսավ Stuttgart-ում 1886-1896 թվականներին Avesta, The Sacred Books of the Parsees վերնագրով:

Այսպիսով՝ զրադաշտականության ուսումնասիրությունը առաջ էր գնում և առաջ բերում նորանոր ձեռքբերումներ իրանագիտության բնագավառում: Ուսումնասիրվում էին նաև պահլավական տարբերկեր, որոնք աստիճանաբար հրատարակվում էին, հատկապես հարուստ փարսի հովանավորների կատարած արժեքավոր ջանքերով: Առաջ եկան այնպիսի կարևոր ուսումնասիրողներ, ինչպիսիք էին՝ Edward W. West, James Darmesteter, Wilhelm Geiger, Theodor Nöldeke, Jamshedji J. Modi, Abraham V. Williams-Jackson և այլոք: Կարևոր իրադարձություն էին արևելագետ Ֆր. Մաքս Մյուլլերի խմբագրությամբ Օքսֆորդում լույս տեսնող «Արևելքի Սուրբ Գրքեր» (Sacred books of the East) հիսուն հատորանոց նշանավոր ժողովածուի մեջ հրատարակված «Ավեստա»-ի (J. Darmesteter, L. H. Mills) և պահլավական տարբեր կարևոր երկերի (E. W. West) թարգմանությունները: Այս ուսումնասիրությունները մեծ հայտնիություն բերեցին զրադաշտական կրոնին և նրա հիմնադիր Չրադաշտին: Այս հայտնիության մասնակի արդյունք էր գերմանացի փիլիսոփա Ֆր. Նիցշեի Also Sprach Zarathushtra («Այսպես խոսեց Չրադաշտը») փիլիսոփայական երկը, որը, չնայած իր անվանը, գաղափարական ոչ մի նմանություն չուներ զրադաշտականության հետ:

Եվրոպական գիտնականների ուսումնասիրություններն իրենց հերթին խթան հանդիսացան ուսումնասեր փարսի հոգևորականների նոր սերնդի համար, որպեսզի նրանք ևս այս ոլորտում գիտական հետազոտություններ կատարելու ցանկություն ձեռք բերեն: Նրանց մենք պետք է շնորհակալ լինենք բազմաթիվ պահլավական գրական հուշարձանների քննական հրատարակությունների և թարգմանությունների համար: Նրանց մեջ հատկապես աչքի էր ընկնում Ջիվանջի Ջամշեդջի Մոդին, ում բազմաթիվ ուսումնասիրություններն



Էդուարդ Ու. Ուեսթ
(նկարը՝ www.royalasiaticsociety.org
կայքից)



*Ջեյնս Դարմստերեր (նկարը՝
Selected essays of J. Darmsteter,
1895 զրքից)*



Մերի Բոյս
(նկարը՝ www.indiran.org կայքից)

ամփոփվեցին գրադաշտականների կրոնական ծեսերն ու սովորույթներն ամբողջական կերպով նկարագրող իր անգլից գրքով, որ կոչվում էր *The Religious ceremonies and customs of the Parsees (Bombay, 1922)*:

Քսաներոդո դարի ընթացքում էլ շարունակվեցին գրադաշտական ուսումնասիրությունները, սակայն արդեն առանց խոշոր ցնցումների: Ուսումնասիրողների համար կարևոր ու առանցքային թեմաներ էին ավեստայական գաթաների թարգմանությունը և Ջրադաշտի կյանքի մանրամասնությունները: Ուշագրավ մեծ ձեռքբերում էր Խրիստիան Բարթոլոմեի կազմած Հինիրանական բառարանը (*Altiranisches Wörterbuch*), որ հրատարակվեց 1904 թ.: Այս գիրքն ամփոփում էր ողջ ավեստայական, ինչպես և հին պարսկական բառապաշարը: Բերված ամեն բառի տակ բերված են դրա օգտագործման բոլոր դեպքերը, ներկայացված են բառերի թարգմանությունը, օգտագործման օրինակները և այլ կարևոր տեղեկություններ: Այս բառարանը մինչ այսօր էլ մնում է անփոխարինելի¹⁸²:

Գաթաների՝ «Ավեստա»-ի ամենահին հատվածի թարգմանությունները շարունակել և շարունակում են վիճաբանությունների ու տարաձայնությունների պատճառ մնալ: Ինչպես Բարթոլոմեի (1905), այնպես էլ Հ. Հունթախի (առաջինը՝ 1959 և երկրորդը՝ 1991)¹⁸³ և այլոց թարգմանությունները վերջնական չեն և երբեք միանշանակորեն չեն ընդունվում գիտնականների կողմից: Ջրադաշտի կյանքի մանրամասները՝ կապված նրա ծննդավայրի և ծննդյան ժամանակի հետ, նույնպես բաց են քննարկման համար և երբեմն պատճառ են դառնում այնպիսի անսովոր տեսությունների, ինչպիսիք առաջ էին քաշել Ի. Ս. Nyberg-ը և Է. Herzfeld-ը¹⁸⁴, որոնց քննական անդրադարձ է կա-

¹⁸² Schmitt R., “Bartholomae, Christian”, *Encyclopaedia Iranica*,

<http://www.iranicaonline.org/articles/bartholomae-christian-german>.

¹⁸³ Humbach, H., *The Gāthās of Zarathushtra and the other Old Avestan texts* (in 2 parts), in collaboration with J. Elfenbein and P. O. Skjærvø, Heidelberg, 1991.

¹⁸⁴ Առաջինը Ջրադաշտին համարում է շամանական ինչ-որ կրոնի քուրմ, որ տեսիլքներ էր տեսնում քրմական գործողությունների ժամանակ, իսկ երկրորդը Ջրադաշտին

տարում Վ. Բ. Հեննինգը իր *Zoroaster; Politician or Witch-Doctor* (1951) վերնագրված դասախոսությունների շարքում:

Քսաներորդ դարի գրադաշտականությունն ուսումնասիրող հայտնի գիտնականներից է *Mary Boyce*-ը, ով, գրադաշտական և մանիքեական գրականությունների վերաբերյալ գրված կարևոր հոդվածներից ու աշխատություններից բացի, հեղինակել է նաև գրադաշտականության պատմությանը նվիրված եռահատոր *A history of Zoroastrianism* (1975-1991) կարևոր աշխատությունը¹⁸⁵: Այլ հայտնի և կարևոր ժամանակակից ուսումնասիրողներ են՝ *Prods O. Skjærvø* (Harvard), *Michael Stausberg* (Bergen), *Almut Hintze* (SOAS, London), *Franz Grenet* (Colège de France), *Albert de Jong* (Leiden) և այլք:

դարձրել է Աքեմենյան ժամանակաշրջանի քաղաքական գործիչ (երկուսի աշխատությունների քննությունը տե՛ս *Henning, W. B., Zoroaster: Politician or Witch Doctor?*, 1951):

¹⁸⁵ Գրքի չորրորդ հատորը դեռ հրատարակված չէ:

Նշումներ քարգմանված տեքստերի վերաբերյալ

1. Տեքստում առկա հատուկ անունները մեծ մասամբ տառադարձված են բնագրին մոտ հնչողությամբ: Բացառություն է արվել միայն հայ դասական աղբյուրներում հանդիպող և որոշակի ձևով արդեն հայտնի անունների դեպքում, ինչպես, օրինակ, Արտաշիր (= Ardashēr), Շապուհ (= Šāpuhr), Ջրադաշտ (= Zarduxšt) և այլն:

2. Տեքստում առկա որոշ նախադասությունների արտահայտած միտքն ամբողջացնելու նպատակով որոշ դեպքերում բառեր են ավելացվել, որոնք չեն հանդիպում բնագրում: Այդպիսի դեպքերում ավելացված բառերը ներառված են քառակուսի փակագծերի [...] մեջ:

3. Երբեմն տեքստում հայերեն քարգմանության միտքն ավելի լավ լուսաբանելու համար (...) փակագծերի մեջ ներկայացվել է բուն պահլավերեն բառը կամ արտահայտության միտքը լրացնող բացատրություն:

4. Պահլավերենի դժվարընթեռնելիության պատճառով երբեմն որոշ հատուկ անունների ընթերցումը միայն ենթադրական է: Նման դեպքերում անուններից առաջ դրված է աստղանիշ (*):

5. Ծանոթագրությունները բաժանված են երկու մասի՝ ենթատղային և վերջնային: Ենթատղային ծանոթագրություններում հիմնականում քննարկված են բնագրի և բառերի ընթերցանության հետ կապված խնդիրները: Վերջում տեղադրված են բովանդակային և բացատրական ծանոթագրությունները:

6. Տողատակերում տրված հղումները երբեմն ամբողջական չեն (օրինակ՝ MacKenzie, IIJ 27: p. 160): Դրանց ամբողջական տարբերակը կարելի է գտնել «Ընդհանուր մատենագանկ» բաժնում:

**2. ՋՐԱԴԱՇՏԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ
ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

(ըստ միջին պարսկական սկզբնաղբյուրների)

Գրքի այս հատվածի նպատակն է պահլավական (միջին պարսկական) գրադաշտական գրականությունից ընտրված հատվածներով ընթերցողին ներկայացնել գրադաշտական կրոնը, այնպիսին, ինչպիսին այն ընդունված էր ուշ ասասնյան շրջանից սկսած մինչև ԺԸ-ԺԹ դարերն ընկած ժամանակահատվածում¹⁸⁶: Կարելի է ասել, որ այս շրջանի գրադաշտական կրոնական պատկերացումները բավական համապատասխանում են նոր ավեստայական¹⁸⁷ հավատալիքային համակարգին: Թեև վաղ գրադաշտականության շրջանի կրոնական դրությունն այդքան էլ ամբողջական ու հստակ կերպով չի պահպանվել «Նոր Ավեստա»-ում, սակայն այնուամենայնիվ դավանաբանական ու առասպելաբանական առումով մեծ նմանություններ առկա են (չար ու բարի աշխարհների գոյության հետ կապված մանրամասները, առասպելական կերպարները ևլն):

Ներկայացված են մասնավորապես աշխարհի ծագման, դրա առասպելական (գրադաշտական) պատմության և աշխարհի ավարտի մասին պատմող հատվածները, ինչպես նաև գրադաշտականության հիմնադրի վերաբերյալ պահպանված պատմություններն ու առասպելները:

Այս հատվածները գլխավորապես թարգմանված են երկու կարևոր պահլավական մատյաններից՝ «Բունդահիշն»-ից (*Bundahišn*)¹⁸⁸

¹⁸⁶ Մեզ հասած գրադաշտական կրոնական համակարգը և գրականությունն այժմ ուսումնասիրողների կողմից թվագրվում են մ. թ. Թ դարով: Սակայն եղած տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ այդ համակարգն իր տեսքը ստացել է Ջ դարում: Մյուս կողմից՝ ժամանակակից գրադաշտականությունը որոշակիորեն տարբեր է դասական գր.-ից, ինչի պատճառ է քրիստոնեական ազդեցությունը ԺԹ դարում: Այս պատճառով է, որ մեզ վերաբերող հատվածը ընդգրկում են Ջ-ԺԹ դարերի միջև:

¹⁸⁷ «Ավեստա»-ի մեծամասնություն կազմող այն հատվածները, որոնք գրված են «ուշ ավեստերենով» և ավելի ուշ են ստեղծվել, քան Ջրադաշտին վերագրվող յոթ գաթայական երգերը, որոնց լեզուն տարբեր է վերջիններից (տե՛ս «Ներածություն գրադաշտական կրոնի»):

¹⁸⁸ Թարգմանության համար օգտագործել են F. Pakzad-ի կազմած բնագրի քննական տառադարձությունը, որում օգտագործվել են «Բունդահիշն»-ի առկա ձեռագրային բոլոր տարբերակները, իրանական տարբերակը պարսկալի (IrBd)՝ TD1, TD2, DH, K43, հնդկականը (InBd)՝ K20, K20b, K20c, M51 (*Bundahišn, Zoroastriische Kosmogonie und Kosmologie, Band I, Tehran, 2005*):

և «Հատընտիր Չադսպարամի»-ից (*Wizīdagihā ī Zādsparam*)¹⁸⁹, որոնք մեզ հասած պահլավական կրոնական գրականության կարևորագույն աշխատություններից երկուսն են և պարունակում են այնպիսի տեղեկություններ, որոնք ամենայն հավանականությամբ քաղված են եղել «Ավեստա»-ի արդեն կորսված գրքերից:

2.1. ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՐՈՒՄԸ

(ըստ «Հատընտիր Չադսպարամի» մատյանի)

Չրադաշտական պատկերացումներն աշխարհի արարման, դրա բնույթի և էության մասին մեզ են հասել գլխավորապես միջին պարսկերենով գրված մի քանի աշխատությունների միջոցով: Մերօրյա «Ավեստա»-ում այնպիսի հատվածները, որոնք մեզ կօգնեին ամբողջական պատկերացում կազմել տվյալ թեմայի շուրջ, բացակայում են՝ վերջինիս վատ պահպանված լինելու պատճառով: Աշխարհի արարման մասին քիչ թե շատ ամբողջական պատմություններ, տեղեկություններ պահպանվել են գլխավորապես միջին պարսկական *Bundahišn* և *Wizīdagihā ī Zādsparam* երկերում, որոնց ներկայացրած բովանդակությունը մեր գլխավոր առաջնորդն է այս հարցում: Թեև այս երկերում ներկայացված ավանդությունները համարվում են վերջին հազարամյակում գրադաշտականների կողմից պաշտոնապես ընդունված տարբերակը, սակայն պետք է նշել, որ դրանք միակը չեն եղել: Այդ մասին է վկայում թեկուզ հենց Ե դարի հեղինակ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատության՝ պարսկական կրոնի վերաբերյալ հատվածում ներկայացված ավանդությունը, որը, որքան էլ համառոտ ու հավանաբար, ինչպես նաև մասամբ աղավաղված, մեծապես խոսում է այն մասին, որ գրադաշտական պատկերացումներ-

¹⁸⁹ Թարգմանության համար օգտագործել են՝ Rashed-Mohassel M. T., *Vizīdagihā ī Zādisparam, Persian Translation, Transcription, Comentary, Glossary and Pahlavi text*, IHCS, Tehran, 2011, ինչպես նաև Ph. Gignoux et A. Tafazzoli, *Anthologie de Zādspram*, Paris, 1993, աշխատություններում հրատարակված քննական բնագրերը:

րը միատարր ու միաձայն չեն եղել այս կրոնի պատմության ողջ ընթացքում¹⁹⁰:

Այստեղ գրադաշտական աշխարհարարման ավանդություններն ու պատկերացումները ներկայացնելիս անշուշտ գերազանցությունը տրվել է բուն գրադաշտական աղբյուրներին (վերոնշյալ պահլավական երկու երկերը), որոնք էլ, ըստ ամենայնի, ուղղակի ավանդության կրողն են և մեծ մասամբ պահպանել են դեռևս հնդիրանական ժամանակներից եկող ժառանգական ավանդության շղթան:

Ըստ գրադաշտական պատկերացումների՝ տիեզերքը, բաժանված երկու հակադիր էությունների միջև, որոնց սահմանում դատարկ տարածություն է ընկած, միշտ էլ այդպես գոյություն է ունեցել և, ինչը կարևոր է նշել, միշտ էլ այդպես է գոյություն ունենալու: Սահմանի մի կողմում ընկած է անսահման լուսավորության տիրապետությունը, մյուս կողմում՝ անսահման խավարինը: Այս երկուսն ունեն իրենց համապատասխան անհատականացված առաջնորդները, որոնք իշխում են իրենց տիրույթներում: Անսահման Լուսավորության մեջ իշխում է Ահուրա-մազդան (ավեստ.՝ *ahura.mazdā*, որից էլ Օհրմազդ, Ռրմիզդ, Հորմոզդ և հայկական Արամազդ անունները), որ կոչվում է նաև Սպընտա-մաինյու, այսինքն՝ Բարի կամ Սուրբ ոգին, մինչդեռ խավարում է տիրում Չար ոգին՝ Անգրա-մաինյուն (ավեստ.՝ *anra.mainiiu* - > *Ahriman*): Երկուսի բնույթները կատարելապես հակադիր են ամեն ինչում. այն, ինչ բարի ու կենսատու է, գալիս է Ահուրամազդայից, այն, ինչ չար է ու մահաբեր՝ Անգրա-մաինյուից: Երկուսի բնույթները չեն կարող գոյակցել, քանի որ փոխադարձաբար վնասակար են:

Այս երկու ոգիներն իրար հետ չէին առնչվել, մինչև մի օր տգետ ու անտեղյակ Աիրիմանը չեկավ խավարի ու լուսի սահմանի մոտ: Նկատելով տարօրինակ լույսը՝ նա փորձեց անցնել սահմանը և այս տարածքները ևս իրեն ենթարկել: Սակայն այս մասին արդեն նա-

¹⁹⁰ Տե՛ս Եզնիկ Կողբացի, *Եղծ աղակոչոց* (Եղծ քէշին պարսից, գիրք Բ), քարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1994:

խապես գիտեր Օհրմագղը, ով և կանգնեցրեց ու ետ շարտեց նրան: Դա համարվում է Ահրիմանի առաջին հարձակումը լուսի վրա: Ջգալով Ահրիմանից պաշտպանվելու անհրաժեշտությունը և իր իմաստության շնորհիվ իմանալով, թե ինչ պետք է անել դրա համար, Օհրմագղը ստեղծում է մեր այս աշխարհի ոգեղեն (mēnōgīg/y) տարբերակը, որը հետագայում հիմք պետք է դառնար նյութական աշխարհի ստեղծման համար:

Այստեղից էլ սկիզբ է առնում մեր աշխարհի գոյությունը (անշուշտ ըստ դասական գրադաշտական պատկերացումների), որը ստեղծված էր Օհրմագղի կողմից՝ պայքարում իրեն աջակցելու և Ահրիմանին պարտության մատնելու համար, և որը, գրադաշտական պատկերացումներով, պետք է դրանից տասներկու հազար տարի հետո վերջնական հաղթանակ բերեր Բարի ոգուն:

Այստեղ բերված հատվածը, որ Wizīdagīhā ī Zādsparam երկի առաջին գլուխն է, ներկայացնում է աշխարհի արարումը մինչև այն պահը, երբ Ահրիմանն իր երրորդ հարձակման ժամանակ մտնում է երկիր և Օհրմագղի ու յագատների կողմից բանտարկվում երկրի ընդերքում՝ դժոխքում:

(«Հատընտիր Չադսպարամի»)

Գլուխ Ա

Բարի (Սուրբ) և Չար ոգիների՝ իրար հետ խառնվելու մասին

1. Հավատքից այսպես է հայտնի, որ Լույսըⁱ վերևից էր, և Խավարըⁱⁱ ներքևից, և նրանց երկուսի միջև արձակ տարածություն (wišādagīh) կար:

2. Օհրմագղըⁱⁱⁱ լուսի մեջ էր, և Ահրիմանը^{iv} խավարի, և Օհրմագղը տեղյակ էր Ահրիմանի գոյությունից, ինչպես և նրա՝ Պայ-

քարի¹⁹¹ մեջ մտնելուց: Ահրիմանը Օհրմագրի Լույսի գոյությունից տեղյակ չէր:

3. Ահրիմանը մութ-խավարի մեջ անընդհատ թափառում էր ստորին ոլորտներում: Եվ հարձակման¹⁹² համար դեպի վեր եկավ և առջևում լուսավորության եզրը տեսավ: Եվ դրա տարաբնույթության պատճառով ջանաց դրան հասնել և այնպես, ինչպես խավարի վրա էր իշխում, այդտեղ ևս իշխել:

4. Երբ [Ահրիմանը] մոտեցավ սահմանին, Օհրմագրը, Ահրիմանին իր տիրույթից հեռու պահելու համար, առաջ եկավ ճակատամարտի համար և իր օրինավոր սուրբ խոսքով նրան հաղթեց և ետ՝ դեպի խավար նետեց: Չարից պաշտպանվելու համար այն բարձունքում հոգևոր կերպով ստեղծեց երկրի, ջրի, բույսերի, կենդանիների, մարդկանց և կրակի ոգիները: Եվ 3000 տարի ետ պահեց [Չար ոգուն]:

5. Ահրիմանն էլ խավարում զենքեր պատրաստեց: 3000 տարվա ավարտին կրկին դեպի սահմանը եկավ: Սպառնաց և ոռնաց, թե՛ «Կսպանեմ քեզ, կսպանեմ քո արարածներին և քո, որ Սուրբ ոգին՝ Ես, արարածներին ամբողջությամբ կոչնչացնեմ»:

6. Օհրմագրը պատասխանեց, թե՛ «Ամենակարող չես դու, ո՛վ Չարք»:

7. Կրկին սպառնաց Ահրիմանը. «Կդարձնեմ քո ողջ մարմնավոր արարածներին ի թշնամություն քո և ի բարեկամություն իմ»:

¹⁹¹ Թեև պահլավական այբուբենում մեծատառեր չկան, բայց այստեղ մեծատառով որոշեցի արտահայտել այն հասկացությունները, որոնք անհատական ու եզակի նշանակություն ունեն և հենց պահլավական տեքստերում վերաբերում են առանձին երևույթների, ինչպես այս դեպքում խոսքը Օհրմագր-Ահրիման պայքարի մասին է:

¹⁹² Բնագրում գրված է *handāzišnīg (rāy)*, որի իմաստն առաջին հայացքից այդքան էլ հստակ չէ: Ռ-աշեղ-Մոհասսեղը (*Wizīdagīhā ī Zādisparam*, Tehran, 2011) և Նալբանդյանը (*Պահլ.-հայերեն բառարան*, Երևան, 1994)) այն «հարձակում» են թարգմանում, ինչպես և այստեղ է տրված, սակայն ինձ համար այդքան էլ պարզ չէ, թե ի՞նչ ստուգաբանական հիմքերի վրա է կանգնում այս թարգմանությունը: Ժինո-Թաֆազոլիի (*Ph. Gignoux et A. Tafazzoli, Anthologie de Zādspram*, Paris, 1993) թարգմանության մեջ տրված է «պատահականորեն», որ հավանաբար հիմնվում է *handāzišn* բառի «պատու-ություն» իմաստի վրա (*MacKenzie, Pahl. dict.*, p. 42):

8. Օհրմագողը *հոգևոր իմաստություն* (mēnōg-xradīh) միջոցով տեսավ, որ այն, ինչ Ահրիմանը սպառնաց, ի գորու է իրագործել, եթե չլինի պատերազմի համար որոշակի ժամանակահատված:

9. Եվ Ժամանակից^{vi} օգնություն ուզեց, քանի որ տեսավ, որ Ահրիմանը ոչ մի լուսավոր բանի (այսինքն՝ օհրմագողական արարածներին) միջնորդությունը չի ընդունի: Ժամանակը երկուսին է պատկանում: Եվ աջակցության ու բարեկարգության համար նրա կարիքն ունի:

10. Եվ [պատերազմի ժամանակը] երեք ժամանակաշրջանի բաժանեց և ամեն շրջանը երեք հազարամյակ [ունի]:

11. Ահրիմանը համաձայնվեց:

12. Օհրմագողը տեսավ, որ եթե Ահրիմանին շրջափակել չլինի, միշտ, երբ կցանկանա, դեպի իր տիրույթը, որն է խավարը, կգնա, շատ զենք կստեղծի և անվերջ պայքար կլինի: Եվ ժամանակը սահմանելուց ահունվար^{vii} երգեց:

13. Եվ ահունվարով երեք պատկեր (կամ օրինակ) նրան (Ահրիմանին) ցույց տվեց:

14. Առաջինն է այն, որ այն, ինչ առաքինի է, Օհրմագողի կամքն է:

15. Սրանից հայտնի է, որ եթե այն, ինչ առաքինի է, Օհրմագողի կամքն է, ապա պարզ է, որ կա բան, որ դուրս է Օհրմագողի կամքից. [այսինքն] վնասը ծագում է հակառակաբնույթ չարի էությունից:

16. Երկրորդն է այն, որ ով կկատարի այն, ինչ Օհրմագողի կամքն է, նրա հատուցումն է արժանավոր պարգևը: Նա, ով չի կատարի Օհրմագողի կամքը, նրա բաժինն է վաստակած պատիժը:

17. Սրանից երևում են բարեգործների վարձքը և մեղսագործների պատիժը, դրանից էլ՝ դրախտ-դժոխքի մատյանը^{viii}:

18. Երրորդն այն ցույց տվեց, որ նա՝ է ավելացնում (գորացնում) Օհրմագողի իշխանությունը, ով բացատրում է աղքատներին թշնամա-

կերպությունը (այս.՝ աղքատությունը, տգիտությունը և այլ անհիմնական երևույթները)¹⁹³:

19. Եվ նրան ցույց տվեց ունևորների՝ չունևորներին օգնական լինելը, իմացողների՝ չիմացողներին ուսուցանելը, մեծահարուստների՝ չքավորներին ողորմություն տալը և հենց Օհրմագդի արարածների միմյանց օգնության հասնելն այս կռիվ-պատերազմում:

20. Ինչպես նաև Հրաշակերտությունը^{ix} (կամ Նորակերտությունը) հետևյալ երեք բանով հնարավոր կլինի:

21. Առաջինն է ուղղահավաստությունը, որ կայանում է երկարմատության (dō-buništāgih)^x սկզբունքի ընդունման մեջ, այն ձևով, որ Օհրմագդն ամբողջությամբ բարություն է և ոչ-չարություն, և նրա կամքն ամբողջությամբ առաքինի է: Եվ որ Ահրիմանն ամբողջությամբ չարություն է և ոչ-բարություն:

22. Երկրորդն է բարի գործ անողների հույսը՝ պարզևի, վախը՝ պատժի, հատուցման համար, ձգտումը բարեգործության և խուսափումը մեղքից:

23. Եվ երրորդն է [բարի] արարածների միմյանց փոխօգնական լինելը: Եվ փոխօգնությունից կգա գորակցությունը, և գորակցությունից կգա հաղթանակը Թշնամու նկատմամբ, որը և է՝ Հրաշակերտությունը:

¹⁹³ Այս հատվածը տարբեր կերպ է մեկնաբանվել ու թարգմանվել: Ահա դրա տառադարձությունը ըստ բնագրի՝ *sidīgar nimūd kū xwadāyīh ī dōhrmazd dōy abzāyēnēd ī dō driyōšān wizārīhēd pētyāragōmandīh*: Ռաշեդ-Մոհասսելը նախադասության վերջին հատվածը թարգմանել է՝ «ով փորձանքը աղքատներից հեռու կտանի»: Իհարկե այս թարգմանության դժվարությունն այն է, որ *dō*-ն ուղղություն տվող մասնիկ է և տվյալ դեպքում չպետք է օգտագործվեր: Հավանական է սակայն, որ տեղի ունեցածը սուկ գրագիրների թույլ տված սխալի արդյունք լինի (*dōy driyōšān > dō driyōšān*, թելադրական սխալի արդյունք): Gignieux-Tafazzoli-ն, անտեսելով *wizārīhēd pētyāragōmandīh*, դրա տեղը դնում են *<srāyīšn dahēd>*, թարգմանաբար՝ «պաշտպանում է»: Վերջին տարբերակը, ըստ իս, քիչ հավանական է: Մեկ այլ թարգմանություն էլ կարելի է տալ՝ ելնելով *wizārīhēd* բառի մեկ այլ իմաստից. «...ով բաժանում է աղքատներին թշնամակերպությունից (աղքատությունից, տգիտությունից և այլ անհիմնական երևույթներից)»: Հնարավոր է, որ այս վերջինն է ճիշտ թարգմանությունը (եկնելով հաջորդ պարբերության բովանդակությունից), սակայն այն աղավաղվել է արտագրող գրագիրների թյուրըմբռնումից:

24. Այս խոսքի վրա [Ահրիմանը] ապշած մնաց և կրկին դժոխք ընկավ:

25. Օհրմագոն արարածներին նյութական կերպարանք տվեց աշխարհում, առաջինը՝ երկինքը, երկրորդը՝ ջուրը, երրորդը՝ երկիրը, չորրորդը՝ բույսը, հինգերորդը՝ կենդանիներին և վեցերորդը՝ մարդկանց, և [յոթերորդը] կրակը բոլորի մեջ էր բաժանված: Ամբողջը վեց տեսակով [ստեղծեց], և ամեն տեսակի ստեղծման ժամանակն այնքան էր, որքան, ինչպես ասվում է, մեկ թարթիչը մյուսի վրա դնելու համար է պետք:

26. 3000 տարի արարչությունը նյութական կերպարանքով էր և առանց շարժվելու: Արեգակը, լուսինը, աստղերը կանգնած էին վերևումանշարժ:

27. Ժամանակաշրջանի ավարտին Օհրմագոը տեսավ, թե՛ «Ի՞նչ օգուտ կա արարածներին արարելուց, եթե այն չտատանվող, չգնացող և չշարժվող է»: Եվ Երկնային տարածության (spīhr) ու Ջրվանի (այս.՝ Ժամանակ) օգնությամբ արարածներին շարժման մեջ դրեց:

28. Ջրվանն ի գորու էր¹⁹⁴ Օհրմագոյի արարածներին շարժական դարձնելու, առանց Ահրիմանին ևս այդպիսին դարձնելու, քանզի մեկը մյուսի բնույթին վնասող և հակասող էին:

29. Եվ Ավարտին նախապատրաստվելով՝ զենքեր՝ պատրաստված հենց Խավարի բնույթից, որին գրվանական ուժը [մասամբ] հարում է, և որը փտած է, գորտային, սև և մոխրագույն, տարավ Ահրիմանի առջև^{xi}:

30. Եվ առաջ տանելով [զենքերը]՝ ասաց [Ահրիմանին], թե՛ «Նրանց ի գորակցություն Ազը (ագահության դևը) քեզ կուտի, իսկ ինքը սովից կմահանա, եթե մինչև 9000 տարվա ավարտն այնպես,

¹⁹⁴ Gignieux-Tafazzoli-ն պահիլավերեն տեքստի մեջ այս բայից առաջ բացասական մասնիկ է դնում, որով իմաստը կտրուկ փոխվում է և դառնում «ի գորու չէր» (Zurwān <nē> ādīg būd – Zurwān fut incapable): Անկախ այն բանից, որ տվյալ հատվածի իմաստը դժվարըմբռնելի է, իրավունք չվերապահեցի տեքստի մեջ մնան կտրուկ փոփոխություն կատարելու:

ինչպես սպառնացիր, խոստացար և ժամանակ սահմանեցիր, չկատարես»:

31. Նույն ժամանակ Ահրիմանն իր գորակիցների հետ միասին երկնքի աստղային ոլորտը^{xii} եկավ:

32. Երկնքի հիմքն աստղային ոլորտում էր: Այդտեղից [բռնած, երկիրը] դեպի ներքև՝ Գատարկ Տարածություն քաշեց, որ Լույսի և Խավարի բնույթների միջև է և վայրն է Ճակատամարտի, և երկուսի (Ահրիմանի և Օհրմագրի) հարձակումներն այդտեղ են [լինում]:

33. Եվ այն Խավարը, որ իր հետ ուներ, երկնքի մեջ բերեց: Երկինքն այնպես դեպի խավարը քաշեց, որ երկնքի տանիքի ներսի մեկ երրորդի չափով մինչև աստղային շերտը հասավ:

- Հատվածի վերջ -

«Բունդահիշն» գրքում ներկայացված ավանդությունը հիմնականում նույնն է, ինչ այստեղ ներկայացվածը, բայց ի տարբերություն «Հատընտիր Չադսպարամի»՝ ունի ավելի ընդարձակ, թեև խառնիխուռն դասավորություն: Որպես առանձնապես աչքի ընկնող բացառություն են ժամանակին վերաբերող մի քանի հատվածները (1.35, 1.36, 1.42, 3.7), որտեղ ներկայացվում են Չրվանի կամ ժամանակի ստեղծումը Օհրմագրի կողմից և նրա ստեղծման պատճառները: Մինչդեռ այստեղ Չրվանը ոչ թե ստեղծվել է Օհրմագրի կողմից, այլ անկախ գոյություն է:

Այսպիսով՝ սկսվում է Ահրիմանի երրորդ և ամենագորեղ հարձակումը Օհրմագրի արարչության վրա, որի ժամանակ նա իր հետ է բերում բոլոր այն անմաքրություններն ու չարիքները, որ այսօր տեսնում ենք երկրի վրա, ինչպես նաև մասամբ չար հատկանիշներ է հաղորդում բարի արարածներին (ինչպես, օրինակ, երբ ծուխը խառնում է կրակի հետ՝ Բունդահիշն, 4.27, Հատ. Չադսպարամի, 2.12):

(«Հատընտիր Չաղապարամի»)

Գլուխ Բ

Ահրիմանի՝ [ohrimaqashkan] արարածների մեջ քափանցելու մասին

1. Հավատքից այսպես է հայտնի, որ [Ահրիմանը] Ֆրավարդին ամսում՝ Օհրմազդ օրը^{xiii} կեսօրին մոտ եկավ երկնքի սահմանին:

2. Երկինքը [նրա] հակառակ բնույթի պատճառով այնպես վախեցավ, ինչպես ոչխարն է գայլից դողում: Ահրիմանը սուրալով ու այրելով նրա վրա հարձակվեց:

3. Ապա ջրի վրա եկավ, որ երկրի տակ է տեղադրված, ու խավար, վատհամություն տվեց նրան:

4. Եվ հետո երկրի մեջտեղից դուրս եկավ: 5. Ինչպես մի օձ, մի անցքից դուրս եկավ և ողջ երկիրը վնասեց, և այն անցքը, որից դուրս եկավ, հենց ուղին է դեպի դժոխք, որով և անցնում են դևերն ու չարքերը:

6. Ապա Բույսի մոտ եկավ: 7. Մեկ բուն ուներ, և բարձրությունը մի քանի քայլ էր, և անճյուղ ու անկեղև էր, խոնավ ու քաղցր և բույսերի տեսակների ուժն իր բնույթի մեջ էր կրում և երկրի կենտրոնի մոտ էր: Եվ [Ահրիմանը] չորացրեց այն:

8. Ապա միաստեղծ (ēk-dād) Կովի^{xiv} մոտ եկավ: 9. Այնքան էր նրա բարձրությունը, որքան Գայոմարտինը^{xv}: Կանգնած էր Դաիթի գետի ափին՝ երկրի մեջտեղը: Եվ հեռու էր Գայոմարտից այնքան, որքան իր հասակն էր, նույն չափով էր և հեռու Դաիթի գետի ափից: Եվ էգ էր ու ճերմակ, լուսավոր, ինչպես լուսինը: Երբ Թշնամին վրա հասավ, Օհրմազդը մանգը^{xvi}, որ նա «բանգ» է կոչվում, նրան ուտելու համար տվեց և աչքին քսեց, որպեսզի հարվածից եկող ցավը, թշվառությունն ու դժբախտությունը քիչ լինի: Նյիհար և հիվանդ դարձավ: Աջ կողքի վրա ընկավ և մահացավ:

10. Նախքան [Ահրիմանը] կգար և կհասներ Գայոմարտին, ում բարձրությունը Չրադաշտի երեք հասակի չափ էր, և լուսավոր էր, ինչպես արեգակը, Օհրմազդը երազ ստեղծեց տասնհինգ տարեկան

մարդու կերպարանքով՝ լուսավոր և բարձր: Եվ այն ուղարկեց Գայոմարտի մոտ և քուն բերեց նրան այնքան երկարությամբ, որքան արտասանվում է յաթահուվախրյո [աղոթքը]^{xvii}:

11. Երբ քնից վեր կացավ և աչքերը բացեց, տեսավ, որ աշխարհը խավար էր, ինչպես գիշերը: Ամբողջ երկրի վրա օձ, կարիճ, գորտ և այլ տեսակ գեռուններ (խրաֆսթարներ^{xviii}), [վնասակար] չորքոտանիներ ու տարատեսակ թռչուններ այնպես են կանգնել, որ ողջ երկիրն այնպիսի վիճակի է հասել, որ ասեղի ծայրի չափով տեղ չկար, որտեղ գեռուններ (խրաֆսթարներ) չվխտային: Աբախսթարական Միիրը^{xix} աբախսթարական Լուսնի ու հինգ մոլորակների և այլ ածրահականման դեմք ու կերպարանք ունեցող խավարակերպերի գորակցությամբ հարձակվեց օդային տարածության երկայնքի վրա, և անուելի էր դևերի գոռում-գոչումը:

12. Վերջում կրակի վրա եկավ և խավար ու ծուխ նրան խառնեց:

13. Գոշուրվանը^{xx}, որ միաստեղծ կովի հոգին ինքն էր, երբ կովը մահացավ, դուրս եկավ նրա միջից, ինչպես հոգին է դուրս գալիս մահացածի մարմնից: Այս կերպով նա ողբալով ձայնը հասցրեց Օհրմազդին, ինչպես հազարավոր գորքը, եթե միանգամից սկսեր ողբալ:

14. Օհրմազդը սկզբում պաշտպանեց Գայոմարտին, այնքան, ինչքան կարող էր: Արարածների խառնակության պատճառով [Օհրմազդը]¹⁹⁵ երկրից երկինք գնաց: Եվ Գոշուրվանը ետևից ողբալով գնաց, թե՛ «Արարածների առաջնորդությունը ու՞ն են բողնում»:

15. Սա էր Ահրիմանի իշխանության բարձրագույն կետը, քանզի իր ողջ ուժերով, որ ուներ, արարածների ոչնչացման համար եկավ: Եվ երկնքի հիմքը մեկ երրորդի չափով ներքև [քաշեց], հիմքն էլ պաշարեց, այնպես, որ ամբողջը խավար էր, առանց լույսի: Քանզի հենց

¹⁹⁵ Քանի որ նշված չէ, թե վերջնականորեն ում մասին է խոսքը, Ռաշեդ-Մոհասսեդն այստեղ վակագծերի մեջ գրել է Գայոմարտի անունը, այնպես որ ստացվում է, թե Գայոմարտն է գնում երկինք: Սակայն հաշվի առնելով առասպելի ընդհանուր բնույթը և այն, որ Գայոմարտը երկինք չի գնում կամ տարվում, ավելի տեղին է ենթադրել, որ այստեղ խոսքը Օհրմազդի մասին է:

այն պահն էր, երբ Հակառակորդ-Թշնամին (Աիրիմանը) մտավ յազատների^{xxi} դեմ պատերազմի մեջ:

16. Եվ սա է սկիզբը Հրաշակերտության, քանզի մեծ չարքը, երբ ներս մտավ, նրա համարնույթ բոլոր ուժերն, օրեցօր քայքայման մեջ են, և Հրաշակերտությունն այն է, երբ ներխուժած բշնամին ամբողջովին հետ կվանվի:

17. Այս երկուսի միջև^{xxii} պատերազմն է խառնակության մեջ գտնվողների¹⁹⁶:

18. Եվ առաջ [եկավ] Աիրիմանը, թե՛ «Հաղթության հասա կատարելապես, քանզի կոտրեցի Երկինքը և փչացրի այն խավարով ու մթությանը ու պաշարեցի և աղտոտեցի ջուրը և ծակեցի Երկիրը և խավարով վնասեցի: Եվ չորացրի Բույսը և սպանեցի Կովին և հիվանդացրի Գայոմարտին և հաստատեցի հակառակ լուսատուներին՝ խավարներին աբախթարական^{xxiii}: Եվ գրավեցի աշխարհը: Չմնաց մարտում որևէ մեկը Օհրմազդի կեսից՝ բացի մի մարդուց, որ ինչ կարող է անել միայնակ»:

19. Եվ ուղարկեց Ասքվիհադին^{xxiv} հազար հայտնի (uzwārd) յասքերի^{xxv} հետ, որ հենց տարատեսակ հիվանդություններն են, որպեսզի հիվանդացնեն և սպանեն Գայոմարտին: Սակայն նրանք ելք չգտան, քանի որ վճիռ ուներ վճռարար Ջրվանը Աիրիմանի հարձակման սկզբից, թե՛ «Երեսուն ձմեռով քաջ Գայոմարտի կյանքի համար փրկություն կստեղծեմ»:

¹⁹⁶ Հատվածի պահլավերեն տարբերակն է mayān [i] ēn harw dō koxšišn ī gumēzag rāyenišnihā, որի երկրորդ հատվածը դժվար է միանշանակորեն թարգմանել: Հստակ է սա՝ «Այս երկուսի միջև, պատերազմն է ...»: Դժվար է ասել gumēzag rāyenišnihā արտահայտության իմաստը, որ տարբեր կերպով է թարգմանվում: Gignieux-Tafazzoli-ն այն թարգմանել է. «Այս երկու (դեպքերի) միջև (է) այն պատերազմը, որ տեղակայված է խառնակության դրության մեջ» (Entre ces deux (événements), (il y a) le combat aragnée dans l'état de mélange): Ռաշեդ-Մոհասսեդը թարգմանում է՝ «Այս երկուսի մեջտեղում (Աիրիմանի հարձակման և Հրաշակերտության) է տեղակայված խառը պատերազմը» (میان این هر دو (=هجوم اهریمن و فرسگرد)، نبرد آمیخته ترتیب یافته است):

20. Եվ դա երկնքում երևաց բարեգործ և չարագործ [երկնային մարմինների] դասավորությունից, ովքեր կարգավորում են խառնակության ժամանակաշրջանը:

21. Եվ նրանք այդ պատճառով մինչև երեսուն տարին լրանալը ճար չգտան [Գայոմարտին սպանելու], քանզի սկզբից այսպես էր նախասահմանվել, որ Օհրմագո աստղից^{xxvi} կենդանությունը գնաց արարածներին. ոչ թե իր բնույթի, այլ լուսավորներին գերի լինելու պատճառով^{xxvii}: Եվ Քեվան [աստղից] մահը գնաց արարածներին: Երկուսն էլ արարչության սկզբում իրենց բարձրագույն կետում էին: Քանզի Օհրմագո աստղը գտնվում էր Խեզզգետնի համաստեղության բարձրագույն կետում, որ «Կյանքեր»¹⁹⁷ (gyānān) է նաև կոչվում, որովհետև այն տեղն է, որտեղից կյանքն է բաժանվում: Քեվանն էլ Կշեռք համաստեղության մեջ էր՝ Երկրի ստորին բևեռում, որտեղ հենց մահվան ուժն է ավելի ակնհայտ ու գերիշխող: Երկուսի՝ [իրենց] բարձրագույն կետերում գտնվելու պատճառով Գայոմարտի կյանքն էլ շարունակվեց:

22. Եվ այլ երեսուն տարի Քեվանն իր բարձրագույն կետը, որ Կշեռք [համաստեղությունն] է, չեկավ^{xxviii}, և այն ժամանակ, երբ Քեվանը Կշեռք եկավ, Օհրմագոն Այծեղջյուր [համաստեղությունում] էր, և նրա ցածրության ու Քեվանի հաղթանակի պատճառով Գայոմարտը ձախ կողքի վրա ընկավ ու մահացավ:

- Հատվածի վերջ -

Օհրմագոյի «ծրագիրն» այն էր, որ Ահրիմանին նախ թողնի ներս մտնել այս աշխարհը, ապա, ելքը (երկնքի այն անցքը, որով Ահրիմանը մտել էր) փակելով, բանտարկի և աստիճանական պայքարի միջոցով քայքայի նրա ուժերը՝ մինչև Չարի վերջնական պարտություն: Այսպիսով՝ այս աշխարհը (և մասնավորապես երկրի ընդերքը) փաստացիորեն Ահրիմանի բանտն է, որտեղ վեցհազարամյա պայքար է

¹⁹⁷ Կարելի է թարգմանել նաև «Կյանքի»:

գնում, որի վերջում, երբ Ահրիմանը պարտվի և ետ՝ դեպի խավարը նետվի, կրկին կհաստատվի բարու իշխանությունը: Այս վեցհազարամյա շրջանը, որում մենք այժմ գտնվում ենք, պահլավական գրականության մեջ հայտնի է «Խառնակություն»՝ gumēzišn անունով:

Բայց հարկ է նաև նշել, որ Երկնքի ավաստե պատնեշով շրջափակված այս երկրագնդում^{xxix} նույնպես Ահրիմանին թույլատրված չէ ազատ թափառել և պատերազմել արարածների դեմ, քանի որ իննսուներոր տևած հաղթական ճակատամարտից հետո յազատները նրան և իր դևերին բանտարկել են երկրի խորքում՝ դժոխքում (Bund., 4.27)՝ այնտեղ, որտեղ նա իր հարձակման սկզբում անցք էր բացել և անցել միջով:

(«Հատընտիր Չադսպարամի)

Գլուխ Գ (հարված)

2. Երբ որ երկնքից ներս մտավ, Երկնքի ոգին, ինչպես մի արագալաց ռազմիկ, որ մետաղյա զրահներ ունի հագած, որպես հենց երկնքի տեղն է մետաղյա^{xxx}, բարձր գոչյունով ու հաստատորեն կանչելով, ասաց Ահրիմանին. «Արդ, որ ներս մտար, այլևս ետ չեմ թողնի քեզ»¹⁹⁸: [Այդտեղ] կանգնեց, մինչև Օհրմազդը երկնքի շուրջը մեկ այլ՝ ավելի ամուր պատնեշ դրեց, որ «Առաքինիների գիտակցություն» (ašd-āgāhēh) է կոչվում:

3. Եվ ռազմիկների առաքինի ֆրավահիր-ոգիները^{xxxi}, մնան նիզակակիր հեծյալների, այն պատնեշի շուրջը շարեց, ինչպես մագերը գլխի վրա, այնպես, ինչպես բանտապանները, որ բանտից դուրս են պահակում ու ներսում փակված թշնամուն դրա սահմաններից չեն թողնում դուրս գալ:

4. Նույն ժամանակ Ահրիմանը ջանաց, որ կրկին իր բնական տիրույթը վերադառնա, որն է խավարը, բայց ուղի չգտավ և կասկած-

¹⁹⁸ Այսինքն՝ չի թողնի, որ Ահրիմանը կրկին դեպի Խավար՝ իր իշխանություն վերադառնա:

ներով լեցուն (gumān-sahišnīhā) 9000 տարվա ավարտի և Հրաշակերտության սկսվելու վախճան իր էության մեջ թափանցեց:

- Հատվածի վերջ –

(«Բունդահիշն»)

4.27. ...Իննսուն օր ու գիշեր հոգևոր յազատները Չար ոգու և երկրի վրա եղած բոլոր դևերի հետ պատերազմում էին, մինչև նրանց պարտության մատնեցին և դեպի դժոխք շարտեցին և Երկինքը պատնեշեցին, որպեսզի Թշնամին նրան չկարողանա խառնվել:

- Հատվածի վերջ -

2.2. ՄԱՐԳՎՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ԶՐԱԳԱՇՏԻ ԳԱՆՈՒՄԸ

Ահրիմանի հարձակումից մինչև Զրադաշտի գալուստն ընկած ժամանակաշրջանն ընդգրկում է երեք հազար տարի: Այս հազարամյակն է խառը տիրապետության բուն ժամանակաշրջանը, քանի որ փոխադարձաբար և հաճախ համահավասար ուժերով իշխում են և՛ բարու, և՛ չարի ուժերը: Այս ժամանակաշրջանը սկսվում է Գայոմարտի կյանքի վերջին երեսուն տարով:

Մարդկանց ծագումը

(շարադրված ըստ «Բունդահիշն»-ի ԺԴ գլխի)

Երբ մահանում է Գայոմարտը՝ առաջին մարդը, նրա սերմը թափվում է հողի վրա: Դրա մի մասն իր մոտ պահպանության է վերց-

նում Ներյոսանգ յագատը^{xxxii}, իսկ մյուս մասը՝ Սպենդարմատը^{xxxiii} երկիրը ներկայացնող ամահրասպանը^{xxxiv}:

Այդպես՝ առանց ինչ-որ դեպքի, անցնում է հաջորդ քառասուն տարին: Քառասուն տարին լրանալուց հետո խավարծիլ (rēbās) բույսի նման հողից աճում է առաջին գույզը, որոնց կոչում էին Մաշե (ար.) և Մաշանե (իգ.): Նրանք սկզբում իրարից չէին տարբերվում և ավելի շատ նման էին վերոնշյալ բույսին: Շուտով սակայն Օհրմագողը հոգի և մարդակերպություն է նրանց պարգևում:

Բունդսահիշն, 14.11. «Ասաց Օհրմագող Մաշեին և Մաշանեին, թե՝ «Մարդ եք և աշխարհի ծնողքն եք և իմ ողջամտությամբ լավագույնն եք ստեղծվել: Գործ, դատողություն և ողջախոհություն արեք, բարի միտք մտածեք, բարի խոսք ասեք և բարի գործ կատարեք»»:

Այդպես էլ նրանք անում են, մինչև առաջին չարագործությունը այն երեքից^{xxxv}, որ նրանք գործում են իրենց կյանքի սկզբում. թշնամիները՝ Ահրիմանը և դևերն ազդում են նրանց մտքի վրա և խաբեությամբ նրանց համոզում են, որ այն ամենի արարիչը, որ նրանք տեսնում են, Ահրիմանն է: Դրանից հետո առաջին մարդիկ, մոլորված դևերի կողմից, փառաբանություն են մատուցում Չար ոգուն և բացականում. «Չար ոգին ստեղծեց ջուրը, երկիրը, բույսը, կենդանին և մնացած ամեն ինչը»:

Այս չարագործությունը կամ ավելի շուտ՝ մեղքը, ինչպես նաև հաջորդ երկուսը (որոնցից մեկը Մաշանեի ստախտությունն էր այծի կաթի վերաբերյալ, և մյուսը՝ դևերին կատարած զոհաբերությունը) ճակատագրական նշանակություն են ունենում երկուսի հետմահու կյանքի վրա՝ երկուսն էլ մահվանից հետո դժոխք են ընկնում:

Բունդսահիշն, 14.16. «Այսպես է ավում, որ առաջին ստախտությունը, որ նրանք ասացին, դևերի դրդմամբ ասացին: Չար ոգու առաջին ուրախությունը նրանցից այս է, որ ստախտությամբ երկուսն էլ ստախտս դարձան և նրանց հոգիները մինչև Հարություն դժոխքում են»:

Մինչև մահանալն ու դժոխք ընկնելը, սակայն, նրանց կյանքը շարունակվում է սովորականի պես, և նրանք աստիճանաբար սկսում են բացահայտել կյանքում մարդկանց ընձեռված հնարավորությունները՝ առաջին անգամ այժի կաթ են խմում, վառում կրակը, առաջին անգամ խորովում միսը, այսինքն՝ անում են այն ամենը, ինչ որ պետք է անելն առաջին մարդիկ հին գրադաշտականի պատկերացումներով:

Վերջին սխալը՝ Աերիմանին նվիրված կաթի գոհաբերությունը, թույլ է տալիս դեռիմ տիրանալ վերջիններիս մարմնին և հիսուն տարով գրկել նրանց երեխա ունենալու ցանկությունից: Եվ միայն հիսուն տարին լրանալուց հետո են նրանք միանալու ցանկություն ունենում և ծնում առաջին գույզին: Սակայն.

Բունդահիշն, 14.30. «Չավակի քաղցրության պատճառով մեկին մայրը կերավ, մյուսին՝ հայրը: Ապա Օիրմագըրը [զավակի] քաղցրությունը ծնողների մտքից հանեց և թողեց այնքան, ինչքան պետք է խնամելու-մեծացնելու համար»:

Դրանից հետո նրանք դեռ հասցնում են վեց գույզ ունենալ, որոնցից մեկի՝ Սիամաքի զավակներ Ֆրավաքի և նրա կնոջ՝ Ֆրավաքեի սերունդն է (տասնհինգ գույզ), որ այսօր բնակեցնում է աշխարհը: Նրանցից ծնված տասնհինգ գույզից ինը, ելնելով Սրիսոզ առասպելական կովի մեջքին, ճանապարհորդելով անցնում և բնակեցնում է վեց եզրային մայրցամաքները, մինչդեռ մնացած վեց գույզը մնում է կենտրոնական Խվանիրահում, որտեղ բնակվում են իրանցիները և նրանց հայտնի մնացած բոլոր պատմական ազգերը^{xxxvi}:

Բունդահիշն, 14.35. «Ընդհանուր, նրանք, որ Էրանական երկրներում են բնակվում և Անէրանական, նրանք, որ Թուր երկրում են, և նրանք, որ Սալմ երկրում են, այն է՝ Հռոմում^{xxxvii}, նրանք, որ Սին երկրում են, այն է՝ Չինաստանում, և նրանք, որ Գայ երկրում^{xxxviii} են, և որ Սինդ երկրում են, և նրանք էլ, որ մնացած վեց երկրներում են, բոլորը ծագում են Մաշեի որդի Սիավաքի որդի Ֆրավաքից»:

*Աշխարհի հեղափոխական պատմությունը մինչև Ջրադաշտը
(ընդհանուր ակնարկ)*

Երկրի վրա մարդկության ծագումից հետո ի հայտ են գալիս վերջինիս առաջնորդները, որոնք քաղաքակրթության բարիքները հասանելի են դարձնում մարդկային ցեղի համար և իրենց մեջ կրելով Հավատքը՝ Դենը, պայքարում են չարիքի՝ Ահրիմանի դեմ: Այդպիսին են Հուշանգը, ապա նրա ծոռներ, Վիվանգհանի որդիներ Թահմուրավը և Ջամը: Թահմուրավն իշխում է Հուշանգից հետո, պատերազմ է մղում Ահրիմանի և դևերի դեմ, հաղթում նրանց և իր իշխանության երեսուն տարիների ընթացքում, շարունակ ձիու կերպարանք առած Ահրիմանին հեծած, ման է գալիս (Յաշք 15:13), թեև ի վերջո հաղթվում է և հռչակվում այդ ձիու կողմից:

Նրան հաջորդում է Ջամը^{xxxix}, ով Փիշղաղյանների («սկզբում/առաջինը ստեղծվածներ») հարստության ամենից հռչակավոր ներկայացուցիչն է, ով և ամենից երկարն է իշխել: Նրա իշխանության 716 տարիները (և վեց ամիսը) բաժանվում են երկու մասի՝ ծաղկման և անկման: Ծաղկման շրջանը տևել է 616 տարի և վեց ամիս, իսկ անկման շրջանը, երբ արքայական Փառքն արդեն փախել էր նրանից, շարունակվել է հարյուր տարի:

Նրանից հետո իշխանությունը զավթվում է բռնակալ Աժդահակի^{xl} կողմից, ում ծագումը հետագա ժամանակներում հանվել է արարներից: Աժդահակի մասին Ռամ յաշքում (Յաշք 15:24) ասվում է, որ նա է Ահրիմանի՝ բարի արարածների վնասի համար ստեղծված ամենագորեղ արարածը: Նրա իշխանությունը տևում է 1000 տարի, որի ժամանակ Ջամի սերունդները ստիպված թաքնվում են և ապրում հասարակ գյուղացիների նման: Այս ընթացքը լի էր բռնություններով և մարդկային գոհաբերություններով. Աժդահակի վիշապները մարդկային զանգերով էին սնվում:

Այս անարդարության վերջը տալիս է Ֆրեդոնը^{xli}, որ Ջամից սերող տասներորդ սերնդի ներկայացուցիչն էր: Նա ապստամբություն

է բարձրացնում և հաղթում Աժդահակին: Վեջինիս սպանել չկարողանալով՝ նրան շղթայում է Դումբավանդ լեռան^{xliii} վրա գտնվող մի քարանձավի մեջ (Bund., 29.13) և դիմացն իր խրտվիլակը դնում, որպեսզի նա չհամարձակվի փախչել: Առասպելն ասում է («Վահման յասնի մեկնություն», գլ. Թ, 13-23), որ հետագայում, երբ աշխարհի ավարտը մոտ կլինի, աղանդավոր ու անպիտան մի մարդ նրան ազատ կարձակի, ինչի պատճառով ինչպես ինքը, այնպես էլ շատ այլ մարդիկ կույ կզնան Աժդահակին, որի դեմ կելնի մինչ այդ քնած մնացած հերոս Քերշասպը՝ Սամի որդին, ով առանց երկար սպասելու գորզն Աժդահակի գլխին կհարվածի և վերջնականապես կհաղթի ու կսպանի նրան:

Ֆրեդոնն իր իշխանության տակ եղած տարածքները բաժանում է իր երեք որդիների՝ Սալմի, Թուրի և Էրեզի միջև, որոնց բաժին ընկած տարածքներից էլ առաջ են գալիս Սալմը (հետագայում նույնացված Հռոմի հետ), Թուրանը և Իրանը: Սակայն երկու ավագ եղբայրները՝ Սալմը և Թուրը, վերջինի դդմամբ, սպանում են կրտսեր եղբորը՝ Էրեզին, որին Ֆրեդոնն ամենից շատ էր սիրում: Այստեղից է սկսում այն բազմամյա թշնամությունն Իրանի և Թուրանի միջև, որի նկարագրությանն է հիմնականում նվիրված Ֆիրդուսու «Շահնամե»-ն:

Էրեզից հետո Էրանշահի^{xliiii} կամ Արյաց աշխարհի գահին են բարձրանում նրանից սերող առասպելական Քայյան^{xliv} արքայատոհմի տարբեր ներկայացուցիչներ՝ Մանուչեհրը, Քայ Քավուսը, Քայ Քավադը, Քայ Խոսրովը, որոնց բոլորի իշխանությունները, զուգակցված մաս առասպելական այլ հերոսների գործերի նկարագրություններով, գեղարվեստական վեհ ոճով նույնպես պատկերված են Ֆիրդուսու ծավալուն ստեղծագործության մեջ:

Այս արքաների գահակալությունների մասին պահպանված ավանդություններն իրենց հնությանը շատ ավելի մեծ են, քան բուն իսկ գրադաշտականությունը, և գալիս են հնդիրանական և հնդեվրոպական ժամանակներից:

Չրադաշտականության համար, սակայն, ամենակարևոր շրջանը սկսում է վերոնշյալ արքաների գահակալությունից հետո միայն, երբ իշխանության է գալիս Լուիրասպ^{xlv} արքայի որդի Վիշտասպը: Նրա արքունիքում է օրերից մի օր հայտնվում Չրադաշտը՝ մագղեգանց կրոնի՝ զրադաշտականության հիմնադիրը, ով իր կատարած մի շարք հրաշագործություններից հետո կարողանում է Վիշտասպին և իր արքունիքի շատ անդամների բերել իր հավատքին:

2.3. ՉՐԱԴԱՇՏԻ ԿՅԱՆՔԸ

(ըստ «Հայրենորի Չադասարամի» մատյանի)

Գլուխ Ե¹⁹⁹

Չրադաշտի Փառքի^{xlvi}՝ մինչև նրա ծնունդը հայտնվելու մասին

1. Այնպես է հայտնի, որ 45 տարի առաջ այն պահից, երբ Չրադաշտը [Օհրմագղի մոտ] խորհրդակցության եկավ^{xlvii}, Ֆրենիմ^{xlviii} ծնեց Չրադաշտի մորը, որ Դուդրագ^{xlix} էր կոչվում: Կրակի կերպով [Փառքը] Անասհման Լուսավորությունից ներքև իջավ: Խառնվեց այն կրակին, որ առաջն էր դրված: Կրակից Չրադաշտի մոր մեջ խառնվեց: Երեք գիշեր տան բոլոր կողմերից ու ելուստներից երևում էր կրակի կերպով:

2. Անցորդները մեծ լուսավորություն էին տեսնում շարունակ:

3. Երբ տասնհինգ տարեկան էր, այդ Փառքի պատճառով, երբ որ ճանապարհ էր գնում, նրանից շող էր տարածվում:

.....

*Չրադաշտի փոհմարտությունը ներկայացված է Է գլխում, որ-
պեղ թվարկված են նրա նախնիների անունները՝ մինչև Չամ քազա-
վորը և ապա Գայոմարտը:*

¹⁹⁹ Համարակալումը տրված է համաձայն Wiz̄dagīhā ī Zādsp̄aram-ի բնագրի գլուխների այժմ ընդունված համարակալմամբ:

Գլուխ Ը

Չարքի՝ Չրադաշտին սպանելու համար մղած պայտերագմի մասին

1. Երբ մոտ էր [Չրադաշտի] ծնվելու ժամանակը, Աիրիմանը ջերմության, ցավի և քամու դևերին, յուրաքանչյուրին 150 դևի հետ, ուղարկեց Չրադաշտին սպանելու:

2. Եվ նրանք հոգեպես (անտեսանելի կերպով) գնացին մոր մոտ: [Մայրը] ջերմությունից, ցավից և քամուց նեղության մեջ ընկավ:

3. Եվ այնտեղից մեկ հրասանգ¹ հեռավորության վրա մի կախարդ (jādūg) էր ապրում՝ Սթարագ («Աստղիկ») անունով, որ ամենահմուտն էր բժշկության մեջ: [Բուժվելու] հույսով տեղից վեր կացավ և պատրաստվեց [նրա մոտ] գնալու:

4. Օհրմագրի բանբերը գոռաց, թե՛ «Մի՛ գնա կախարդների մոտ, քանզի քեզ բուժող չեն, այլ կրկին տուն դարձիր և լվա ձեռքդ ու կրակի վրա դրված կովի յուղ քսիր և փայտ ու անուշահոտություն այրիր քո երեխայի համար, որ արգանդումդ ունես»:

5. Եվ այդպես արեց ու առողջացավ:

6. Եվ նա (Աիրիմանը) կրկին ուղարկեց բոլոր գործակից և զորակից [դևերին], բայց նրանք, ճար չգտնելով, ետ դարձան:

7. Եվ նրանք ասացին. «Ամեն կողմից կրակ լինելու պատճառով չկարողացանք»: Քանի որ ինչքան էլ շատ օգնական ունենա [Աիրիմանը], նրան (Չրադաշտին կամ Օհրմագրին) մրցակից չի կարող լինել:

8. Նույն գիշերը, երբ [Չրադաշտը] ծնվեց, Աիրիմանը զորավարներ ընտրեց և զորք ընտրեց: Կար [զորավար], որ հազար դև ուներ հետը, կար, որ երկու հազար ուներ, և հարձակվելով ու հարվածելով պատերագմեցին ընդդեմ յազատների: Հատկապես ինքը՝ Փառքը, կրակի կերպարանք առած, ներկա էր այն ծննդյան ժամանակ, և (9.) նրա փայլից ու լույսից հեռու տեղերն էլ լուսավորված լինելու պատճառով նրանք ելք չգտան [վնասելու]:

10. Վերջում Ահրիմանն Աքոմանին^{li} առաջ ուղարկեց և ասաց, թե՝ «Ամենից հոգևորը (անտեսանելին) և խորագույնն ես: Գնա խաբեությունը դեպի Ջրադաշտի միտքը և դարձրու միտքը դեպի մեզ, որ դև եմք»:

11. Եվ Օհրմագորը ընդդեմ նրա Վահմանին (այս.՝ Բարի մտքին) ուղարկեց:

12. Աքոմանն առաջ գնաց, դռան մոտ եկավ և կամեցավ մտնել:

13. Վահմանը, հնարք փնտրելով, վրա հասավ և Աքոմանին ասաց. «Ներս մտի՛ր»: 14. Աքոմանը մտածեց, թե՝ «Չպետք է անել այն, ինչ ինձ Վահմանն ասաց»: Եվ ետ դարձավ: Վահմանը ներս մտավ և խառնվեց Ջրադաշտի մտքին:

15. Ջրադաշտը ծիծաղեց, քանզի Վահմանն ուրախացնող ոգին է: 16. Եվ յոթ կախարդները, որ մոտը նստած էին, վախեցան տան մեջ շողշողացող լուսավորության երևալուց և [Ջրադաշտի] ծնվելու պահին ծիծաղելուց, որ հակառակ է մնացած մարդկանց, որ լացում են:

17. Եվ ծնվելու ժամանակ կրոնի ուսուցչությունը Օհրմագորից ընդունեց:

18. Այսպես է ասվում Հավատքում, որ ծնվելու ժամանակ [Օհրմագորին] ասաց. «Ինչպես արարածների կամքն է, դու, որ քուրմ ես, որ արարածների առաջնորդն ես, ինձ ասա՛, թե պետք է ուսուցիչ լինես»:

19. Ինչպես Ջրադաշտը մարմին ունենալու պատճառով աշխարհի («նյութական») խոսքերով խոսեց, այնպես էլ Օհրմագորը հոգևոր կերպով պատասխանեց նրան, թե՝ «Այսպես առաջնորդաբար, այսպես առաքինաբար, առաքինությունից [դրդված], ինչպես որ առաքինիներն են գիտակցաբար ասում, [ասում եմ] թե՝ «Քո ուսուցիչն եմ»»:

20. Հաջորդ օրը Փորուշասպը^{liii} գնաց և կախարդներից, որ մի տեղ խորհրդակցում էին, հարցրեց. «Ի՞նչ է [նշանակում], երբ երեսխաները ծնվելուց լացում են, և ի՞նչ է նշանակում, երբ ծիծաղում են»:

21. Եվ նրանք պատասխանեցին. «Լացելը գալիս է [կյանքի] ավարտին մահը տեսնելուց, ծիծաղելը՝ սեփական առաքինությունը տեսնելուց»:

Գլուխ Թ

*Ջրադաշտի հակառակորդ եղբայրների՝ քարաբ^{liii} և ուսիխշ^{liv}
եղբայրների՝ wylyn 'n g 'st 'r 'gy²⁰⁰ որդիների մասին*

1. wylyn 'n g 'st 'r 'n-ը *Քոխրիդից, Քոխրիդը Խաշմից և Մանուշա-կից՝ Մանուչիիի քրոջից ծնվեց:

2. Այն ժամանակ, երբ Ջրադաշտը ծնվեց, հինգ եղբայրներ կային, որոնց անուններն էին՝ Բրադրոխշ, Բրադրոխշն, Թուր Բրադրոխշ, *Ազան և *Վասման:

3. Նրանց հինգ հոգանոց եղբայրությունը, որի մեջտեղում էր Թուր Բրադրոխշը, որ և նրանցից բոլորից առավել էր թշնամի Ջրադաշտին, նույն քանակն ուներ, ինչ Փորուշասպի հինգ որդիների եղբայրությունը, որի մեջտեղում Ջրադաշտն էր:

4. Ջրադաշտի չորս եղբայրներից երկուսը Ջրադաշտից առաջ էին [ծնված], որոնք էին Ռաթուշթարը և Ռանգուշթարը, և երկուսը նրանից հետո՝ *Վաթրիզան և *Վենդադիշը:

5. Ջրադաշտը նրանց մեջտեղում էր (միջնեկն էր), այս պատճառով, որ կանգնած է մեղադրողների և մեղադրվողների²⁰¹ միջև: Այն ժամանակ այնպես ստեղծվեց, որ 3 հազարամյակ նրանից առաջ էր եկել, և երեքը՝ հետո, որպեսզի ուսուցանի այն, թե ինչպես է եղել նախնիների [ժամանակ] և գալիքի վերաբերյալ էլ անելիքն արարածներին հրամայի:

6. Այսպես է ասվում գաթաներում^{lv}. «Այս երկու բանն են քեզանից հարցնում, Օհրմա՛գը, ո՞վ եկավ մինչև հիմա, և ո՞վ կգա այս պահից հետո»:

²⁰⁰ Ընթերցանությունն անհասկանալի է:

²⁰¹ Բառերը, թեև ուղիղ թարգմանությամբ այսպես են թարգմանվում, սակայն հավանական է, որ գրողը նկատի է ունեցել «անցյալում ապրածներին» և «ապագայում ապրողներին», որոնց հետ վերոնշյալ բառերը նմանություն ունեն պահլավերենում:

Գլուխ Ժ

Այն փորձության մասին, որ նրան եղավ կախարդների կախարդություններից, և հրաշքներն ու նշանները, որ նրա վրա երևացին

1. Այսպես է հայտնի, որ ծննդյան հաջորդ օրը Փորուշասպը քարաբների տոհմից այն հինգ եղբայրներից մեկին կանչեց և ասաց նրան. «Ձննի՛ր իմ որդու նշանները»:

2. Գնաց Ջրադաշտի մոտ նստեց և ուժեղ ոլորեց Ջրադաշտի գլուխը, որ սպանի, և կախարդները, որ նրանից վախեցել էին ու սարսափել, [կրկին] անվախ դառնան, և [նրանց] պաշտպանի:

3. Օհրմագղը, քանի որ տաս գիշերով Սպենդարմատին, Արդվիստրին^{lvi} և Առաքինի ոգուն (ardā fraward) բնակության համար երկիր էր ուղարկել, նրա (քարաբի) այդ չարագործությունը չհաջողվեց, և չորացավ այն քարաբի ձեռքը:

4. Այն կախարդը Փորուշասպից Ջրադաշտի կյանքը պահանջեց այն չարիքի պատճառով, որ իր իսկ արարքից առաջացավ:

5. Այն պահին Փորուշասպը Ջրադաշտին վերցրեց և նրան քարաբին տալով՝ ասաց. «Ինչպես կամքն է քո, այդպես էլ վարվիր»:

6. Նա վերցրեց և նետեց [երեխային] կովերի ոտքերի տակ, որ ճանապարհով ջրի էին գնում: Կովերի նախրի առաջնորդ [կովը] մոտենալով՝ կանգնեց և 150 կովերին, որ հետևից էին գալիս, նրանից հեռու պահեց: Եվ Փորուշասպը նրան վերցրեց ու կրկին տուն տարավ:

7. Եվ հաջորդ օրը ձիերի ոտքերի տակ նետեց: Չիերի առաջնորդը Ջրադաշտի մոտ կանգնեց և 150 ձիերին, որ ետևից էին գալիս, նրանից հեռու պահեց: Եվ Փորուշասպը նրան վերցրեց ու կրկին տուն տարավ:

8. Եվ երրորդ օրը փայտ դրեց իրար վրա և, Ջրադաշտին վրան դնելով, վառեց, բայց նույն կերպ [կրակը] նրան չայրեց: Եվ սա նշան էր նրա փորձության և նրա փրկության:

9. Եվ չորրորդ օրը գայլի մի բույն նետվեց:

10. Գայրը բնում չէր, երբ որ կրկին անցքը մտնել կամեցավ և 24 քայլ առաջ եկավ, հենց նույն կերպ կանգնեց, տեղում չորացավ:

11. Գիշերը Վահմանը և Սրոշահլավը^{lvii} քուրուշագ (ոչխարի մի տեսակ) ոչխարին՝ կաթով լի կրծքով, բույնը բերեցին, որը մինչև լույս Ջրադաշտին կու՛մ-կու՛մ կերակրեց:

12. Առավոտյան Ջրադաշտի մայրն այն հույսով, որ կկարողանա ոսկորները բնից բերել, այնտեղ գնաց: Եվ քուրուշագը դուրս եկավ ու փախավ:

14. Եվ մայրը մտածեց, թե գայլն է, ու ասաց. «Կերար և նրանից ես հիմա կուշտ, որ գնում ես», և առաջ գնաց: Երբ որ Ջրադաշտին ողջ տեսավ, վեր բարձրացրեց և ասաց. «Քանի դեռ ողջ եմ, քեզ չեմ տա էլ որևէ մեկին, անգամ եթե երկու գյուղերը՝ Ռաղն ու Նողարը, այստեղ իրար հասնեն»:

15. Ինչպես այս երկու գյուղերը գտնվում են Ատրպատականում՝ Մոգանում^{lviii}, որ Չիսքից^{lix} 60 հրասանգ է հեռու, Ջրադաշտը Ռաղից է, և Վիշտասպը՝ Նողարից: Եվ այս երկու գյուղերից Ռաղը Մանուշիհի^{lx} որդի Դուրսրավի որդի Արդի ամունով էր, որից սերում է Ջրադաշտը, և Նողարը Մանուշիհի Նողարից էր, որից ծագում էր Վիշտասպը^{lxi}:

16. Սրանք էին ծննդյան ժամանակ նրան հայտնված նշանները:

17. Մի օր այն հինգ քարաբ եղբայրներից մեկը Ջրադաշտին տեսավ և երկար ժամանակ²⁰² դեպի վեր, դեպի ներքև և շրջվելով դեպի բոլոր կողմերը (շուրջը) նայեց:

18. Փորուշասպը հարցրեց, թե «Ի՞նչ էր այն, որ վեր նայեցիր, ի՞նչ էր այն, որ ներքև նայեցիր, և ի՞նչ էր այն, որ բոլոր կողմերը նայեցիր»:

19. Եվ այսպես պատասխանեց, թե՛ «Այն, որ վեր նայեցի, այն պատճառով էր, որ տեսա, թե սրա Փառքը մինչև երկինք է հասնում, և

²⁰² Բնագրում գրված է *dūr-zamān*, որ նշանակում է բառացիորեն «հեռու ժամանակ», սակայն հավանաբար դա համահունչության պատճառով առաջացած սխալի արդյունք է, և ակնհայտորեն դրա փոխարեն պետք է լինի *dagr zamān*, այն է՝ «երկար ժամանակ»:

սրա խոսքից մարդկանց հոգիները դեպի դրախտ են գնում: Այն, որ ներքև նայեցի, տեսա, որ սրա գործից դևերը, չարքերը, կախարդները և փերիները երկրի տակ կթաղվեն և պարտված դեպի դժոխք կընկնեն: Այն, որ բոլոր կողմերը նայեցի, տեսա, որ սրա խոսքը ողջ երկրի վրա կտարածվի և յոթ մայրցամաքներում որպես օրենք կլինի: Եվ նա հագած ուներ յոթ կովի կաշվից [կարված] կապա, որ յոթ ամահրասպանողների փառքը նրա վրա էր»:

20. Թուր Բրադրոխշը առաջ եկավ, երբ աջ կողմ գնաց, Ջրադաշտը ձախ փախավ, երբ ձախ կողմ գնաց, Ջրադաշտը աջ փախավ: Եվ Թուր Բրադրոխշից թաքնվեց, ու նա նրան չգտավ:

Գրուխ ՄԱ

Ծնողներին հակաճառության մասին

1. Սա էլ է հայտնի, որ դևերը կախարդների և համախոհների ժողովում աղաղակեցին. «Փորուշասպի զավակը ապուշ, հիմար և գաղտնաբար վնասող է: Ոչ ոքի տղամարդկանցից և կանանցից չի հարգում և ուսմունքը չի ընդունում»:

2. Լուրը հասավ Փորուշասպին, և Փորուշասպը Ջրադաշտին ասաց. «Կարծեցի, որ մի որդի եմ ծնել, որ քուրմ, ռազմիկ և հողագործ կլինի, այժմ հիմար ու գաղտնի վնասող ես դու: Գնա քարաբների մոտ, որ բուժեն»:

3. Ջրադաշտը պատասխանեց. «Մտածի՛ր, որ քո որդին քուրմ, ռազմիկ ու հողագործ է^{lxiii}»:

4. Եվ Փորուշասպի հրամանով երկու ձի կառք կապեց և Փորուշասպի հետ գնաց:

5. Երբ որ այն տեղը եկան, Փորուշասպը եղելությունը, ինչպես որ կար, հինգ քարաբ եղբայրներից մեկին պատմեց:

6. Այն կախարդը մի աման վերցրեց, նրա մեջ միզեց և ասաց. «Թող խմի քո որդին, որ առողջանա»:

7. Եվ այսպես վճռեց, որպեսզի [Ջրադաշտը] իրենց նման դառնա:

8. Չրադաշտը Փորուշասպին ասաց, թե՝ «Վերադարձրու [դա] նրան, ով քո պահապանն ու ուսուցիչն է»: Վեր կացավ ու կրկին իրենց տուն գնաց:

9. Չրադաշտը ճանապարհին այն երկու ձիերին ծարավ լինելու պատճառով ջուր տվեց և մտածեց. «Անիմաստ էր իմ գնալը քարաբների մոտ, բացի միայն սրանից, որ ձիերին ջուր տալուց հոգիս հարստացրի»:

Գլուխ ԺԲ

Չարերին հակաճառելու մասին

1. Սա է հայտնի, որ մի օր Դուրեսրավ քարաբը՝ նույնպես հինգ եղբայրներից մեկը, Փորուշասպի տուն եկավ:

2. Փորուշասպը ձիու կաթով մի բաժակ առաջ դրեց և ասաց. «Չոհաբերություն կատարի՛ր»^{lxiii}:

3. Չրադաշտը Փորուշասպին ընդդիմացավ, թե՝ «Ես կանեն գոհաբերությունը»:

4. Փորուշասպը ասաց. «Թող նա գոհաբերություն անի և խոսի», և նա երեք անգամ ընդդիմացավ:

5. Վեր կացավ Չրադաշտը և աջ ոտքը բաժակին խփեց և [կաթը] թափեց:

6. Եվ ասաց. «Առաքինության համար եմ գոհում: Առաքինի և աղքատ տղամարդկանց և կանանց համար եմ գոհում: Փորուշասպ, բաժին բեր նրան, ով արժանի է դրան»:

7. Եվ Դուրեսրավն ասաց Չրադաշտին. «Քանի որ առաջինն ես, որ իմ բաժինն ու հասանելիքը նետեցիր, երկու աչքս կբարձրացնեն և քեզ կսպանեն»:

8. Չրադաշտը հակաճառեց, թե՝ «Ես ողջախոհությամբ երկու աչքով կնայեմ և քեզ կսպանեն»:

9. Եվ նրանք մեկը մյուսին սուր հայացքով երկար ժամանակ նայեցին, և Չրադաշտի աստվածային էությունը նրա կախարդության վրա հաղթանակեց:

10. Գուրեարավը շփոթվեց: Չի ուզեց ու ասաց. «Սրան դիմադրել չեմ կարող»: Չի ու վրա նստեց և շտապով հեռացավ: Մեծ ցավով ձիուց ընկավ և մեռավ: Եվ նրա որդու որդիների որդիներն էլ նույն տեղում մեռան:

Գլուխ ԺԳ

Նրա առաքինասիրության մասին

1. Այսպես է հայտնի, որ երբ 15 տարեկան էր, Փորուշասպի որդիները հորից բաժին ուզեցին: Եվ Փորուշասպը նրանց բաժին տվեց:

2. Հագուստների մեջ մի երկծալ գոտի (kustig) կար, որ 4 մատ լայնություն ուներ և երեք անգամ հնարավոր էր այն գոտին փաթաթել: Ջրադաշտը [դա] ընտրեց և կապեց^{lxiv}:

3. Այս [արարքը] Վահմանի առաջնորդությունից էր, ով ծնվելու ժամանակ միտքը մտավ: Եվ այն ամենից, ինչ օրենքից չէ, միտքը կտրեց, և այն ամենին, ինչ օրենք է, միտքը կապեց:

Գլուխ ԺԴ

Հոգասար բնավորության ու համբերասրության մասին

1. Սա էլ է հայտնի, որ մի գետ կար, որին «Մերկ կին» [կամ] «Հան» էին կոչում այն պատճառով, որ գետի խորությունից և արագությունից կինն առանց մերկանալու այն անցնել չէր կարող, և ծեր մարդիկ՝ նրանք, որ 70²⁰³ տարեկան են, որ «հան» են կոչվում, անուժության պատճառով իրենց ուժով անցնել չէին կարող:

2. Ջրադաշտը գետի ավի եկավ: Կանանցից և ծեր մարդկանցից յոթ հոգի էին եկել: Եվ նա կամրջի նման անցկացրեց [նրանց]:

3. [Սա] նշան էր [բարի] արարք անողների համար կամուրջ լինելու, որոնց դեպի դրախտ անցկացնողն է:

²⁰³ Չեռագրային մեկ այլ տարբերակում տրված է 50 (TD):

Գլուխ ԺԵ

Նրա առաքաչեռնության մասին

1. Հայտնի է, որ այն խտրը, որ Փորուշասպը ձիերի համար էր ամբարել, երաշտի տարում ոչ միայն Փորուշասպի ձիերին, այլև առատաձեռնությամբ այլոց ձիերին ևս, որոնք երաշտի պատճառով միմյանց պոչն էին ուտում, առատորեն նրանց էլ տվեց:

Գլուխ ԺԶ

*Աշխարհի ցանկությունները թողնելու և առաքինության
ճանապարհն ընտրելու մասին*

1. Հայտնի է նաև, որ երբ քսան տարեկան էր, հակառակ հոր և մոր ցանկության, դուրս եկավ և տնից հեռացավ:

2. Եվ հարցրեց, թե՝ «Ո՞վ է ամենից շատ առաքինության ձգտողը և ամենից շատ աղքատներին օգնողը»:

3. Եվ նրանք պատասխանեցին. «Թուր *Օրվեդողահի կրտսեր որդին է, ով ամեն օր ձիու բարձրության երկարությամբ մի աման՝ լիքը հացով, կաթով և այլ ուտելիքներով, աղքատներին է տալիս»:

4. Ջրադաշտն այնտեղ գնաց: Եվ օգնելու ու աղքատներին խնամելու համար երկու հսկա մարդու չափով ուտելիք տարավ աղքատներին, աշխատեց:

Գլուխ ԺԷ

*Նրա մեծահոգության մասին, ոչ միայն մարդկանց, այլև այլ
արարածների նկատմամբ*

1. Սա էլ է հայտնի, որ մի շուն տեսավ, որ յոթ ձագ էր ունեցել: Եվ երեք օր էր, ինչ ուտելիք չէր կերել: Ինչքան տեսավ, [շունը] բերանն առաջ էր բերել, և կարծես ուշքը գնացել էր:

2. Ջրադաշտը ճար արեց, արագորեն նրան հաց բերեց: Երբ բերեց, [արդեն] մահացել էր:

Գլուխ ԺԸ

Արժանավոր կնոջը լավ ընտրելու՝ ըստ իր ցանկության, և ծնողների կամքի պատճառով [միայն] նախքան արժանավորությունը փեսաներ, իր սերմը չխառնելու մասին

1. Սա էլ է հայտնի, որ երբ հայրը նրա համար կին ուզեց, Ջրադաշտն այդ կնոջից պահանջեց, թե՛ «Յո՛ւյց տուր երեսդ, որպեսզի տեսքդ, կերպարանքդ չքողարկված տեսնեմ և որպեսզի իմանամ, արդյո՞ք տեսքդ ցանկալի է, թե ոչ»:
2. Եվ կինը երեսը մի կողմ թեքեց:
3. Եվ Ջրադաշտն ասաց. «Ով թաքցնում է իր տեսքն ինձանից, ինձ չի հարգում»:

Գլուխ ԺԹ

Նաև խորհուրդ ընդունելու ինչպես չարերից, այնպես էլ երեխաներից և նրանց հեշտությանը լսելու մասին, որոնցից նրանք, որոնց օգրակարությունը հայրնի էր, ընդունեց

1. Սա էլ է հայտնի, որ մի խմբի մոտ եկավ, որ այն տեղում իրենց գիտությամբ էին առավել հայտնի, և նրանց հարցրեց. «Ի՞նչն է հոգու համար առավել օգտակար»:
2. Եվ նրանք ասացին. «Աղքատներին խնամելը և կենդանիներիին խոտ տալը, կրակի վրա փայտ դնելը, ջրի մեջ հոմ^{lxv} հեղելը և շատ դևերին խոսքով զոհաբերելը (երկրպագելը): [Այսպես] է ասվում հավատքի մեջ»:
3. Այա խնամեց Ջրադաշտն աղքատներին և կերակրեց կենդանիներին խոտով և կրակի վրա փայտ դրեց և հոմ ճզմեց ջրի մեջ: Բայց երբեք որևիցե չափով Ջրադաշտը դևերին խոսքով զոհաբերություն չարեց^{lxvi}:

Գլուխ Ի

30 տարեկան դառնալու մասին

1. Այսպես է հայտնի, որ ծնվելուց 30 տարին լրանալուց հետո՝ Սպենդարմատ ամսում՝ Անագրան օրը (12-րդ՝ վերջին ամսվա վերջին՝ 30-րդ օրը), այն գավառում, որտեղ ամանորից 45 օր հետո «Վիհար-բուդ»^{lxvii} տոնն էին [նշում], մի տեղ, որտեղ հատկապես հայտնի էր, որ մարդիկ շատ շրջաններից այդ տոնակատարությանն էին գալիս, գնաց:

2. Ջրադաշտը, քանի որ այդ տոնակատարությանը գնալու համար ճանապարհ ընկավ, ճանապարհին մի դաշտում միայնակ քնեց:

3. Եվ երազում տեսավ, որ աշխարհի մարդիկ մեծ պատրաստությամբ դեպի հյուսիս էին [ուղղված], մինչ [վերջիվերջո] աշխարհի վրայի բոլոր մարդիկ հյուսիսում հայտնվեցին^{lxviii}: Եվ նրանց գլուխը Մեդյոմահ^{lxix} Արասթագանը [կանգնեց], և Արասթագը Փորուշասպի եղբայրն էր, և բոլոր մարդիկ, որպես առաջնորդ Մեդյոմահին ունենալով, գնացին Ջրադաշտի առջև:

4. Դա ցույց էր տալիս, որ առաջինը Մեդյոմահը, ապա ողջ մարմնավոր էակները [իր Հավատքին] կդառնան:

Գլուխ ԻԱ

Խորհրդակցությանը ներկայանալու մասին

1. Տոնակատարության 5 օրը լրանալուն պես՝ Արդվահիշտ ամսվա Դայ-վիադ-միիր (երկրորդ ամսվա 15-րդ օրը) օրը՝ առավոտյան, Ջրադաշտը հոմ ճգմելու համար Դաիթի^{lxx} գետի ավիը գնաց: Ջրադաշտի խորհրդակցության այնտեղ տեղի ունենալու պատճառով [Դաիթի գետը] գետերի առաջնորդն է:

2. Գետը չորս ճյուղ ունեւ: Եվ Ջրադաշտը նրանց միջով անցավ: Եվ առաջինում [ջրի խորությունը] մինչև ոտնաթաթն էր, երկրորդում՝

մինչև ծունկը, երրորդում՝ մինչև երկու ազդրերի բաժանման մասը և չորրորդում՝ մինչև վիզը:

3. Սա ցույց էր տալիս, որ [նրա] Հավատքը չորս անգամ կհասնի բարձրագույն կետին, որոնք են Ջրադաշտի, Ուշեղարի, Ուշեղարմահի և Սոշյանսի^{lxxi} հայտնությունները:

4. Երբ ջրից դուրս եկավ և հագուստները հագավ, տեսավ Վահման ամահրասպանդին՝ շողշողացող, լուսավոր և գեղեցիկ մարդու կերպարանքով, որ անջատ վարսեր ուներ, քանի որ անջատ [լինելը] երկվության նշանն էր: Մետաքսանման պատմուճան ուներ հագած, որ ոչ մի փայլ-շող չուներ իր վրա, քանզի հենց ինքը լույս էր, և նա (Վահմանը) Ջրադաշտի ինը հասակն ուներ:

5. Եվ նա հարցրեց Ջրադաշտից, թե՝ «Ո՞վ ես և ի՞նչ ծագում ունես: Ի՞նչն ես ամենից շատ ցանկանում և [ինչի]»²⁰⁴ համար ես ճգնում»:

6. Եվ [Ջրադաշտը] պատասխանեց. «Ջրադաշտն եմ Սպիտաման^{lxxii} արարածների մեջ առաքինություն ամենաշատ ցանկացողը, և իմ ցանկությունն է, որ իմանամ յազատների կամքը, և այնքան առաքինություն եմ [ջանում] անել, որ ինձ մատնացույց անեն Սուրբ Արարչության (բարի արարածների) մեջ»:

7. Եվ հրամայեց Վահմանը Ջրադաշտին, թե՝ «Վեր գնա դեպի ոգիների հավաքը»:

8. Այն [տարածությունը], որ Վահմանը 9 քայլով անցավ, Ջրադաշտը [անցավ] 90 քայլով: Երբ 90 քայլն անցավ, տեսավ յոթ ամահրասպանդների ժողովը:

9. Երբ 24 քայլով դեպի ամահրասպանդները եկավ, ամահրասպանդների մեծ լուսավորության պատճառով իր ստվերն այլևս երկրի վրա չտեսավ:

10. Ժողովի տեղը էրանում էր՝ ուտ՛ն-ի²⁰⁵ (Մոգանի) կողմում՝ Դաիթի գետի ափին:

²⁰⁴ Ձեռագրերում այս բառի տեղը դատարկ է թողնված, սակայն ակնհայտ է, թե ինչ պետք է գրված լինի:

11. Չրադաշտը երկրպագեց և ասաց. «Խոնարհում Օհրմագրին, խոնարհում ամահրասպանդներին»: Եվ առաջ գնաց ու հարցնողների տեղում նստեց:

Գլուխ ԻԲ

Չրադաշտի՝ հարցեր տրալու մասին

1. Հարցրեց [Չրադաշտը] Օհրմագրից, թե «Ո՞րն է նյութական աշխարհում առաջին լավագույն [երևույթը], ո՞րն է երկրորդը և ո՞րն է երրորդը»:

2. Օհրմագրը պատասխանեց. «Առաջին լավագույն [երևույթը] բարի միտքն է, երկրորդը՝ բարի խոսքը, երրորդը՝ բարի գործը»:

3. Հարցրեց Չրադաշտը. «Ի՞նչն է լավ, ի՞նչն է ավելի լավ, և ի՞նչն է լավագույնը»:

4. Օհրմագրը պատասխանեց. «Լավ է ամահրասպանդների անունը^{lxxiii}, և նրանց տեսնելն ավելի լավ է, և նրանց պահանջները կատարելը լավագույնն է»:

5. Եվ ապա [Օհրմագրը] ցույց տվեց երկու էությունների տարբերությունն ամեն գործում: Ասաց. «Հոգիների մեջ նա, ով չար է, չարագործություն է սիրում, [որպես] Ահրիմանի կամքն էր չարագործու-

²⁰⁵ Այս բառը (𐬯𐬀𐬎) դժվար է միանշանակ կերպով թարգմանել: Տեքստի երեք թարգմանիչներն էլ երեք տարբեր բացատրություններ են տվել, որոնցից West (էջ 157), դատելով իր թարգմանությունից (“districts”), ընթերցանության մեջ մի թեթև փոփոխությամբ կարդացել է MTA՝ն, որ թարգմանվում է «գյուղեր» կամ ավելի լայն իմաստով՝ «գավառ, մահանգ»: Այս տարբերակն էլ, ըստ իս, առավել հավանականն է, եթե ստիպված լինենք ընտրություն կատարել և հաշվի առնենք, որ այս դեպքում բառը գրեթե ոչ մի փոփոխության ենթարկված չենք լինի: Rashed-Mohassel-ը (էջեր 67, 140), այն նմանեցնելով ul-āmādan, «ծագում» բառին, որ ունի նաև «արևելք» իմաստը, թարգմանել է «արևելք»: Հավանաբար այստեղ նա ավելի շուտ առաջնորդվել է Դ-աի-թի գետի աշխարհագրական հավանական «արևելյան» տեղադրությամբ, քան բուն բառից բխող իմաստաբանական փաստարկով, և նրա հետ այստեղ դժվար է համաձայնվել: Որոշակիորեն հավանական է նաև Gignoux-Tafazzoli-ի (էջ 162) առաջարկված տարբերակը, այն է՝ mt՛n-ի փոխարեն mgw՛n կարդալ, որով բառը կարելի է թարգմանել Մոգան, որը, ինչպես նշված է Wizidagtha i Zādaspram-ի Ժ գլխի 15 հատվածում, Չրադաշտի հայրենի գավառն էր:

թյունը, և առաքինություն սիրում է բարեբեր հոգին, [որպես] Օհրմազդն առաքինություն է սիրում»: Եվ խորապես բացատրեց լուսավորների և խավարականների ամեն մի գործողության տարբերությունը:

6. Եվ ասաց. «Մեր՝ [երկու] ոգիների ո՛չ կամքը, ո՛չ խոսքը, ո՛չ գործը, ո՛չ հավատքը, ո՛չ արարածները [մնան չեն]: Ով լույս է սիրում, նրա տեղը լուսավորների կողքին է, ով խավար, [նրա տեղը] խավարների հետ է»:

7. Եվ նույն օրը երեք անգամ «ամենագիտության իմաստությունը»^{lxxiv} [Զրադաշտին] բերեց: Հենց առաջին հարցի ժամանակ ցույց տվեց երկինքը՝ մեծ լուսավորությամբ, և արշալույսը, և ցույց տալու ժամանակ հեռացրեց խավարը տեսությունից՝ խավարի հակառակության (թշնամության) պատճառով: 8. Եվ ցույց տվեց իր էությունը՝ երկնքի չափով. գլուխը երկնքի ամենաբարձր կետում էր, և ոտքը՝ երկնքի ներքևում: Չեռքերը երկնքի երկու կողմերում էին գտնվում^{lxxv}:

9. Եվ երկինքը ծածկոցի (թիկնոցի) մնան հագած էր, և վեց ամահրասպանդները նրա վրա նույնաբնույթ կերպով երևում էին, այնպես, որ ամեն մեկի սկիզբը մյուսից (այս.՝ երկնքից) մատների մնան [դուրս եկող] էր երևում:

10. Ամահրասպանդները [նրան] ցույց տվեցին երեք տեսակ փորձությունները Հավատքում:

11. Առաջինը կրակի միջոցն է, և Զրադաշտը բարի մտքով, բարի խոսքով, բարի գործով երեք քայլ առաջ դրեց, չայրվեց:

12. Երկրորդն այն էր, որ տաք մետաղը կրծքին լցվեց^{lxxvi}: Նրա վրա սառեց, ձեռքով վերցրեց, ամահրասպանդներին տվեց: Օհրմազդն ասաց. «Հավատքի մաքուր լինելու [ժամանակաշրջանից] հետո, երբ Հավատքի վերաբերյալ հակառակություն կլինի, և նրա վրա, որ քո աշակերտն է, երկաթ լցնեն, ձեռքով կվերցնի: Այդպես ողջ մարմնավոր արարածները [քո Հավատքին] կդառնան»:

13. Երրորդը դանակով կտրելն է: Եվ ապա երևաց որովայնի ներքևում արյան հոսելը, և հետո ձեռքը վրան քսեց և առողջացավ:

14. Սա ցույց է տալիս, որ դու և քո հավատակիցները սուրբ Հավատքը կրնադուներ խղճի հավատքով²⁰⁶, այնպես, որ ոչ մի կրակի այրոցով, մետաղի հոսելով և սրի կտրոցով Բարի հավատքից ետ չկանգնեն:

Գլուխ ԻԴ

Հավատքի ամբողջական դառնալու մասին

1. Տաս տարվա ավարտին Մեդյոնահ Արասթագանը Ջրադաշտին հավատաց:

2. Ապա [Ջրադաշտը], հարցին [պատասխան] գտնելու համար, կրկին խորհրդակցության եկավ Օհրմագղի մոտ և ասաց. «Տաս տարում մեկ մարդու դարձի բերեցի»:

3. Օհրմագղն ասաց. «Կլինեն օրեր, որ դեպ քեզ դարձի կգան այնքան, որ աշխարհի արարումից էլ չեն եղել, որն է Հարության [ժամանակը], երբ բացի Դահակից^{lxxvii} բոլորը Հրաշակերտության օրենքին կհարեն, և Դահակն առանց զոջման կսպանվի»^{lxxviii}:

4. Նույն հարցմունքի ժամանակ, երբ Օհրմագղի մոտից Սպենդարմատի մոտ եկավ, վերջինս Հավատքը^{lxxix} ամբողջությամբ նրան ցույց տվեց (սովորեցրեց):

5. Դրանից հետո երկու տարի Վիշտասալի [մոտ էր], և քավիներն^{lxxx} ու քարաբները 33 զագրախոսություն նրա վրա ասացին Վիշտասալի հրամանով: Այն 33 զագրախոսությունը ցույց էր տալիս 33 վատ կրոնները, որ հակասության մեջ մտան յազատների հավատքի

²⁰⁶ Այս վերջին արտահայտությունը թարգմանելու համար (որ բնագրում գրված է **ՊՆՏՆՏՆ**) ընդունեցի Rashed-Mohassel-ի ընթերցումը (axw-dēnīh): Նրա թարգմանությունն է. *وچدان استوار دینی*. با (կրոնական հաստատում/համազիստ խղճով): Gignoux-Tafazzoli-ն դրա փոխարեն ընթերցում է nihān-dēnīh (en secret), որ թարգմանվում է «գաղտնահավատություն», ինչն իրականում հակասում է հատվածի ընդհանուր բովանդակությանը և իմաստին, և քիչ հավանական է: West-ը (էջ 159) այս արտահայտությունը, դատելով թարգմանությունից, ընթերցում է anī (AHRN) dēnīh, որ թարգմանում է «այլ հավատքներ»:

հետ: Հավատքի հայտնությունն այն 33 կապի նշանն է, [որ ցույց է տալիս] 33 վատ օրենքի շրթայումը 33 լավագույն բարեգործությամբ:

6. Հավատքում բացատրություններ կան, [թե ինչ եղավ] մինչև Վիշտասպի կողմից Ջրադաշտի հավատքի ընդունելը կողմից, դատաստանների կատարումից և շատ տարատեսակ հրաշագործություններից ու ոգեկերպություններից²⁰⁷, որ երևացին, հետո և վկայությամբ երեք վեհախոս ամահրասպանդների, որոնք են Վահմանը, Արդվահիշտը և Բուրզեմնիիր կրակը^{lxxxii}, որ նյութական կերպարանքով հայտնվեցին Վիշտասպին, ժողովականներին և պալատականներին:

- Հատվածների վերջ -

Այստեղ ավարտվում են «Հատընտիր Ջադսպարամի» (Wizīdagīhā ī Zādšparam) գրքի այն հատվածները, որոնք պատմում են Ջրադաշտի կյանքի մասին: Այն, թե ինչպես Վիշտասպ արքան ընդունեց մագդալական հավատքը, այստեղ համառոտ կներկայացվի Dādestān ī Dēnīg պահլավական մատյանին կից դավանաբանական համառոտ մեկնաբանություններից ընտրված հատվածով: Այս տեքստը տառադարձված տարբերակով հրատարակված է Ալան Ուիլյամսի (A. V. Williams) կողմից “The Pahlavi Rivāyat, accompanying the Dādestān ī Dēnīg” (1990) գրքում:

Ջրադաշտի գալը Վիշտասպի մոտ

և վերջինիս կողմից Հավատքի ընդունումը

(The Pahlavi Rivāyat, 46: 16-19, 47: 11-25; Dēnkārd, Madan, pp. 637-8)

²⁰⁷ Բնագրում գրված է mēnōg-gohēh, որ ավելի ուղիղ կերպով կթարգմանվի «հոգևոր բնույթ ունեցողությունը», թեև լավ չի հասկացվում, թե ինչ նշանակություն այն ունի այստեղ, և որն է դրա ավելի ճշգրիտ թարգմանությունը:

46.16. Այնուհետև Վիշտասայի մոտ եկավ և երկու տարի Վիշտասայի դարձի բերման [համար] մնաց և Վիշտասային ասաց, թե՛ «Ընդունի՛ր Հավատքը, քանզի Օհրմագրի, ամահրասպանդների և մնացած յազատների կամքն է, որ դու այս հավատքը ընդունես»:

46.17. Եվ Վիշտասայը ասաց. «Եթե ձիու համար ես եկել կամ հարստության, ինչ-որ պետք է քեզ, վերցրո՛ւ և այստեղից գնա՛»:

46.18. Կրկին Ջրադաշտն ասաց. «Ընդունի՛ր Հավատքը», և Վիշտասայը ասաց. «Իմ մեղավորությունն այնպիսին է, որ երբ Հավատքն ընդունեմ էլ, իմ հոգուն որևէ լավություն չի լինի, քանզի առաջին ճակատամարտում վեց հազար, երկրորդում՝ հինգ հազար և երրորդում հինգ հազար [մարդ] սպանեցի: Այլ անգամ էլ, որ ճակատամարտ արեցի, նախ՝ հազար, երկրորդում տաս հազար և երրորդում հազար [մարդ] սպանեցի»:

46.19. Ջրադաշտն ասաց. «Նրանց սպանելու մեջ որևէ մեղք չկա, քանզի նրանք գալիլի սերունդներ էին, և բարի ես դու, որովհետև քեզ կսպանեին»:

47.11. Վիշտասայը դրանից հետո էլ հավատքը չընդունեց:

[Գենթարդ (Madan, pp. 637-8). «...Ապա, նախքան որ Ջրադաշտի խոսքը կլսեր, ինչպես և Ջրադաշտին կճանաչեր, մահով լի *Չահագի և մնացած քայիզների^{lxxxii} ու քարաբների հալածանքից և գրպարտանքներից ու կախարդություններից [Ջրադաշտի նկատմամբ], Վիշտասայը Ջրադաշտի վրա [բարկացավ]²⁰⁸ և ապա բանտարկության ու պատժի ենթարկեց...»:]

47.12. Եվ հետո Օհրմագրը Վահմանին, Աշավահիշթին^{lxxxiii} ու Բուրզեմնիի կրակին Վիշտասայի տուն ուղարկեց:

²⁰⁸ Չեռագրերում այստեղ նախկինում գտնվող բառը բաց է թողնվել, թեև այդտեղ եկող եւ մասնիկը ցույց է տալիս, որ այդտեղ որևէ բայ պետք է գրված գրված լիներ: Ուղիղ փակագծերի մեջ դրված բառը հարմարեցվեց ըստ նախադասության իմաստի:

47.13. Եվ ասացին Վիշտասային, թե՝ «Ընդունի՛ր Հավատքը, որովհետև եթե Հավատքն ընդունես, մենք բոլորս քեզ կօրհնենք երկար իշխանությամբ, թագավորությամբ և կյանքի երկարությամբ: Եվ կօրհնենք հարստությամբ (արշիշվանգով)^{lxxxiv} և հաստատամտությամբ (rāh-ēstiñth)²⁰⁹ և կտանք Փիշոթան^{lxxxv} անունով որդի՝ անմահ և չծերացող: Եթե չընդունես, ապա օդում [թռչող] անգղերին կհրամայենք, որպեսզի միտլ ուտեն, և ոսկորդ գետին ընկնի»:

47.14. Դրանից հետո էլ չընդունեց:

47.15. Եվ Օհրմազդը Ներյոսանգին ուղարկեց՝ ասելով. «Գնա՛ Արդվահիշթի մոտ և սա ասա, որ մանգ լցնի գինու մեջ և Վիշտասային տա»:

47.16. Արդվահիշթն այդպես արեց:

47.17. Երբ [Վիշտասայը] խմեց, տեղում ուշքը գնաց: Եվ նրա հոգուն [Արդվահիշթը] դեպի դրախտ առաջնորդեց և նրան Հավատքն ընդունելու արժանիքը ցույց տվեց:

47.18. Երբ ուշքը հետ եկավ, ձայն տվեց Հուրոսին^{lxxxvi} ասելով. «Ու՞ր է Ջրադաշտը, որպեսզի հավատքն ընդունեմ»:

47.19. Եվ Ջրադաշտն այն կանչը լսեց և առաջ գնաց, ու Վիշտասայը Հավատքն ընդունեց:

47.20. Բոլոր ոչխարները, ձիերը և բոլոր այրվող կրակներն ու բոլոր տնային ոգիները ցնծության մեջ էին, (47.21.) որ Ջրադաշտի խոսքը լսեցին, երբ Վիշտասային ուսուցանեց [Հավատքը]: Եվ նա Ջրադաշտին մոզպետաց մոզպետ^{lxxxvii} նշանակեց:

47.22. [Ջրադաշտը] երեսուն և հինգ տարի մոզպետաց մոզպետ եղավ:

47.23. Ապա Թուր Բրադրոխշը, որ գայլի կերպարանք ուներ, սպանեց Ջրադաշտին:

47.24. Ինքն էլ հենց նույն տեղում ավելի վատ մահով մեռավ:

²⁰⁹ Բառի թարգմանությունը հաստատ չէ: Բառացիորեն նշանակում է «ճանապարհի վրա կանգնած մնալը»:

47.25. Եվ [Ջրադաշտի կյանքը] ավարտվեց Դայ ամսվա Խվար (10-րդ ամսվա 11-րդ օրը) օրը:

- Հատվածների վերջ -

Ամփոփում Ջրադաշտի ավանդական կենսագրության

Եթե այստեղ փորձենք ի մի բերել Ջրադաշտի համառոտ կենսագրությունը, ապա կստացվի հետևյալ պատկերը.

Ջրադաշտը ծնվել է Օհրմագրի և Աիրիմանի պայման կապելուց հետո է հազարամյակի սկզբից երեսուն տարի առաջ, եթե ուղիղ թիվը դնենք՝ 5970-րդ տարում: Ընդ որում՝ ավանդական պահլավական աղբյուրները որպես ծննդյան վայր նշում են Ատրպատական նահանգի Մոգան (Մուղան) գավառի Ռադ գյուղը: Տասնհինգ տարեկանում նա դառնում է չափահաս և հորից ստանում ժառանգության իր բաժինը, որ իր ընտրությամբ լինում է «բուսթիզ» կոչվող գոտին, որն ամեն զրադաշտական պարտավոր է կապել իր կյանքի ընթացքում: Քսան տարեկանում նա թողնում է իր տունը և սկսում թափառումները: Երեսուն տարեկանում տեղի է ունենում նրա հանդիպումը Օհրմագրի և վեց ամահրասպանդների հետ, որի շնորհիվ նա սովորում է Հավատքը Օհրմագրից հարցեր տալու միջոցով: Այս դեպքի կարևորությունը զրադաշտական կրոնի համար այնպիսին է, որ այս տարվանից է սկսում 7-րդ հազարամյակը, որ հենց կոչվում է Ջրադաշտի հազարամյակ: Դրանից տաս տարի քարոզչություն անելուց հետո՝ քառասուն տարեկանում է նա կարողանում վերջապես գտնել իր առաջին աշակերտին՝ Մեդյոմասին (իբ հորեղբոր որդին): Քառասուներկու տարեկանում տեղի է ունենում Վիշտասալի հավատադարձությունը, որից հետո Ջրադաշտը մշտական բնակություն է հաստատում վերջինիս արքունիքում և զբաղեցնում մոզպետաց մոզպետի պաշտոնը՝ այդպես ապրելով ևս 35 տարի: Այս դեպքից հետո առանձին իրադարձություններ՝ կապված նրա կյանքի հետ, առանձնապես

չեն հիշատակվում: Նշվում է միայն, որ Ջրադաշտը սպանվել է յոթամասունյոթ տարեկան հասակում՝ իր մահացու թշնամի Թուր Բրադրոյալի ձեռքով: Եթե հետևենք Շահնամեին, սա տեղի է ունեցել Վիշտասայի մայրաքաղաքի՝ Բալխի^{lxxxviii} վրա թուրանցիների կատարած հանկարծակի հարձակման ժամանակ:

2.4. ՀԱՆԳՈՒՑՅԱԼՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ (ըստ «Բունդահիշն» (Bundahišn) մատրյանի)

Գլուխ L

Չինվաղ/ր կամրջի^{lxxxix} և մահացածների հոգիների մասին

1. Ասվում է Հավատքում, [որ] աշխարհի մեջտեղում մի գազաթ կա՝ հարյուր մարդու²¹⁰ [հասակի չափ] բարձրություն ունեցող, որ Դաիթի գազաթ են կոչում: Ռաշն յագատի կշեռքի լծակի (յս) մի ծայրը Հարբուրգ լեռան ստորոտում է՝ հյուսիսային կողմում, և մյուս ծայրը Հարբուրգ լեռան^{xc} գազաթին է՝ հարավային կողմում, և նրա (լծակի) միջնամասը գտնվում է Դաիթի գազաթի վրա:

2. Դրա մեջտեղի մասում մի շերը է գտնվում՝ սուր և թրի նման, որ ինը նիզակի չափ բարձրություն, երկարություն և լայնություն ունի^{xc1}:

3. Այնտեղ են մնում հոգևոր յագատները, որ հոգևոր կերպով մաքրագործում են առաքինիների հոգիները, և մի հոգևոր շուն կա կամրջի գլխին^{xcii}, և դժոխքն այդ կամրջի ներքևում է:

4. Երբ մարդիկ մահանում են, հոգին երեք գիշեր նստում է մարմնի մոտ՝ այնտեղ, որտեղ գլուխն էր, և այն գիշեր Վիզարշ^{xciii} դևից և [նրա] գործակիցներից շատ նեղություններ է տեսնում և շարունակ մեջքը դարձնում է կրակի կողմը, որ այնտեղ այրվում է:

²¹⁰ Նույն գրքի Թ գլխի 9-րդ հատվածի համաձայն՝ Դաիթի լեռան բարձրությունը հավասար է հազար մարդու հասակի բարձրության:

5. Այդ պատճառով այն երեք գիշերը մինչև լույս այնտեղ, որտեղ գլուխն է, կրակ են վառած պահում, և երբ այն կրակը չկա, [հոգին] մեջքը դեպի Վահրամական կրակը^{xciv} կամ նման կերպով այրվող (ham-afroḡḡomand) կրակների կողմն է դարձնում:

6. Այն երեք օրվա ընթացքում, երբ մարմինը քայքայվում ու փչանում է, այնպիսի դժվարություն է զգում նա (հոգին), կարծես թե իր տունը քանդում են:

7. Այն երեք օրը հոգին մարմնի գլխամասի մոտ այն հույսով է նստում, թե «[միգուցե այնպես] լինի, որ այդ արյունը հոսի, և շունչ մտնի մարմնի մեջ, և իմ վերադարձը հնարավոր լինի»:

8. Երրորդ գիշերվանից հետո՝ առավոտյան, եթե այն հոգին առաքինի մարդու է պատկանում, սա է ասում, թե՝ «Բարի է նա, ում պատկանում է բարությունը, ով էլ որ լինի, ինչպես ես եմ բարի, և իմ բարությունից ամեն մեկն է բարի, և Օհրմազդն ինձ իմ ցանկությունները [կատարելու] իշխանություն է տվել»:

9. Եթե այն չարագործի հոգի է, ասում է. «Այս մարմինը, կյանքն ու կերպարանքը, որոնցով [այս ու այն կողմ] սուրալով սուրացի... այժմ այստեղից դեպի ու՞ր վազեմ:

10. Եթե առաքինի է, այն խոսքի վրա մի հաճելի քամի կփչի, որ աշխարհի բոլոր քամիներից առավել լավը, բարեբույրն ու հաղթականն է, որ հոգուն երջանկություն է պարգևում:

11. Եթե չարագործ է, մի քամի կփչի, որ աշխարհի բոլոր քամիներից առավել գարշահոտ, կեղտոտ և ոչ-հաղթականն է, որ հոգուն վիշտ ու վախ է բերում:

12. Ապա տանում են այն հոգիներին դեպի հավաքատեղ՝ լինի առաքինի, թե չարագործ:

13. Եթե այն առաքինի մարդու հոգի է, ճանապարհին նրան կհանդիպի մի կովի կերպարանք, որ ճարպոտ ու կաթնառատ է, և նրանից հոգուն բարգավաճում և պարարտություն է հասնում:

14. Այնուհետև աղջկա կերպարանք է դիմացը ելնում՝ տասնհինգամյա, բարետես և ճերմակազգեստ, որ բոլոր կողմերից լավն է, և հոգին նրանից ուրախանում է:

15. Ապա պարտեզ է հասնում՝ պտղառատ, ջրառատ, մրգաշատ և ծաղկուն, որից հոգուն վայելք և երջանկանտություն է հասնում, որը և է՛ դրախտի երկիրը: Այս նշանները երկրի վրա մինչև հավաքն է տեսնում: Պատահում է, որ այն հոգին մեկ-մեկ հարցնում է, երբ նրանք իր դիմացն են ելնում: Հարցնում է, թե՝ «Դու ո՞վ ես, որ ինձ թվում է, թե ողջ ուրախությունն ու հանգստությունը քո մեջ են»:

16. Այսպես են նրանք մեկ-մեկ պատասխան տալիս, թե՝ «Ես քո առաքինի Հավատքն եմ: Այն արարքը, որ կատարեցիր, երբ դու բարություն էիր անում, ես քո շնորհիվ եմ այսպես դարձել»:

17. Եթե այն հոգին չարագործի է, ապա կովի կերպարանք է դիմացը ելնում, որ չորացած, նիհար ու սարսափելի է, և որից հոգուն չություն և հյուծվածություն է հասնում:

18. Հետո աղջկա կերպարանք է հասնում՝ սարսափելի և տգեղ, ում մեջ ստորամտությունն է ամբարված: Բոլոր կողմերից սարսափելի է, որից հոգուն աս ու վախ է իջնում:

19. Ապա մի պարտեզ է հասնում, որ անջրդի, անծառ և տխուր է, որից հոգուն չարախոհություն է գալիս, որը և է՛ դժոխքի երկիրը: Սա [մահացած հոգիների] հավաքից առաջ է [որպես] նշան տեսնում: Պատահում է, որ մեկ-մեկ հարցնում է, թե՝ «Ո՞վ ես դու, որ ես քեզնից ավելի վատը աշխարհում չտեսա»:

20. Պատասխան են նրան տալիս, թե՝ «Ո՞վ չարագործ, ես քո Հավատքն եմ, քո գործն եմ, քանի որ դու վատություն արեցիր, քո պատճառով եմ այսպիսին դարձել»:

21. Սրանից երևում է, որ ամեն մեկն իր արարքին է դեմառդեմ ելնելու:

22. Ապա այն հոգուն առաջնորդում են մինչև Հարբուրդ լեռան ստորոտը, որտեղ գտնվում է լծակի մի ծայրը: Նրա վրայով գնում է մինչև [Դ-աիթի] գագաթի բարձրությունը, որտեղ այն սուր շեղքն է գտնվում (այսինքն՝ Չինվադ/ր կամուրջը):

23. Ապա, երբ առաքինի մարդու հոգին [մոտենա], այն սուր շեղ-
բը [ողջ] լայնությամբ կկանգնի: Հաղթական Ֆարրոբայ կրակը խա-
վարը կցրի, և կրակի կերպարանքով այդ հոգին այն շեղբով կանցնի
և [ապա] հոգևոր յազատները կմաքրագործեն նրան հոգևոր կերպով,
[որից հետո նա] մյուս լծակով կանցնի մինչև Հարբուրգի գագաթը: Եվ
բարի Վայը^{xcv} նրա ձեռքը կբռնի և իր տեղը կտանի: Ինչպես հոգին
կընդունի, այնտեղ [այդպես] էլ կհանձնի:

24. Այն մարմինը նույնպես, որ աշխարհի վրա կմաքրագործեն,
նման է [այս] հոգևոր մաքրմանը:

25. Եթե այն հոգին չարագործ մարդու է, երբ որ այն լծակով դե-
պի [Դաիթի] գագաթը գա, այն սուր շեղբն իր տեղում կմնա և անցնե-
լու տեղ չի տա, ու [չարագործի հոգին] ակամա հենց նույն շեղբի
վրայով ստիպված կլինի գնալ: Երեք քայլ առաջ կդնի, որոնք են չա-
րամտությունը, չարախտությունը և չարագործությունը, որ կատարել
է, և կամրջի գլխից ներքև կսայթաքի ու գլխիվայր դժոխք կընկնի և
ամեն չարիք կտեսնի [այնտեղ]:

26. Սա էլ է ասվում, որ նա, ով մեծահոգությամբ առաքինի էր,
երբ այն քամին հանդիպակաց է գալիս, այդ քամու մեջ աղջկա կեր-
պարանք է տեսնում, այն հարցն է տալիս, և այն աղջիկն, առաջնոր-
դելով մի ճանապարհի (srat) վրա է բերում, որի վրա երեք կայան կա,
և այն ճանապարհով [հոգին] դրախտ է գնում երեք քայլով, որոնք են
բարի միտքը, բարի խոսքը և բարի գործը: Առաջին քայլը [բերում է]
մինչև աստղոտորտ, երկրորդը՝ մինչև լուսնոտորտ և երրորդը՝ մինչև
արեգակնային ոլորտ, որտեղ է և լուսավոր Գրախտը:

27. Եթե չարությամբ չարագործ է եղել, երբ հանդիպակաց քա-
մին գա, քամու մեջ աղջկա կերպարանք կգա, և [ինքը] այն հարց-
մունքը կանի: Արարքների պատճառով [կամուրջը] սուր շեղբի նման
կդառնա, որի ամբողջ [երկայնքը] սուր շեղբ է: Եվ այն հոգուն կասի.
«Ո՛վ չարագործ, ցանկանում ես, թե չես ցանկանում, սրա վրայով
պետք է քայլես»:

28. Ապա հոգին ասում է. «Եթե ինձ շատ սուր դանակով կտրես,
ավելի լավ կլինի, քան թե սրա վրայով քայլես»:

29. Երկրորդ անգամ էլ այսպես կասի և հոգին կպատասխանի. «Եթե ինձ տեղով հարվածես, ավելի լավ կլինի, քան թե սրա վրայով քայլեմ»:

30. Երրորդ անգամ այսպես կասի և նա կպատասխանի, թե՛ «Եթե կյանքը մարմնիցս առնես, ավելի լավ կլինի, քան սրա վրայով քայլեմ»:

31. Ապա այն արարքը (արարքի մարմնացում հանդիսացող աղ-ջիկը) վայրի և ահարկու գազանի կվերածվի և հոգու առջև կկանգնի, և այն հոգին այնպես կվախենա, որ դրա վրայով կքայլի և երեք քայ-լից կսայթաքի ու կընկնի:

32. Նրանք, որոնց մեղքն ու բարեգործությունը հավասար են, քավարան (hammistagān) կզնան:

33. Քավարանի մասին ասվում է, թե մի տեղ է, աշխարհին նման:

34. Ամեն մեկին, ով այն ոլորտում է, իր մարմինն ու կյանքն են տալիս, և նրանք նստում են [այնտեղ]:

- Հատվածի վերջ -

2.5. ՄԱՐԳԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՉՐԱԴԱՇՏԻՅ ՀԵՏՈ

(ըստ «Բունդահիշն» մատյանի)

Գլուխ ԼԳ

Վնասի մասին, որ հազարամյակ առ հազարամյակ եկավ Էրանշահր

1. Ասվում է Հավատքում, որ երբ Չար ոգին ներս խուժեց «Խառ-նակություն» առաջին հազարամյակի սկզբին, Կովն ու Գայոմարը կային: Երբ Մաշեն ու Մաշանեն այն ապերախտությունն արեցին, դրանից հետո 50 տարի նրանցից ծնունդ չեղավ: Նույն հազարամյա-կում՝ յոթանասուն տարվա ընթացքում, Հուշանգն ու Թահմուրափը [եղան], երկուսն էլ դևերին սպանեցին: Հազարամյակի վերջում դևերը Չամին պատառոտեցին:

2. Սկսվեց երկրորդ հազարամյակը: Աժդահակը դժնապետությամբ սկսեց անել և հազար տարի իշխեց: Երբ հազարամյակն ավարտվեց, Ֆրեդոնը [Աժդահակին] բռնեց և փակեց:

3. Երրորդ հազարամյակը սկսվեց: Երբ երկիրը հանձնեց Սալմին և Թուզին (Թուրին), նրանք սպանեցին Էրեզին և ոչնչացրին նրա որդիներին ու սերունդներին:

4. Նույն հազարամյակում ծնվեց Մանուշիհիրը և Էրեզի վրեժը լուծեց:

5. Ապա Աֆրասյաբը²¹¹ եկավ և Մանուշիհիրին ու Էրանցիներին Փաղիշխվարգար^{xv} քեց և վերացրեց [նրանց] կարիքով, նեղությամբ ու շատ մահերով և Մանուշիհիրի Ֆրաշ և Նոդար որդիներին սպանեց, մինչև հաջորդ սերունդը Էրանշահիրը Ֆրասյաբի ձեռքից ետ առավ:

6. Երբ Մանուշիհիրը սպանվեց, կրկին Ֆրասյաբը եկավ և Էրանշահիրում շատ ավերածություններ կատարեց և անձրևը Էրանշահիրից հետ պահեց, մինչև Ուզավ Թահմասպանը եկավ և Ֆրասյաբին դուրս քշեց և [նորից] անձրևը բերեց, որ «նոր-անձրևում» են կոչում:

7. Ուզավից հետո Ֆրասյաբը կրկին մեծ չարիքներ արեց Էրանշահիրում, մինչև Քավադը արքայության հասավ:

8. Քայ-Ուսի թագավորության ժամանակ՝ նույն հազարամյակում, դևերը կրկին բռնացան և Օշնարը^{xvii} սպանելու եկավ և [Քայ-Ուսի] միտքը մոլորեցրեց, մինչև որ [նա] երկնքի դեմ պատերազմի ելավ և գլխիվայր ընկավ, ու Փառքը նրանից հեռացավ: Ապա ձիերով և մարդկանցով [Քայ-Ուսը] աշխարհն ավերակ դարձրեց, և նրան *Շամբարան երկրում արքայական անվանիների հետ միասին կապեցին:

9. Մեկը, որ Ձենգավ էր կոչվում, որ աչքի մեջ թույն ուներ և արաբներից էր, Էրանշահիրի արքայությունը ձեռք բերեց և ում չար աչքով նայում էր, սպանում էր:

²¹¹ Տեքստում հանդիպում են և՛ Afrāsyāb, և՛ Frāsyāb ձևերը:

10. Էրանցիներին [իշխել] Ֆրասյաբը ցանկացավ, մինչև նա Ձենգավին սպանեց և Էրանշահրում իշխեց և շատ մարդկանց Էրանշահրից տարավ ու Թուրքեստանում^{xcviii} բնակեցրեց և Էրանշահրն ավերեց, մինչև որ Ռոդեսթահնը Սագաստանից^{xcix} ելավ և Շամբարանցիներին գերեց, Քայ-Ուսին ու մնացած էրանցիներին կապանքներից ազատեց և Ֆրասյաբի հետ Ուլե գետի^c ափին, որ Սպահան են կոչում, ճակատամարտեց և այնտեղ պարտության մատնեց և շատ այլ ճակատամարտեր էլ տվեց, մինչև դուրս քշեց [Ֆրասյաբին] և Թուրքեստան նետեց ու Էրանշահրը վերստին շենացրեց:

11. Կրկին Ֆրասյաբը պատերազմեց, և Քայ-Սյավախշը ճակատամարտի եկավ: Սուդավեի՝ Քայ-Ուսի կնոջ պատճառով, (12.) Սյավախշը^{ci} կրկին Էրանշահր չվերադարձավ, և քանի որ Ֆրասյաբը նրան ապաստան տվեց, Քայ-Ուսի մոտ չեկավ, այլ Թուրքեստան գնաց և ամուսնացավ Ֆրասյաբի դստեր հետ, և Քայ-Հուսրավը նրանից ծնվեց:

13. Սյավախշին այնտեղ սպանեցին:

14. Նույն հազարամյակում Քայ-Հուսրավը Ֆրասյաբին սպանեց, և ինքը գնաց Քանգ-դեգ^{cii} և իշխանությունը փոխանցեց Լոհրասպին:

15. Երբ Վիշտասպշահը երեսուն տարի թագավորել էր, հազարամյակն ավարտվեց:

16. Ապա սկսվեց Ջրադաշտի հազարամյակը:

17. Այն հազարամյակում Ջրադաշտը հավատքը Օհրմագդից ընդունեց և բերեց, և Վիշտասպշահն այն ընդունեց և տարածեց և Արջասպի հետ դաժան ճակատամարտ արեց^{ciii} և արիներից ու անարիներից շատերը վերացան²¹²:

²¹² Փաբգաղը (էջ 366) այստեղ և ներքևի մի քանի հատվածներում հանդիպող «վերանալ» բառի (որ ես եմ այդպես թարգմանել) տեղում եկող բառին վերջնական ընթերցում չի տվել և գրել է 'pyst, միայն էջատակի ծանոթագրություններում է կասկածանքով առաջարկել abesihid (hēnd) ընթերցանությունը՝ կողքը հարցական նշան դնելով: Սակայն այստեղ դժվար է կասկածել, որ գործ ունենք արտագրողի արագագրության

18. Նույն հազարամյակում, երբ իշխանությունը Վահման Սփանդղադյանին^{cv} հասավ, [Էրանշահիրը] ավերված էր, և էրանցիներն իրենք իրենց վերացան (ավելի շուտ՝ վերացրին), և արքայական տոհմից ոչ ոք չէր մնացել, որ թագավորեր: Եվ նրանք Հումային՝ Վահմանի դստերը, գահ նստեցրին:

19. Հետո՝ Դարայ Դարայանի թագավորության ժամանակ, Ալեքսանդր կեսարը Հռոմից^{cv} ներխուժեց և սպանեց Դարային^{cv} ու ողջ արքայական ընտանիքին, Էրանշահիրի մոզերին ու անվանի մարդկանց վերացրեց, բազմաթիվ կրակներ հանգցրեց և մազդեզանց Հավատքն ու զանդը տարավ ու Հռոմ ուղարկեց և «Ավեստա»-ն վանեց և Էրանշահիրը հանձնեց 90 իշխանների [կառավարմանը]^{cvii}:

20. Ապա նույն հազարամյակում հայտնվեց Արտաշիր Փափագանը^{cviii} և սպանեց այն իշխաններին ու հաստատեց արքայական [իշխանությունը] և մազդեզանց Հավատքը տարածեց ու շատ օրերներ վերականգնեց, որ նրա տոհմում պահպանվեցին:

21. Շապուհ Որմիզդյանի^{cx} իշխանության ժամանակ արաբները եկան և գրավեցին Ուլե գետի ավիր և շատ տարիներ կողոպտում ու հարձակումներ էին անում, մինչև Շապուհն իշխանության հասավ (դարձավ չափահաս) և նրանց՝ արաբներին, դուրս քշեց, երկիրը նրանցից վերցրեց և արաբների շատ արքաների սպանեց ու բազմաթիվ ուտեր (...)²¹³:

22. Պերոզ Հազկերտյանի^{cx} թագավորության ժամանակ յոթ տարի անձրև չեկավ, և մարդկանց մեծ չարիք ու դժվարություն հասավ:

23. Այլև Հիֆթալների^{cx} արքա *Խաշնավազը եկավ ու սպանեց Պերոզին, իսկ Քավադին ու նրա քրոջը՝ *Աթախշագին, որպես պատանդ, հիֆթալների մոտ տարավ:

ու սղագրության արդյունքների հետ, որի պատճառով բնագրում գրվել է abesīd/abesihīd-ի փոխարեն, ինչից ելնելով էլ թարգմանել են «վերանալ» (abesihīdan):

²¹³ was maragīhā šānag ԽՄՊ, որի վերջին բառի իմաստը դժվար է հասկանալ: Առասպելը հավանաբար առնչվում է Շապուհ Բ-ի الاكتاف «ուտերի տեր, ուտերի տիրակալ» մականվան հետ:

24. Քավաղի^{cxii} թագավորության ժամանակ Մազդակ Բամդա-դանը^{cxiii} հայտնվեց և հիմնեց մազդակյան օրենքը (ուսմունքը) և խա-բեց ու մոլորեցրեց Քավաղին և հրամայեց, որ կանանց, երեխաներին ու ունեցվածքը ընդհանուր պետք է համարել, մազդեզանց հավատքը մեջտեղից հեռացրեց, մինչև անմահ-հոգի Հուսրավ Քավաղանը^{cxiv} չափահասության հասավ և սպանեց Մազդակին ու վերահաստատեց մազդեզանց Հավատքը: Եվ հյոններին^{cxv}, որ ասպատակ էին անում Էրանշահիրը, դուրս քշեց և անցակետը^{cxvi} փակեց:

25. Երբ իշխանությունը Հազկերտին^{cxvii} հասավ, քսան տարի իշ-խեց: Ապա արարները մեծ թվերով Էրանշահի խուժեցին: Հազկերտը նրանց հետ ճակատամարտում [չկարողացավ] հաղթել և Խորասան ու Թուրքեստան գնաց և ձի, մարդ ու օգնություն խնդեց, և նրան այն-տեղ սպանեցին:

26. Հազկերտի որդին Հնդկաստան գնաց^{cxviii} և գորք բերեց: Մինչև Խորասան գալը մահացավ: Այն գորքը վերացավ, և Էրան-շահին արարներին մնաց: Եվ նրանք իրենց չարակրոնության ուս-մունքը տարածեցին: Նախանիների շատ օրենքներ վերացրին և մազդեզանց հավատքը թուլացավ: Դիակ վանալը, դիակաթաղու-թյունը և դիակակերությունը^{cxix} սկսեցին գործադրվել:

27. Աշխարհի արարման [օրից] մինչև այսօր սրանից ավելի մեծ չարիք չի եկել, քանզի նրանց չարագործության պատճառով, կարի-քի, ավերածության, բռնության, վատօրինության ու չարակրոնու-թյան պատճառով կարիքն ու աղքատությունը և այլ չարիքներ [մշտական] հյուր են դարձել:

28. Հավատքի մեջ ասվում է, որ նրանց դժնապետությունն ավարտվելու է:

29. Մի խումբ կգա՝ կարմիր նշաններով, կարմիր դրոշով, և Փարսն ու Էրանշահիի գավառները մինչև Բաբելոն կգրավի և արաբ-ներին կճնշեն^{cxx}:

30. Ապա մի վատ մարդ կգա արևելյան կողմից և նրանց՝ փա-ղիշխվարգարցիներին կքշի և մի քանի տարի դժնապետություն կա-

նի: Նրա տիրապետության ժամանակ մարդիկ Փարսում կվերանան, և բացառությամբ մի փոքր քանակի Քազերունում և ծովափնյա կողմերում՝ էլ [մարդիկ] չեն գտնվի^{cxxi}:

31. Դրանից հետո թուրք խյոնները մեծ քանակությամբ և շատ դրոշներով Էրանշահր կխուժեն և այս շեն ու բարեբույր Էրանշահրը կավերեն ու ազատների շատ ընտանիքներ կվերացնեն, Էրանշահրի մարդկանց շատ չարիք ու բռնություն կանեն, շատ տներ կքանդեն ու կվերացնեն, և [մարդկանց գերի] կվերցնեն, քան թե կգթան:

32. Երբ հռոմեացիները կհասնեն ու մեկ տարի կիշխեն, այն ժամանակ Քաբուլեսթանի^{cxxii} կողմից մեկը կգա, որ Փառքը իր հետ ունի և արքաների տոհմից է, և ում Քայ-Վահրամ են կոչում: Բոլոր մարդիկ կրկին նրա հետ կլինեն, և նա կիշխի Հնդկաստանի, Հռոմի ու Թուրքեստանի վրա և բոլոր սուտ հավատքները կվերացնի և Ջրադաշտի հավատքը կհաստատի: Ոչ մեկը չի կարողանա բացահայտորեն որևէ աղանդ ընդունել²¹⁴:

33. Նույն նահանգ կգա Քանգ-դեգից Փեշյոբան Վիշտասայանը 150 առաքիմի մարդու հետ և այն կռատունը, որ նրանց (կռապաշտների) գաղտնարանն էր, կքանդի ու վահրամական կրակը մաքրությամբ կհիմնի և Հավատքն ամբողջությամբ կառողջացնի ու կհաստատի:

34. Ապա Ուշեդարի հինգերորդ հազարամյակը կսկսվի:

35. Ուշեդար Ջրադաշտյանը՝ որպես Հավատքի առաջնորդ և ճիշտ մարգարե, կգա Օհրմագոյի կողմից [ուղարկված], և ինչպես Ջրադաշտը Հավատքը բերեց, այնպես էլ նա Հավատքը կբերի և կտարածի: Նեղությունն ու չարությունը կպակասեն և մեծահոգությունը, հաշտությունն ու անքիճախնորությունը կփայլեն ողջ աշխարհում: Երեք տարով բույսերին ոսկեգույնություն կտա: Վաթանի գետը^{cxxiii} ձիախասակ խորությամբ կհոսի, Քայանես ծովի^{cxxiv} աղ-

²¹⁴ Ընդհանուր այս բայը բոլոր ձեռագրերում գրված է որպես pad grawiṣn āmadan, որը թեև նույնպես թարգմանվում է «փոխվել, հավատափոխ լինել», սակայն grawiṣn ձևն ակնհայտորեն արտացոլում է նոր պարսկերեն geravidan ձևը: Բուն միջին պարսկական ձևը կլինի pad wurroyiṣn āmadan:

բյուրները կրկին կհոսեն և արեգակը տաս օր ու գիշեր երկնքի բարձրագույն կետում կանգնած կմնա, և գայլացեղ [կենդանիները] ամբողջությամբ կվերանան:

36. Հետո՝ այն ժամանակ, երբ Ուշեդարի հազարամյակը կավարտվի, կհայտնվի կործանարար բնույթ ունեցող Մալքուալ^{cxxv} Թուր Բրադդոխի տոհմից, որ Ջրադաշտի մահն էր: Եվ կախարդակրոնությամբ ու վիուկակամությամբ սհարկու անձրև, որ «մալքուսական» են կոչում, կբերի, և երեք տարի ձմեռը [շատ] ցուրտ և ամառը [շատ] տաք կլինի: Անհամար մահացու ձնատեղությամբ ու կարկուտով այնպես բոլոր մարդկանց, բացի մի փոքր [մասից], կվերացնի: Ապա մարդկանց և կենդանիների վերականգնումը Ջամակերտ ապաստարանից^{cxxvi} կլինի, որ այս գործի համար գաղտնի կառուցվեց:

37. Սա էլ [է սավում], որ այն ժամանակ հազար տեսակ հիվանդության դեմ պայքարելու համար ստեղծված բույսերի բժշկությունը (բժշկելու հատկություն) կանցնի երկու տեսակ և [ապա] մեկ տեսակ բույսի երկրի վրա: Ոչ ոք հիվանդությունից չի մահանա, այլ միայն ծերությունից, կամ երբ սպանեն:

38. Հետո վեցերորդ՝ Ուշեդարմահի հազարամյակը կսկսվի, որ կոչում են Ուշեդարմահի հազարամյակ:

39. Այն հազարամյակում Ուշեդարմահ Ջրադաշտյանը՝ որպես մարգարե, Օհրմագդի [կողմից] կգա, ինչպես Ջրադաշտը Հավատքը բերեց, նա էլ կբերի և աշխարհում կտարածի: Քսան օր ու գիշեր արեգակը երկնքի բարձրագույն կետում կանգնած կմնա: Վեց տարի բույսերին ոսկեգույնություն կտա և այն ազահությունից սերված չարքին կվերացնի, այսինքն՝ օձերին ու խրաֆաթարներին կվերացնի:

40. Ապա Ուշեդարմահի հազարամյակի ավարտին Դահակը կապանքներից կարձակվի: Բյուրասալը^{cxxvii} շատ արարածների ու արարչությունը իր դևամտությամբ կվնասի:

41. Այն ժամանակ կհայտնվի Սոշյանս Ջրադաշտյանը, և 30 օր ու գիշեր արեգակը երկնքի բարձրագույն կետում կանգնած կմնա:

42. Առաջինն աշխարհի մահացածներից Գարշասպ Սամանին վեր կհանեն, որ գուրգով կհարվածի և կսպանի Բյուրասային ու արարածներից կհեռացնի: Սոշյանսի հազարամյակը կսկսվի, և նրա մարմնակերտ հազարամյակը [կտևի] 57 տարի:

43. Ջրադաշտի այս երեք որդիների՝ Ուշեդարի, Ուշեդարմահի և Սոշյանսի մասին ասվում է, որ նախքան Ջրադաշտը կգուգավորվեր, նրանց Փառքը Ջրադաշտը պահպանության հանձնեց ջրերի Փառքին, այն է՝ Անահիտ յազատին, Քայանսե ծովի մեջ:

44. Այժմ էլ ասում են, որ երեք ճրագ է փայլում ծովի հատակին, որ գիշերը բոլորն են տեսնում:

45. Ամեն մեկի ժամանակը որ կհասնի, այնպես կլինի, որ մի աղջիկ գլուխ լվալու համար կմտնի Քայանսեի ջրերի մեջ և նրա (Ջրադաշտի) Փառքը մարմնի մեջ կխառնվի, և նա կհղիանա: Նրանցից (երեք մարգարեներից) յուրաքանչյուրն իր ժամանակում այդպես կծնվի:

2.6. ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ԱՀՐԻՄԱՆԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

(ըստ «Բունդահիշն» մատյանի)

Գլուխ ԼԴ

Հարության և ապագա մարմնի մասին

1. Ասվում է Հավատքի մեջ, որ երբ Մաշեն ու Մաշանեն գետնից վեր աճեցին, սկզբում ջուր, ապա բույս, ապա կաթ և ապա միս կերան, այդ պատճառով մարդիկ էլ, որոնց մահը մոտենում է, սկզբում միս, ապա կաթ, ապա նաև հաց ուտելուց են հրաժարվում և մինչև մահանալը միայն ջուր են խմում:

2. Ազ^{cxviii} [ղևի] ուժը Ուշեդարմահի հազարամյակում այնպես կպակասի, որ մարդիկ մեկ ճաշկերույթով երեք օր ու գիշեր կուշտ կմնան:

3. Այնուհետև մասկերությունից կհրաժարվեն և բույս [կուտեն] ու կենդանիների կաթ կխմեն: Ապա և կաթնակերությունից կհրաժարվեն, հետո բուսակերությունից կհրաժարվեն, և ջրախմություն միայն կլինի: Սոշյանսի գալուց 10 տարի առաջ ոչինչ-կերություն կլինի, և [մարդիկ] չեն մահանա: Ապա Սոշյանսը մահացածներին վեր կհանի:

4. Այսպես է ասում, որ Ջրադաշտը Օիրմագդին հարցրեց, թե այն մարմինը, որ քամին քայքայեց, և ջուրը տարավ, որտեղից կվերականգնեն, և Հարությունն ինչպե՞ս կլինի:

5. Եվ պատասխանեց, թե՝ «Ինչպես երկինքն առանց սյուների՝ հոգևոր հիմքի վրա, լայնարձակ, լուսավոր և փայլող մետաղի բնույթից, ինչպես երկիրը, որ ողջ մարմնավոր արարածներին է տանում և ինքը նյութական հենարան չունի, արարեցի, և ինչպես իմ արեգակն ու լուսինն ու աստղերն օդային տարածություններում լուսակերպ շարժվեցին, ինչպես հասցահատիկն արարեցի, որ հողի մեջ են նետում, և կրկին աճում ու առատանում է, ինչպես բույսերին տարատեսակ գույներ տվեցի և բույսերի ու այլ բաների մեջ չվառվող կրակ ստեղծեցի, մայրերին որդի բերելու [կարողություն] տվեցի և [մարդկանց] պաշտպանեցի ու առանձին-առանձին մազ, մաշկ, եղունգ, արյուն, ոտք, աչք ու ականջ և այլ մասեր տվեցի, ինչպես ջրին ոտք (շարժունակություն) տվեցի, որ հոսի, և ինչպես ամպ ստեղծեցի՝ հոգևոր կերպով, որ աշխարհին ջուր է բերում և որտեղ որ կամենում, անձրևում է, և ինչպես օդը ստեղծեցի, ում ուժն ակնհայտորեն քամու մեջ է և փչում է, ինչպես կամենում է, ու ձեռքով անհնար է բռնել: Իմ արարածներից ամեն մեկը մեկ-մեկ ավելի դժվարկատարելի էր, քան մահացածների Հարությունը, քանզի Հարության ժամանակ նրանց օգնության պես օգնություն, որ իրենց արարելու ժամանակ չունեի, կունենամ: Տե՛ս, որ երբ այն, [ինչը նախկինում] չկար, ես արարեցի, ապա ինչո՞ւ այն, ինչ որ եղել է, չեմ կարող կրկին ստեղծել: Քանզի այն ժամանակ երկրի ոգուց ոսկոր, ջրից՝ արյուն, բույսից՝ մազ և քամուց՝ հոգի, ինչպես աշխարհարարման ժամանակ նրանցից ընդունեցի, կուզեմ:

6. Առաջինն է այն Գայոմարտը, որ վեր կհառնի, հետո՝ Մաշեն ու Մաշանեն, և ապա բոլոր մնացածը վեր կհառնեն:

7. 57-րդ տարում Սոշյանսը բոլոր մահացածներին վեր կհանի (վեր հանած կլինի), և բոլոր մարդիկ կրկին վեր կելնեն՝ թե՛ առաքինին, թե՛ չարագործը: Մարդկանցից ամեն մեկն այնտեղից վեր կելնի, որտեղ նրանց կյանքը կտրվեց, կամ առաջին անգամ աշխարհ եկան:

8. Ապա, երբ բոլոր մարմնավոր արարածների մարմինն ու տեսքը կվերականգնեն, իրենց իսկ տեսքը կտան: Եվ այն լուսավորությունը, որ արեգակն ունի, կեսը՝ Գայոմարտին, մյուս կեսը մնացած մարդկանց կտան:

9. Ապա մարդը մարդուն կճանաչի, ինչպես հոգին հոգուն և մարմինը մարմնին է ճանաչում, թե՛ «Սա իմ հայրն է, և սա իմ մայրն է, և սա իմ եղբայրն է, և սա իմ կինն է, և սա ես եմ», և ով որ մերձավոր ազգական է:

10. Ապա, երբ մարդիկ այս երկրի վրա [կրկին] կկանգնեն, տեղի կունենա իսադվասաբարական^{cxix} ժողովը:

11. Այն ժողովում ամեն ոք իր բարեգործություններն ու չարագործությունները կտեսնի: Առաքինին չարագործների մեջ այնպես կերևա, ինչպես սպիտակ ոչխարն է երևում սևերի մեջ:

12. Այն ժողովի մեջ [այն] առաքինի մարդը, որ երկրի վրա չարագործ ընկեր ուներ, այդ չարագործը ողբալով կբողոքի այն առաքինուց, թե՛ «Ինչո՞ւ երկրում այն բարի վարվելակերպից, որին ինքդ էիր հետևում, ինձ տեղյակ չպահեցիր»: Եթե առաքինին այդ կերպ նրան չի տեղեկացրել, ապա ժողովի ժամանակ ամոթ պետք է գգա:

13. Ապա առաքինիներին չարագործներից կառանձնացնեն: Հետո առաքինիներին դրախտ կտանեն և չարագործներին կրկին դժոխք կնետեն: Երեք օր ու գիշեր դժոխականները դժոխքում մարմնապես ու հոգեպես պատիժ կկրեն: Առաքինիները դրախտում մարմնապես այն երեք օր ու գիշերը վայելք կտեսնեն:

14. Այնպես է ասվում, որ այն օրը, երբ չարագործին առաքինուց և առաքինուն չարագործից կառանձնանան, ամեն մեկը արցունք

կթափի մինչև ոտնաթաթերը, երբ որդուն՝ հորից, և եղբորը՝ եղբորից, ընկերոջը ընկերոջից կբաժանեն:

15. Ամեն ոք իր արարքի [պատիժը] կկրի. կողբա առաքինին չարագործի վրա, և չարագործը կողբա ինքն իր վրա: Կա, որ հայրը առաքինի է, և որդին՝ չարագործ, կա, որ մի եղբայրը առաքինի է և մյուսը՝ չարագործ: Նրանք, ովքեր արքա-թշնամություն արեցին, ինչպես Դահակը, Ֆրասյաբը և *Վամանը (°), նրանց նման այլոք նույնպես [դրա] պատճառով մահարժանների պատիժն այնպես կկրեն, ինչպես ոչ ոք մարդկանցից չի կրի, որ «թիշրամ խշաֆնամ» (ավեստ.՝ «երեք գիշեր») են կոչում:

16. Այն Հրաշակերտություն անելու [ժամանակ] նրանցից՝ առաքինի մարդկանցից, որոնց համար գրվեց, թե «կենդանի են»^{cxix}, տասնհինգ տղամարդ և տասնհինգ կին Սոշյանսին օգնության կհասնեն:

17. Գոզիիր օճը^{cxxi}, որ երկնային տարածության մեջ է, լուսնի ծայրից կընկնի երկրի վրա, և երկիրն այնպիսի ցավ կզգա, ինչպես ոչխարն է զգում, երբ գայլը կաշին է քերթում:

18. Ապա Կրակ և Էրման^{cxixii} յազատները լեռների միջի մետաղը կհալեցնեն, և այն երկրի վրա գետերի նմանությամբ կկանգնի:

19. Ապա բոլոր մարդիկ այն հալած երկաթի միջով կանցնեն և [իրենց] կմաքրեն: Ով առաքինի է, [նրան] կթվա, որ կարծես տաք կաթի միջով է անցնում, և ով չարագործ է, [նրան] կթվա, որ հալված մետաղի միջով է անցնում:

20. Այնուհետև մեծ սիրով բոլոր մարդիկ իրար կհասնեն՝ հայրն ու որդին ու եղբայրն ու բոլոր ընկերները: Մարդը մարդուց կհարցնի, թե՞ «Այն քանի տարին որտե՞ղ էիր, և հոգուդ ի՞նչ դատաստան է եղել, առաքինի էի՞ր, թե՞ չարագործ»:

21. Սկզբում հոգին մարմնին կտեսնի և նրան կհարցնի: Այն հարցուփորձի ժամանակ մարդիկ միաձայն կդառնան և բարձրաձայն կերկրպագեն Օհրմագդին ու ամահրասպանդներին:

22. Օհրմագղն այն ժամանակ ավարտած կլինի արարչությունը, քանզի դրանից ավելի գործ անելու կարիք չի լինի, երբ որ մահացածներին կկենդանացնի:

23. Սոշյանսն օգնականների հետ մահացածների վերականգնության գոհաբերությունը կկատարի: Եվ այն գոհաբերությանը Հաղյոշ կովին^{cxxxiii} կապանեն, այն կովի ճարպից ու սպիտակ հոմից անմահության խմիչք կպատրաստեն ու բոլոր մարդկանց կտան, և բոլոր մարդիկ անմահ կդառնան մինչ հավերժություն:

24. Սա էլ է ասում, որ ովքեր [հասուն] մարդու տարիք ունեին, այժմ նրանց 40 տարեկանում կրկին կվերականգնեն: Եվ նրանք, ովքեր փոքր ու ոչ հասուն էին, այնժամ նրանց կրկին 15 տարեկանում կվերստեղծեն: Եվ բոլորին կին ու զավակ կտան և կնոջ հետ այնպես կմիանան, ինչպես այժմ են անում աշխարհում, բայց որդեծնություն չի լինի:

25. Հետո Սոշյանսն Արարչի հրամանով բոլոր մարդկանց վարձ ու հատուցում կտա՝ ըստ արարքների: Կա նաև այսպիսի առաքինի մարդ, ասում է, ում կառաջնորդեն դեպի Օհրմագղի դրախտ, քանզի նա պետք է կերպարանք առնի և մինչև անվերջություն նրանց հետ մնա:

26. Սա էլ է ասում, որ ով գոհաբերություն չի արել, գեթիզխրիդ^{cxxxiv} չի կատարել և արժանավորներին որպես ողորմություն հագուստ չի տվել, այնտեղ մերկ է: Եվ [այնժամ] Օհրմագղը յաշքը կանի, և Գաթաների ոգին հագուստի հոգսը այսպես կհոգա:

27. Ապա Օհրմագղը՝ Չար ոգուն, Վահմանը՝ Աքոմանին, Աշավահիշքը՝ Անդարին, Շահրեվարը՝ Սավուլին, Սպանդարմատը՝ Թարոմատին, որ Նանհայսն է, և Հորդաղն ու Ամորդաղը՝ Թարիզին ու Ջարիզին^{cxxxv}, և ճշմարտախոսությունը՝ ստախոսությանը, Մրոշահիլավը արյունագուրգ Խեշմին^{cxxxvi} կբռնեն:

28. Ապա կմնան երկու չարք՝ Ահրիմանն ու Ազր:

29. Օհրմագղը երկիր կգա, ինքը՝ քուրմ, Մրոշահիլավը՝ օգնական, որ ձեռքին սրբազան գոտի ունի:

30. Չար ոգին ու Ազը, Գաթաների աղոթքի շնորհիվ զենքերը կապված և ուժասպառ, երկնքի այն անցքի միջով, որով ներս խուժեցին, կրկին դեպի խավարն ու մթությունը կփախչեն:

31. Օձ Գոգիհիրը այն հալված մետաղով կայրվի և մետաղը դժոխքի մեջ կհոսի, և այն աղտեղությունն ու կեղտոտությունը երկրի ներսում, որ դժոխքն էր, այն երկաթով կայրվեն և մաքուր կդառնան: Այն [անցքը], որով Չար ոգին անցավ, այդ մետաղով կփակվի:

32. Գժոխքի այն հողը կրկին աշխարհի բարեբերությանը կբերեն (բարեբեր կդարձնեն), արարածների միջև կլինի Հրաշակերտությունը:

33. Սա էլ է ասում, որ այս երկիրը կլինի առանց բարձրությունների և ցածրությունների և հարթ կլինի և լեռ, գագաթ, կիրճ ու բարձրավայր կամ ցածրավայր չի ունենա:

Ավարտվեց ողջությանը, ուրախությանը և ցնծությանը

- Հատվածի վերջ -

Աշխարհի պատմության փարեգրությունը

ըստ զրադաշտական ավանդության

(ըստ զրադաշտական առասպելական տասներկուհազարամյա շրջանի)

0-3000. Այն ժամանակահատվածը, որն ընկած է Ահրիմանի առաջին և երկրորդ հարձակումների միջև, երբ արարչությունը դեռ միայն հոգևոր կերպով գոյություն ուներ:

3000-6000. Այն ժամանակահատվածը, որն ընկած է Ահրիմանի երկրորդ և երրորդ հարձակումների միջև, երբ արարչությունն արդեն նյութական կերպարանք էր ստացել, սակայն անշարժ էր:

6000. Ահրիմանի երրորդ հարձակումը (Շեգատ), որի արդյունքում Չարը կարողացավ թափանցել Բարի արարչության մեջ և մնալ այդ-

տեղ: Այստեղից է սկսվում «Խառնակության» ժամանակաշրջանը (gumēzišn):

6000-6030. Գայոմարտը դեռ շարունակում է ապրել, սակայն մահանում է 6030-րդ տարում:

6070. Գեռնից աճում են Մաշեն ու Մաշանեն:

6120. Նրանց առաջին երեխայի ծնունդը:

6213 (և վեց ամիս). Հուշանգի ծնունդը:

6253 (և վեց ամիս). Հուշանգի մահը և Թահմուրափի գահակալության սկիզբը:

6283 (և վեց ամիս). Թահմուրափի գահակալության ավարտը և Ջամի գահակալության սկիզբը:

6900. Ջամի բարի և արդար իշխանության տարիների ավարտը, որով և ավարտվում է նրա իշխանության ժամանակ եղած ոսկե ու երանելի շրջանը:

6900-7000. Ջամի հարյուր տարի վատ կառավարումը:

7000-8000. Աժդահակի դժնապետության ժամանակաշրջանը:

8000-8500. Ֆրեդոնի իշխանության տարիները:

8500-8512. Էրեզի՝ իրանցիների անվանադիր նախնու իշխանությունը:

8512. Էրեզի սպանությունը Թուրի և Սալմի կողմից, որով սկսվում է Իրանի և Թուրանի անդադար թշնամությունը:

8512-8632. Մանուշիհի կառավարումը:

8632-8635. Ուզավ Թահմասպանի թագավորության երեք տարիները:

8635-8650. Քայ-Քավադի իշխանությունը:

8650-8800. Քայ-Քաուսի թագավորության հարյուր հիսուն տարիները, որոնցից առաջին 75 տարին ընկած էր մինչև նրա երկինք թռչելու փորձ կատարելը, մյուս 75-ը՝ դրանից հետո:

8800-8860. Քայ-Հուսրավի թագավորության տարիները:

8860-8980. Քայ-Լուիրասպի թագավորության տարիները:

8970. Ջրադաշտի ծնունդը:

8980. Վիշտասպի գահակալության սկիզբը:

9000. Ջրադաշտի հանդիպումը Օհրմագոլի և յոթ ամահրասպանոյների հետ և Հավատքի փոխանցումը նրան:

9010/12. Վիշտասապի կողմից Ջրադաշտի Հավատքի ընդունումը:

9030. Հյոնների արքա Արջասապի հարձակումն Իրանի վրա և սպա պարտությունը:

9100. Վիշտասապի գահակալության ավարտը:

9100-9212. Վիշտասապի որդի Սփանդղադի որդի Վահման Սփանդղադանի գահակալությունը:

9212-9242. Վահմանի դուստր Հումայի իշխանության տարիները:

9242-9254. Դարայ (Դարեհ) Չիհրազադանի գահակալությունը:

9254-9268. Դարայ Դարայանի գահակալությունը, որի վերջում նա սպանվեց Ալեքսանդր Հռոմեացու կողմից:

9268-9282. Ալեքսանդրի տասնչորսամյա կառավարումը:

9282- ≈ 9482 (և մի քանի տարի ևս). Արշակունիների գահակալությունը:

Արշակունիներից հետո եկան Սասանյանները, որոնց իշխանության տարիները կազմում են 460 տարի, որից հետո Հազկերտ արքան սպանվեց, և իշխանությունն անցավ արաբներին:

Հիմնական գրականության ցանկ

1. Աբրահամյան Ռուբեն, Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965:
2. Աճառյան Հրաչյա, Հայերեն Արմատական Բառարան, Երևան, 1971:
3. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1994:
4. Նալբանդյան Գեորգի, Ս., Պահլավերեն-հայերեն բառարան, Երևան, 1994:
5. Bahār, Mehrdād, Bondaheš, Tehrān, Enteshārāt-e Tus, 1390 (1st ed. 1378).
6. Bartholomae, Christian, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904.
7. Boyce, Mary, A History of Zoroastrianism, vol. I, Brill, 1975.
8. Darmesteter, James, Sacred Books of the East, vol. IV, The Zend-Avesta, *The Vendidad*, Oxford, 1880.
9. Darmesteter, James, Sacred Books of the East, vol. XXIII, The Zend-Avesta, *The Sīrōzahs, Yašts, and Nyāyiš*, Oxford, 1883.
10. Ferdowsi, Hakim Abu al-Qāsem, Šāhnāme, Tehrān, Peyaman, 1388.
11. Gignoux, Philip; Tafazzoli, Ahmed, Anthologie de Zādspram, Paris, 1993.

12. Griffith, Ralph T. H., *The Hymns of Rig Veda*, Kotagiri, 1896 (2nd ed., 1st ed. 1889).
13. Hassandoust, Mohammad, *An Etymological dictionary of the Persian language*, in 5 volumes (in Persian), 3rd ed., 1395 (1st 1383; 2nd 1393).
14. Ibn Khordādbēh, *Masālek va mamālek*, tarjome-ye Sa'īd Xākrand, Tehrān, 1371.
15. MacDonell, Arthur A., *Vedic Mythology*, Strassburg, 1897.
16. MacKenzie, David N., *A Concise Pahlavi Dictionary*, London, Oxford University Press, 1971.
17. Madan, Dhanjishah M., *The Complete text of Pahlavi Dinkard*, Pts I, II, Bombay, 1911.
18. Mazdāpour, Katāyun, *Shāyist Nāshāyist*, A Pahlawī Text, IHCS, Tehran, 2011.
19. Mirfakhraie, Mahshid, *Bayān Yasn*, Avestan and Zand, IHCS, Tehran, 2003.
20. Modi, Jivanji Jamshedji, *The Religious Ceremonies and Customs of the Parsees*, Bombay, 1922.
21. Rashed-Mohassel, Mohammad Taqi, *Srōš Yasn*, Avestan and Zand of the Yasn 57, IHCS, Tehran, 2002.
22. Mohassel-Rashed, M. T., *Vizīdagīhā ī Zādisparam*, Persian Translation, Transcription, Comentary, Glossary and Pahlavi text, IHCS, Tehran, 2011 (1390, 1st ed. 1366).
23. Nyberg, Henrik S., *Manual of Pahlavi*, vol. II, Wiesbaden, 1974.
24. Pakzad, Fazlollah, *Bundahišn*, Zoroastrische Kosmogonie und Kosmologie, Band I, Tehran, 2005.
25. West, Edward W., *Sacred Books of the East*, vol. XLVII, *Marvels of Zoroastrianism*, Oxford, 1897.
26. Yarshater, Ehsan (ed.), *The Cambridge History of Iran*, The Seleucis, Parthian and Sasanian periods, vol. 3 (1), 1983.
27. Williams, Alan W., *The Pahlavi Rivāyat*, accompanying the *Dādestān ī Dēnīg*, 1990.

Ծանոթագրություններ

ⁱ Պիլ՝ [asar] rōšnīh «[անվերջ] լուսավորություն, լույս», Օհրմագղի բնական տիրույթը, որը սահմանափակ է մի կողմից (այնտեղ, որտեղ սահմանակցում է խավարի՝ Ահրիմանի տիրույթի հետ) և անսահմանափակ է մյուս՝ հակառակ կողմից:

ⁱⁱ Պիլ՝ [asar] tarīkīh «[անվերջ] խավար», Օհրմագղի հավերժական թշնամի Ահրիմանի բնական տիրույթը, որը նույնպես մի կողմից սահմանափակ, մյուս կողմից անսահմանափակ է:

ⁱⁱⁱ Չրադաշտականության գլխավոր աստվածը, բարու սկզբունքի տիրակալը և բարության մարմնացումը: Ըստ գր.-ական կրոնի՝ այն ամենը, ինչ բարի է, նրա ստեղծածն է, և չկա մի բան նրա ստեղծածների մեջ, որ չար լինի (այսինքն՝ այն, ինչ չար է, գալիս է չարի՝ Ահրիմանի էությունից): Նրա անունը, որի նախնական ձևն է ավեստ.՝ *ahura-mazdā*, հանդիպում է «Ավեստա»-ի ամենավաղ հատվածներում և նշանակում է «խմաստուն իշխան, տեր» (Barth., *Alt. Wört.*, s. 294-5; Mirfakhraie, 2003, p. 135): Օհրմագղի (< Անուրա-մագղա) անունն անցել է փոփոխության մի շարք փուլերով, որոնցից մեկի ժամանակ (հավանաբար մ. թ. Ա դարում) փոխանցվել է հայերենին (Արամագղ) և այդպես է հասել մեր օրերը: Իհարկե, դժվար կլինի մեծ ճշգրտությամբ ասել, թե իրականում ի՞նչ արտասանություն է անունն ունեցել միջին պարսկերենում: Անվան պահլավերեն տառադարձումն այստեղ բերելն անիմաստ է, քանի որ միայն առաջին երեք տառերը կարող են կարդացվել ամեն մեկը 3-5 ձևերով: Մանիք. գրքերում այն գրված է **whrom(y)zd*: Ամենայն հավանականությամբ հայերենի մեջ Արամագղ անունը մտել է Արշակունիների ճյուղի հաստատման հետ, երբ Հայաստանն ընկավ պարթևական լայն ազդեցության ներքո: Հավանաբար հենց այդ վաղ ժամանակին է իր այս ձևով պարտական «Արամագղ»-ը, որ նախապես միզուցե ունեցել է «Ա(հ)րամագղ» արտասանությունը:

^{iv} Ահրիմանը չարի մարմնացումն է և Օհրմագղի գլխավոր թշնամին ու կատարյալ հակապատկերը. նրա արած ամեն գործը չարիք է: Անունը ավեստ.՝ *agra-mainiū*-, որից առաջին բառը նշանակում է «թշնամի», երկրորդը՝ «ոգի»: Բառը, փոփոխության ենթարկվելով միջ. պարսկերենում, դարձել է *ahriman*, որը պարսիկ դայիբները, հետաքրքիր սովորությամբ առաջնորդվելով, ձեռագրերում սովորաբար գլխավայր էին գրում:

^v Պիլ՝ *spenāg mēnōg*, ավեստ.՝ *spənta.mainiū*-, Օհրմագղի անուններից մեկը, որով նա հայտնի է և՛ «Ավեստա»-ում, և՛ պահլավական գրականության մեջ:

^{vi} Ժամանակը՝ պիլ. *zamān, zurwān*, որ առանձին աստվածություն է հանդիսացել: Ըստ «Բունդահիշն»-ի՝ ժամանակն անկախ գոյություն չի ունեցել, այլ ստեղծվել է Օհրմագղի կողմից (Bund., 1.36), սակայն ինչպես երևում է այստեղ՝ «Հատընտիր Չադապարամի»-ում, այն առանձին էություն է, որ անկախ է և՛ Օհրմագղից, և՛ Ահրիմանից: Եզնիկ Կողբացու բերած ավանդության համաձայն (Գիրք Բ, Եղծ քեշին պարսից, էջ 92, այս ավանդությունը պահպանվել է նաև հույն և ասորի աղբյուրներում)՝ այն նույնիսկ վերջիններիս ծնողն է: Սա, ինչպես նաև WZ-ի տարբերակն արտացոլում են հավանաբար մի ժամանակ Սասանյան պետության կողմից պաշտոնապես ընդունված զովանական հոսանքի (կամ աղանդի) դրույթները: Այն, որ Չադաշտականության գրվանական տարբերակն էր ընդունված Սասանյան կայսրությունում, կարելի է եզրակացնել Եզնիկ Կողբացու երկից:

^{vii} Ավետերենով ավանդված գրադաշտականության կարևորագույն երեք աղոթքներից մեկը, որ սկսվում է *yaθa ahu vairiōd* բառերով:

^{viii} Վերջերս հայտնաբերված *Wirāzagān* կոչվող պահլավական երկի մեջ հայտնվում է, որ այս մատյանը գրվում է Տիր յազատի կողմից (*Asha, R., Wirāzagān*, p. 4): Այս հիշատակումը Տիր աստծո՝ որպես դայիր առաջին ուղիղ հիշատակումն է պահլավական գրականության մեջ:

^{ix} *fraškardārīh* կամ ավելի ճիշտ *frašgird* (ավետ.՝ *frašd.kərəti*), այն է՝ «նորակերտություն» կամ «հրաշակերտություն», թեև դժվար է ասել ինչ կապ ունի հյ. «հրաշք» բառն այստեղի «*fraš*»-ի հետ (Աճառյան, Արմ. Բառ., հ. Բ, 131-132): Այս բառով հասկացվում են Օհրմագղի և Ահրիմանի կապած պայմանի 9000-ամյա ժամկետի լրանալուն հետևող բարի ուժերի հաղթանակը և Ահրիմանի պարտությունը, որից հետո աշխարհը կմաքրվի Ահրիմանի բերած չարիքից, մահացած մարդիկ նոր մարմին կստանան և ընդմիշտ երջանիկ կապրեն:

^x Խոսքը երկու արմատների՝ բարու և չարի սկզբունքների գոյությունն ընդունելու մասին է, ինչը կազմում էր գրադաշտականության գլխավոր և հիմնականետային սկզբունքը: Բառը այդպես դրեցի՝ հետևելով Ե. Կողբացուն (էջ 94):

^{xi} Այս հատվածը, ինչպես և նախորդը, նույնպես բավական խրթին է և դժվարըմբռնելի: Այն որոշ գրվածական տարրեր է պարունակում, որտեղ Չրվանը՝ Ժամանակը, ոչ թե ստեղծված է Օհրմագղի կողմից, այլ ինքն է ինչպես Օհրմագղի, այնպես էլ Ահրիմանի գոյության սկզբնաղբյուրը: Իհարկե, այստեղ նման բան չի ասվում, սակայն այնուամենայնիվ Չրվանի ինքնուրույնությունը և անկախությունը խոսում են գրվածականության ուղղակի կամ անուղղակի դավանաբանական ազդեցության մասին: Պատկերացնելու համար ողջ ավածը տես «Բունդահիշը»-ից վերցված հետևյալ հատվածները. «1.35. Եվ տեսավ Օհրմագղը [իր] հստակատեսությամբ, որ Չար ոգին երբեք թշնամությունից չի հրաժարվի, և այն թշնամությունը չի թուլանա՝ բացառությամբ միայն արարածների ստեղծման [միջոցով]: Եվ արարչությունն առանց ժամանակի շարժման չի լինի, և երբ ժամանակը ստեղծի, Ահրիմանի արարչությունն էլ շարժուն կդառնա: 1.36. Եվ այլ երբ չունենալով՝ թշնամուն թուլացնելու համար Ժամանակը ստեղծեց: 3.7. Ժամանակից ստեղծեց տարածությունը, որ Չրվան երկար-իշխանի մարմինն է, ով ճակատագրի աստվածն է (...): 1.42. Այսպես է ասվում Հավատքում, որ Ժամանակը ուժեղ է երկուսի արարչությունից՝ ինչպես Օհրմագղի, այնպես էլ Չար ոգու արարածներից: Ժամանակն է գործի ու դատաստանի չափը (այս.՝ դրանք չափվում են ժամանակով): Ժամանակը խելոք է խելոքներից ու պատասխանատուներից ամենապատասխանատուն, քանզի վճիռը ժամանակի վրա կարելի է կատարել: Ժամանակն է, որ տուն է քանդում, և ժամանակի վրա արված որոշումն է կոտրում և ոչ ոք նրանից չի փրկվում մահկանացու մարդկանցից, ոչ երբ վեր թռչի, ոչ երբ խորը հոր փորի և մեջը նստի, ոչ երբ սառը ջրերով գետի մեջ մտնի» (հատվածների թվագրումը այստեղ և հետագայում՝ ըստ Pākzād F., *Bundahišn, Zoroastrische Kosmogonie und Kosmologie*, Band I, Tehran, 2005):

^{xii} Երկինքը բաղկացած է երեք ոլորտներից (*pāyag*), որոնք են ըստ երկրին մերձավորության՝ աստղերի ոլորտը, ապա լուսնի ոլորտը և ամենից բարձր՝ արեգակնային ոլորտը, որտեղ և գտնվում է Օհրմագղի դրախտը:

^{xiii} Այսինքն՝ առաջին ամսվա առաջին օրը:

^{xiv} gāw ī ek-dād, այսինքն՝ միակ ստեղծված կամ եզակի կովը, որ բոլոր բարի կենդանատեսակների (gōspand) ներկայացուցիչն էր, ինչպես Գալոմարտը՝ առաջին մարդը, մարդկանց ներկայացուցիչն էր:

^{xv} gayōmard կամ ավեստ.՝ gaiiō.marətan- (> պիլ. gayōmard), այսինքն՝ «կյանք մահկանացու» (Nyberg, ii, p. 82): Օհրմագդի կողմից ստեղծված առաջին մարդը, որ աշխարհարարման սկզբնական շրջանում միակն էր երկրի վրա: Սակայն երբ Ահրիմանի հարձակման պատճառով նա մահանում է, նրա սերունդ երկիրը պահում է, և քառասուն տարի հետո գետնից աճում է առաջին մարդկային գույզը:

^{xvi} Թմրեցնող բույս, որի անունը հաճախ է հանդիպում պահլավական գրականության մեջ:

^{xvii} Չր.-ական «ահունվար» աղոթքի մեկ այլ անունը:

^{xviii} Չր.-ական կրոնական տերմինաբանության մեջ այս անունով են կոչվում մարդուն հայտնի բոլոր վնասակար գեռունները, որոնք Ահրիմանի արարածներն են, և որոնց պետք է ոչնչացնել:

^{xix} Միիրը (տվյալ դեպքում՝ արեգակը) և լուսինն իրականում օհրմագդական արարածներ են և ալոպիսին էլ միշտ համարվում են: Սակայն նրանց անունների առջև դրած «արախթարական» բառը նրանց տալիս է հակառակ՝ բացասական նշանակությունը: Պահլավերեն abāxtarēg բառը կազմված է abāxtar բառից և -ēg ամականակերտ վերջածանցից: abāxtar երկու նշանակություն ունի՝ ա. հյուսիս և բ. մոլորակ: Այն ծագում է ավեստերեն apāxtara- (բուն նշանակությունը՝ «ետադարձ՝ քիկունքի կողմ») բառից, որ նշանակում է «հյուսիս» (Barth., Alt. Wört., s. 79-80; Nyberg, ii,) և ըստ ամենայնի կողմնակի զարգացումն է բերել «մոլորակ» նշանակությանը: Քանի որ հյուսիսային կողմը կապված է Ահրիմանի հետ, բառը ունի բացասական երանգավորում, և «արախթարական» հավասար կերպով նշանակում է «ահրիմանական»: Տվյալ դեպքում «արախթարական Միիր» է կոչվում այն երևակայական երկնային մարմինը, որ օհրմագդական արեգակի հակառակորդն է և փակում է նրա ուղին (նման երևակայական երկնային մարմնի մասին պատկերացումների դրոպատճառ են ըստ երևույթին հանդիսացել արևի խավարումները): «Արախթարական լուսին» է կոչվում լուսնին հակադիր մի ուրիշ երևակայական երկնային մարմին: Ինչ վերաբերում է քիչ հետո նշված հինգ մոլորակներին, ապա դրանք հներին հայտնի Արեգակնային համակարգի հինգ մոլորակներն էին՝ Փայլածուն, Արուսյակը, Հրատը, Լուսնթագն ու Երևակը, որոնք զր.-յան մեջ համարվում էին Ահրիմանական արարածներ:

^{xx} Ավեստ.՝ gōuš.urvan- (առաջին մասը՝ gav- «ցուլ, կով», երկրորդը՝ urvan- «ոգի»), Օհրմագդի ստեղծած եզակի (aēvō.dāta-) Կովի կամ ավելի շուտ՝ Յուլի հոգու անվանումը, որ բառացիորեն նշանակում է «ցուլի հոգի» (Nyberg, ii, p. 84; Barth., Alt. Wört., s. 505-9): Այն համարվում է ողջ «բարի» կենդանական աշխարհի ներկայացուցիչը:

^{xxi} Յազատներ (պիլ.՝ yazad, ավեստ.՝ yazata-՝ «պաշտամունքի արժանիներ», Barth. Alt. W., s. 1279), սովորաբար կոչվում են գր.-յան մեջ հանդիպող փոքր, երկրորդ աստիճանի աստվածությունները (առաջինն են Օհրմագդը և ամահրասպանդները), որոնք բնության մեջ որևէ երևույթի ներկայացուցիչներ են, ինչպես, օրինակ, Միիրը՝ արեգակի, դաշինքի, ընկերության յազատը, Անահիտը՝ ջրերի յազատը և այլն, որոնց մեծ մասի ծագումը եղել է գրադաշտականությունից առաջ՝ դեռևս հնդիրանական և

հնդեվրոպական ժամանակներում: Ինչպես երևում է, դրանց մի մասը նաև անցել է հայերենին: Բացի այս նեղ իմաստից (ենթադրում են՝) այն ունի ավելի լայն իմաստ և ներառում է նաև Օհրմագդին և ամահրասպանդներին, այնպես որ՝ պահլավական գրականության մեջ հանդիպող ընդհանրական yazadān անվանումը հաճախ նկատի ունի նաև Օհրմագդին և նրանից ցածր կանգնած երկնային էակներին միասին, այսինքն՝ բոլոր բարի «աստվածներին»:

^{xxii} Այսինքն՝ Ահրիմանի ներխուժման (ēbgat) և Հրաշակերտության (frašgird) միջև ընկած ժամանակահատվածում (6000 տարի):

^{xxiii} Տե՛ս ծանոթ. 18:

^{xxiv} Մահ բերող դևը (Nyberg, II, p. 33):

^{xxv} Հիվանդությունները (MacKenzie, Pahl. dict., p. 97) կամ հիվանդության դևերը տվյալ դեպքում: Բառը ծագում է ավեստ. yaska- «հիվանդություն» բառից և պահպանվել է նոր պարսկերենում՝ որպես جاسک (jask), որ սակայն ունի մի փոքր այլ իմաստ՝ «ցավ, տանջանք, տառապանք» (Hassandoust, Etym. dict., s. 954) :

^{xxvi} Այս Օհրմագդ աստղը, ինչպես նաև քիչ ներքևում հիշատակված Քեվանը, իրականում մոլորակներն են՝ Լուսնից ու Երևակը (MacKenzie, Pahl. dict., p. 51, 61):

^{xxvii} Օհրմագդ մոլորակի բնույթը, չնայած վերջինիս «Օհրմագդ» անվանը, չար է: Այստեղ հեղինակը ցանկանում է ասել, որ Օհրմագդ մոլորակը գերի էր բարի արարածների ձեռքում և այդ պատճառով էլ նպաստում Գայոմարտի կյանքի պահպանմանը:

^{xxviii} Թվում է, թե այստեղ հեղինակը տրամաբանական հակասության մեջ է մտնում ինքն իր հետ, քանի որ հենց նախորդ հատվածում նշված է, որ երկուն էլ գտնվում էին իրենց բարձրագույն կետերում: Հավանաբար տեքստը սխալների և աղավաղման է ենթարկվել:

^{xxix} Պահլավական գրականության մեջ երկրի կառուցվածքին նվիրված հատվածներից դժվար է պատկերացնել, թե ինչ տեսք ունեն երկիրը: Համենայն դեպս «Բունդահիշն»-ի Ա գլխի 9-րդ հատվածում այն կոչվում է «gird» (շրջանաձև), որ կարող է վերաբերել ինչպես գնդաձևությանը, այնպես էլ հորիզոնական շրջանաձևությանը: Ընդհանուր առմամբ պահլավական այս գրքերում ներկայացված աշխարհագրական պատկերացումներն իրենցից ներկայացնում են մի տարօրինակ խառնուրդ, որի մեջ սերտ կերպով միաձուլվել են Մասանյանների ժամանակ և դրանից երկու-երեք հազարամյակ առաջ արդի եղած աշխարհագրական գիտելիքները: Այս միությունն անշուշտ ներդաշնակ չէր, ինչը հաճախ է թյուրիմացությունների պատճառ դառնում: Այդ պատճառով էլ հաճախ բավական դժվար կամ գրեթե անհնար է միանշանակ պատասխան տալ որոշ հարցերի:

^{xxx} Երկինքը պատրաստված էր մետաղից, ավելի ճիշտ՝ ավմաստից, որ մտնում էր մետաղների թվի մեջ:

^{xxxi} Պիլ.՝ frawahr, ամեն մարդ ունի իր պահապան ոգին, որ գոյություն ունի նրա ծննդից առաջ և մնում է նաև մահվանից հետո: Առաքինի մարդկանց ֆրավահրները առավել զորեղ են և օգնում են Օհրմագդին իր պայքարում (Յաշք 13: 12): Ընդ որում՝ ոչ միայն մարդիկ, այլև ամեն կենդանի էակ, որ բարի արարչության ներկայացուցիչ է, ունեն իրենց ֆրավահրին, այդ թվում՝ հոգևոր արարածները և անգամ Օհրմագդը (Յաշք 13: 80, 82):

^{xxxii} Այն յազատը, որ կատարում է Օհրմագղի սուրհանդակի դերը և փոխանցում նրա խոսքը:

^{xxxiii} Ավեստ.՝ *spənta-armaiti-*, որ թարգմանաբար նշանակում է մոտավորապես «սուրբ ողջախոհություն/ուղիամտություն/բարեպաշտություն»։ Օհրմագղին ուղեկցող վեց ամահրասպանդներին մեկը: Իգական ամահրասպանո, որ երկրի անձնավորումն է: Հայերենի մեջ այն նույնպես թափանցել է և դարձել «սպանդարամետ» սանդարամետ» (տե՛ս Աճառյան, Արմ. Բառ., հոդ. *սանդարամետ*):

^{xxxiv} Ամահրասպանդները կամ ամշասպանդները (ավեստ.՝ *aməš Da-spənta-*), որոնց անունը թարգմանվում է որպես «անմահ սրբեր» (Barth., *Alt. Wört.*, s. 145), ընդհանրական անվանումն են Օհրմագղի և նրան ուղեկցող վեց սուրբ հոգևոր էակների, որոնք կարող են համարվել նաև Ահուրամագղի վեց առաքինությունների մարմնացումները: Ահա նրանց թվարկումը.

1. Ահուրա մազդա
2. Վոհու մանահ (բարի միտք)
3. Աշա վահիշտա (լավագույն առաքինություն/արդարություն/կարգ)
4. Խշաբրա վաիրյա (ընտրյալ/ընտիր իշխանություն)
5. Սպընտա արմախտի (սուրբ ողջախոհություն)
6. Հատրվատատ (ամբողջություն, կատարելություն)
7. Ամրըրտատ (անմահություն):

^{xxxv} Այս գաղափարը շատ մնան է ճննողոց գրքում նկարագրված առաջին գույզի՝ Ադամի և Եվայի կատարած զանցանքին, որով գույզը արժանացավ պատժի (Ճննողոց, 3): Ի տարբերություն ճննողոց գրքի՝ սակայն, բացակայում է այն գաղափարական երանգավորումը, որ առկա է վերջինում, այսինքն՝ անհնազանդության ցուցաբերումը (Ճննողոց, 3: 14-24): Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ երկու գույզերն էլ դատապարտված են դժոխսարձակության:

^{xxxvi} Ըստ հին իրանական աշխարհագրության՝ աշխարհի վրա գոյություն ունեն յոթ մայրցամաքներ, որոնցից ամենամեծը՝ Խվանիրահը, գտնվում է կենտրոնում, և նրան շրջապատում են մնացած փոքր մայրցամաքները, որոնք են Արգահը (Խվանիրահից արևելք), Սավահը (արևմուտքում), Ֆրադադաֆշը և Վիդադաֆշը (հարավային կողմում), Վորուբարշը և Վորուշարշը (հյուսիսում): Սրանք բոլորը միասին վերցրած են միայն հավասար Խվանիրահի տարածությանը: Հասարակ մարդիկ այս մայրցամաքների միջև անցուդարձ չեն կարող անել (Bund., 8.3.4): Բոլոր իրենց հայտնի ազգերը՝ իրանցիները, հռոմեացիները, չինացիները, հնդկները ևլն, ապրում են Խվանիրահում:

^{xxxvii} Սրա այս կերպով նմանեցումը Հռոմին բավական տվորական երևույթ է պահլավական աշխարհագրության մեջ, որտեղ անհիշելի ժամանակների աշխարհագրական տեղանունները, որոնք մասամբ նաև առասպելական երանգներ ունեն, փոքր է արվում նույնացնել տվյալ ժամանակաշրջանի աշխարհագրական իրականության հետ: Մասնավորապես տվյալ դեպքում Հռոմն իրական ոչ մի կապ չունի նախապատմական և ավետայական Սալմ երկրի կամ ժողովրդի հետ:

^{xxxviii} Փաքգաղը (Էջ 192, ծ. 306), բառը *Gāy* ընթերցելով, հավանական է համարում նաև բառի *Dāy* ընթերցումը, որով այն կարելի է նույնացնել դահերի՝ Կասպից ծովի հարավ-արևելյան շրջաններում ապրող մի ժողովրդի անվան հետ: Սակայն Մ.

Բահարը մեկ այլ հավանական կարծիք է առաջ քաշում: Ըստ նրա (Bahār, Bondaheš 1390 : էջ 174)՝ այս երկիրը սողդերի երկիրն է՝ Սողդիանան (Միջին Ասիայում՝ Ամուդարյա և Սիրդարյա գետերի միջև՝ Չարաֆշան գետի հովտում, որի կենտրոնն էր Սամարղանդը), որ «Ավեստա»-ում կոչվում է gava- (Barth., Alt. Wört., s. 509, «որտեղ բնակվում են սողդերը»), և gāy նրա ձևափոխված տարբերակն է:

^{xxxix} Այս բոլորը գուտ առասպելական ծագում ունեցող կերպարներ են, որոնց իրանցիների հետագա սերունդները երկնքից ներքև են իջեցրել և Էվհեմերոսի տեսությամբ (ըստ որի՝ աստվածները հերոսացված մարդիկ են, ինչն այդքան էլ չի համապատասխանում իրականությանը) գործնական կիրառություն տվել: Թեև Հուշանգի և Թահմուրասի մասին այդքան էլ շատ բան չի կարելի ասել, սակայն Վիվանգհանի որդի Չամի (ավեստ.՝ Yima) մասին բավական տեղեկություն է հայտնի, շնորհիվ հատկապես իրանցիների ազգակից հնդարիական ցեղերի, որոնց ամենավաղ գրական հուշարձանում՝ «Ռեզ-վեդա»-ում հիշատակվում է Վիվասպանի որդի Յաման: Առանց որևէ կասկածի սա նույն Յիման է: «Ռեզ-վեդա»-ում նա համարվում է առաջին մահացած մարդը, որ իշխում է երկնքում գտնվող դրախտում, որտեղ մահացածների թագավորն է: Ընդհանուր առմամբ, ի մի բերելով նրա մասին տեղեկությունները, հնդկագետ Ա. Մըքր-Ռոնելը եզրակացնում է, որ հավանաբար Յամա-Յիմայի կերպարը ներկայացնում է տարբեր ժողովուրդների մոտ հանդիպող առաջին նախնու, առաջին մարդու կերպարը, որ տեսակետին կշիռ է հաղորդում նրա հետև՝ «Ավեստա»-ում, և՛ «Ռեզ-վեդա»-ում հիշատակվող նրա գույգ քույրը, ով, ըստ սկզբնական հավատալիքների, նրա կինն է եղել և սկիզբ տվել մարդկային ցեղին: Լինելով առաջին մարդը՝ նա մաս եղել է առաջին մահացող մարդը՝ այդպիսով հարբելով հանդերձյալ ուղին իր սերունդների համար: Հետագա հնդկական գրականության մեջ նրա իշխանությունը, այսինքն՝ մահացածների գնալու վայրը, երկնքից տեղափոխվել է ընդհատակ (MacDonell: pp. 171-173):

^{xl} Աժդահակն «Ավեստա»-ում և հետագա գրականության մեջ հանդիպող առասպելական չար արքա է, որ բռնի կերպով զավթել է իշխանությունը (պիլ.՝ azdahāg, ավեստ.՝ azi-dahāka): Նրա անվան առաջին մասը՝ azi- (հմմ. սանս.՝ ahi-) նշանակում է «օձ», ընդ որում՝ ազգակից է հայերեն բառի հետ (տես՝ Hassandoust, Etym. dict., էջեր 187-9 և Աճառյան, Արմ. Բառ., հոդվ.՝ օջ): Երկրորդ մասը՝ dahāka-, համարվում է նրա անունը, ընդ որում արմատի ստուգաբանական ծագումը պարզ չէ (Hassandoust, ն. տ.), չնայած Հերցենբերգը ենթադրում է, որ բառը ծագում է հին իրան. *dnhāka- արմատից՝ «կախարդական ուժի տեր, կախարդ» իմաստով (ն. տ.): Հնարավոր է մաս, որ բառը կապ ունի սանս. dāsa-՝ «արյաներին թշնամի ցեղ, թշնամի, թշնամի դև» (“ein den ārya-feindlicher Volksstamm, Feind, feindlicher Dämon”) բառի հետ (Mayrhofer, Etym. Wört., I, s. 723-4): Նախապես Աժդահակը եղել է այն առասպելական վիշապը, որ իրանցիների և հնդիկների նախնիների ու մնացած հնդեվրոպական ժողովուրդների պատկերացմամբ գերի է առել երկնային կովերին՝ ամպերին, և չի թողել, որ դրանք մարդկանց անձրև բերեն: Ապա եկել է քաջ հերոսը (Ինդրա, Թրաեթաոնա, Ջիգֆրիդ և այլն), ով սպանել է վիշապին և ազատել է ջրերին, որից հետո տեղացել է անձրևը: Հետագա հեթիաթներում և առասպելներում պատմությունը վերափոխվել է այնպես, որ վիշապը փակել է ջրերի ճամփան և ապա գերի է վերցրել արքայադստերը, ինչից

հետո եկել է հերոսը և սպանել վիշապին՝ ազատելով ջուրը և արքայադստերը: Նման բովանդակություն հանդիպում է նաև հայկական հեքիաթներում:

^{xli} Հնդիրանական առասպելներում Աժդահակին հաղթող հերոսը (ավեստ.՝ θραētaona): Անունը հետագա փոփոխությամբ է դարձել Ֆրեդն: Նրա անունը հիշատակվում է նաև հայ մատենագրության մեջ՝ որպես Հրուդեն (Խորեն., Հայոց պատմ., Պարս. առասպ., էջ 57):

^{xlii} Այսօրվա Իրանի ամենաբարձր գագաթը՝ հայտնի Գամավադն անունով (5671մ), որ Ալբորզ լեռնաշղթայի մեջ է մտնում: Գագաթից ծծմբային արտանետումներ են լինում շարունակ, որոնք բավական հեռվից տեսանելի են: Հավանաբար դա պատճառ է դարձել լեռան մասին շրջանառվող այսպիսի առասպելների առաջացման համար:

^{xliii} Էրանշահր (ērān-šahr) բառացիորեն «արյաց երկիր», որ միջնադարում Իրանի պաշտոնական անվանումն էր:

^{xliv} kay բառը ծագում է ավեստ. kavi- բառից, որ նշանակում է «արքա»: Այն սակայն ավելի վաղ ծագում ունի և նախկինում հավանաբար ունեցել է «քուրմ, բանաստեղծ, աստվածներին հիմներ երգող» նշանակությունը, ինչի մասին է վկայում սանս. ऋचि: (kavih) «բանաստեղծ» բառը:

^{xlv} Ավեստ.՝ aurvaš.aspa-: Քայյան արքայատոհմի արքաներից, թեև ոչ այդքան աչքի ընկնող: Ըստ ավանդության (որ հատկապես պահպանված է «Շահնամե»-ում)՝ նա ծերության ժամանակ հրաժարվել է գահից և այն թողել է Վիշտասպին ու խաղաղ կյանքով ապրել, մինչև այն ժամանակ, երբ Վիշտասպի բացակայությունից օգտվելով՝ բուրանցիները հարձակվել են Բալխի վրա: Այդ ժամանակ նա դուրս է եկել մարտի և սպանվել մարտում, նույն ժամանակ, ինչ Ջրաղաշառը:

^{xlvi} Որպես «փառք» այստեղ թարգմանված է պիլ. xwarrah, ավեստ.՝ x^varənah հասկացությունը, որի իմաստը իրականում որոշակիորեն տարբերվում է մեզ ծանոթ «փառք»-ի գաղափարից, թեև վերջինս ծագումով գալիս է իրանական այս բառից: Ավեստ. x^varənah- բառը հավանաբար ծագում է հին իրան. *hvarnah-՝ «շող, լուսավորություն» բառից, որն էլ իր հերթին ծագում է հնդեվ. sūel-nos-ից, որից sūel- նշանակում է «այրվել» (Hassandoust, Etym., dict., s. 1995-6): Այս բառով նշանակվում է Ահուրամազդայի կողմից ստեղծված այն կախարդական, երկնային գորությունը, որ ուղեկցում է բարի արքաներին կամ այլ էակներին և հաղթություն, բախտ ու երջանկություն է բերում նրանց (Յաշթ 19: 9): Նրանք ովքեր շեղվում էին ճշմարիտ ուղուց, կորցնում էին «փառքը», եթե այն ունեին: Այդպես է պատահել Ջամի հետ, ով սկսել էր սուտ խոսել (Յաշթ 19: 34): «Փառքը» անհնար է բռնի կերպով սեփականաշնորհել, ինչպես փորձում էին անել Աժդահակը և անգամ կրակի ոգին՝ Աթարը, այն ինքն է ընտրում իր տիրոջը (Յաշթ 19: 46-51): Տվյալ դեպքում խոսքը Ջրաղաշտին հատուկ Փառքի մասին է, որ Ջրաղաշտի անբաժան ուղեկիցն էր:

^{xlvii} Ջրաղաշառ Օհրմազդի մոտ խորհրդակցության է եկել 30 տարեկանում: Այստեղ նկրագրվող դեպքը տեղի է ունենում դրանից 45 տարի առաջ, այսինքն՝ Ջրաղաշտի ծնունդից 15 տարի առաջ:

^{xlviii} Ջրաղաշտի մեծ մոր անունն է: Այդպիսի անուն պահպանվել է գրողաշտականների շրջանում մինչև նոր ժամանակները և թվարկված է Մոդիի ներկայացրած գրադ. իգ. անվանաշարքում (Modi 1922 : p. 11):

^{xlix} Ավեստ.՝ durydōvā, անհայտ ստուգաբանությամբ:

¹ Երկարության միավոր, որ հավասար է 5,5 կմ:

ⁱⁱ «Չար միտք» կազմված ավեստ. aka-՝ «չար» և man-՝ «մտածել» արմատներից (Barth., Alt. Wört., s. 44-5; 1121-4): Վահման (բարի միտք) ամահրասպանդի հակառակորդը:

ⁱⁱⁱ Ջրադաշտի հայրը: Ավեստ.՝ pouruš.aspa-, «շատ ձիեր ունեցող» (Justi, Ir. Nam., s. 254-5):

ⁱⁱⁱⁱ Ողջ գրադաշտական գրականության մեջ «քարաբներ» (ավեստ.՝ karapan-) են անվանվում գրադաշտականության հակառակորդ կրոնի թշնամի քրմերը (Barth., Alt. Wört., s. 454-5):

^{liv} Ավեստ.՝ usixš-< usig-: Ըստ երևույթին այսպես են կոչվել գրադաշտական կրոնին թշնամի հոգևորականները (Barth., Alt. Wört., s. 406): Համապատասխանում է սանս. अर्षिज (uśij-) բառին, որ հանդիսանում է «գոհաբերողի անվանումը» (“Epitheton des Opferern”), ինչպես նաև այդ մականունը կրում է Ազնին՝ կրակի աստվածությունը (Mayrhofer, Etym. Wört. d. Altindoarischen, b. 1, s. 234-5): Ստուգաբանական ծագումը պարզ չէ, ինչպես և կրոնական նշանակություն ունեցող այդ իմաստի զարգացումը (Mayrhofer, ն. տ.): Հիշատակվում է մեկ անգամ (Յասնա, 44:20) karapan- բառի հետ միասին:

^{lv} «Ավեստա»-ի հնագույն հատվածները, որոնք լեզվական առումով ավելի հին են, քան մնացած «Ավեստա»-ի հատվածները, և սովորաբար ուսումնասիրողների կողմից համարվում են հենց Ջրադաշտի կամ նրա անմիջական ժամանակակիցների ստեղծագործությունները (Alm. Hintze, “Zarathustra’s Time and Homeland: Linguistic Perspectives”; in *The Wiley Blackwell Companion to Zoroastrianism*, pp. 31-8):

^{lvi} Անահիտի՝ ջրերի յազատի մյուս անունը:

^{lvii} Srošahlaw, այն է՝ «առաքինի Սրոշ»: Ջրադաշտական կարևոր յազատներից մեկը, որ ներկայացնում է հնազանդությունը Օհրմագդի նկատմամբ, թեև ավելի ուշ շրջանում ավելի մեծ ու կարևոր գործառույթներ է իր վրա վերցրել՝ այսպիսով համարվելով նյութական աշխարհի տիրակալը (Rashed-Mohassel, Sroš yasna, s. 8-18): Անունը ծագում է ավ. sraoša-(<√srav- = √sru) բառից, որ նշանակում է «լսել», ինչպես և «հնազանդություն» (Rashed-Mohassel, նույնը, s. 9; Barth., Alt. Wört., s. 1634-6): Արմատը համապատասխանում է սանս. श्रु (√śru-) արմատին, որից առաջացել է հնդկական կրոնական գրականության կարևորագույն տեսակներից մեկի անվանումը՝ Ջրտի (śruti):

^{lviii} Ըստ ամենայնի նկատի է առնվում Արաքսից հարավ և Արդաբիլից հյուսիս ընկած Մոդանի դաշտավայրը:

^{lix} Չիսք կամ Շիզ՝ քաղաք Ատրպատականում, որտեղ գտնվել է մախկին Ազար Գուշ-նասպ կրակը՝ մեկը գրադաշտական երեք ամենատարբեր կրակներից, որտեղ Սասանյան արքաները, ըստ Իբն-Խորդադեհի (Էջ 120), իրենց գահակալության սկզբում ուխտագնացություն էին անում: Ըստ ամենայնի այն Ուրմիա լճից հարավ-արևելք ընկած այսօր Թախթ-է Մոլեյման անունով հայտնի հնավայրն է (այժմյան Թաքաք քաղաքից հս.-արլ. ուղղությամբ՝ մոտ 40 կմ հեռավորության վրա):

^{lx} Մանուշիհիր առասպելական վաղ արքաներից էր՝ Ֆրեդոնի որդի Էրեզի հաջորդը:

^{lxi} Ջրադաշտի հովանավոր արքան, Լուիրասպի որդին: Ավանդության համաձայն՝ նա առաջին արքան էր, որ ընդունեց Ջրադաշտի հավատը:

^{lxii} Այստեղ արտացոլվում է հին հնդիրանական հասարակության այն տեսական, իդեալական եռաստիճան մասնագիտական բաժանումը, ըստ որի՝ հասարակությունը բաժանվում էր ռազմիկների (nar), քրմերի (zaothra) և մշակների (vāstar) խմբերի միջև (Boyce, Hist. of Zor., 1975: pp. 5-6, տեսությունն առաջ է քաշված Ժ. Դյումենգիլի կողմից): Այստեղ նշվող երեք կարգերի միավորումը Ջրադաշտի մեջ հավանաբար ընդգծում է նրա կարևորությունն ու ընդունելությունը բոլոր դասակարգերի համար:

^{lxiii} Այսինքն՝ կաթի հեղուկ կատարի:

^{lxiv} Այդպիսի գոտի գրադաշտականները մինչև օրս էլ կապում են իրենց կրծքի շրջանում: Այն գործված է հոգևորականների կամ նրանց ազգականների կողմից, բաղկացած է 72 թելից և սովորաբար անբաժան է գրադաշտական հավատացյալից:

^{lxv} Սրբազան բույս և դրանից պատրաստվող խմիչքը, որ կրոնական շատ կարևոր նշանակություն և հավանաբար որոշակի արբեցնող հատկություններ է ունեցել՝ նման թույլ թմրամիջոցներին: Հայտնի է եղել և՛ հին իրանցիներին, որպես ավետս.՝ haoma-, և՛ հին հնդարիացիներին, որպես սանս.՝ **सोम** (soma): Այն շատ մեծ դիրք ունի կրոնական պատկերացումների և ծիսակարգի մեջ՝ որպես սրբազան խմիչք: Ավեստայական գրականության մեջ նրան է ձևավորված 9-րդ յասնը, վեդայական գրականության մեջ ամբողջությամբ նրան է նվիրված «Ռ-ըգ-վեդա»-ի 9-րդ մանդալան, որի բոլոր հիմները ձևավորված են սոմային: Հաճախ նա կենդանի էակ է համարվում և մարդկայնացվում: Այսպես՝ «Ավեստա»-ի յաշթերից մեկում (Յաշթ 17: 38) նա գոհաբերություն է կատարում Աշի յագատին, որպեսզի հաղթի Ֆրա/Քրասայանին (ԱՖրասայաբ/Ֆրասայագ) և նրան կապած բերի Քայ-Հուսրավի մոտ:

^{lxvi} Խոսքն աստվածներին երկրպագության ձևեր երգելու մասին է:

^{lxvii} Բառացիորեն նշանակում է «գարուն եղավ»: Նկատի է առնվում տարվա ընթացքում նշվող վեց գահանբարներից (հնգօրյա տոներից) առաջինը՝ Mēdyōzarm (ավեստ.՝ maidyōi.zarəməya), որ նշվում էր Նոր տարվա առաջին օրից հետո 40-րդ և 45-րդ օրերի միջև ընկած ժամանակահատվածում (Bundahišn: 1a.20):

^{lxviii} Հյուսիսը դժոխքի կողմն է՝ ըստ գրադ. պատկերացումների:

^{lxix} Մեդյունահը Ջրադաշտի առաջին աշակերտն է, որ Ջրադաշտի բերած հավատքը առաջինն է ընդունել:

^{lxx} Առասպելական գետ, որ, ըստ ավանդական աղբյուրների, գտնվում էր առասպելական Էրանվեջ երկրում: Այստեղ այն հավանաբար գտնվում է Ատրպատականում՝ ուշ աղբյուրների ընդունված տեսակետի համաձայն:

^{lxxi} Վերջին երեքը Ջրադաշտի այն երեք մարգարե որդիներն են, որ գալու են ամեն մեկը մյուսից հազար տարի հետո, և վերջինը՝ Մոշյանաբ, անմիջապես իր գալուց հետո սկսելու է մահացածներին հարություն տալ և ստեղծել նոր՝ չարից ազատ աշխարհը (Հրաշակերտություն/Նորակերտություն):

^{lxxii} «Մալիտաման»-ն ավանդակաճորեն Ջրադաշտին վերագրվող ազգանունն է:

^{lxxiii} Ամահրասպանդների անունները մարդկային տարբեր առաքիմությունների անուններն են:

^{lxxiv} Օհրմագրին պատկանող իմաստությունը, որով նա ամեն ինչ գիտի:

^{lxxv} Այստեղ ակնհայտորեն երևում է Օհրմագրի մախակերպարի բուն էությունը, որն է երկնքի աստվածությունը, որ պաշտվել է դեռ հնդեվրոպական և հնդիրանական ժամանակներում: «Ռ-ըգ-վեդա»-ում նա հայտնի է Վարունա անվամբ, որ երկնքի

աստվածությունն է և, դատելով նրա նկարագրությունից ու հատկանիշներից (Rig-veda, I: 24, 25) բավական կարևոր դեր է ունեցել մինչև «Ռեզ-վեդա»-ի դարաշրջանը, երբ գլխավորությունն անցել է այլ աստվածություններին (Ինդրա, Ագնի):

^{lxxxvi} Այսպիսի փորձություններ (ordeal) շատ կրոններում և կրոնական համակարգերում են ընդունված: Մասնավորապես հավված մետաղ լցնելու սովորույթը գործող էր հավանաբար անգամ սասանյանների շրջանում, երբ հայտնի հոգևորական և կրոնական գործիչ Ադուրբադ Մահրասպանը ենթարկվել էր նման փորձության և ողջ մնացել (ըստ ավանդության): Կրակի միջով անցնելու փորձությունը հատկապես հայտնի փորձություն է եղել մի շարք առասպելներում և հեքիաթներում (օրինակ՝ հենց «Շահնամե»-ի հերոս Սիավուշի փորձությունը):

^{lxxxvii} Աժդահակին նաև այդպես են կոչում:

^{lxxxviii} Երբ կգա Հրաշակերտության ժամանակը, բոլորը՝ և՛ բարեգործները, և՛ չարագործները, հարություն կառնեն և միասին կապրեն չարությունից ազատ: Միայն Աժդահակը, Ֆրասյազը և մի քանի ման չարագործներ կվերացվեն՝ ենթարկվելով դաժան պատժի:

^{lxxxix} Ջրադաշտական կամ մագդալական հավաքը, պիլ՝ dēn, dēn ī mazdēsō, գոյություն է ունեցել աշխարհի արարման սկզբից: Այսինքն՝ Ջրադաշտն այն ոչ թե ստեղծել է, այլ պարզապես սովորել է երկնային էակների մոտ և ապա քարոզել երկրում:

^{lxxx} Նույն ծագումն ունի, ինչ քայլ, քավի բառը, որ նշանակում է «արքա»: Այստեղ այն ունի «քուրմ, հոգևոր պաշտոնյա» նշանակությունը (տե՛ս Skjærvø, P. O., 'Kavi: Avestan kauui, Pahlavi kay', *Encycl. Ir.*), ինչով նա պահպանում է իր նախնական իմաստը:

^{lxxxxi} Բուրզենմիիր կրակը, պիլ՝ ādur burzēnmīhr, իրականում պաշտոնապես «ամահրասպանը» չէ, այլ երեք գրադաշտական սրբազնագույն կրակներից մեկը, որ գտնվում էր Խորասանում և հողագործների հովանավորն էր:

^{lxxxii} Նույնն է, ինչ «քավի»:

^{lxxxiii} Աշավահիշքը նույնն է ինչ Արդվահիշքը՝ երրորդ ամահրասպանը:

^{lxxxiv} Բնագրում գրված է aršišwang: Իգական յազատ է, որին նվիրված է 25-րդ օրը: Անունը ծագում է ավեստ.՝ aš ī.vanuhī- «բարի հասուցում» անվանումից (Rashed-Mohassel 1382: p. 118; Bartholomae, *Alt. Wört.*, s. 241): Առավելապես նա առաքինիներին տրվող հարստության և բախտի մարմնացումն է, նա է, որ առաքինի մարդկանց հասուցում, պարզ և տալիս՝ այսպիսով նույնացվելով հարստության հետ (Darmesteter 1883: p. 270; Modi 1922: p. 38): Նրան է ձուլված 17-րդ յաշքը՝ Աշի յաշքը:

^{lxxxv} Վիշտասպի որդին և գրադաշտականության առասպելական պատմության հերոսներից մեկը: Ամմահներից է:

^{lxxxvi} Վիշտասպի կինը:

^{lxxxvii} Մոգերը (mow-mard) կամ մոգպետները (mowbad) գրադաշտական կրոնի հոգևոր պաշտոնյաներն էին, որոնց գլխավոր առաջնորդը mowbadān mowbad էր կոչվում մնամությանը šāhān šāh կամ «արքայից արքա» տիտղոսի:

^{lxxxviii} Հին Բակտրիայի տարածքում գտնվող քաղաք: Այժմ այդ տարածքն ընկնում է Աֆղանստանի հյուսիսում՝ Մազար-ե-Շարիֆ քաղաքից ոչ հեռու:

^{lxxxix} Այն կամուրջը, որով ամեն հանգուցյալ պետք է անցնի: Եթե անցնողն առաքինի է, ապա կկարողանա անցնել կամուրջը, եթե չարագործ է՝ ոչ: «Ավեստա»-ում կոչվում

է ճնսատժ.թօթս:- Գտնվում է Դսիքի լեռան գագաթին: Չեռագրերում գրված է Չինվար, թեև ճիշտը Չինվադն է:

^{xc} Առասպելական լեռ, որ համարվում է լեռներից ամենամեծն ու ամենակարևորը: Ավեստ.՝ *harā.bərəzaiti*:- Շրջապատում է աշխարհը և կապված է երկնքի հետ (Bund., 9.5):

^{xcii} Հենց դա էլ Չինվադ կամուրջն է:

^{xcii} Հնդեվրոպական առասպելաբանության հետաքրքիր կողմերից մեկը: Շուրջ կապվում է հանդերձյալ աշխարհի հետ: Բազմաթիվ տեղերում ենք մենք հանդիպում այդ պատկերացմանը: Այդպիսին է հունական առասպելաբանության մեջ երեքգլխանի Կերբերոսը, որ հսկում է Հադեսի տիրույթներին, վեդայական առասպելաբանության մեջ՝ Յամայի չորսաչքանի երկու շները, հայկական առասպելաբանության մեջ՝ Արտավազդին պահպանող երկու շները, կելտական առասպելաբանության մեջ հանդիպող *eóin Anwn* (այս.՝ Աննունի՝ հանդերձյալ աշխարհի արքայի շները, տե՛ս Celtic culture, a historical encyclopaedia (ed. John T. Koch), vol. I, p. 524) և այլն: Այս առասպելների առաջացման պատճառը թեև միանշանակորեն հայտնի չէ, սակայն հավանաբար սկզբնապատճառը հանգում է շամ՝ որպես մարդու հավատարիմ ուղեկցորդի և պահապանի գործառնության: Հատկապես դրական վերաբերմունք է ցույց տրվում շամ նկատմամբ գրադաշտական համայնքում: Մասնավորապես կարևոր է տվյալ առիթով նշել, որ գրադաշտական մահվանից հետո՝ երեք օրվա ընթացքում, պարտադիր է համարվում, որ մի քանի անգամ շունն իր հայացքը գցի դիակի վրա՝ այն աղտեղությունից հեռու պահելու համար (Modi 1922: p. 58-59):

^{xciii} Դևերից մեկը, որ փորձում է հոգին դժոխք տանել մահվանից հետո, ավեստ.՝ *vizarəša*- (Nyberg, II: p. 218):

^{xciv} Վահրամական կրակն այն կրակներից է, որ այրվում է կրակատանը և հավանաբար կապված է Վահրամի (ավեստ.՝ *vərəθrayna*) հաղթանակի յազատի հետ:

^{xcv} Տարածության, մթնոլորտի յազատը, որ ունի իր նույնանուն հակառակորդ՝ ահրիմանական կամ չար Վայը: Այդ պատճառով է առանձին ընդգծվում Վայի «բարի» լինելը:

^{xcvi} Աբրոզի լեռներից դեպի հյուսիս՝ Կասպից ծովի ափերին ընկած տարածքն է, որ այդ լեռներով բաժանված է ողջ մնացած Իրանական սարահարթից: Այժմ ընկած է Իրանի Գիլան և Մազանդարան մահանգների տարածքում: Ունի խոնավ օդ և լայնատարած անտառներ:

^{xcvii} Հայտնի չէ, թե ով է, բայց ամենայն հավանականությամբ կապ չունի մեկ այլ Օշնարի՝ իմաստունի հետ, ով բոլորովին այլ՝ դրական կերպար է գրադաշտական ավանդության մեջ:

^{xcviii} Թուրքեստան ասելով՝ այստեղ նկատի է առնվում Ամուդարյա գետից հյուսիսարևելք ընկած տարածքները, որ միայն ուշ ժամանակներում են ընկել բուրքական ազդեցության տակ (քաղաքական առումով Չ-է դարեր և էքսիլական առումով ԺԱ-ԺԲ և հետագա դարեր): Թուրանցիները Ֆիրդոսու մոտ էլ նմանեցվել են բուրքերին, թեև սկզբնապես երկու անունները ոչ մի կապ չունեին իրար հետ:

^{xcix} Ուուստանը՝ Չայի որդին, Մակաստանի գավառից (այսօրվա Իրանի հարավարևելքում և Աֆղանստանի հարավ-արևմուտքում մի շրջան, որ այդպես է կոչվել մ. թ. ա. Բ-Ա դարերում այդ շրջան քոչած սակերի/սկյութների ցեղերի անունով):

^c Քերխես գետը այժմյան Խուզեստանում:

^{ci} Մյավախը Քայ-Ուսի որդին էր, որ իր խորք մոր հետ ունեցած վեճի պատճառով (նման Հոսեյանի և փարավոնի գործակալի կնոջ պատմությանը) հեռացավ Իրանից և Թուրան գնաց: Այնտեղ ժամանակավոր ընդունելություն գտավ, կառուցեց Քանգոնեկ կոչվող ամրոցը, սակայն որոշ ժամանակ անց սպանվեց Աֆրասյաբի կողմից՝ թողնելով Հուսրավ/Խուսրով անունով որդուն:

^{cii} Առասպելական ամրոց, որի տեղը հայտնի չէ: Ըստ «Բունդահիշն»-ի (29.14) այն գտնվում է արևելյան կողմում՝ Ֆրախքարո օվկիանոսի ափին: Այնտեղ է բնակվում անմահներից Փեշյոթանը՝ Վիշտասպի որդին (Bund.: 29.6):

^{ciii} Այս ճակատամարտը նկարագրված է Ayādgār ī Zarērān («Չարերի հիշատակարան») պահլավական մատյանում:

^{civ} Մփանդդադը կամ Սփանդյադը (ավեստ.՝ spəntō.dāta-) Վիշտասպի որդին էր, որ «Շահնամե»-ում հայտնի է Բաֆանդյար անունով և հռչակված էր իր քաջագործություններով: Սակայն հոր նախանձի պատճառով ուղարկվեց Ռուստամի դեմ մարտի և սպանվեց նրա կողմից:

^{cv} Ալեքսանդրի մասին հիշողություններն իրանցիները պահպանած չեն եղել և նրան համարել են հռոմեացի, քանի որ իրենց ժամանակ արևմուտքում գերիշխում էր Հռոմը և ոչ Հունաստանը կամ Մակեդոնիան:

^{cvi} Այսինքն՝ Դարեհ Գ Կորմանոսը՝ Արեմենյանների վերջին արքան:

^{cvii} Այս պաճառությունները հավանաբար ոչ մի պատմական հիմք չունեն, այն իմաստով, որ իրանցիներն ուղիղ հիշողություններ Ալեքսանդրից չեն պահպանել և նրա մասին տեղեկացել են հավանաբար ուշ պարթևական կամ սասանյան շրջանում՝ հունական աղբյուրներից: Այս թեմայով կարելի է երկար գրել, սակայն ոչ այստեղ: Ինչ վերաբերում է Ալեքսանդրին վերագրվող բարբարոսություններին և «Ավեստա»-ի ոչնչացմանը, ապա դա շատ ավելի նման է արդարացման, քան թե ստույգ պատմական գիտելիքից բխող տեղեկության:

^{cviii} Սասանյան տոհմի հիմնադիր Արտաշիր Սասանյանը (224-240 թթ.), ով տապալել է Իրանում Արշակունիների հարստությունը (այս և հաջորդ սասանյան արքաների գահակալման թվականները նշելիս օգտագործել են Frye, R. N., *The Political history of Iran under the Sasanians*, in *The Cambridge History of Iran*, v. 3 (1), էջ 178-ում տրված արքայացանկը): Նրա մասին է Kāmāmag ī Ardaxšēr ī Pābagān պահլավական երկը:

^{cix} Շապուհ Բ Սասանյանը (Երկարակյաց), որ քաջ հայտնի է հայկական աղբյուրներում (309-379 թթ.):

^{cx} Հագկերտ կամ Յագղգերդ Բ Սասանյանի որդի Պերոզը, որի ժամանակ տեղի ունեցավ Վահանանց ապստամբություն: Սպանվել է հեփթաղների դեմ կատարած անհաջող արշավանքի ժամանակ (գահակալել է 459-484 թթ.):

^{cxii} Հեփթաղներ բռնվող ցեղեր Միջին Ասիայից, որ այնտեղ իշխում էին Դ-Ձ դարերում և մշտական ռազմական պայքարի մեջ էին Սասանյան Իրանի դեմ: Հայկական աղբյուրներում նրանք նաև կոչվում են «քուշաններ», թեև սխալ կերպով (քուշաններն այդ ժամանակ վաղուց արդեն չկային):

^{cxiii} Սասանյան արքա 488-496 և 498-531 թթ.:

^{cxiiii} Քավադ Սասանյանի ժամանակ տեղի ունեցած կրոնական շարժման առաջնորդը: Նա և նրա հետևորդները, որոնք հիմնականում ժողովրդի աղքատ ներկայացու-

ցիչներն էին, իշխանություններից պահանջում էին ունեցվածքի հավասարություն և հավասար իրավունքներ: Ըստ ամենայնի, նրա գաղափարախոսությունը որոշ ընդունելություն է գտել Քավադի մոտ, ինչի պատճառով պետության մեջ հուզումներ են սկսել: Շատ բան հայտնի չէ այս շարժման վերաբերյալ, քեև հետագայի արաբագիր պատմագիրները շատ են անդրադարձել դրան (Թաբարի, Յասարուբի, Մուղադդասի, Իբն ալ-Նադիմ և այլք): Մագդակը բնականաբար բավական բացասական տեսանկյունից է ներկայացվում և՛ զրադաշտական, և՛ իսլամական հեղինակների կողմից: Մագդակը և նրա հետևորդները սպանվել և հալածվել են Խոսրով Ա Քավադյանի կողմից:

^{cxiv} Հուսրավ կամ Խոսրով Ա Սասանյան (531-570 թթ.): Սասանյան ամենից հայտնի արքաներից է, որ հայտնի է դարձել իր քաղաքական, ռազմական և տնտեսական բարեփոխումներով: Պատերազմներ է վարել Բյուզանդիայի դեմ: Նրա ժամանակակիցն է եղել Բյուզանդիայի հզորագույն կայսրերից մեկը՝ Հուստինիանոսը: Կոչվում է *anōšag-rwān*՝ «անմահ հոգի [ունեցող]»:

^{cxv} Խյուններ էին կոչվում ինչպես Վիշտասպի թշնամիները, այնպես էլ հոները, որ իշխում էին այդ ժամանակներում: Դժվար է ասել, քե ինչ առնչություն ունեն այս անուններն իրար հետ:

^{cxvi} Հավանաբար խոսքը Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող Դարբանդի պահակակետի մասին է:

^{cxvii} Հազկերտ Գ. Սասանյան արքայատոհմի վերջին արքան, որ իշխել է 632-651 թթ.: Նրա ժամանակ է տեղի ունեցել արաբների (պիլ.՝ *tāziġān*) ներխուժումը Սասանյան Իրանի տարածք: Հազկերտը փորձել է դիմադրել, սակայն անհաջող: Սպանվել է Մարվի մոտ, քեև վերջնական ու հստակ տեղեկություն չկա, քե ինչպես:

^{cxviii} Պատմական փաստերը խոսում են այն մասին, որ որդին՝ Պերոզը, գնացել է ոչ քե Հնդկաստան, այլ Չինաստան, որտեղ Գուան-ժոնգ կայսրից անհաջող կերպով գործ է խնդրել: Նա հետագայում (կյանքի վերջին տարիներին) իրանցիների մի ոչ այնքան մեծ համայնքի հետ վերաբնակվել է Թան կայսրության մայրաքաղաք Չան-անում, որտեղ որոշակի աջակցություն է ստացել կայսերական կառավարությունից (Frye, R. N., *The Political history of Iran under the Sasanians*, p. 176):

^{cxix} Այսպիսի արարքներն ուղղափառ գրադաշտականները սրբապծություն էին համարում սրբազան տարրերի՝ կրակի, հողի նկատմամբ: Նրանք իրենց դիակները դնում էին լեռների, բլուրների կամ ընդհանրապես բարձր տեղերի վրա կառուցված դիակարանների՝ դավանանքի վրա, որտեղ դիակները կեր էին դառնում լեռակեր թռչուններին:

^{cxx} Աբբասյան խալիֆայության իշխանության տարիներին՝ հատկապես Ը-Թ դարերում, տեղի էին ունենում բազմաթիվ ապստամբություններ, որոնք ուղղված էին կենտրոնական իշխանությունների դեմ ու ունեին ազգային, քաղաքական կամ կրոնական բնույթ: Նման ապստամբություններից մեկն էր խալիֆ Մահդիի (775-785 թթ.) իշխանության տարիներին Գուրգանում տեղի ունեցած կարմիր դրոշակավորների՝ *محمرة* (*muhammara*) ապստամբությունը: Ընդհանուր առմամբ, Նիզամ օլ-մուլքի տված տեղեկություններով՝ այդպես էին կոչում իսմայիլական աղանդի հետևորդներին (*Siāsāt-nāme*, s. 311): Եթե հետենք հենց նրա նկարագրությանը (ն. տ., էջ 312), նրանք մեծ մնանություն ունեին խորամնդիանականների՝ մեկ այլ աղանդի

հետևորդների հետ, որոնց թվին էր պատկանում նաև Բարաբ Խուրրամնինը, ում առաջնորդած ապստամբությունը 825-835 թթ. ցնցեց խալիֆաթը: Հավանաբար այստեղ նկատի է առնվում վերջինիս ապստամբությունը:

^{exxi} Խոսքը, ըստ ամենայնի, գրադաշտականների մասին է:

^{exxii} Աֆղանստանի այսօրվա մայրաքաղաքի շուրջը տարածված երկիրը:

^{exxiii} Ըստ «Բունդահիշն»-ի (11a.27)՝ գտնվում է Սակաստանում և սկիզբ է առնում Քայանես լճից:

^{exxiv} Քայանես ծով կամ ավելի ճիշտ՝ լիճ: Գտնվում է Սակաստանում (ըստ հետագա ավանդության), և դրա մեջ է պահվում Ջրադաշտի սերմը, որից հետագայում պետք է ծնվեն նրա երեք մարգարե որդիները՝ Ուշեդարը, Ուշեդարմահը և Մոշյանը:

^{exxv} Ավեստ.՝ *mahrkūša-*՝ «ավերիչ, մահաբեր» (Barth., Alt. Wört., s. 1147): Ինչպես ներկայացվում է բուն համար, ևսիրմանական դև է, որ մարդկությունը վերացնելու համար հայտնվելու է Հուշիդարի հազարամյակում և փորձելու է վերացնել մարդկությունը:

^{exxvi} Առասպելական ապաստարան, որ կառուցված է Հարբորդ լեռան մոտ (Bund. 32.1) կամ Փարսում ինչ-որ մի տեղ՝ գետնի տակ (Bundahišn 32.7, 32.10): Առաջին տեղը հավանաբար արտահայտում է բուն ավանդական տեսակետը, երկրորդը՝ պահլավ գիտունների ավելի ուշ ժամանակներում կատարված ենթադրությունը: Այն նախատեսված է բուն համար, որ ամեն բուսատեսակից և կենդանատեսակից նմուշներ պահվեն և դժվար ժամանակներից ու աղետներից հետո վերաբնակեցնեն երկիրը: Ավեստայի Վենդիդադ նաքի երկրորդ ֆարգարդի 21-41 հատվածներում ասվում է, որ Անուրամագրան է պատվիրում Յինային/Ջամշեդին կառուցել մի ամրոց, այնտեղ բերել ամեն տեսակի սերմերը և նրա դուռը կողպել, որպեսզի մոտեցող ահարկու և ոչնչացնող ձմեռվանից հետո մարդիկ, կենդանիները և բույսերը կրկին վերաբնակեցնեն երկիրը: Այս ավանդությունը բավականին նման է Նոյի տապանի ավանդույթյանը, որտեղ նույնպես պատմվում է նախատեսված մեծ աղետից փրկության մասին:

^{exxvii} Աժդահակի մեկ այլ անունը, որ հայտնի է նաև Խորենացուն:

^{exxviii} Ագահության դևը:

^{exxix} Իսադվասարը Ջրադաշտի ավագ որդին է և համարվում է կրոնական դասակարգի առաջնորդն ու հովանավորը (Justi, Iran. Nam., s. 142):

^{exxxx} Հավանաբար նկատի է առնվում, որ նրանք անմահ են մնացել:

^{exxxi} Երկնային մի առասպելական վիշապ: Պահլ. *gōzihr* < ավեստ. *gaoθiθra-* : Աստղաբանական նշանակության մասին տե՛ս MacKenzie, D. N., *Gōzihr*, *Encyclopaedia Iranica*, Vol. XI, Fasc. 2, p. 184:

^{exxxii} Ավեստ.՝ *airyaman*՝ «ընկերություն» (Barth., Alt. Wort., s. 198):

^{exxxiii} Հալոյշ կովը նույն Սրիսոգ կովն է, որ մարդկության պատմության արշալույսին մարդկանց իր մեջքի վրա տեղավորվել է մայրցամաքներով (Bundahišn, 24e.22):

^{exxxiv} Ըստ Մ. Բահարի՝ մի արարողության անվանում, որ գրադաշտականը կատարում է մահվանից առաջ (Bondahēš: s. 196):

^{exxxv} Այս բոլորը դևեր են՝ իրենց բնույթով հակադիր իրենցից առաջ նշված անմահ-րասպանողներին:

^{exxxvi} Կատաղության դևը:

3. ՊԱՀԼԱՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

(թարգմանված պահլավերենից)

3.1. Kārnāmag ī Ardaxšēr ī Pābagān

Արտաշիւր Փափագանի գործերի գիրքը

Հանուն Աստծո՞ւ

Փառավոր ու մեծագոր արարիչ Օհրմագղի անունով, ուժով և մեծությամբ: Առողջություն բոլոր բարիներին և առաքինիներին, և հատկապես նրան, ում համար [այս գիրքը] գրվեց:

*Ա. [Փափագի՝ Սասանին իր երագում տեսնելու
և իր աղջկան նրան կնության տալու մասին]²*

1. Արտաշիր Փափագանի գործերի գրքում այսպես է գրված, թե Ալեքսանդր Հռոմեացու¹ մահից հետո Էրանշահիրըⁱⁱ 240 իշխանապետների (sar-xwadāy) միջև էր բաժանված: 2. Սպահանը, Փարսը և նրանց մերձակա շրջանները գտնվում էին Արտավան գորավարիⁱⁱⁱ իշխանության տակ: 3. Փափագը Փարսի մարզպանն ու նահանգապետն էր և նշանակված էր Արտավանի կողմից: 4. Արտավանը Սթախրում^{iv} էր նստում: 5. Եվ Փափագը ոչ մի ժառանգորդ զավակ չուներ: 6. Եվ Սասանը Փափագի հովիվն էր, միշտ ոչխարների հետ էր մնում և է՛ր նա Դարայան Դարայի^v տոհմից և Ալեքսանդրի դժնապետության ժամանակ [նրա նախնիները] ծածկակեցությամբ մնացին և քուրդերի^{vi} ու հովիվների հետ ապրեցին: 7. Փափագը չգիտեր, որ Սասանը Դարայան Դարայի տոհմից է ծնված:

8. Մի գիշեր Փափագը երագում տեսավ, որ արեգակը ծագում է Սասանի գլխից և լուսավորում է ողջ աշխարհը: 9. Մյուս գիշեր այսպես տեսավ, որ Սասանը նստած էր մի զարդարված սպիտակ փղի վրա, և աշխարհում ով (կար), Սասանի շուրջն էր կանգնած, և [բոլորը] երկրպագում, փառաբանում և օրհնում էին նրան: 10. Հաջորդ՝ երրորդ գիշերը նույնպես այսպես տեսավ, որ Ֆարրոբայ, Գու-

¹ Թարգմանության համար օգտագործել են Էդալջի Քերասապջի Անտիայի հրատարակած քննական բնագիրը (Բոմբեյ, 1900), որ հիմնված է MK, JJ ձեռագրերի վրա և վերատպված է Բ. Ֆարրահվաշիի Karnāme-ye Ardashir-e Bābakān գրքում (Թեհրան, 1390, առաջին հրատ.՝ 1354):

² Այս և հաջորդ վերնագրերը հետագա հավելում են տեքստի հրատարակիչ Էդալջի Քերասապջի Անտիայի կողմից:

շասր և Բուրզեն-Միիր կրակները^{vii} շողշողում էին Սասանի տան վրա և ամբողջ աշխարհին կրակ տալիս:

11. Փափագը, երբ այսպես տեսավ, զարմացավ: 12. Եվ իմաստուններին ու երազահաններին իր մոտ կանչեց . այն բոլոր երեք գիշերների երազները, ինչպես որ տեսել էր, պատմեց նրանց: 13. Երազահանները ասացին. «Նա, ում վրա այդ երազը տեսել ես, ինքը կամ այդ մարդու որդիներից մեկը կհասնի աշխարհի տիրակալության, որովհետև արեզակը և զարդարված սպիտակ փիղը նշան են քաջության, ուժի և հաղթանակի, Ֆարրոբայ կրակը՝ մեծ մարդկանց ու մոգպետների կրոնագիտության, Գուշնասպ կրակը՝ աշխարհի գորավարների ու սպարապետների և Բուրզեն-Միիր կրակը՝ աշխարհի աշխատավորների ու հողագործների (նշաններն են): Եվ այս ամբողջ քազավորությունը նրան կամ նրա զավակներին կհասնի»:

14. Փափագը, երբ այս խոսքերը լսեց, մարդ ուղարկեց և Սասանին իր մոտ կանչեց ու հարցրեց. «Ի՞նչ տոհմից կամ ընտանիքից ես դու, և կա՞ր մեկը քո հայրերից ու նախնիներից, որ թագավորեց կամ գորավարություն արեց»:

15. Սասանը Փափագից երաշխիք ու պաշտպանություն ուզեց՝ [ասելով]. «Ինձ վնաս ու չարիք մի՛ արա»: 16. Փափագը համաձայնվեց, և Սասանն իր գաղտնիքը, ինչպես որ կար, հայտնեց Փափագին: 17. Ուրախացավ Փափագը և հրամայեց, թե՝ «Խնամի՛ր ինքդ քեզ»³: 18. Հրամայեց նաև Փափագը, որպեսզի մի ձեռք արքայական հագուստ ու պատմուճան բերեն և տան Սասանին, թե՝ «Հագի՛ր»: Եվ

³ Պահլ.՝ tan pad abzōn/ābzān kun: Ինչպես երևում է երրորդ բառի երկակի ընթերցանությունից, գոյություն ունեն բառի (115^Թ) ընթերցման երկու հավասարապես ընդունելի տարբերակ՝ երկու մեկնաբանությամբ: Առաջինը ընդունում են Նյոլդեկեն (38: "ich will dich befördern") և Չունակովան (39, 67: "Благоженствуй!"): Ավելի հարմար կլիներ՝ «Խնամի՛ր քո մարմինը» կամ վերևում տրվածը: Երկրորդ տարբերակը, որ մի գուցե ավելի մոտ է ճշամարտությանը, կապվում է լվացվելու/լողանալու գաղափարի հետ («Լողացի՛ր»/«Բաղնիք գնա՛»/«Մարմինդ լվա՛»): Այս տարբերակն ընդունված է ինչպես «Շահնամն»-ում (به گرمابه شو), այնպես էլ Սանջանայի մոտ (բնագրի՝ 4, թարգմ.՝ 5; թեև այս իմաստին նա հասնում է կողմնակի արահետներով), Ֆարրահաշի (9) և Գրենեի (58-9: "Prends un bain!") կողմից:

Սասանն այդպես արեց: 19. Ու հրամայեց Փափազը Սասանի համար, որ մի քանի օր լավ կերակրեն, պահեն ու պատշաճորեն խնամեն: 20. Եվ հետո իր աղջկան նրան կնության տվեց:

*Բ. [Արտաշիր Փափազանի ծննդյան
և որսասրեղում նրա և Արտավանի միջև տեղի ունեցած
միջադեպի մասին]*

1. Ինչպես նախասահմանված էր⁴, այն աղջիկը որոշ ժամանակ հետո Սասանից հղիացավ, և Արտաշիրը նրանից ծնվեց:

2. Փափազը, երբ Արտաշիրի մարմնական գեղեցկությունը և կայտառությունը տեսավ, հասկացավ, թե՛ «Այն երազը, որ տեսա, ճշմարիտ էր»: 3. Եվ որդեգրեց Արտաշիրին, սիրեց ու խնամեց նրան: 4. Եվ երբ հասավ ուսուցման տարիքը, դպրության, ձիավարության և այլ արվեստներում այնպես կրթվեց, որ անվանի դարձավ Փարսում: 5. Երբ Արտաշիրը տասնհինգ տարեկան դարձավ^{viii}, տեղեկություն եկավ Արտավանին, թե Փափազը մի որդի ունի, որ արժանավոր է և վարժ ձիավարության արվեստում: 6. Եվ նա նամակ գրեց Փափազին, թե՛ «Մենք այսպես լսեցինք, որ դուք մի որդի ունեք՝ արժանավոր և շատ վարժ ձիավարության արվեստում: 7. Եվ մենք կամեցանք, որ նրան մեզ մոտ ուղարկես, և մեզ մոտ գա, որպեսզի [մեր] որդիների և իշխանների հետ լինի, և իր արվեստի չափով նրան ընծաներ կտամ»:

⁴ Պիլ.՝ ud [az] d/jahišn abāyēd budan rāy: Բոլոր ձեռագրերում գրված է d/jhyšn, որ կարող է կարդացվել dahišn՝ «արարում, արարչություն», նաև ըստ երևույթին՝ «ճակատագիր», կամ jahišn՝ «բախտ, ճակատագիր» (ինչպես արել է Կунакова, 40): Դժվար է որոշելը, թե սրանցից ո՞ր մեկն է իրականում օգտագործել գրողը: Թիրեաբեանը թարգմանել է այսպես՝ «Եւ ինչպէս նախասահմանուած էր» (էջ 5): Կա նաև մեկ այլ ընթերցում, որ նույնպես հավանական է. բառը մի փոքր փոփոխությամբ կարելի է կարդալ sāsān՝ թարգմանելով նախադասությունը այսպես. «Եվ ինչպես որ պետք էր, կինը Սասանից հղիացավ» (ինչպես արել են՝ Sanjana, 5; Farrahvashi, 10-11): Վերջին ընթերցման դեմ է խոսում այն հանգամանքը, որ նույն արտահայտությունը հանդիպում է այս մատյանի մեջ՝ այլ տեղերում՝ ԺԷ, 1; ԺԸ, 1:

8. Արտավանի հզոր և իշխանությամբ ավելի բարձր լինելու պատճառով [Փավագը] չկարողացավ հակաճառել և հրամանին չենթարկվել: 9. Եվ որոշ ժամանակ անց Արտաշիրին զարդարած, տաս ծառաների հետ և շատ հրաշալի, արժանավոր⁵ ու պատշաճ իրերով ուղարկեց Արտավանի մոտ:

10. Արտավանը, երբ տեսավ Արտաշիրին, ուրախացավ և սիրեց նրան: 11. Հրամայեց, որ ամեն օր իր որդիների և իշխանագույնների հետ որսի և ճոկան խաղալու^{ix} գնան, և Արտաշիրն այդպես արեց: 12. Եվ աստվածների օգնությամբ ճոկանախաղի (čawgān), ձիավարության, ճատրակի (čatrang), նարդու (nēw-ardaxšēr) և մնացած արվեստներում նրանցից բոլորի վրա հաղթող ու մարտունակ⁶ էր:

13. Մի օր Արտավանը հեծյալների ու Արտաշիրի հետ որսի գնաց: 14. Մի ցիռ (gūr) դաշտի միջով անցավ, և Արտաշիրն ու Արտավանի ավագ որդին ընկան այն ցիռի հետևից: Արտաշիրը վրա հասավ և նետով այնպես զարկեց ցիռին, որ նետը մինչև փետուրը փորը խրվեց ու մյուս կողմից դուրս եկավ, և ցիռը տեղում սատկեց: 15. Արտավանը [և] ձիավորները վրա հասան, և երբ [Արտավանը] այդպիսի հարվածը տեսավ, հիացավ և հարցրեց. «Ո՞վ հասցրեց այս հարվածը»: 16. Արտաշիրն ասաց. «Ե՛ս արեցի»: 17. Արտավանի որդին ասաց, թե՛ «Ո՛չ, ե՛ս արեցի»: 18. Արտաշիրը բարկացավ և ասաց Արտավանի որդուն. «Հմտությունն ու տղամարդկությունը ստամբակությամբ, անամոթությամբ, ստով և անարդարությամբ չես կարող բռնը դարձնել: Այս դաշտը լավն է, և ցիռ այստեղ շատ կա: Ես ու դու

⁵ Այս բառը պահլավերեն տեքստում գրված է **𐭪𐭥𐭮**: Այն երկու տարբերակներում ունի. Farrahvashi-ն (s. 15), Чунакова-ն (с. 40, 87) և Grenet-ն (p. 60) ընդունում են vēšist/vēšast (Farahvashi), wēšast (Чунакова), wēšist (Grenet) տարբերակները՝ քարգմանելով «فراوان», «весьма», “en telle quantité”: Nyberg-ն իր բառարանում (v. II, p. 172) բառը տալիս է sahist և քարգմանում «ճոխ, հրաշալի»: Ես առավերություն եմ տվել երկրորդ տարբերակին՝ այն տառադարձելով ...ud sahist..., որ ավելի ճիշտ ու տրամաբանական է, քան առաջին տարբերակը:

⁶ Պահլ. **𐭪𐭥𐭮** I : Չնայած բուն բառի ընթերցանությունը հին ու նոր ուսումնասիրողների մեջ տարբերվում է, ինչպես օրինակ՝ Սանջանա (7, vardē), Noshervan (3, vardak) և Չունակովա (40, *nibardag), Գրենեն (60, *nibardag), իմաստն ընդհանուր առմամբ պարզ է. Չունակովա՝ «ловкий», Գրենեն՝ «pugnace»:

այստեղ մեկ այլ մրցություն կանենք և լավությունը, քաջությունն ու ճարակությունը կցուցադրենք»: 19. Արտավանին դա դուր չեկավ և դրանից հետո Արտաշիրին չքողեց, որ ձի հեծնի: 20. Եվ Արտաշիրին ձիերի ախոռ ուղարկեց: 21. Հրամայեց. «Տե՛ս, որ օրուգիշեր ձիերի մոտից որսի, ճոկանախաղի և ուսումնատեղ չգնաս»: 22. Արտաշիրը հասկացավ, որ Արտավանը նախանձի ու չարակամության պատճառով է ասում:

23. Եվ շուտով այդ դեպքի մասին, այնպես, ինչպես որ եղել էր, Փափագին նամակ գրեց: 24. Փափագը, երբ նամակը տեսավ, տխրեց: 25. Եվ պատասխանի մեջ, որ Արտաշիրին ուղարկեց, գրեց. «Անմտորեն դու վարվեցիր, որ մի բանի պատճառով, որից վնաս լինել չէր կարող, մեծավորների հետ վիճեցիր և կոպիտ խոսքեր նրան ասացիր: 26. Այժմ էլ ներողություն խնդրի՛ր և մեղքդ քավելու մասին մտածի՛ր, (27.) որովհետև իմաստուններն ասում են, որ թշնամին թշնամուն չի կարող անել այն, ինչ տգետ մարդն է ինքն իրեն անում իր արարքով: 28. Սա էլ է ասվում, թե մի՛ գանգատվիր այն մարդուց, ով ինքն է դատավորը (բռց.՝ այն մարդուց գանգատվելը մի՛ նախընտրիր, ումից բացի՝ ոչ ոք չի դատում)»: 29. Եվ դու ինքդ գիտես, որ Արտավանն իմ ու քո և աշխարհի շատ մարդկանց մարմնի, կյանքի և գույքի վրա իշխանավոր և տիրակալ է: 30. Եվ այժմ հատկապես իմ այս պատգամը [լսի՛ր], որ հավատարիմ ու հպատակ լինես, մարմինդ մարզես և անգործության չմատնես:

⁷ Այստեղի պահլավերեն տեքստը ես տառադարձել եմ այսպես. *ēn-iz guft ēstēd kū āz ān kas must-abarmand ma bāš kē jud az ōy [kas] nē wizīrēd*: Ընդգծված բառը կարող է կարդացվել *wizīrēd* կամ *wizārēd*: Այս նախադասությունը սովորաբար այլ կերպ է թարգմանվել մատյանի թարգմանիչների կողմից: Այսպես՝ Չունակովան թարգմանում է (с. 68). «Пусть никто не мстит (тому) человеку, без которого он не может обходиться (выходить из затруднения)», Grenet (63). «Qu'on ne soit pas plus provocateur que celui sans lequel on ne peut rien accomplir.», Թիրեաքեան (8). «Մի՛ գանգատիր այն մարդէն, որ անկէ գատ քամակ (ապաւէն) չունիս»:

*Գ. [Արտավանի հարճի՝ Արտավանին խաբելու
և Արտաշիրի՝ հարճի հետ Փարսի կողմը փախչելու մասին]*

1. Արտավանը մի գեղեցիկ հարճ ուներ, որին այլ հարճերից առավել էր սիրում և փայփայում, և ինչ ցանկություն որ ուներ, այս հարճը կատարում էր:

2. Մի օր, երբ Արտաշիրը, ախռռում նստած, թանքուր^x էր նվագում, երգ ու ուրախություն անում, [հարճը] նրան տեսավ և սիրահարվեց: 3. Եվ հետո կրկին Արտաշիրի մոտ եկավ և ընկերություն ու սեր արեց նրա հետ:

Ամեն գիշեր, երբ անբախտ Արտավանը քնում էր, այն հարճը թաքուն Արտաշիրի մոտ էր գնում, մինչև առավոտ նրա հետ էր լինում և հետո կրկին Արտավանի մոտ էր դառնում:

4. Մի օր Արտավանն արքունիքում գտնվող գիտուններին և աստղագետներին իր մոտ կանչեց և հարցրեց. «Ինչե՞ր էք տեսնում յոթականների և տասներկուականների^{xi}, աստղերի կանգնելու և ընթացքի և տարբեր երկրների թագավորների ժամանակների, աշխարհի մարդկանց և իմ զավակների ու մեր մարդկանց վերաբերյալ»:

5. Աստղագետների գլխավորը պատասխան տվեց. «Այժեղջյուրն⁸ ընկավ, և Օհրմազդ աստղը կրկին բարձրացավ և Վահրամն ու Անահիտը կհարեն Հավթորինգ ու Առյուծ համաստեղություններին և կօգնեն Օհրմազդին^{xii}»: 6. Եվ սա այն է ցույց տալիս, որ մի նոր արքա և տիրակալ ի հայտ կգա, բազում իշխանապետերի կսպանի և աշխարհը կրկին կբերի մեկ իշխանության տակ»: 7. Եվ նրանց

⁸ D. P. Sanjana-ի տարբերակում (էջ 10) է տրված nahāzīgān, այսինքն՝ Այժեղջյուրի համաստեղությունը: Այս տարբերակն է ընդունում նաև Չունակովան (42, 69): Նյուդելեն, Անտիան և Թիրեաքեանն ընդունել են dāwāzdaḥān տարբերակը, այսինքն՝ «տասներկու համաստեղություններ»-ը: Nyberg-ը կարդում է dō-āpān, որ թարգմանում է «Ջրհոսի համաստեղություն»: Ուշադրության արժանի է Գրեների առաջարկած տարբերակը (64)՝ *Gōzihr, որ երկնային առասպելական վիշապի անունն է: Եթե դա ճիշտ է, ապա հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ է ասված «Գոզիրն ընկնում է»: Այստեղ ես հետևել եմ Սամջանային, բայց միևնույն է, բառի ընթերցումը կարող է և այլ կերպ լինել:

գլխավորներից մեկ ուրիշն⁹ առաջ եկավ և ասաց, թե՝ «Հայտնի է, որ այն ծառան, ով այսօրվանից սկսած երեք օրվա ընթացքում իր տիրոջից կփախչի, մեծության և իշխանության կհասնի ու իր տիրոջ վրա իշխող և հաղթանակող կլինի»:

8. Հարճը, երբ գիշերը եկավ Արտաշիրի մոտ, պատմեց նրան Արտավանին ասված այս խոսքերը: 9. Երբ Արտաշիրն այն խոսքերը լսեց, մտքին դրեց այնտեղից փախչել: 10. Եվ հարճին ասաց, թե «Եթե անկեղծ ես ինձ հետ և հավատարիմ, ապա այս երեք վճռված օրվա ընթացքում, որ, ինչպես աստղաբաշխ իմաստուններն են ասում. «ով իր տիրոջից փախչի՝ մեծության ու իշխանության կհասնի», այստեղից կզնամ, որ աշխարհին տիրեմ: 11. Եթե Էրանշահրի աստվածային Փառքը մեզ օգնության գա, և փրկվեմ ու բարօրության հասնեմ, այնպես կանեմ, որ աշխարհում քեզնից ավելի երջանիկ մարդ չի լինի»: 12. Հարճը համաձայնվեց և ասաց. «Շնորհակալ եմ, և ինչ որ դու կիրամայես, այն կկատարեմ»:

13. Քանի որ առավորտը մոտենում էր, հարճը կրկին գնաց իր տեղը՝ Արտավանի մոտ: 14. Երբ գիշերն Արտավանը քնեց, նրա գանձարանից հնդկական թուր, ոսկե թամբ, խոյազուլխ գոտի (*kamar ī mēššār*), ոսկե թագ, գոհարազարդ ոսկե բաժակ, շատ դրամ ու դինար, բազում զարդարուն զենք ու զրահ և բազմաթիվ այլ բաներ վերցրեց ու բերեց Արտաշիրի մոտ:

15. Արտաշիրն Արտավանի ախոռներից երկու ձի, որ օրական 70 փարսանգ^{xiii} են անցնում, թամբեց, մեկը ինքը հեծնեց, մյուսը՝ հարճը, և բռնելով Փարսի ուղին՝ հապճեպորեն ճանապարհ ընկավ:

16. Այսպես են ասում, որ գիշերը մի գյուղի հասան: 17. Եվ Արտաշիրը, վախենալով, թե չլինի այնպես, որ գյուղի մարդիկ տեսնեն, ճանաչեն և գերի վերցնեն [իրեն], ոչ թե գյուղի միջով, այլ կողքով ան-

⁹ Այստեղ ևս տարբերակներում կա ուսումնասիրողների միջև: Հատվածի մի ընթերցում է *az awēšān sālār* («նրանց առաջնորդներից») և մյուսը՝ *murw-nišān sālār* (թոշնագուշակների առաջնորդը): Սի մասը, ինչպես Nöldeke (42), Sanjana (11), Թիրեաքեան (9), Grenet (67), հակված է առաջին տարբերակին, մյուս մասը, ինչպես Farrahvashi (27) և Чухакова (43), գերադասում է երկրորդ տարբերակը:

ցավ: 18. Եվ գալով երկու նստած կանանց տեսավ: 19. Եվ այդ կանայք գոչեցին, թե «Մի՛ վախեցիր քայ^{xiv} Արտաշիր Փափագան, որ Սասանի տոհմից, Դարայան Դարայի սերնդից ես, որովհետև փրկված ես բոլոր վատերից, և քեզ բռնել չի լինի, և բազում տարիներ պետք է թագավորես Էրանական աշխարհում: Շտապի՛ր մինչև ծովն^{xv}, և երբ որ ծովը աչքովդ տեսնես, այլևս մի՛ գնա, քանի որ երբ աչքովդ ծովը տեսնես, թշնամիներից ապահով կլինես»: 20. Արտաշիրն ուրախացավ և շտապելով այնտեղից գնաց:

Դ. [Արտավանի՝ հարձի հետ Արտաշիրի փախուստից տեղեկանալու և նրանց հեղափոխություն մասին]

1. Երբ լուսացավ, Արտավանը հարձին կանչեց, բայց հարձը իր տեղում չէր: 2. Չիապանը մոտ եկավ ու հայտնեց, թե «Արտաշիրը Ձեր ախոռներից երկու ձիերի հետ իր տեղում չէ»: 3. Եվ Արտավանը հասկացավ, թե՛ «Իմ հարձը փախուստի է դիմել Արտաշիրի հետ»: 4. Եվ երբ որ տեղեկացավ նաև գանձի մասին, վշտացավ: 5. Կանչեց աստղաբաշխների գլխավորին և ասաց նրան. «Շտապի՛ր և տե՛ս, թե այն հանցագործն այդ անբարոյականի ու անառակի հետ ո՞ր կողմը գնաց, և ե՞րբ կարող եմ նրանց բռնել»: 6. Աստղաբաշխների գլխավորը ժամանակը հաշվարկեց¹⁰ և Արտավանին իր պատասխանում ասաց. «Խոյր¹¹ Քեվանից և Վահրամից հեռանում է¹² և հարեց

¹⁰ Տեքստում գրված է *zamān handāxt*: Այս արտահայտությունն այդքան էլ տարածված չէ և տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել, սակայն թարգմանեցինք վերևի իմաստով, որ հենց համապատասխանում է ընդհանուր դրությունը:

¹¹ Հնարավոր է կարդալ նաև «լուսին» (*māh*): Այսպես՝ Nöldeke-ն (44), Noshervan-ը (6), Sanjana-ն (18), Farrahvāši-ն (37) ընդունում են «Խոյ» տարբերակը (*Mēš*), իսկ Թիրևաքեանը (11), Чухакова-ն (44), Grenet-ն (70) ընդունում են «Լուսին» տարբերակը: Շփոթությունը գալիս է գրելաձևերի նմանությունից:

¹² Այստեղ բառը բավական անորոշ կերպով է գրված, և դրա ընթերցումը մեծ դժվարություն է ներկայացնում: Եթե տառադարձենք, հնարավոր է ստանալ *lyyt*, որ կարելի է կարդալ *raved* (զնուն է), թեև սովորություն չկա այդ բառը այդպես գրելու: Կարելի է կարդալ նաև *rycyt*, որին էլ հավելելով *w* հնչյունը (որ կարող էր արտագրողների մոտ


Օհրնագրին ու Թիրին: Երկնքի-միջի-տիրակալը կանգնեց Արեգակի վայրի¹³ ներքո^{xvi}: 7. Եվ այսպես է հայտնի, որ Արտաշիիրը փախավ, և դեմքը դեպի Փարս է ուղղված, և եթե երեք օրվա ընթացքում հնարավոր չլինի բռնելը, դրանից հետո այլևս բռնել չես կարող»:

8. Արտավանն անմիջապես 4000 հոգանոց զորք կազմեց և ուղին դեպի Փարս ունենալով՝ ընկավ Արտաշիրի հետքի վրա: Եվ երբ կեսօր էր, հասավ մի վայր, որտեղով անցնում էր Փարսի ճանապարհը:

9. Եվ հարցրեց, թե՝ «Այն երկու ձիավորը, որ այս կողմերը եկան, ե՞րբ անցան»: 10. Մարդիկ ասացին. «Առավոտյան, երբ արևը դեռ նոր էր ծագում, այնպես, ինչպես առաքինի քամին^{xvii}, անցան նրանք: 11. Եվ նրանց ետևից մի շատ պարարտ խոյ էր վազում, որից ավելի լավը գտնել չի կարելի: 12. Գիտենք, որ մինչև հիմա շատ փարսանգներ են անցել, և դուք չեք կարող նրանց բռնել»: 13. Արտավանն առանց մի ակնթարթ իսկ հապաղելու առաջ շտապեց:

14. Երբ մի այլ տեղ (կամ տուն տեղ)¹⁴ հասավ, մարդկանցից հարցրեց, թե «Այն երկու ձիավորները ե՞րբ անցան»: 15. Նրանք պատասխանեցին. «Կեսօրին, ինչպես մի առաքինի քամի, անցան, և մի խոյ էր անընդհատ հետևում նրանց»: 16. Արտավանին տարօրինակ թվաց, և ասաց. «Կարծես այն երկու ձիավորին ճանաչում եմ, բայց այն խոյն ի՞նչ կարող է լինել», և հարցրեց դասթուրից^{xviii}: 17. Դասթուրն ասաց, թե՝ «Այն արքայական Փառքն^{xix} է և քանի նրան չի հասել, պետք է արշավել¹⁵, գուցե մինչ այն Փառքը նրան հասնի, կարողանանք բռնել: 18. Արտավանը հեծյալների հետ ուժգնորեն շտապեց: 19. Մյուս օրը յոթանասուն փարսանգ գնացին և հանդիպեցին

բաց թողնված կամ ջնջված լինելը՝ կարդալ wirēzēd (փախչում է): Ընդհանուր առմամբ բառի իմաստը չի փոխվում, և ես ընտրել եմ չեզոք «հեռանալ» բառը:

¹³ Թարգմանությունը կրկին հստակ չէ, ինչպես նաև իմաստը: Գրված է , որ ես կարդացել եմ brāh, այսինքն՝ շող, փայլ՝ որպես իմաստ հասկանալով արեգակի՝ ցերեկվա ընթացքում անցած ճանապարհի հետագիծը:

¹⁴ Գրված բառը կարելի է կարդալ և՛ ānē (AHRN)՝ «այլ», և՛ xān՝ «տուն»:

¹⁵ Բնագիրը կարող է կարդացվել երկու կերպ. aswārēm, որ նշանակում է «ձիավարեն, արշավեն», կամ, մի փոքր փոփոխությամբ, niwārēm, այսինքն՝ «շտապեն» (Чуханкова, 45):

քարավանի մի խմբի: 20. Արտավանը նրանցից հարցրեց, թե այն երկու հեծյալներին որտեղ են հանդիպել: 21. Նրանք ասացին. «Չերևանց միջև 20/21/30¹⁶ փարսանգ տարածություն կա: 22. Եվ մեզ այնպես թվաց, թե այդ երկու ձիավորներից մեկի ձիու վրա մի շատ մեծ ու գեղեցիկ խոյ էր նստած»: 23. Արտավանը դաստիարակից հարցրեց, թե՛ «Այն խոյը, որ ձիու վրա է, ի՞նչ է նշանակում»: 24. Դաստիարակն ասաց. «Ամմահ եղե՛ք, արքայական Փառքը Արտաշիրին է հասել, և նրան բռնելու հնար [այլևս] չկա: Այդ պատճառով էլ ինքներդ ձեզ և հեծյալներին մի՛ հոգնեցրեք, ձիերին մի՛ տանջեք ու վնասեք: Արտաշիրի համար այլ տեղից հնար գտեք»:

*Ե. [Արտավանի՝ յուր որդուն գորքով Փարս՝
Արտաշիրին բռնելու ուղարկելու մասին]*

1. Արտավանը, երբ այդպիսի [խոսքեր] լսեց, ետ դարձավ և իր նստավայրը եկավ: 2. Այնուհետև գորք կազմեց և իր որդու հետ Փարս ուղարկեց: 3. Իսկ Արտաշիրը բռնեց ծովի ափ տանող ճանապարհը: 4. Այդպես գնալու ժամանակ որոշ մարդիկ Փարսից, ովքեր դժգոհ էին Արտավանից, իրենք եկան և ունեցվածքն ու ինչքն Արտաշիրի մոտ բերեցին ու հպատակություն հայտնեցին:

Զ. [Բունագի՝ Արտաշիրին օգնելու մասին]

1. Եվ երբ եկավ Ռամիշն-Արտաշիր կոչված վայրը, մի պատվավոր (wazurg-mēnišn) մարդ՝ Բունագ¹⁷ անունով, Սպահանից, ով փախել էր Արտավանից և այնտեղ ճամբար խփել, ինքը, իր յոթ որդու հետ Արտաշիրի մոտ եկավ: 2. Եվ Արտաշիրը վախենում էր Բունագից:

¹⁶ Սրանք տարբեր ընթերցումներ են: Ուսումնասիրողների մեծ մասը նախընտրում է «21»-ը:

¹⁷ Ուսումնասիրողների ճնշող մեծամասնությունն այս մարդու անունը տալիս է Banāg (Nöldeke, Noshervan, Sanjana, Թիբեաբեան) կամ Bunāg (Чунакова): Միայն Ֆր. Գրենեն է, որ անունը տառադարձել է այլ կերպ՝ Bawāg (Grenet, 74):

գից, [մտածելով]. «Չլինի՞ ինձ գերի առնի և Արտավանին հանձնի»:
3. Հետո Բունագն Արտաշիրի մոտ եկավ և երդվեց ու երաշխիք տվեց,
թե՛ «Քանի դեռ ողջ եմ, ինքս որդիներիս հետ քեզ եմ հպատակ»:
4. Արտաշիրն ուրախացավ և հրամայեց այնտեղի գավառը (rōstāg)
Ռամիշն-Արտաշիր¹⁸ կոչել: 5. Բունագին հեծյալների հետ այնտեղ
թողեց, իսկ ինքը ծովի ափ գնաց: 6. Երբ ծովն իր աչքերով տեսավ,
յազատներին^{xx} շնորհակալություն հայտնեց: 7. Եվ այնտեղի գավա-
ռի անունը Բուխթ-Արտաշիր¹⁹ դրեց ու հրամայեց ծովի մոտ տաս
Վահրամական կրակ^{xxi} դնել և այնտեղից կրկին Բունագի ու հեծյալ-
ների մոտ եկավ:

*Է. [Արտավանի հետ Արտաշիրի պատերազմը և վերջինիս՝
Արտավանի դարերը կնություն առնելու մասին]*

1. Եվ [Արտաշիրը] գորք կազմեց, եկավ բարեգործ Ֆարրոբայ
կրակի դուռը, օգնություն խնդրեց ու եկավ Արտավանի դեմ պատե-
րազմի: 2. Արտավանի այդ գորքն ամբողջովին կոտորեց, խլեց ինչքը,
ունեցվածքը, ձիերն ու ճամբարը նրանից և ինքը Սթախրում նստեց:
3. Քիրմանից, Մաքրեսքանից և Փարսի^{xxii} շրջաններից մեծաքանակ
գորք հավաքեց և ուղարկեց Արտավանի դեմ պատերազմի: 4. Չորս
ամիս՝ ամեն օր, շատ կռիվ ու կոտորած էր գնում:

5. Արտավանն էլ տարբեր շրջաններից, ինչպես Ռեյը, Դուբա-
վանդը, Դիլմանը և Փաղիշխավար լեռը^{xxiii}, գորք ու ձի ուզեց: 6. Այն
պատճառով, որ արքայական Փառքը Արտաշիրի հետ էր, Արտաշիրը
հաղթանակ տարավ: 7. Սպանեց Արտավանին, ու նրա ամբողջ
ունեցվածքն Արտաշիրի ձեռքն ընկավ: Եվ ամուսնացավ [Արտաշի-
րը] Արտավանի աղջկա հետ: 8. Կրկին Փարս եկավ և մի քաղաք կա-
ռուցեց, որ Արտաշիր-խավարահ²⁰ են կոչում: 9. Եվ այն մեծ լիճը փո-

¹⁸ Թարգմ.՝ «Արտաշիրի ցնծություն»:

¹⁹ Թարգմ.՝ «Արտաշիրի փրկություն»:

²⁰ Թարգմ.՝ «Արտաշիրի փառք»:

րեց, չորս առունների ջուրը նրանից բերեց և կրակատուն հիմնեց: Սթաբր լեռը քանդեց և Ռ-ավագ²¹ գետը հոսեցրեց, շատ գյուղ ու դաստակերտ շինեց, հրամայեց շատ Վահրամական կրակներ այնտեղ հիմնել:

*Ը. [Արտաշիրի՝ քուրդների հետ պատերազմելու
և պարսիկելու մասին]*

1. Դրանից հետ բազում գորք, գունդ ու ուժեր (°)²² հավաքեց և մարաց (mādiḡ) քուրդանշահի^{xxiv} դեմ պատերազմի առաջնորդեց, ճակատամարտ ու արյունահեղություն եղավ, և Արտաշիրի գորքը պարտություն կրեց:

2. Եվ Արտաշիրը գրկվեց իր գորքից և գիշերը մի անբնակ վայր եկավ, որտեղ ջուր ու ուտելիք չկար: Ինքը և իր բոլոր հեծյալներն ու ձիերը սովի ու ծարավի մատնվեցին: 3. Հեռվից Արտաշիրը հովիվների խարույկը տեսավ և այնտեղ գնաց: 4. Այնտեղ ծեր մարդ տեսավ, ով ոչխարների հետ դաշտերում ու լեռներում էր [սալրում]: 5. Արտաշիրն այն գիշեր այնտեղ մնաց (šud)²³ և հաջորդ օրը նրանից²⁴ ճանապարհի հարցրեց: 6. Նա ասաց, թե՝ «Այստեղից երեք փարսանգ հեռավորության վրա մի գյուղ (rōstāg)²⁵ կա, որտեղ շատ մարդիկ են սալ-

²¹ Stabr նշանակում է «հաստ», իսկ գետի անունը (rawāg)՝ «հոսուն»: Թե ինչքանով են այս երկուսը տեղանուն կամ ամական, վեճի առարկա է: Կунакова-և (47) և Grenet-ն (76) ընթերցում են *Warāzag:

²² Ընթերցանությունը կասկածելի է: Չեռագրերում տրված է zʿwl, որ երկու կերպ է մեկնաբանվել. ոմանք այն կապել են Ջարոլ տեղանվան հետ (Farrahvaši, 50-1; Sanjana, 25; Թիրեաբեան, 15), մյուսներն այն դիտարկել են որպես հասարակ անուն՝ zōr՝ «ուժ» իմաստով (Кунакова, 47; Grenet, 78):

²³ Թերևս այստեղ šudan բայը հանդիպում է իր ուշ՝ «լինել» իմաստով:

²⁴ Տեքստում գրված է awēšān՝ «նրանցից»:

²⁵ Թեև գրված է rōstāg, որ գավառ է նշանակում, սակայն քանի որ ակնհայտորեն այստեղ խոսքը գյուղի մասին է (ինչպես երևում է հաջորդ նախադասության մեջ օգտագործված dēh՝ «գյուղ» բառից), այսպես հարմար եղավ թարգմանել: Քանի որ այդ բառը նոր պարսկերենում նշանակում է «գյուղ», հավանաբար այստեղ գործ ունենք դրա իմաստափոխության վաղ շրջանի հետ, ինչպես նախորդ բառի դեպքում:

րում, և մեծ առատություն կա»։ 7. Արտաշիւրն այն գյուղը (dēh) գնաց, մարդ ուղարկեց և իր հեծյալներին ամբողջությամբ իր մոտ կանչեց։

8. Եվ մարերի զորքը կարծում էր, որ «Արտաշիւրից վախենալու կարիք չկա, քանի որ նա պարտության պատճառով Փարս է վերադարձել»։

*Թ. [Գիշերային հարշակման
և քուրդերին պարտության մատնելու մասին]*

1. Արտաշիւրը 4000 մարդ հավաքեց, նրանց վրա գիշերային հարձակում կատարեց և քուրդերից^{xxv} հազար մարդ սպանեց։ 2. Մնացած վիրավորներին գերեվարեց և քուրդանշահից ու նրա որդիներից, եղբայրներից ու զավակներից շատ ունեցվածք Փարս ուղարկեց։

*Ճ. [Արտաշիւրի՝ Հաֆթանբոխի դեմ պարերազմի
և պարտության մասին]*

1. Ճանապարհին Հաֆթանբոխի՝ Քիրմ-տիրակալի^{xxvi} զորքը, նրա հետ կռվելով և ամբողջ ինչքը, ունեցվածքն ու իրերը խլելով Արտաշիւրի հեծյալներից, դրանք Քուլալան^{xxvii} դաստակերտը, որտեղ Քիրմը բանակ ուներ, բերեց։

2. Եվ Արտաշիւրը միտքն էր դրել, թե՛ «Հայաստան և Ատրպատական գնամ», քանի որ Յագդանքարդ Շահնագուրիզցին շատ զորքով Շահնագուրիզից իր հետ դաշինք կնքեց և նրա հպատակության տակ եկավ²⁶։ 3. Բայց այն պատճառով, որ իր զորքի նկատմամբ Հաֆթանբոխի որդիների արածը լսեց, մտածեց. «Նախ պետք է

²⁶ Վերջին հատվածը մի փոքր մշուշոտ հատված է, որի տարբեր բառերը տարբեր ձևերով կարելի է ընթերցել, բայց այսպիսի թարգմանությանն է հարում ուսումնասիրողների մեծամասնությունը։ «Շահրագուր» տեղանունը Grenet-ն ընթերցում է Syārazūr (82)։ Նրանից առաջ այսպիսի ընթերցում առաջարկեցել է Յ. Մարկվարտը (տե՛ս Չունակովայի ծանոթ. 78-ը, էջ 94)։

Փարսի գործերը կարգավորել ու թշնամուց ապահով լինել և հետո դառնալ այլ երկրներին: 4. Այժմ, Քուլալանի այն կուռքի (որդի) շնորհիվ, [Քիրմի տիրակալը] այնպես է հաղթում ու բռնանում, որ հինգ հազար գորք է ամբողջությամբ տարբեր կողմեր՝ դեպի Սինդի երկիր, Մաքրամ^{xxviii} և ծով ուղարկել»:

5. Արտաշիրի գորքերն ու գնդերը կրկին իր մոտ եկան: 6. Հաֆթանբոխթն էլ իր գորքերն ամբողջությամբ իր մոտ կանչեց: 7. Արտաշիրը մեծաքանակ գորք գորավարների հետ ուղարկեց Քիրմի դեմ պատերազմելու: 8. Քիրմի *պաշտողները/ժառանգները* (^o)²⁷ իրենց ամբողջ ունեցվածքն ու ինչքը Քուլալան ամրոցում պաշտպանության դրեցին, իրենք լեռներում՝ դժվարամատչելի տեղերում, պահվեցին: 9. Եվ Արտաշիրի հեծյալները [դրանից] տեղյակ չէին, եկան Քուլալան ամրոցի մոտ ու պաշարեցին այն: 10. Երբ գիշեր եղավ, Քիրմի գորքը նրանց հարվածեց, գիշերային հարձակում կատարեց, Արտաշիրի հեծյալներից շատերին սպանեց և շատ ձի, թամբեր, զենք ու զրահներ, ունեցվածք ու բեռներ նրանցից խլեց, ծաղր ու ծանակով, անարգանքներով (*wadwāzag*) ու մերկ ետ՝ Արտաշիրի մոտ ուղարկեց:

11. Արտաշիրը, երբ դա տեսավ, շատ վշտացավ և տարբեր երկրներից ու տեղերից գորք կանչեց իր մոտ, և ինքը մեծ գորքով

²⁷ Պահլավերեն տեքստում այստեղ գրված բառը միանշանակորեն պարզ չէ: Գրված է *d'īn*, որ պահլավերեն գրի բնույթի համաձայն՝ կարելի է կարդալ *dālān*, *dārān*, *yālān*, *gārān*, *gārān* և հազար ու մեկ այլ ձևով: Իմաստային առումով, սակայն, հավանական են մի քանիսը. ես այստեղ դրել եմ «պաշտողներ/ժառանգներ»՝ ելնելով կոնտեքստից: Նյուդենեն (51) կասկածանքով կարդացել է *yārān* և թարգմանել «ընկերներ, պաշտպաններ» իմաստով՝ ժանոթագրության մեջ նշելով, որ հավանաբար դա «յար» բառի ուշ ձևն է, և այդ ժամանակ այն պետք է ընթերցվեր *ayyār* (նրա տառադարձմամբ՝ *ajābārān*): Հնարավոր է, որ նորաբանություն է (այդ ժամանակաշրջանի համար) և ինչպես մի քանի այլ մեծան տեղերում, ներս է սպողել տեքստի մեջ: Հնարավոր է կարդալ նաև *yālān* (ներկա ձևը *yal'* կարճ *a*-ով) և թարգմանել «քաջեր, փախկաններ»՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջինից դեպի նոր պարսկերեն անցման փուլում (և՛ պահլավերեն երկերում, և՛ Շահնամեում, ինչպես նաև հրեա-պարսկական բարբառում) բազմաթիվ բառեր, որոնք սովորաբար կարճ *a*-ով են գրվում, գրված են երկար *ā*-ով և հակառակը (ինչպես օրինակ *sar* = *sār*, *gāh* = *gah*, *spāh* = *spah*, *syāh* = *syah*, *šāh* = *šah*): Չունակովան և Գրենեն հետևում են Նյուբերգին (*Nyb.*, II, 80), ով կարդում է *gālān* (եզ.՝ *gāl* < **garda-*), որը, ըստ նրա, թարգմանվում է «ժառա, ժառանգների խումբ»:

Քիրմի դեմ պատերազմի ելավ: 12. Երբ Քուլալան ամրոցի մոտ եկավ, Քիրմի զորքն ամբողջությամբ ամրոցում նստեց: 13. Արտաշիրն ամրոցի շուրջը նստեց:

14. Եվ Քիրմի տիրակալ Հաֆթանբոխքը յոթ որդի ունեցավ: 15. Ամեն որդի հազար մարտով մի երկրի վրա էր նշանակված: 16. Այդ ժամանակ այն որդին, որն Էրասահիստանում^{xxix} էր, արաբներից ու մեզանիզներից^{xxx} բաղկացած մեծ զորքով անցավ ծովը և սկսեց պատերազմել Արտաշիրի դեմ: 17. Եվ Քիրմի զորքը, որ ամրոցում էր, ամբողջությամբ դուրս եկավ և Արտաշիրի հեծյալների դեմ կենաց-մահու դաժան պատերազմ մղեց: 18. Երկու կողմերից էլ շատերը սպանվեցին: 19. Եվ Քիրմի զորքը դուրս եկավ և ճանապարհին ու անցուղիներն այնպես գրավեց, որ Արտաշիրի զորքից ոչ մի մարդ դուրս գալ և իր համար ուտելիք ու ձիերի համար պաշար բերել չէր կարող: Քիրմի պատճառով բոլոր մարդիկ և ձիերը կարիքի ու անճարակության մեջ ընկան:

ԺԱ. [Միհրակ Անուշակադանի՝ Արտաշիրի նկարումսմբ կատարած դավանանության մասին]

1. Երբ Փարսի շր՝m-ի (zrhm/zw՝m...²⁸) Միհրակ Անուշակադանը լսեց, որ Արտաշիրը Քիրմի դռանը անգործ [նստել է] և չի հաղթում Քիրմի զորքին, (2.) զորք հավաքեց, գնաց Արտաշիրի տեղը (նստավայրը) և նրա ամբողջ ինչքն, ունեցվածքն ու գանձերը տարավ: 3. Երբ [Արտաշիրը] Միհրակի ուխտադրության մասին լսեց, մտածեց, թե՝ «Ժամանակն է Քիրմի դեմ պատերազմը դադարեցնելու, (4.) այնուհետև Միհրակի դեմ պատերազմի գնալու»:

5. Եվ զորքն ամբողջությամբ կրկին իր մոտ հավաքեց, զորավարների հետ խորհրդակցեց և ելք փնտրեց իր ու զորքի փրկության համար: 6. Այնուհետև նստեց ճաշելու: 7. Հանկարծ մի փայտե նետ

²⁸ Ընթերցանությունն անորոշ է, թեև ըստ ամենայնի խոսքը ինչ-որ տեղանվան մասին է:

ամբողջից եկավ և մինչև փետուրը խրվեց սեղանին դրված խոյի մեջ: 8. Եվ նետի վրա այսպես էր գրված, թե «Այս նետը Քիրմի տիրակալի հզոր հեծյալներն արձակեցին: 9. Եվ մենք չպետք է սպանենք այնպիսի մեծ մարդուն, ինչպիսին եք Դուք, և դրա համար էլ այս խոյին հարվածեցինք²⁹»:

*ԺԲ. [Արտաշիրի՝ Քիրմի գործից տեղեկանալու
և նրա հարցին լուծում տալու մասին]*

1. Արտաշիրը, երբ ամեն ինչ այդ կերպ տեսավ, գորքն այնտեղից առաջնորդեց ու գնաց: 2. Եվ Քիրմի գորքն Արտաշիրի ետևից շտապեց և մի տեղում նրանց այնպես շրջափակեց, որ Արտաշիրի գորքը չկարողացավ անցնել: 3. Եվ Արտաշիրն ինքը միայնակ ծովի ափը հասավ:

4. Այսպես են ասում, որ արքայական Փառքը մի ցիռի³⁰ [կերպարանքով] էր և Արտաշիրի առջև կանգնեց ու կամաց-կամաց գնաց, մինչև Արտաշիրին այն դժվարանցանելի տեղից և թշնամիների ձեռքից անվնաս դուրս առաջնորդեց և մինչև Մանագ կոչվող գյուղը հասավ:

5. Գիշերը եկավ երկու եղբայրների տուն, որոնցից մեկը Բուրգագ^{xxxı} էր կոչվում, մյուսը՝ Բուրգադուր: 6. Նրանց ասաց, թե՝ «Ես Արտաշիրի հեծյալներից եմ, որ Քիրմի դեմ ճակատամարտից պարտությամբ եմ գալիս և հրամայում եմ, որ այսօր ինձ հյուրընկալեք, մինչև տեղեկություն կգա Արտաշիրի գորքից, թե որտեղ են ընկել»: 7. Նրանք մեծ վշտով ասացին Արտաշիրին, թե՝ «Անիծյալ լինի անօրեն Չար ոգին, որ այս կուռքին այնպիսի հաղթություն ու ուժ է տվել, որ շրջակայքի բոլոր մարդկանց Օհրմագղի և ամահրասպանդների հավատքից գրկել է, [այն] մեծ արքային էլ, Արտաշիրի պես մարդուն և

²⁹ Այս հատվածի տրամաբանությունը դժվար է հասկանալ:

³⁰ Պիլ՝ ցւր, որ կարելի է կարդալ նաև՝ ժւր, ինչպես արել են ոմանք: Ես հավանական համարեցի առաջին տարբերակը:

նրա գորքին, բոլորի հետ թշնամիների և չարագործ կռապաշտների ձեռքով պարտության է մատնել»:

8. Եվ նրանք Արտաշիրի ձիուն բռնեցին, տուն տարան, ախոռում կապեցին և գարի, հարդ ու առվույտ [տալով] խնամեցին: Եվ Արտաշիրին օթյակ առաջնորդեցին ըստ սովորույթի և նստեցրին: 9. Արտաշիրը շատ տխուր էր և անընդհատ մտածմունքների մեջ: 10. Եվ նրանք նկանակ զենեցին^{xxxii} և Արտաշիրին խնդրեցին, թե՛ «Հաճեցիր վազ անել^{xxxiii} և ուտելիք կեր, մի՛ տխրիր ու տանջվիր, որովհետև Օհրմազդը և ամահրասպանդները ցանկանում են այս հարցը լուծել և այս թշնամուն այսպես չեն թողնի: 11. Որովհետև, [երբ] աստված դժգոհ էր Դահազի, Ֆրասյազ Թուրանցու^{xxxiv} և Ալեքսանդր Հռոմեացու բռնակալությունից, իր ուժով և Փառքով այնպես նրանց ի չիք դարձրեց, ինչպես ողջ աշխարհին է հայտնի»:

12. Արտաշիրն այս խոսքի վրա ուրախացավ, վազ կատարեց և ճաշեց: 13. Նրանց մոտ գինի չկար, բայց վաշագ³¹ բերեցին, խնջույք արեցին և փառաբանություն կատարեցին:

14. Արտաշիրը վստահացավ նրանց բարեկամության, կրոնասիրության, հավատարմության և հնազանդության վրա: 15. Եվ բացեց

³¹ Այս հատվածի իմաստը դժվար չէ հասկանալ, սակայն բուն պահլավերեն գրությունը մի փոքր անհստակ է: Բուն գրությունը այսպես է՝ **𐎠𐎼𐎷𐎡𐎴 𐎠𐎹𐎡𐎴 𐎠𐎹𐎡𐎴 𐎠𐎹𐎡𐎴**, որը կարելի է կարդալ BRA was̄k *AI (առանձնացնելով **𐎠𐎹𐎡𐎴** և **𐎠𐎹𐎡𐎴** իրարից, երկրորդ կարդալով **𐎠** AL = օ) **𐎱𐎠𐎿** YHYTYWN-t (հնչյունագրելով՝ bē was̄ag օ pēš āwurd), ինչպես առաջարկում է կարդալ Հեննինգը՝ was̄ag-ը թարգմանելով որպես գարեջուր (Henning W. B., The Middle Persian word for Beer, BSOAS, 1955, pp. 603-604): Թե ինչու՞ հենց գարեջուր, մի քիչ դժվար է ասել, բայց նրա համեմատություններից (Draxt ī Asūrtīg-ում (45) հանդիպում է օ was̄ag ud hur mān արտահայտությունը, որտեղ was̄ag գտնվում է hur բառի կողքին, որ նույնպես խմիչքի անվանում է: Ինչպես նաև համեմատում է ասորերենում հանդիպող wasq և մանդայերենի wasqa բառերը, որոնք նա համարում է իրանական փոխառություն) հիմնականում երևում է, որ դա զրադաշտական ճաշելու արարողակարգի մի բաղկացուցիչ մաս էր և եթե ոչ զարուց պատրաստված, ապա համեմայն դեպս մի որևէ խմիչքի անվանում պետք է եղած լինի: Այս տեսակետը ընդունում են և՛ Չունակովան, և՛ Draxt ī Asūrtīg-ի քննական հրատարակությունը պատրաստած Մահյար Նավվաբին (Navvābi M., Draxt-e Asurig, 1386, p. 75): Արրահամյանն իր բառարանում տալիս է vaškāl՝ «խաղող, չամիչ»: Նյուրբերգը (vol. I) ընբերցում է ŠKL և թարգմանում hur «a strong beverage» (հետևելով «Ֆրահանգ-ի Փահլավիզ» ավանդական բառարանին):

իր գաղտնիքը Բուրզին և Բուրզադուրին ու ասաց. «Ես հենց ինքը՝ Արտաշիրն եմ: Այժմ մտածեք, թե այս Քիրմին և նրա օգնականներին վերացնելու հնարը ինչպես կարելի է գտնել»: 16. Նրանք պատասխանեցին, թե՝ «Մենք մեր մարմինը, կյանքը, ինչքն ու ունեցվածքը, կհին ու որդին, եթե ձեզ՝ Երանշահի տերերիդ պետք լինի հանձնել, կհանձնենք: 17. Բայց մենք այսպես գիտենք, որ այս չարիքի ճարը այսպես կարելի է գտնել, որ դու ինքդ օտարականի նման հանդերձավորվես, ամբողջի դարպասում ինքդ քեզ նրան (Քիրմին) ծառայության հանձնես: Եվ կրոնից տեղյակ (dēn-āgāh) երկու աշակերտներ այնտեղ տանես և աստվածներին պաշտամունք [կատարես], աղոթես աստվածներին ու ամահրասպանողներին, և երբ այն Քիրմի ուտելու պահը կգա, այնպես արա, որ հալված արույր ունենաս և այն չարքի երախի մեջ լցնես, որ սատկի: Եվ այն չարքի հոգին աստվածների պաշտամունքով և աղոթքով կարելի է սպանել, մարմնապես այդ չարքին հալված արույրով է հնարավոր սպանել:

18. Արտաշիրը հավանեց այդ խոսքերը և Բուրզին ու Բուրզադուրին ասաց. «Ես այս գործը ձեր օգնությամբ կկարողանամ անել: 19. Նրան ասացին. «Ինչ գործ որ հրամայեք, [մեր] մարմինն ու կյանքը կտանք»:

ԺԳ. [Արտաշիրի՝ Միհրակ Անուշակգադանին սպանելու, Բուրզի ու Բուրզադուրի հետ խորհրդակցելու և նրա՝ Քիրմին ու Հաֆթանբոխի սպանելու մասին]

1. Արտաշիրն այնտեղից կրկին Արտաշիր-խավարահ եկավ, Միհրակ Անուշակգադանի դեմ պատերազմեց, Միհրակին սպանեց և երկիրն ու տեղը, ինչքն ու ունեցվածքն ամբողջությամբ իրենը դարձրեց:

2. Քիրմի դեմ ճակատամարտելու համար մարդ ուղարկեց, 3. Բուրզին ու Բուրզադուրին իր մոտ կանչեց և նրանց հետ խորհրդակցեց: 4. Շատ դրամ, դեմար^{xxxv} և պատմուճաններ վերցրեց և ինքը խո-

րասանյան հագուատներ հագավ: Բուրզի ու Բուրզադուրի հետ եկավ Քուլալ ամրոցի մոտ և ասաց, թե՝ «Ես խորասանցի^{xxxvi} մարդ եմ և այս հրաշալի արքայից ընծա եմ ուզում, որ [թույլատրի] իրեն երկրպագություն անեն»: 5. Նրանք՝ կռապաշտները, Արտաշիրին այն երկու մարդկանց հետ ընդունեցին և տեղ տվեցին Քիրմի տանը: 6. Արտաշիրը երեք օր այն կերպարանքով Քիրմին երկրպագություն և հնազանդություն անել ձևացրեց և այն դրամը, դենարն ու պատմուճանները երկրպագողներին բաժանեց: Այնպես արեց, որ ամրոցում գտնվող ամեն որ հիացավ և օրհնեց նրան: 7. Հետո Արտաշիրն ասաց. «Այնպես եմ բարին համարում, որ երեք օր Քիրմին իր ուտելիքը իմ ձեռքով տամ: 8. Երկրպագողները և կառավարիչները համաձայնվեցին: 9. Արտաշիրը մարդ ուղարկեց և հրամայեց արհեստավարժ ու անճնագոհ մարդկանց 400 հոգանոց զորք այդտեղի շրջակայքում՝ լեռան արանքներում դարան դնել: 10. Հրամայեց, թե՝ «Ասեման օրը^{xxxvii}, եթե ամրոցից ծուխ նկատեք, քաջություն ու մարտավարժություն ցուցաբերեք և ամրոցին մոտեցեք»: 11. Ինքն այդ օրը արույրը հալեցրեց, իսկ Բուրզն ու Բուրզադուրը յազատներին պաշտամունք ու աղոթք կատարեցին:

12. Եվ երբ ուտելու ժամանակը եկավ, Քիրմն ամեն օրվա պես գոչյուն արձակեց: 13. Արտաշիրը դրանից առաջ կռապաշտներին ու կառավարիչներին ճաշի ժամանակ հարբեցրել էր և քնեցրել: Ինքն իր ծառաների հետ Քիրմի մոտ գնաց և ցլերի ու ոչխարների արյունը, որ ամեն օր տալիս էր, Քիրմի առջև տարավ, և հենց որ Քիրմը երախը բացեց, որ արյունն ուտի, Արտաշիրը հալեցրած արույրը նրա երախը լցրեց: 14. Քիրմը, երբ արույրը մարմնին հասավ, երկու կես եղավ և այնպես ոռնաց, որ ամրոցի մարդիկ բոլորն այնտեղ եկան, և խառնաշփոթ ընկավ ամրոցի մեջ: 15. Արտաշիրը ձեռքը վերցրեց վահանն ու թուրը և ամրոցում մեծ կոտորած արեց, հրամայեց, որ կրակ անեն, որպեսզի իրենց հեծյալներին երևա, և ծառաներն այդպես արեցին:

16. Չիավորները, որ լեռներում էին, հենց ծուխն ամրոցից տեսան, արշավելով ամրոցի մոտ եկան՝ Արտաշիրին օգնության: Հար-

ձակվեցին ամրոցի մուտքի վրա և գոչեցին. «Կեցցե՛, կեցցե՛ Արտաշիր արքայից արքան, Փափագանը»: Սուրը գործի դրվեց: 17. Ամրոցի մարդկանց որքան էլ սպանեց³², մի մասը կռվի խառնաշփոթի ու կոտորածի ժամանակ ամրոցից փախավ, իսկ մի մասն էլ հանձնվեց և ծառայության ու հնազանդության եկավ:

18. Արտաշիրն այն ամրոցը քանդեց և ավերակ դարձրեց, հրամայեց այնտեղ գավառ (գյու՞ղ) հիմնել, որ Քուլալան են կոչում, և յոթ Վահրամական կրակ այնտեղ հիմնեց: Ինչք-ունեցվածք, ոսկի-արծաթ այն ամրոցից հազար ուղտի վրա բարձեց և Գոր³³ ուղարկեց: Բուրզին ու Բուրզադուրին մեծ և անձնագոհություն կատարողներին արժանի (ēwēn [ī] gyān-abetespār-kardārān) բաժին ու ընծաներ տվեց: Եվ այնտեղի գավառը նրանց հրամանատարության ու իշխանության տակ դրեց:

19. Այն բանից հետո, երբ Արտաշիրը Քիրմին սպանել էր, կրկին արքունիք եկավ, [բերեց] գորքն ու գանձը և Քիրմանի կողմ՝ Բարգանի դեմ պատերազմի եկավ^{xxxviii}:

³² Այս հատվածը Չունակովան (53) կարդում է ud mardōm ud xwadāy ī diz har čē ōzad..., որ պետք է թարգմանվի այսպես՝ «և ամրոցի տիրակալի ու մարդկանց ինչքան էլ սպանեց...», թեև իր թարգմանության մեջ թարգմանիչը թարգմանում է թերի՝ «и люди крепости были убиты...»:

³³ Այստեղի բառի ընթերցանությունը մի փոքր խառնված է: Գրված է 𐭠𐭣𐭥, որ կարելի է կարդալ darbār՝ «արքունիք», որ հավանաբար ավելի ուշ ժամանակների արտասանությունն է: Հնարավոր է, որ տեքստի հետագա արտագրողներն իրենք են այդտեղ գտնվող իրենց անծանոթ բառը հարմարեցրել ավելի ծանոթ darbār բառին: Սակայն Հեննինգը ('Ein persischer Titel im Altaramäischen', *Acta Iranica vol. 15*, 1977, pp. 659-66, օգտվում են Չունակովայի (էջեր 99-100) համար 115 ծանոթագրությունից) դրա մեջ կարողացել է ճանաչել «Գոր» (Gōr, gwbl > gw) քաղաքի անունը (այլ անվամբ՝ Արդաշիր-խվարահ), որ նշանակում է «փոս, ցածրավայր» (ինչպես Հանշենի բարբառում «փոս» նշանակում է «հարթ տեղ, դաշտ»):

*ԺԴ. [Արտաշիրի՝ Արտավանի դստեր նկարումամբ վերաբերմունքի
և վերջինիս՝ Արտաշիրին թույն փալու մասին]*

1. Արտավանի որդիներից երկուսին [Արտաշիրն] իր մոտ էր պահում, երկուսն էլ փախել էին Քաբուլչահի^{xxxix} մոտ: 2. Եվ նրանք իրենց քրոջը, որ Արտաշիրի կինն էր, նամակ գրեցին, պատգամ ուղարկեցին՝ ասելով. «Ճիշտ է այն, ինչ ձեր՝ կանանց մասին ասում են, որ դու, քո մահվանից [վախենալով], քո ազգականներին, որոնց այդ հանցագործը՝ աստվածների թշնամին, անարգաբար սպանեց, մոռացար: 3. Եվ սերն ու գորովն այն դժբախտ եղբայրների, որ վնասի, դժվարության, վախի, անհարազատության, օտարության մեջ են և Քաբուլի երկրում գերի, և այն մյուս երկու դժբախտ եղբայրներիդ, որոնց այն ուխտադրուժը (Արտաշիրը) գերության, բանտարկության ու տանջանքների մեջ է պահում, այնպես, որ մահն են որպես ընծա խնդրում, դու ամբողջությամբ մոռացել ես: 4. Եվ այն ուխտադրուժի հետ միտքդ մեկ ես արել և ընդհանրապես նրանց ու մեզ համար չես տխրում ու տանջվում: 5. Թող մահանա այն մարդը, ով այսօրվանից որևէ կնոջ այս աշխարհում կվստահի ու չի կասկածի:

6. Այժմ, եթե դու գոնե մի քիչ սիրում ես մեզ, այս հարցի լուծումը ցանկացիր և մեր հոր, ազգականների և տոհմակիցների վրեժը մի՛ մոռացիր: Եվ վերցրու՝ այս թույնը, որ մենք մեր վստահելի անձի հետ քեզ մոտ ուղարկեցինք: Այս մարդուց վերցրու (7.) և եթե կարողացար, ուտելուց առաջ այն հանցագործին ու ուխտադրուժին տուր, որպեսզի նա մահանա, և այն երկու բանտարկված եղբայրներին ազատես, և մենք էլ կրկին մեր երկիրն ու հայրենիքը կզանք, և քո հոգին դրախտային (ud tō ruwān wahištēg) [կլինի] և հավերժական անուն քեզ կտրվի, և աշխարհի մնացած կանայք քո բարի գործից ավելի անվանի ու սիրելի կդառնան»:

8. Արտավանի դուստրը, երբ այն նամակն այդպես տեսավ, իրեն ուղարկած այն թույնով որոշեց, որ հենց այդպես էլ պետք է անել և իր չորս դժբախտ եղբայրներին գերությունից ազատել:

9. Մի օր Արտաշիրը քաղցած և ծարավ որսից տուն եկավ: 10. Եվ վազ արտասանեց և աղջիկը, այն թույնը խառնելով բոված այլորի³⁴ ու կաթի հետ, տվեց Արտաշիրի ձեռքը, թե՛ «Նախքան այլ ուտելիքները հաճեցիր [սա] խմել, որովհետև օգտակար է հոգնածուքյան ու տանջվածության ժամանակ»: 11. Արտաշիրը վերցրեց և խմել ուզեց:

12. Այսպես են ասում, որ հրաշագործ, հաղթանակող Ֆարրոբայ կրակը կարմիր աքաղաղի կերպարանքով ներս թռավ, թևը փխսփին խփեց, և փխսթով լի այն գավաթը ամբողջությամբ Արտաշիրի ձեռքից գետնին ընկավ: 13. Արտաշիրն ու կինը՝ երկուսն էլ այդ դեպքի վրա շատ ապշեցին, իսկ տանը եղած կատուն ու շունը խմեցին այդ խմիչքը և սատկեցին: 14. Արտաշիրը հասկացավ, թե՛ «Սա թույն էր և ինձ սպանելու համար էր պատրաստվել»:

15. Անմիջապես մոգապետաց մոգապետին^{x1} իր առջև կանչեց և հարցրեց. «Էրբա՞դ^{xii}, եթե մեկը ջանա արքաներին սպանել, ի՞նչ ես կարծում [դրա մասին], և ի՞նչ պետք է անել»: 16. Մոգապետաց մոգապետն ասաց. «Անմահ եղե՞ք, կարծում եմ, որ նա, ով ջանում է սպանել արքային, արժանի է մահվան (մահարժան է), և նրան պետք է սպանել»: 17. Արտաշիրը հրամայեց, թե՛ «Այս անառակ դիվահար վիռլկին գերեզման³⁵ տար և հրամայի՛ր սպանել»:

³⁴ Այսինքն՝ pist (MacKenzie 1971: p. 69): Ըստ ամենայնի խոսքը մի ուտելիքի մասին է, որ պատրաստում էին բոված այլորով ու կաթով:

³⁵ Այս բառի թարգմանությունը ևս անորոշ է: Տեքստում գրված է 𐎱𐎠𐎼𐎡𐎴 , որ եթե կարդանք asp-axwar, կարող ենք թարգմանել «ձիերի այտո», ինչպես արել է Թիրեաքեանը (էջ 25): Նյուդեկեն (Nöldeke, s. 60) վերջնական եզրակացության չի եկել և նախադասության իմաստից ելնելով՝ թարգմանել է «դահիճ»: Ed. West-ը, մեկ այլ տեղ այն գտնելով (Գեներալրում, E. W. West, Sacred Book of the East, v. XLVII, p. 64), կարդացել է aspān-var (այդտեղ խոսվում է Ջրաղաշտի՝ Վիշտասայի «ասպանվար»-ում վերջինիս իր հավատքին հրավիրելու մասին), որ թարգմանել է «ասպարեզ»՝ որպես ձիերի վագելու վայր (horse-course): Նույն կերպ է կարդացել Նյուբերգը (vol. II, p. 32), ով, սակայն, թեթևակիորեն փոխելով իմաստը, բառը թարգմանել է «ձիարան»՝ var-ը հասկանալով որպես «ծածկված, փակ տեղ»: Ավելի նոր և այժմ առավել ընդունված մեկնաբանությունը պատկանում է Մաքքենգիին, ով իր բառարանում (A Pahlavi Dict., p. 12) այն կարդացել է aspānūr և թարգմանել «դամբարան» (այսպես նաև՝ Чупакова, 56, 78): Չնայած այս ընթերցմանը և իմաստային համընկնմանը՝

18. Մոզպետաց մոզպետը կնոջ ձեռքը բռնեց և դուրս եկավ: 19. Կինն ասաց. «Այսօր արդեն յոթերորդ ամիսն է, ինչ ես հղի եմ, տեղեկացրու այդ մասին Արտաշիլին: 20. Որովհետև եթե ես արժանի եմ մահվան, ապա իմ արգանդում գտնվող այս զավակը արժանի չէ մահվան»:

21. Մոզպետաց մոզպետը, երբ լսեց այս խոսքերը, ետ դարձավ և կրկին Արտաշիլի առջև գալով՝ ասաց. «Անմահ եղե՛ք, այս կինը հղի է, և մինչ այն ժամանակը, երբ կծննդաբերի, չի կարելի սպանել: 22. Քանզի եթե նա արժանի է մահվան, այն զավակին, որ ձեր՝ արքայի տոհմից է և արգանդում ունի, չպետք է մահարժան համարել ու սպանել»: 23. Արտաշիլն իր ունեցած բարկության պատճառով ասաց. «Ոչ մի պահ մի՛ հապաղիր և սպանիր»:

24. Մոզպետաց մոզպետը գիտեր, որ Արտաշիլը շատ է բարկացած և դրանից հետո կզոչա: 25. Եվ այն կնոջը չսպանեց, այլ իր տուն տարավ և քաքցրեց: 26. Եվ իր կնոջն ասաց, թե՛ «Այս կնոջը սիրով պահիր և ոչ մեկի բան մի՛ ասա»:

այստեղ, ոչ բոլոր տեղերում է խնդրո առարկա այս բառը (ինչպես, օրինակ, «Դենքարդ»-ի այն հատվածում, որ թարգմանել է Վեսթը (վերոնշյալ աշխատություն)) ամբողջովին համապատասխանում իր այս իմաստին, ինչպես հենց ինքն էլ խոստովանում է (F. de Blois, “Middle Persian funerary inscriptions in South-Western Iran”, in *Medioiranica*, Orientalia Lovaniensia Analecta 48, Louvain, 1993, pp. 29-43): Այն հիշատակվում է նաև Handarz ī Husraw ī Kawādān (Jamasp-Asana, էջ 55) պահլավական փոքրիկ մատյանում, որտեղ արքան խնդրում է մահանալուց հետո իր գահը տանեն դնեն *այդրեդ* և ժողովրդին հայտարարություն անեն *այդրեդից*: Այս հատվածում հանդիպող բառի իմաստը երկակի է, ինչպես նշում է դե Բլուան, ում կարծիքով՝ ժողովրդին հայտարարություն անելու համար դամբարանը հարմար տեղ չէր: Ինքը՝ դե Բլուան, ետ է դառնում Վեսթի տարբերակին և ընդունում *aspān-war* տարբերակը՝ որպես «ձիերի բաց տարածություն» (West E. W., ն, տ., 31): Վերջապես, ըստ իս, հավանական է, որ գոյություն ունեն մնանագիր երկու բառեր, որոնցից մեկը նշանակում է «դամբարան», և այս իմաստն ենք մենք գտնում այստեղ ու Handarz ī Husraw-ում, և երկրորդ՝ «ձիարշավարան» իմաստը, որ հանդիպում է «Դենքարդ»-ում (գիրք է, հատված ԿԴ):

*ԺԵ. [Արտավանի աղջկանից Շապուհի ծնվելու
և Արտաշիրի՝ յոթ տարի հետոտ փեղեկանալու և նրան
ճանաչելու մասին]*

1. Երբ ծննդաբերելու ժամանակը եկավ, մի արժանավոր որդի ծնվեց: 2. Եվ նրա անունը Շապուհ դրեց և խնամեց, մինչև նա դարձավ յոթ տարեկան:

3. Արտաշիրը մի օր որսի գնաց և ձին քշեց մի էգ ցիռի ետևից, երբ մի արու ցիռ իրեն գցեց Արտաշիրի ոտքերի տակ, ազատեց էգ ցիռին և փոխարենն ինքը մահ ընդունեց: 4. Արտաշիրն այդ ցիռին թողեց ու երեխայի կողմը քշեց ձին: 5. Էգ ցիռը երբ տեսավ, որ հեծյալը ձին երեխայի կողմը քշեց, եկավ և երեխային ազատելով՝ փոխարենն ինքը մահ ընդունեց:

6. Արտաշիրը, երբ դա այդպես տեսավ, կանգնեց, և նրա սիրտը ցավեց, ու ձիուն ետ դարձնելով՝ մտածեց. «Վա՛յ մարդկանց, քանզի իրենց անբանականությամբ ու անխոսությամբ հանդերձ՝ այս համր չորքոտանիների սերը միմյանց նկատմամբ այնքան կատարյալ է, որ իրենց կյանքը կնոջ ու զավակի համար տալիս են»: 7. Եվ այն զավակին, որ կինն իր արգանդում ուներ, հիշեց և ձիու մեջքին, հենց այդպես նստած՝ սկսեց ողբալ:

8. Եվ գորավարները, մեծամեծերը, ազատներն ու իշխանները, երբ դա տեսան, զարմացան և բոլորով եկան մոգպետաց մոգպետի մոտ. «Ի՞նչ կարող է սա լինել, որ Արտաշիրին հանկարծակիորեն այսպիսի ողբ, վիշտ ու տխրություն պատեց, որ ողբում է»: 9. Մոգպետաց մոգպետը, Էրան-սփահբադը (արյաց սպարապետը), թիկնապահների պետը, գլխավոր դպիրը, իշխանները, դարանդարձապետը^{xliii} գնացին Արտաշիրի մոտ, խոնարհվեցին և ասացին. «Անմահ եղե՛ք: Հաճեցե՛ք այդ կերպ ինքներդ ձեզ չվշտացնել և ողբով ու լացով սիրտ չմաշել: 10. Եթե մի բան է պատահել, որ մարդկային ուժերով հնարավոր է անել, հաճեցե՛ք տեղեկացնել, որպեսզի մեր մարմինն ու կյանքը, ինչքն ու ունեցվածքը, կինն ու երեխան առաջ դնենք, և եթե այնպիսի փորձանք է, որ հնարավոր չէ դրան ճար գտնել, ինքներդ

ձեզ և մեզ՝ երկրի մարդկանց, վշտացած ու սգավոր հաճեցեք չդարձնել»:

11. Արտաշիրը պատասխանեց, թե՝ «Այժմ չէ ինձ պատահել դժբախտությունը, այլ այսօր, երբ դաշտում այն անբանական, անխոս ու համր չորքոտանիներին այս կերպ տեսա, հիշեցի այն կնոջս և զավակին, որ յուր արգանդում ունեւ անմեղ, ու նրանց սպանելը, և մտածում եմ ու ողբում, որովհետև հոգու համար ծանր մեղք դա պետք է լինի»:

12. Մոգպետաց մոգպետը, երբ տեսավ, որ Արտաշիրն այն արարքի համար գղջում է, երեսի վրա ընկավ (13.) և ասաց. «Անմահ եղե՛ք: Հրամայեցեք, որպեսզի մեղսագործների, մահարժանների ու արքաների հրամաններին չենթարկվողների պատիժը տան ինձ»: 14. Արտաշիրն ասաց. «Ինչու՞ ես այդպես խոսում և ի՞նչ հանցանք ես դու կատարել»: 15. Մոգպետաց մոգպետն ասաց. «Այն կնոջն ու զավակին, որ դուք հրամայեցիք սպանել, մենք չսպանեցինք, և մի որդի ծնվեց, որ բոլոր արքայազուններից և իշխանազուններից լավն է ու արժանավոր»: 16. Արտաշիրն ասաց. «Ինչե՞ր ես խոսում»: 17. Մոգպետաց մոգպետն ասաց. «Անմահ եղե՛ք: Այնպես է, ինչպես ասացի»: 18. Եվ Արտաշիրը հրամայեց, որ մոգպետաց մոգպետի բերանը լցնեն հակինթով, գոհարով, արքայական մարգարիտով ու դիմարով:

19. Նույն ժամանակ մեկը եկավ, ով Շապուհին^{xliii} այնտեղ առաջնորդեց: 20. Արտաշիրը, երբ Շապուհին տեսավ, երեսնիվայր ընկավ և տեր Օհրմազդին, ամահրասպանդներին, արքայական Փառքին և հաղթական Ադուրանշահին (բռց.՝ «Կրակների արքա», Կրակի յազատը) շատ երախտագիտություն հայտնեց: Ասաց. «Այն, ինչ ինձ հետ պատահեց, ուրիշ ոչ մի արքայի կամ իշխանի հետ չի պատահել, քանզի Մոշյանսի հազարամյակից, Վերածնունդից և Հարությունից առաջ էր, որ այսպիսի լավ զավակս ետ դարձավ մեռյալներից^{xliv}»:

21. Եվ նույն տեղում Վալաշ-Շապուհի³⁶ կոչվող քաղաքը հրամայեց հիմնել և տաս Վահրամական կրակ դրեց, շատ ինչք-ունեցվածք ուղարկեց և հրամայեց բարեգործություններ անել:

22. Գրանից հետո Արտաշիրը գնաց տարբեր այլ գավառներ և շատ պատերազմ ու կոտորած արեց Էրանշահրի իշխանապետների դեմ, և միշտ, երբ մի գավառ բարեկարգում էր, մի այլ գավառ էր ապստամբում:

ԺԶ. [Արտաշիրի՝ հնդկական գուշակի մոտ իր թագավորելու գործի ավարտն իմանալու համար պարզամտ ռոդարկելու և դրա պարասխանի մասին]

1. Այն բանի վրա էր շատ մտահոգ ու խորհող, որ «Չլինի՞ թե Բարձրյալի կողմից ես չեմ ստեղծվել, որ կարողանամ Էրանշահրը մեկ իշխանության տակ միավորեմ»: 2. Եվ մտածեց, որ պետք է գիտուններից, պատգամախոսներից ու գուշակներից հարցնել: 3. «Եթե այնպես է, որ նախասահմանված չէ մեզ վերականգնելու Էրանշահրի արքայական իշխանությունը, ապա գոհ ու բավարարված պետք է լինել, այս արյունահեղությունն ու պատերազմը պետք է թողնել, և ինքս էլ այս տանջանքից ու հոգնությունից կհանգստանամ»: 4. Եվ իր վստահելիներից մի մարդու հնդկական պատգամախոսի մոտ ուղարկեց, որպեսզի Էրանշահրում միապետության վերականգնման մասին հարցնի:

5. Արտաշիրի մարդը, երբ հնդկական պատգամախոսի մոտ հասավ, պատգամախոսը, մարդուն տեսնելով, նախքան նրա խոսք ասելը, ասաց նրան. «Պարսիկների թագավորը քեզ այն գործով ուղարկեց, թե՛ «Արդյո՞ք ինձ կհասնի Էրանշահրի միապետությունը»: Այժմ ետ դարձիր և իմ այս պատասխանը նրան հայտնիր, որ այդ իշխանությունը կհասնի երկու տոհմի, մեկը՝ քեզնից, մյուսը՝ Անուշակ-գադան Սիիրակից, այլապես հաստատել չի լինի:

³⁶ Անվան առաջին մասի այսպիսի ընթերցումը հաստատված չէ:

6. Մարդը կրկին Արտաշիրի մոտ դարձավ և հնդկական պատգամախոսի պատվիրածը, որ նրան էր ասվել, պատմեց Արտաշիրին: 7. Արտաշիրը, երբ այդ խոսքերը լսեց, ասաց. «Չի լինի այն օրը, որ որևէ մեկը չարահոգի Միհրակի տոհմից իշխի Էրանշահի վրա, քանզի չարատոհմ Միհրակն իմ թշնամին էր, և ինչ զավակ որ ունի, բոլորն իմ ու իմ զավակների թշնամիներն են, և եթե նրանք հզորանան և իրենց հոր վրեժը լուծել կամենան, կվնասեն իմ զավակներին»:

8. Արտաշիրը զայրույթից ու վրեժից գնաց Միհրակի տուն և հրամայեց Միհրակի բոլոր զավակներին կոտորել-ոչնչացնել: 9. Միհրակը մի երեքամյա դուստր ուներ, որին դայակները գաղտնաբար դուրս տարան և մի հողագործ մարդու հանձնեցին, որ խնամի ու չարից հեռու պահի: Հողագործն այդպես էլ արեց և աղջկան լավ խնամեց: 10. Եվ երբ որոշ տարիներ անցան, աղջիկը հասավ կանանց տարիքին, և մարմինը գեղեցիկ ու տեսնելու էր, ճարպկությամբ ու մաս ուժով ու եռանդով այնպիսին էր, որ բոլոր այլ կանանցից ավելի լավն էր և գերազանց:

ԺԷ. [Շապուհի՝ որսի գնալու, Միհրակ Անուշակադասնի դստերը փեսանելու և նրա հետ ամուսնանալու մասին]

1. Այնպես, ինչպես նախասահմանված էր, մի օր Շապուհ Արտաշիրյանը եկավ այն երկիրը, ելավ որսի և որսից հետո 9 հեծյալներով այն գյուղը եկավ, որտեղ ապրում էր [Միհրակի] աղջիկը:

2. Ճակատագրի բերմամբ աղջիկը ջրհորի մոտ էր, ջուր էր հանում և չորքոտանիներին տալիս: 3. Հողագործը գործերով էր գնացել: 4. Աղջիկը, երբ Շապուհին տեսավ, վեր կացավ, խոնարհվեց և ասաց. «Միրով, բարությամբ ու ողջությամբ եկաք, համեցեք մտնել, քանզի տեղը հաճելի է, ծառերի ստվերը՝ զով, և օրվա այս ժամը՝ տոթ, որպեսզի ես ջուր հավաքեմ, և դուք ու ձիերը ջուր խմեք»: 5. Շապուհը, որ սովածության և հոգնածության պատճառով զայրացած էր, ասաց

աղջկան. «Կեղտո՛տ անառակ, մեզ քո ջուրը վայել չէ՛ խմել»։ 6. Աղջիկը վշտացավ և մի անկյունում նստեց։

7. Շապուին ասաց ձիավորներին. «Դույլը ջրի մեջ գցեք ու ջուր հանեք, մինչ ես *վազ* կասեմ, և ձիերին ջուր տվեք»։ 8. Հեծյալներն այդպես էլ արեցին և դույլը ջուրը նետեցին, բայց դույլը, որ լիքն էր ջրով, ետ քաշել չկարողացան։ 9. Աղջիկը հեռու տեղից դիտում էր [նրանց]։ 10. Շապուիը, երբ տեսավ, որ հեծյալները դույլը ջրհորից չեն կարողանում հանել, բարկացավ և ջրհորի մոտ գալով՝ անպատվեց հեծյալներին ու ասաց. «Ամոթ ու խայտառակություն ձեզ, որ մի կնոջից էլ անուժ ու անվարժ եք»։

11. Հետո վերցրեց պարանը հեծյալների ձեռքից, ուժ գործադրեց պարանի վրա ու դույլը կրկին հանեց ջրհորից։ 12. Աղջիկը զարմացավ Շապուիի ուժի ու վարժության վրա։ 13. Եվ երբ տեսավ աղջիկը նրան, որ իր ունեցած գործությամբ, վարժությամբ ու ուժով արժանավոր էր և իր դույլը ջրհորից վեր հանեց, վազելով եկավ Շապուիի մոտ, երեսնիվայր ընկավ, գովեց ու ասաց. «Ամմա՛հ եղեք, Շապո՛ւհ Արտաշիրյան, առաջինը մարդկանց մեջ»։ 14. Շապուիը ծիծաղեց և ասաց աղջկան. «Դու ի՞նչ գիտես, որ ես Շապուին եմ»։ 15. Աղջիկն ասաց. «Ես շատ մարդկանցից եմ լսել, որ Էրանշահիում ոչ մի հեծյալ (այսինքն՝ «ասպետ») չկա, որ գործությամբ, ուժով, գեղեցկությամբ ու ճարպկությամբ քեզ՝ Շապուի Արտաշիրյանի նման լինի»։ 16. Շապուին ասաց աղջկան. «Ճիշտն ասա, թե դու ու՞մ զարմից ես»։ 17. Աղջիկն ասաց. «Ես այն հողագործի աղջիկն եմ, որ այս գյուղում է մնում»։ 18. Շապուին ասաց. «Ճիշտ չես խոսում, քանի որ հողագործի աղջիկը չի կարող ունենալ այն հմտությունը, ուժն ու գեղեցկությունը, որ դու ունես։ Այժմ ճշմարտությունն ասա, այլապես համաձայն չեմ»։ 19. Աղջիկն ասաց. «Եթե երաշխավորես իմ կյանքի ու մարմնի պաշտպանությունը, ճշմարտությունը կասեմ»։ 20. Շապուին ասաց. «Պաշտպանված ես, մի՛ վախեցիր»։ 21. Աղջիկն ասաց. «Ես Միհրակ Անուշակզադանի դուստրն եմ և Արտաշիրի վախից եմ բերվել այստեղ, իսկ Միհրակի յոթ զավակներից ոչ ոք էլ ողջ չի մնացել»։

22. Շապուիը կանչեց հողագործին և աղջկան կնոթյան առավ ու հենց նույն գիշեր նրա հետ էր:

*ԺԸ. [Միհրակի աղջկանից Որմիգո Շապուիյանի ծննդյան
և Արտաշիրի՝ դրանից տեղեկանալու մասին]*

1. Այնպես, ինչպես նախասահմանված էր, հենց նույն գիշեր [աղջիկը] հղիացավ Որմիգո Շապուիյանով: 2. Շապուիը սիրում էր աղջկան, և Որմիգո Շապուիյանը նրանից ծնվեց: 3. Շապուիը Որմիգոյին քաբքնում էր հորից, մինչև սա յոթ տարեկան դարձավ:

4. Մի օր Որմիգոն Արտաշիրի իշխանների գավակների հետ ասպարեզ ելավ և ճոկան սկսեց խաղալ: 5. Արտաշիրը մոգպետաց մոգպետի, գլխավոր գորահրամանատարի և շատ ազնվականների ու մեծամեծերի հետ այնտեղ նստեց և նրանց էր դիտում: 6. Որմիգոը բոլոր պատանիներին հաղթում էր ձիավարության մեջ:

7. Նախասահմանվածության պատճառով նրանցից մեկը մականը գնդակին խփեց, և նրա գնդակն ընկավ Արտաշիրի կողքը: 8. Արտաշիրը ոչ մի ուշադրություն ցույց չտվեց, և պատանիները լուռ մնացին և Արտաշիրից ունեցած վախի պատճառով ոչ ոք չձիավարեց՝ առաջ գնալու: 9. [Միայն] Որմիգոը վստահաբար գնաց, գնդակը վերցրեց և վստահորեն խփելով՝ գոռաց: 10. Արտաշիրը նրանց (իշխաններին) հարցրեց, թե՝ «Ով է այս տղան»: 11. Նրանք ասացին. «Անմահ եղեք, մենք այս տղային չենք ճանաչում»:

12. Արտաշիրը մարդ ուղարկեց, տղային իր մոտ կանչեց և ասաց. «Դու ու՞մ որդին ես»: 13. Որմիգոն ասաց. «Ես Շապուիի որդին եմ»: 14. Եվ [Արտաշիրը] նույն պահին մարդ ուղարկեց ու Շապուիին կանչելով՝ ասաց. «Ու՞մ որդին է սա»: 15. Շապուիը պաշտպանություն խնդրեց: 16. Արտաշիրը ծիծաղեց և Շապուիին պաշտպանություն տվեց: 17. Եվ Շապուին ասաց. «Անմահ եղեք, սա իմ որդին է, և ես այս մի քանի տարիները Ձեզմից գաղտնի էի պահում»: 18. Արտաշիրն ասաց. «Ի՞նչն է այդ անհնազանդության պատճառը,

որ յոթ տարի այսպիսի լավ տղային ինձնից գաղտնի ես պահում»:
19. Եվ Որմիզդին սիրեց ու շատ ընծաներ ու պատմուճաններ տվեց նրան և աստվածներին շնորհակալություն հայտնեց: 20. Եվ ասաց. «Սա նման է այն բանին, ինչ հնդիկ պատգամախոսն ասաց»:

21. Եվ այն բանից հետո, երբ Որմիզդը^{xiv} իշխանության հասավ, կարողացավ ողջ Էրանշահիրը միաիշխանության բերել և տարբեր գավառների իշխանապետներին հպատակության ենթարկել: 22. Հռոմից ու Հնդկաստանից հարկ ու տուրք ուզեց և Էրանշահիրը ավելի հարուստ, գեղեցիկ ու անվանի դարձրեց, և հռոմեական կայսրը, հնդկաց արքան ու քաբքաբուլը³⁷, թուրքական խաբանը^{xlvi} և տարբեր գավառների իշխանապետներ քաղցր ողջույնով եկան նրա արքունիք:

[Վերջաբան]

1. Ավարտվեց ողջությամբ, ուրախությամբ ու խրախուճանքով:
2. Թող անմահ լինեն Արտաշիր Փափագան արքայից արքայի, Շապուհ Արտաշիրյան արքայից արքայի և Որմիզդ Շապուհյան արքայից արքայի հոգիները: 3. Այսպես լինի և առավել այսպես լինի:
4. Թող անմահ լինի Ռուսթեմ Միհրաբանը, ով այս պատճենը գրեց: 5. Թող այսպես լինի:
6. [Գրվեց] Հազկերտ արքայի 1054-րդ տարում^{xlvii}: Թող լավ ավարտ լինի, թող այդպես լինի:

[Հավելված]

1. Այնուհետև [Արտաշիրը] նստեց Արտավանի գահին, օրենք հաստատեց և մեծերին ու փոքրերին (պաշտոնյաներին), զորքին ու մոզպետաց մոզպետին իր մոտ կանչեց և հրամայեց.

³⁷ Բառի իմաստն անորոշ է և պատճառ տարբեր մեկնաբանությունների: Հնարավոր է՝ որ արքայական տիտղոս է: Բառի երկրորդ մասը հնարարվոր է, որ կապ ունի «Քաբուլ» տեղանվան հետ:

«Ես այս մեծ իշխանության մեջ, որ յազատներն ինձ են տվել, բարություն կանեն, արդարություն կգործադրեն և սուրբ ու բարի Հավատքը կվերականգնեն: Աշխարհի մարդկանց որդիներիս նման կխնամեն և երախտագետ կլինեն վերին արարչին, ով արարեց էակներին և յոթ երկրների իշխանությունը^{xlviii} ինձ հանձնեց, և որքան որ պատշաճում է, արժանավոր դարձրեց: 2. Եվ դուք, եթե գոհ եք, բարությանը ու վստահությանը վերաբերվեք ինձ, և ես ձեր բարին կցանկանամ ու կջանամ, և արդարությանը կջանամ, որպես հարկ ու սուրբ տասից մեկը կվերցնեն և այդ ունեցվածքից զորք կկազմակերպեն, որպեսզի աշխարհականներին պաշտպանի: Եվ ամեն տեսակ յուդերի 100 դրամից 6 դրամ [վերցնեն] ու այդպիսով արդարություն անեն ու առևտուր՝ վաճառականություն չանեն և յազատներից շնորհակալ լինեն, որ այս իշխանությունն ինձ տվեցին, և բարեգործություն անեն և չար մտքերից, խոսքերից ու գործերից խստորեն խուսափեն, որպեսզի ցնծությանը ուրախ, առաքինի, հաղթական և իշխող լինեն:

3. Ամմահ լինի արքայից արքա Արտաշիր Փափագանը, ով այս անդարձը^{xlix} ասաց: Ավարտվեց:

Հիմնական գրականության ցանկ

1. Աբրահամյան Ռ., Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965:
2. Ալիմնեան Ն., Մատենագրական հետազոտություններ. Քննություն և Բնագրեր, հատոր Ե, Վիեննա, 1953:
3. Խորենացի Մովսես, Հայոց պատմություն, քարգմ.՝ Ստ. Մալխասյանց, Երևան, 1940:
4. Թիրեաքեան Յ., Արտաշիր Բարական Կարնամակը, Փարիզ, 1906:
5. Чунакова О. М., Книга деяний Арташира сына Папака, Москва, 1987.
6. Farrahvashi, B., Kāmāme-ye Ardašir-e Babākān, Tehrān, 1390 (1st ed. 1354).
7. Ferdowsi, Hakim Abu al-Qāsem, Šāhnāmeḥ, Tehrān, Peymān, 1388.
8. Grenet, Fr., La Geste d'Ardashir fils de Pâbag, éditions "A Die", 2003.
9. Jamasp-Asana, J. M., Corpus of Pahlavi Texts, Bombay, 1913.
10. MacKenzie, D. N., A Concise Pahlavi Dictionary, London, Oxford University Press, 1971.

11. Modi, J. J., *The Religious Ceremonies and Customs of the Parsees*, Bombay, 1922.
12. Nöldeke, Th., *Geschichte des Artachšîr i Pâpakân*, aus dem Pehlewi übersetzt, mit Erläuterungen und einer Einleitung versehen, Göttingen, 1879.
13. Noshervân. K. A. D., *Kârnâmak-î Artakhshîr-î Pâpakân*, *The Memoirs of King Ardashîr*, Bombay, 1896.
14. Nyberg, H. S., *Manual of Pahlavi*, vol. II, Wiesbaden, 1974.
15. Pâkzâd, F., *Bundahišn, Zoroastrische Kosmogonie und Kosmologie*, Band I, Kritische Edition, Tehran, 2005.
16. Sanjana, D. D. P., *The Kârnâmê î Artakhshîr î Pâpakân*, Bombay, 1896
17. Tabari, Mohammad b. Jarir, *Târix al-rosul va'l-moluk*, Tehran, 1357.
18. TITUS Project, *Kârnâmag î Ardaxšîr î Pâbagân*, data entry by D. N. MacKenzie, Göttingen, 1993, <http://titus.uni-frankfurt.de/texte/etcs/iran/miran/mpers/kap/kap.htm>.

Ծանոթագրություններ

ⁱ Ալեքսանդր Մակեդոնացին, ով պահլավական գրական աղբյուրներում, ինչպես նաև հետագա իսլամական շրջանի աղբյուրներում հայտնի է որպես «հռոմեացի» (հրծմոց): Դրա պատճառն այն է, որ ինչպես պարթևներին, այնպես էլ սասանյաններին ավելի շատ ծանոթ էր Հռոմեական կայսրությունը, քան Մակեդոնիան կամ Հունաստանը: Սա, ըստ իս, մի հավելյալ փաստարկ է նաև այն մասին, որ Ալեքսանդրի հետ կապված գրադաշտական պատկերացումները ստեղծվել են ավելի ուշ ժամանակաշրջանում, քան հենց Ալեքսանդրի ժամանակ:

ⁱⁱ Մսիսնքն՝ Արյաց աշխարհը: «Շահր» բառը հենց հայերենի «աշխարհ» բառի «նախնին» է, որի քիչ ավելի հին ձևից էլ այն փոխառվել է: Նոր պարսկերենում քեև այն սոսկ «քաղաք» է նշանակում, սակայն հնում այն ունեցել է «երկիր» նշանակությունը, իսկ քաղաքները կոչվել են «շահրեստան», որից էլ ծագում է հայերենի «շահաստան»՝ «քաղաք» բառը: Իսկ «արիներ», ինչպես գիտենք, իրենց կոչում էին հին իրանական ու հնդարիական ցեղերը (ավեստ՝ airiia- և հին պարս. airya-, սանս. ārya-), որոնցից առաջինների երկրի անունն էլ (Իրան) հենց ամենայն հավանականությամբ ծագում է այս անվանման հոգնակիի սեռական հոլովից՝ *Aryānām (Schmitt R., Die iranischen Sprachen in Geschichte und Gegenwart: s. 2): Այս անվան օգտագործումն իրանցիների համար մենք համոզվում ենք նաև հայ պատմիչների մոտ՝ որպես «արիք, արեսաց» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, 358):

ⁱⁱⁱ Այս Արտավանը պարթևական Արշակունյաց արքայտոհմի վերջին ներկայացուցիչ Արտավան Ե-ն է, ով պարտվել է Արտաշիր Ա Սասանյանին և կորցրել իշխանությունը: Այստեղ հանդես է գալիս որպես զորավար, քանի որ Սասանյանների ժամանակ՝ հատկապես ուշ շրջանում, Արշակունիները չէին ընկալվում որպես ինքնիշխան միապետներ, որ 400 տարի իշխել են Իրանական բարձրավանդակի ու հարակից տարածքների վրա: Դա բացահայտ կերպով արտահայտվում է Ֆիրդուսու «Շահնամե»-ում, որտեղ Արշակունիների ժամանակաշրջանը կոչվում է «ցեղերի արքաների» (ملوك طرايف) ժամանակաշրջան, իսկ բուն Արշակունիներից հայտնի է միայն նրանց անունը (էջ 884).

کزیشان جز از نام تشديه ام نه در نامه خسروان ديده ام

(Քանզի նրանց անունից բացի՝ ոչինչ չեմ լսել, ոչ էլ արքաների գրքում կարդացել):

^{iv} Իսկական Արտավանը Սթախրում (քաղաք Ֆարսում, Պերսեպոլիսի ավերակներից ոչ հեռու) չի սաքրել, այլ Տիգրոնում՝ Միջագետքում: Այստեղ թերևս Արտավանը շփոթվում է Սթախրում նստող մեկ այլ՝ ավելի փոքր նշանակության արքայատոհմի հետ, որին Թարսրին կոչում է Բագրանգյան (Tabari: 580) և որի դեմ Փափագն ու Արտաշիրը պայքարում էին մինչև Արտավանի դեմ ելնելը:

^v Իրանական ավանդության մեջ այս անունով է հայտնի Աքեմենյան վերջին արքա Դարեհ Գ-ն (մ. թ. ա. 336-330):

^{vi} «Քուրդ» անվան ստուգաբանությունն ու նշանակությունը բավական անորոշ են և կարիք ունեն մոր աղբյուրների: «Քուրդ», հայտնի է, այսօր կոչվում են քուրմանջիստու ու տրանսիստու (քրդերենի երկու գլխավոր ճյուղերը, համապատասխանաբար հյուսիսում ու հարավում) այն ցեղերը, որոնց հիմքի վրա այսօր ձևավորվում է «քուրդ» ազգությունն այժմյան Թուրքիայի, Իրաքի, Սիրիայի և Իրանի տարածքներում: Այս անունը, միայն հնչյունային նմանության վրա հիմնվելով, փորձել են մագեցնել Քսե-

նովոնի մոտ հանդիպող «կարդուխներից» (Անաբասիս, Գ գիրք, V), բայց դրա համար ոչ մի հավելյալ և ավելի հիմնավոր փաստարկ չկա՝ հակափաստարկներից բացի: Այժմ քրդերի ազգայնական և ոչ-համալսարանական հատվածներում լայնորեն տարածված է այն կարծիքը, որ քրդերը ծագում են պատմական մարական ցեղերից (որոնց մասին տես Հերոդոտոս, Ա գիրք, հատվ. 95-101): Ինչպես ասում է Գ. Ն. ՄաքՔենգլին իր «The Origins of Kurdish» հոդվածում (Transaction of the Philological Society, 1961, pp. 68-86). «Հերոսական մախնիների կարիք զգալով և գտնելով կայսերական մարերին, այսպես ասած, «չգբաղված»՝ նրանք չեն հապաղում նրանց ընդունել այս դերում»:

Ընդհանուր առմամբ, «քուրդ» անվանումը հավանաբար ունեցել է «լեռնային քոչվոր բնակչի» իմաստը, որ հետո տարածվել է որոշակի ցեղերի վրա և դարձել վերջիններիս հատուկ անվանումը (Asatryan G., Prolegomena to the study of the Kurds, p. 24): Նույն կերպ այստեղ հավանաբար նկատի են առնվում Մարաստանի տարածքում բնակվող լեռնական ցեղերին:

^{vii} Թվարկված այս երեք կրակները Սասանյան Իրանի երեք գլխավոր կրակատեղում վառվող կրակներն են, որոնցից ամեն մեկը պատկանում էր սասանյան երեք դասակարգերից մեկին: Ֆարրուբայը խորհրդանշում էր հոգևորական դասը, Գուշնասպը (որ Ատրպատականում էր) խորհրդանշում էր ռազմիկների դասը, իսկ Բուրգեն-Միիրը (խորհրդանշում էր երկրագործներից (Bund.: 18.13): Երեքն էլ, ինչպես ընդհանրապես երկրի վրա օգտագործվող սրբազան կրակները, կոչվում են վահրանական (Bundahišn: 18.11): Բացի այս երեքից՝ կային նաև այլ սրբազան կրակներ, սակայն սրանք են ամենանշանավորները և հաճախ են հիշատակվում պահլավական մատյաններում: «Բուռնդախիշն»-ում գրված է դրանց մասին (18.4). «Այս երեք կրակներն են Ադուր (կրակ) Ֆարրուբայը, Գուշնասպը և Բուրգեն-Միիրը, որոնց Օհրմագոն արարչության ժամանակ ինչպես երեք Փառք (xwarrah) աշխարհի պաշտպանության համար արարեց, և այդ կերպով փառավորապես երկրի վրա են [այժմ]:

^{viii} Այս տարիքն է գրադաշտական աղբյուրներում համարվում հասունության և չափահասության սկիզբը:

^{ix} Ծոկանախաղը հին իրանական խաղ է՝ շատ տարածված հին աշխարհում, որ խաղում էին ձիերի վրա՝ մականներով վարելով գնդակը: Հայերեն ճոկանը փոխառություն է իրանականից (պարթևերենից), պահլավերենում այն լինում է ճօցօն կամ ճօցօն:

^x Լարային երաժշտական գործիք:

^{xi} Յոթականները շարժվող մոլորակներն են (այդ թվում և՛ արևն ու լուսինը), իսկ տասներկուականները՝ համաստեղությունները:

^{xii} Այս, ինչպես և հաջորդ աստղաբանական հատվածն ամենայն հավանականությամբ չունեն լուրջ և գիտական նշանակություն: Ըստ ամենայնի, սրանք պարզ երևակայության ու մի փոքր այլաբանության արդյունք են, ինչպես, օրինակ, «Օհրմագո»-ով խորհրդանշվում են օհրմագոական կարգը, հին արքայական Փառքը, Քայսյան հարստության վերականգնումը կլն: Այս հարցում հակառակ կարծիք ունի Կынакова-ն (с. 21-24), ում տեսակետը՝ համաձայն որի այդ աստղագիտական տեղեկություններով կարելի է որոշել գրքի կազմման ժամանակը, թեև բավական մանրա-

կրկիտ է ներկայացված, սակայն չի դիմանում հասարակ քննադատությանը և ընդունելի չէ:

^{xiii} Փարսանգ կամ հրասանգ, տարածության չափման միավոր, որի երկարությունը հավասար է մոտավորապես 5.5 կմ:

^{xiv} Իրանի առասպելական արքաների տիտղոսը: Ավեստերենում՝ *kausi*, որ հավելվում է արքաների անունից առաջ, ինչպես՝ *kausi Vištāspa*, *kausi Usa* ևլն:

^{xv} Այսինքն՝ Պարսից ծոցը:

^{xvi} Այս մոլորակների (*abāxtarān*) մասին տե՛ս *Bundahišn* (5.4): Թեև սրանք կրում են օհրմագդական արարածների անուններ, սակայն համարվում են ահրիմանական հպատակներ՝ ի հակադրություն աստղերի: Քեվանը համարվում է այս մոլորակների գլխավոր հրամանատարը: «Երկնքի միջի տիրակալը» (*xwadāy ī mayān ī āsmān*) Այծեղջյուր (*warrag*) համաստեղության այլ անունն է:

^{xvii} *wād ī ardāy* (առաքինի քամի), ընդունել են Չունակովայի ընթերցումը, ով, հիմնվելով Լիվշիցի (*Лившиц, В. А.*) և Հեննինգի (*Henning, W. B.*) կարծիքների վրա, այստեղ ակնարկ է տեսնում զրադաշտականների «առաքինի քամու» մասին պատկերացման (*Чунакова: стр. 91, зам. 56*): Բունդահիշնում քամին (*wād*) չունի միանշանակ բարի առաքելություն ու երբեմն վնաս կարող է հասցնել: Այդ պատճառով նշվում է (*Bundahišn: 21a.10*). «Եթե օգտակար կերպով է փչում, կոչվում է առաքինի քամի (*frārdōn wād*)»:

^{xviii} Դասքուրը կամ դասվարը մոտավորապես նշանակում է ուսուցիչ, կրոնական գործերից տեղյակ, «աստվածաբան», ինչպես անվանում է Նյուբերգը (*vol. 2, p. 59*), և չունի հստակ աստիճանակարգային (*hierachical*) նշանակություն:

^{xix} Փառքը, հատկապես արքայական Փառքը (պիլ.՝ *xwarrah*, ավեստ.՝ *xʷarənah*), զրադաշտական կրոնական պատկերացումների մեջ մեծ դեր ունի և մի փոքր տարբերվում է մեր պատկերացրած «փառքից» իր ավելի նյութականությամբ: Թեև երկու բառերն էլ նույն ծագումն ունեն, բայց իրանական «փառքը» նշանակում է Օհրմագդի հետ կապված ինչ-որ կախարդական ուժ կամ ոգի, որ հովանավոր է կանգնում բարի էակներին: Դա՝ ընդհանուր Փառքը, իսկ արքայական Փառքը, որ կոչվում է նաև «Քաշայց (Քայերի) փառք», Իրանի օրինական արքաների հովանավոր ոգին է, որ պաշտպանում է գահի միայն օրինական ժառանգներին: Այս հանգամանքով էլ կարելի է բացատրել Արտաշիրի՝ Դարայան Դարայից կամ Դարեհից ծագեցնելու անհրաժեշտությունը:

^{xx} Յագատներն Օհրմագդից ցած կանգնած որոշակի ուժեր ունեցող այն հոգևոր արարածներն են, որոնք հնդիրանական ժամանակաշրջանում և դրանից հետո էլ (թեև ավելի սահմանափակ ձևով) զրադաշտականության մեջ, վերոնշյալ ցեղերի աստվածություններն էին: Դրանք են Անահիտը, Միհրը, Թիշթարը, Ներյոսանգը ևլն: Նրանք ունեին ինչ-որ յուրահատուկ գործառույթներ՝ հատուկ միայն (հիմնականում) իրենց, օրինակ՝ Անահիտը խորհրդանշում էր ջրերը, Միհրը՝ արեգակը, Թիշթարը՝ անձրևը, իսկ Ներյոսանգը, որից առաջացել է Նարսեի անունը, աստվածային ստրիանդակն էր:

^{xxi} Վահրամական կրակները հանդիսանում էին (զրադաշտական) տիեզերքում գոյություն ունեցող հինգ տեսակ կրակներից մեկի՝ «սփեհիշք»-ի (նրանք, որոնք օգտա-

գործվում են երկրի վրա) մի տեսակը: Դրանք այն կրակներն էին, որ վառվում էին ատարուչաններում՝ կրակատներում:

^{xxii} Փարսն Իրանական սարահարթի հարավ-արևմուտքում գտնվող ընդարձակ շրջանն է, որտեղից ծագել են պարսիկերը՝ հանձնինս Աքեմենյանների, և որտեղ գտնվում են հին մայրաքաղաք Պերսեպոլիսի ավերակները և այսօրվա Շիրազը: Հնում այն բաժանված էր հինգ շրջանների, որոնք հայտնի էին «کور» (kura) անունով: Դրանք էին Էսթախրը, Սաբուրը, Արդաշիր-խորրան, Դարաբջիրը և Արջանը (Ibn-Khordadbeh: s. 38): Քերմանը չորային շրջան է, որ գտնվում է Ֆարսից արևելք, իսկ Մաքրեսթանը՝ Քերմանից հարավ-արևելք տարածվող կիսաանապատային շրջան է, որի հարավային մասերը հասնում են մինչև Արաբական ծով:

^{xxiii} Ռեյը գտնվում էր այժմյան Թեհրանի մերձակայքում (դեպի հարավ): Հնուց ի վեր այն հայտնի քաղաք է համարվել, հատկապես որ գտնվել է Արևելյան Իրանն Արևմտյանի հետ կապող ճանապարհի վրա: Դիվանը լեռնային շրջան է, որ գտնվել է Իրանի այժմյան Գիլան նահանգի տարածքներում և տարածվել է Թալիշից (Տայ-լասան) մինչև մոտավորապես Ղազվինի շրջանը (Ibn-Khordadbeh: 43, 66): Դու-բավանդը (պետք է լինի Դուֆավանդ) հենց նույն Դամավանդ լեռն է Ալբորզի լեռնաշղթայում և դրա շրջակայքում գտնվող գավառը: Փաղիշխվարգարը (Padišxwargar) գտնվել է մերձկասպյան տարածքներում, թերևս Գիլանում կամ/և Մազանդարանում: Այն հիշատակում է Մովսես Խորենացին՝ «Բայց նրանք չկամեցան հնազանդվել այն լեռան բնակիչները, որ իրենց լեզվով կոչվում է Պատիժահար գավառ, որ Գեղունների լեռն է» (Խոր., Բ, ծգ):

^{xxiv} Այս հատվածը ևս տարակարծությունների տեղիք է տվել: Մեծ մասամբ (Nöldeke, s. 48, Noshervan, 9; Sanjana, 22; Թիրեաքեան, 15; Чымакова, 48) այն (այս.՝ mādīg) ընդունել են որպես անձնական անուն, իսկ TITUS ծրագրում ներկայացված տառադարձությունը (տեքստի մուտքագրումը՝ Դ. Ն. ՄաքՔենգիի) այն կարդում է mādīg, այսինքն «ձուկ» (հավանաբար կայքի ծրագիրը այդպես գրվող երկու բառերը չի տարբերում իրարից, թեև այնուամենայնիվ հայտնի չի դառնում, թե որ տարբերակն է ընդունված տեքստի խմբագիրների կողմից): Ես գերադասում եմ արտահայտությունը ընթերցել որպես «մարական քուրդանշահ» (kurdān-šah [ī] mādīg), այսինքն՝ Մարաստանի տարածքում ապրող քուրդերի կամ ավելի հավանական՝ մարաստանաբնակ քոչվոր լեռնաբնակների արքայի կոչում: Նման մոտեցում է ցուցաբերել նաև Grenet-ն (79), ով հատվածի թարգմանությունը տվել է այսպես՝ “le roi de Kurdes, le Mède”: Պետք չէ մոռանալ, որ այս երկն ինքնին պատմագիտական հետազոտություն չէ, որը համանակային ու տարածքային հստակ փաստերի հիման վրա է գրվել: Ինչպես երկի վերջում թուրքերի խաբանն ու հռոմեացիների կայսրն են ժամանում Որմիզդ արքայի արքունիք, այնպես էլ Ջ-Է դդ. իրականությունից կարող էին այլ փաստեր սողակել այստեղ, ինչպես այս դեպքում Մարաստանի տարածքում բնակվող քուրդ-քոչվորների (ավելի շուտ՝ քոչվորների, որոնց մի մասը հետագայում դարձավ *քուրդ*՝ այժմյան իմաստով) դեմ պատերազմը:

Ինչպես նաև իմ ընդունած տեսակետի հաստատման համար մեկ ուրիշ փաստարկ կարելի է բերել: Երկի այս հատվածում՝ մի բանի տող ներքև, հանդիպում է «մարերի գորդ»՝ արտահայտությունը (այդպես են ևս թարգմանել): Պահլավերենով այն կարդացվում է spāh ī mādīgān: Եթե «մադիզ»-ը մարդու անուն է, ապա որևէ կարիք չկար

mādiḡ-ին հավելյալ -ān անանգը կցելու, որն ունի երկու նշանակություն՝ հոգնակիակերտ և պատկանելիություն ցույց տվող: Իհարկն՝, այդ անանգի ավելացումը առանձին սխալ չէր առաջացնի, բայց գրքում բոլոր նմանատիպ դեպքերում ոչ մի նման օրինակ չուներ: Գրված է spāh ī Ardawān (Արտավանի գորքը), բայց ոչ spāh ī Ardawānān, գրված է aswārān ī Ardaxšēr (Արտաշիրի հեծյալներ), ոչ aswārān ī Ardaxšērān, կամ spāh ī Kirm, ոչ spāh ī Kirmān և այլն: Մինչդեռ, եթե mādiḡ նշանակում է «մար, մարաստանցի», ապա -ān անանգը դառնում է անհրաժեշտ՝ արտահայտելու համար «մարեր, մարաստանցիներ» հոգնակի իմաստը, և մենք ստանում ենք spāh ī mādiḡān, արդյունքում՝ մարաստանցիների, մարերի և ոչ թե Մադիգի կամ Մահիգի գորք:

^{xxxv} Ինչպես տեսանք, այստեղ ավելի մեծ հավանականությամբ «քորոլ» բառը հասարակ անուն է, քան հատուկ և նշանակում է «խաշնարած ցեղ»:

^{xxxvi} Արտաշիր Փափագանի այս ավանդագրույցը ներկայացնող մեկ այլ հեղինակ՝ Ֆիրդուսին, ավելի ամբողջական է ներկայացնում պատմությունը և տալիս է Քիրմի՝ կախարդական որդի պատմությունը, թե ինչպես նա գտնվեց խնձորի միջից և դարձավ Հաֆթանբոխի բախտավորության և իշխանության պատճառը: «Քիրմ» նոր պարսկերենով նշանակում է «որդ», թեև դատելով այստեղի պատմությունից՝ այն հավանաբար պատմականորեն ունեցել է նաև «օձ» և այդպիսով «վիշապ» նշանակությունները: «Քիրմ-տիրակալ», «Քիրմի տիրակալ» կամ երբեմն նույնիսկ հենց «Քիրմ» կոչման ձևը հաճախ է այստեղ հանդիպում, սակայն նկատի է առնվում հիմնականում Հաֆթանբոխը՝ ամրոցի տիրակալը:

^{xxxvii} Անհայտ տեղանուն, որ տարբեր տեղերում ունի տարբեր գրություններ, այդպիսով նաև բազմաթիվ ընթերցումներ, ինչպես Քուգարան, Գուգարան, Գուլյան: Ես դրեցի հենց այն արտասանությունը, որ տրված է ամենատառաջին դեպքում:

^{xxxviii} Միևորի երկիրը Հնդկաստանն է, Մաքրանը՝ նույն Մաքրեստանը (Քերմանից արևելք):

^{xxxix} Այստեղ Էրահիստան (*Ērāhistān) ընթերցված անունն իրականում երկու այլ ընթերցում էլ ունի, որոնք են *Arabistān և Arwastān: Սրանցից առաջինը բնականաբար կապված է արաբների անվան հետ, և այսպես է ընթերցում Թիրեաքեանը (17): Arwastān անունը հիշատակվում է «Աշխարհացոյց»-ում (Marquart, J., Ērānšahr, s. 15), որտեղ բացատրված է «Արուաստան, որ կոչի Ատրեստան՝ այս ինքն Մուծը, յեկից կալով առ Միջագետաց առ երի Հայոց. ունի լերինս ես գետս, ես քաղաք գՆխնուէ»:
Չնայած այսպիսի նմանությանը՝ դժվար է ընդունել այս տարբերակը, քանի որ աշխարհագրական բավական մեծ տարածություն է ընկած Պարսի ու Ատրեստանի միջև, և վերջինս որևէ մերձավորություն չունի ծովի հետ: Ērāhistān ընթերցումը առաջարկում է Մարկվարտը (Ērānšahr, ss. 43-4), ով հայտնում է, որ Էրահիստանը պետք է գտնված լինի Արդաշիր-խավարահ (Ardašīr xurra) գավառի մերձափնյա հատվածում՝ Պարսից ծոցի ափին:

^{xxx} Mazūn-ից ցեղանունը ծագում է Մագուն տեղանունից, որ հիշատակվում է նաև «Աշխարհացոյց»-ում (Marquart, J., Ērānšahr, s. 9): Ինչպես նշում է Մարկվարտը (ն. տ., էջ 43), Mazūn անունը տրվել է այժմյան Օմանի տարածքին, հետևաբար այս ցեղը բնակվել է Օմանի տարածքում:

^{xxxii} Նման անուն հանդիպում է Խորենացու մոտ (Բ գիրք, 2Է)՝ որպես «Բուրգ»:

^{xxxiii} Պահլավերեն՝ *drōn yaštan*: «Դրոնը» այստեղ բարգմանել են նկանակ՝ որպես «տուրք հաց», ինչպիսի իմաստ այն ունի գրադաշտական արարողակարգում: Բառը, ըստ Մոդիի (The Religious ceremonies: p. 296), ծագում է ավեստ. *draonangha* բառից, որ նշանակում է «ուժեղացնող» (*√dru*՝ «ուժեղ լինել» արմատից): J. K. Choksy-ն իր *Drōn* հոդվածում (Encyclopaedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/dron>) այն ծագեցնում է ավեստ. *draonah-* բառից, որ նշանակում է «ուռելիքի մաս»: Դրոնը որոշակիորեն առանձին ձևով (միայն հոգևորականի ընտանիքի կողմից) պատրաստված «տուրք» համարվող հացն է, որ օգտագործվում է հոգևոր արարողակարգում, ինչպես, օրինակ, «բաժ»-ի (պիլ.՝ *wāz*) ժամանակ (Modi, op. cit: 297-298):

^{xxxiiii} *Waz*-ը կամ բաժը ունի մի քանի նշանակություն գրադաշտական արարողակարգում: Այստեղ այն նշանակում է այն կարճ աղոթքը, որ արտասանվում է ճաշեղուց առաջ և այն ավարտեղուց հետո՝ որպես շնորհակալություն սննդի համար, և արտասանվում է բոլորի, անգամ աշխարհականների կողմից (ի հակադրություն աղոթքների մեծ մասի, որոնց արտասանությունը հոգևորականների պարտականությունն է): Այն տևում է մոտ կես բուրգ: Նոր ժամանակներում դրա համար ոչ մի հավելյալ բան պետք չի, սակայն, ինչպես գրում է Մոդին, Ֆիլոլոսու մոտ ակնարկներ կան այն մասին, որ սասանյանների ժամանակ այն արտասանելիս օգտագործվում էր բարսամը (սրբազան ճյուղերի խուրը, որ լայնորեն օգտագործվում է արարողություններում): Այս ամենի մասին տես J. J. Modi, The Religious Ceremonies, pp. 371-373:

^{xxxv} Այս երեքը համարվում են (գրադաշտական ավանդության համաձայն) Իրանի և գրադաշտականության երեք գլխավոր թշնամիներն ու չարագործները: Դահակը՝ ավելի հայտնի որպես «Աժդահակ» (ավեստ.՝ *azi-dahaka*), հնդեվրոպական հավատալիքների մեջ հանդիպող վիշապի կերպարի մարդկայնացված տարբերակն է: Նրա հետ կապված բուն հավատալիքները հանգում են այն նախնական պատկերացմանը, համաձայն որի՝ երկնքում բնակվող վիշապը խոչընդոտում է անձրևների գալը և երկնային հերոս-աստվածներից մեկը նրան պետք է սպանի՝ անձրևն ազատելու համար: Հնդարիական ավանդություններում այս դերը հիմնականում վերագրվում է Ինդրային՝ ամպրոպի աստծուն, ով հենց այս հատթանակով էլ հայտնի է ամենից շատ («Ռեզ-վեդա», գիրք Ա, երգեր Ժգ, իգ, հատկ.՝ 1բ): Իրանական ավանդություններն այս դերը վերապահում են Թրանթատնային, որ ուշ ավանդություններում հայտնի է որպես Ֆրիդոն կամ Ֆերեդուն: Այս թեման իր արտացոլումն է գտել բազմաթիվ հնդեվրոպական առասպելներում, ինչպես, օրինակ, գերմանական ազգերի մոտ Ջիգֆրիդը կամ Ջիգուրդը (վերջինս սկանդինավյան տարբերակներում), ով իր արկածների սկզբում սպանում է վիշապին ինչ-որ բան ձեռք բերելու համար, ինչը «Նիբելունգների երգ»-ում հանդիսանում է վիշապի արյունից առաջացած անխոցելիությունը (ինչպես Աբիլեաի մոտ), իսկ «Թյուրկեսագա»-ում (սկանդինավյան տարբերակում), ինչն ավելի հետաքրքիր է, նա ձեռք է բերում վիշապի կողմից պահպանվող գանձը: Կամ այնպիսի տարածված պատմություններում, որ-տեղ արքայազանն ազատում է գեղեցկուհուն վիշապի գերությունից, ում մարդիկ պատրաստվում էին զոհաբերել վիշապի պահած ջուրը ստանալու համար: Իրանական ավանդություններում Աժդահակը բռնակալ է, ով հազար տարով գավթել է Իրանի գահը և հազար տարվա վերջում սպանվում է քաջ հերոս Ֆրիդոն/Ֆերեդունի կողմից: Աժդահակի (Բյուրասապի) այս

ավանդությունը կա նաև Խորենացու մոտ, տե՛ս Խոր., Ա գիրք, Պարսից առասպելներից (Ա գրքի վերջին մաս):

Ֆրասյազը (նաև՝ Ֆրասյաբ) Ֆիրդուսու մոտ հանդես է գալիս որպես Աֆրասյաբ, ով է՝ Թուրանի նշանավոր տիրակալը և Իրանի ռիսերին բշնամին: Վերջինս իր երկար գահակալության վերջում սպանվում է Իրանի տիրակալ Քայ Հուսրավի կողմից, ում հորը՝ Սիավուշին, ինքն էր սպանել:

^{xxxv} Արևելյան դրամի տեսակ:

^{xxxvi} Խորասանն այն շրջանն է, որ ընկած է այժմյան Իրանի հյուսիս-արևելքում, Աֆղանստանի հյուսիս-արևմուտքում (Հերաթի շրջակայք) և Թուրքմենստանի հարավ-արևելքում:

^{xxxvii} Չրադաշտական անվառ օրերը, ինչպես հայկական օրացույցում, ունեին իրենց առանձին անունները: Աման («երկինք») էր կոչվում 27-րդ օրը:

^{xxxviii} Թե ո՞վ է Բարզանը, և ի՞նչ եղավ նրա դեմ պատերազմը, այստեղ չի ասվում:

^{xxxix} Այսօրվա Աֆղանստանի մայրաքաղաքի շրջակայքում գտնվող երկիրը:

^{xl} Մոզպետաց մոզպետը (mowbadān mowbad) երկրի կրոնական առաջնորդն էր Սասանյան Իրանում:

^{xli} Հոգևորական տիտղոս, որ հաճախ օգտագործվում է ընդհանրական իմաստով:

^{xlii} Այստեղ գրում են «դարանդարձապետ», քանի որ նույն բառը հանդիպում է նաև Շոլիշեի մոտ, որտեղ այս պաշտոնյան թվարկված է հետևյալ նախադասության մեջ. «ես գրեմ և ցուցանեմ ի դուռն մովպետան մովպետի և դարանդարձապետի (այլ ձեռագրերում նաև «դերանդերձապետ») և մեծ հազարապետին, զի ամցեն զարքայ ի հաւանութիւն...» (Շոլիշե, էջ 124): Այս անվան կորիզ հանդիսացող «անդարձ» բառը հանգում է միջ. պարսկ. andarz բառին, որ ունի «պատգամ, խրատ» իմաստը: Այդ բառով էին կոչվում այն փոքրիկ խրատագրքերը, որոնք վերագրվում էին հին իմաստուններին (այդպես՝ «Andarz ī anōšag-ruwān Adūrbad ī Māraspandān», «Andarz ī Husraw ī Kawādān», «Andarz ī dānāgān ō mazdēsān», կն): Այդպիսով՝ «անդարձապետ» նշանակում է «խրատներ տվող, ուսուցիչ, երեխաներին կրթություն տվող», ինչը և միացնելով «դար» (պիլ. dar՝ «դուռ, արքունիք») բառին կտանանք «արքունի ուսուցչապետ», այսինքն՝ նա, ով պետք է հսկեր արքայազնների ու իշխանազունների կրթությանն ու դաստիարակությանը: Իհարկե՛, պաշտոնի անվանման ստուգաբանությունը հաճախ այդքան էլ օգտակար չէ դրա էությունը պարզելու համար, ինչի բազմաթիվ օրինակներ հայտնի են պատմությունից (օրինակ՝ majordomus-ը Սերովինգյան հարստության ժամանակ, ով թեև սկզբնականորեն զբաղվում էր արքունական տան կառավարմամբ, սակայն հետագայում արքայի փոխանորդն էր վերջինիս բացակայության ժամանակ): Համենայն դեպս այս կոնտեքստից երևում է, որ այն պետական բարձր պաշտոն էր համարվում:

^{xliii} Խոսքը Սասանյան արքայատոհմի երկրորդ արքա Շապուհ (Šāpuhr) Ա-ի մասին է (240-270 թթ.), ով շարունակել է Արտաշիրի նվաճումները, առավել ընդլայնել պետության սահմանները ու հզորացրել այն: Ավելի հայտնի է իր՝ Հռոմեական կայսրության նկատմամբ տարած հաղթանակներով, որոնցից մեկի ժամանակ կարողացել է գերել կայսր Վալերիանոսին (260 թ.): Նրա այս ձեռքբերման պատկերաքանդակն այժմ գտնվում է Նաղշ-է Ռոսթամում: Այս վայրում է գտնվում նաև նրա լայնածավալ արձանագրությունը (Ka'aba-ye Zardošt կոչվող սասանյան շրջանի խորանարդաձև

շինության արտաքին պատերին), որ պատմում է նրա կատարած նվաճումների մասին:

^{xliv} Այս հատվածում խոսվում է այն իրադարձություններից, որոնք պետք է տեղի ունենան այս աշխարհի ավարտի ժամանակ, երբ կգա Չրադաշտի՝ հետագայում ծնված որդիներից երրորդի՝ Մոշյանսի ժամանակաշրջանը, որ կտևի 56 տարի, և այդ ժամանակ տեղի կունենա բարու հաղթանակը չարի նկատմամբ և դրան հետևող rist-āxēz (հարություն կամ վերածնունդ) և tan ī pasēn (նոր բարեկեցիկ կյանքն առանց չարի): Արտաշիլը նկատի ունի, որ մինչև այդ հրաշալի ժամանակն ինքն արդեն գործ ունի իր մահացած որդու «հարության» հետ:

^{xlv} Խոսքը Սասանյան Ռոմիզդ Առաջին արքայի մասին է (270-71 թթ.), ում, չնայած այստեղ իրեն հատկացրած անսովոր մեծ նշանակությանն ու դերին, բավական աննշան կառավարիչ պետք է համարենք այն հիմնավոր պատճառով, որ սպանվել է թագադրությունից մեկ տարի անց:

^{xlvi} Թյուրքական խաբ/դան Ռոմիզդ Ա-ի ժամանակ (270-71 թթ.) գոյություն ունենալ չէր կարող, քանզի Թյուրքական խաղանաթը ձևավորվել է Չ դարի կեսերին:

^{xlvii} Հազկերտ արքան Սասանյան վերջին Հազկերտ Գ արքայից արքան է, ով գահակալել է 632 թ.-ից մինչև 651/2 թ.: Չրադաշտական թվագրությունը սովորաբար սկսվում է նրա գահակալության ավարտից: Այստեղ բերվող թվականը գրքի պատճենի ստեղծման թվականն է և համապատասխանում է մեր 1686 թ.-ին:

^{xlviii} Չրադաշտական պատկերացումներում երկրի վրա կան յոթ մայրցամաքներ, որոնցից միայն կենտրոնականը՝ Խվանիրահն է, որ բնակեցված է մարդկանցով: Այստեղի արտահայտությունը միայն պատկերավորման միջոց է և ոչինչ ավելի:

^{xlix} Անդարզը սովորաբար փոքրիկ խրատական և ուտացողական բնույթի քարոզն է՝ տրված հայտնի պատմական կամ կրոնական անձանց կողմից: Այն առանձին ժանր է կազմում պահլավական գրականության մեջ:

3.2. Ayādgār ī Zarērān

Չարերի հիշարարարանը

Հանուն արարիչ աստծո և բարի նշանի¹:

*Առողջություն և երկարակեցություն բոլոր առաքինիներին
ու բարեգործներին, և հարկապես նրան,
ուն համար որ այս գիրքը գրվեց:*

1.² Այս հիշատակարանը, որ «Չարերի» են կոչում, գրվեց այն ժամանակ, երբ Վիշտասպահն¹ իր որդիների, եղբայրների, իշխանների ու համհարզների հետ ընդունեց Օիրմագրիցⁱⁱ մագդայապաշտների այս սուրբ հավատքը³: Եվ դրանից հետո լուր եկավ խյոններիⁱⁱⁱ թագավոր Արջասպին^{iv}, թե Վիշտասպահն իր որդիների, եղբայրների, իշխանների ու համհարզների միասին ընդունում է Օիրմագրից մագդայապաշտների այս սուրբ հավատքը: Եվ շատ է նա զայրանում այս բանի վրա: Եվ վիռլ Վիդրաֆշին ու Նամխասթ Հագարանին երկու բյուր ընտիր գորքով Էրանական երկիր է ուղարկում որպես դեսպան:

Այնուհետև Չամասպը^v մեծավորների առաջնորդը, շտապելով ներքնատուն մտավ և Վիշտասպահին ասաց. «Խյոնների թագավոր Արջասպից երկու դեսպան է եկել, որոնցից ավելի ազնվագարնը խյոնների ողջ երկրում չկա: Մեկը վիռլ Վիդրաֆշն է, մյուսը՝ Նամխասթ Հագարանը, որ երկու բյուր ընտիր գորք ունեն իրենց հետ, ձեռքներին՝ հրովարտակ և ասում են, թե՝ «Մեզ Վիշտասպահի մոտ թողե՛ք»»: Վիշտասպահն ասաց. «Ներս թողե՛ք նրանց»: Եվ ներս

¹ Թարգմանության համար օգտագործված բնագիրը վերցված է J. D. M. Jamasp-Asana-ի Corpus of Pahlavi texts (Bombay, 1913) պահլավական տեքստերի ժողովածուից (էջեր 1-17):

² Հատվածների համարակալումը տվել են ըստ Չամասպ-Ասանայի, սակայն բողել են միայն 10-րդ, 20-րդ, 30-րդ կն նախադասությունների թվերը, տեքստի ամեն նախադասությունը չհամարակալելու համար:

³ Այսինքն՝ այն, ինչ մենք այսօր կոչում ենք զրադաշտականություն: Մագդայապաշտ (պիլ. mazdēsn) է կոչվում Ահուրա-Մազդա աստծո անվան երկրորդ հատվածի պատճառով:

մտան նրանք, խոնարհվեցին Վիշտասաշահին ու հրովարտակր հանձնեցին: Աբարասանը^{vi} դպիրների գլխավորը, ոտքի կանգնեց և բարձրաձայն կարդաց հրովարտակր: **10.** Եվ գրված էր հրովարտակի մեջ այսպես. «Լսեցի ես, որ Դուք, արքա՛, Օհրմագղից ընդունեցիք մագդալապաշտների այդ սուրբ հավատքը: Եվ եթե չհրաժարվեք կրկին դուք նրանից, ապա մեծ կարող է լինել փորձանքը ձեզ դրանից: Սակայն եթե բարեհաճեք Դուք, արքա՛, այդ սուրբ հավատքը թողնել և [վերստին] հավատակից մեզ լինել, ապա Ձեզ հանց տիրակալ կապասավորեմ և տարեցտարի առատ ոսկի, արծաթ, շատ ազնիվ ձիեր և իշխանություններ կտամ: Իսկ թե չթողնեք հավատքը դուք այդ և չդառնաք էլ մեզ հավատակից, կգամ ես այդժամ ձեր [երկրի] վրա, կանաչը կուտեմ, չորը կվառեմ, ասուն-անասուն գերի կտանեմ և ձեզ հանց ստրուկ ծանր ու դժվար լծի տակ էլ դեռ մնալ կստիպեմ»:

Այն բանից հետո, երբ Վիշտասաշահն այս խոսքը լսեց, մեծ հոգսը նրա մտքերը պատեց: Եվ երբ որ տեսավ քաջ սպարապետ Ջարերը հերոս, թե տխուր է դարձել Վիշտասապը արքա, ներքնատուն մտավ այդ պահին իսկույն և ասաց Վիշտասաշահին. «Թե Դուք, տե՛ր արքա, հաճենաք թողնել, կհրամայեմ ես այս հրովարտակին պատասխան գրել»: Եվ Վիշտասաշահը հրաման տվեց. «Պատասխան տու՛ր այդ հրովարտակին»:

Եվ այն քաջ սպարապետ Ջարերը հերոս հրամայեց այսպես պատասխան գրել հրովարտակին. «Արյաց տիրակալ Վիշտասաշահից խոնարհների արքա Արջասպին, ողջու՛յն: Նախքան ամենը, [իմացիր] թե մենք հավատքն այս սուրբ չենք թողնի և ոչ էլ կդառնանք ձեզ հավատակից: Եվ ընդունեցինք մենք Օհրմագղից հավատքն այս սուրբ և չենք թողնելու և հաջորդ ամիս առանց ձեզ ենք անմահության ջուրը խմելու⁴: Այնտեղ՝ այն Թուսի անտառում և Ջրադաշտի Մար-

⁴ Հավանաբար ուզում է ասել, որ հաջորդ ամիս մարտիրոսության պատկան ընդունելուց հետո, միայն իրենք են դրախտ գնալու: Այսպես է քարգմանել նաև Մոդին (Aiyādgār-i-Zarīrān, p. 7)՝ “and we will drink next month the drink of immortality”: Այլ կերպ են քարգմանում Чунакова-и (Пехлевийская бож. комедия, стр. 139)՝ «(и) в следую-

վում^{vii}, ուր ոչ լեռ կա բարձր, ոչ լիճ անհատակ, այն տափակ դաշտում ձիերն ու քաջ զինվորները կդառնան վճռող: **20.** Եկեք այդտեղից, և մենք այստեղից կգանք, որ թե դուք տեսնեք մեզ, և մենք տեսնենք ձեզ: Եվ ցույց կտանք ձեզ ինչպես է զարկվում դեր յազատների ձեռքից»: Աբարսամ դարապետը կնքեց հրովարտակը, և վիուկ Վիդրաֆշն ու Նամխասթ Հազարանը, այն ընդունելով, խոնարհվեցին Վիշտասպին ու դուրս գնացին:

Այնուհետև Վիշտասպաշահն իր եղբայր Չարերին հրամայեց, թե՛ «Լեռան բաշին՝ բարձր լեռան վրա, կրակ անել դու հրամայիր: Աշխարհին լուր տուր, և սուրհանդակները թող ազդարարեն, թե բացամամք մոգաց, որ հոգ են տանում ու զոհ են անում ջրին ու կրակին Վահրամական^{viii}, ամեն մարդ, ամաց տասից մինչ ութսուն, թող չմնա իր տանն այսուհետ: Այդպես արեք և եկող ամիս Վիշտասպ արքայի դուռը հավաքվեք, իսկ թե չգաք և սուրն (dār) այն ձեզ հետ չունենաք⁵, այն ժամանակ փայտի (dār) վրա ձեզ կախել կտամ»: Եվ բոլոր մարդիկ, ում լուրը հասավ սուրհանդակներից, զորակից եկան դուռը Վիշտասպաշահի, թմբուկ են զարկում ու սրինգ ածում ու փող են փչում:

Շարժվում է քարավանը, և փղապանը փղի վրա է գնում, ձիապանը ձիու վրա է գնում, և կառավարը կառքի վրա է գնում: Բազում են ռոստամական վահանները⁶, նետերով լի կապարճները, բազում են լուսավոր գրահները և քառաձալ գրահները: Եվ արյաց աշխարհի քարավանն այնպես է կանգնում, որ գոշյունը մինչև երկինք է հասնում, իսկ ձայնը ոտքերի՝ մինչև իսկ դժոխք: **30.** Ճանապարհն անցնելիս, երբ գետ են անցնում, անցատեղն այնպես են կտրում, որ այդ

щем месяце мы спразимся с вами насмерть», և Monchi-Zadeh (Die Geschichte Zarēr's, s. 41)՝ «Vielmehr werden wir, <von jetzt an> in zwei Monaten, euch angreifen»:

⁵ Արտահայտությունը, ըստ Ա. Թաֆազզոլի (JA 258, 1970, 89f), մի բառախաղ է՝ հիմնված պահլ. *dār (< ավ. dāra-) «սուր, թուր» և dār «փայտ» բառերի նմանության վրա (երկուսն էլ dār), (Amouzegār, p. 19; MacKenzie, IJ 27, p. 158):

⁶ Բառի ընթերցումը որոշակի դժվարություններ է ներկայացնում: Ակնհայտ է որ գեների տեսակ է: Այսպես թարգմանեցի, քանի որ պահլավերեն վահան (spl) բառի գրությունը բավական մոտ է այս բառի գրությանը՝ չspl(g):

ամիս չի լինում ջուր խմել [գետից]: Հիսուն օր լույս չի լինում, և թռչուններն էլ նստելու տեղ չեն գտնում՝ ձիերի բաշից, նիզակի ծայրից կամ էլ թե լեռան կատարից բացի: Եվ փոշուց ու ծխից հայտնի չէ արդյոք՝ ցերե՞կ է, թե՞ գիշեր:

Եվ հրաման է տալիս Վիշտասապշահը եղբորն իր Ջարերին, թե՛ «Վրանդ խփիր, որ էրանցիներն⁷ էլ վրաններ խփեն, և մենք իմանանք՝ ցերե՞կ է, գիշե՞ր»: Եվ երբ Ջարերը ցած իջավ կառքից ու վրան խփեց, էրանցիներն էլ խփեցին վրան: Նստեց ծուխ-փոշին, երևացին երկնքում աստղեր ու լուսին: Եվ երեք հարյուր մեխ գետնին զարկեցին, երեք հարյուր արջ կապեցին դրանց, և ամեն մեկից էլ երեք հարյուր զանգակ էր կախված:

Նստում է ապա Վիշտասապը գահին արքայական, իր մոտ է կանչում Ջամասպ բդեշխին^{ix} և ասում նրան. «Գիտեմ ես, Ջամասպ, որ գիտուն ես դու, տեսնող ես, բանիմաց: Այս էլ գիտես, որ եթե տաս օր անձրև գա, քանի կաթիլ գետնին կընկնի և քանի կաթիլ՝ կաթիլի վրա: Ինչպես և գիտես, որ երբ ծառերը ծաղկեն, որն է այն ծաղիկը, որ ցերեկն է ծաղկում, որը՝ գիշերը, որը՝ առավոտյան: Այն էլ գիտես, թե որ ամպն է անձրև բերում, և որը՝ ոչ: Գիտես նաև այն, թե ինչ կլինի վաղը՝ վիշտասայյան այն սահարկու պատերազմում, և իմ՝ քայ՝ Վիշտասապշահի որդիներից ու եղբայրներից ով է ապրելու, և ով՝ մեռնելու»:

40. Պատասխանում է Ջամասպը բդեշխ, թե՛ «Երանի մորիցս ծնված չլինեի կամ էլ թե ծնված, տակավին մանուկ՝ բախտովս մեռնեի, գեթ թռչուն դառնայի, ծովն ընկնեի, որ էլ չտայիք այդ հարցն ինձ երբեք: Բայց թե հարցրիք, չեմ կամենում ես այլ բան ասել, քան ճշմարտություն: Եթե Դուք, արքա՛, բարի համարեք, բերեք Ձեր աջն առաջ⁸ և Օհրմազդի փառքով, մագդալապաշտների հավատքով և եղ-

⁷ Այս բարգմանության մեջ խառը կերպով են օգտագործել էրանցի, էրան, էրանական անվանումները մեր մատենագիրների մոտ հանդիպող համանշանակ արյաց, արյաց աշխարհի անվանումների հետ, քանի որ նույն իմաստն ունեն:

⁸ Ընդունել են Ժ. Ամուլեգարի ընթերցումը (էջ 23), ով ՏԻՊ-ը մի փոքր փոփոխությամբ վերածել է ՏԲ-ի և տառադարձել է pēš, ալսիքն՝ «առաջ»: Մոդին (էջ 17)

բայր Չարերի կյանքով երդում տաք (այսինքն՝ պողպատե սուրը և շողշողուն նետը քաջաց ձևով մինչև ...⁹ տանքք երեք անգամ), թե՛ «Չեմ հարվածի ու չեմ սպանի և ո՛չ էլ զնդանում ես քեզ կպահեմ»,- որպեսզի ասի թե ի՞նչ կլինի վշտասպյան այն պատերազմում:

Եվ ասում է Վիշտասպշահը. «Օհրմազդի փառքով, մագդալապաշտների հավատքով և եղբայր Չարերի կյանքով եմ երդվում, որ ո՛չ քեզ կհարվածեմ, ո՛չ կսպանեմ և ո՛չ էլ զնդանում ես քեզ կպահեմ»:

Ասում է նաև Ջամասպը բղեշխ. «Թե հաճես, արքա, հրամայիր արյաց գորքերին վրանից արքայական մեկ նետընկեց¹⁰ հեռու նստել»: Եվ Վիշտասպշահն արյաց աշխարհի այն հսկա գորքին հրաման է տալիս, թե արքայական վրանից վշտասպական պետք է մեկ նետընկեց հեռավորության վրա նստել:

Եվ ասում է բղեշխը Ջամասպ, թե՛ «Նա է վեհ իրոք, որ չի ծնվել մորից, կամ թե ծնվել է, մահացել է վաղ, կամ փոքր հասակից չի դարձել հասուն: Վաղվա օրը, երբ իրար դեմ կելնեն հերոսը հերոսի, վարազը վարազի, բազում կլինեն որդետեր մայրեր, որ որդեկորույս կդառնան [այդժամ], բազում կլինեն զավակներն այն, որ որբ կդառնան, բազում կլինեն այնպիսի հայրեր, ում որդիք մեռան և եղբայրներ, որոնց եղբայրքը կորան, և կանայք, որ այրի դարձան: Արյաց բազում ձիեր կսլանան արագ ու արձակ, և խյոնների տիրոջը զանել

ընդհանրապես քարզմանել է “If it please Your Majesty, your dagger may take my life”: Monchi-Zadeh-ն (էջ 33) տառադարձում է խնդրահարույց հատվածը այսպես՝ *dašn ī xwēš <apar zuvān> ruvān barēd* և քարզմանում ամբողջ նախա-ը (էջեր 43-4)՝ “Wenn es eurer Majestät gefällt, gebt <mir> ein Versprechen (bringt ein Versprechen über die Zunge)...”: MacKenzie-ն (159) առաջարկում է կարդալ *lwb’ n-ը *OL LBME`ō dil*, որով քարզմանում է ‘lay your right hand on your heart’: Վերջին տարբերակը ընդունում է նաև Չունակովան (էջ 141): Shaki-ն (էջ 262) համաձայն չէ Մոնշի-Չադեի և Մաք-Քենգիի տարբերակների հետ, և տառադարձելով *lwb’ n`L bg`n, *ō *bayān`* (‘to the gods’), ողջ հատվածը քարզմանում է այսպես՝ ‘If it please Your Majesty, raise your right hand to the gods and swear by the glory of Ohrmazd...’:

⁹ Այստեղի բառն անհասկանալի է (𐭮𐭲𐭩𐭲𐭩), ինչպես նաև փակագծերում ներառված ողջ հատվածը, որ հավանաբար երդման մի ձևի նկարագրություն է և ներմուծված է տեքստի մեջ հետագա արտագրողներից մեկի կողմից՝ բացատրելու համար: Այս հատվածի համար տե՛ս MacKenzie (էջ 159), Чухакова (141), Monchi-Zadeh (44):

¹⁰ Պիլ. գրությունը՝ *tgrd’p*, որ կարդացվում է *tigrayāb* (Nyberg, v. ii, p. 193):

կկամեն նրանք, բայց չեն գտնի երբեք: Լավ է նա իրոք, որ չի տեսնի վիուկ Վիդրաֆշին, երբ նա մեջ կգա և պատերազմի դաշտը կարշավի, մեղք կկատարի և կսպանի եղբորը քո՝ քաջ սպարապետ Ջարերին, և կտանեն նրա ձիուն՝ այն երկաթասմբակ ձիուն Ջարերի: [Եվ վեհ է նա, որ չի տեսնի] Նամխասաթին Հազարան, որ կգա, պատերազմի դաշտ կարշավի, մեղք կգործի և կսպանի մագդայապաշտմանի առաքիհի Փադիուսրավին՝ եղբորը քո, և կտանեն նրա ձիուն էլ, պարանոցի ոսկե գրահ ունեցող այն ձիուն: Այն Նամխասաթ Հազարանին, որ կգա, պատերազմի դաշտ կարշավի, մեղք կգործի և կսպանի Ֆրաշավարդին՝ քո որդուն, որովհետև ծնվեց նա չար բախտի տակ¹¹, և ով քեզ բողբ այլ զավակների մեջ ամենից սիրելին էր: Եվ քո որդիներից ու եղբայրներից քսան և երեք հոգի պիտի մեռնեն»:

50. Երբ Վիշտասպաշահն այս խոսքը լսեց, գետնին տապալվեց գահից տիրակա՛ն: Եվ ձախ ձեռքում դաշույն, իսկ աջում մի սուր առնելով՝ ասաց. «Բարով դու չեկար¹², ահաբեր վիուկ, քանզի վիուկ ես դու և չարքի զավակ: Ինչ որ ասացիր, չի լինի երբեք, և թե երդված չլինեի ես Օհրմագրի փառքով, մագդեզանց¹³ հավատքով և եղբորս՝ Ջարերի կյանքով, գլուխդ կթոցնեի այս երկու ծայրով սրի, դաշույնի, և ներքև՝ գետնին, կնետեի ես այն»:

Պատասխանում է Ջամասպը նրան. «Բարեհաճ եղե՛ք, արքա՛, վեր կացեք գետնից և կրկին բազմեք բազմոցին տերաց¹⁴, զի լինելու է այն, ինչ պետք է լինի, և այն, ինչ ասում եմ, կլինի հարկավ»:

¹¹ Հատվածը կրկին անորոշ է, հետևելով Նյուբերգի *nēm-wēzag* ընթերցանությանը՝ կարդացի՝ *tā zād pad nēm-wēzag [i] drō*: ՄաքՔենզին (*MacKenzie*, IJ 27: p. 160) ճրօթառի փոխարեն կարդում է **dln'd* և ընդհանուր հատվածը տառադարձում է *tā zād pad nēm-nēzag dra(h)nāy* (ով ծնված ժամանակ կես նիզակի երկարություն ուներ):

¹² *mā drust awar*, որ մանիք միջ. պարսկերենի և պարթ.-ի սովորական ողջույնի ձևի (*dryst 'wr*) բացասականն է (*MacKenzie*, *ն. տ.*):

¹³ Մագդեզանց, այսինքն՝ մագդայապաշտների: Այս անվանումն էին նախընտրում հայ ոսկեդարյան մատենագիրները՝ ելնելով բուն անվանումից, որն է՝ *mazdēsna* (*dōn ī mazdēsna*, մագդեզանց հավատք):

¹⁴ Պիլ.՝ *farraxwān-gāh* (տե՛ս *Nyberg*, *հմպտ. բառը*), բռց.՝ «երջանիկների գահ, տեղ», նկատի ունի «արքայական գահը»:

Վիշտասապշահը ո՛չ վեր է կենում, ո՛չ էլ վեր նայում:

Ապա քաջ սպարապետ Ջարերն է հերոս, որ գնում է ու ասում նրան. «Բարեհաճ եղե՛ք, արքա՛, վեր կացե՛ք գետնից և բազմե՛ք կրկին բազմոցին տերաց, զի կգնամ վաղը ես [մարտի] և կսպանեմ 15 բյուր խյոն»:

Վիշտասապշահը ո՛չ վեր է կենում, ո՛չ էլ վեր նայում:

Եվ գնում է մագդալապաշտների առաքինի Փաղիուսրավն ու նրան ասում. «Բարեհաճ եղե՛ք, արքա՛, վեր կացե՛ք գետնից և բազմե՛ք կրկին բազմոցին տերաց, զի կգնամ վաղը ես [մարտի] և կսպանեմ 14 բյուր խյոն»:

Վիշտասապշահը ո՛չ վեր է կենում, ո՛չ էլ վեր նայում:

Գնում է ապա Ֆրաշավարդը՝ Վիշտասալի որդին, և ասում նրան. «Բարեհաճ եղե՛ք, արքա՛, վեր կացե՛ք գետնից և բազմե՛ք կրկին բազմոցին տերաց, զի կգնամ վաղը ես [մարտի] և կսպանեմ 13 բյուր խյոն»:

60. Վիշտասապշահը ո՛չ վեր է կենում, ո՛չ էլ վեր նայում:

[Նրանից] հետո գնում է հերոս Սփանդյաղը արի և ասում է, թե՛ «Բարեհաճ եղե՛ք, արքա՛, վեր կացե՛ք գետնից և բազմե՛ք կրկին բազմոցին տերաց, զի կգնամ վաղը ես [մարտի] և երդում եմ տալիս փառքով Օհրմագղի, մագդալապաշտների հավատքով [այս սուրբ] և կյանքովը ձեր, որ չեմ թողնի ես ողջ և ոչ մի խյոնի այս պատերազմում»:

Եվ վեր է կենում Վիշտասապշահը, կրկին գահին է նա նստում և իր մոտ կանչում բղեշխ Ջամասալին ու ասում. «Ձեր բախտն այնպես է, ինչպես դու, Ջամասալ, ասացիր: Եվ այդ պատճառով էլ արույրե ամբոց կիրամայեմ ես կերտել, և այդ ամբոցին դարպասներ երկաթի կիրամայեմ ես անել և նրանց՝ որդիներին, եղբայրներին և իշխաններին, այն ամբոցի մեջ մնալ կիրամայեմ, և գուցե այդպես թշնամիների ձեռքը նրանք չընկնեն»:

Եվ պատասխանում է նրան Ջամասալը բղեշխ. «Թե արույրե ամբոց կիրամայեմ կերտել և դարպասն էլ դրա երկաթե անես և որդի-

ներին, եղբայրներին ու իշխաններին էլ քո հրամայես, որ այնտեղ նստեն, ապա ո՞վ է նա, որ կկարողանա թշնամուն այնքան այս երկրից բշել: Քանզի քո եղբայրը՝ քաջ սպարապետ հերոս Չարերը չէ՞ արդյոք, որ գնալու և 15 բյուր խյոն է սպանելու: Այն մազրայապաշտների առաքինի Փաղիուսրավը չէ՞, որ գնալու և 14 բյուր խյոն է սպանելու, և քո որդի Ֆրաշավարդը չէ՞, որ գնալու և 13 բյուր խյոն է սպանելու»:

Եվ հարցնում է Վիշտասպաշահը, թե՝ «Ասա ուրեմն ինձ, թե քանի խյոն կգա բանակից, և երբ միանգամից գան, քանիսը կմեռնեն, և քանիսը ետ կդառնան»:

Ասում է նրան Չամասպ բղեշխը, թե՝ «Հարյուր երեսուն և մեկ բյուր խյոն կգա բանակից, և երբ միանգամից կհարձակվեն նրանք, ոչ մեկը կենդանի ետ չի դառնա տուն՝ խյոնաց արքա Արջասպից բացի: Նրան էլ արի Սփանդյաղը կբռնի և մի ձեռքը, ոտքն ու ականջը կկտրի, կգոռի աչքը նրա կրակին, և նստեցնելով պոչատ ավանակին՝ ետ՝ իր երկիրը կողարկի նրան ու կասի թե՝ «Գնա ու պատմիր, թե ի՞նչ դու տեսար իմ՝ արի Սփանդյաղիս ձեռքից»:

Եվ դրանից հետո ասում է քայ Վիշտասպաշահը. «Անգամ թե բոլոր որդիները, եղբայրները և իշխաններն իմ՝ Վիշտասպաշահիս ու Հութոսի՝ իմ քրոջ և կնոջ^{xi}, որից ծնվեցին երեսուն ուսոր ու դուստր, եթե նրանք բոլորն էլ մեռնեն, կրկին չեմ թողնի սուրբ Հավատքն այս, որ Օհրմագրից ես ընդունեցի»:

Այնուհետև բարձրանում է Վիշտասպաշահը լեռան կատարը ու նստում, և իր հետ գորք ուներ տասներկու անգամ տասներկու բյուր: Լեռն է բարձրանում, կատարին նստում խյոնաց արքա Արջասպը նույնպես, որ գորք հետն ուներ տասներկու բյուր անգամ բյուր:

70. Եվ քաջի պես է իր մարտը տանում քաջ սպարապետ Չարերը հերոս, որ հանց Կրակի յագատը^{xii} լինի՝ եղեգնուտն ընկած, որին Քամին է օգնական կանգնած: Չարկում է թուրն առաջ, տապալում տաս խյոն, ետ է թուրը քաշում, այլ տասնյակ սպանում: Երբ ծա-

րավում է ու սոված դառնում, խյոնի արյուն է տեսնում, ուրախ է լինում:

Երբ տեսնում է դա խյոնաց թագավոր Արջասալը լեռան կատարից, ասում է թե՝ «Ո՞վ կա ձեր մեջ խյոններից, որ կզնա ու կովելով Չարերի հետ՝ կտապալի այն քաջ հերոս սպարապետին, քանզի նրան կտամ իմ դստերը՝ Չար-սթոնին^{xiii}, ում մման գեղեցիկ կին խյոնների ողջ աշխարհում չկա, որպես կին: Եվ կդարձնեմ խյոնների ամբողջ երկրի վրա նրան բղեշխ, որովհետև մինչ գիշեր, թե Չարերը ողջ մնա, շատ չի անցնի, ինչ մեզանից՝ խյոններից, ոչ որ էլ ողջ չի մնա»:

Ոտքի կանգնեց այն Վիդրաֆշը վիուկ և ասում է ահա. «Չի թամբեցեք դուք ինձ համար, քանզի գնում եմ ես»: Թամբում են ձին, և նստում է վիուկ Վիդրաֆշը, ձեռքն է առնում այն տեզը չարօգուտ, որ դժոխքում դևերն են կերտել չարությանը, թույնով և մեղքի ջրով ողողել, պատերազմի դաշտն է սուրում ու տեսնելով, որ Չարերը, ինչպես հերոս, մարտ է մղում, ձիուն առաջ էլ չի քշում ու չի գնում: Եվ գաղտնաբար, ետևից արշավում է դեպ ի Չարեր, հարվածում է մեջքի կողմից գոտուց ի վար՝ քուսթիգից^{xiv} վեր, անցկացնում է [տեզը] սրտից^{xv}, նետում գետնին: Եվ լռում են աղեղների թռիչքն¹⁵ ու գոչյունը հերոսների:

Եվ նայում է Վիշտասաչահը լեռան ծերից ու խոսում. «Թվում է ինձ, թե արդ գարկվեց սպարապետն արյաց Չարեր, քանզի չեն գալիս (չեն լսվում) էլ աղեղների թռիչքն ու գոչյունը հերոսների: Բայց ո՞վ կա ձեր՝ արյաց միջից, որ կզնա և Չարերի վրեժը կառնի, զի Հումազին՝ իմ դստերը, ումից չքնաղ ողջ աշխարհում էրանական մի կին չկա, կամուսնացնեմ ես նրա հետ: Նրան կտամ Չարերի տունն ու կալվածքը և սպարապետությունն արյաց վրա»:

¹⁵ Բառացիորեն գրված է «աղեղ»՝ kamān, թեպետ դժվար է պատկերացնել՝ ինչպիսին է աղեղի թռիչքը: Միգուցե գաղտնիքը «թռիչք» բառի մեջ է, որ է՝ parrišn, և որն այլ (առաջմմ անհայտ) կերպով պետք է կարդալ:

Ոչ մի Էրանցի և ազատ մարդ չտվեց պատասխան: Միայն Չարերի այն փոքր որդին, որ յոթ տարեկանի էր նման, ոտքի կանգնեց ու խոսք ասաց. «Չի քամբեցեք դուք ինձ համար, որ ես գնամ ու որ տեսնեմ կռիվն արյաց, տեսնեմ վշտասպան իշխաններին և քաջ սպարապետ հերոս Չարերին՝ հորն իմ, արդյո՞ք ողջ է նա, թե սպանված, և ինչպես որ կա, ձեզ ես կպատմեմ»:

80. Ասում է նրան Վիշտասպաշահը, թե՝ «Մի՛ գնա դու, երեխա ես դեռ և չես էլ վարժված ռազմի արվեստին¹⁶, մատներդ էլ նետն ամուր չեն կարող բռնել: Չլինի թե հասնեն և քեզ սպանեն, ինչպես Չարերին էլ նրանք սպանեցին, և հետո երկու անուն կտան խյոնները, թե՝ «Սպանեցինք մենք Չարերին՝ արյաց սպարապետին, և մենք էլ սպանեցինք Բասթվարին^{xvi}, որդուն նրա»»:

Ապա գաղտնաբար [գնում է] Բասթվարը և ասում ախոռների վերակացուին. «Վիշտասպաը հրամայեց, որ այն ձին, որի վրա պետք է նստեր Չարերի տղան, Բասթվարին տվեք»: Եվ նա՝ ախոռների վերակացուն, հրամայում է ձին քամբել, և Բասթվարը, նստելով ձին, առաջ է քշում և թշնամիներին սպանելով՝ հասնում է այն վայրը, ուր տեսնում է հորը սպանված:

Եվ չի կանգնում երկար ու ասում է.

«Ավա՛ղ այն նիզակիդ մահաբեր, որ կործանվեց

Ավա՛ղ, վարազ հայր, սաղավարտիդ, որ կործանվեց

Ավա՛ղ այն սեննուրվ^{xvii} ձիուդ, որ կործանվեց^{xviii}»:

Ցանկանում էիք դու մարտնչել խյոնների դեմ և, ահա՛, սպանված ընկած ես արդ այս պատերազմում, ինչպես հասարակ աղքատ մարդիկ: Եվ զանգուր վարսերդ ու մորուսդ քամիներն են ծածանում, և քո մաքուր մարմինը ձիերն են իրենց ոտքերի տակ տրորում, և փռեթաթախ է օձիքդ: Ի՞նչ անեմ ես այժմ: Եթե ձիուց իջնեմ ցած և քո՝ հորս գլուխն իմ գիրկն առնեմ ու սրբեմ փռշին օձիքիցդ, այլևս չեմ կարողանա հեշտորեն ձի հեծնել: Չլինի՞^o թե գան հասնեն և ինձ էլ սպանեն,

¹⁶ Պիլ.՝ razmān-pahrēz, այսինքն մոտավորապես՝ «պատերազմական պաշտպանություն» (pahrēxtan՝ «խուսափել» բայից):

ինչպես քեզ սպանեցին, և հետո խոյնները երկու անուն կտան՝
ասելով. «Մենք սպանեցինք արյաց սպարապետ Չարերին, և մենք էլ
սպանեցինք Բասթվարին՝ նրա որդուն»»:

Եվ ձին քշում է Բասթվարն ու զարկում թշնամիներին, մինչև
հասնում է Վիշտասայի առաջ և ասում. «Գնացի ես և թե՛ արյաց պա-
տերազմը, թե՛ Վիշտասայի իշխաններին հաջողակ տեսա: Եվ սպան-
ված տեսա այն քաջ սպարապետ հերոս Չարերին՝ հորն իմ: Թե բա-
րեհաճեք, արքա՛, թողեք Դուք ինձ, որպեսզի գնամ և հորս վրեժն առ-
նեմ»:

90. Ասում է Չամասպը բղեշխ, թե՛ «Թողե՛ք այդ երեխային,
քանզի ճակատագիրն է նրա՝ թշնամուն սպանել»:

Եվ Վիշտասպշահը հրամայում է ձի թամբել: Երբ Բասթվարը
հեծնում է ձին, [արքան] իր կապարճից նետ է տալիս նրան և օրհնե-
լով ասում. «Այժմ, հերոս՛¹⁷, իմ կողմից գնա և հաղթանակ դու բեր, քո
ամեն մարտում ու պատերազմում հաղթական եղի՛ր և փառավոր
անուն բեր, հավիտյանս թշնամուն մահ բեր^{xix}»:

Եվ ահա նժույգը և էրանի այս գորքի դրոշը, դու հրամայիր և
անուն հանիր՝ հիշատակդ հավիտենական»:

Եվ Բասթվարը ձին առաջ է քշում ու թշնամուն սպանում և
մարտն այնպես քաջաբար մղում, որ կարծես թե արյաց սպարապետ
Չարերը լինի: Խոյնների թագավոր Արջասպը լեռան կատարից տես-
նում է դա և ասում. «Այն ո՞վ է այն արքայական հերոս երեխան, որ
հերոսին վայել մի նժույգ ունի, հերոսին վայել զենք ունի վրան և քա-
ջաբար այնպես է կռվում, ինչպես արյաց սպարապետ Չարերն էր

¹⁷ Այս բառերը թարգմանել են այսպես՝ հետևելով TITUS-ում տրված տառադարձու-
թյանը, որի համար տե՛ս նախադ.-յան վերջում տրված ծանոթագրությունը: Սակայն
բառերը ընթերցվել են նաև այլ կերպ: Այսպես, օրինակ, Melzer-ի կարծիքով՝
Վիշտասպը անմիջապես դիմում է նետին: Հատվածը նա թարգմանել է “Pfeil, geh aus
von mir...” (Zum Yātkār ī Zarērān, s. 58): Նրան են հետևել Monchi-Zadeh-ն (էջ 49,
“Nun Pfeil, mögest du von mir ausgehen...”) և Чунакова-ն (էջ 146, «Теперь лети от
меня, стрела...»): TITUS-ում տրված ընթերցումը հիմնվում է այն բանի վրա, որ
բաժանում է tyI կարդացվող բառը երկու մասի՝ -t yI' (nun)-it yal, թարգմ.՝ «այժմ,
հերոս...»:

կովում: Թվում է ինձ, թե վշտասայան տոհմից պիտի նա լինի և Չարերի էլ վրեժն է լուծում: Բայց ո՞վ կա ձեր մեջ՝ խոյունների մեջ, որ կգնա և այն երեխայի հետ կռիվ կմղի և կտապալի, որովհետև այն Բեհ-սթունին՝ իմ դստերը, ումից ավելի գեղեցիկ կին չկա խոյունների ամբողջ աշխարհում, նրան կին կտամ: Եվ խոյունների ողջ երկրի վրա նրան բղեշխ կդնեն, քանզի թե մինչև գիշեր այդ երեխան կենդանի մնաց, շատ չի անցնի, որ մեզնից ոչ ոք է՛լ ողջ չի մնա»:

Եվ ոտքի կանգնեց վիուկ Վիդրաֆշն ու ասաց, թե՝ «Ձի թամբեցեք դուք ինձ համար, զի գնում եմ ես»: **100.** Եվ թամբում են Չարերի երկաթասմբակ ձիուն, և հեծնում է այն վիուկը Վիդրաֆշ, իր ձեռքն է առնում տեգն այն չարօգուտ, որ դժոխքում դներն են կերտել չարությամբ, թույնով և մեղքի ջրով են այն ողողել, ու պատերազմի դաշտն է արշավում: Տեսնելով, թե ինչ քաջությամբ է Բասթվարը կովում, էլ առաջ չի շարժվում և գաղտնի կերպով է մեջքից մտտենում: Բասթվարը տեսնում է և ձայնում նրան, թե՝ «Ո՛վ չար վիուկ, առաջ եկ [հանգիստ], քանզի թեպետ և ազդրիս տակ ձի ունեն, բայց ձիավարել այն ես չգիտեմ, թեպետ նետեր ունեն կապարճում դրած, բայց արձակել դրանք ես չգիտեմ: Առաջ արի՛, և քո այս քաղցր կյանքը կկործանեն, ինչպես դու դա արեցիր այն քաջ սպարապետ հերոս Չարերին՝ իմ հորը»:

Եվ վիուկ Վիդրաֆշը վստահություն է գտնում և առաջ շարժվում: Այն երկաթասմբակ սև նժույզը Չարերի, երբ Բասթվարի գոռոցն է լսում, իր չորս ոտքերով կանգնում է գետնին ու ինը հարյուր իննսուն և ինը գոռոց արձակում: Վիդրաֆշը նետում է տեգը, բայց Բասթվարն այն իր ձեռքն է առնում: Եվ Չարերի հոգին ձայն է տալիս նրան, թե՝ «Այդ տեգը ցած նետիր դու քո ձեռքից, կապարճիցդ մի նետ դուրս հանիր ու պատախսան տուր այդ չարքին»: Բասթվարը վայր է նետում տեգը ձեռքից, կապարճից նետ է հանում և հարվածում է Վիդրաֆշի սրտին: [Նետն] անցնում է մեջքով և ընկնում գետնին: Եվ [Բասթվարը] ողջուն է տալիս հոգուն [Չարերի], ընտրում է այն սպիտակ և մարգարտապատ մույկը, ինչպես և ոսկե հագուստը Չարերի,

նստում է ապա Չարերի ձիու վրա, իր ձիու [սանձից] էլ բռնելով՝ ձին առաջ է քշում և թշնամիներին սպանելով՝ այնտեղ է հասնում, որտեղ որդին Չամասայի՝ Գրամիգ-քարդը, հաղթական դրոշմ առամներով բռնած, երկու ձեռքերով կռիվ է մղում: Գրամիգ-քարդը և այն մեծ գորքը, երբ տեսնում են Բասթվարին, բոլորով սկսում են ողբալ Չարերին ու ասում են. «Այստեղ ինչո՞ւ եկար, քանզի մատդ նետի վրա ամուր չես կարող պահել և պատերազմել էլ դու դեռ չգիտես: Չլինի թե հասնեն և քեզ սպանեն, ինչպես Չարերին էլ նրանք սպանեցին և հետո երկու անուն տանեն խյոնները, թե՛ «Սպանեցինք մենք Չարերին՝ արյաց սպարապետին, և մենք էլ սպանեցինք Բասթվարին՝ տղային նրա»»:

Եվ ասաց Բասթվարը. «Ո՛վ Գրամիգ-քարդ՝ Չամասայի որդի, հաղթությամբ դու բեր դրոշմ այդ հաղթական, քանզի թե ողջ հասնեն Վիշտասայի առաջ, պատմելու են՝ ինչպես քաջաբար դու մարտնչեցիր»:

110. Առաջ է ապա Բասթվարը ձին քշում, թշնամի սպանում, մինչև հասնում է այնտեղ, որտեղ արի հերոս Սփանդյադն է մարտնչում: Երբ Բասթվարին է Սփանդյադը տեսնում, արյաց այն մեծ գորքը Բասթվարին է թողնում, իսկ ինքը լեռան կատարն է ելնում և Արջասային 12 բյուր գորքի հետ հալածում, դաշտը գցում և ջարդը թողնում Գրամիգ-քարդին: Վերջինս ջարդում է և ջարդը թողնում Բասթվարին: Եվ երկար ժամանակ չի անցնում, որ խյոններից ոչ ոք ողջ չի մնում՝ բացի միայն Արջասայից՝ խյոնների տիրակալից: Նրան էլ բռնում է Սփանդյադը և մի ձեռքը, ոտքն ու ականջը կտրում, մի աչքն էլ կրակով այրում: Նստեցնում է նրան պոչատ ավանակի վրա և ետ է ուղարկում դեպի իր երկիր: 114. Եվ ասում է, թե՛ «Գնա՛ և ասա՛, թե դու ի՞նչ տեսար իմ՝ արի Սփանդյադիս ձեռքից, որպեսզի խյոններն իմանան, թե ի՞նչ եղավ Ֆրավարդին օրն ահարկու այս պատերազմում վշտասայան»:

Վերջաբան¹⁸

Ավարտվեց ողջությամբ, ուրախությամբ ու ցնծությամբ: Օրհնված թող լինեն (բռց.՝ դրախտի բաժին դառնան) Վիշտասպը՝ Լուիրասպի որդին, և՛ Ջարերը, և՛ Բասթվարը, և՛ Սփանդյաղը, ինչպես նաև Ֆրաշավարդ (Ջամասպյանը¹⁹), և՛ Ջամասպի որդի Գրամիգ-քարդը, և՛ Փաղիուրավը ... (pādyasn?), որ հռչակավոր անուն ունեն: Բոլոր իշխանագուճների, քաջերի և ռազմիկների համար թող լավ տեղ լինի լուսավոր դրախտում՝ անծայր լուսավորության մեջ, որ նստավայրն է հրաշագործների²⁰ (յագատների): Ամեն ինչ թող առատ լինի, որ հոգին անմահ լինի, այն հավատապաշտպանը, որ [այս գիրքը] գրեց, թող ուրախ, հաղթական լինի, [ինքն] ուրախության ծնունդ, ուրախությունից ծնված որդի ունենա: Երջանիկ թող լինի հազարավոր տարիներ՝ միչևն ֆրաշագերդի^{xx} օրը, տունը շեն, տուն ու տեղը ամեն տեսակ ունեցվածքով լի թող լինի: Դուք ինքներդ, թե այս երջանիկ գիրքը կարդում եք, ցնծության մեջ թող լինեք: Ուրախությամբ հիշեք Ռուսթան Միիրաբանի անունը, որ այս պատճենի գրողը եղավ, և ինձ՝ հավատքի ծառա Միիրաբան Քայիուրավիս, ով արտագրեց: Ով կարդա, թող մեր անունը բարությամբ հիշի: Ողջությամբ՝ այս շեն աշխարհում և հոգին ավանդելուց հետո՝ հրաշագործների նստավայրում: Եվ ես՝ մանուկս²¹, հավատավոր զավակներից, որ գրող եղա այս շեն աշխարհում: Հաղթող լինի բարին, և չարը՝ անունը հալածված:

¹⁸ Բավական շատ սխալներով ու անորոշություններով է գրված այս վերջաբանը, ինչի պատճառով այստեղ որոշ մասեր կարող են նաև այլ կերպ թարգմանվել:

¹⁹ Թեև գրված է Ջամասպյան, բայց ինչպես երևում է բուն տեքստից, Ֆրաշավարդը Վիշտասպի որդին է:

²⁰ Պիլ՝ warzāwand, այսինքն՝ հրաշալի, կախարդական ուժ ունեցող, այդ ուժով շնորհված մեկը:

²¹ Նախադասության սկզբի հաստատված ընթերցանությունը հստակ չէ: Ես ընթերցել եմ՝ u-m aburnāy, az dēnīg frazandān: Արտահայտությունը որոշակիորեն նմանվում է հայ գրաբարյան «մանկունք եկեղեցույ» արտահայտությանը (Նոր Բառգիրք, էջ 206), որ պետք է կրի «եկեղեցու սպավոր» իմաստը: Նույնն է հավանաբար այստեղ:

Հաղթող թող լինի արարիչ Օհրմագրը: Երկրպագություն Ջրա-
նաշտ Սպիտամանիմ^{xxi}, որ բերեց և տարածեց մագդեգանց սուրբ
կրոնը Վիշտասպշահի, Ջարերի և Սփանդյաղի օգնությամբ:

Հիմնական գրականության ցանկ

1. Աճառյան Հ., Հայերեն Արմաստական Բառարան, Երևան, 1971:
2. Amid, H., Farhang-e Fārsi-ye Amid, Tehran, 1389.
3. Amouzegār, Jaleh, Yādgār-e Zarirān, Matn-e hammasi az dourān-e kohan, Tehran, Moin, 1393.
4. Bartholomae, Ch., Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904.
5. Darmesteter, James, The Zend-Avesta, The Sīrōzahs, Yašts, and Nyāyīš, Sacred Books of the East, Oxford, 1883.
6. Geiger, Wilhelm, Das Yātkār-i Zarēr und sein Verhältnis zum Šāh-name, Sb. Bayerischen Akademie der Wissenschaften, philos.-philol.-hist. Kl., 1890, pp. 43-84.
7. Justi, F., Iranisches Namenbuch, Marburg, 1895.
8. MacKenzie, D. N., (The Review of Monchi-Zadeh's Die Gedchichte Zarērs, Uppsala, 1981), Indo-Iranian Journal 27, 1984, pp. 155-63.
9. MacKenzie, D. N., A Concise Pahlavi Dictionary, London, Oxford University Press, 1971.
10. Melzer, U., “Zum Yātkār ī Zarērān”, in Zeitschrift für Indologie und Iranistik. Bd. 2 (1923), Leipzig, ss. 55-59.
11. Modi, J. J., Aiyādgār-i-Zarirān, Shatrōihā-i-Airān, and Afdiya va Sahigiya-i-Sistān, translated with notes by J. J. Modi, Bombay, 1899.
12. Monchi-Zadeh, D., Die Geschichte Zarēr's, Uppsala, 1981.
13. Navvābi, Y. M., Yādegār-e Zarirān, Tehrān, Asātir, 1384.
14. Nyberg, H. S., Manual of Pahlavi, vol. II, Wiesbaden, 1974.
15. Pagliaro, A., Il testo Pahlavico Ayātkār-i-Zarāran, in Rendiconti della Classe di Scienze morali, storiche e filolog. della reale Accademia Nazionale dei Lincei, Ser. VI, v. I, fasc. 7-8, pp. 550-604, Roma, 1925.
16. Shaki, M., Observations on the Ayādgār ī Zarērān, Archív Orientální 54, 1986, pp. 257-272.
17. TITUS Project, Middle Persian Corpus, <http://titus.uni-frankfurt.de/texte/etcs/iran/miran/mpers/jamasp/jamas.htm> (սյասեղ ներկայացված տեքստը հիմնված է Սափղ Օրիանի Motun-e Pahlavi (Թեհրան, 1371) աշխատության մեջ ներկայացված տառադարձության վրա)։
18. Чунакова, О. М., Пехлевийская божественная комедия, Москва, 2001.

Ծանոթագրություններ

ⁱ Այն արքան, ով, համաձայն գրադաշտական ավանդության, եղել է Ջրադաշտի ժամանակակիցը և վերջինից ընդունելով Ջրադաշտի քարոզած կրոնը՝ աջակցել է դրա տարածմանը: Վիշտասպը (ավեստ.՝ *vištāspa-*), ով արքա Լուիրասպի (ավեստ.՝ *auruuaš.aspa-*) որդին է, հիշատակված է «Ավեստա»-ում՝ ինչպես Գաբաներում (Yasna 46:14; 51:16; 53:2), այնպես էլ «Նոր Ավեստա»-ում (Yašt 24): Yasna 46:14-ում այն հարցին, թե ո՞վ է Ջրադաշտի բարեկամը պաշտամունքի գործում, տրվում է Քավի Վիշտասպի անունը:

ⁱⁱ Ջրադաշտական կրոնի մեջ գլխավոր՝ բարի աստվածը, լույսի ներկայացուցիչը, որ աշխարհի և այդ աշխարհում հանդիպող բոլոր բարի արարածների արարիչն է և հակադրվում է Ահրիմանին՝ խավարի ներկայացուցչին և չարի մարմնավորմանը, աշխարհում հանդիպող ողջ չարիքի հեղինակին, որի դեմ նա պետք է պայքարի մինչև նյութական աշխարհի ավարտը: Անվան նախնական ձևն է ավեստ. *ahura.mazdā-*՝ կազմված *ahura-*՝ «տեր, ահուրա» և *mazdā-*՝ «իմաստուն» (Humbach, *The Gāthās of Zarathushtra*, p. 2) արմատներից: Հայկական աղբյուրներում նրա անունը հանդիպում է «Որմիզդ» տեսքով (Կողբացի, Բ գիրք):

ⁱⁱⁱ Թեև Ֆիրդուսիի «Շահնամե»-ում որպես Իրանի հիմնական թշնամիներ պատկերված են միայն թուրանցիները (որոնց թվում է և Արջասպը), սակայն բուն գրադաշտական աղբյուրները մի փոքր տարբեր են այս տեսանկյունից: Եթե «Շահնամե»-ի այս հատվածում, որ պատկանում է Դադլիլիի հեղինակությանը, Արջասպն անվանված է թուրանցի, ապա գրադաշտական ավանդությունը նրան համարում է խյոն (ավեստ.՝ *x'vīaona-*) սկսած «Ավեստա»-ից (Գրվասպ Յաշթ (Թ.): 30-31): Թե ուրե՞նք են եղել այս խյոնները, արդյոք ե՞րբ է հայտնվել նրանց անունը «Ավեստա»-ի մեջ, և ի՞նչ կապ ունեն նրանք հետագայում պատմության մեջ հանդիպող այլ ցեղերի հետ, որոնք մնանահունչ անուն են ունեցել (քիոնիտներ, չինական պարսպից այն կողմ բնակվող սյունուներ), դժվար է հստակ իմանալ: «Ավեստա»-ում նրանց անունը թվարկված է Վիշտասպի թշնամիների ցանկում, իրենց արքա Արջասպի հետ միասին: Ենթադրաբար նրանք կարող էին լինել հռոմեացի Ամմիանոս Մարկելիմոսի հիշատակած քիոնիտները (Felix W., “Chionites”, *Encyclopaedia Iranica*), սակայն թե ի՞նչ կազ են եղել վերջիններս, այդքան էլ հայտնի չէ:

^{iv} Արջասպի անունը (ավեստ.՝ *arəzaš-aspa*) հանդիպում է «Ավեստա»-ում (Աբան յաշթում (109), Չամյադ յաշթում (87)): Առանձնապես շատ բան չի հաղորդվում նրա մասին՝ բացի նրանից, որ նա է խյոնների առաջնորդը և Վիշտասպի թշնամին, ում վերջինս հաղթում է:

^v Ջրադաշտականության այս սկզբնական առասպելական (կամ կիսաառասպելական) շրջանի պատմության մեջ հայտնի կերպարներից մեկը, ով նույնպես գրադաշտականության պաշտպաններից մեկն է եղել: Մարմնավորում է պալատական իմաստունի կերպարը, և այդ պատճառով էլ բավական ուշ ժամանակների գործ հանդիսացող «Ջամասպ-մամակ» գուշակությունների գիրքը հենց նրան է վերագրվում:

^{vi} Դժվարընթեռելի անուն է, որ կարող է կարդացվել ինչպես «Աբարասմ», այնպես էլ «Աբրահամ»: Հին թարգմանիչներից շատերն ընտրել են երկրորդ տարբերակը, քանի որ բավական երկար ժամանակ Միջագետքի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի

տարածքում արամեերենն էր որպես գրագրային լեզու օգտագործվում, և դայիրներից շատերը, սեմական ծագում ունենալով, կարող էին կրել «Աբրահամ» սեմական անունը: Չնայած դրան՝ առաջին ընթերցումը, որ առաջարկված է Մոնշիզադեի կողմից (Monch-Zadeh 1981: 31), ավելի հավանական է: Որպես ապացույց կարելի է բերել արաբագիր աղբյուրներում հանդիպող Abarsām և հայկական աղբյուրներում հանդիպող «Ապրասամ» անունը (Justi, Iran. Nam., s. 1; Աճառյան, Անձն. Բառարան, հ. Ա, էջ 203):

^{vii} Այս հատվածը, ինչպես նաև այս նախադասությունը տեքստի դժվարըմբռնելի մասերից մեկն է: Չամասա-Ասանայի հրատարակած պահլավական տեքստերի ժողովածուում այն գրված է այսպես՝ ԿՐՍԱՐԾՏ Կ ՔՏ Ի Ն ԻԾ Կ ՍԻԿ ԻՍԷ ԵԵԻ, որ ես տառադարձել եմ TME PWN 'n tws Y lewl W m(w)rW Y zltwšt'n (ānōh pad ān Tōs ī razūr [ast] ud Marw ī Zarduštān): Այսպիսով՝ ես ՍԻԿ-ի մեջ կարդացել եմ Թուս քաղաքի անունը, որ գտնվում է Խորասանում՝ այն նույն աշխարհագրական շրջանում, ինչ Մարվը: Բնչպես երևում է, այսպիսի ընթերցանության համար ոչ մի «վիրահատական» գործողության կարիք չի եղել, միայն առանձնացվել են միասնական համարվող բառի իրականում առանձին երկու հատվածները: Մինչ այժմ սակայն գերակշռում են այլ ընթերցումները: Այս մատյանի առաջին թարգմանիչ Վիլիելմ Գայզերն այս հատվածը թարգմանում է «dort in Hutōs-i Rājūr und Marw, *der Stadt des Zartušt*» (ընդգծումն իրենն է՝ Geiger: s. 50): Թուսի տեղը գրված է Հուրոս, որ հետագա թարգմանիչներից շատերն են ընդունել առանց առանձին իմաստ կցելու՝ հիմնականում այն տեղանուն համարելով: Մոնշիզադեն Հուրոսի տեղը կարդում է Խոթան, որ քաղաք է արևելյան Թուրքեստանում (այժմ՝ ՉԺՀ Մինձյան ինքնավար նահանգ): ՄաքՔենզին իր հոդվածում բավական հաջող մեկնություն է սա համարում այդ բառի համար և ամբողջ հատվածը տալիս է այսպես. ānōy pad xōtan was (-ew ?) razūr, *bē (սա ներմուծում է ՄաքՔենզին իր հարմարության համար – Ռ. Ն.) morw ī zarduštān, kē nē kōf ī borz ud nē war ī zufr – pad ān dašt ī hāmōn aspān ud nēw paygān wizārīšn, որ թարգմանում է՝ «There in Khotan (there is) much forest, but Marw of Zoroaster, which (has) neither high mountains nor deep lakes – in that level steppe (it is) to be decided (between) the horses and the brave footmen»: Այնպիսի մեծ փոփոխություն բուն տեքստի հետ, այն էլ այն դեպքում, երբ իմաստային ոչ մի առավելություն դրա հետ չի գալիս, ըստ իս, կարիք չկա կատարելու: Իրականում Խոթանն այնքան հայտնի տեղանուն չէր իրանցիների համար և ոչ էլ առանձնապես հայտնի իր անտառներով: Ընդ որում՝ Մարվից պատշաճ հեռավորության վրա էր գտնվում: Մինչդեռ Թուս քաղաքը, որը հենց այս անունով է հայտնի պահլավերենում (տե՛ս Šahrēstānīhā ī Ērānšahr, 14), բավական մոտ է Մարվին, և վերջինիս ու Թուսի միջև հիմնականում հարթավայր է ընկած:

^{viii} Ատրուշաններում վառվող բոլոր սուրբ կրակները, բացառությամբ երեք գլխավոր կրակների, այսպես են կոչվում:

^{ix} Հայտնի է, որ «բղեշխ» անվանումը հայկական աղբյուրներում տրվում էր սահմանապահ խոշոր իշխաններիին, որոնց հիմնական թիվը չորսն էր, և ուներ «սահմանապահ, կուսակալ» իմաստը, ինչպես վկայում է «Նոր Բառգիրք»-ը (տե՛ս «բղեշխ» բառի տակ): Սակայն, իրանական աղբյուրներում նրա իմաստը մի փոքր այլ է,

ինչպես երևում է հենց այս տեքստից: Այստեղ այն ունի ավելի մեծ նշանակություն և նշանակում է ինչ-որ մեկին, ով արքայից հետո ամենագլխավոր պաշտոնը պետք է զբաղեցնի, ինչպես երևում է Արջասալի հետևյալ արտահայտությունից. «Եվ կդարձնեն խոյունների անբողջ երկրի վրա նրան բղեշխ...»: Կամ այն հանգամանքից, որ Ջամասպը մինչև «բղեշխ» (պիլ.՝ bythš) կոչվելը մի անգամ կոչվում է ցան մեծավորների, առաջավորների գլխավոր՝ pēšēnōgān-sālār: Դա մոտավորապես նույն պաշտոնը պետք է լինի, ինչ խալիֆների ժամանակ գլխավոր վեզիրը (Nyberg, v. ii, pp. 47-8) կամ այսօր վարչապետը: Ինչ վերաբերում է դրա ծագումնաբանությանը (ինչի մասին տե՛ս Հր. Աճառյանի Արմատ. բառ.-ի համապատ. հատվածը), ապա գերադասելի է թվում ընդունել Nyberg-ի ընդունած ստուգաբանությունը, որն է՝ *biti/tyaxši < bitiya-axši, այն է՝ «երկրորդ աչք», որտեղ *bitiya- մասնիկը տեսական *dviṯya ձևի իրանական hu.-արևմտյան բարբառային տարբերակն է (պարթևերենը, որից հայերենը փոխառել է բառը, պատկանում է hu.-արևմտյան ճյուղին), *axši- հանդիպում է ավեստ. կապակցություններում (սանս.՝ akši):

^x Ֆիրդոսու մոտ Աժդահակի կործանումից հետո հաստատված արքայատոհմի սեփական տիտղոսը: Այս տոհմի բոլոր ներկայացուցիչները կրում են այս տիտղոսը, որ «Ավեստա»-ի լեզվով գրվում է kauui և ծագում է հնդիրանական շրջանից, երբ այն նշանակում էր «բանաստեղծ-քուրմ» (այսինքն՝ նա, ով աստվածներին ձոնված հիմներ էր ստեղծում): Տե՛ս Skjærvø, P. O., “Kavi: Avestan kauui, Pahlavi kay”, *Encycl. Ir.*:

^{xi} Չրադաշտական կրոնում ընդունված էր ներազգակցական ամուսնությունը, որը նույնիսկ բարի արարք էր համարվում (xwēdōdah): Այդ կետին (բնականաբար) մեծ հակակրանքով և նույնիսկ որոշ չափազանցությամբ անդրադարձել են մեր մատենագիրները (Եղիշե, 104):

^{xii} Յագատները երկրորդ կարգի աստվածություններ էին, որոնք տարբեր երևույթների (հիմնականում՝ բնական) ներկայացուցիչներ էին: Նրանք բաղկացած էին նախկինում մեծ հարգանք վայելած հնդիրանական (մինչգրադաշտյան) աստվածություններից, ինչպիսիք էին Սիիրը, Անահիտը, Սրոշը, Ներյոսանգը ևլն:

^{xiii} Արջասալի այս երկու դուստրերի անվան նման արտասանությունը ենթադրական է, և ես պարզապես վերցրել եմ TITUS-ի առաջարկած արտասանությունը:

^{xiv} Չրադաշտականների սրբազան գոտին, որ կապում են զրադաշտականները մարմնի վրա՝ կրծքավանդակի շրջանում:

^{xv} Մի քիչ դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող էր տեգն անցնել միաժամանակ և՛ գոտուց ներքև, և՛ քուսթիգից վերև ընկած հատվածներով՝ սիրտը մտնելով: Սակայն հավանական է, որ այստեղ նկատի է առնվում այն հանգամանքը, որ տեգը, մխրճվելով գոտուց ներքև հատվածում, այնուհետ ներքևից վերև բարձրանալով՝ դուրս է եկել սրտի կողմից:

^{xvi} «Ավեստա»-ում վերջինս (Bastavairi) իիշտակվում է հետևյալ նախադասությամբ մեջ. «...մենք երկրպագում ենք սուրբ Բասավաիրիի հոգուն (ֆրավաշի)» (Յաշ ֆրավարդին (13-րդ), 103):

^{xvii} Չին համեմատվում է սեմնուրվի կամ սիմուրդի հետ, որ մի առասպելական թռչուն է, որին համապատասխանում է հունական առասպելական ֆուուլք-ը:

^{xviii} Այս քիչ քն շատ չափածո հատվածը բավական խճճված է և մեկնաբանության ընթացքում որոշակի դժվարություններ է առաջ բերում: Այստեղ եմ բերում Մաք.Քենգիի (ՈՂ 27, ք. 161) վերլուծության վրա հիմնված տառադարձությունը.

alā dār ī gyān-aužand-it, kē amwašt

alā warāz pidar xōy-it, kē amwašt

alā sēn-murwag bārag-it, kē amwašt,

որտեղ dār նշանակում է Ջարերի գենքը, gyān-aužand նշանակում է «կյանքը սպանող, վերացնող», և xōy-ը պարթևերեն xwd «սաղավարտ» բառն է:

^{xix} Այս տեքստի մեկ այլ դժվար հատված, որի մեկնաբանությունը բավական դժվարություններ է ներկայացնում: Հիմնական դժվարությունը կապված է եղել այն հանգամանքի հետ, որ այն գրված է եղել պարթևերենով (իրանական լեզուների արևմտյան ճյուղին պատկանող մեկ այլ լեզու), և տեքստն արտագրողները, այն չիմանալով, շարունակաբար ավելի ու ավելի են աղավաղել այն՝ իրենց անձանոթ բառերին ծանոթ ձևեր տալով և այդպիսով խաթարելով դրանք: Ես ընտրեցի ամենամոտ մեկնաբանությունը, այն է՝ TITUS-ի տառադարձությունը.

nūn-it yal az man šawē pērōzāwar hāh, pad har razm ud pādrāzm-ē tō pērōz hāh, pād-rōz nām āwarē, jāwēdān rōzān dušmen murd āwarē:

^{xx} Ֆրաշագիրդ (frašgird < ավ.՝ frašō.kərətī-) են կոչվում Օիրմագլի և Աիրիմանի պայքարի վերջում՝ առաջինի հաղթանակից հետո տեղի ունենալիք հոգիների հարությունը, աշխարհի մաքրությունը և իդեալական աշխարհի վերականգնումը, երբ բոլոր հոգիները (արդարներիցը՝ անմիջապես, մեղավորներիցը՝ ծանր փորձություններից հետո) նոր կյանք կստանան:

^{xxi} Սպիտամանը Ջրադաշտին ավանդաբար տրվող ազգանունն է:

3.3. Zand ī Wahman Yasn

Վահման յասնի մեկնություն

Բարի, առատաբաշխ, առատաբեր, պայծառ ու փառավոր արարիչ Օհրմագդին¹ և ամահրասպանդներին փառավորություն և մագղայական սուրբ ու բարի Հավատքին գովանբանություն: Թող առողջություն, երկարակեցություն ու բարեկեցություն լինի նրան, ում համար որ գրում եմ¹:

Ա.

1. Ինչպես հայտնի է Սթուդգար [նասրից]ⁱⁱ, Ջրադաշտն Օհրմագդից անմահություն խնդրեց: 2. Հետո Օհրմագդն իր ամենիմաց իմաստությունը ցույց տվեց Ջրադաշտին: 3. Եվ նա մի ծառի բուն տեսավ, որ 4 ճյուղ ուներ՝ մեկը ոսկե, մեկն արծաթե, մեկը պողպատե, մեկը երկաթախառն:

4. Այդպիսով կարծեց, թե երագում է դա տեսնում:

5. Երբ քնից վեր կացավ, Ջրադաշտն ասաց. «Հոգևոր և նյութական [էակաների] տիրակալը ցույց է տալիս, ու ես տեսա մի ծառի բուն, որ 4 ճյուղ ուներ»:

6. Ասաց Օհրմագդը Սպիտաման Ջրադաշտին. «Այն ծառի բունը, որ տեսար...² 7. Այն 4 ճյուղերը, որ տեսար, 4 ժամանակաշրջաններ են, որ դեռ գալու են:

8. Այն, որ ոսկուց է, այն է, երբ ես քեզ բացահայտում եմ Հավատքը, և Վիշտասապ արքան այն ընդունում է ու ջախջախում դևերի մարմինը... [Եվ դևերը] փախուստի ու ծածկակեցության են դիմում:

9. Արծաթե [ճյուղը] Արդախշեր Քայանⁱⁱⁱ արքայի թագավորությունն է:

¹ Թարգմանության համար օգտվել են ինչպես M. T. Rāshed-Mohassel-ի (Zand-e Bahman yasn, Tehrān, 1385, ss. 193-224) հրատարակած քննական բնագրից, այնպես էլ C. Cereti-ի գրքում (The Zand ī Wahman yasn, A Zoroastrian Apocalypse, Roma, 1995) պատճենահանված «Վահման յասնի մեկնություն»-ի տեքստը պարունակող չորս ձեռագրերից, որոնք են՝ K20, K20b, DH, K43: Վերջիններից հատկապես կարևոր են K20 և DH ձեռագրերը, որոնք ամբողջական են պահպանվել:

² Անավարտ է թողած:

10. Պողպատե [ճյուղն] անմահ-հոգի (anōšag-ruwān) Խոսրով Քավաղյանի^{iv} տիրապետությունն է:

11. Եվ այն, որ երկաթախառն է, է՛ չարածնունդ վարսարձակ դևերի դժնապետությունը, որ քեզնից տասը դար հետո է սկսվելու, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ»:

Բ.

1. Վահման յասնի մեկնությունից, Հորդադ յասնից և Աշթաղ յասնից^v հայտնի է, որ մի անգամ հայտնվեց անիծյալ, հավատքի թշնամի Մագդակ Բամդաղյանը^{vi} և հակառակվեց աստվածային հավատքին:

2. Այն անմահ-հոգի Խոսրովը Մահվենդադին, Նեյշաբուր Դադ-Օհրմագդին՝ Ատրպատականի դասթուրին^{vii}, անսուտ Ադուր-Ֆարրոբային, Ադուրբադ Ադուր-Միհրին ու Բախթ-Աֆրիդին^{viii} իր առջև կանչեց: 3. Եվ նրանց առջև պայման դրեց, թե «Այս յասներն^{ix} այլևս գաղտնի մի՛ պահեք և միայն ձեր սերնդին զանդ^x մի՛ ուսուցանեք»:

4. Նրանք համաձայնեցին Խոսրովի հետ:

Գ.

1. «Վահման յասնի^{xi} մեկնություն»-ից հայտնի է, որ Ջրադաշտը Օհրմագդից երկրորդ անգամ անմահություն խնդրեց:

2. Հետո ասաց. «Քանզի ես Ջրադաշտն եմ, քո արարածների մեջ ամենաառաքինին և ամենագործունյան, արարի՛չ, եթե դու ինձ անմահ դարձնես, ինչպես Բժշկող ծառին, Գոբադ արքային, Ջուշտի Ֆրիանին, Չիհրոմեհան Վշտասայանին^{xii}, որ նույն ինքը լուսավոր Փեշյոբանն է, եթե ինձ անմահ դարձնես, ինչպես նրանց, [ուրիշ մարդիկ] քո վեհ Հավատքին կդառնան: Քանի որ այն հավատացյալը, ով Օհրմագդից կընդունի մագդալական վեհ և սուրբ Հավատքը, անմահ կդառնա: Եվ այլ մարդիկ էլ քո հավատքին կդառնան»:

3. Ասաց նրան Օհրմագղը. «Եթե քեզ անմահ դարձնեն, ո՛վ Սպիտաման Չրադաշտ, սպա այդ դեպքում Բրադրոխշ Թուր Քարաբը^{xiii} նույնպես անմահ կդառնա: Եվ եթե Բրադրոխշ Թուր Քարաբն անմահ դառնա, Հարությունն ու Վերածնունդը^{xiv} հնարավոր չեն լինի»:

4. Չրադաշտին մտքում դա դժվար հավանական թվաց: 5. Օհրմագղն իր ամենիմաց իմաստությամբ իմացավ, թե ինչ մտածեց առաքինի ֆրավահր^{xv} ունեցող Սպիտաման Չրադաշտը: 6. Եվ նա բռնեց Չրադաշտի ձեռքերը: Եվ Օհրմագղը՝ առատաբաշխ ոգին, նյութական աշխարհի արարիչը, առաքինին, ամենիմացության իմաստությունը ջրի տեսքով լցրեց Չրադաշտի ձեռքերի մեջ և ասաց. «Խմի՛ր»:

7. Չրադաշտը խմեց այն, և ամենիմացության իմաստությունը լցվեց Չրադաշտի մեջ:

8. Յոթ օր ու գիշեր Չրադաշտն օհրմագղական իմաստության մեջ էր: 9. Եվ տեսավ Չրադաշտը երկրի յոթ մայրցամաքների^{xvi} մարդկանց և կենդանիներին, [տեսավ] թե ամեն մեկը մեջքին որքան մազ ունի, և ամեն մեկի ծայրը որտեղ է հասնում: 10. Եվ տեսավ ծառերն ու բույսերը, թե ինչքան արմատներ ունեն բույսերը Սպենդարմատի^{xvii} երկրի տակ և ինչպես են աճում, որ խառնվում են (°):

11. Եվ վերջին օրը [Օհրմագղը] հետ վերցրեց Չրադաշտից ամենիմաց իմաստությունը: 12. Չրադաշտին թվաց, թե՝ «Օհրմագղի ուղարկած քաղցր երագում տեսա և քնից դեռ չեմ արթնացել»: 13. Եվ երկու ձեռքերը մարմնին մոտեցրեց ու շփեց, թե՝ «Հիմա քնեմ և չարթնանամ օհրմագղական այս քաղցր երագից»:

14. Ասաց Օհրմագղը Սպիտաման Չրադաշտին. «Ի՞նչ տեսար օհրմագղական քաղցր երագում»:

15. Ասաց նրան Չրադաշտը. «Օհրմագղ, առատաբախշ ոգի, նյութական աշխարհի արարիչ, (երագում) ես տեսա շատ հարուստ մարդու, ով մարմնով անբարո էր, իսկ հոգով թույլ ու նիհար էր և դժոխքում էր գտնվում: Դա ինձ անարժան թվաց: 16. Եվ տեսա չունտր ու խեղճ աղքատի, որի հոգին գեր էր, իսկ ինքը՝ դրախտում: Եվ

դա արժան համարեցի: 17. Տեսա անգավակ ունևորի և անարժան կարծեցի: 18. Տեսա բազմագավակ չունևորի և արժան կարծեցի:

19. Եվ մի ծառ տեսա, որ վրան յոթ ճյուղ ուներ՝ մեկը ոսկե, մեկն արծաթե, մեկն անագե, մեկը բրոնզե, մեկը կապարե, մեկը պողպատե և մեկը երկաթախառն»:

20. Ասաց նրան Օհրմագողը, թե՝ «Սպիտաման՝ Ջրաղաշտ, այս եմ քեզ հայտնում.

21. Ծառի բունը, որ դու տեսար, իմ օհրմագողական աշխարհն է:

22. Այն յոթ ճյուղը, որ տեսար, յոթ ժամանակաշրջաններն են, որ դեռ գալու են: 23. Այն ոսկե [ճյուղը] Վիշտասպ արքայի թագավորության շրջանն է, երբ ես ու դու Հավատքի մասին կխորհրդակցենք, Վիշտասպ արքան այն կընդունի և դևերի մարմինները կչախջախի: Եվ դևերը բացեիքացությունից ծածկակեցության կանցնեն: Ահրիմանի դևերի վիժվածքները կրկին դեպի խավար դժոխք կփախչեն, և ջուրը, կրակն ու երկիր Սպենդարմատը պաշտպանված կլինեն:

24. Արծաթե [ճյուղը] Արդախշեր արքայի, որ Վահման Սփենդյաղյան է կոչվում, թագավորությունն է, ով դևերին մարդկանցից անջատում է և աշխարհը կարգավորում ու հավատքը տարածում:

25. Այն, որ անագե է, աշխարհը կարգավորող ու հարդարող Արդախշերի^{xviii} [Սասանյանի] թագավորությունն է: Եվ այն է նաև Ծապուհ^{xix} արքայինը, ով իմ օհրմագողական աշխարհը կարգավորում է և փրկությունը տարածում: Եվ բարությունն ի հայտ է գալիս: Հաղթական բախտ ունեցող Ադուրբադը^{xx}, ով ուղղում է Հավատքը, անագով փորձության է ենթարկվում և այս Հավատքն այլ ուղղահավատների հետ բարեկարգում է:

26. Այն³, որ բրոնզե է, [Վարաշ]⁴ Արշակունի^{xxi} արքայի թագավորությունն է, ով աշխարհում եղած աղանդավորությունը վերացրեց:

³ Այս հատվածը հավանաբար ձեռագրական որևէ սխալի պատճառով է նախորդից առաջ եկել, քանի որ ժամանակագրական առումով 25 և 26-րդ մասերը հակառակ դասավորվածություն ունեն: Վերևում թվարկված մետաղները թեև այնպիսի դասավորվածություն ունեն, որ բրոնզն անագից հետո է գալիս, սակայն այս ժամանակային առումով անտրամաբանական հաջորդականությունը նկատել է նաև Rivāyat ī

Եվ այն չարագործ քրիստոնեական Ալեքսանդրն⁵ աղանդավոր կան-
հետանա, այս աշխարհից կվերանա և կչքանա:

Dārāb Hormozdyār-ի թարգմանության հեղինակը, ով և բրոնզի, այսինքն Արշակունի-
ների ու Ալեքսանդրի հատվածը Մասանյաններիցից առաջ է դրել (թեև դա հակասում
է սկզբում տրված մետաղների հաջորդականությանը):

⁴ Այս հատվածը պարունակող երեք ձեռագրերում՝ K20, K43 և DH, այս անունը նշված
չէ: Թարգմանիչներից Վեսթը և Չերեթին բնականաբար չեն նշում այն: Սակայն
Ռաշեդ-Մոհասսելի և Անկլեսարիայի թարգմանություններում Արշակունի անվան
կողքին ավելացված է այս անունը (Վալաշ): Թե ինչն է պատճառ դարձել նման կա-
րևոր միջամտությանը բնագրի տեքստի մեջ, չեն կարողանում ենթադրել: Հայտնի է,
որ այլ՝ քիչ թե շատ ամբողջական ձեռագրեր չեն պահպանվել: Վերոնշյալ երեքից
բացի՝ «Վահման յասնի մեկնության» մեկ այլ պահպանված ձեռագիր էլ գոյություն
ունի, որից միայն երկու էջ է պահպանվել: Դժբախտաբար այն մինչև խնդրահարույց
հատվածը չի հասնում: Փագենդ տարբերակը ևս չի պարունակում (ավելին, այն
ընդհանրապես Արշակունի անվան փոխարեն պարունակում է Մասանյան՝
sāsaniānān անունը): Հավանական է թվում ենթադրել, որ նորամուծության հեղինակը
հենց Անկլեսարիան է, ով, ենթադրելով ակնհայտ պակասությունը, փորձել է լրացնել
բացը: Ընդհանուր առմամբ, անկախ նրանից՝ գոյություն ունի այս բառն առկա ձեռա-
գրերից մեկում, թե ո՛չ, պահպանված գրականության մեջ միայն երկու Արշակունի
անուն է հայտնի, որոնք են՝ Արտավան Ե և Վաղարշ (Վալաշ) Ա: Առաջինը չէր կարող
լինել, քանի որ հանդես է գալիս միայն որպես բացասական կերպար, որպես Արդա-
շիր Ա Մասանյանի հակառակորդ: Վաղարշ Ա-ն ընդհակառակը, տարօրինակ կեր-
պով (քանի որ Արշակունի էր) պահպանված Դենքարդ աշխատության մեջ հանդես է
գալիս որպես կրոնի բարեկարգիչ և հերձվածողության հալածող (Darkesteter: SBE,
vol. IV, Introduction, pp. xxxiii-xxxv): Հետևաբար միակ հնարավոր տարբերակն
այստեղ Վաղարշ Արշակունին է (ինչն ընդունում է նաև Վեսթը, տե՛ս SBE, vol. V, pp.
199-200):

⁵ Ձեռագրերում այս անվան գրությունը խառնված է, և իրականում երևացող բառը
թեև իր ձևով նման է Ալեքսանդր անվան պահպանված գրության ձևին, բայց
հատկորեն այդպես չի կարդացվում: Սակայն մի քանի միջոց ունենք պարզելու, որ
իրականում հենց Ալեքսանդր անունն է պակասում այդտեղ: Նախ՝ ինչպես նշվեց,
գրությունն իր ձևով նման է վերջին անվան գրության ձևին: Երկրորդ՝ դրա կողքը
դրված է kilisayāgēth բառը, որը նշանակում է քրիստոնեական (< հուն. ἑκκλησία –
հավաքարեղի, որից՝ եկեղեցի բառից) և այլ տեղերում օգտագործված է հիմնական-
ում հենց Ալեքսանդրին բնորոշելու համար: Եվ երրորդ՝ ամենակարևորը թերևս այն
է, որ Hormozdyar-ի ժողովածուում ներկայացված տեքստը, որ իրականում որոշ
տեղերում բավականին վստահելի աղբյուր է, այս տեղում հենց Ալեքսանդրի անունն է
դնում (Hormozdyar: p. 88): Այսպիսով, ըստ իս, կասկած չի կարող լինել այս հատ-
վածում այս անվան իսկության վերաբերյալ:

27. Կապարե [ճյուղը] Բահրամ Գ-ուր^{xxii} արքայի թագավորությունն է, ով ուրախության ոգին ի հայտ կբերի, և Ահրիմանը վիուկնե-րի հետ դեպի խավար ու մութ դժոխքը կվախչի:

28. Պողպատե [ճյուղը] Խոսրով Քավաղյան արքայի թագավորությունն է, երբ հավատքին հակառակվող անիծյալ Մագդակ Բամդադյանն իր աղանդավորների հետ կելնի և այս Հավատքից [մարդկանց] ետ կպահի:

29. Եվ այն, որ երկաթախառն է, վարսարձակ դևերի դժնապետությունն է, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, [այն ժամանակ] երբ քո հագարամյակի տասներորդ հարյուրամյակը կավարտվի, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ:

Գ.

1. Հարցրեց Ջրադաշտը, թե՝ «Ո՛վ նյութական աշխարհի արարիչ, առատաբաշխ ոգի, ի՞նչը կլինի տասներորդ հարյուրամյակի նշանը»:

2. Ասաց նրան Օհրմագղը, թե՝ «Ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, քեզ ցույց կտամ այն նշանը, որ քո հագարամյակի վերջում կլինի:

3. Կհասնի ամենաստորին ժամանակաշրջանը, և հարյուրավոր, հագարավոր, բյուրավոր վարսարձակ կատաղածին դևեր [կերևան]:

4. Խորասանի կողմից այդ չարածինները դեպի Էրանական աշխարհ կխուժեն: Բարձր պահած դրոշներ ունեն, սև զրահներ են կրում, և վարսերն արձակ թափված են մեջքի վրա: Փոքր են ու ստոր ծագում ունեն, խորամանկ են, չարին ծառա և բազմաբանակ: 5. Ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, կատաղածին են [նրանք], և նրանց ծագումը հայտնի չէ: 6. Վիուկությամբ սլանում են դեպի իմ այս Էրանական աշխարհը օհրմագղական: 7. Այնքան շատ բան կայրեն, կվնասեն և տունն իր բնակիչներից, գյուղն իր գյուղացիներից (կզրկեն): Եվ գյուղացիների շենությունն ու մեծությունը, ուղղահավատությունը, սերը, գոհաբերությունը, ուրախությունը և իմ ամեն տեսակ օհրմագղական ըն-

ծաները՝ մագդայական այս Հավատքը, Վահրամ կրակը^{xxiii}, Վիշ-տասայի կրակարանում դրված, ի չիք կդառնան: Եվ բռնությունն ու գողությունն առաջ կգան: 8. Եվ մեծ գավառը՝ քաղաք, և մեծ քաղաքը՝ գյուղ, և մեծ գյուղը՝ մի ծովիս, և մի ծովիսը՝ մի հողի կդառնա: 9. Ով Սպիտաման Ջրադաշտ, չարականությամբ, բռնակալությամբ ու դժնապետությամբ կքանդեն իմ այս Էրան աշխարհը⁶ օհրմագդական:

10. Այն վարսարձակ դևերը խաբեբա են, որովհետև այն, ինչ ասում են, չեն անում, և չարակրոն են, քանի որ ինչ չեն ասում, անում են: 11. Նրանք չունեն ո՛չ ուխտ ու դաշխնք, ո՛չ ճշմարտախոսություն և ո՛չ էլ օրենք: Ձոհաբերություն չեն անում: Եվ եթե դաշխնք են կնքում, չեն կատարում: 12. Խաբեությամբ, ագահությամբ և դժնապետությամբ կքանդեն իմ այս Էրան աշխարհը օհրմագդական:

13. Այն ժամանակաշրջանում, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, բոլոր մարդիկ խաբեբա կդառնան, մեկը մյուսի վատը կուզի և մեծ սերը (mihir ī wuzurg) կայլակերպվի: 14. Եվ աշխարհից կվերանան ամոթը, սերը և հոգեախրությունը: 15. Սերը հոր և որդու, եղբայրների միջից կվերանա: Փեսան իր աներից առանձին ունեցվածք կունենա: Եվ մայրը դուստրից առանձին, իրար հակառակ կլինեն:

16. Երբ քո տասներորդ հարյուրամյակը կակավի, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, արեգակը ավելի ուղիղ⁷ և փոքր կլինի, իսկ տարին, ամիսն ու օրը՝ ավելի կարճ: 17. Եվ երկիր Սպենդարմատն^{xxiv} ավելի մեղ ու ճանապարհներն ավելի փոքր [կդառնան]: 18. Եվ բերքը սերմ չի տա, և հացահատկի բերքը 10-ից 8-ով կպակասի, 2-ով կավելանա, և այդ էլ, որ կավելանա, սպիտակ չի լինի: 19. Եվ բույսն ու ծառն ու կանաչը կպակասեն: Եթե հարյուր վերցվի, 90-ով կպակասի և տա-

⁶ Այս արտահայտության տակ հիմնականում հանդիպում է ērān dehān (‘yr’n MTA’n) արտահայտությունը, որ բառացի թարգմանությամբ նշանակում է Էրանական գյուղեր: Հարմար գտնվեց արտահայտությունը թարգմանել իմաստային նշանակությամբ:

⁷ Թերևս այստեղ օգտագործված է «հարթ» իմաստով, այսինքն՝ երբ արեգակը ցածր է բարձրանում հորիզոնից, ինչպես ձմռանը:

սով կավելանա: Եվ այն էլ, որ կավելանա, համեղ և ուտելու համար պիտանի չի լինի:

20. Եվ մարդիկ ավելի կարճահասակ կծնվեն: Նրանց տաղանդն ու ուժը ավելի քիչ կլինեն, իսկ իրենք ավելի խաբեբա ու չարագործ կլինեն: Եվ ապերախտ կլինեն ու չեն իմանա աղուիացի⁸ պատիվը: Եվ նրանց [հարյուրից] 90-ն ամոք չի ունենա:

21. Այն ստորին ժամանակներում հավն ավելի շատ հարգանք կունենա, քան իրանցի հավատացյալ (գրադաշտական) մարդը: 22. Նրանց վարձքն աշխատանքում պակաս կլինի: Եվ նրանցից քիչ գործ ու բարեգործություն կգա: Բոլոր տեսակ այլադավանները նրանց չարակամները կդառնան:

23. Եվ ողջ աշխարհում դիակաթադություն և դիակածածկություն⁹ կլինի^{xxv}: 24. Եվ դիակ թաղելը, լվանալը, վառելը, ջրին ու կրակին հանձնելը և ուտելը սովորություն կանեն և չեն խորշի: 25. Գա մեծ գործ ու բարեգործություն կհամարեն և չարագործությամբ դեպի դժոխք ճամփա կհարթեն: Խաշմի ու Ազի^{xxvi} [բերած] մեղսավորության, ցածության ու մոլորության պատճառով դժոխք կընկնեն:

26. Այն ծանր ժամանակներում, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, արյունարբու Խաշմի և վարսարձակ կատաղածին դևերի իշխանությանը նրանք, ովքեր ստոր ծագում ունեն, իրենց ձեռքը կառնեն Էրանական աշխարհի տիրապետությունը: 27. Եվ հավատացյալները, որ իրենց մեջքին սրբազան գոտի^{xxvii} (ēbyāngghan) են կրում, չեն կարողանա պահպանել [կրոնական] մաքրությունը: 28. Որովհետև այն ցածր ժամանակներում դիակն ու աղտեղությունն այնքան առատ կլինի, որ մարդը, քայլը քայլի վրա դնելով, դիակների վրայով կգնա: 29. Կամ երբ բարստմով^{xxviii} մաքրման արարողություն կանի, երբ ոտքը փոսից դուրս դնի, դիակների վրայով կանցնի: 30. Կամ երբ նրանց գերեզմանատանը բարստմ պարզի և դրոն^{xxix} գոհաբերի, թույլատրելի կլինի:

⁸ āzarm ī nān ud namak (‘clm Y LHMA W nmk):

⁹ Նկատի ունի դիակին պատանք հագցնելու սովորությունը:

31. Կամ այն ցածր ժամանակներում երկու հոգով զոհաբերություն կատարելը թույլատրված կլինի^{xxx}, որպեսզի այս հավատքը չգոյություն ու վերացման չհասնի: Հարյուրավորների, հազարավորների, բյուրավորների մեջ միայն մեկը կլինի, որ այս հավատքին կհավատա, նա էլ, որ հավատա, գործ չի անի: Վահրամ կրակը վերացման և սպառման կհասնի, և դրանց հազարից միայն մեկը կխնամեն, այն էլ վառելափայտ և անուշահոտություններ չեն տա: 32. Կամ երբ մարդն, առանց Նիրանգեսթան^{xxxii} իմանալու կելնի և սոսկ բարի մտքով այն [կրակը] կվառի, թույլատրելի կլինի^{xxxii}:

33. Ունեցվածքն ու պատիվն ամբողջությամբ օտարադավաններին ու աղանդավորներին կպատկանեն: 34. Եվ բարեգործ ու բարի մարդիկ արքայի կզնան մոգերի ու մարդկանց շեն ընտանիքներից: 35. Ցածրերն ազատների, մեծերի և մոգերի աղջիկներին իրենց կին կվերցնեն: 36. Ազատները, մեծերն ու մոգերն աղքատության կհասնեն: Եվ բռնին ու փոքրը մեծության ու իշխանության կհասնեն, իսկ անճարակ ցածրերը նախազահության ու կառավարության կզան: 37. Եվ հավատացյալների խոսքը, և՛ արդարների ճշմարտախոս դատավորների կնիքն ու ճշմարտությունը, և՛ առաքինիների [խոսքը] մի կողմ կնետվեն: Իսկ ցածրերի, բանասարկուների, մեղսագործների, ծաղրողների և սուտ դատ անողների խոսքին հավատ կընծայվի:

38. Սուտ երդում կանեն ու սուտ վկայություն կտան և ինձ՝ Օիրնագրիս, կհայհոյեն:

39. Նրանք, ովքեր իրենց վրա քուրմ (hērbad) ու աշակերտ (hāvīšt) անունները կկրեն, միմյանց վատը կկամենան, կզազրախոսեն ու կդատափետեն իրար: Եվ Ահրիմանն ու դևերը նրանց հակասություններն ավելի կշատացնեն:

40. Եվ մարդկային մեղքեր կգործեն: Յոթ մեղքից չորսը քրմերը և աշակերտները կկատարեն: Եվ բարիներին թշնամի կլինեն, որովհետև միմյանց վատ ու վնասակար [խոսքեր] կասեն, և զոհաբերությունն ընդունելով՝ այն ի կատար չեն ածի: Դժոխքից վախ չեն ունենա:

41. Եվ երբ կավարտվի քո հազարամյակի տասներորդ հարյուրամյակը, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, բոլոր մարդիկ Ազ կապաշտեն ու չարակրոն կլինեն:

42. Եվ երջանիկ ամպն ու սրբազան քամին իրենց ժամանակին անձրև չեն բերի: 43. Ամպը ողջ երկինքը խավարով կպատի: 44. Տաք և սառը քամիները կփչեն և հացահատկի սերմերը կտանեն: 45. Անձրևն էլ իր ժամանակին չի գա: Վնասակար կենդանիները^{xxxiii} ջրի չափ առատ կթափվեն: 46. Գետերի ու աղբյուրների ջուրը կպակասի ու կչորանա: 47. Եվ ձին, կովն ու ոչխարներն ավելի կարճահասակ ու անընդունակ կծնվեն, բերք ավելի քիչ կտան, կաշին ավելի բարակ կլինի, կաթը չի ավելանա, և պարարտ չեն լինի: 48. Եվ եզր քիչ ուժ կունենա, և արագավազ ձին՝ քիչ ընդունակություն. արշավելով քիչ կտանի:

49. Եվ այն դժվար ժամանակներում մարդիկ, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, ովքեր իրենց մեջքին սրբազան գոտի կկրեն, այն դժնապետության չար հետևանքներից և կեղծ դատաստաններից, որ հասնելու են, չեն կարողանա ապրել և մահ կփնտրեն: 50. Եվ երիտասարդներն ու երեխաները ծանրամիտ կլինեն, և նրանց սիրտը ո՛չ կատակ, ո՛չ խաղ, ո՛չ ուրախություն անել կցանկանա: 51. Եվ տոնակատարությունները, նախնիների սովորությունները, յազատների^{xxxiv} գոհաբերությունները, երկրպագությունը, պաշտամունքը, գահանբարը^{xxxv} և ֆրավարդիզանը^{xxxvi} միայն տեղ-տեղ կկատարեն: Եվ որտեղ էլ որ կկատարեն, աներկբայորեն չեն հավատա:

52. Բարեգործություն չեն անի և ողորմություն չեն տա, իսկ նրանք, որ կտան, կափսոսան:

53. Եվ նրանք, ովքեր բարեպաշտ են և մազդայական բարի հավատքին են հարում, իրենց ուղիներն ու ճամփաները ոտաբոբիկ են անցնում^{xxxvii} և իրենց իսկ հավատքին չեն հավատում:

54. Եվ ազատները, մեծավորներն ու բարի գյուղացիներն ասորմամբ իրենց գյուղերից ու տեղերից, իրենց բուն վայրերից ու ընտանիքից կզգան և ստորերից ու չարերից ողորմություն կխնդրեն:

55. Այս մարդկանց տասից ինը հյուսիսային կողմում կանհայտանան^{xxxviii}:

56. Նրանց դժնապետության օրոք ամեն ինչ չգոյության, աղքատության, թեթևության (թերևս՝ անտարբերության կամ դատարկության) և ավերման կհասնի:

57. Երկիր Սպենդարմատն իր բերանը կբացի, և ամեն տեսակ մետաղ կհայտնվի մակերևութին, ինչպես ոսկի, արծաթ, անագ, արճիճ և կապար:

58. Եվ իշխանությունն ու թագավորությունը կհասնեն ծագմամբ ոչ իրանցիներին, ինչպիսիք են հոները, թուրքերը, խաղորները (հավանաբար՝ խազարները^{xxxix}), տիբեթցիները^{xl} (°), ինչպիսիք են քոչվորներն ու լեռնաբնակները, չինացիները, քաբուլցիները, սողերը, հռոմեացիները, կարմիր հագուստ ունեցող և սպիտակ հագուստ ունեցող հոները^{xli}, [որոնք] իշխան կլինեն իմ օիրմագղական Իրան աշխարհի վրա: Նրանց կամքն ու հրամանը կտարածվեն աշխարհի վրա:

59. Իշխանությունը կհասնի նրանց, որ կաշվե գոտի ունեցողներ են (թուրքերը), արաբ են և հռոմեացի: 60. Եվ այնքան դժնապետ կլինեն, որ բարի ու առաքինի մարդուն սպանելը նրանց համար հավասար կլինի ճանճ սպանելուն:

61. Եվ իրանցի բարեհավատների ապարանքները, հարստությունները, շենությունը, գյուղն ու ընտանիքը, ունեցվածքը, դաստակերտները, ջրանցքները, գետերն ու աղբյուրները կհասնեն ոչ իրանցիներին: Եվ գորքը, սահմանն ու դրոշները նույնպես նրանց կհասնեն, այնպես որ իրենց կատաղի մտքով կտիրեն աշխարհին: 62. Նրանց ազահ աչքն ունեցվածքից չի կշտանա: Աշխարհի հարստությունը իրենց մոտ կհավաքեն ու գետնի տակ կպահեն: 63. Իրենց չար լինելու պատճառով արվամուլություն և դաշտանի ժամանակ հարաբերություն շատ կանեն և մեղավոր կրքեր շատ կտածեն:

64. Եվ այն դժվարին ժամանակաշրջանում գիշերն ավելի լուսավոր [կթվա]: Եվ տարին, ամիսն ու օրը մեկ երրորդով կկարճանան:

Եվ Սպենդարմատ-երկիրը վեր կգա, և մահացու վտանգն ու կարիքավորությունն աշխարհում ավելի կշատանան»:

65. Ասաց Օհրմագրը Սպիտաման Ջրադաշտին, թե. «Ահա այս եմ ասում. (66.) «Այդ չարագործ Չար ոգին, որին պետք է ոչնչացնել, ավելի բռնակալ ու դժնապետ կդառնա»»:

67. [Ապա] այսպես բարի ասաց Օհրմագրը Սպիտաման Ջրադաշտին, թե՝ «Մտապահի՛ր¹⁰ և անգիր արա՛, զանդով^{xlii} ու փազանդով^{xliii} ու բացատրություններով ուսուցանի՛ր քրմերին ու աշակերտներին, ասա՛, որ աշխարհում հայտնեն նրանց, ովքեր [վերջին] հարյուրամյակից տեղյակ չեն, և ասեն, որ սեփական հոգու փրկության և հանդերձյալ կյանքի համար դիվապաշտների ու այլակրոնների հիմարությանը, չարությանն ու թշնամությանը դիմանան [և հավատափոխ չլինեն]:

68. Եվ քեզ այս ևս կասեն, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, որ ով այն ժամանակ մարմին (այս.՝ աշխարհային վայելքներ) կցանկանա, չի կարողանա փրկել հոգին, որովհետև ում մարմինը պարարտ լինի, հոգին նիհար կլինի, իսկ ով հոգին կընդունի, մարմինը նիհար, աշխարհում աղքատ ու չքավոր կլինի, հոգին պարարտության մեջ՝ դրախտում կգտնվի»:

Ե.

1. Հարցրեց Ջրադաշտը Օհրմագրին, թե՝ «Օհրմա՛գր, առատաբաշխ ոգի, նյութական աշխարհի արարիչ, առաքինի», — այսպես՝ Օհրմագրին կոչելու կամ երկրպագության ժամանակ նրան «առաքի-

¹⁰ Այս բառի թարգմանությունը որոշակի դժվարություն է ներկայացնում, որովհետև ձեռագրերում լավ չի պահպանվել: Կարելի է տառադարձել այսպես՝ be spa/urān (بے سپا ورن), ապա՝ ud warm be kun: Չերետին ۱۳۵۹ բառը թարգմանում է «կարդալ» իմաստով: Նույնն է անում Ռ-աշեղ-Մոհասսերը, սակայն տառադարձության ծանոթագրություններում (p. 83) այլ կերպ է ընկալում բառի իմաստը (մտապահել, անգիր անել - به خاطر سپردن): Տվյալ դեպքում բառի դիրքն այնպես է, որ իմաստի մասին գլխի ընկնելը դժվարություն չի ներկայացնում:

նի» պետք է կոչել: Կան նաև, որ «առաքինի արարիչ» են ասում)¹¹, — «Աբարի՛չ, արդյո՞ք այդ ծանր ժամանակաշրջանում կլինեն առաքինի մարդիկ, ովքեր մեջքին սրբազան գոտի կկապեն և Հավատքին բարսումով զոհաբերություն կանեն»:

2. Ասաց Օհրմագրը Սպիտաման Ջրադաշտին, թե «Առաջնային և լավագույն մարդիկ նրանք են, ովքեր այդ ծանր ժամանակներում են մեջքին սրբազան գոտի կրում և Հավատքին բարսումով զոհաբերություն անում, ոչ թե Վիշտասպ արքայի ժամանակներում: 3. Նա, ով այդ ծանր ժամանակներում *iθā.āt.yazamaidē* և *ašəm.vōhū*^{xliv} կարտասանի և անգիր արած կլինի, հավասար կլինի Վիշտասպ արքայի թագավորության ժամանակ հեղման ընթացքում կատարված դվագդահ-հոմասթին^{xlv}: 4. Եվ ով պաշտամունք անի և գաթաները^{xlvi} երգի, դա նման կլինի Վիշտասպ արքայի ժամանակ Աբան յաշթն ու գաթաները երգելուն: 5. Լավագույն առաքինին նա կլինի, որ մագդայական բարի հավատքի մեջ կշարունակի մնալ: Եվ ընտանիքում կշարունակի խվեդդահի^{xlvii} սովորույթը»:

6. Ասաց Օհրմագրը Սպիտաման Ջրադաշտին, թե՝ «Իմ տված օհրմագրական այս 9000 տարում^{xlviii} այդ դժվար ժամանակաշրջանը մարդկանց համար առավել դժվարը կլինի: 7. Որովհետև Աժդահակի^{xlix} և թուրանցի Ֆրասյաթի¹ իշխանությունների ժամանակ մարդիկ այդ ծանր ժամանակներում ավելի բարեկեցիկ ու ավելի երկարակյաց էին, և Ահրիմանի ու դևերի թշնամությունն ավելի պակաս էր: 8. Որովհետև նրանց դժնապետության տարիներին Իրան աշխարհում անգամ հինգ ավերակ գյուղ չկար, ինչպես քո հազարամյակի ավարտին, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ: 9. Որովհետև ողջ Իրանական աշխարհը նրանց ձիու սմբակի տակ կընկնի: Նրանց դրոշը մինչև Փադիշավարգարⁱⁱ կհասնի: Հավատքի տեղը դժնապետությամբ այնտեղից կվերացնեն: Մինչև այնտեղ կհասնեն նրանց ավերմունքները:

10. Ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, սա է այն, ինչ ասում եմ.

¹¹ Գծերի մեջտեղը հայտնված այս հատվածները ծանոթագրություններ են՝ ավելացված գրքի տարբեր «հեղինակների» և խմբագիրների կողմից:

11. «Լակներից նա է ամենաբարձրը զոհաբերության մեջ, ով առավել շատ զոհաբերություն կանի Օհրմագլին: Օհրմագլն անգամ ամենափոքր առաքինությունից էլ տեղյակ է և գործի ու բարեգործության վարձատրությունն այդ առաքինությունից տեղյակ լինելով է տալիս:

...Եվ երկրպագում են թե՛ արական, թե՛ իգական ժողովականներին,^{lii} և ամահրասպանդները՝ արական թե իգական, բարի են¹²:

2.

1. Հարցրեց Ջրադաշտը Օհրմագլից, թե՛ «Օհրմագլ, առատաբաշխ հոգի, նյութական աշխարհի արարիչ, առաքինի: Որտեղի՞ց կվերականգնեն մագդալական այս վեհ հավատքը և ի՞նչ գեներով կսպանեն այդ կատաղածին վարսարձակ դևերին:

2. Արարի՛չ, մահ տուր ինձ և մահ տուր իմ որդիներին, որպեսզի չսպանեն այդ ծանր ժամանակներում: Կարճակեցություն տուր, որպեսզի չարության և դժոխքի ճամփան չհարթեն»:

3. Ասաց նրան Օհրմագլը, թե՛ «Ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, սև նշանի հայտնվելուց հետո իշխանությունը նրանցից՝ այդ կատաղածիներից [կանցնի] Սալմական աշխարհին^{liii}, շեղասպիական և քրիստոնեական չարքի՞ն^{liv}», — որոնց մասին Մահվենդադն ասում է, որ հռոմեացիներն են: Ռոշնը հայտնում է, որ կարմիր սաղավարտ, կարմիր գրահ և կարմիր դրոշ ունեն, այսինքն՝ դա է նրանց նշանը^{lv}:

4. «Երբ որ կգան, արևի խավարում կլինի, և լուսինը կկորցնի իր գույնը: Աշխարհը կընկղմվի մշուշի և խավարի մեջ: Երկնքում տեսակ-տեսակ նշաններ ի հայտ կգան, և բազմաթիվ երկրաշարժներ տեղի կունենան, փոթորիկ կլինի, և աշխարհում շատ կարիք, նեղու-

¹² Այս հատվածն իր դիրքով որևէ իմաստ չի պարունակում: Հավանաբար այն կարող է վկայել տեքստի հին կառուցվածքի մասին: Հնարավոր է նաև, որ այն հետագա արտագրությունների ժամանակ թույլ տված սխալների և թյուրիմացության արդյունքում է սպորդել տեքստի մեջ:

թյուն ու դժվարություն առաջ կգան: Եվ Օհրմազդ ու Թիր [մոլորակները]^{1vi} կառաջնորդեն չարերին:

5. Հարյուրավոր, հազարավոր և բյուրավոր են շեղասայիական քրիստոնեական դևերը: Կարմիր դրոշ ունեն: Նրանց շարժումը շատ է: Կհարձակվեն իմ այս օհրմազդական Իրան աշխարհի վրա մինչև Արանգ^{1vii} գետի ափը», — կար, որ ասում էր մինչև Եփրատ գետը, «մինչև *գավրանը* Ասորեստանական», — և *գավրանը* դաշտ համարի¹³, որ ասորաբնակ է, այսինքն՝ որտեղ ասորական մարդիկ են ապրում, և դա նրանց բնակավայրն է: Կար, որ «դևերի որջ» կոչեց:

¹³ Այս պարբերությունն ամենադժվար հասկանալի հատվածն է ողջ աշխատության մեջ: Խոսքը Միջագետքի մասին է: Դժվարությունը տեքստում տրված «գավրան» (𐭪𐭥𐭫𐭮) բառի ընթերցման մեջ է, որ պահլավերենի այբուբենի ընձեռած «հնարավորությունների» պատճառով կարող է բազմաթիվ ընթերցման ձևեր ունենալ: Այն կարելի է ստառադարձել հետևյալ ձևերով՝ gwr'n, ywr'n, dwr'n, gwn'n, ywn'n, dwn'n և այդպես շարունակ, այն պատճառով, որ առաջին տառը կարող է ընթերցվել g, d, y, i, ı, e, ē, երկրորդ և երրորդ տառերը, որոնք նույն կերպ են գրվում՝ w, n, r, u, ā, o, ð, չորրորդը՝ ʾ (ā, ã), h, x և վերջինն այնպես, ինչպես երկրորդը և երրորդը: Մինչև այժմ հիմնականում ընդունված է եղել մի քանի տարբերակ: Վեսքը և Չերետին բառն ընթերցում են yōnān և քարգանում են «հույներ»: Այս ընթերցումը բավականին ընդունելի կլիներ, եթե կենտրոնանայինք միայն այն փաստի վրա, որ սելևկյանների ժամանակաշրջանից սկսած՝ Միջագետքում երկար ժամանակ մեծաքանակ հույներ են բնակվել: Սակայն այս ենթադրության գորությունը, ըստ իս, բավականին փոքրանում է այն հանգամանքներից, որ հույների կողքին այդ նույն տարածքում բնակվել են ոչ միայն բազմաթիվ իրանցիներ, այլև տեղաբնիկ սեմական ժողովուրդներ, ասորիներ և հրեաներ: Հավանական է անգամ, որ Սասանյանների մղած պատերազմների արդյունքում սրանց թվին ավելացել են նաև հռոմեացիներ և արաբներ: Ավելին, ինչպես գիտենք, այս աշխատությունը բավականին ուշ շրջանի գործ է և հավանաբար վերջնականորեն խմբագրվել է ԺԱ-ԺԲ դդ.: Քիչ հավավորված է թվում, որ այդ ժամանակներում հայտնի լիներ հույների գոյության և քանակի հարցը (tā ð yōnān ī asūrestān-manišn, had yōnān saxt-āmār), մի խնդիր, որ հավանաբար արդի էր դրանից գրեթե հազար տարի առաջ միայն (այս թարգմանությանն է հարում նաև Widengren, տե՛ս Cereti, p. 200):

Հաջորդն Անկլեսարիայի տեսակետն է, ով բառը թարգմանել է Duvan և դարձրել Ասորեստանի մայրաքաղաքը (Anklesaria, p. 116): Այս թարգմանությունը նույնպես մի փոքր է լուծում սալու խնդրին, բայց բավական ոչ հիմնավորված կերպով, քանի որ նման անունով քաղաք, առավել ևս մայրաքաղաք, Միջագետքի տարածքում հայտնի չէ:

Ռաշեդ-Միհասսեյի առաջարկած տարբերակը բավական նոր է ու թերևս ճշմարտությանն ավելի մոտ: Նա, չընդունելով yōnān ընթերցանությունը, առաջարկում է gawr[ān] տարբերակը, որ թարգմանում է «դաշտ, հարթավայր»: Իրականում, սա-

6. «Այսպես հարյուրներով, հազարներով և բյուրավորներով կսպանեն այդ կատաղածիմները և ետ կդառնան: Այն վարսարձակ դևերի դրոշները, նշանները և անհամար գորբերը կհասնեն իմ այս օհրմագրական Իրան աշխարհը: Ե՛վ լայնաճակատ հոմը, որ թուրքի և կարմիրի թշնամին է», — ովքեր բարձրադրոշ են, որովհետև դրոշները բարձր են բռնում: Ե՛վ բազում քանակով Իրան աշխարհում ինչպես ձիու բաշի [մագերի առատությամբ] կկանգնեն, — «և՛ կաշվե գոտի ունեցող թուրքը, և՛ շեղասպիական քրիստոնեական հռոմեացին իրար հանդիպելու համար իրար կհասնեն:

7. Ե՛վ պայքարի ընթացքում երեք անգամ և երեք տեղ [մեծ] ճակատամարտ է եղել և լիներու, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ:

կայն, այդ բառի իսկական նշանակությունը հանգում է «վոս ընկած տեղ» հասկացությունը, ինչպես և տալիս է Նալբանդյանը՝ ձոր, հոր (Պահլ.-հայ. բառար., էջ 76), ինչը և հանգում է մերօրյա նոր պարսկերեն *گور* (*gur*)՝ «գերեզման, տեղ» բառին (انوری: ص. ٨٦٩): Հատկապես պետք է հաշվի նստել դրանից հետո եկող շարունակության հետ, որ Չերեսին տառադարձել է *had yōnān saxt-āmār*՝ «և հույները անհամար (դժվար հաշվելի) են»: Ռաշեղ-Մոհասսելն այն տառադարձել է *had gawrān saxt-hamār*, որ թարգմանել է «*دشت سخت هموار*», որտեղ *hamār* բառը, նույնացնելով ՆՊ *hamvār* բառի հետ, ընկալել է «հարթ» իմաստով: Սակայն դժվար է համաձայնվել ոչ միայն նոր պարսկական լեզվամտածողության հիման վրա թարգմանված արտահայտության, այլև *hamār – hamvār* բառերի նույնացման հետ:

Ըստ իս՝ բառի ընկալումը կապված է բավական մեծ դժվարությունների հետ, և մեր պայմաններում դժվար է միանշանակ ընդունել որևէ տեսակետ: Հնարավոր է առաջ քաշել մի տարբերակ ևս, որ թեև բավական խճճված է ներկայացնում պատկերը, սակայն հավանաբար կարող է բացատրություն տալ խնդրին:

Մի կողմ դնելով «հույն» և «դաշտ» թարգմանությունները՝ ես նմանություն եմ գտնում *gawrān* բառի և ասորական մնամահունչ *kafr/kafrā* բառի հետ, որ ունի «գյուղ, բնակավայր» նշանակությունը (Smith, P. R., *Compendious Syriac Dictionary*, Ox., 1903, vol. 1, p. 223): Իմաստային առումով այն ստեղծում է *ērān dēhān* («իրանական գյուղեր»՝ իրանական աշխարհ) արտահայտությանը և կարող է ժամանակին ընդունված ձև (կամ արամեագրություն) հանավել հին Ասորեստանի տարածքներն անվանելու համար: Հավանական է, որ այս աշխատության տվյալ հատվածի հեղինակը օգտված լինի մի աղբյուրից, որ Ասորեստանն այս անունով է կոչել, և ինքն ընդունել է այն: Հաջորդ հատվածը, որը *Cereti*-ն տառադարձել է *had yōnān saxt-āmār* կերպով, ես թարգմանել եմ «և գավառը դաշտ համարի՛ր (հաշվի՛ր)», որտեղ *saxt* ձևը կարդացել եմ *dašt*, իսկ *āmār* ընկալել եմ որպես *āmārdan* (հաշվել) բայի հրամայական ձևը:

8. Մեկը՝ Քայոս շահի^{lviii} իշխանության ժամանակ, երբ դևերի հետ միաբանված Քայոսը ճակատամարտեց ամահրասպանդների դեմ:

9. Եվ երկրորդը կլինի, երբ դու, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, Հավատքը կրնդունես և կխորհրդակցես [ինձ հետ]: [Այդ ժամանակ] Վիշտասպ արքան և կատաղության վիժվածք Արջասպը^{lix} հավատքի համար պատերազմում կճակատամարտեն Սփեդ Ռագուր (այս.՝ սպիտակ անտառ) կոչված վայրում», — կա, որ ասում է Փարսում:

10. «Եվ երրորդը տեղի կունենա, երբ կլրանա քո հազարամյակը, Սպիտաման Ջրադաշտ, և այն երեքը՝ թուրքը, արաբը և հռոմեացին, այն տեղը կհասնեն», — որ մեկն ասում էր, թե Նիշանագ դաշտն էր: «Իմ ողջ օհրմագղական Իրան աշխարհն իր տեղից (կգնա) կհասնի Փաղիշխվարգար», — կար, որ [ասաց, թե այդ տեղը] Ադուր Գուշնասպն^{lx} է՝ խորը, տաք ջուր ունեցող և հակադիվական Չիչասթ լճում^{lxi}, որտեղ էլ հավատքը ի հայտ է եկել: Կար մեկը, ով ասաց, թե Չուկ (համաստեղությունն) է, Ադուրագն ասաց, թե Կարիճը^{lxii}:

«Հարձակման ժամանակ այնպես կլինի իմ այս օհրմագղական Իրան աշխարհում այդ կատաղածինների պատճառով, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, որ այս մարդիկ դեպի Փաղիշխվարգար և Փարս [կգնան], անցքերում բնակվող, լեռնաբնակ և ծովաբնակ կդառնան, և նրանցից քչերը կմնան: 11. Այնպես, որ եթե ամուսինը կարողանա իրեն փրկել, այլևս չի հիշի կնոջը, զավակներին և ունեցվածքը:

12. Այնուհետև ասաց Ջրադաշտը. «Արարի՛չ, ինձ մահ տու՛ր և զավակներին իմ մահ տու՛ր, որպեսզի չսպրեն այդ ծանր ժամանակներում»:

13. «Ջրադաշտ, այն օրը, երբ քո հազարամյակի վերջին հարյուրամյակը կավարտվի, ոչ մի մեղսագործ այդ հազարամյակից մյուսը չի անցնի»:

¹⁴ Հավանաբար խոսքը վերաբերում է ժամանակին:

Է.

1. Հարցրեց Ջրադաշտը Օհրմագղից, թե՛ «Օհրմա՛գղ, առատաբաշխ ոգի, նյութական աշխարհի արարիչ, առաքինի: Արարի՛չ, եթե նրանք այդքան մահաբեր են, ի՞նչ գործիքով է հնարավոր նրանց վերացնել»:

2. Ասաց նրան Օհրմագղը. «Ո՛վ Սպիտաման Ջրադաշտ, երբ կատաղածին վարսարձակ դեր երևան կգա, արևելյան կողմում սև նշան կերևա: Կծնվի Հուշիդար^{lxii} Ջրադաշտյանը Ֆրագղան^{lxiii} լճի մոտ», — կար մեկը, ով Քայանսե^{lxiv} լճի մոտ ասաց, այլ մեկը ասաց Քաբուլխսթանում^{lxv}: 3. «30 տարեկան հասակում ինձ հետ խորհրդակցության կգա, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ», — մեկն ասաց, թե՛ «Չինաստանի կողմերում», մյուսը թե՛ «Հնդկների կողմերում»:

4. «Կծնվի նաև մի թագավոր, ում հայրը արքա էր՝ արքաների սերնդից, և Հուշիդարի օգնությամբ Հնդկաստան կգնա: 5. Եվ հարյուր տարեկանում կին կցանկանա: Եվ նրանից մի հավատացյալ արքա կծնվի, որ գորավոր Վահրամ կկոչվի», — կար, որ «Շապուհ» ասաց:

6. «Այն գիշերը, երբ այն արքան աշխարհ կգա, աշխարհին նշան կտրվի՝ երկնքից աստղեր կանձրևեն: Երբ այն արքան կծնվի, աստղերը նշան ցույց կտան:», — և Դադ-Օհրմագղն ասաց, որ (դատելի կունենա) Աբան ամսվա Վադ օրը¹⁵: — «Այդ արքայի հայրը կմահանա: Արքայի կանանց մեջ կմեծացնեն (երեխային): Եվ մի կին կդառնա թագավոր: 7. Այն արքան, երբ 30 տարեկան կդառնա», — մեկը կար, որ ասաց դրա [ճիշտ] ժամանակը, — «անհամար դրոշմերով չինական և հնդկական գորքը», — որոնք դրոշմերը բարձր բռնող են, քանգի դրոշմերը բարձր են պահում: [Նրանց] դրոշմերը վեր խոյացած են, և խոյացող զենք ու զրահ ունեն, — «սլանալով կարշավեն մինչև Վեհռոտ^{lxvi} գետը», — կար, որ Բումագ գյուղն էր ասում, —

¹⁵ Կամ 8-րդ ամսվա 22-րդ օրը:

«մինչև Բալխական Բալխի^{lxvii} ափը, ո՛վ Սպիտաման Ջրադաշտ: 8. Երբ Օհրմազդ աստղը (իմա՛ մոլորակը) իր բարձրագույն կետին կհասնի և Անահիտ աստղին առաջ կգցի, իշխանությունը կհասնի այն արքային: ...¹⁶ անհամար զինված և հարդարուն դրոշներ ունեցող զնդեր են»:

9. Եվ կար, որ ասաց Սիսրանից, Փարսից ու Խորասանից, մեկ ուրիշը թե՛ Փաղիշխվարգարի ապաստարանից, կար, որ Հարևից և Քուհեստանից ասաց: Ուրիշն ասաց՝ Թաբարիսթանից:

10. «Եվ այն կողմերից մի ամմեղ¹⁷ երեխա ի հայտ կգա՝ հարդարուն դրոշներով և Փաղիշխվարգարի անհամար զորքով՝ իրանական զինվորներով, զնդերով ու զորքով», — կար, որ ասաց, թե քուրդ ու քիրմանցի կկոչվեն, հայտնի չէ [ճի՞շտ է, թե ո՛չ]:

11. «Փոխօգնությամբ և միավորվածությամբ այս Իրանական աշխարհում մեծ թվերով կսպանեն այդ շեղասպիական կատաղածիններին, լայնաճակատ հոներին, երկոտանի գայլ արարածներին և կաշվե գոտի ունեցող դևերին:

12. Արվանդի ափին երեք ճակատամարտ կանեն: Մեկը՝ Սփեղ Ռ-ագուրում^{lxviii}, մյուսը՝ Նեշանագ դաշտում^{lxix}»:

13. Կար մեկը, որ ասաց՝ երեք սերմի լճի մոտ: Մեկ ուրիշն ասաց՝ շողշողացող Մարվում^{lxx}: Մյուսն ասաց, թե՛ Փարսում:

14. «Իրանական աշխարհը պաշտպանելու համար խորասանյան¹⁸ զորքը կբարձրացնի դրոշները: Նրանք վագրի¹⁹ մորթուց կար-

¹⁶ Կարծես տեքստի մի հատված պակասում է:

¹⁷ Բնագրի այս բառը հստակ թարգմանություն և իմաստ չունի, և դժվարությամբ կարելի է կռահել իմաստը: Ռաշեղ-Մոհասսեղը կարդում է xwastār: Այդպես է կարդում և Անկլեսարիան, ով հատվածը թարգմանում է «Եվ այդ կողմերից կհայտնվեն նրանք, ովքեր կփնտրեն երեխային», մինչդեռ Չերետին կարդում է anāstār և թարգմանում է «Եվ այդ կողմերից կհայտնվի մի ամմեղ երեխա»: Հետևել եմ վերջինիս, սակայն վստահ չեմ վերջնական ճշմարտացիության վրա:

¹⁸ Կարելի է կարդալ նաև «արևելյան»:

¹⁹ Ռաշեղ-Մոհասսեղը կարդում է bēbar, այսինքն՝ ջրաշուն, մինչդեռ Չերետին տալիս է babr տարբերակը, այսինքն՝ վագր: Երկու ընթերցումն էլ հնարավոր է, սակայն գերապատվությունը տալիս եմ երկրորդին, քանի որ գրադաշտական հավատալիքներում

ված դրոշներ ունեն: Դրոշները ծածանվող են, և հագուստները՝ սպիտակ: 15. Եվ անհամար այդ գորքը կշտապի դեպի դևերի որջը և այնպես կկոտորի, որ հազար կին եթե մեկ տղամարդ տեսնի, կտենչա:

16. Երբ ժամանակն ավարտվի, թշնամիներն այնպես կվերանան, ո՛վ Սպիտաման Զրադաշտ, ինչպես ծառի բունը, երբ հասնում է ձմռան ցուրտ գիշերը, թափում է իր բոլոր տերևները: 17. Կրկին կշենացնեն իմ այս իրանական աշխարհը օհրմագդական: 18. Սլանալով կվազի Չար ոգին դևերի և այլ կատաղածիների ու արյունոտ դրոշ ունեցող Խաշմի հետ և այդ կատաղության ծնունդ եղող դիվապաշտներին օգնության կհասնի, ո՛վ Սպիտաման Զրադաշտ:

19. Եվ ես՝ արարիչ Օհրմագդս, կուղարկեմ Ներյոսանգ յազատին^{lxxi} և առաքինի Սրոշին^{lxxii} դեպի լուսավոր Սիավախշի^{lxxiii} կերտած Քանգդեզ^{lxxiv} [ամրոցը]՝ Չիհրոմահան Վշտասայանի^{lxxv} արքայական Փառքի տեր և Հավատքի բարենորոգչի մոտ, թե՛ «Ո՛վ լուսավոր Փեշյոթան, առա՛ջ գնա դեպ իմ օհրմագդական Իրան աշխարհը և ջրերի կրակով^{lxxvi} կատարիի Հադոխթն ու դվագդահ-հոմասթը»,— այսինքն՝ ջրային կրակով կատարիի այն, ինչ հայտնի է ջրային կրակի մեջ:

20. «Եվ Ներյոսանգ յազատն ու Սրոշ առաքինին Դախթիզ սրբազան գագաթից^{lxxvii} կզնան դեպի լուսավոր Սիավախշի կերտած Քանգդեզը: Եվ կգոռան, թե՛ «Առա՛ջ գնա, ո՛վ լուսավոր Փեշյոթան, Վշտասայան Չիհրոմահան, արքայական Փառքի տեր և Հավատքի բարենորոգիչ, առա՛ջ գնա դեպի իմ այս Իրանական աշխարհը օհրմագդական և վերականգնի՛ր Հավատքի և Իշխանության գահը»:

21. Եվ նրանք հոգևոր կերպարանքով կզնան ու զոհաբերության ժամանակ դվագդահ-հոմասթ կկատարեն:

22. Եվ առաջ կզնա լուսավոր Փեշյոթանը 150 առաքինի մարդկանց հետ, որ նրա աշակերտներն են և բարի հոգի ունեն ու կրում են սև սամույրի մորթուց կարված հագուստներ: Վեր կզնան Բարի

ջրաշունը սրբազնագույն կենդանի էր, որին խստով արգելված էր սպանել, թեև հավանական է, որ այս արտահայտությունն ունենա փոխաբերական բնույթ:

Մտքով, Բարի Խոսքով ու Բարի Գործով^{lxxviii}: Եվ ջրային կրակով կկատարեն Հաղոխքն ու Բաղան յասնը և կերկրպագեն ինձ՝ Օհրմագոյիս, ու ամահրասպանդներին:

23. Դրանից հետո Թշնամին կթուլանա մեկ երրորդով:

24. Առաջ կգնա լուսավոր Փեշյոթանը 150 մարդկանց հետ, որ սև ամառային մորթի են կրում, դեպի փառավոր կրակը, որ Լուսակերպ է կոչվում և դրված է կրակարանում և հաղթական Ֆարրոբայ կրակի սերմն/կյանքն²⁰ է: Եվ խմբով գոհաբերություն կկատարեն, բարսմն առաջ կպարզեն և կկատարեն Հորդաղ ու Ամորդաղ յասները՝ հավատքի նիրանգներով և Նիրանգեսքանով:

25. Եվ կթուլանա Թշնամին մեկ երրորդով:

26. Առաջ կգնա Վշտասայան Փեշյոթանը Ֆարրոբայ կրակի, Գոշնասայ կրակի և Բուրզեն-Միիր կրակի օգնությամբ դեպի այն կռատունը, որ չարագործ Չար ոգու, արյունոտ դրոշ ունեցող Խաշմի և բոլոր չարածին դևերի ու չարքերի, վիուկների մեծ բնակավայրն է: Եվ մինչև դժոխք կհասնեն: Ու կքանդեն այն կռատունը լուսավոր Փեշյոթանի դեմ պատերազմում:

27. Եվ ես՝ Օհրմագոս, ամահրասպանդների հետ Հուքերյաղ լեռ^{lxxix} կգնամ և կիրամայեմ ամահրասպանդներին, թե՛ «Ասե՛ք հոգևոր ողջ աշխարհին, թե՛ «Գնացե՛ք, հասե՛ք լուսավոր Փեշյոթանին օգնության»»:

28. Եվ լայնարձակ արոտավայրերի տեր Միիրը^{lxxx}, քաջարի Մրոշը, արդար Ռ-աշնը^{lxxxii}, հզոր Վահրամը^{lxxxiii}, հաղթական Աշթա-դը^{lxxxiii} և մագդալական հավատքի Փառքը^{lxxxiv} աշխարհը կարգավորող իշխանության ուժը, իմ հրամանով...²¹: 29. Ես՝ արարիչս, օգնության համար կգնամ լուսավոր Փեշյոթանին աջակցելու:

30. Կհարվածեն խավարածին դևերին: 31. Կաղաղակի չարագործ Չար ոգին և կասի լայն արոտավայրեր ունեցող Միիրին, թե՛ «Ուղիղ կանգնի՛ր ճշմարտության մեջ, ո՛վ դու, լայն արոտավայրեր

²⁰ Երկու ընթերցումն էլ հնարավոր է:

²¹ Անավարտ է:

ունեցող Միիր»։ 32. Այնուհետև կգոռա լայնարձակ արոտներ ունեցող Միիրը, թե՛ «Այն ինը հազար տարվա դաշինքը, որ կապեցիր, մինչև հիմա չարակրոն Դահակը, Թուրանյան Ֆրասյաբը, հռոմեացի Ալեքսանդրը և այդ կաշվե գոտի ունեցող վարսարձակ դևերը պայմանավորված ժամանակից ավել իշխանություն արեցին»։

33. Կապշի չարագործ Չար ոգին, երբ դա կլսի։ 34. Լայնարձակ արոտներ ունեցող Միիրը կհարվածի, և արյունոտ դրոշ ունեցող Խաշմը փախուստի կդիմի։ 35. Այն չարագործ Չար ոգին չարածիմների և վիժվածքների հետ կրկին դեպի դժոխքի խավարն ու մթությունը կփախչի։

36. Եվ կգոռա լայնարձակ արոտներ ունեցող Միիրը լուսավոր Փեշյոթանին, թե՛ «Հարվածի՛ր, ավերի՛ր դիվաբնակ այդ կռատունը և գնա՛ դեպի այս Իրանական աշխարհն իմ օհրմագրական և վերականգնի՛ր Հավատքի և Իշխանության տեղը։ Եվ երբ չարագործները քեզ տեսնեն, կջախջախվեն»։ 37. Եվ վրա կհասնեն լուսավոր Փեշյոթանը և հաղթական Ֆարրոբայ կրակը, Գուշնասայ կրակը և Բուրգեն-Միիր կրակը։ Կհարվածի այն ուժեղ չարքին։ Կքանդի այն կռատունը, որ դևերի որջն է։ Եվ պաշտամունք կկատարեն, բարսոմ առաջ կպարզեն, կկատարեն դվագրահ-հոմասթն ու ինձ և ամահրասպանդներին կերկրպագեն։

38. Այս եմ ահա ասում. 39. «Կհասնի լուսավոր Փեշյոթանը դեպի իմ օհրմագրական Իրան աշխարհը՝ մինչև Արանգ և Վեհռոտ, և երբ չարագործները՝ այդ անարժան խավարածիմները, նրան տեսնեն, պարտության կմատնվեն»։

Ը.

1. «Այն է հայտնի գորավոր Վահրամի վերաբերյալ, որ փառավոր կերպով կհասնի և Վիսթախամին²² ընտրելով մոգպետաց մոգպե-

²² Այս բառը որոշակի դժվարություններ է առաջացնում քարգմանիչների մոտ, քանի որ չունի հստակ ընթերցում։ Ընտրեցի Անկլեսարիայի և Չերետիի ընդունած տարբե-

տի պաշտոնում և հավատքի ճշմարիտ ու ուղիղ [իր] տեղում՝ կրկին կշենացնի իմ այս Իրանական աշխարհը օհրմագրական:

2. Ագահությունը, կարիքը, ոխը, կատաղությունը, կիրքը, նախանձն ու չարությունն աշխարհում կպակասեն: 3. Գայլի ժամանակները կանցնեն, և կգան գառան ժամանակները: 4. Ֆարրոբայ կրակը, Գուշնասպ կրակը և Բուրզեն-Միհր կրակը կրկին իրենց տեղում կդրվեն, և նրանց վառելափայտ ու անուշահոտություններ կտան: 5. Եվ զարմացած ու ապշած կմնա Չար ոգին դևերի ու խավարածիմների հետ:

6. Այսպես կասի լուսավոր Փեշյոթանը. «Թո՛ղ վերանա դևը, վերանա փերին^{lxxxv}, թո՛ղ վերանա կեղծավորության և չարության դևը, թո՛ղ վերանան խավարածին դևերը: Եվ թո՛ղ գորանա Օհրմագրը՝ իմաստուն և մեծ թագավորը, բարեստեղծ իշխանների՝ ամահրասպանդների հետ, որոնք մագրայական հավատքի փառքն են: Եվ թող լիանա մեծահոգիների, արդարների և բարի գործ անողների գետակը»: 7. Առաջ կգա լուսավոր Փեշյոթանն իր 150 աշակերտների հետ, որ սև սամույրի մորթուց հագուստ ունեն: Եվ կվերցնեն իրենց Հավատքի ու Իշխանության գահը:

8. Ասաց Օհրմագրը Սպիտաման Ջրադաշտին. «Ահա այս են ասում. երբ կավարտվի Ջրադաշտի հազարամյակը, կսկսվի Հուշիդարինը»:

Թ.

1. Հայտնի է, որ Հուշիդարը հազար վեց/ութ հարյուրերորդ²³ տարում կծնվի: Երեսուն տարեկանում ինձ հետ խորհրդակցության կգա

րակը, ովքեր այս բառն ընկալել են որպես հատուկ անուն: Մոհասսելն այն ընկալել է որպես արքայական պատվավոր նշան (խույր կամ թագ)՝ կարդալով dīdēm: Հաուզը այն հասկացել է որպես Փեշյոթանին վերաբերող մի մականուն (West: 229):

²³ K20-ը տալիս է 1600, DH-ը տալիս է 1800: Հրատարակողներից ու թարգմանիչներից Անկլեսարիան և Ռաշեդ-Մոհասսելն ընդունում են երկրորդ տարբերակը, Վեսթն ու Չերետին՝ առաջինը:

և կընդունի Հավատքը: 2. Երբ խորհրդակցությունից ետ կդառնա, կաղաղակի արագ ձիեր ունեցող^{lxxxvi} արեգակին, թե՛ «Կանգ առ»: 3. Եվ կանգ կառնի արագ ձիեր ունեցող արեգակը տաս օրով:

4. Երբ սա տեղի կունենա, աշխարհի բոլոր մարդիկ մագդայական վեհ Հավատքին կդառնան: 5. Լայնարձակ արոտներ ունեցող Միհրը ձայն կտա Հուշիդար Ջրաղաշտյանին, թե՛ «Ո՛վ Հավատքը բարեկարգող Հուշիդար, ձայն տուր արագ ձիեր ունեցող արեգակին, որ շարժվի, որովհետև խավար է Արգահ, Վորուբարշն և Վորուջարշն մայրցամաքներում և Խվանիրահի կեսում»: 6. Եվ ձայն է տալիս Հուշիդար Ջրաղաշտյանն արագ ձիեր ունեցող արեգակին, թե՛ «Գնա՛»:

7. Շարժվում է արագ ձիեր ունեցող փառավոր արեգակը: Եվ բոլոր մարդիկ հավատում են մագդայական վեհ Հավատքին:

8. Ասաց Օիրմագողը, թե՛ «Ո՛վ Սպիտաման Ջրաղաշտ, սա եմ ասիս ասում. արարածները կրկին իրենց գոյությունը կստանան:

9. Եվ երբ մոտենա հազարամյակի վերջը, Փեշյոթան Վշտասայյանը [կրկին] ի հայտ կգա: Արքայական հաղթական Փառքը նրան կհասնի:

10. Այն թշնամիները, որոնց մեջ չարն է բույն դրել, ինչպես թուրքը, արաբը, հռոմեացին և իրանական արքաներից չարագույնները, հաղթանակով, բռնակալությամբ և տերերի հանդեպ թշնամությամբ լցված կզնան և կրկին կսպանեն: Եվ Հավատքը կթուլացնեն և նրա ուժն ու հաղթությունը կստանեն: Եվ այն Հավատքը, որն ամեն մեկը կամավոր կընդունի կամ էլ ակամա, այն Հավատքն ամբողջությամբ կվերացնեն մինչև հազարամյակի վերջը:

11. Հետո, երբ Հուշիդարմահի հազարամյակը կգա, նրա ժամանակ արարածներն ավելի շարժուն և ուժեղ կդառնան, ազահածին չարերին կսպանեն, և Փեշյոթան Վշտասայյանը կրկին աշխարհի ուսուցիչն ու առաջնորդը կդառնա: 12. Եվ հուշիդարմահական այդ հազարամյակի ընթացքում մարդիկ այնպես կվարպետանան բժշկության մեջ, դեղերն ու խոտաբույսերն այնպես ի գործ կածեն, որ մարդիկ սահմանված մահով չեն մահանա, միայն եթե սրով կամ դանակով հարվածեն, սպանեն:

13. Այնուհետև մի հերձվածող իր սովորական մասն ու բաժինը [ստանալ] կուզենա, և չար լինելու պատճառով չեն տա: 14. Եվ այդ հերձվածողը, քենից դրված, վեր կելնի Դուճբավանդ լեռը և Բյուրասայի կողմը [դառնալով]՝ կռռնա, թե՛ «Արդ ինը հազար տարի է, որ Ֆրեդոնը ողջ չէ: Ինչու՞ ուրեմն դու չես արձակում այդ կապանքները և չես ելնում, երբ այս աշխարհը լի է մարդկանցով, ովքեր ջամակերտ ապաստարանից^{lxxxvii} են դուրս բերվել»:

15. Այնուհետև այն հերձվածողը մնան կերպով կռռնա: Աժդահակն այն պատճառով, որ վախ ուներ Ֆրեդոնի կերպարանքից, որ Ֆրեդոնի տեսքով իր դիմացն էր դրված, սկզբում չի արձակի, մինչև որ հերձվածողն այն փայտե կապանքները հիմքից չքանդի: 16. Հետո Դահակի ուժը կավելանա, և կապանքները հիմքից արձակելով՝ փախչելու կպատրաստվի և տեղում կույ կտա այն հերձվածողին: Աշխարհի կսլանա ոճիր գործելու համար և անհամար ծանր ոճիրներ կգործի: Մարդկանց, կովերի, ոչխարների և մնացած օհրմագրական արարածների կեսը կույ կտա և Ջրին, Կրակին ու Բույսին կվնասի և [այլ] ծանր մեղքեր կգործի:

17. Դրանից հետո Ջուրը, Կրակը և Բույսը Օհրմագր տիրակալի առջև բողոքի կգան: 18. Բողոքն այս է «Ֆրեդոնին կրկին կենդանացրու, որպեսզի սպանի Աժդահակին, որովհետև եթե դու, Օհրմագր, այդ չանես, մենք աշխարհում չենք կարողանա գոյություն ունենալ»: 19. Կրակը կասի, թե՛ «Չեմ լուսավորի», և Ջուրը կասի, թե՛ «Չեմ հոսի»:

20. Եվ դրանից հետո ես՝ արարիչ Օհրմագրս, Մրոշին և Ներյոսանգ յազատին կասեմ. «Շարժեցե՛ք Սաման Քերշասայի^{lxxxviii} մարմինը, որպեսզի արթնանա»:

21. Այնուհետև Մրոշն ու Ներյոսանգ յազատը Քերշասայի մոտ կգնան և երեք անգամ ձայն կտան: 22. Եվ չորրորդ անգամից Սամը հաղթությամբ վեր կկենա և Աժդահակի դեմ կգնա: Եվ նրանից մի խոսք էլ չի լսի և հաղթական գուրզը գլխին կխփի, կջարդի ու կսպանի:

23. Հետո չարչարանքն ու թշնամությունն այս աշխարհից կվերանան, որպեսզի հազարամյակը սկսեն:

24. Եվ հետո Սոշյանը կրկին արարածներին կմաքրի, և Հարություն ու Վերածնունդ կլինեն»:

[Վերջաբան]

Ավարտվեց խաղաղությամբ, ուրախությամբ և երջանկությամբ: Թո՛ղ լինի աստծո կամքով. այդպես և հենց այդպես թո՛ղ լինի:

Հիմնական գրականության ցանկ

1. Աբրահամյան Ռ., Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965:
2. Նալբանդյան Գ., Պահլավերեն-հայերեն բառարան, Երևան, 1994:
3. Anklesaria, B. T., Zand-i Vohuman Yasn and Two Pahlavi Fragments, Bombay, 1957.
4. Antia, E. E. K., Pāzend Texts, Bombay, 1909.
5. Anvari, Hasan, Farhang-e Kuček-e Soxān, Tehrān, 1383.
6. Cereti Carlo G., Zand ī Wahman Yasn, A Zoroastrian Apocalypse, Roma, 1995.
7. Darmesteter J., Sacred Books of the East, vol. IV, The Zend-Avesta, The Vendidad, Oxford, 1880.
8. Ferdowsi, Hakim Abu al-Qāsem, Šāhnāme, Tehrān, Peyaman, 1388.
9. MacDonell, Arthur A., Vedic Mythology, Strassburg, 1897.
10. MacKenzie, N., Concise Pahlavi Dictionary, London, 1971.
11. Modi, J. J., The Religious Ceremonies and Customs of the Parsees, Bombay, 1922.
12. Pakzad, Fazlollah, Bundahišn, Zoroastrische Kosmogonie und Kosmologie, Band I, Kritische Edition, Tehran, 2005.
13. Rashed-Mohassel, M. T., Zand-e Bahman Yasn, Tehrān, 2006 (first ed. 1991).
14. Unvālā, E. M. R., Dārāb Hormozdyār's Rivayats, vol. II, Bombay, 1922.
15. West, Edward W., SBE, vol. V, Pahlavi Texts, Oxford, 1880.
16. Williams, Alan W., The Pahlavi Rivāyat, accompanying the Dādestān ī Dēnīg, 1990.

Ծանոթագրություններ

ⁱ Օիրնագրն ավեստայական *ahura.mazdā-* (թրգմ.՝ «խմաստուն տեր») անվանման միջին պարսկական ձևն է և գրադաշտականների «միակ և արարիչ» աստծո անվանումն է: Նրան հակադրվում է Չար Ոգին կամ Աիրիմանը (*anra.mainiiu-*), որը, ի հակադրություն Օիրնագրի, չարիքի մարմնացումն է և աշխարհում ամեն չարիքի սկզբնապատճառը:

ⁱⁱ Նասրերը «Ավեստա»-ի՝ գրադաշտական սուրբ գրքի հատորներն են, որոնք, ըստ պահպանված «Դենքարդ» գրքի, 21-ն են: Սրանք իրենց հերթին ըստ բովանդակության բաժանվում էին 3 բովանդակային խմբի՝ գաթայական, իրավական և խառը: Սթուդգարը կամ Մուդգարն առաջին խմբի մեջ էր մտնում և մեզ չի հասել (*Rashed-Mohassel, Zand-e Bahman Yasn*: pp. 21-22):

ⁱⁱⁱ Հավանական է այս Արդախշերի նույնացումն Աքեմենյան Արտաքսերքսես անունը կրող արքաներից մեկի հետ:

^{iv} Խոսքը Սասանյան արքա Խոսրով Անուշիրվանի մասին է, ով իր գահակալության ընթացքում (530-570 թթ.) նշանավորվել է իր կատարած բարեփոխումներով և դրա շնորհիվ մնացել ժողովրդական հիշողության մեջ:

^v Յասնը այժմյան «Ավեստա»-ի բաղկացուցիչ մասերից (Յաշթեր, Յասնա, Վենդիդադ, Վիսպերադ և Փոքր Ավեստա) մեկն է: Այն իր էությունը գոհաբերության ժամանակ երգվող երգ կամ ձոն է, թեև բովանդակությամբ բավական բազմազան է: Այս յասները թվով 72-ն են (թեև այս թվի մեջ են մտնում նաև կրկնությունները): Սրանց մեջ են մտնում «գաթայական» կոչվող թվով 17 յասները, որոնք իրենց լեզվով ավելի հին շրջանի են պատկանում և վերագրվում են Ջրադաշտին:

^{vi} Մագդակը պատմական կերպար է, ով ապրել է Ե-Ձ դդ.: Շատ մանրամասներ այս մարդու կյանքից մեզ անհայտ են մնում, սակայն հայտնի է, որ Սասանյան Քավադ Ա արքայի ժամանակ (488-530 թթ., 490-ականներին մի քանի տարի ընդմիջումով) նա մեծ ազդեցություն է ունեցել արքունիքում և տարածել է իր առանձին կրոնական ուսմունքը: Համաձայն այդ ուսմունքի՝ մարդիկ ծնված էին հավասար և հավասար էլ պետք է կիսեին իրենց ունեցվածքը: Նրա կատարած բարեփոխումներն առաջ բերեցին գրադաշտական հոգևորականության և իրանական ազնվականության զայրույթը, և այդ պատճառով Քավադի թագավորության վերջում կամ նրա որդի Խոսրովի գահակալության սկզբում նրան մահապատժի ենթարկեցին:

^{vii} Դասթուր (պահլ.՝ *dastwar*) է կոչվում գրադաշտական հոգևորականը:

^{viii} Թվարկվածները գրադաշտական հոգևորականների անուններ են:

^{ix} Այստեղ ավելի շուտ նկատի է առնվում սրբազան գրությունները ընդհանրապես և ոչ միայն «Ավեստա»-ի յասնայի հատվածը:

^x Չանդ են կոչվում «Ավեստա»-ի միջին պարսկերենով (պահլավերեն) կատարված թարգմանությունները և մեկնությունները:

^{xi} Հենց այս յասնից է հավանաբար իր անունը ստացել այս մատյանը:

^{xii} Սրանք բոլորն էլ գրադաշտական կրոնի հետ կապված կերպարներ են: Մասնավորապես Բժշկող Ծառը օվկիանոսում գտնվող համայնի հատուկ ծառն է, որ տալիս է աշխարհի բոլոր լավ բույսերի սերմերը: Քոբադը կամ Քավադը Քայյան հարստության առաջադեպական արքաներից է: Ջուշտի (այլ կերպ՝ Յուշտի) Ֆրիանը առասպելական իմաստուն է, ում մասին է գրված համանուն պահլավական մի երկ, որտեղ

նա պատասխանում է չարագործ Ախտ-ի Ջարդգի հաներկներից: Չիհրոմեհանը կամ Փիշոթանը Ջրադաշտի հովանավոր Վիշտասպ արքայի որդին է, ում անմահություն է շնորհվել:

^{xiii} Բրադրոխշ Թուրը, որ «Քարաք» տոհմին պատկանող հինգ եղբայրներից մեկն էր, գրադաշտական կրոնի առավել բացասական կերպարներից է, ով, համաձայն գրադաշտական աղբյուրների (Wiz. Zād., IX, X), ապրել է Ջրադաշտի ժամանակ, ում մանկություն ընթացքում փորձեր է արել վերջինիս սպանելու: Այնուհետև պատմվում է, որ հենց նա է եղել Ջրադաշտին սպանողը (Rivayat: 47.23): Տվյալ դեպքում նկատի է առնվում հենց այդ փաստը:

^{xiv} Պահլավերեն՝ rist-āxēz ud tan ī passēn: Այստեղ նկատի են առնվում աշխարհի ավարտի ժամանակ մահացածների հոգիների հարությունն ու նոր կյանքը դրախտում:

^{xv} Ամեն մարդու պահապան հոգին, որ միշտ գոյություն ունի և պահպանում է մարդուն իր կենդանության ժամանակ, իսկ մահվանից հետո աջակցում է ընտանիքին, եթե վերջինս շարունակում է գոհաբերություններ անել իրեն: Հայտնի առաքինիների ֆրավակները մույնիսկ աջակցում են Օհրմագլին չարի դեմ պայքարի հարցում:

^{xvi} Ջրադաշտական աշխարհագրությունն ընդունում է յոթ մեծ մայրցամաքների (պահլ.՝ kišwar) գոյությունը, որոնց պահլավերեն անուններն են՝ Խվանիրահ (որ ամենամեծն է և բոլորի կենտրոնում), Արգահ, Սավահ, Ֆրադադաֆշ, Վիդադաֆշ, Վորուբարշն և Վորուջարշն (Bundahišn: VIII, 3):

^{xvii} Սպենդարմատ (ավեստ.՝ *spənta armaiti*) է կոչվում յոթ անմահ ոգիներից՝ ամահրասպանդներից մեկը, ով խորհրդանշում է Երկիրը, ինչի պատճառով էլ Երկիրը հաճախ այս անունով է կոչվում:

^{xviii} Սա Արդաշիր Մասանյանն է, ով 224 թ. հիմնադրել է Մասանյան թագավորությունը՝ պարթևական Արշակունյաց հարստության վերջին ներկայացուցչին՝ Արտավան Ե-ին սպանելով, և իշխել է մինչև մոտ 240 թ.:

^{xix} Շապուհ Ա Մասանյան, իշխել է մոտ 240-270 թթ.:

^{xx} Սա հռչակավոր քրմապետ Ադորթադ Մարասպանդանն է, ով հայտնի է նրանով, որ ըստ պահլավական աղբյուրների՝ իրեն կրոնական փորձության է ենթարկել՝ թողնելով, որ իր կրծքին հավված անագ լցնեն: Համաձայն գրադաշտական օրենքի՝ նա, ով կրիմանա նման փորձությանը, վտահության արժանի կլինի (Wiz. Zād., XXII, 12): Մեզ է հասել նաև նրա անունով գրված մի կարճ անդարգ-նամակ (խրատագիրք), որը հայերենի է վերածել և հրատարակել հայ պահլավագետ Յարութին Թիրեաբեանը (Նյու-Յորք, 1909):

^{xxi} Վադարշ Ա Արշակունին, որ իշխել է մ. թ. 57-77 թթ. և Հայաստանի առաջին Արշակունի արքա Տրդատ Ա-ի եղբայրն է: Նրա՝ իրանական մշակույթի վերականգնմանը նվիրված քաղաքականությունն այնքան հռչակավոր է դարձրել նրա անունը, որ այն հիշվել է անգամ Մասանյանների՝ Արշակունիների ռիսերիմ թշնամիների ժամանակ անգամ:

^{xxii} Վահրամ Գուրը Մասանյան աննահռչակավոր ու ժողովրդական արքաներից մեկն է Խոսրով Անուշիրվանի հետ միասին: Հաջորդելով հորը՝ Հագեերտ Ա-ին (399-419 թթ.), և հաղթահարելով արքունի պալատականների հակամարտությունը՝ գահ է բարձրացել 420 թ. և իշխել մինչև 438/9 թ. ընկած ժամանակահատվածում: Հերոս է իր

մասին պատմվող բազմաթիվ հեքիաթախառն գրույցների, որոնք տեղ են գտել հետագա պարսիկ դասական հեղինակների երկերում (ինչպես Նիզամի Գանջավու «Հաֆթ փեյքար» չափածո գրույցների շարքում):

^{xxiii} Չրադաշտական սրբազան կրակատեսակներից ամենակարևորը, որն օգտագործվում է երկրի վրա՝ կրակարաններում:

^{xxiv} Յոթ ամահրասպանդներից մեկը (իզական), որ ներկայացնում է մայր երկիրը: Հայտնի է նաև հայ առասպելաբանության մեջ որպես *Մանդարանիկ*:

^{xxv} Չրադաշտականության հավատալիքների մեջ է մտնում հողի, ջրի, կրակի սրբազան մաքրության հասկացությունը, ինչը միաժամանակ զուգակցվում է մարդկային դիակը պիղծ համարելու համոզմամբ (քանի որ այն արդեն ահրիմանական չար դեերի բնակարան է դարձել), ինչի պատճառով հնում խստիվ արգելված էին դիակ թաղելը, այրելը կամ ջրի մեջ թողնելը: Դրա համար գրադաշտականները բնակավայրերից որոշակի հեռավորության վրա հատուկ պարսպապատ շրջանաձև շինություններ (daxmag, دخمه) էին կառուցում, որտեղ իրենց դիակները թողնում էին թռչունների և վայրի կենդանիների հոշոտմանը:

^{xxvi} Մրանք համապատասխանաբար կատաղության և ազախության դեերն են:

^{xxvii} Ամեն գրադաշտական պարտավոր էր 15 տարեկանից, այսինքն՝ չափահասությունից հետո կրել այս սրբազան գոտին, որ հյուսված է 72 թելերից և հանձնվում է հատուկ արարողության ժամանակ: Հայտնի է նաև «քութիզ» անվանումով (տես Modi 1922: էջեր 183-184):

^{xxviii} Կրոնական որոշ ծիսակատարությունների համար օգտագործվող ճյուղերի խորց (նախապես՝ baresma), որին մեծ դեր էր հատկացվում այդ ծիսակատարությունների (հատկապես բաղնուով՝ ծիսական մաքրագործման արարողության) ժամանակ: Հետագայում այն ձևափոխվեց, և ճյուղերի փոխարեն սկսեցին օգտագործվել երկաթյա ձողեր (Darmesteter, Vendidad: p. 22):

^{xxix} Սրբազան հաց, որ օգտագործվում էր արարողության ժամանակ:

^{xxx} Այս գոհաբերությունը, համաձայն Մոդիի (p. 266), կատարվում է հենց երկու մարդու մասնակցությամբ, սակայն հավանաբար հնում դա ընդունված չի եղել:

^{xxxi} Ներանգեսթան է կոչվում ծիսական աղոթքների՝ ներանգների ժողովածուն:

^{xxxii} Այստեղ իմաստն այն է, որ կրոնական որոշ սովորություններ և դրույթներ խստապահանջությունը կնվազեն կրոնի անշքության ու մարդկանց աղքատության պատճառով:

^{xxxiii} Կենդանիները գրադաշտականության մեջ բաժանվում են երկու խմբի՝ օհրմագդական և ահրիմանական, այսինքն՝ չար և բարի: Բնականաբար առաջին խմբի մեջ են ներառված տնային կենդանիները և այն կենդանիները որոնք կրոնական կարևոր նշանակություն ունեն: Այդպիսիք են կովը, ոչխարը, ձին, աղվեսը, սամույրը և այլն: Երկրորդ խմբի մեջ են ներառված թունավոր, վնասատու, գիշատիչ և կրոնական բացասական դեր ունեցող միջատները, սողունները, երկկենցաղները և զագանները՝ կարիճը, օձերը, գորտերը, կրիաները, գայլերը և այլն:

^{xxxiv} Հոգևոր էակները բաժանվում են երեք խմբի՝ ամահրասպանդներ (թվով յոթը, որոնցից առաջինն է Օհրմագդը), յագատներ (որոնք ներառում են նախկին հնդեվրոպական աստվածներին և որոնցից ամեն մեկն ունի որոշակի պաշտոն, ինչպիսիք են

Միիրը, Մրոշը, Ներյոսանգը, Ռաշնը և այլն) և ֆրավահրներ, որոնք մեր հասկացողությանը համապատասխանում են մարդկանց պահապան հրեշտակներին:

^{xxxv} Գահանբարները տարվա ընթացքում վեց անգամ կատարվող տոնակատարություններն էին, որ տևում էին հինգ օր և նախատեսված էին հանգստյան համար: Գահանբարների անուններն են՝ maiδyōi zarəmayā, maiδyōi šam, paitiš.hahya, ayāθrima, maiδyāirya, hamaspaθmaēδaya: Դրանց նշանակության բացատրությունն ուշ շրջանի քրմերի կողմից տրվում էր որպես աշխարհի արարչության վեց փուլերը նշելու համար նախատեսված տոնակատարություններ, մինչդեռ, ինչպես ենթադրում է Վ. Գայգերը, դրանց անուններից երևում է, որ սկզբնապես նախատեսված էին որպես երկրագործական-անասնապահական տոներ, օրինակ՝ paitiš.hahya – բերքահավաքի ժամանակը, ayāθrima – անասունների՝ տուն վերադառնալու ժամանակը (Geiger: p. 148-150, տես նաև Encyclopaedia Iranica, Boyce M., Gāhānbar: <http://www.iranicaonline.org/articles/gahanbar>):

^{xxxvi} Ֆրավարդիգանը մահացածների հիշատակին նվիրված տոնակատարություն էր, որ նշվում էր տարվա վերջին տասնօրյակի ընթացքում և համընկնում էր hamaspaθmaēδaya գահանբարի հետ: Այն հավանաբար ընկնում է մեր տարվա մարտ ամսվա մեջ, քանի որ տարվա սկիզբը համարվում էր զարնանային գիշերահավասարը: Տոնակատարության արմատներն ընկնում են դեռևս նախագրադաշտական հավատալիքների ձևավորման ժամանակաշրջանում, ինչը կարող ենք եզրակացնել նրա՝ ակնհայտորեն նախնիների պաշտամունքի հետ կապված լինելուց: Ավելի մանրամասն տես Encyclopaedia Iranica, W. W. Malandra, Frawardīgān, <http://www.iranicaonline.org/articles/frawardigan->:

^{xxxvii} Ուտարբիկ կամ մեկ կոշիկ հագած քայլերը դրսում հանցանք էր համարվում:

^{xxxviii} Հյուսիսում է գտնվում դժոխքը:

^{xxxix} Թյուրքախոս ժողովուրդը, որ Ա հազարամյակի վերջին և Բ հազարամյակի սկզբին ապրում էր Կասպից ծովի հյուսիսային ափերին և ուներ իր առանձին պետությունը, որտեղ հուդայականությունն էր պետական կրոնը: Կասպից ծովի պարսկական անվանումը՝ daryā-ye xazar (Խազարական ծով) գալիս է հենց նրանց անունից: Թեև այստեղ հավանաբար հենց խազարներն են նկատի առնված, բայց վերջիններս առանձնապես աչքի չեն ընկել գրադաշտական Իրանի վրա հարձակումներ գործելով, ինչպես և հաջորդիվ նշված որոշ ժողովուրդներից, ինչը, ըստ ամենայնի, պարտադիր պայման չէր այս ցուցակում հայտնվելու համար:

^{xl} Այս անվանման գրությունը՝ twbyr', թեև հայտնի եղած ազգերից համապատասխանում է հենց տիբեթականին, սակայն տարօրինակ է ընդհանրապես որևէ պարսկական աղբյուրում հիշատակություն գտնել այս ազգի վերաբերյալ: Առավելապես ամենափոքր դա կարելի էր սպասել նման գրադաշտական աշխատության մեջ: Այդ տարակուսանքի աղբյուր են համարվում մի քանի մեզ հայտնի փաստեր: Նախ՝ տիբեթական ազգը բացառապես ոչ մի անմիջական առնչություն չի ունեցել արևմտաիրանական ազգերի և առավելապես գրադաշտական կրոնի հետ: Նրա կազմավորումն ու վերելքը վերջնական հաշվով ընկնում են Է-Ը դդ., երբ այժմյան Տիբեթի տարածքում բնակվող ժողովուրդները և ցեղերը միավորվեցին «ցանաթ» կոչվող առաջնորդի դրոշի տակ և սկսեցին հարձակումներ կատարել շրջակա պետությունների վրա: Այնուամենայնիվ Սասանյան պետության գոյության ընթացքում նրանք

առանձնապես նշմարելի արդյունքների չհասան է միայն է դարի վերջից սկսած մինչև Ը դարի կեսերը և ավարտն ընկած ժամանակաշրջանում, այսինքն՝ երբ Իրանում տիրապետում էին արաբական խալիֆները, կարողացան հասնել իրենց հզորության գագաթնակետին: Դրանից հետո նրանք այլևս միջազգային խոշոր քաղաքականության ասպարեզ չնտան (տե՛ս Գյուլես: գլուխ XIX): Այսպիսով՝ թեև այս հատվածում «տիրեթցիներ» անվան հայտնվելը բացարձակ անհերքության արդյունք չի կարող լինել, բայց մեզ ստիպում է կատարել որոշ ենթադրություններ, որոնք վերաբերում են տեքստի կազմավորման և խմբագրությունների ժամանակին: Ինձ հավանական թվացող միակ եզրակացությունն այս հատվածից այն է, որ տեքստի ենթադրյալ խմբագրություններից մեկը կատարվել է հավանաբար Ը դարում:

^{xli} Կարմիր հագուստներ հագնող հոռներ ինձ հայտնի չեն, մինչդեռ «սպիտակ հոռներ» անունն են կրել Միջին Ասիայի պատմության մեջ խոշոր պատմական դեր խաղացած հեվիթադները: Վերջիններս պատմական ասպարեզ մտան հատկապես Ե դարի սկզբից, երբ Բահրան Գուր արքան նրանց կարողացավ պարտության մատնել, բայց նրա հաջորդները շարունակաբար գոհ դարձան վերջիններիս դեմ մղած պատերազմներին: Հենց նրանք են հայոց պատմության մեջ նշված «քուշանները» (Եղիշե), որոնց դեմ պատերազմի էր տարվում հայոց այրուծին, և որոնց դեմ պատերազմում ջախջախիչ կերպով պարտվեց ու սպանվեց Պերոզ արքան (Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջեր 374-378):

^{xlii} «Ավեստա»-ի պահլավերեն լեզվով գրված թարգմանությունները և մեկնաբանությունները:

^{xliii} Բառը ծագում է ավեստ. *paiti.zainti-* արտահայտությունից, որ մոտավորապես նշանակում է «մեկնաբանությունների վրա [հավելված]»: Այս արտահայտությունն օգտագործվում է՝ նշանակելու համար այն տեքստերը, որոնք գրված են ավեստերենի այբուբենով, սակայն միջին պարսկերենով (պահլավերենով): Նրանց հիմնական տարբերությունը պահլավական տեքստերից սակայն այն է, որ այս ուշ շրջանի տառադարձությունները չեն ներառում հուզվարեշը (արամեական լեզվից փոխառյալ բառ-գաղափարագրեր, որոնք օգտագործվում էին պահլավական տեքստերում և բարդացնում դրանց ընթերցումը):

^{xliv} Երկուսից առաջինը մի հատված է ԼԷ յսանից և պարունակում է «այսպես երկրպագում են Ահուրա Մազդային, որ արարեց կովերին և ճշմարտությունը: [Ով] արարեց ջրերը, արարեց լավ բույսերը և լուսավորությունը, երկիրը և ամեն բարիքը» (Rashed-Mohassel, Zand-e Bahman Yasn: p. 34): Երկրորդը գրադաշտականության երեք կարևորագույն աղոթքներից մեկն է (մյուս երկուսն են՝ *yaθā ahu vairiōd* և *yerihē hātəm*), թեև դրա թարգմանությունը որոշակի դժվարություն է ներկայացնում: Ահա մոտավոր թարգմանությունը՝ հենց Ռ-աշեդ-Մոհասսեղ գրքում ներկայացված (թեթև փոփոխությամբ)՝ «Ճշմարտությունը լավագույն բարիքն է, ցանկալի է, ցանկալի է այն մարդու համար, ով լավագույն ճշմարտության ցանկացողն է»:

^{xlv} Դ-վազդահ-հոմասթը կրոնական արարողություն է, որի բուն անունն է *homāst* կամ *hamā-yāšt*, այսինքն՝ «պաշտամունք բոլոր [յագատներին]»: Համաձայն Մոդլի՝ այն նախատեսված է կանանց մեղքերին թողություն տալու համար, այն ենթադրությամբ, որ նրանք հավանականորեն որոշակի զանցանքներ կատարած կլինեին իրենց դաշտանի ժամանակ՝ կապված մաքրության հետ, քանի որ գրադաշտականները հատկա-

պես ուշադրություն էին դարձնում այդ կետին և դաշտանը համարում էին մի շրջան, երբ բոլոր մարդիկ պետք է խուսափեին կանանց հետ որևէ առնչություն ունենալուց՝ անմաքրություն ձեռք չբերելու համար: Տարբերվում են երկու հոմասք/հոմայաշք՝ մեծ և փոքր, որոնցից մեծը պետք է տևեր 144 օր: Այդ օրերի ընթացքում ընթերցվում էին համապատասխանաբար 144 հատված «Ավեստա»-ի յասներից և «Վեմդիդադ»-ից՝ նվիրված տասներկու յագատներին, ինչի պատճառով այս տեքստում այն կոչված է դվագրահ (տասներկու)-հոմասք (Modi: pp. 431-433):

^{xlvi} Գաթաներ (ավեստ.՝ gāθā-) են կոչվում «Ավեստա»-ի հնագույն հատվածները, որոնք իրենց լեզվով ավելի հին են, քան մեզ հասած «Ավեստա»-ի այլ հատվածները: Միաժամանակ դրանք իրենց որոշակի ոճական յուրահատկություններով դեռևս «Ավեստա»-ի ուսումնասիրման վաղ փուլում արդեն համարվել են «Ավեստա»-ի հնագույն հատվածը, որ ենթադրաբար կարող էր կազմված լինել հենց Ջրադաշտի կողմից, տե՛ս Haug, Essays, էջեր 142-167:

^{xlvii} Ջրադաշտականների մոտ մախկինում ընդունված էին ներագգակցական ամուսնությունները (xwēdōdah), որոնք կրոնական գաղափարախոսության կողմից մուլմիսկ խրախուսվում և առաքինի արարք էին համարվում: Այժմ հասկանալի պատճառներով այդ սովորությունը վերացել է:

^{xlviii} Նկատի ունի աշխարհի արարման սկզբում Օհրմագրի և Ահրիմանի կապած պայմանը, համաձայն որի՝ բարի և չար ուժերի համար մախատեսված է պայքարի 9000-ամյա շրջան, որի վերջում էլ հասնելու են Օհրմագրի հաղթանակը և մեռյալների հարությունը:

^{xlix} Այստեղ հիշատակվող երկու անունները պատկանում են Իրանի առասպելական երկու ամենասեղ թշնամիներին: Դրանցից Ֆրասպարի մասին տե՛ս հաջորդ ծանոթագրությունը: Աժդահակի կերպարը և անունը մուլմանում է «Շահնամե»-ի ضحاک -ի (dahāk) հետ, որ հետագայում տարրընթերցման պատճառով սկսել է արտասանվել Չոհակ, այսինքն՝ արաբական զ-ն, որ հնչողությամբ նման է η հնչյունին, սկզբում գրվել է պահլավական dahāg-ի ժ-ի փոխարեն և հետագայում պարսկերենում սկսել է արտասանվել որպես q (ինչպես արաբական մյուս «q»-երը՝ ق, ك, گ): Այսպիսով էլ անցում է կատարվել dahāg > zahāk > zohāk (նույն բացատրությունն ունի Գայոմարտ > Քեյոմարտ ձևափոխումը): Բուն կերպարը և՛ «Շահնամե»-ում, և՛ պահլավական աղբյուրներում մուլմն է: Այսինքն՝ Աժդահակ անունով «անձը» հանդես է գալիս որպես Ահրիմանի կողմից ուղարկված մի բռնապետ, որ արքայական Փառքը (xʷarənah) կորցրած Ջամից (Ջամշիդ < ավեստ.՝ yima xšaēta՝ «շողացող Յիմա», այստեղ՝ առասպելական Փիշդադյան տոհմի վերջին և ամենանշանավոր արքան) խլում է իշխանությունը և իշխում է հազար տարի՝ մինչև գահընկեց չի արվում հայտնի հերոս և Քայյան արքայատոհմի հիմնադիր Ֆրեդրնի (Մորենացի՝ Հրուրեն) կողմից, ով, չկարողանալով նրան սպանել, բանտարկում է Դամավանդ լեռան վրա:

Իրականում Աժդահակի կերպարի և անվան արմատներն ավելի խորն են և հասնում են մինչև հնդեվրոպական առասպելաբանություն: Այստեղ Աժդահակը, որի անունը ծագում է ավեստ. aži.dahāka անվանումից (առաջին մասը նշանակում է «օձ», որի հետ մուլմն ծագումն ունի, իսկ երկրորդի իմաստը հստակ չէ), հանդես է գալիս որպես երաշտի պատճառ հանդիսացող երկնային վիշապ, որ ետ է պահում ամպերը և չի թողնում նրանց անձրև թափել երկրի վրա: Վերջինիս հաղթում է Թրանեստոնան

(θraētaona > Frēydun) կամ Ինդրա – Վըրըթրադնան (ինչպես վեդայական առասպելաբանության մեջ), որը ամենայն հավանականությամբ կայծակի մարմնավորումն է (MacDonell: p. 68-69): Վերջիններիս «մարդկայնացման» գործընթաց անժանոթ երևույթ չէ իրանական առասպելաբանության մեջ, ավելին՝ կազմում է վերջինիս գլխավոր հատկություններից մեկը, ինչի շնորհիվ էլ գոյություն է ստացել համաշխարհային ճանաչում ունեցող «Շահնամե» էպոսը, որի Ջամշիդը, Հուշիդարը, Ֆերեյդունը, Քեյումարսը և շատ այլ արքաները մմանատիպ կրոնաառասպելական ծագում ունեն:

¹ Ֆրասյաբը կամ Աֆրասյաբը ուշ աղբյուրներում, ինչպիսիք են պահլավական աղբյուրները և «Շահնամե»-ն, իրանցիների հավերժական հակառակորդ թուրանցիների արքան է, որ սերում է Ֆրեդոնի Թուր որդուց: Նրա գահակալության ժամանակը հստակ նշված չէ, և այնպիսի տպավորություն է ստեղծվում աղբյուրների տված տեղեկություններից, որ նա կարծես անընդհատ կանգնած է թուրանցիների իշխանության գլխին: Սակայն նա ևս մեծ հավանականությամբ գլխավորապես առասպելական ծագում ունի, և երաշտի ու ծարավի դևն է, ինչը հավանաբար ապացուցում է հենց նրա անունը, որը Բենվեհիստի առաջարկած ստուգաբանությամբ (որ պաշտպանում է նաև E. Yarshater-ը) գալիս է ավեստ. *frahrasyān* ձևից և ունի «անհայտացնող» (սանս. *sras*- արմատից) նշանակությունը: Դրան կարելի է ավելացնել Յաթրաբերի ենթադրած *Frahrasyāpa* ձևը, որ ունի «ջրերը անհայտացնող» իմաստ (E. Yarshater, “Afrāsāb”, *Encyclopaedia Iranica*, <http://www.iranicaonline.org/articles/afrafiab-turanian-king>):

ⁱⁱ Փաղիշխվարգար ամենայն հավանականությամբ Ալբորգ լեռնաշղթայի անվանումն է, որ բաժանում է Կասպից ծովի մերձափնյա շրջանները մնացած Իրանից: Դրանից էլ այդ լեռնաշղթայից այն կողմ ընկած անտառապատ երկրները կոչվել են նույն անունով: Այդ մասին են վկայում «Էրանշահրի քաղաքները» (*Šahrestānhā ī Ērānšahr*) փոքրիկ պահլավական աշխարհագրական աշխատության 28-29 պարբերությունները, որտեղ Դեմավենդ լեռը և Փաղիշխվարգարն իրար մոտ են նշված, և «Բունդահիշն»-ում (IX, 20) հանդիպող այս նախադասությունը. «Փաղիշխվարգար լեռը այն է, որ գտնվում է Թաբարեսթանի, Գիլանի ու դրանց շրջանում», որտեղ Թաբարեսթանն ու Գիլանը համապատասխանում են այժմյան Իհ-Հ-ի Մազանդարան և Գիլան նահանգներին:

ⁱⁱⁱ Հավանաբար խոսքն աշխարհի ավարտին տեղի ունենալիք հանգույալների Հարության և այդ Հարությունն իրականացնելու համար հավաքված առաքիլնի երիտասարդների մասին է, ովքեր պետք է օգնեն Մոշյանսին՝ փրկելին:

ⁱⁱⁱⁱ Ֆրեդոնը կամ Ֆրեյդունը Չոհակից հետո իշխանության գալուց և հինգ հարյուր տարի իշխելուց հետո իր երկիրը բաժանել էր երեք որդիների միջև, ովքեր էին Իրաջը (պահլ. *Ērēz*), ով ստացավ Իրանը, Թուրը (պահլ. *Tūz/Tūr*), ով ստացավ Թուրանը կամ Իրանից արևելք ու հյուսիս ընկած երկրները, և Սալմը, ով ստացավ արևմուտքը (شاهنامه: فریدون, V): Այսինքն՝ այստեղ նկատի են առնվում Հոմեր և արևմտյան երկրները:

^{lv} Շեղասպիական անվանման իմաստն այդքան պարզ չէ, և հստակ եզրակացություն չկա վերջինիս նշանակության վերաբերյալ: Պիլ. Šēd նշանակում է «վառ, շողոշողուն», իսկ *asp*՝ «ձի»: Այսինքն՝ «շեղասպիական» կարելի է քարզմանել «վառ գույնի ձիեր

ունեցող»։ Անհասկանալի է սակայն, թե ինչ նշանակություն ունի այս ամսական այստեղ։ «Քրիստոնեական» են քարգմանել kilisayig բառը, որ ծագում է հուն. էկլեսիա՝ «հավաքատեղի, եկեղեցի» բառից։

^{lv} Այստեղ շատ հավանական է, որ խոսքը խաչակիրների մասին է։ Հստակորեն կարելի է նկատել, որ այլ եվրոպական առաջխաղացում արևելքում տեղի չի ունեցել։ Այս կարծիքն է հայտնում նաև Գարմատետերը (*Études Iraniennes*: vol. II, p. 69)։ Այսպես՝ կարելի է եզրակացնել, որ աշխատությունը վերջնական տեսքի է բերվել ամենայն հավանականությամբ ԺԲ դարում։

^{lvi} Պահլավական տեքստերում մոլորակները հանդես են գալիս որպես Արիմանի ծառաներ, որոնք վերջինիս մեծ Հարձակման ժամանակ շարժման մեջ են դրվել և պատրաստել անշարժ աստղերի և բարի արարածների դեմ պայքարելու համար (*Bundahišn*: IV, 27)

^{lvii} Ամենայն հավանականությամբ այստեղ նկատի է առնվում հենց Տիգրիս գետը, որ իր հիմնական Diglit անունից բացի այս անունով է կոչվում Wizdagīhā ī Zādaspram-ում (III, 22 և XXXIV, 10)։ Այս եզրակացությանը հանգեցրին նպատառում է նաև տեքստի այս հատվածի բովանդակությունը, թեև *Bundahišn*-ը Արանգը ներկայացնում է որպես Եգիպտոսի Նեղոս գետը (XI A, 1)։ Ամենայն հավանականությամբ, սակայն, Արանգն առասպելական կամ մախապատմական գետ է, որ հետագայում զրադաշտական հոգևորականներն ու աշխարհագրագետները փորձել են նույնացնել իրենց հայտնի ինչ-որ գետի հետ։

^{lviii} Հայտնի հակասական արքայական կերպար, ով Միավուշի հայրն է ու Քայ-Հուրավ/Խորսրովի պապը։ Տե՛ս «Շահնամն», նույնանուն գլուխը։

^{lix} Վիշտասպի ու Ջրադաշտի արյունաբերու թշնամին, խլոնների արքան, որ զրադաշտականությունից հրաժարվելու պահանջ է ներկայացնում Վիշտասպին և մերժվելով՝ նրա դեմ պատերազմի է ելնում (ինչի մասին տե՛ս *Ayādgar ī Zarērān* պահլավական երկը)։

^{lx} Երեք սրբազան կրակներից մեկը, որ խորհրդանշում էր արքայական և զինվորական դասակարգը։ Գտնվում էր Ատրպատականում։ Մյուս երկուսն էին Ադուր Ֆար-րոբայը (քրմական կրակը) և Ադուր Բուրզեն-Միիրը (գյուղացիների և աշխատավորների կրակը՝ Խորասանում) (*Bundahišn*: XVIII, 8-13)։

^{lxi} Ուշ ժամանակներում նույնանուն էր Ուրմիո լճի հետ։

^{lxii} Ջրադաշտական երեք մարգարեներից առաջինը, որ գալու է Ջրադաշտից հազար տարի հետո։

^{lxiii} Բառը նույնն է, ինչ Հրագդան։ Սակայն դրանց նույնացումը հնարավոր չէ, և այդպիսով այս լճի տեղադրությունն անհայտ է։

^{lxiv} Ջրադաշտականության մեջ ընդունված է, որ Ջրադաշտի սեբըն կպահվի այս լճում, որից հերթով՝ ամեն մեկն իր հազարամյակի սկզբին, կծնվեն Հուշիդարը (Ջրադաշտի հազարամյակից հետո), Հուշիդարմահը և Սոշյանսը, և որոնցից վերջինի հիսուն և յոթերորդ տարում կավարտվի մահացած մարդկանց Հարությունն ու Վերածնունդը։

^{lxv} Այժմյան Աֆղանստանի տարածքում, ինչպես հայտնի է Քաբուլ քաղաքի անունից։

^{lxvi} Թարգմանվում է որպես «բարի, լավ գետ»: Առասպելական գետ է Արանգի հետ միասին, որի պես ունի անորոշ տեղադրություն և գտնվում է «արևելքի կողմում»: «Բուռնահիշն»-ը նույնացնում է Հինդոսի հետ (գլուխ XI A, 2):

^{lxvii} Նախորդ թարգմանիչները տալիս են տարբեր ու անորոշ բացատրություններ այս տեղանվան վերաբերյալ (Cereti: p. 205): Բալխը հայտնի իրանական քաղաք է, որ գտնվել է այժմյան Աֆղանստանի հյուսիսային հատվածում՝ Մազար-է Շարիֆ քաղաքին մոտ: Սակայն այստեղի հատվածում գրված է b'hl b'hl'n: Իմ կարծիքով՝ այստեղ նկատի է առնվում Բալխ քաղաքի մոտ հոսող նույն գետը, և հատվածը պետք է թարգմանել «բալխական Բալխ [գետի] ափը»:

^{lxviii} Այս տեղում է ենթադրվում, որ տեղի է ունեցել զրադաշտական արքա Վիշտասպի և զրադաշտականության թշնամի Արջասպի ճակատամարտը:

^{lxix} Անհայտ մի վայր:

^{lxx} Այս անունով է կոչվում մի հռչակավոր քաղաք և նրա շուրջը տարածվող օազիսը, որի ավերակներն այժմ գտնվում են Թուրքմենստանի հարավ-արևելքում՝ իրանական սահմանին մոտ:

^{lxxi} Օհրմագոական սուրհանդակ յազատը:

^{lxxii} Առաքինի Սրոշ կամ Տրօժ-ahlaw: Չրադաշտական կարևոր յազատներից մեկը, որ օժտված է մեծ զորությամբ և որպես պարտականություն իր համար ունի աշխարհի պահպանությունը: Ավեստերենով անունն արտասանվում է Sraoša, որ մոտավորապես թարգմանվում է «հնազանդություն» և հանգում է √sru («լսել») արմատին (Rashed-Mohassel, Տրօժ Yasn: pp. 9-18):

^{lxxiii} Սիավախշի կամ Սիավուշի կերպարի մասին մեզ առավել մանրամասն տեղեկություն է տալիս «Շահնամե»-ն, որտեղ նա Քայ Քավուսի որդին է, ով, խորք մոր զրպարտության պատճառով հետապնդվելով հոր կողմից, հեռանում է Թուրան և ընդունվում Աֆրասյաքի մոտ: Որոշ ժամանակ անց, սակայն, նա հենց նույն Աֆրասյաքի կողմից սպանվում է՝ թողնելով արու ժառանգ, ով էլ հետագայում դառնում է արքա (Քայ Խոսրով) և առնում հոր վրեժը:

^{lxxiv} Քանգոեզը Սիավուշի կառուցած առասպելական ամրոց է ինչ-որ մի տեղ Թուրանում:

^{lxxv} Այսպես է կոչվում Վիշտասպ արքայի որդիներից մեկը, ով առավել հայտնի է նաև որպես Փեշյոթան: Նա Օհրմագոի կամքով անմահ է դարձել, որպեսզի հետագայում աշխարհի բարեկարգման գործում ծառայություն մատուցի Չրադաշտի որդիներին: Նրա մասին առավել շատ տե՛ս տեքստի շարունակության մեջ:

^{lxxvi} Հատվածը բավականին խրթին իմաստ ունի: Իմ կարծիքով՝ այստեղ նկատի է առնվում կրակների հինգ տեսակներից մեկը՝ Վազիշթը (wāzišt), այսինքն՝ այն մեկը, որ գտնվում է ամպերում (կայծակը) (Bundahišn: XVIII, 2):

^{lxxvii} Այն առասպելական լեռը, որը, ըստ «Բուռնահիշն»-ի (IX, 9), գտնվում է աշխարհի կենտրոնում, և որտեղ գտնվում է առասպելական Չինվադ կամուրջը, որը հանգուցյալների ճանապարհն է դեպի հոգևոր աշխարհ կամ դրախտ, և որը չանցնողներն ընկնում են դժոխք:

^{lxxviii} Չրադաշտական կրոնի երեք հիմնական սկզբունքները, որոնք մարդու ճշմարիտ գործունեության սկզբնարմատն են:

^{lxxxix} «Բուճնդախիջն»-ում գրված է. «Հուգար լեռը այն է, որից ցած են թափվում Արդվիտուրի ջրերը՝ հազար մարդահասակ բարձրությունից» (IX, 7):

^{lxxx} Կարևորագույն յազատներից մեկը, որ դեռևս հնդիրանական ժամանակներից եղել է արեգակի աստվածությունը, կամ, ըստ ավանդության, նա, ով վարել է արեգակի բառածի կառքը: Կոչվում է նաև «յայնարձակ արտավայրերի տեր»:

^{lxxxix} Եվս մի կարևոր յազատ, որն ունի մարդկանց գողերից ու չարագործներից պահպանելու գործառույթ (Rashed-Mohassel, Bahman Yasn, p. 44):

^{lxxxii} Ավեստերենում կոչվում է vərəθraϥna: Հանդես է գալիս որպես հաղթանակի յազատ և ռազմիկների հովանավոր: Համարմատ է հայկական առասպելաբանության մեջ հայտնի Վահագն աստծո հետ:

^{lxxxiii} Աշթադ (Aštād): Իգական յազատ, որի մասին առանձնապես շատ տեղեկություն չեն տալիս պահլավական աղբյուրները: «Բուճնդախիջն»-ը այն հատվածներում, որտեղ տալիս է նրա անունը, նրան հիշատակում է Ռաշն (Rašn) և Չամյադ (Zāmyād) յազատների հետ՝ որպես իգական Ամորդադ («անմահություն») ամահրասպանդի օգնական (III, 22): Նրա հիմնական գործառույթը հոգիների դատաստանի ժամանակ, ինչը տեղի է ունենում Չինվադ կամուրջի մոտ, նրանց լավ ու վատ գործերի կշռելն է նժարների վրա (XXVI, 124): Նաև կոչվում է կենդանի մարդկանց և հոգիների ճանապարհացույց (XXVI, 122):

^{lxxxiv} Ընդհանրապես գրադաշտականության մեջ հատուկ տեղ ունի այս հասկացությունը, որ պահլավերենում կոչվում է xwarrah (ավեստ.՝ Xʷarəna), թեև մեր պատկերացումների համակարգում դժվար է գտնել դրան համապատասխանող մի հասկացություն՝ միտքը ավելի լավ բացատրելու համար: Այն ունի աստվածային էակների և երկրի վրա իշխող արքաների որոշակի բարոյական ուժի իմաստ, որ դրանց գործունեության համար կարևոր նպաստավոր դեր է կատարում: Հատկապես կարևորվում էր արքաների «փառքը», որն օրինական արքայից ժառանգաբար փոխանցվում էր իր հաջորդին, և միայն դրա կրողը կարող էր մնալ գահի վրա: Չրադաշտական պատկերացումների համաձայն՝ առաջինն այն ստացել էին Փիշդադյան առասպելական արքաները, որոնցից այն անցել էր Քայյան արքայատոհմի հիմնադիր Ֆերեյդունին և վերջինին սերունդներին: Հետագայում իշխանության եկած Սասանյանները պաշտոնապես ընդունեցին իրենց՝ Քայյան արքաներից ծագելու առասպելը, ինչի շնորհիվ փորձեցին ապացուցել, որ արքայական Փառքն իրենց ժառանգությունն է: Այս համոզմունքն այն աստիճան մեծ ազդեցություն ուներ ժամանակակիցների վրա, որ բավական երկար ժամանակ ոչ ոք չէր հանդգնում հավակնել արքայական գահին, եթե նա Սասանյան չէր: Այդ պատճառով էլ հետագայում (իսլամի տարածումից հետո), երբ Բաղդադի խալիֆի թուլացումից հետո առաջ եկան իշխանության հավակնող բազմաթիվ իրանական արքայատոհմեր, արևելքում այդքան կարևորվում էր իշխողների ծագումնաբանությունը, որն ազատորեն կեղծվում էր: Որպես օրինակ կարելի է բերել Մաֆարյան արքայատոհմի հիմնադիր Յահյուբ իբն Լայսի ծագումնաբանությունը, որտեղ նրա ծագումը տարվում է մինչև Սասանյանները, այնուհետև Քայյանները, Փիշդադյանները և վերջ ի վերջո Քեյումարս (تاریخ سیستان: ۲۰۸-۲۰۷ ص):

^{lxxxv} Չար իգական ոգիներ:

^{lxxxvi} Այսպիսի տիտղոսների շնորհումն աստվածներին շատ տարածված էր հնդեվրոպական հին գրականության (ոչ գրավոր) կոթողների մեջ, ինչպիսիք էին Վեդաները,

«Ավեստա»-ն և «Իլիական-Ոդիսական»-ը: Ինչպես վերևում երևաց, նմանատիպ մականուն ուներ նաև Միիրը («լայնարձակն արոտավայրեր ունեցող»):

^{lxxxvii} Պահլ.՝ war ī jamkard: Մի առասպելական ամրոց, որ կառուցված էր առասպելական Փիշդադյան Ջան (ավեստ.՝ Yima) կոչվող արքայի կողմից, Օհրմագրի պատվերով, որպեսզի իր մեջ պատսպարի ամեն կենդանական տեսակի և մարդկանց սերմերը և չքողնի, որ նրանք վերանան մոտալուտ «ճնշան» պատճառով: Եվ որոնք պետք է դաժան աղետներից հետո կրկին վերաբնակեցնեն երկիրը (Darmesteter, Vendidad: pp. 15-21):

^{lxxxviii} Առասպելական մի անմահ հերոս, ով ինչ-որ մի հանցանքի համար պատժվել է, քուն մտել մի լեռան վրա և ծածկված է ձյունով: Այդպես քնած պետք է մնա, մինչև կգա այստեղ նկարագրված պահը, երբ Դահակը ազատ կարձակվի: Դրանից հետո նա (Սալմը) կարթնանա և կսպանի Դահակին (Bundahišn: XXIX, 12):

Ամբողջական մատենացանկ

- Աբրահամյան Ռ.**, Արտա Վիրապ նամակ, Յուշտի Ֆրիան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1958:
- , Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965:
- Ագաթանգեղոս**, Ագաթանգեղայ պատմություն հայոց, աշխատութ.՝ Գ. Տեր-Սկրտչեան և Ս. Կանայեանց, Տփղիս, 1909:
- Ակիմեան Ն.**, Մատենագրական հետազոտություններ. Քննություն և Բնագրեր, հատոր Ե, Վիննա, 1953:
- Աճառյան Հ.**, Հայերեն Արմատական Բառարան, Երևան, 1971 (1-ին հրատ.՝ 1926-35):
- Աւետիքեան Հ. Գ., Սիւրմէլեան Հ. Խ., Աւգերեան Հ. Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-37:
- Եղիշե**, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, թարգմ.՝ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989:
- Թիրեաթեան Յ.**, Անդարձ-ի Ատուրպատ-ի Մարասպանդ, Նյու Յորք, 1909:
- , Արտաշիր Բաբական Կարնամակը, Փարիզ, 1906:
- Խորենացի Մովսես**, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ դ. Ստեփան Մալխասյանցի, Երևան, 1940:
- Կողբացի Եզնիկ**, Եղծ աղանդոց, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1994:
- Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986:
- Նալբանդյան Գ. Մ.**, Պահլավերեն-հայերեն բառարան, Երևան, Փյունիկ, 1994:
- Փափազյան Վրթ.**, Երկերի ժողովածու, Դ հատոր, Երևան, 1959:
- Քսենոփոն**, Անաբասիս, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970:
- Amid, H.**, Farhang-e Fārsi-ye Amid, Tehran, 1389.
- Amouzegār, J., Tafazzoli A**, Ketāb-e panjom-e Dinkārd, Entešārāt-e Moʻin, chāp-e 2-om, 1388 (avval, 1386).
- , Yādegār-e Zarirān, Entešārāt-e Moʻin, 1392.
- Asha, R.**, Vīrāzagān, The visionary journey of Vīrāza to heaven and hell, Editio Princeps of the Vīrāzagān and the Ardā Vīrāzagān, 2017.
- Asatryan, G.**, “Prolegomena to the study of the Kurds”, Iran and the Caucasus 13 (2009), pp. 1-58.

- Bahār, M.**, Bondaheš, Tehrān, chāp-e 4-om, 1390 (avval, 1378).
 ———, Jostāri dar farhang-e Irān, Tehrān, 1386.
 ———, Tārix-e Sistān, Tehrān, Moin, 1381.
- Bartholomae, Ch.**, Altiranisches Wöterbuch, Strassburg, 1904.
 ———, Zarathuštra's Leben und Lehre, Heidelberg, 1924.
- Bleecck, A. H.**, Avesta; The religious books of the Parsees, from Professor Spiegel's German translation, Hertford, 1864.
- Boyce, M.**, A History of Zoroastrianism, in 3 vols., 1975-1991.
 ———, A Persian Stronghold of Zoroastrianism, Oxford, 1977.
 ———, "Gāhānbar", Encyclopaedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/gahanbar>
 ———, "Middle Persian Literature", in Handbuch der Orientalistik I.vi, 2.1, 1968, pp. 32-66.
 ———, "Parthian writings and literature", in E. Yarshater (ed.), Cambridge history of Iran, vol. 3.2, pp. 1151-65.
 ———, "The Manichaean Literature in Middle Iranian", in Handbuch der Orientalistik I.vi, 2.1, 1968, pp. 67-76.
- Cereti, C. G.**, The Zand ī Wahman yasn, A Zoroastrian Apocalypse, Roma, 1995.
- Choksy, J. K.**, "Drōn", Encyclopaedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/dron>
- Darmesteter J.**, "The Supreme God in the Indo-European mythology", in Contemporary Review, London October, 1879, 274-289.
 ———, The Zend-Avesta, Part i & ii, Sacred Books of the East, vols. iv (1880) & xxiii (1883), Oxford.
- Daryae, T.**, Šahrestānīhā ī Ērānšahr, A Middle Persian text on Late Antique Geography, Epic and History, Mazda Publishers, 2002.
- De Blois, F.**, "Middle Persian funerary inscriptions in South-Western Iran", in *Medioiranica*, Orientalia Lovaniensia Analecta 48, Louvain, 1993, pp. 29-43
- De Jong, A.**, Traditions of the Magi; Zoroastrianism in Greek and Roman literature, Brill, 1997.
- De Menasce, J.**, Zoroastrian Pahlavi writings, in E. Yarshater (ed.), Cambridge History of Iran, vol. 3.2.
- Laertius, Diogenes**, Lives of eminent philosophers, with an English translation by R. D. Hicks, vol. I, 1959.
- Du Perron, A.**, Extracts from the narrative of Mons. Anquetil Du Perron's travels in India, trans. by K. E. Kanga, Bombay, 1876.

- Farrahvaši, B.**, *Kārname-ye Ardashir-e Bābakān, bā matn-e pahlavi, āvānevisi, tarjome-ye fārsi va vāženāme, Entesārāt-e Dānešgāh-e Tehrān, chāp-e 5-om, 1390 (1st ed., 1354).*
- Felix W.**, “Chionites”, in *Encyclopaedia Iranica*, <http://www.iranicaonline.org/articles/chionites-lat>.
- Ferdousi, Hakim Abu-l-Qāsem**, *Šāhnāmeḥ, Entesārāt-e Peymān, 1389.*
- Firby, Nora K.**, *European travellers and their perceptions of Zoroastrians in the 17th and 18th centuries, Berlin, 1988.*
- Frye, R. N.**, *The history of ancient Iran, München, 1983.*
 ———, *The Political history of Iran under the Sasanians, in The Cambridge History of Iran, v. 3 (1), pp. 116-180*
 ———, “Cyrus was no Achaemenid”, in Carlo Cereti et al (eds.), *Religious themes and texts in pre-islamic Iran and Central Asia, Beiträge zur Iranistik xxiv, Wiesbaden, 2003.*
- Geiger, W.**, *Civilization of the Eastern Irānians in Ancient Times, tr. from German by D.D. P. Sanjānā, London, 1885.*
 ———, *Das Yātkār-i Zarēr und sein Verhältnis zum Šāh-name, Sb Bayerischen Akademie der Wissenschaften, philol.-philol.-hist. Kl., 1890, pp. 43-84.*
 ———, *Kuhn, E., Grundriss der iranischen Philologie, II. Band, Strassburg, 1896-1904.*
- Geldner, K.**, “Avesta”, in *Avesta, Pahlavi, and Ancient Persian studies in honor of late Shams ul-Ulama Peshotanji Bahramji Sanjana, M. A., PhD, Strassburg, Leipzig, 1904.*
- Gershevitch, I.**, “Approaches to Zoroaster’s Gathas”, *Iran, vol. 33 (1995), pp. 1-29.*
 ———, “Zoroaster’s own contribution”, *Journal of Near Eastern Studies 23, no. 1 (Jan., 1964), pp. 12-38.*
- Gignoux, Ph., Tafazzoli, A.**, *Anthologie de Zādspram, Paris, 1993.*
 ———, “Zādspram”, *Encyclopaedia Iranica, 2005, <http://www.iranicaonline.org/articles/zadspram>.*
- Grenet, Fr.**, *La Geste d'Ardashir fils de Pâbag, éditions “A Die”, 2003.*
- Grenet, Fr.**, “Zarathustra’s Time and Homeland: Geographical Perspectives”; in *Stausberg, M., Vevaina, Sohrab-Dinshaw Y. (eds.), The Wiley Blackwell Companion to Zoroastrianism, 2015, pp. 21-31.*
- Griffith, R. T. H.**, *The Hymns of Rig Veda, Kotagiri, 1896 (2nd ed., 1st ed. 1889).*

- Hassandoust, M.**, An Etymological dictionary of the Persian language, in 5 volumes (in Persian), 3rd ed., 1395 (1st 1383; 2nd 1393).
- Haug, M., Asa H. J.**, The book of Arda Viraf, 1872.
- , Essays on the sacred language, writings, and religion of the Parsees, 1st ed. 1862, 2nd ed. 1878.
- Henning W. B.**, The Middle Persian word for Beer, BSOAS, 1955, pp. 603-604.
- , Zoroaster: Politician or Witch Doctor?, 1951.
- Hinnels, J. R.**, “The Parsis”, in Stausberg, M., Vevaina, Sohrab-Dinshaw Y. (eds.), The Wiley Blackwell Companion to Zoroastrianism, pp. 157-172.
- Hintze, Alm.**, “Zarathustra’s Time and Homeland: Linguistic Perspectives”; in Stausberg, M., Vevaina, Sohrab-Dinshaw Y. (eds.), The Wiley Blackwell Companion to Zoroastrianism, 2015, pp. 31-38.
- Hoffmann, K., Narten J.**, Der Sasanidische Archetypus, Untersuchungen zu Schreibung und Lautgestalt des Avestischen, Wiesbaden, 1989
- Humbach, H.**, The Gāthās of Zarathushtra and the other Old Avestan texts (in 2 parts), in collaboration with J. Elfenbein and P. O. Skjærvø, Heidelberg, 1991.
- , **Faiss K.**, Zarathushtra and his antagonists, A sociolinguistic study with English and German translations of his Gāthās, Wiesbaden, 2010.
- Ibn Khordadbeh, Abu'l-Qasim Ubaydallah ibn Abdallah**, Masālek va mamālek, tarjome-ye Sa’id Xākrand, Tehrān, 1371.
- Ibn al-Nadim, Muhammad ibn Ishaq**, Al-Fihrist, tarjome-ye Mohammad-Reza Tajaddod, Tehran, 1381.
- Jamasp-Asana, J. M.**, Corpus of Pahlavi Texts, Bombay, 1913.
- Jones, C. A., Ryan J. D.**, Encyclopaedia of Hinduism, 2007.
- Jones, W.**, The works of Sir William Jones (in six volumes), vol. i, London, 1799.
- Justi, F.**, Iranisches Namenbuch, Marburg, 1895.
- Kellens, J.**, “Avesta, i, Survey of the history and the contents of the book”, III/1, pp. 35-44, Encyclopaedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/avesta-holy-book>.
- Kingsley, P.**, “The Greek origin of the sixth-century dating of Zoroaster”, Bulletin of the School of Oriental and African Studies, Volume 53, Issue 02, June 1990, pp. 245 – 265.

- Lommel, H.**, Die Religion Zarathustras, nach dem Awesta dargestellt, Tübingen, 1930.
- Lucian, of Samosata**, with an English translation by A. M. Harmon (The Loeb classical library, vol. 162), vol. iv, 1961 (1st ed. 1925)
- Luckenbill, D. D.**, Ancient Records of Assyria and Babylonia, in 2 volumes, The University of Chicago Press, 1926.
- MacDonell, A.**, Vedic mythology, Strassburg, 1897.
- MacKenzie, D. N.**, A Concise Pahlavi Dictionary, London, Oxford University Press, 1971.
- , Review (of D. Monchi-Zadeh's Die Geschichte Zarērs, Uppsala, 1981), IJ 27, 1984, pp. 155-163.
- , The Origins of Kurdish, Transaction of the Philological Society, pp. 68-86, 1961.
- Madan, Dh. M.**, The Complete Text of the Pahlavi Dinkard, vol. I & II, Bombay, 1911.
- Malandra W. W.**, "Frawardīgān", Encyclopaedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/frawardigan->
- Marquart, J.**, Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901.
- Mayrhofer, M.**, Kurzgefasstes etymologisches Wörterbuch des Altindischen, Heidelberg (I. bd., 1956; II. bd., 1963; III. bd., 1976).
- Mazdāpour, K.**, Šāyest Nāšāyest, matn-i be zabān-e fārsi-e miāne, Tehrān, chāp-e 2-om, 1390 (avval, 1369).
- Mills, L. H.**, The Zend-Avesta, Part iii, Sacred Books of the East (vol. xxxi), Oxford, 1887
- Mīrfakhrāi, M.**, Bayān yasn, matn-e avestāyi va zand, Tehrān, 1382.
- Modi, J. J.**, The Religious Ceremonies and Customs of the Parsees, Bombay, 1922.
- Monchi-Zadeh, D.**, Die Geschichte Zarēr's, Uppsala, 1981.
- Navvābi, Y. M.**, Draxt-ī Asūrīg, matn-e Pahlavi, āvānevisi, tarjome-ye fārsi, fehrest-e vāzehā va yāddāsthā, chāp-e 3-om, 1386 (avval, 1363).
- , Yādegār-e Zarirān, Tehrān, Asātir, 1374 (2nd ed. 1387).
- Nosherwān. K. A. D.**, Kārnāmak-ī Artakshīr-ī Pāpakān, The Memoirs of King Ardashīr, Bombay, 1896.
- Nöldeke, Th.**, Geschichte des Artachšīr ī Pāpakān, aus dem Pehlewi übersetzt, mit Erläuterungen und einer Einleitung versehen, Göttingen, 1879.
- Nyberg, H. S.**, Manual of Pahlavi, vol. II, Wiesbaden, 1974.

- Otakar, K.**, “Avesta”, in Ripka J. (ed.), *History of Iranian literature*, 1968 (1st ed. in 1956).
- Pagliaro, A.**, *Il testo Pahlavico Ayātkār-i-Zarāran*, in *Rendiconti della Classe di Scienze morali, storiche e filolog. della reale Accademia Nazionale dei Lincei*, Ser. VI, v. I, fasc. 7-8, pp. 550-604, Roma, 1925.
- Pākzād, F.**, *Bundahišn, Zoroastrische Kosmogonie und Kosmologie, Band I, Kritische Edition*, Tehran, 2005.
- Rāšed-Mohassel, M. T.**, *Sroš yasn, barrasi-ye matn-e zand o avestayi-e yasn-e pahjāh o haft*, Tehrān, 1382.
- , *Vizīdagīhā ī Zādisparam*, Persian Translation, Transcription, Comentary, Glossary and Pahlavi text, IHCS, Tehran, 2011.
- , *Zand-e Bahman Yasn*, Tehran, 1385 (1st ed. 1370).
- Rask, R.**, *Remarks on the Zend Language, and the Zendavesta: In a Letter from the Late Professor Emanuel Rask, F.M.R.A.S., &c. &c., to the Honourable Mountstuart Elphinstone, M.R.A.S., Then President of the Literary Society at Bombay*, *Transactions of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland*, Vol. 3, No. 3(1834), pp. 524-540.
- , *Über das Alter und die Echtheit der Zend-Sprache und des Zend-Avesta, übersetzt von Heinrich von der Hagen*, Berlin, 1826.
- Richardson, J.**, *A dissertation on the languages, literature and manners of Eastern nations*, London, 1777.
- Riedel D.**, “*Kalila wa Demna i, Redactions and circulation*”, *Encycopaedia Iranica*, Vol. XV, Fasc. 4, pp. 386-395, also <http://www.iranicaonline.org/articles/kalila-demna-i>.
- Sachau, E.**, *Zur Ausbreitung des Christentums in Asien*, Berlin, 1919.
- Sanjana, D. D. P.**, *The Kārnamē ī Artakhshīr ī Pāpakān*, Bombay, 1896.
- Schmitt, R.**, *Die Iranischen Sprachen in Geschichte und Gegenwart*, Wiesbaden, 2000.
- , *Die Altpersischen Inschriften der Achaimeniden*, Wiesbaden, 2009.
- , “*Zoroaster, The Name*”, *Encyclopaedia Iranica*, 2002, <http://www.iranicaonline.org/articles/zoroaster-i-the-name>.
- , “*Bartholomae, Christian*”, *Encyclopaedia Iranica*, 1988, <http://www.iranicaonline.org/articles/bartholomae-christian-german>.
- , “*Aryans*”, *Encyclopedia Iranica*, 1987, <http://www.iranicaonline.org/articles/aryans>.
- Shaki, M.**, “*Observations on the Ayādgār ī Zarērān*”, in *Archív Orientalní* 54 (1986), Praha, pp. 257-272.
- Shapira D.**, *Studies in Zoroastrian Exegesis: Zand*, Jerusalem, 1998.

- Skjærvø, P. O.**, Introduction to Old Persian, 2002.
- , Introduction to Zoroastrianism, 2005.
- , “Kayāniān i. Kavi, Avestan kauui, Pahlavi kay”, Encyclopaedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/kayanian-i>.
- , “Zarathustra: First Poet-Sacrificer”, in Paitimāna. Essays in Iranian, Indian, and Indo-European Studies in Honor of Hanns-Peter Schmidt, vols. I-II in one, ed. S. Adhami, Costa Mesa: Mazda, 2003, pp. 157-94.
- , “Herzfeld and the Paikuli Inscription”, Encyclopaedia Iranica, 2003, <http://www.iranicaonline.org/articles/herzfeld-ernst-iv>.
- Spiegel, Fr.**, Avesta, die heiligen Schriften der Parsen, I Band, Leipzig, 1852.
- Sprengling, M.**, Third century Iran, Chicago, 1953.
- Stausberg, M.**, “Zoroastrians in Modern Iran”, in Stausberg, M., Vevaina, Sohrab-Dinshaw Y. (eds.), The Wiley Blackwell Companion to Zoroastrianism, pp. 173-190.
- , Die Religion Zarathustras, Geschichte, Gegenwart, Rituale, Band I, Verlag W. Kohlhammer, 2002.
- , **Vevaina, Sohrab-Dinshaw Y.** (eds.), The Wiley Blackwell Companion to Zoroastrianism, 2015.
- Sundermann, W.**, “Turfan expeditions”, Encyclopaedia Iranica, 2004, <http://www.iranicaonline.org/articles/turfan-expeditions-2>.
- Sunjana, P. D. B.**, The Dinkard, vol. i, Bombay, 1878.
- Tabari, Mohammad b. Jarir**, Tārix al-rosul va’l-moluk, Tehran, 1357.
- Tafazzoli, A.**, Tārikh-e adabiyat-e Iran piš az eslām, Tehrān, 1376 (3rd ed. 1378).
- Tavadia, J.**, Die Mittelpersische Sprache und Literatur der Zarathustrier, Leipzig, 1956.
- Tavernier, J. B.**, The six voyages of John-Baptista Tavernier, a Noble Man of France now living, through Turkey into Persia and East-Indies, finished in the year of 1670, giving an Account of the State of those Countries, London, 1678.
- Teixeira, P.**, The travels of Pedro Teixeira, translated and annotated by W. F. Sinclair, London, 1902.
- Tha’ālibi, ‘Abd ul Malik ibn Muhammad ibn Isma’īl Nishāburī**, Tārikh-e Tha’ālebī (Pāre-ye nokhost, Irān-e bāstān), A Persian translation by Fazāeli M., Tehrān, Našr-e Noqre 1368.
- Unvala, J. M.**, Der Pahlavitext “Der König Husrav und sein Knabe”, Wien, 1917

- West, E. W.**, “Pahlavi Literature”, in *Grundriss der Iranischen Philologie*, Bd. II, Strassburg, 1896-1904, ss. 75-129.
- , Pahlavi texts, in five volumes, *Sacred Books of the East* (vols. v, xviii, xxiv, xxxvii, xlvii), 1880-1897.
- Westergaard, N. L.**, Extract from a Letter Addressed by Professor Westergaard to the Rev. Dr. Wilson, in the Year 1843, Relative to the Gabrs in Persia (*Journal of Royal Asiatic Society*, vol. 8, 1846, pp. 349-354).
- Whitney, W. D.**, *Oriental and Linguistic studies*, vol. I, New York, 1873.
- Williams, Alan W.**, *The Pahlavi Rivāyat*, accompanying the *Dādestān ī Dēnīg*, 1990.
- Williams-Jackson, A. W.**, *Zoroaster, the prophet of Ancient Iran*, New York, 1899.
- Windfuhr, G. L.**, “Haoma/Soma, the Plant”, in *Papers in honour of Professor Mary Boyce*, 2 vols, *Acta Iranica* 24-5, Leiden, 1985, pp. 699-726.
- Yarshater, E.** (ed.), *The Cambridge History of Iran, The Seleucids, Parthian and Sasanian periods*, vol. 3 (1), 1983.
- , “Afrāsīāb”, *Encyclopaedia Iranica*, <http://www.iranicaonline.org/articles/afrasiab-turanian-king>.
- Zachner, R. Ch.**, *The Dawn and Twilight of Zoroastrianism*, New York, 1961.
- , *Zurvan, a Zoroastrian dilemma*, Biblio & Tannen Publishers, 1955.
- Гумилев, Л. Н.**, *Древние тюрки*, Санкт-Петербург, Кристалл, 2003.
- Кочергина, В. А.**, *Санскритско-русский словарь*, 2-е издание, Москва, 1987
- Расторгуева, В. С.**, *Среднеперсидский язык*, Москва, 1966.
- Чунакова, О. М.**, *Книга деяний Ардашира сына Папака*, Москва, 1987.
- , *Пехлевийская божественная комедия*, Москва, 2001.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒԲԵՆ Ս. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

**ՊԱՀԼԱՎԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Մենագրություն Ջրադաշտի կրոնի և միջին
պարսկական գրականության վերաբերյալ*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Հ. Ասլանյանի

Տպագրված է «Վարդան Սկրտչյան» ԱԶ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 11.12.2018:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 20.25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ՎՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018
publishing.ysu.am